

«Մ Ա Տ Ե Ւ Ա Գ Ա Ր Ա Ն»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ՄԵԽՍՍՐԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԵՆԹԵՐ

ՄԱԴՐԱՏ ԱՆՁԱՆ ՀԻՆ ՀԵՇԱԿԻՐԵՐԻ ԻՆՍՏԱԿԱՆ

Բ Ա Ն Բ Ե Ը Մ Ա Տ Ե Ւ Ա Գ Ա Ր Ա Ն

12

Խ մ ը ս զ բ ա լ ի ս կ ա լ ի ս

Լ. ԽԱՂԲԻՑԱՆԻ, Օ. ԵԳԱՆՅԱՆԻ

Տ Ե



Բ 072
703 (02)-77 114-77

© Հայկական ԱԱՀ ԳԱ հրատարակություն, 1977

ՀԱՂՎԱԾՈՒՅԹ

ԱՍՍՈՒՐ ՄԱՏԱԿԱՆՅԱՆ

ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԵՂՋԵՐՈՒՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Դիցաբանությունը և նրանով պայմանավորված մշակույթը յուրաքանչյուր ժողովրդի անցյալի ժառանգության մի կարևոր մասն է։ Թե որպիսի նշանակություն ունի դիցաբանական պատկերացումների հետազոտության գործը, դա երեսում է Մարքսի այն բնութագրական ընդհանրացումից, որ կատարել է նա հունական դիցաբանության կապակցությամբ՝ հունական արվեստը գնահատելիս. «Հունական արվեստի նախադրյալը հունական դիցաբանությունն է, այսինքն՝ ժողովրդի երեակայության մնջ անգիտակցական-գեղարվեստական եղանակով արգեն վերամշակված բնությունն ու հասարակական ձևերը»¹։

Զարմանալիորեն հարուստ ու բարդ է եղել դիցաբանական պատկերացումների այն ցանցը, որի թելազրանքով ծնված արվեստի հնագույն շերտերը ծածկել են Հայոց լեռնաշխարհը և նրա ընիկների մշակույթի ընազավառները։ Ինքը, հայ ժողովուրդը, սերած լինելով տեղաբնիկ այդ ցեղերից, խաշաձևված լինելով հնդեվրոպական ցեղերի արդասավոր հոսանքով և ժառանգութ հանդիսանալով Հին Արևելքի անհետացող ցեղերի ու ժողովուրդների, զարերի ընթացքում զարգացրել է մի ուրույն ու ինքնատիպ մշակույթ, որի մեջ իրենց վճռական դերն են խաղացել դիցաբանական պատկերացումները։

Մեր նպատակն է նախ առանձնացնել Հայոց դիցաբանական եղջերուի կերպարը՝ եղած գանձարանից, թեկուզ ընդհանուր գծերով, տալ նրա հետ կապված դիցաբանության փշրանքների ու արվեստի նմուշների մեկնարանությունը, ապա այդ հետքերով խորանալ զարդարվեստի հանգուցային այն խոշոր պրոբլեմի լուծման մեջ, որը վերաբերում է նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջանների զարդարվեստային ավանդների առնչությանը։ Ինդիր, որն ունի ոչ միայն հայկական նշանակություն և կարուտում է նորանոր, ավելի խոր ու արմատական մեկնարանությունների։

Մենք ժամանակին զրազվել ենք հայ զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակության հարցերի ուսումնասիրությամբ։ Այժմ, նոր փաստերի և նոր մոտեցման օգնությամբ, հնարավորություն և նր ունենում ավելի խորանալ նյութի մեջ և հասնել, մեր կարծիքով, ընդունելի բացատրության նաև առաջադրված խնդիրների, ինչպես նաև զարդարվեստային մի շարք ուրիշ հասկացությունների վերաբերյալ։

Եվ այս ամենը՝ Հայոց դիցաբանական եղջերուի հետքերով։ Գաղտնիքն այն է, որ դիցաբանական եղջերուի զարդակերպարն անցնում է հայ զարդարվեստի ամրող ընթացքով մեկ՝ սկսած նախնադարյան ժայռապատկերներից և վերջացրած մեր ժամանակներով։ Քստ որում, այդ զարդակերպարը, վա-

1 ակ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին, Ա, Երևան, 1963, էջ 161։

դադույն ժամանակներից առնչված լինելով անիմիստական, տոտեմիստական պաշտամունքային խոշոր զաղափարների հետ, արտահայտել է այդ բոլոր ժամանակների հիմնական պատկերացումների ոգին ու էությունը։ Անշուշտ, լոկ եղջերուն քիչ կլիներ բավարար արգյունքի հասնելու համար, եթե նրան շուղեկցեին զարդարվեստի հիմնական մոտիվները և՛ մեզ մոտ, և՛ շատ ուրիշ ժակույթի էջերում։

Նպատակ տւնենալով քննել հայոց զիցարանական եղջերուին նվիրված նյութերը, պիտի նկատենք, որ տարրեր ժամանակներում նու տարրեր իմաստ ու նշանակություն է ունեցել և վերափոխումների անրնդմեջ շղթայով զույտենել՝ մինչև XX դար։ Այդ շղթայի ամբողջությունը ճանաչելու համար բավական է թափանցիլ նրա օղակներից մեկի մեջ։ Մեզ համար այս առումով



Նկ. 1

ելակետային նշանակություն ունի միջնադարյան Հայ մանրանկարչությունը, իսկ այստեղ էլ՝ XIII—XIV դարերի բանաստեղծ ու մանրանկարիչ Թորոս Տարոնեցու (Մշեցու) մի հազվագեղ մանրանկարը, մանավանդ, որ նրա մասին առկա են տարրեր կարծիքներ։ Խոսքը վերաբերում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 6289 ձեռագրի 226ա թիրթի զարդանկարին՝ կատարված 1323 թվականին (Նկ. 1)։ Այստեղ, կիսախորանի կենտրոնական վերնամա-

սում՝ աստվածամայրն է՝ մանուկ Քրիստոսը զրկին. նրանից ներքեւ, ձախ կիսախորանում, պատկերված է մայր-եղջերու՝ ձագուկին սնկիս, իսկ աջ կիսախորանում՝ հայր եղջերուն է: Գ. Հովսեփյանը, անդրադառնալով այդ նրկարին, բարձր է գնահատում հատկապես աստվածամայրն այդ եղանակով (ստեղու աստվածամայր) պատկերելու փորձը, որովհետեւ այն՝ բատ նրա, «մինչև վերջերս զուտ արևմտյան էր համարվում»²: Եղջերուների մասին նա չի խոսում: Այդ հարցին անդրադառնում է Լ. Դուրնովոն, զրելով. «Մայր-Մարիամի հանդեպ տածած այս դորովագութ վերաբերմունքի պատկերման մեջ Արևմտյան նկարիչներից՝ Թորոս Տարոնացին առաջ անցավ ձագուկին կերակրող եղջերուի հետ համեմատելով կերակրող աստվածամորը, և զուցե Էլ ավելի հետուն գնաց, պատկերելով նրանց կողքին հայր Եղջերուին, մինչդեռ բատ ավանդության՝ Քրիստոսը երկրային հայր շուներ»³: Այս միտքը վերաշարադրված է նաև նույն ալբոմի վերահրատարակությունների մեջ: Վերջերս՝ բննվող մանրանկարին անդրադարձավ Ա. Ավետիսյանը՝ կը կինեթիվ նույն միտքը⁴:

Թորոս Տարոնեցու եղջերուների մասին զրել է նաև Վ. Անանյանը, զրանք համարելով բնական եղջերուների պատկերներ⁵:

Այդ մանրանկարում, ինչպես նաև համանման այլ տեսարանների մեջ պատկերված եղջերուներին անդրադարձել ենք նաև մենք՝ նրանց համարելով հին պատկերացումների մենացուկներ⁶:

Արդ, հիրավի, ի՞նչ ծագում ունեն թորոս Տարոնեցու եղջերուները: Նրանք արտացոլում են բնակա՞ն եղջերուների գուղափար, թե՝ զիցարանական:

Այս հարցին պատասխանելու համար նախ ծանոթանանք թորոս Տարոնեցու մանրանկարի ամբողջությանը: Այն ավետարանական կանոնիկ զարդաթերթիկ է՝ մշակված ըստ հայ և օտար ավանդույթների: Այստեղ ամեն՝ ինչ ծառայում է նույն նպատակին՝ Քրիստոս-աստծու աշխարհ գալու պատմությանը: Հենց զրատ արտահայտությունն են Աստվածամայրն՝ իր մանուկ զավակով, աչ ու ձախից զեսի նրանց խոնարհված հրեշտակները, ինչպես նաև սրբապատկերներով հյուսված սկզբնատառը («Ի») և լուսանցագարդ—տոհմածառը: Էջում չկա ոչ մի պատկեր ու տառ, որը կատված շինի նույն հիմնական գուղափարի հետ: Ուստի այդ նույն իմաստին հն ծառայում նաև եղջերուները:

Միտք է առաջանում. Եթե այդպես է, առաջ թորոս Տարոնեցու պատկերած եղջերուները պիտի երեան զային նաև նրանից առաջ ու հետո՝ ուրիշ նրկարիչների վրձնի տակ: Հիրավի. Թորոս Տարոնեցու ավագ սերնդի ներկայացուցիչներից մեկը XIII դարում նկարել է մի ուրիշ տեսարան (նկ. 2), որը զոնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 7651 ձեռագրում (թիրթ 10ա): Կիսախորանի կենտրոնում՝ մայր եղջերուն է. նրանից վերև, կարծես նրա մեջքին, նստած է ձաւուելու: Քրիստոսն այստեղ պատկերված է Հայու

² Գ. Հովսեփյան, Խաղակեանք կամ Պառշեանք Հայոց պատմության մեջ, Անթիկաս-Լիբանան, 1969, էջ 270 (ավելի առաջ՝ համանուն աշխատության առաջին հրատարակության Երկրորդ հատորում՝ 1944 թ.):

³ «Հայկական հին մանրանկարչություն», ալբոմ, նկ. 45 և նրա բացատրությունը:

⁴ Ա. Ավետիսյան, Հայկական մանրանկարչության Պլաճորի գալուցը, Երևան, 1971, էջ 120—124. նկարը՝ 64—65-րդ էջերի միջև:

⁵ Վ. Անանյան, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ, Երևան, 1962, էջ 282:

⁶ Ա. Մեացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 255—264:

աստծու հետ՝ լուսանցաղարդ-տոհմածառի վրա։ Մոր ու մանկան գաղափարն այս մանրանկարում (կիսախորանի վերևի մասում) վերարտադրված է հավալաստն թոշունի պատկերով (վնասված է), որի իր կուրծքը ճեղքելով սնում է ձագուկներին՝ նորից պատշաճեցված Քրիստոսի գաղափարին։ Խոսուն է և լուսանցաղարդ տոհմածառը, որի հիմքում պառկած է աստվածաշնչային նախնին։ Դա այն ծառերից է, որոնց մասին միջնադարյան ժողովրդական երգն ասում է.

— Ծաղկեցաւ ծառն կենաց՝ Աստուածածինն էր.

Լուսեղէն պտուղ երեր՝ իւր միածինն էր⁷...



նկ. 2

Դժվար չէ ըմբռնել, որ այսպիսի տեսարաններում անդամ բուսական աշխարհը զիցարանական ողի ունի։ Միթե՞ զրա ցայտուն օրինակը չեն բարդու նման սլացիկ տոհմածառ-լուսանցաղարդերը՝ իրենց զիցարանական սլըտուղներով։ Եվ եթե ավետարանական նկարներն ու հատկապես կիսախորաններն այնքան դարնանային ու դալարավետ են, ապա պատճառն այն է,

⁷ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 295:

որ նրանք վերաբառում են ընության վերածնունդի, չոգնոր գարնան, Քրիստոս-Հատիկի ծլարձակման հնավանդ գաղափարը։ Այդ նույն գարնան մասին էր, որ գողտրիկ տաղեր էր զրում նույն ժամանակների խոշոր բանաստեղծ Կոստանդին Երզնկացին և զգուշացնում. «Բան զարնահ օրինակաւ խորհուրդ ի Քրիստոս. մի՛ մարմին հասկանալի զբանս, այլ հոգեւոր»⁸:

Մաշտոցի անվան Մատենագարանի № 5437 թերթում պատկերված է մի այլ տեսարան՝ ըստ Մատթեոսի ավետարանի «Գիրք ծննդեան Ֆիսուսի Քրիստոսի...» նշանաբանի (նկ. 3): Կիսախորանի կենտ-




Նկ. 3

րոնում շրջադի մեջ, աստվածամայրն է՝ մանուկ Քրիստոսը դրկին. Եղբարուն՝ լուսանցազարդի Հիմքումն է, այս անգամ՝ նախնու փոխարեն։ Համեմատության նպատակով այստեղ կարելի է Հիշել Մաշտոցի անվան Մատենագարանի № 5505 ձեռագրի 176ա թերթի նկարագարդումը (նկ. 4), ուր նո-

⁸ Խոստանդին Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962, էջ 117.

րից աստվածամոր և մանուկ Քրիստոսի փոխարեն, շրջանակի մեջ, նստած է եղջերուի ձագ:

Մաշտոցյան Մատենադարանը վերջերս հարստացավ ևս մի ավետարանով (Ն 10670, ժամանակ՝ 1303 թ.), որի մանրանկարների մեջ, ծննդյան տեսարանում (թերթ 2ա), պատկերված են զույգ եղջերուներ՝ խոնարհված դեպի նորածին Հիսուսը: Ընդհանուր գաղափարը նույնն է ու հասկանալի: Այն ավելի պերճախոս է դառնում, եթե հիշում ենք միջնադարյան բանաստեղծ Հովհաննես վարագեցու «Տաղ ծննդեան» երգի սկիզբը, ուր Աստվածամայրը նմանեցված է մայր եղնիկի, իսկ նորածին Քրիստոսը՝ եղնաձագի (Հորթի):



Նկ. 4

Յայն առաւտին
Ահեղ գիշերին
Եղնիկն էր ծնել,
Խայտ հորթ մ'էր բերել...⁹:

Մենք կարող ենք մատնացույց անել նաև բազմաթիվ այլ մանրանկարներ, որոնց բոլորի մեջ էլ, նկարիչները, տարբեր ձևերով ու հնարամտություններով, վերարտադրել են նույն գաղափարը՝ եղջերու-աստվածամայր, եղջերու-Քրիստոս, եղջերու-նախնի: Բոլոր դեպքերում էլ նրանք ներդաշն են քրիստոնեական գաղափարներին: Ուստի սխալ կլիներ կարծել, թե եղջերուն այդ տեղերում ծնվել է այս կամ այն նկարչի մտածողությամբ, կամ թելադրված է նրա կամքով և արտահայտում է բնական եղջերուի գաղափար:

Որոնումները ցույց են տալիս, որ սխալ է նաև այն կարծիքը, թե Թորոս Տարոնեցին (կամ որևէ այլ մանրանկարիչ) կանխել է արևմտյան եվրոպացին, որովհետեւ քրիստոնեական եղջերուն Արևմուտքում տոկա է գեռևս վաղ քրիստոնեական հուշարձանների վրա: Համապատասխան տեսարաններ են հայտնաբերված հատկապես քարայրային կամ ժայռափոր զամբարաններում:

⁹ Karamianz N., Verzeichniss der armenischen Handschriften der königlichen Bibliothek zu Berlin, Berlin, 1888, էջ 68 (ձեռ. Ա 84): Զեռազրում վերջին տողը մասսամբ ազագաղված է («Յայթ հորթ...»):

Հիշենք դրանցից մի պատկերազարդ մեղալիոն, որը համարվում է IV—V դարերի գործ, գտնված է Հռոմի մոտակայքում և պահպանվում է Վատիկանի թանգարանում¹⁰: Նրա մի երեսին պատկերված է աստվածամայրը՝ մանուկ Քրիստոսը գրկին և երեք մողերը, իսկ ներքեւում՝ երկու եղշերու: Մեղալիոնի մյուս երեսին Քրիստոսն է՝ երկու առաքյալ-հրեշտակների միջև, իսկ ներքեւում՝ նորից երկու եղշերու:

Համանման տեսարան է ներկայացնում նույն ժամանակներից հայտնաբերված մի ուրիշ փորագրություն¹¹, ուր պատկերված են զույգ եղշերուներ և մի գառնուկ: Վերջինս հենց Քրիստոսի խորհրդանշանն է:

Մասնագետները, այդպիսի տախտակների մասին խոսելիս, բացառիկ նշանակություն են տալիս Պոնտիենի մկրտարանին, որտեղ ուշագրավ է Հորդանանում մկրտվող Քրիստոսի պատկերը և նրա գաղափարը խորհրդանշող եղշերուն՝ Հորդանանի զրերին նայելիս¹²:

Համանման փաստեր կան նուև վաղ միջնադարյան հայ մշակույթի գանձարանում, օրինակ, Աղցի Արշակունյաց թագավորների դամբարանում (364 թ.), Քասաղի բազիլիկ եկեղեցու որմնաքանդակներում (IV—V դդ.) և այլ հուշարձանների վրա: Առաջին տեսարանում, շրջադիր մեջ, պատկերված է խաչ, իսկ նրա աջ և ձախ կողմերից՝ եղշերուների շարքեր: Երկրորդում նորից շրջանակավոր խաչ է, միայն թե այստեղ աջ ու ձախ կողմերից քանդակված են մեկական եղշերու: Բ. Առաքելյանը¹³, Լ. Ազարյանը¹⁴ իրավացիորեն այդ եղշերուները դիտում են որպես քրիստոնեական խորհրդանշաններ՝ ինչպես որ ընդունված է Արևմտյան ծվրուպայի համապատասխան տեսարանները գնահատողների կողմից:

Մեզ հայտնի չեն, սակայն, կարծիքներ, որոնց հեղինակները նկատած լինեին քրիստոնեական եղշերուի առկայությունը նաև մանրանկարչության մեջ: Մինչդեռ քրիստոնեական նույն եղշերուն է հանդիպում նաև այստեղ: Վերջինիս և վաղ քրիստոնեական եղշերուի միջև եղած կապը նկատելու համար պիտի հետևողականորեն ժանոթանալ VI—X դարերի վկայություններին, և խընդիրը կարող է լուծված համարվել: Իսկ այդպիսի փաստեր կան, օրինակ, Ատենի վանքի, Աղթամարի տաճարի և այլ հուշարձանների քանդակներում:

Ահա այսպիսի ճանապարհներով է, որ քրիստոնեական վաղ շրջանի եղշերուն հետո թափանցել է հայ մանրանկարչության մեջ և դարձել նրա հմացիչ մոտիվներից մեկը: Այն մեծ տարածում է գտել ոչ միայն խորաններում, կիսախորաններում, այլև լուսանցազարդերում՝ տալով արվեստի նորանոր հրաշալիքներ:

Արդ, ի՞նչ իմաստ ունեն այդ եղշերուները: Արդեն նկատված է, որ նրանք նույնացված են մկրտության խորհրդի, քրիստոնեական նահատակների, քարոզիլների, առաքյալների, զղացողների, հավատացյալների և նման:

¹⁰ H. L. Кондаков, Иконография богоматери, I, СПб, 1914, էջ 95, նկ. 71.

¹¹ Abbé Martigny, Dictionnaire des antiquités chrétiennes, Paris, 1855, էջ 19.

¹² Նույն տեղում, էջ 136—137:

¹³ Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դարերում, Երևան, 1949, էջ 84, 86, 90, նկ. 63, 72:

¹⁴ Լ. Ազարյան, Միմվոլիկան միջնադարյան հայկական արվեստում («Էրաբեր», Երևան, 1970, № 7, էջ 41—49):

այլ հասկացությունների հետ¹⁵: Մոտավորապես այդպիսի մեկնարկություն է տրված հայկական վաղ շրջանի փաստերին: Բ. Առաքելյանը, փորձելով նրանց մեջ հին գաղափարներ տեսնել, իսկույն ավելացնում է. «Սակայն մեր քանդակները հազիվ թե այս հնագույն հասկացություններն են անդրագարձնում, նրանք ավելի շատ կապված են քրիստոնեական սիմվոլիկայի հետ, որի համաձայն եղջերուն ներկայանում է իրեւ կարոտ դեպի երկնային արքայությունը»¹⁶:

Որոնումները ցույց են տալիս, որ այդ կարծիքները ճիշտ են, բայց եղջերուն ամեն անգամ այն պարագաների որոշակի գաղափարն է արտահայտում, ինչ պարագաներում որ հանդես է գալիս ինքը: Եղջերուն մկրտության տեսարանում կապվում է ջրի և մկրտության գաղափարների հետ, նահատակությունների տեսարաններում՝ նահատակության, ծննդի տեսարաններում՝ ծննդի և այլն: Ավելին, ինչպես կտեսնենք ստորև, եղջերու-աստվածամայր, եղջերու-Քրիստոս, եղջերու-Նախնի զուգահեռներն ել իրենց արտահայտած հասկացությունների հետ են կապվում:

Արդ, որտեղից են սնվել քրիստոնեական այդ պատկերացումները՝ կապված եղջերուի հետ: Մասնագետները փորձել են այս առումով մատնացուց անել աստվածաշնչը և մանավանդ սաղմոսները: Պոնտիենի մկրտարանի կապակցությամբ նույն աղրյուրում վկայակոչված է 41-րդ սաղմոսի հետեւյալ տունը. «Որպէս փափագէ եղջերու յաղբերս չուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ, աստուած»: Այս և նման այլ տեղերը, սակայն, Աստվածաշնչում պատկերավոր համեմատությունների իմաստ ունեն և տվյալ տեսքով չեն կարող հիմք համարվել այնպիսի խորագնաց ավանդությունների, ինչպիսին տեսնում ենք եղջերու-աստվածամայր, եղջերու-Քրիստոս, եղջերու-Նախնի և նման այլ զուգահեռներում:

Մնում է ընդունել, որ եղջերուի զաղափարը քրիստոնեական ըմբռնումների ներաշխարհն է թափանցել արտաաստվածաշնչային պատկերացումներից և հիմնավորվել Աստվածաշնչում նղած զանազան արտահայտությունների օգնությամբ: Այս առումով ուշագրավ է, օրինակ, Գրիգոր Նարեկացու տված մեկնարանությունը: Նա՛, որ այնքան լավ զիտեր Հին ու Նոր ուխտերը և աստվածաբանական գրականությունը, երդ երգոցի մեկնության ժամանակ, հանդիպելով այն տողերին, ուր կույսը կամ հարսը (իբր թե եկեղեցին) կանչում է սիրածին (իբր թե Քրիստոսին), ասելով. «Ե՛կ, եղրօրորդի իմ... նմանեաց այժեման կամ որթուց եղանց», գրում է, թե նման համեմատությունը «չէ կարի պատշաճ», այլ՝ կապված է եղնիկի սրատեսության հետ¹⁷:

Աստվածաշնչում համապատասխան հիմք զգտնելու պատճառով մնում է որոնումները կատարել ժողովրդական հին պատկերացումների մեջ: Այս առումով բացառիկ արժեք է ստանում հայկական ժողովրդական մի հին հայրեն, որն ասում է.

Ա՛յ, իմ աստուածատուր, ա՛յ, կըտրիճ, էղա՛ւդ, օ՛յ,

Ապա ո՞ր մար, որ զբեղ բերել. բնկա՛լ, օ՛յ.

Թէ զինք՝ մարդ-մարբն չէ, ա՛յ, բերել, էղա՛ւդ, օ՛յ,

¹⁵ Abbé Martigny, Կշկ. աշխ., էջ 136:

¹⁶ Բ. Առաքելյան, Կշկ. աշխ., էջ 90:

¹⁷ Գրիգոր Նարեկացի, Մատենագրությունը, Վենետիկ, 1840, էջ 292:

Ոչ կնիկ-դայեկ սրնուցել, ընկա՛լ, օ՛յ.
 Թէ եղն ի մօրին, ա՛յ, բերել, էղա՛ւղ, օ՛յ,
 Խրկագվին կաթով սրնուցեր, ընկա՛լ, օ՛յ.
 Աստղունքն իր օրօրքն, ա՛յ, ասել, էղա՛ղ, օ՛յ,
 Հուսինկան լուսն է հաներ, ընկա՛լ, օյ.
 Յիսուս ինքնսան, ա՛յլ, եղեր, էղօյտէ՛,
 Որդանան գետը մըկըրտել, ընկա՛լ, օ՛յ.
 Կընքել, իւր անուն, ա՛յ, զրել, էղօյտե՛ղ,
 Այս անուն մեր նոր թագաւոր, ընկա՛լ, օ՛յ¹⁸:

Այս երգում դրվատվում է մի հերոս, որը կոչվում է «աստուածատուր», այսինքն, աստվածապարզե, աստվածածին կտրիճ: Այդ հերոսը ծնված է ոչ թե մարդ-մորից, այլ եղնիկից, ոչ թե տանը, այլ՝ անտառում, սնված է ոչ թե մարդ-մոր կամ մարդ-դայակի, այլ հերիաթային «խրկագույի» կաթով: Նրան օրորել են ոչ թե մարդիկ, այլ աստղերն ու լուսինը: Բայց եղնիկածին այդ հերոսը, որը փաստորեն եղշերուի ձագուկ է, ըստ երեւյթին, երգում նույնացվում է «ինքնսան»-մարդ Քրիստոսի հետ.

Յիսուս ինքնսան, ա՛յլ, եղեր, էղօյտէ՛,
 Որդանան գետը մըկըրտել, ընկա՛լ, օ՛յ...

Կնունքի պարագան է հենց այն բեկման կետը, որտեղ ընդհատվում է հեթանոսությունը և որտեղից սկսվում է քրիստոնեությունը:

Հայկական հայրենը, սակայն, ուշագրավ է նաև մի այլ առանձնահատկությամբ: Նրա մեջ առկա «Այս անուն» դարձվածքը, որն ունի բանաձևային դեր, ցույց է տալիս նրա կիրառված և գործնական նշանակություն ունեցած լինելը: Հետեւապես պիտի ընդունել, որ ամեն նոր կնունքի ժամանակ երգել են այդ հայրենը և «Այս անուն»-ին հասնելիս՝ տվել մկրտվողի անունը: Եվ քանի որ կնքվողը եղել է արգեն «կտրիճ» և կնքվելուց հետո համարվել է «նոր թագաւոր», ուստի ենթադրվում է երկրորդ կնունք:

Հայտնի է, որ կրկնակի կնունքի սովորությունը քրիստոնեության մեջ պահպանվեց հոգևորականության համար: Բայց հոգևորականները կնքվելիս ո՛չ «կտրիճ» են կոչվում, ո՛չ էլ «նոր թագաւոր»: Ուստի դրանք ենթադրում են հեթանոսական ծես և տվյալ երգում երեան են գալիս որպես մնացուկ:

Այսպիսով տեսնում ենք, որ հայկական այս հին, ծիսական հայրենի մեջ դովերգվում է մի հերոս, որը ծնվել է եղնիկից և նույնացվել Քրիստոսի հետ: Ուստի այստեղ միանգամից ունենք և եղշերու-աստվածամայր, և եղնորդի-Քրիստոս զուգահեռների ապացույց: Քանի որ երգում կայուն է մոր՝ եղնիկի դադաւիարը¹⁹ և նա աստվածամայր չի կոչվում, ուստի պիտի ընդունել, որ նրա դավակը եղել է նրան ավելի հարազատ ու հեթանոս, քան կարող էր լինել

18 Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 126—127:

19 Ընտրելով եղշերուի մոտիվը, մենք շենք մոռանում նման ուրիշ մոտիվների առկայությունը՝ ինչպես քրիստոնեական, այնպես էլ ավելի վաղ ժամանակների մշակութում, որոնց բոլորի ըննությունը, սակայն, այլ գործ է: Մեր «Հայկական զարդարվեստում» այդ առումով կատարված է զգալի աշխատանք, այն մեծապես օգնում է ներկա շարադրանքին:

Քրիստոսը: Հետևողիս Քրիստոսն այդտեղ փոխարինել է Հեթանոսական հերոսին:

Աւշագրավ է, որ հայկական հին երգերում պահպանվել են համապատասխան բազմաթիվ գչքանքներ, որոնց բոլորի մեջ էլ գովերգվող հերոսի մայրը եղնիկն է, պատրան կամ վերի (վայրի) ոշխարը, այծը և նման մի այլ կենդանի: Հնտագալում դրանք աստիճանաբար վերափառավորվել են՝ հարմարեցվելով նորածին մանկանց, իսկ երգերը՝ վեր ածվել օրորոցային երգերի²⁰:

Քննվող հայրենը միաժամանակ մեզ տանում է զեսի Հեթանոսության հրիստոնեության այն խաչմերուկը, որտեղ հեթանոսությունն իր տեղը զիշում էր քրիստոնեությանը, և համապատասխան հերոսները վերափառավորվում էին: Կարեւորը ոչ թե լոկ զաղափարի համանմանությունն է, այլև ժամանակի (վաղ քրիստոնեության շրջան) համապատասխանությունը: Աւտի զա մեզ համար առիթ է հանդիսանում որոնումներ կոտարել այդ ժամանակվա բանահյուսական ուրիշ նյութերի մեջ: Իսկ զրանցից լավագույնները քրիստոնեության համար պայքարած առաջին նահատակների առասպելախառն վարքագրություններն են, որտեղ ամբարված են զարմանալի առատ ու պերճախոս փաստեր՝ կապված եղջերուի զաղափարի հետ:

Այստեղ նկատի ունենք Հայաստանում քրիստոնեություն տարածող թաղեռ առաքյալի, Հոփիսիմյանց կույսերի, Ասկյանց, Սուրբիասյանց, Ատոմյանց նահատակների և նրանց հետ առնչվող Հեթանոսական շրջանի պատմագիցարանական հերոսներ Արտաշես Առաջինի, Սաթենիկ տիկնոջ, նրանց որդիներ Արտավազդի, Վրույրի (Վնոյ), Վրույրի, ինչպես նաև Անահիտ աստվածուհու մասին պահպանված փաստախումբը, որն այս առումով ցարդ չի ուսումնասիրվել:

Սուրբիասյաններն²¹ ուղղակի կոչվում են Տոշեր՝ կապվելով նաև եղջերուների հետ: Դրա ապացույցը նահատակվող Կաղբատոսի երգած նույն 41-րդ սաղմոսն է: «Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէն անձինք մեր առ քեզ, աստուած»: Ապա նա բացատրել է, թե ինչպես վիրավոր եղջերուն ջուր է որոնում, այնպես նահատակներն են տեսնում միանալ Քրիստոսին: Այստեղ էլ առկա է երկմկրտության պարագան: Սուրբիասը հեթանուժամանակ կոչվելիս է եղել Բարակատը, ապա մկրտվելով Եփրատում՝ վերանվանվել է Սուրբիաս:

Հիշենք Ասկյանց առասպելը²²: Հոռմեական կայսրության պալատական գործիչներ են նրանք՝ առարված Հայոց թագավորի մոտ: Ծանոթագրահին հան-

20 Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 126—129, 473—478: Տե՛ս նաև Թ. Գրիգորյան, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, 1970, էջ 56—75-րդ էջերի նմուշների մեջ մասը և ուրիշներ՝ այլ էջերում:

21 «Սովեհը Հայկականք», ԺԹ, 1854, Վենետիկ, էջ 31—66: Սաղմոսը մասամբ փոփոխված է: Հնարավորություն կա մտածելու, որ Սուրբիասյանները յուրովի կապվում են Սաթենիկի հետ Հայաստան եկած Արտազի բնակիչ ալանների հետ, որոնց մասին խոսում է Սովսես Խարենացին («Պատմութիւն Հայոց», 1913, էջ 182): Այս կապակցությամբ ուշագրություն է գրավում նաև այն զրույցը, որի համաձայն Արտազ գալարն «ասեն գոլ Հայրենին Փահլուկին, իսկ Փահլուկն է անզոյ եղջերուարազ» (Հակոբ Նալյան, Գիրը որ կոչի զանձարան ծանուցմանց, 1758, էջ 296):

22 Մ. Ավգելյան, Լիակատար վարք և վկայութիւնը սրբոց, Բ, Վենետիկ, 1811, էջ 121—130:

դիպում են թագեռս առաքյալին և, կամենալով ստուգել նրա հավատքը, պահանջում են, որ նա իրենց մոտ կանչի լեռան բարձունքով սուրացող եղիքը ներին: «Յայնժամ ձայնեաց թագեռս եղանցն յանուն Յիսուսի զալ առ ինքնենոքա... եկին»: Հյուրերը մորթում են մի եղնիկ, խորովում, ուսում, իսկ թագեռս առաքյալը այդ եղնիկի մաշկն ու սկզբները ի մի է բերում, դասավորում և կենդանություն է տալիս նրան: Հրաշքի ազգեցությամբ պալատական հյուրերը դառնում են քրիստոնյա և փորձում են այդ հավատքին դարձնել նաև նրտաշնս թագավորին ու Սաթենիկի թագուհուն: Արքան ժամանակ չի գտնում: այդ հարցով զրագվելու: Սաթենիկի բարեկամները, սակայն, եկած Ալանքից, հարում են նրանց: Վերջիններս հենց Սուբիասյաններն են:

Այս զրուցներում քրիստոնեության վճռական հակառակորդներ են արքայորդիները՝ Վնյան, Վրգոյն, ինչպես նաև Արտավազդը:

Ուշադիր զննությունը ցույց է տալիս, որ Հոփիսիմյանց կույսերի առասպելն էլ վերջին հաշվով, առնշվում է եղիքերուների մի տեսակի՝ այծյամների: Հետ: Պ. Ալիշանը, վերաշարադրելով վկայաբանական վարքի համապատասխան տողերը, գրում է, թե նրանք «կանցնեն Մշկեց կամ Մշկունյաց լերան խորշ մի, որ այսպիս կոչվի լերան վրա արածող մշկապորտ այծեմանց համար»²³: Քա լոկ հուշ է եղիքերու-կույս գուգահեռից, որի ժամանակ կիսուվի ստորև նույնը կարելի է ասել Առոմյանների մասին, որոնց նահատակության վայրը հետագայում կոչվել է Ռշլուանց²⁴:

Բայց մենք առայժմ կանգ տռնենք այստեղ և անենք մեր հերթական եղիքացությունը: Ինչպես նշված հայրենում հերոսը եղիքերուի դադարապատկան միջնորդությամբ է դալիս հեթանոսական հետուներից և դառնում քրիստոնյա, այնպիս էլ՝ թագեռս առաքյալին հանգիպող Ռոկյանները: ապա Սուբիասյանները: Նրանց և նրանց համախոների խորհրդանշանը եղիքերուն է, որի հետ կապված դիցարանության արմատները գտնվում են հեթանոսական ժամանակների խորքերում:

Խնդիրն ավելի հասկանալի կղանա, եթե փորձենք որոնել համապատասխան փաստեր նաև ուրիշ ժողովուրդների մոտ: Այս առումով բացառիկ արժեք ունեն հունա-հոռմեական մշակույթի մի շարք փաստեր: Դրանցից առավել հետաքրքրական ու պերճախոս է Խ դարի հունական մի Սաղմոսարանի լուսանցքում արված մանրանկարը²⁵: Այստեղ ալացքի մեջ կանգ է առել մի եղիքերու, որի եղիքուրների միջև պատկերված է Քրիստոսը, իսկ դիմացը, ներքեցում՝ ծունկի է եկել Ս. Եվստաթեոսը: Նման մանրանկարներ կտն նաև անգիտական ձեռագրերում²⁶:

Որտեղից են սնվել այս մանրանկարները: Աստվածաշնչից, նրա սաղմոսներից, թե՝ մի ուրիշ սկզբնաղբյուրից: Ինչպես հայտնի է, Եվստաթեոսը տեղ չէր կարող գտնել աստվածաշնչային որևէ զրքում: Դրան հակառակ, մանրանկարի մանրամասնությունները հայտնի են դառնում Եվստաթեոսի վկայաբանական վարքից: Այստեղ պատմվում է, որ նա եղել է հեթանոս, Հռոմի քաղաքացի ու զորավար՝ Պլակիդիս անունով: Եվ ահա մի անդամ, որսի ժա-

23 Պ. Ալիշան, Արշալոյս քրիստոնեալիքան Հայոց, Վենետիկ, 1920, էջ 116:

24 Հ. Ռոկյան, Գնունեաց և Բշտունեաց նախարարությունները, Վենետիկ, 1952, էջ 39:

25 Բ. Ի. Լազարես, Իстория византийской живописи, II, М., 1948, տարբառ: 45ա:

26 „La Miniatura“, Novara, 1960, էջ 117, տարբառ: 110 (XIII դար):

մանակ, նա հանդիպում է մի գեղեցիկ եղջերուի ու հետապնդում նրան: Հանկարծ եղջերուի եղջյուրների միջից երեսում են խաշն ու Քրիստոսը: Քրիստոսը ձայն է տալիս. «Ո՞վ Պլակիդէ, զի՞ հալածես զիս. զի ես վասն քո եկի...»: Պլակիդեսն, այդ տեսիլքի ազգեցությամբ, ընտանիքով, ընդունում է քրիստոնեություն, վերանվանվում՝ Եվստաթեսս, մարտնչում հանուն քրիստոնեության և նահատակվելով դասվում սրբերի շարքը²⁷:

Այստեղ արդեն բացորոշ ասված է, որ եղջերուն խաշի և Քրիստոսի խորհրդանշանն է. ուստի հենց այդ իմաստով էլ այն երեան է եկել հունական Սաղմոսարանի մանրանկարում:

Դիցաբանական եղջերուի հետ է կապված նաև ո. Աթանագինեսի վարքը²⁸: Նա իր ընկերների հետ միասին, ընդունել է քրիստոնեություն և պայքարում է հեթանոսության ու նրա վիշապների դեմ: Եղջերուն արդեն նրա մըշտական այցելուն է: Այդ կապը հարատեսում է նաև նրա ընկերների ու իր նահատակվելուց հետո, որովհետեւ ըստ առասպելի, իր թե, ամեն տարեդարձի (Հուլիս 17) «եղն զայ ի յիշատակ վկայիցն՝ մատուցանելով աստուծոյ ընծայ զորթս»:

Ո՞րն է այս ավանդական զրույցի հիմքը: Մ. Ավգերյանը ամեն կերպ փորձում է համոզել, թե դա պատահական միշադեպ է՝ մուծված վարքագրության տարբերակներից մեկում և կարող է ծիծաղելի դարձնել սրբերին: Ըստ նրա, այդտեղ եղջերուի փոխարեն պիտի տեսնել մեծատոհմիկ Եվգոկիա տիկնոջը: Նույն կարծիքը պաշտպանել են Յ. Սարգիսյանը²⁹, Հ. Գելցերը³⁰ և Արիշներ: Սակայն գտնվել են մասնագետներ, որոնք մատնացույց են արել մեկնաբանության զիտական ուղիներ: Օրինակ, ըստ Գուտշմիդի «Աթանագինեսդ այդ՝ Վ հեթանոսական և հինավորց աստված իմն՝ ծածկեալ ընդ քրիստոնեական քողով. բայց նա անդստին էր իրու պաշտպան և նահապետ անտառաբնակ էրեցց»³¹: Այդ խնդրի մասին ճիշտ կարծիք է հայտնել նաև Մ. Արեգյանը, այնտեղ տեսնելով «մի հին զրույց, որ սրբերին է անցել հեթանոսությունից»³²:

Մ. Ավգերյանի և այլոց նշված կարծիքների մասին կարելի է ասել, որ դրանք նախնական տպավորությունների արդյունք են, որոնք, մանավանդ այժմ, մեր համախմբած փաստերի շնորհիվ, ինքնին հերքվում են՝ տեղի տալով մի շատ կարեռը երեւոյթի բացահայտմանն ու մեկնաբանությանը:

Եղջերու-Աթանագինես, եղջերու-Պլակիդես զուգահեռ մեզ տանում է դեպի մի այլ հուշարձան՝ հունական Դիդենիս Ակրիտաս էպոսը: Հայտնի է, որ այն մշակված է IX—XI դարերում՝ ժողովրդական երգերի ու պատկերացումների հիման վրա, պատշաճեցվելով ժամանակի պատմական դեպքերին ու դեմքերին: Դիդենիսին նվիրված ժողովրդական երգերից մեկն ամբողջապես հատկացված է դիցաբանական եղջերուին: Հերոսը մահամերձ է: Ինչո՞ւ: Որովհետեւ անտեղյակաբար, ինչպես Պլակիդեսը, հալածել է դիցաբանական եղջերուին և հանկարծ սթափվել՝ նրա եղջյուրների միջև տեսնելով խա-

27 Մ. Ավգերյան, Լիակատար վարք և վկայութիմք սրբոց, Վենետիկ, Զ, 1813, էջ 251—258:

28 Նշվ. աշխ., Դ, 1810, էջ 354—359:

29 Յ. Սարգիսյան, Ազաթանգեղոսը և իր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890, էջ 215—216:

30 Հ. Գելցեր, Հետազոտութիւն հայ դիցաբանութեան, Վիեննա, 1897, էջ 36:

31 Յ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 215—216:

32 Մ. Արեգյան, Երկեր, Ա, 1966, էջ 74:

ի, իսկ թիկնամեջին՝ աստվածամոր պատկերները: Այդ մասին է, ահա, որ մահամերձ Դիգենիսը պատմում է:

Վաթսուն առյուծ սպանեցի և երեքարյուր արջ,
Այստեղ մեղքն ինձ մոլորեցրեց՝ եղչերուին հանդիպելիս.
Եղչուրների միջև այդ եղչերուի խաշ կար, ճակատին՝ աստղ էր
Հողշողում,
Իսկ թիկնամեջին՝ փայլում էր աստվածամայրը:
Հովանավորված էր այդ եղչերուն, իսկ մեղքն ինձ մոլորեցրեց.
Եվ ահա ես պիտի մեռնեմ...³³

Պարզ է, որ Դիգենիսը պատկանում է Աթանագինեսի և Եվստաթենոսի դիցարանական ընտանիքին: Ուստի նրա կերպարը ժողովրդական երգերում պիտի ծնված լիներ դարագլխային նույն երեսութիւնների ժամանակ: Դրա փայլուն ապացույցը նրա անունն է՝ «Դիգենիս»—երկծնունդ կամ կրկնածնունդ: Ըստ այդմ, նա էլ երկանուն է՝ Դիգենիս-Վասիլ: Փաստորեն «Դիգենիս» մականուն է, որի տակ թաքնված է նրա հեթանոսական անունը: Այստեղ շկա նաև բրիտաննություն ընդունելու պարագան: Եվ դա հասկանալի է, որովհետեւ նույն—XII դարերի վրա է վերաշափակած: Բայց և այնպես այդ գծի արձագանքն է, կա էպոսում. հեթանոս (մահմեղական) է համարվում նրա հայրը:

Այսպիսով առատ ու հավատափ փաստերը խոսում են նաև մի նոր իրողության՝ հայ, հույն և ուրիշ ժողովուրդների նշված պատկերացումների համանմանությունների մասին: Դա մի կողմից մեր տաջև բացում է համապատասխան շփումների փոխազդեցությունների դուռը, իսկ մյուս կողմից՝ օգնում հասկանալու ցարդ ըստ էության շքննված մի շարք փաստերի իմաստը:

Այս առումով հետաքրքրական է հայկական հետեւյալ երգը.

Կէս դիշերին մէջ էրածիս...
Հայոց տեառն նշանը տեսայ...
Պիտի մեռնեմ էսօր-վաղը,
Մահուս տեառն նշանը տեսայ...³⁴

Այստեղ մինույն պատկերացումն է, և կարծես ինքը՝ Դիգենիսն է խոսում: Չմոռանանք, թե Դիգենիսի էպոսը Արևմտյան Հայաստանում է ծնվել, նրա մեջ մեծ տեղ են ունեցել հայերը, որոնք և երգել են նրա հին երգերը³⁵: Այս մոտեցմամբ քննվող հայկական երգը Դիգենիսյան երգի արձագանքն է՝ XIX դարի ժողովրդաշունչ գրականության մեջ:

Պահպանված է նաև մի ուշագրավ բառախաղ, որը ցարդ ճիշտ շի մեկնարանվել: Խոսքը Փավստոս Բուղանդի այն վկայության մասին է, որտեղ նկարագրվում է ազգուրաց և հավատափոխ Մեհրուժանի արշավանքը՝ դեպի

³³ «Греческие народные песни», М., 1957, էջ 15—16; Եպոսը տես «Дигенис Акрите» (М., 1960)* Ա. Յա. Սիրկինի առաջարանով և Ճանոթագրություններով:

³⁴ «Ատափոս», 1884, էջ 423:

³⁵ Г. Բարտիկյան, Византийский эпос о Дигенисе Акрите и его значение для арменоведения (автореферат докторской диссертации), Ереван, 1970.

Բազրիանդի թագավան — Հայոց հին սրբավայրը: Ճանապարհին նա Հանդիպում է ուղևորների և Հարցնում այնտեղ տանող ճանապարհը: Ուղևորները պատասխանում են «Ճանապարհ ընդ եղջերս է»: Մեհրուժանը «մեծապէս խորեաց... ընդ միտս իւր, տրտմեցաւ ընդ բանսն, սակայն տայր Հրաման շարաշար քարշել զուղեորսն և ծեծել»³⁶: Հարց է առաջանում. ինչո՞ւ «ընդ եղջերս է» պատասխանն այդպես ցնցեց և զայրացրեց Հավատուրաց Մեհրուժանին: Բանասերներն այս Հարցին տարբեր պատասխաններ են տվել՝³⁷: Բայց մենք կարող ենք տսել, որ Մեհրուժանին «ընդ եղջերս», այսինքն, եղջյուրների միջից ճանապարհ ցույց տվողները՝ աստվածային պատժի և մահվան ըսպանալիքն են հիշեցրել, հասկացնելով, որ նա Հավատքն ուրանալով բրոնել է անխուսափելի մահվան ճանապարհը:

Մ. Արեգյանը Աթանագինեսի վարքում առկա եղջերուի կապակցությամբ ոված վերոհիշյալ ժանոթագրության մեջ նշում է, որ իրենց ձագուկներին զոհաբերության բերող եղջերուների մասին շատ զրույցներ կան նաև Հայատանում:

Փաստերը ցույց են տալիս, որ եղջերու-Հերոս, եղջերու-դիցուհի զուգաշեների հեթանոսությունից դարձի եկած քրիստոնյա ներկայացուցիչները՝ ծագումով Արեմտյան Հայատանից և Փոքր Հայքից են: Այդպիսին է, օրինակ, վերոհիշյալ Հայրենի գովերգած եղնիկածին «աստուածատուր» կտրիճը, որովհետեւ այդ Հայրենը գալիս է Ակնից, իսկ նրա տարբերակները՝ մերձեփրատյան դավաներից ու Վասպուրականից: Դիզենիսը նույնպես մերձեփրատյան այդ վայրերի ծնունդ է³⁸: Այնտեղ են ծնված նաև Աթանագինեսը (Սեբաստիա)³⁹ և Պլակիդեսը (Գամիրք)⁴⁰: Ոսկյան-Սուրբասյանները, ըստ զրույցի, հենց Եփրատում մկրտվեցին ու այդտեղ էլ նահատակվեցին:

Ուշազրավ է նաև այն, որ Պլակիդեսը, Ասլակիդոս անունով, շատ է սիրված եղել Ակնի Հայերի կողմից, ուր եղել է նաև Համանուն սրբավայր⁴¹: Միջնադարյան Հոգևորականները Ասլակիդոս-Եվստաթեոսին դասել են Հայ սրբերի շարքը: XIII դարում ստեղծված Սկեռայի մասնատուիի վրա Գրիգոր Լուսավորչի, Վարդան Մամիկոնյանի, Թաղեոս առաքյալի կողքին դրել են նաև Եվստաթեոսի պատկերը⁴²:

Հետաքրքրական է և այն, որ Եվստաթեոսի վկայարանության Հայկական-թարգմանությունների մեջ եղջերուն ավելի քան դիցարանական կերպարանք է ստացել. «եղջիւրըն մինչեւ յամպսն էին... բազմուտեան էին իրեւ պտղովք լի... խաչն էր՝ խաչ մարգարտով» և այլն⁴³: Իսկ զա հիշեցնում է Գրիգոր Նարեկացու եղների գովքը.

35 Փակստոս Բաւանդ, Պատմութիւն Հայոց, Տիգիս, 1909, էջ 375—377:

37 Թ. Ավդալըզյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 132—134:

38 Ռ. Եարտիկյան, նշվ. աշխ.,

39 Մ. Ավգերյան, նշվ. աշխ., Դ, էջ 319:

40 Նույն տեղում, Զ, էջ 251:

41 Նույն տեղում, Զ, էջ 283—284:

42 „Revue des études arménienes“, I, Paris, 1964, էջ 130:

Այս Հարցերի կապակցությամբ մեծարժեք փաստեր են Հավաքված Դ. Ալիշանի «Արշալուս քրիստոնեութեան Հայոց» (Վենետիկ, 1920) դրբում:

43 Մ. Ավգերյան, նշվ. աշխ., Զ, էջ 282:

Եղջերն ամէն խաշանման,
Եւ մազն ամէն՝ հոյլ մարգարիտ^{44:}

Աթանագինեսի հիշատակը Հայաստանում այնքան է հարդիվել, որ «Արամագդայ և Անահիտայ» տոները խափանվելով, վերահատկացվել են «Յովհան Մկրտչին և Աթանագինեսայ վկային»— «Նաւասարդ ամսոյ իԱ»: Եվ այս բոլորը՝ Արևմտյան Հայաստանի ու Փոքր Հայքի բնօրրանում: Իսկ դա՝ հայնական, հայ-հոռմետական դարավոր շփումների բանուկ խաշմերուկն էր՝ անբաժան Փոքր Ասիայից: Հատկապես այստեղ՝ Փոքր Ասիայում էին վերաձևավորվում կրոնական հին պատկերացումները՝ ըստ քրիստոնեականի: Կրոնական դաղափարների այդ խառնարանի մասին է խոսում Ֆ. Էնդելսը, միաժամանակ Փոքր Ասիան համարելով վաղ քրիստոնեության զլիավոր «ուեզիդնացիա»^{45:} Փոքր Ասիայի և Հայաստանի այդ ժամանակների տաճարային համայնքների ուսումնասիրության մեջ Ա. Փերիխանյանը իրավացիորեն նշում է, որ այդտեղ կրոնական տարբեր գաղափարները հետզհետե մերձենում էին նաև ստրկատիրական վերնախավի շահերի թելագրանքով^{46:}

Ահա հիմնականում այս պայմաններում ու տարածքում են ծնվել դիցարտանական եղջերուի հետ կապված քրիստոնեական վերոհիշյալ առասպելները, ուստի հենց այստեղ էլ պիտի որոնել համապատասխան հիմքեր: Այս առումով հատուկ ուշադրություն է հրավիրում Փոքր Ասիայի ամենահռչակավոր սրբությունը, որի մասին քրիստոնեության նոր Ուխտում կարդում ենք: «ԵԱԿ զմեծին աստուածոյ Արտեմիայ զմեհեանն յոշինշ համարել... զոր ամենայն Ասիա և տիեզերք պաշտեն» (Գործք Առ., ԺԹ, 27): Խոսքը Եփեսոսի Արտեմիսի մասին է. Արտեմիս, որը Հունաստանի մեծ աստվածուհին էր՝ մտած Հռոմ Դիանա անունով: Նրանց համազորը՝ Հայաստանում՝ Անահիտն էր: Հենց այս աստվածուհիներին էր, որ փոխարինելու եկավ աստվածամայրը՝ ժամանգելով և վերափակատավորելով նրանց արմատական հատկանիշները: Հարց է առաջանում. կապված էին նրանք դիցարանական եղջերուի գաղափարի հետ: Այո՞. և հենց այստեղ է որոնվող խնդրի լուծման գաղտնիքը:

Հայտնի է, որ Արտեմիսը պատկերվել է որպես որսի կենդանիների և առհասարակ որսորդության հովանավոր: Մեծ ճանաշում են զտել նրա այն արձանները, որտեղ նա մի ձեռքով բռնել է իրեն ապաստանած եղջերուի եղջյուրներից, իսկ մյուսով դուրս է քաշում կտպարձից նետ՝ պատժելու այդ եղջերուին հալածող որսորդին^{47:} Մոտավորապես այդ ձեռվ է պատկերվել նաև Դիանան: Հռոմեական հին դրամների վրա նրան հանդիպում ենք եղջերուի հետ որպես հովանավորուհու: Ահա համապատասխան դրամապատկերներից (48 թ. մթա) մեկի նկարագրությունը. «Դիանան հերածակ, կանգնած հանդիպահայաց, աջով բռնել է ետին ոտքերի վրա բարձրացած և դեպի ձախուցի ձգտող եղջերվի պողերից, իսկ ձախով՝ ցուլը»^{47ա:} Բայտ որում, այս-

⁴⁴ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840, էջ 473—474:

⁴⁵ Կ. Մարքս, Փ. Էնգելը, Сочинения, տ. 22, էջ 489:

⁴⁶ Ա. Պերիխանյան, Խրազական առաջնային պատմական գործականությունները, էջ 48:

⁴⁷ Փ. Լյոբկեր, Реальный словарь классической древности, М.—СПб, 1888, էջ 132.

^{47ա} Խ. Մուշեղյան, Հայաստանի դրամական գանձերը, I, Երևան, 1973, էջ 106. տե՛ս նաև 259—262-րդ նկարները:

տեղ ցուց համարված առարկան, մեր կարծիքով տեղ-նիզակ է. ուղմական դործիք՝ իր սուր ծայրով: Դիանա-եղջերու զուգահետի մասին եղած փաստերից հիշենք միջնադարում կերտված գերմանական արվեստի մի հրաշալիք՝ որ դիցարանական եղջերուի վրա բազմել է Դիանան⁴⁸: Ուստի և միանգամայն իրավացի են մասնագետները, երբ Դիզենխիսին հանգիպած կախարդական եղջերուի մասին զրում են, թե այդտեղ «լսվում է հին հունական ավանդության արձագանքը Արտեմիսի (որսի աստվածուհու) սրբազն եղջերուի մասին: Բայց այդ ավանդության հետ այստեղ ներդաշնակված է նորև հին քրիստոնեական զրույցը, որը Քրիստոսին պատկերում է եղջերուի կերպարանքով»⁴⁹:

Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն միմյանց են հասցված մի կողմից հեթանոսական, իսկ մյուս կողմից քրիստոնեական եղջերուների մասին եղած դիցարանական պատկերացումների ծայրերը, բայց շեն «Հանգուցված»:

Արտեմիսի կապակցությամբ մեծ արժեք ունեն Ազամեմնոնի դատեր՝ իֆիդենիայի զոհաբերության, ինչպես նաև նրա եղբոր Օրեստի հետ կապված պատմությունները: Այդ մասին են խոսում Եվրիալիդեսի դրամաները, Նոննոսի, Պրոկոպիոս Կեսարացու և այլոց պատմությունները:

Միջնադարյան Հայաստանում լայն տարածում են ունեցել հունարենից թարգմանված դիցարանական փշրանքներ, որոնք Գրիգոր Աստվածաբանի միջնորդությամբ դալիս են Նոննոսից: Ըստ այդ փշրանքների Ազամեմնոնի դատերը՝ իֆիդենիային տանում են զոհաբերելու Արտեմիսին, իսկ «Արտեմիս ողորմեալ կուսին՝ յափշտակէ զնա... և երեցոյց փոխանակ կուսին եղն, զոր առեալ եղջենացիքն՝ զոհեցին»⁵⁰:

Իֆիդենիայի պատմության կապակցությամբ մեծ արժեք ունի Պոմպեյի փլատակներից պեղված նախաբրիստոնեական շրջանի մի որմնանկար⁵¹, ուր ներբեռում զոհաբերման տեսարանն է, իսկ երկնքում, ամպերից վեր՝ առարվող եղջերուի և նրան բերող քրմունու պատկերները:

Ըստ որոշ ազգյալբների, փրկված իֆիդենիան բերվում է Հայկական Տավրոս, որտեղից նա իր հետ տանում է Անտիոքի արձանը, որպեսզի եղբայրը՝ Օրեստը Կոմանայում կառուցեր Արտեմիսիան տաճար:

Նոննոսի մոտ արժեքավոր տաղեր կան Արտեմիսի և նրա հոմանիներ «Ավրիոնի» մասին⁵²: Այլ ազգյալբներից միևնույն զրույցը հայտնի է Դիանայի անունով, որը լողանալիս տեսնում է իրեն հետապնդող Արտիոնին, պատժում է նրան՝ նախ դարձնելով եղջերու⁵³: Հանրահայտ են այս թեմայով արված միջնադարյան մեծարժեք նկարներ⁵⁴:

Հայկապյան բառզրքի հեղինակները «եղջերուահար» բառը մեկնելիս, օգտվում են նոննոսի նշված վկայությունից և «Ավրիոն» (Օրիոն) անվան կողքին իրավացիորեն ավելացնում «Հայկ», իսկ «Արտեմիս»-ի կողքին՝ «Անտ-

⁴⁸ „Encyclopedia of World Art“, New-York, Toronto, London, II, 1960, տախտ. 70:

⁴⁹ „Греческие народные песни“, էջ 265:

⁵⁰ (Nonnos). Die Schollen zu fünf Reden des Gregor von Nazianz, հրատ. չ. Մանդանյան, Մարրուրդ, 1903, էջ 17:

⁵¹ Ф. Любкерт, նշվ. աշխ., էջ 518:

⁵² (Nonnos), նշվ. աշխ., էջ 18:

⁵³ Ф. Любкерт, նշվ. աշխ. տես „Orion“ բառը: Տես նաև Փ. А. Брокгауз, И. А. Ефрон, Энциклопедический словарь, I, էջ 316 („Актей“):

⁵⁴ „Encyclopedia of World Art“, 12, 1966, տախտ. 22:

Հիտ»: Հայկ-Օրիոն դիցարանական ընդհանրությունն էլ վազուց է հայտնի: Եվ ահա, Արտեմիսին հետապնդում է նաև Օրիոն-Հայկը: Իսկ որ հայոց նախնի Հայկի պատմությունն էլ է կապված կարիճի և Օրիոն համաստեղության հետ, գա նորից հանրահայտ է⁵⁵: Հայ դիցարանության համար նոննոսի մոտ արժեքավոր փաստ կա նաև Արտեմիսի ցլակերպ հոմանու մասին եղած նշումի մեջ, որովհետև Անահիտի պաշտամունքն ու նրա տաճարները հայտնի էին անահտական ցուլերով:

Վերևում նշվեց Դիզենիսի, Աթանագինեսի, Եվստաթիոսի, ինչպես նաև հայոց «աստուածատուր» կտրիճի՝ Արեմտյան Հայաստանից և Փոքր Հայքից ծագած, իսկ Ռոկյանց և Սուբիասյանց վկաների՝ այդտեղ նահատակված լինելը: Դրան համապատասխանում է Անահիտ-Արտեմիս-Դիանա աստվածուհիների պաշտամունքային վայրերի առկայությունը ևս Արեմտյան Հայաստանում ու Փոքր Հայքում: Ա. Գարագաշյանը, Մ. Աբեղյանը և ուրիշներ վազուց են նկատել, որ Ստրաբոնի մոտ կան համապատասխան տվյալներ: Խոսելով Կապադովկիական Տիանա քաղաքի մասին, Գարագաշյանը գրում է. «Տիանայ, որպէս և դաւասն Տիանիտիս՝ կը լիշեցունէն զԱնահիտ... ոչ կարի հեռոի ի Տիանայ աւանի մեհեան Անահտայ»⁵⁶: Այստեղ նկատի է առնված Ստրաբոնի 12-րդ զրբի 7-րդ հատվածը, որտեղ, իրոք, Դիանա աստվածուհու անունով նշված է և զավառ, և քաղաք, ինչպես նաև Արտեմիսի մեհյան: Ավելին. Հիշում է, որ Տիանա քաղաքն էլ կառուցված է եղել Շամիրամի անունով կոշված բարձունքի վրա: Իսկ Շամիրամն ինքը իր շատ գծերով պատկանում էր աստվածուհիների այն մեծ ընտանիքին, որոնց մեջ էին Անահիտը (Արտեմիսը, Դիանան), Աստղիկը և այլ աստվածուհիներ⁵⁷:

Արտեմիս-Դիանա-Անահիտ աստվածուհիների հարազատությունը միմյանց որոշ մասնագետների մղել է անգամ մտածելու, թե արդյոք «Դիանա» անունը «Անահիտ»-ի շրջված ձեր չէ⁵⁸: Հիշատակելի է, որ Մովսես Խորենացին Անահիտին կոշում է Արտեմիս: Ըստ այդմ էլ Պ. Ալիշանը գրում է, թե Անահիտն է «սեփականագոյն և սիրելագոյն ի դիս Հայոց, որոյ պատշաճեալն առ Յոյնս՝ է Արտեմիս... առ կատինս Դիանա»⁵⁹:

Այս անժխտելի իրողությունից ենելով է, որ Պ. Ալիշանը Անահիտին հիմքած էջերում չի մոռանում Անահիտի կապը՝ եղջերուի հետ: Նրա բերած փաստերը սակայն, կարոտ լինելով լրացուցիչ հիմնավորումների, մատնը-վեցին մոռացության: Այդ պատճառով է, որ Անահիտին նվիրված և վերջերս հրատարակված Կ. Մելիք-Փաշայանի «Անահիտ դիցուհու պաշտամունքը» մենագրության մեջ ոչ մի խոսք չկա այդ մասին⁶⁰:

Մենք ևս ժամանակին անդրադառնալով հայոց դիցարանական եղջերուին,— շենք հենվել Պ. Ալիշանի նշած փաստերի վրա՝ նրանց ստուգելիության պատճառով⁶¹: Այժմ, սակայն, վերևում կատարված քննություններն ինքնին

55 Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 30—35:

56 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, Բ, Թիֆլիս, 1895, էջ 167—168:
Տե՛ս նաև Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899, էջ 517—518:

57 Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 40—41:

58 «Մառը և Հայագիտության Հարցերը», Երևան, 1968, էջ 225:

59 Պ. Ալիշան, Հին հաւատք..., էջ 279:

60 Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:

61 Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 256—264:

անհարկի են դարձնում Անահիտ-եղջերու զուգահեռի փաստաթկումը և իրավունք տալիս՝ Ղ. Ալիշանի մատնանշված փաստերը համարել մեծարժեք, իսկ կարծիքը՝ ճիշտ։ Դրանցից մեկն է, օրինակ, Արտաշես Առաջինի առասպելը՝ Ղ. Ալիշանը, խոսելով Անահիտի պաշտամունքի մասին, ճիշտը է նաև այն փաստը, որի համաձայն Արտաշես Առաջինը մահամերձ վիճակում Արեգյան տոհմի Արեղո նահապետին առաքում է «յԵկեղեց յԵրիդայ՝ բժշկութիւն» խնդրելու։ Բայց նրա խնդրանքը չի կատարվում⁶², և նա մեռնում է՝ աշքերի տոշե, ինչու բանահյուսությունն է վկայում։

Զվարելն եղանց Եւ զվարելն եղջերուաց...⁶³

Ինչո՞ւ է դիցարանված այս կենսագրականում Մրտաշես Առաջինի մահը մի կողմից կապվել Անահիտի, իսկ մյուս կողմից՝ եղնիկների և եղջերուների որսորդության հետ։ Հետաքրքրական կլիներ իմանալ Արեղո նահապետի բերած «օգատասախանը» Անահիտից։ Մովսես Խորենացին իմացել է զա, բայց ավելորդ է համարել դրան անդրադառնալը և բավարարվել միայն Արեղո նահապետին «շղոմարար և սուտակաւպաս» կոչելով։ Այդ շղոմարարության և սուտակաւպասություն մեջ է եղել, անշուշտ, նաև Արտաշեսի մերժման բացատրությունը, որը պիտի նմանվեր Գիղենիսի խոստովանությանը։

Այս մշուշուտ պատմությունն ավելի է հստակվում և Ռոկյանց, և Սուրբայանց դրույցների օգնությամբ, որոնք կապվել են Արտաշես Առաջինի և Սաթենիկի, ուստի և շատ հեռու ժամանակների հետ։ Ինչո՞վ բացատրել այս շփոթը, մի՞թե առասպելների հորինողները չեն կարող տալ ժամանակակից անձանց անուններ։ Կարող էին, բայց այդպես չի արված, որովհետեւ փաստուրեն շարունակվել է հին եղջերուների հետ կապված Արտաշեսյան առասպելը, որին և միահյուսվել են Ռոկյան-Սուրբայանների վարքերը։ Ըստ վկայաբանական դրույցի՝ Սուրբայանները հալուծվել են Արտաշեսի ու Սաթենիկի որդիների կողմից։ Պատճառն այն է, որ նրանք պայքարում են հեթանոսության դեմ, մտածում խորտակել Բագարանի կուռքը։

Բագարանը, կապվելով Արտաշես Առաջինի հետ, ճիշեցնում է Մովսես Խորենացու վկայությունը՝ Երվանդ Վերշինի կառուցած Բագարանի խորտակման, ապա Անահիտի և ուրիշ տառվածաթյունների բրմերին նոր հիմնվող Բագարանը տեղափոխվելու մասին⁶⁴։ Ուստի Սուրբայան Եղջերուները կամեցնել են խորտակել Անահիտի արձանը։ Արտաշեսն ու նրա ընտանիքն էլ, առասպելաբանության ուժով, կյանքի են կոչված նրանց հալածելու համար։

Արտաշեսյան առասպելը մեզ տանելով դեպի Երվանդ Վերշինի հիմնած Բագարանը, Անահիտի և այլոց պաշտամունքը, տանում է նաև դեպի նրանց նվիրված «Ծննդոց անտառը»—եղնիկների, եղջերուների, այծյամների և որսի այլ կենդանիների բազմությամբ։ Որքա՞ն նման է Արտաշեսի ճիշած որսի տեսարանը՝ «Ծննդոց անտառի» տեսարանին՝ նավասարդյան ծիսական որսորդություններով և տարեգլխային այն տոնով, որը նվիրված էր Անահի-

62 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 190։

63 «Դրիգոր Մագիստրոսի թղթերը», Հրատ. Կ. Կոստանդանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 87։

64 Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 175։

տին և Արամազդին։ Այդ տոնն էր, որ ըստ Հայոմավուրքի վերափոխեց Զրիգոր Լուսավորիչը «և ուսմանեաց ամ յամէ աշխարհաժողով և թագաւորական տօն լինել, որ օր մուտ է Նաւասարդի ամսոյ իԱ, որ է Աւոստոս ԺԷ և զի յայնմ աւոր տօնէին հայր ի կուսպաշտութեանն Արտմազդայ և Անաւտայ»⁶⁵։ Համկանալի է, որ Մննդոց անտառի սնունը՝ Անահիտի և Արամազդի հայոց նոր տարիա ծնունդն էր խորհրդանշում, որը հետագայում համապատասխանեցվեց Քրիստոսի ծնունդին, այդ ծնունդը ավետող «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի»... սկսվածքին՝ դեպի ավետարանական խորանները և կիսախորանները բերելով թե Անահիտի եղշերուներին և թե իրեն՝ թատերականացված Անահիտին՝ ի զեմս թոշնագլուխ կանանց կամ մերկ աղջիկների մանավանդ առատության եղջյուրը (ամալթեղջյուրը) ձեռքերին։ Այս կապակցությամբ պիտի նկատել, որ Անահիտը, Արտեմիսը, Դիանան և նրանց մյուս երկվորյակները, որպես որսի հովանավորներ, կապված են ոչ թե լոկ եղշերուի գաղափարի հետ, այլ նաև որսի մյուս կենդանիների, իսկ հաճախ նաև առհասարակ՝ անասնապահության ու կենդանա-բուսական ողջ աշխարհի։ Այստի համապատասխան պատկերացումների մեջ և նրանց զանազան վերաբրտություններում առկա է նաև այդ երևոյթի արտացոլումը և դա՝ համկանալի մշակումով նաև քրիստոնեական դարաշրջանում։ Հիշենք Գառ-Քրիստոս տարածված խորհրդապատկերը կամ ժողովրդական հարսանեկան այն ծառագովքը, ուր փեսայի ծառը գովելու են հրավիրվում, «հղնիկ գաշտէն» Գառն Արեգոյն», «Քօշն ի Քարէն» և այլ կենդանիների⁶⁶։

Արվեստի հին հուշարձանների շարքում հաճախ հանդիպում ենք աստվածությունների այնպիսի բարդ պատկերների, որտեղ մարդկային մարմինը ձուլված է կենդանական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների հետ։ Այդպիսին է, օրինակ, Եփեսոսի բազմաստինք Արտեմիսը՝ ցուլերի, եղշերուների և այլ կենդանիների համախումբ շարքերով⁶⁷։ Հայոց հարսանեկան երգի մարմնավորումն է կարծես այս արձանը կամ բնդշակառակը։

Համոզվելով հայոց դիցաբանական եղշերուի կապի հարցում՝ ինչպես տատվածամոր, Քրիստոսի, այնպես էլ Անահիտի, Արտեմիսի հետ, մենք կկոմինայինք հատուկ ուշադրություն հրավիրել Անահիտի պաշտամունքին առնշվող և մեղ հայտնի ամենահնագույն եղշերվագանգակի վրա, որը գտնվեց վերջերս Անահիտ դիցուհու ամենանշանավոր սրբավայրի՝ Երզնկայի պիտումներից (նկ. 5)⁶⁸։

Փղոսկրից կերտված և ոսկով զարդարված (բծավոր եղշերու) պաշտամունքային այդ հրաշալիքը, իր դիցաբանական էությամբ, Անահիտական է և զարմանալիորեն նման հայ մշակույթի տարրեր բնագավառներում հանդիպող Եղնիկազարդերին, օրինակ, վերեւում հիշված Գաստղի բաղիլիկ եկեղեցու եղշերվագանգակներին, որոնք հետո զարգացել են որպես լուսանցաղարդ

⁶⁵ Կ. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ. էջ 135—136։

⁶⁶ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 289—294։ Ուշադրավ է, որ հնում եղել են հայկական տոհմեր, «Այծենական», «Քաղեանք», «Գոշեան» և նմանութիւն անուններով (տե՛ս Պ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 432—433)։

⁶⁷ Յ. Ա. Պագոզինա, Իстория Мидии, СПб, 1903, էջ 237։

⁶⁸ „Scientific American“, 1963, Number 3, էջ 43։

(նկ. 6)⁶⁹: Ուշագրավ է, որ այդ երեք զարդեղնիկներն իրարից բաժանված են շուրջ մեկական հազարամյակներով:

Երզնկայի եղջերուն մեզ դուրս է բերում դեպի Հին Արևելքի դիցաշխարհը, դեպի խեթա-խուրիսկական և միջագետքյան մշակութային հարստությունները: Զմանելով այս ոլորտը, կկամենալինք հիշել միայն մի երկու փասու: Զարմանալի նմանություն կարելի է տեսնել վերռում հիշված հայկական հարստական երգի և խուրի-միտանիական այն գլանակնիքների փորագրադարդերի ներկայացրած տեսարանների միջև, ուր կենաց ծառերը շրջապատված են եղնիկ-եղջերուներով⁷⁰: Միջագետքյան փաստերից հիշենք մոտ 3000 թվականների (մ. թ. ա.) պաշտամունքային մի տեսարան, ուր պատկերված է դիցարանական իմդուզուգ թոշունց՝ զույգ եղջերուների հետ⁷¹: Վերջիններս կանգնած են հանդիսավոր զիրքով. Նրանց եղջերուները դուրս են պրծել քառանկյունի զարդարչանակից⁷²: Ընդհանուր տեսարանը հիշեցնում է Թորոս Տարոնեցու մշակած կիսախորանը, ինչպես և «եղջիւր եկեղեցւոյ» հասկացությունը⁷³: Այսպիսի պատկերացումների հիման վրա է, որ խորանազարդերի վերին անկյունային ոստիկները կոչվում են եղջյուրներ: Երբեմն էլ նման տեղերում ընդգծվել է եղջյուրի զարդարքը (նկ. 7)⁷⁴: Դրանք ի վերջո աղդամությունից և ճարտարապետությունից են զարդիս՝ կապվելով համապատասխան քանդակների, զարդերի, արձանների⁷⁵ և ուղղակի եղջյուրներ ցցելու սովորությունների հետ⁷⁶:

Այս պատկերացումների, ինչպես նաև առհասարակ եղջերուի հետ կապված դիցարանական նյութերի մեջ հատուկ տեղ ունի նաև միեղջերուն կամ միեղջյուրը, առանց որի ուսումնասիրության միշտ էլ թերի կմնա եղջերուի մոտիվն իր ամրոցությամբ: Ճիշտ է «միեղջերուն» նկատված է մասնագետների կողմից, և նրա մասին կան ուշագրավ դիտություններ, սակայն ցարդի գտնված նրա տեղն ու զերը համապատասխան պատկերացումների մեջ:

⁶⁹ Մաշտոցի անվան Մատենագրան, ձեռ. № 356, թերթ 110, ժաման. 1318 թ.

⁷⁰ В. В. Струве. История Древнего Востока, М., 1941, էջ 247. Б. Б. Пиотровский, Кармир-Блур, I, Ереван, 1950, էջ 78, նկ. 50:

⁷¹ «Памятники мирового искусства», М., 1968 տախտ. 173ա:

⁷² Պաշտամունքային եղջերուի և թագավորական իշխանության առնչության մեծարժեք քանդարձներ (15—13-րդ դդ. տե՛ս «The Art of the Hittites, Երևան-Յորք, տախտ. 47):

⁷³ Ազարանգեռոս, Պատմութիւն Հայոց, էջ 145:

⁷⁴ Ա. Մնացականյան, Հայկական զարդարվելու, էջ 369—450, նկ. 780:

⁷⁵ «Encyclopedia of World Art», Vol. IV, 1961, տախտ. 164; Տե՛ս նաև Vol. IX, 1964, տախտ. 307:

⁷⁶ Նույն տեղում, էջ 370—371, նկ. 780: Հայկական սովորութների ու պատկերացումների կապակցությամբ հիշենք Բաղրանդի Խաստուր զյուղի ս. Աստվածածին եկեղեցուն վերաբերող հետեւալ զրուցը. «Եկեղեցվոյս զորքը շատ է, չուխտակ վերին կիզեր, զուր զումի վըր շեման կը զներ ու զուր կը մատզեր... Տարվե եղնիկներու եղջյուրներն եկեղեցվոյ որմի վրա կը անկվեր առ ի հիշատակ Հրաշագործության: Մի օր այս եղջյուրներուն վրա թռչուն մի կը թառի... Ենկի Չերին Հրացան արձակելին... Հոգին կը փշե...» Հիշենք նաև, որ տեղում գտնվել են սեպագիր արձանագրություններ (Ս. Հայկոնի, Բաղրանդ, Զբարաշխ գաւառ, Ա. 1894, Ա. էջմիածին, էջ 184):

Մեզ համար այժմ հնարավորություն է ստեղծվում զեթ ամենահիմնական գծերով ճանաշել նուև այդ էակին:

Միեղբերուն (միեղցյուր) պատկերվում է բարդ տեսքով, երկու և ավելի կենդանիների առանձին մասերի երեակայական համադրությամբ, միայն թէ միշտ ունենում է մի հզոր եղջյուր: Ամենատարածված տեսակները, որպես կանոն, կապ ունեն եղբերուի կամ այծի հետ (նկ. 8)⁷⁷, բայց հանդիպում են ավելի բարդ ու դժվարաճանաշելի միեղցյուրներ ևս: Նրանց որոշ ներկայացուցիչներն արվեստում ցարդ մնացել են անճանաշելի և առեղծվածային վիճակում:

Հայկական մանրանկարչությունից ուշագրավ է հատկապես Թորոս Տարոնեցու նկարած հայր եղբերուն (նկ. 1), որը փաստորեն միեղբերու է՝ բայց ճյուղավորված եղջյուրով: Տվյալ տեսարանում հավանաբար եղբերուի հետ կապված զաղափարները զուգորդված են «Մատիցէ զնոսա... որ սիրելին է որպէս զորդին միեղցերոյ» (Սաղմ., ի՛լ—6) բմբոնումի հետ: Զույգ միեղցերուների նոխազակերպ պատկերների ենք հանդիպում № 7729 ձեռագրի 495ա թերթի կիսախորանում: Մեծ արժեք ունի № 379 ձեռագրի կիսախորանը (թերթ 2ա), որտեղ վիշտապամարմին միեղբերուները մարտնչում են վիշտապների զեմ (նկ. 9): Միեղցյուրի ուշագրավ կերպարի ենք հանդիպում Մշո Առաքելոց դուռն քանդակներում, որի մասին խոսք կլինի ստորև: Միեղցյուրի ավելի բարդ պատկերի մասին են խոսում Հնդկաստանին վերաբերող նյութերը: Հայտնի է, որ միեղցյուրն իր հզորության ուժով բազմած է եղել Անդիխական սկետական խորհրդանշանի, ինչպես նաև թնդանոթների վրա: Յարական արքունիքն ունեցել է նրա կախարդական եղջյուրը, որը զնահատվել է որպես աշխարհի ամենամեծագույն զանձր⁷⁸: Եղել են ցեղեր, որոնց գլխարկների վրա (թե՛ կնոջ, թե՛ տղամարդու) ցցված է եղել միեղցյուրի եղջյուրը⁷⁹: Աստվածաշնչը ճանաշում է հզոր «միեղցերուին» և նշում նրա պաշտամունքի մասին:

Այս բոլոր նյութերը խոսում են զենքս արտաքին տվյալների վերաբերյալ, մինչդեռ կարեւրագույնը միեղցյուրի ներքին էությունն է: Այդ մասին, կարելի է ասել, էական մեկնաբանություններ շկան, ուստի փորձենք խորամուխ լինել այս խնդրի մեջ: Մեզ համար ելակետային նշանակություն ունի Հունական մի հին սազմոսարանի մեջ պատկերված «միեղցյուրը և կույսը» յուսանցազարդը (նկ. 10)⁸⁰: Համապատասխան սազմոսն ասում է: «Բարձր եղիցի որպէս միեղցերոյ եղիցիր իմ» (91—11): Սազմոսարանում սակայն խոսք շկա այդ միեղցերվի առջև նոտած կիսամերկ կույսի մասին: Նրանց սիրո բացահայտ դրսեւրումն այդտեղ՝ անժխտելի է: «Իս մեզ հիշեցնում է հայկական միջնադարյան ձեռագրերից մեկում հանդիպող այն պրույցը⁸¹, որն առում է, թէ միեղցերուն՝ Քրիստոսն է: Ապա պատմվում է, թէ ինչպես այդ

⁷⁷ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5505, թերթ 44ա:

⁷⁸ Փ. Ա. Բրոկգայզ, Ի. Ա. Եֆրոն, Կովկասի աշխարհ, տես «Եдинություն»:


⁷⁹ «Բառարան և դրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 167:

⁸⁰ Ի. Լ. Կոնդակօվ, Մինիատուր գրեկական պատկերներուն, XIII—4, այդ մասին՝ էջ 21: Տես նաև «Դревнерусское искусство», Մ., 1972, էջ 81—89 (Վ. Բ. Գիրշբերգի հոդվածը՝ «Կոզъльрогъ...»):


⁸¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9823, թերթ 66ր—67ա: Հայ մատենագրության մեջ օգտագործված է և «միեղցերու» բառը, և «միեղցյուր»-ը: Այդ մասին տե՛ս Հ. Մարր, Տексты и разыскания..., VI, СПб., 1904, էջ 33—34, 110—111:



245



246



247



248

քրիստոս-միեղչերուին որսալու համար պիտի ներկայացնել մի կույս աղջիկ: Այդ ժամանակ, իրը թե, միեղչերուն ոզգոյ զկուսական բուրումն հոտոյ, այնպէս փոփոխի, մինչ զամենայն զազանութենէ շիջեալ, ի նորին ծոցն զետեղեալ յենու և զստինսն նորին ծծէ և այսպէս իրքե զառն հեղացեալ լինի»: Այդ վիճակումն էլ, իրը թե, բռնում՝ են նրան, և նման եղանակով է, որ պիտի սիրաշահել Քրիստոս-միեղչերուին:

Այս երկու փաստերի օգնությամբ կարողանում ենք նման մի զույգ էլ նրատել երգ երգոցում: Այստեղ էլ Հարսը կամ օրիորդը մարդակերպ է, իսկ Փեսան՝ կենդանակերպ: Եվ ահա Հարսը «լուաւ զծայն Փեսային և տոէ: Չայն եղբօրորդույ իմոյ, ահաւասիկ սա նկն, վազու առնու ի վերայ լերանց՝ խաղացեալ ի վերայ բլրոց: Նման է եղբօրորդին իմ այծեման կամ որթուց հղանց ի վերայ լերանց ԲՃթելայ» (Բ-8-9): Բանաստեղծության ընթացքից երեսում է նաև Հարսի մերկությունը, որով սքանչացած է Փեսան. «Զե բարձից (կոնքերի) քոց նման է ուղանց լեռելոց գործոյ ձարտարի: Պորտ քո՛ թակոյկ ձախարակեալ անդակաս ի պինտյ խառնելոյ: Որովայն քո՛ իրքե զշեզ ցորենոյ փակեալ շուշանաւ: Երկու ստինք քո՛ իրքե երկուս ուզ երկուորիս այծեման» (է. 2-3):

Իա, սակայն, մի առավել հին սկզբնադրյուր, որտեղից ավելի քան համարի է դառնում ընդհանուր դիցարանության հնամենի էությունը: Խոսքը «Գիլզամեշ» էպոսի մասին է, ուր նկատի ունենք կենդանակերպ էնկիդուի և Իշտարի մարդակերպ քրմուհու հանդիպման դրվագը: «Էնկիդուն, որ ահա առանձին կեցած է իր մազոտ մարմնով ամայի դաշտագետնին վրա... Վիթերուն հետ կարածի և անոնց պես խոտ կուտէ. Երեներուն հետ միասին չուր խմելու կերթա»⁸²: «Վայրի անասունների կաթը ծծած է»⁸³: Ահա այդ մայրի էնենպանուն կամ նախամարդ-էտկին որսալու համար բերում են Իշտարի նվիրական քրմուհուն և պատվիրում: «Ահա, ան է, ո՞չ ցնծու՞իդ, դու կուրծքերդ ու զոգդ բաց արա, որպեսզի դա քովդ պառկի, շվայտանքի մեջ մխրճվի... Հաղուստդ հանե, սիրաբլուրդ բաց արա, որպեսզի կրնա իր կուրծքը քու կուրծքին սեղմիլ:

Եվ ցնծու՞ին կրանա իր կուրծքը և որախության բլուրը»: Իսկ էնկիդուն մատենում է նրան, վայելում և ընկնում՝ իրեն որսալ կամեցողների ձեռքը⁸⁴:

Նորից գտնվում ենք Հին Արեկելքում՝ համոզվելով, թե այստեղ ձևավորված էնկիդու-քրմուհի հնագույն դիցարանության արձագանքներն են, որ պահպանված են միեղչերովի և կույսի, Հարսի ու Փեսայի մասին հղած առասպեշերում:

Այսպիսով տեսնում ենք, որ միեղչյուրը կամ միեղչերուն ոչ միայն հզոր ու հրեակայական զազան է, այլև դիցարանական կույսերի հոմանին, եղնիկների ու կխառարների անօաժան ընկերը և ցեղակիցը: Գլխավորը մեզ համար նրա արական, բհղմնավորող ուժի ներկայացուցիչ լինելու պարագան է: Հարցի այս կողմն ավելի ընդգծված զարձնելու համար հիշենք նաև միջնադարյան մի քանի փաստեր: Հունական Սաղմոսարանի օրինակը տեսանք վերենում, ուր զեռ իշխում են հեթանոսական ըմբռնումները: Հայկական ձեռագրի զրուցը հեթանոսականի և քրիստոնեականի հաշտեցման փորձերից մեջն է՝ կատ-

⁸² «Գիլզամեշ», Երեան, 1963, էջ 21:

⁸³ Կույս տեղում, էջ 30:

⁸⁴ Կույս տեղում, էջ 23—24:

ված միեղերու-Քրիստոս զուգահեռի հետ։ Առավել ցայտուն օրինակը տալիս է XIV դարի իտալական բանաստեղծ Պետրարկան՝ իր «Հաղթարշավ» պոեմում՝ զրված հնագույն պատկերացումների հիման վրա։ Մեզ համար մեծ արժեք ունեն նրա համար արված միջնադարյան մանրանկարները, որտեղ քրիստոնյա կույսերը և նրանց առաջնորդուչին, փոխարինելով հեթանոսական կույսերին, կապել են սիրո առասպելական հին Ամուրին և Հաղթակառքին լծել ոչ թե կրքի ու սիրո, այլ ողջախոհության միեղջյուրներ⁸⁵։

Ողջախոհության միեղջյուրն առավել ցայտուն վերաբաղրության է արձանացել միջնադարյան իտալիայի մի ուրիշ նկարում⁸⁶։ Այստեղ աստվածամայրը ուզում է կերակրել մանուկ Քրիստոսին։ Նրանց անդորրն է հսկում և առեսարանի ողջախոհության գաղափարն արտահայտում քրիստոնեական միեղջյուրը։ Այս նկարը յուրովի հիշեցնում է Թորոս Տարոնեցու մանրանկարը (նկ. 1)։ Արևմտյան մշակույթից հայտնի են նաև կույսի և միեղջյուրի քրիստոնեական այլ նկարներ, որոնք էլ իրենց հերթին են խոսում հեթանոսական միեղջերվի առնականության մասին։

Ահա հենց այս ոգով, քրիստոնեական ողջախոհության գաղափարով են վերաբանացավորված նաև հայ մանրանկարչության միեղջյուրները, որոնք արդին պայքարում են հեթանոսական վիշապների դեմ և զարդարում են աստվածաշնչացին զրբերի խորաններն ու կիսախորանները։


Վերևում բերված օրինակներն այժմ հնարավորություն են տալիս և ճանաշելու, և հասկանալու, և մեկնաբանելու հայկական հնագույն հուշարձանների վրա Էրևացող միեղջյուրների գաղափարապատկերները։ Այս առումով մենք կքննենք երկու հուշարձան։ Մշո Առաքելոց վանքի դռան քանդակապատկերները և Դարոյնքի ժայռաքանդակը։

Մշո Առաքելոց վանքի դռուք (նկ. 11) հայ զարդարվեստի այն մեծարժեք հուշարձաններից է, որն առաջման կարոտում է ամբողջական, լիարժեք մեկնաբանության։ Ռատի մենք նրա վրա սկասկերված միեղջյուրի իմաստը լրիվ կհասկանանք միայն հարցի ամբողջական քննությամբ, մանավանդ, որ հարակից մոտիվները կապվում են մեզ հետաքրքրող ամենահիմնական հարցի (Եղերու-Անահիտ) հետ։ Քննվող դռան վերեկի զարդաշրջանակի կենտրոնում կանգնած փողահարը շեփորում է քրիստոնեության պայքարը հեթանոսության դեմ՝ Հայաստանում։ Նրանից դեպի աջ՝ «սուրբ Թորոսն» (Թեոդորս զինավոր) ու նրա անանուն զինակիցն են՝ վիշապին սպանելիս։ Փողահարից դեպի ձախ «Տրդատ» թագավորն է իր զինակցի հետ՝ Անահիտ աստվածունու և նրա կուռքերի վրա հարձակվելիս։ Այս բոլորի մասին որոշակի խոսք կա ինչպես դռան փորագրությունների, այնպես էլ քանդակակերպարների էության մեջ։ Բայց սրբանք առավել պերճախոս են գառնում հավանաբար նույն դարից եկող Մշո Առաքելոց վանքի «Սահմանաց զիր» կոշված հրովարտակի օգնությամբ՝ գրրված նույն Տրդատ թագավորի անունից։ Այստեղ կարդում ենք. «Այս է... սահման վահացն, որ էր յառաջ մեծ դղեկին Տիրինկատար կոշեցեալ, զի էր նա տեղի Անահիտ պատկերի, զոր խորտակեցաք և տուաք... սուրբ առաքելոցն»⁸⁷։

⁸⁵ „La Miniatura“, Novara, 1960, էջ 74, տախտ. 67։

⁸⁶ Նույն տեղում, էջ 131, տախտ. 124 (XV դար)։ Տես նաև „Encyclopedia of World Art“, Vol. X, 1965, տախտ. 84—A (1463 թ.)։

⁸⁷ Հ. Ռուլյան, Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 40։



Ահա Հենց այդ «խորտակման» տեսարանն է պատկերված քննվող դռան պատկերաբանդակներում։ Վերին շրջանակի երկու ժայրերին կան մեկական հավերժահարս-թոշուններ։ մեկը՝ կանացի գլխով։ Երկու հավերժահարս էլ կաձախ շրջանակի վրա, երկուսն էլ կանացի գլխով, որոնցից մեկը թագակիր է և պատկերված է կենդանու մարմնով։ Հավանաբար Հենց վերջինս Անահիտի պատկերն է, իսկ մյուսները՝ նրա քրմուհիների։ Տրդատի հարվածն ուղղված է զեպի քրմուհիներն և միեղջերուն։ Ինքը՝ միեղջյուրը կատաղի դիրք է բանել հակառակորդների հանդեպ՝ զեպի նրանց ուղղելով իր ողորկ ու մեծ եղջյուրը։ Նրա թիկունքումն են սրբազն փիղը, կովը, ցուլը, գոմեցը, իսկ մյուս՝ աշշրջանակի վրա՝ անահական եղնիկները և գաղաններ։ Ամենուր անհանգիստ տագնապ է, խուճապ։

Հայտաբերելով Մշո Առաքելոց դռան զարդապատկերների բուն բովանդակությունը, մենք տուազին անգամ տեսնում ենք կենդանակերպ Անահիտին և նրա միեղջյուր զուգակցին՝ իրենց կուռքերի շքախմբով։ Այսպես են Հիշել նրանց XII դարում, հավանաբար, հիմք ունենալով Հին ու գեռաս շմոռացված փաստեր։ Մոտավորապես այդպիսի տեսարանների ենք հանդիսաւո՞ւմ Թորոս Մշեցու (Տարոնեցու) մանրանկարներում, որոնք նույնպես սնվել են նույն բրնձաշխարհի պատկերացումներից։ Հիշենք նրա պատկերած մկրտության տեսարանների կուռքերը, խորանների վրա ցույց տված պայքարի տեսարանները և այլ մանրանկարներ՝ ներծծված հնի հետ կարված պատկերացումների թանձր մնացուկներով։

Մեր կարծիքով, Իֆիդենիային վերաբերող այն տվյալները, որոնք կապվում են Հայաստանի հետ, նեատի ունեն ոչ թե երգնկայի Անահական տաճարը⁸⁸, այլ Մուշի, որովհետեւ երգնկան չէր կարող կոշվել Տավրոսյան, ինչպես նշում են Պրոկոպիոս Կեսարացին և ուրիշներ։ Այդպիսին է Մշո Անահատի մեջյանը, «առ սպորտավան լերինն Տաւրոսի», որ գտնվում էին Հոչակավոր Արեգակնածագ բարձունքը, Տիրինկառարը և հնամենի այլ դիցարանները⁸⁹։

Այժմ Դարոյնքի (Բայազետ) ժայռաբանդակի մասին (նկ. 12)⁹⁰: Ղ. Ալիշանն այդտեղ պատկերված կենդանին համարել է եղջերու և կատել Անահատի հետ։ Հետագայում այդ կարծիքը, կարոտ լինելով լրացուցիչ մեկնաբանությունների, մնացել է անարձագանք։ Վերևում բերված փաստերը համոզում են, որ այդտեղ պատկերված է ոչ թե եղջերու, այլ միեղջերու։ Այն իր մարմնով համեմատելի է հունական Սաղմոսարանի «Միեղջերու և կոյս» մանրանկարի (նկ. 10) հետ։ Իրենց գաղանացին մարմիններով նրանք համապատասխանում են միմյանց։ Տարբերությունն այն է, որ մեկը մի երկար ու ողորկ եղջյուր ունի, իսկ մյուսը՝ ճյուղավոր, բայց, կրոնա-ծիսական ըմբռնումների համաձայն, ծայրատված մի եղջյուր։ Իր ճյուղավորությամբ վերջինս հիշեցնում է Թորոս Տարոնեցու կիսախորանի միեղջերուին (նկ. 1)։ Նման միեղջերուներ կան նաև Աղթամարի զարդարանդակում պիտի տեսնել Հայոց հնագույն պատկերացումների արդյունք միեղջերուին, որն էլ պաշտվելիս է եղել։ Դա մեզ հիշեցնում է աստվածաշնչային սաղմոսը՝ միեղջերուի պաշտամունքի վերա-

88 Ա. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 104։

89 Հ. Ռոկյան, նշվ. աշխ., էջ 40։

90 Ղ. Ալիշան, Հին հաւատք..., էջ 175—177։

բերյալ. «Եթե այս միեղքերոյ զարրութիւն նորա, յերկրի հաստատեաց զնա յաւիտեան» (Սաղմ. Հէ—69):

Անկախ որոշ մանրաժամանություններից, կարող ենք տսել, որ Դարոյնքի պարզաբանչակր՝ միեղքուրի պաշտամունքային սրբավայրի քանդակի է:

Վերիում ասվածի հիման վրա անհրաժեշտություն է զգացվում որոնել Անահիտ-եղքերու զուգահեռի արական ուժին: Որպես այգպիսին հայտնի է հին հայոց գերազույն աստված Արամազդը՝ Զեսի, Որմզդի համազորը՝ հայ դիցարանության պանթեոնում: Ուշագրավ է, օրինակ, «Յայսմաւուրք» ժողովածուի նավասարդի 15-ի տոնի մասին եղած վեայությունը, որի համաձայն Դրիգոր Լուսավորիչը «կործանեաց զիգական պատկերն Անահիտայ դկնոցն Արամազդայ»⁹¹: Համապատասխան պատկերացում է ընկած նաև Աղաթանգեղոսի այն տողերում, որտեղ Արամազդն ու Անահիտը հիշվում են որպես հավատքի գերազույն զույգ: «զմեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց և ընդ սմին և զմեծն և զարին Արամազդ, չարարիշն երկրի և երկրի. ընդ նմին և զայլ աստուածսն»⁹²: Ճիշտ է, Անահիտը համարվում է նաև Արամազդի զուտորը, սակայն զիցարանական հին պատկերացումների մեջ, հաճախ են զստեր և հոր, մոր ու որդու, քրոջ և եղբոր հարաբերությունները վեր ածվում ամուսնական հարաբերության: Ուստի ունենք բավարար հիմք Մշո Առաքելոց գուան զարդարանդակներում (նկ. 11), ի գեմս միեղքերուի, տեսնել Արամազդին: Հետեւապես Արամազդի պաշտամունքն է խորհրդանքում նաև Դարոյնքի ժայռաքանդակը, ենթադրելով նաև Անահիտի զուգահեռ պաշտամունք:

Այս կարծիքը մեղ օգնում է բացահայտելու մի ուրիշ ուշագրավ նրբություն ևս, Խոսրը Դարոյնքի զազանամարմին միեղքերուի և Մշո Առաքելոց դուն զազանամարմին Անահիտի մարմինների նմանության մասին է: Փաստորեն այստեղ զործ ունենք նույն մարմնով, բայց տարբեր զլուխներով ներկայացող ծնող-զուլցի զաղափարի հետ: Նկատենք, որ Անահիտի նման քանդակների ենք հանդիպում նաև ուրիշ հուշարձանների վրա, օրինակ, Մակարավանքի բեմի զարդացանցում և մանրանկարչական շատ զարդաձեւերում: Ինչ խոսք, միշտ չէ, որ նման մոտիվները նկատի ունեն Անահիտին, սակայն, նրանց արմատները մեղ տանում են՝ զեպի այդ աստվածունին, որի համանման զարդապատկերներին հանդիպում ենք նախարիստոնեական հայկական և առհասուրակ կապազովկիական դրամների վրա, թաղավոր-քրմերի կամ քրմերի հետ միասին⁹³:

Միեղքերուի կերպարի սույն մեկնարանությունն օգնում է լրիվ ըմբռնելու եղնորու-կույս, եղքերու-Անահիտ, եղքերու-աստվածամայր զուգահեռների կտնացիական գիծը՝ կապված մայրիշխանությունից եկող և ավանդական կենսահաստատությամբ գոյատեղ մայր-աստվածունու զաղափարի հետ: Այս մոյր-Անահիտն է, որ իր նախորդների կերպարանքով Մասսի զոգաթին ծր-

91 Կ. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 136:

92 Ազարանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տրդիս, 1909, պարագ. 68:


93 «Ազգագրական հանդես», պիրք 23-րդ, 1912, № 2, 33, պատկ. 27, Հմմտ, էջ 52, պատկ.

56. այստեղ նկատված է նաև առատության եղցյուր: Տե՛ս նաև Ա. Պերսկանի, նշվ. աշխ., էջ

56: «Երշիններից որոշ օրինակներ եւ Մ. Փաշայանը ներկայացրել է որպես Անահիտի պատ-

կերը կրող դրամներ (նշվ. աշխ., էջ 121, նկ. 16): Հմմտ. Ա. Մնացականյան, Հայկական զար-

դարգերմեստ, էջ 124, 345—347:



նում է Հայկին, Արամին, Տիգրան Երվանդյանին և նրանց առաքում զեսլի Հայոց աշխարհի տարրեր կողմերը: Այստեղ էլ նրա կերպարը վսեմ է, զեզիցիկ, այստեղ էլ նա կապված է Հզորագույն կենդանիների՝ Առյուծի (Հայկ), Ինծի (Արամ), Վիշապ-արծվի (Տիգրան Երվանդյան) գաղափարների հետ⁹⁴:

Անահիտի որպես մայր տստվութունու մասին խոսելիս, մասնագետները նշել են նաև նրա գաղափարական կապը Լուսասաղի (Այգաստղ), լուսնի, խոնավության, զրի գաղափարների հետ: Այդ մասին բավականին ուշագրավ ակնարկներ կան Ղ. Ալիշանի և ուրիշների մոտ, ուստի այստեղ կկամենայինք ուշագրություն հրավիրել մի երկու փաստի վրա: Մեր ներկայացրած նյութերում ևս եղշերուն հաճախ կապվում է զրի հետ: Քրիստոնեությունն այս գիծը խորացրեց մկրասության գաղափարի մեջ, ուստի եղշերուն դարձավ նաև մկրտության խորհրդանիշ: Զրի մոտիվը մեծ տեղ ստացավ ավետման («սիրո») տեսարաններում: Զուրը դարձավ քրիստոնեական հրաշագործությունների առարկան: Մանրանկարներում ևս եղշերուն հաճախ պատկերվեց զրի հետ կամ ուղղակի ջուր խմելիս (նկ. 13)⁹⁵:

Քրիստոնեությունը մեծ տեղ հատկացրեց նաև աստղի գաղափարին, որը փաստորեն դարձավ Քրիստոս աստծու աշխարհ գալու կամ աստվածամոր ծնունդի խորհրդանշանը: Նույնը պիտի ասել նաև լուսնի մասին, որ արևի հետ միասին զարդարում է խորանաճակատներն ու մուտքապատկերները, իսկ հոգևոր երգերում հանդիսանում՝ աստվածամայր-սիրունու գովերգության ամենատարածված պատկերը: Հայտնի է նաև, որ հին հայկական մեհյաններում սիրված էին նաև Արևի և կուսնի պաշտամունքային արձանները՝ կապված Արամազդի և Անահիտի գաղափարների հետ, որոնք ամեն անդամ (օրինակ՝ Երվանդ Վերջինի, Արտաշես Առաջինի ժամանակ) միասին էին տեղափոխվում Բագարանից-Բագարան (սրբավայրից-սրբավայր):

Այս առումով բացառիկ արժեք ունի Անահիտ-Դիանա-Արտեմիս դիցաշխարհի ոլորտին պատկանող Միհրդատ VI եվպատորի դրամներից մեկի վրա պատկերված եղշերուն (նկ. 14)⁹⁶, որը ջուր է խմում, իսկ զիմացը՝ խորհրդանշված են կիսալուսինն ու աստղը: Այդ ամբողջն էլ՝ բուսական ծաղկեպսակի մեջ: Որքան հարազատ է այս տեսարանը Դիանայի հնագույն պատկերներից մեկին (նկ. 15)⁹⁷, ուր նույնպես առկա են կիսալուսինը, աստղը, կենաց ծառի մասերը:

Զարդարվեստային հուշարձանների շարքում բացառիկ նշանակություն ունի վերջերս հայտնարերված Աստղի-բլուրի (իջևան) բրոնզե զոտու վրա պատկերված տեսարանը (նկ. 16)⁹⁸: Նրա հայտնարերողի և ուսումնասիրողի՝ հնագետ Ս. Եսայանի միանկամայն ճիշտ կարծիքով, այդտեղ առկա է որորդության տեսարան՝ կապված ծիսական և դիցարանական հին պատկերացումնե-

⁹⁴ «Բանբեր Երեանի համալսարանի», Երեան, 1973, № 1, էջ 79—81: Այդտեղ բացահայտված է Տիգրան Երվանդյանի վիշապա-արծվային բնավորությունը և ուշագրությունն է հրավիրված Հայ դիցարանության մեջ եղած պաշտելի ու բարի վիշապի գաղափարի վրա: Խնդիր, որը կարու է հատուկ և համակողմանի ուսումնասիրության:

⁹⁵ Մաշտոցի անվան Մատենագարան, ձեռ. № 197, թիրթ 13ա (Հատված կիսախորանից):

⁹⁶ Խ. Մոշեղյան, Հայաստանի դրամական դանձերը, Երեան, 1973, էջ 82, նկ. 131:

⁹⁷ „Происхождение креста“, М., 1927, տարբառ, II, նկ. 27:

⁹⁸Տես Հ. Ա. Եսայն, Древняя культура племен сенеко-восточной Армении, Ереван, 1976, էջ 241 (նկ. 157), էջ 244—245: Տես նաև «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 223:



24. 12



24. 13



24. 15

24. 14



րի հետ: Ըստ նրա՝ արևի գերազային տատվածությունն է, որ այդտեղ երևան է զալիս որպես կենդանիների և որսի հովանավոր: Նա ուշագրավ դիտողություն է արել զարդաշրջանակի ձախ կողմում գտնվող մայր եղջերուի, նրա ձագուկի, ինչպես նաև աչ կողմում գտնվող արռ եղջերուի ճակատագրի մասին՝ ըստ արձակված նետերին պարտադրված հակադիր ուղղությունների (ձախ կողմում նրանք նպատակից շեղված են, իսկ աջում՝ ոչ): Այս առումով նկատելի է դիցարանական ինչ-որ թոշունի վճռական դերը: Չախ կողմում նա հարձակվել է երկրորդ որսորդի աղեղի վրա՝ կոտրելով նրա (ինչպես և մյուսների) արձակած նետի թափը, իսկ աչ կողմում՝ սլանում է նետերի ուղղությամբ՝ դեպի արռ եղջերուն: Մեր կարծիքով, հատուկ նշանակություն ունի նաև կառքի վրա պատկերված կնոջ, որպես այդ կառքի տիրուհու և նրա վարարդի գողափարը: Նա հանդիս է գալիս երեք անգամ և մերկ վիճակով: Ուստի նա աստվածունի է և համապատասխանում է Անահիտի նախագաղափա-



Նկ. 16

րին: Եվ նրան է, որ հետագայում, համապատասխան փոփոխություններով, հաջորդել է քրիստոնեական աստվածամայրը: Այսպես մոտենալով խնդրին, նկատում ենք, որ Աստղի-բլուրի գոտու տեսարանը հանդիսանում է Թորոս Տարոնեցու պատկերած խորանի ամենահարազատ ու հին նախօրինակը: Հետեական առաջին անգամ հիմք ենք ունենում մտածելու, որ հունական Արտեմիսի երկվորյակ հայկական Անահիտն էլ նույնքան հնից (9—8-րդ դդ. նմթ) է սերում: Մնում է այս ուղղությամբ կատարել նորանոր որոնումներ:

Այս ըմբռնումների մեջ ևս փաստորեն տեսնում ենք մայրական իշխանությունից եկող մնացուկներ, որոնք էլ իրենց հերթին կապվում են դիցարանական այն այժերի, եղնիկների գաղափարների հետ, որոնցից սնվել են Զես-Դեռոր, Արամազդը, Որմիզդը և ուրիշներ: Դրանք էլ առնչվում են «ամալթեղյուր», «առատության» եղջյուր, «Որմզդեղն» (Որմիզդ և եղն) և այլ հասկացությունների հետ, ավելի քան ընդգծելով մայրական-կանացիական ուժերի մասին հնամենի պատկերացումների առկայությունը մեզ հետաքրքրող նյութերի մեջ:

Եթե մտովին փորձենք մի ամբողջության մեջ պատկերացնել վերևում բննված փաստերն ու նրանցից հանված եղբակացությունները, ապա կտեսնենք, որ մեր առջև բացահայտվում են հայկական զարդարվեստի մի շարք հանդուցային ու բարդ կառուցվածքներ, միահյուսումներ, որոնք, ցարդ գուշացուցիչ լուծում շէին ստացել: Ուստի փորձենք այս տեսանկյունից մոտենալ հարտարապետական ու մանրանկարչական համապատասխան հուշարձաններից Աղթամարի զարդաքանդակների, ապա մանրանկարչական խորանների, կիսախորանների և լուսանցազարդերի ամփոփ մեկնաբանությանը:

Քրիստոնեական շրջանի հայ զարդարվեստի առավել հին ու բարդ կառուցվածքին (կոմպոզիցիա) հանդիպում ենք Աղթամարի Ս. Խաչ վանքի ար-

տարին պատերի վրա, որոնց հետ սերտորեն կտպված են ներքին պատերի որմնազարդերը՝ ստեղծելով մի զարմանահրաշ ու հանձարեղ ամբողջություն։ Այս ամբողջությունն իր ներքին կտպերով ցարդ քացահայտված չի եղել, չնայոծ շատերն են խոսել նրա մասին՝ հայտնելով զանազան, մնձ մասամբ անհավանական կարծիքներ։ Այժմ, սակայն, ճիշտ ճանապարհ է բացվում դեպի նրա գաղտնախորհուրդ էությունը։ Բանալին տալիս են աստվածաշնչային այն քաղվածքները, որ փորագրված են վանքի պատերին, որոշ զարդարանքներին առընթեր։ Ելակետային նշանակություն ունի, օրինակ, Աղամի պատկերաբանդակը, որի մոտ գրված է. «Եւ կոչեաց Աղամ անուանս ամենայն անասնոց և դաղանաց» (նկ. 17)։ Դա համառոտումն է Ծննդոց գրքի Բ գլխի 22-րդ և հաջորդ տների. «Եւ կոչեաց Աղամ անուանս ամենայն անասնոց և ամենայն թռչնոց երկնի, և ամենայն գաղանաց վայրի. բայց Աղամայ ոչ զաւու օգնական նման նմա»։ Ըստ այդմ էլ, այսինքն, Աղամի կոչով վանքի տվյալ զարդարութին ներկայացնում է կենդանական աշխարհում պատկերը։ Բայց խնդիրը ոչ Աստվածաշնչում և ոչ էլ վանքի զարդահարդարանքում դրանով չի ավարտվում։ Ծննդոց գրքի մեջ շարունակվում է Աղամի հետ կտպված պատմությունը։ Նա մենակ է կենդանական աշխարհում, որովհետեւ չկա այնտեղ «օգնական նման նմա», ուստի «և արկ տէր աստուած թմբրութիւն ի վերայ Աղամայ, և ննջեաց, և առ մի ի կողից նորա և ելից ընդ այնր մարմին. և շինեաց... կին և ած զնտ առ Աղամ»։ Խսկ ո՞ւր է այս տողերի զարդապատկերային վերաբարությունը։ Դրան հանդիպում ենք հաջորդ, սոսորին զարդապոտում, որտեղ Աղամն արգեն ծէայի հետ է՝ օծի, իենաց ծառի և հարակից մյուս պատմությունների դրվագներով, ընդհուպ մինչև քրիստոնյա վիշտապամարտ սրբերն ու նրանց հաջորդները (նկ. 18)։ Ուշագրավ է, որ այս գոտին ավարտում է պատկերագրական հոմակարգը։ Նրան հաջարդում է պարագ, անզարդ գոտին, որը համապատասխանում է աստվածաշնչային շարաթվա 7-րդ օրվան, երբ աստված հանգստացավ՝ իր գործն ավարտած (նկ. 19)։

Այսպիսով մենք բննեցինք երեք դոտի՝ վերից-վար դասավորության հաջորդականությամբ և տեսանը նրանց հաջորդականության գաղտնիքն՝ ըստ աստվածային արարչության։ Արդյո՞ք նրանցից վերև գոնվող գոտիներն էլ չեն դրսելորում շաբաթվա մյուս 4 օրերի արարշագործության իմաստը և նրանց հետ միասին բոլոր գոտիների թիվը հավասար չէ՝ 7-ի։ Թվում է, թե այո՛, գմբեթը երկինքն է, մանավանդ իր ներսի մասի ձեռվ և պատկերներով, ապա մնացածը՝ երկիրն է իր աստվածաշնչային ամբողջությամբ։ Թմբուկի վրա բուսական աշխարհն է։ Նրանից ցաւ քիվի ներքի կենդանական աշխարհը։ Խսկ հաջորդ գոտին, որն ամենաբարդն ու ճոխն է՝ քանդակված է ըստ աստվածային հետեւյալ պատգամի։ «Եւ արար աստուած զմարդն... արու և էզ... Աճեցէր և բաղմացարուր... և իշխեցէր ձկանց ծովու և թռչնոց երկնից և ամենայն անասնոց... սողնոց... ամենայն պտուղ ձեզ լիցի ի կերակուր և ամենայն զաղանաց երկրի, և ամենայն թաշնոց երկնի, և ամենայն սողնոց» (Ծնունդք, Ա, 27—31)։ Այս տողերի իմաստը վերաբարելու համար ճարտարապետն ու նրա օգնականներն ընտրել են նաև նոր կտակարանի այն տողերը, որ Քրիստոսն ասում է. «Ես եմ որին ճշմարիտ... Կացէր յիս՝ և ես ի ձեզ. որպէս ուսն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ չիցէ հաստաեալ յորին. նոնալիս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատի... իուրօ. Ես իմ ունի՛ և դուք ուս որ հաս-



Pl. 17, 18

տատեալ է յիս՝ և ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ... Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք...» (Ավետ. Հովհ. ԺԵ, 1—8): Բայ այդմ, ամբողջ գոտին որթատունկի այս առասպելիի դալարուն ծաղկումն է ու պըտղաբերումը, պայքարը՝ զագանների, սողունների դեմ՝ ըստ իշխեցէն պատղամի՝ առօրյա կյանքի զանազան մանրամասներով:

Այստեղ էլ հատուկ տեղ ունեն եղնիկներն ու եղջերուներն՝ իրենց ձագուկներով, ինչպես նաև միեղջերուները:



Նկ. 19

Անկախ բացատրության կարոտ առանձին խնդիրներից, կարող ենք ասել, որ Աղթամարի ս. Խաչ վանքի զարդարանքները մտածված են որպես մի ամբողջություն, որոնք և՛ դրսում, և՛ ներսում պայմանավորված են արարշագործության առասպելի, տերունական ըմբռնումների և ազգային պատկերացումների հետ: Այդ բոլորի միջով նրբանկատ հնարանքներով անցնում է նաև եկեղեցի-կին, Քրիստոս-աստված զուգահեռն՝ ինչպես Երգ Երգոցի Հարս ու Փեսայի, այնպես էլ նրա բրիստոնեական մեկնարանության ոգով: Եվ եթե Մշտ

Սուաքելոց վանքի դուն զարդաշրջանը տեղական, ազգային ավանդություններից է սնված, ապա Աղթամարի դուտիները՝ Հիմնականում Աստվածաշնչից, ապա նաև տեղական, ազգային ավանդներից: Այս հարցի մանրակրկիտ ըրնությունը թողնելով մի այլ առիթի, այսուեղ կկամմենայինք նկատել, թե որքան համահնչուն են Աղթամարի կառուցն ու զարդահարդարանքն իրենց ամբողջությամբ Գրիգոր Նարեկացու՝ Եկեղեցուն նվիրած տաղերին ու տողերին:

Երկինքն ի յերկինս և երկիրս ի յերկինս,
Վայրէջք ի խոնարհ, և վերելք ի բարձունս.
Երկին նոր, երկին լոյս արփազարդեալ,
Եկերին աւետիքն ի յերկիր ծաւալին...⁹⁹

Կամ՝

Անձարիցն ճարն ճարտարապետեալ եւահիւսակ զարդից,
Խաղացմամբ ի վայր գայր հասանէր աւուրբք...
Գեղապաճոյն մեզ քաւարան կազմեալ՝
Եթերանման կամարակասկ զարդիւք...¹⁰⁰

Համանման տողեր կան նաև նույն հեղինակի՝ Եկեղեցուն նվիրած գանձում.

Զդեցէր զերկին և անդ զերկնայինսն,
Հաստատեցէր զԱղին և զկնի Աղամ...¹⁰¹

Բացառիկ արժեք ունի Ապարանից խաչին, Եկեղեցուն, աստվածամորը նվիրած նրա ներբողաշաբք, որից Հիշենք Հետևյալ տողերը. «Եւ գրեթէ երկին երկինի և յերկրի վայելչապէս զեղով յօրինեաց... Եւ զկազմուած պատշաճութեան հրաշակառոյց խորանացն՝ քրիովբարեկն յօրինեաց բարենշան կերպիւ Հիմնադրեաց...»¹⁰²:

Մշտ Առաքելոց վանքի դուն, Աղթամարի վանքի և նման այլ կոթողների զարդամոտիվներում արդեն համախմբված և առկա են այն Հիմնական ձևերը, որոնց մեջ խտացված են քրիստոնեական շրջանի համարյա բոլոր զարդապատկերներն ու առանձին մոտիվները: Նման, համեմատաբար ամբողջական զաղափարներից է, որ յուրաքանչյուր արվեստագետ, իր նյութից ելնելով, ազատ է եղի ընտրելու այս կամ այն զրվագը, այս կամ այն հատվածը, այս կամ այն մանրամասնը: Կամ կերտելու առավել բարդ նորանոր հրաշալիքներ:

Այդպիսին է նաև խորանների, կիսախորանների և լուսանցազարդերի ստեղծագործական հազարածե տարրերակների բուն էությունը: Խորանները՝ տաճարային կառուցների (օրինակ, Աղթամար), իսկ կիսախորանները նրանց մուտքերի (օրինակ, Մշտ Առաքելոց վանքի դուն) մանրանկարչական վերաբերություններն են: Խոսքը ձեր մասին է, ինչ վերաբերում է նրանց բովան-

⁹⁹ Գրիգոր Նարեկացի, նշվ. աշխ., էջ 480:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 481: «Իսկ ըստ ձեռքն Եկեղեցի նովին զաղափարի հանգունակ երկնի երկրի, զանգի ի Դաւթայ նուայարկ ուսաք զաշխարհաց (ձեռ. № 2178, 24թ):

¹⁰¹ Գրիգոր Նարեկացի, նշվ. աշխ., էջ 458:

¹⁰² Նույն տեղում, էջ 381:

Աշազրավ ընդհանրություններ կան, մեզ հետաքրքրող հարցերի առումով, մի կողմից Աղթամարի, իսկ մյուս կողմից Քաղենս Առաքյալի և որիշ մանրերի միջև:

դակած մոտիվներին, ապա գրանք պետք է ամեն անդամ քննվեն առանձին-առանձին: Լուսանցաղարդերը, հիմնականում, նույն գաղափարների վերաբ-տագրություններն են՝ մերթ տոհմածառի կերպարանքով, մերթ էլ առանձին միավորներով:

Բավական է վերցնել, ասենք, Մշո Առաքելոց վաճքի դռան աջ շրջանակի եղջերուների և գաղանների մի զրվագը և մասամբ մշակել, որպեսզի ստացվեն Ս. Տեր-Ներսիսյանի հրատարակած Ֆրիբի ձեռագրերի 50 և 88-րդ կիսախորանները¹⁰³: Բավական է վերցնել նույն դռան վերին շրջանակի Տրդատին և նրա վիշտապտապան զինակցին, որպեսզի ստացվեն նույն հեղինակի հրապարակած մի այլ տեսարանի Ս. Գեորգն ու Տրդատ թագավորը¹⁰⁴: Բավական է վերցնել Աղթամարի զարդաքանդակներից որևէ եղջերուի՝ իր ձագուկի հետ¹⁰⁵, համազրել աստվածամոր ու մանուկ Քրիստոսի պատկերներին և կստանանք Թորոս Տարոնեցու կամ մյուսների ստեղծած վերոհիշյալ կիսախորանները (նկ. 1, 2): Մի՞թե նույն կամ նման մոտիվների տարատեսակները չեն ընկած Մողնու ավետարանի և այլ հին ձեռագրերի ճոխ ու բազմաբարդ խորանների հիմքում¹⁰⁶:

Այս բոլոր փաստերը, սակայն, վերջին հաշվով համազոր արժեքներ են ծագումնաբանական առումով և պահանջում են համեմատաբար առավել բնդհանուր հիմք ու նախադրյալներ:

Քրիստոնեական շրջանի կազը նախաքրիստոնեական շրջանի հետ արդեն տեսանք վերեւում՝ հատկապես կենդանական մոտիվների մասին խոսելիս: Այժմ անհրաժեշտ է մատնացուց անել առավել հին ու համընդհանուր բնույթի փաստեր:

Այս առումով ելակետային նշանակություն ունի Աստվածաշնչի «Ելից» գիրքը, ուր աստված պատվիրում է Մովսեսին պատրաստել խորան.

«Եւ արասցես խորան տասնփեղկեան, ի բեհեզոյ մանելոյ և ի կտապուտակէ և ի ծիրանոյ և ի կարմրոյ կրկնելոյ. քերոր՝ գործ անկուտածոյ գործեսցես զնոսա: Երկայնութիւն միոյ փեղկին ի քան և յութ կանգնոյ, և լայնութիւն ի շորից կանգնոց փեղկի միոյ լինիցի. շափ՝ նոյն եղիցի ամենայն փեղկիցն. Հինգ փեղկ ընդ միմեանս կցեալ, և հինգ ևս այլ ընդ միմեանս խառնեալ: Եւ արասցես ճարմանդս կապուտակեայս առ եղերը միոյ փեղկին ի միոչէ կողմանէ ի խառնուածո. նույնպէս արասցես և առ եղերը արտաքնոյ փեղկին, երկրորդի խառնածոյն... Եւ արասցես զսինեակս խորանին յանփուտ փայտից կանգնաւորս. ի տասն կանգնոյ զերկայնութիւն միոյ սիւնակին առնիցես և ի միոչէ կանգնոյ և ի կիսոյ զթանձրութիւն և զլայնութիւն միոյ սիւնակին...»: Եվ այսպես խոսվում է սյուների, խարիսխների, խոյակների, ինչպես նաև խորանի այլ մասերի ու նրանց հարաբերությունների մասին: Ըստ որում, ամեն նյութի ազնիվ տեսակն է ընտրվում, առատ է ու-

¹⁰³ *Strarpie Der Nersessian*, Armenian MSS in the Freer Gallery of Art, Washington, 1963, տախտ. 50 (XIII դար), տախտ. 88 (XVII դար).

¹⁰⁴ *Strarpie Der Nersessian*, The Chester Beatty Library..., Dublin, 1958, տախտ. 40 (1489 թ.):

¹⁰⁵ *Strarpie Der Nersessian*, Ag'it'amar, Cambridge, Massachusetts, 1965, նկ. 13, 17 (համ. նկ. 4):

¹⁰⁶ «Հին հայկական մանրանկարչություն», տախտ. 7:



Ն4. 20




Ն4. 21



Ն4. 22



Ն4. 25



Ն4. 23

Ն4. 24

կին, երփներին և գուշները, «նկարակերպ» պաստառները, որովհետեւ այն-
ակազ է ամփոփվելու «սրբութիւն սրբութեանցն»¹⁰⁷:

Չեռանանք, որ այս ամենը վկայված է Հին կտակարանում, ուստի և
նախորդում է բրիստոնեական ժամանակներին՝ համապատասխանելով հե-
թանոսական կոչված դարերին։ Բայց քանի որ բրիստոնեությունը որդեգրել
էր նաև Հին կտակարանն՝ իր նոր մեկնարանություններով, ուստի այդ ամե-

¹⁰⁷ Ելք, ԻԶ, 1—5, 15—17, շար.:

նին տրվել են վերաբարձրեցված մեկնաբանություններ: Այդպիսիք կան նաև հայ մատենագրության մեջ: Հիշենք Ներսես Շնորհալու մեկնությունը: «Որպէս սքանչելի զարգու խորանին և տաճարին,—գրում է նա,—դաստիարակէր աստուած զիսրայէլ. և զընշատէրն՝ երկրաւոր զանձիւքս կաշառէր՝ տայր իմանալ զերկնաւորն»: Ահա այդ պատճառով էլ, շարունակում է նու «Ճանկիչք և հիմնադիրք Աւետարանիս, հեշտալի զեղովք և զունագոյն ծաղկօք. նկարեալ ողէսպէս յօրինածովք...»¹⁰⁸:

Այնուհետև Ներսես Շնորհալին ավելի է մոտենում Աստվածաշնչի նկարագրած խորանին, գրելով. «Իսկ տասն խորանաց պատճառ» ենթարաժինը: Այսուղ նա «տասն» թիվը պատճառաբանում է ըստ Հին պատկերացումների, «տասն, որ է թիւ սրբազն և նուէր տառուծոյ»:

Ծստ նրա «Առաջին խորանն՝ ուր ինքն աստուածութիւնն ասի բազմեալ ի լոյսն անմատչելի»: Այսքան: «Եւ երկրորդ և երրորդ խորանն՝ ուր միջին և վերջին քահանայութիւն անմարմնոցն ասի: Չորրորդն՝ դրախտն: Հինգերորդ՝ տապանն նոյի: Վեցերորդ՝ Խորանն Արրահամու: Եօթներորդն և ութներորդն՝ Մօվսիսի. սրբութեան սրբոցն և արտարին խորան: Իններորդն՝ Սողոմոնեան խորանն: Տասներորդն՝ ամենակատար և լի ճշմարտութեամբ սուրբ և կաթողիկէ եկեղեցի...»:

Դալով նրանց մանրամասնությունների մեկնությանը, Ներսես Շնորհալին գրում է. «Եւ խորհուրդն ոչ է ամենեցունց յայտնի, այլ սակաւոց և բովանդակն աստուծոյ միայն»¹⁰⁹:

Զնայած Ներսես Շնորհալին խոսում է աստվածաշնչային խորանի մասին, սակայն նրա նկատի առած խորանները՝ ավետարանական խորաններն են, լի այնպիսի հասկացություններով, որոնք Հին խորանի նկարագրության մեջ չեն հանդիպում: Այս հակասությունն ավելի է խորանում, եթե նկատի ենք առնում ոչ միայն Ներսես Շնորհալու նկարագրած խորանները, այլև ծեռագրերից մեզ հայտնի խորանների բազմարդեսությունն ու նրանց տարբերակների ճոխությունը:

Հենց այստեղ պիտի որոնել վերեւում քննված եղչերուների, ինչպես և նրանց հետ առնչվող մյուս հասկացությունների ներթափանցման ուղիները՝ արտասավածաշնչային միջավայրից: Մի մասը մենք, բնականաբար, բացատրեցինք հայ իրականության համապատասխան ամանղների կենսունակությամբ՝ կապված այլ ժողովուրդների Հին ըմբռնումների հետ: Մյուս մասն սպասում է լրացուցիչ մեկնաբանության: Ահա այստեղ մեզ օգնության է գալիս Ներսես Շնորհալին իր հետեւյալ վկայությամբ: Սկսելով խորանների մեկնությունը, նա գրում է. «Նախ այն է, որ զրեալն է, եթէ Կարպիանոս ոմն խնդրնաց լեկեղեցական իմաստասիրէ, եթէ զրոշմեա մեզ անսխալ զհամաձայնութիւն աւետարանացն... Իսկ Եւսեբի զիմոդիրն Կարպիանոսի ելից ի տասն կանոնս զրելով»¹¹⁰:

Այսպիսով ինքնին հասկանալի է, որ խորաններում առկա այն բռյուր նոր պատկերները, որոնք չկան ելից զրում, պիտի որոնել ամենից առաջ հենց

108 «Մեկնութիւն սուրբ աւետարանին, որ ըստ Մատթէոսի...», ի Հասանփաշա խան, 1825: Այս և հաջորդ վկայությունները բաղված են 6—7-րդ էջերից:

109 Նույն տեղում:

110 Նույն տեղում:

խորանները զծող ու մշակող հեղինակի՝ եկեղեցական հոչակավոր հեղինակություն համարված Եվսերիոս Կեսարացու երկերում։ Հիրավի, ով էլ որ լիներ առաջին նկարիչը, նա պիտի փորձեր հիմք որոնել Եվսերիոսի երկերում որուես խորանները մշակող ու վստահելի հեղինակի, որպեսզի հետո կարողանար հարկ լինելիս արդարանալ։

Այսպես մոտենալով խնդրին, մենք առանց տարակուսանքի կանգ ենք առնում նրա «Ժամանակականք» երկում գտնվող այն ուշագրավ էջերի առջեւ, որոնք վերաբերում են նախաստվածաշնչացին արարշագործության հնագույն պատկերացումներին։ Ահա մի նմուշ այդ էջերից։

«Եւ յառաջնումն ամին յայտնել ի Կարմիր Շովէ անդէն իսկ ի մէջ սահմանացն Բարեղացոց ահագին ինչ զաղանի, որոյ անուն կոչիցի Ռվան։ որպէս և Ապողողորոս պատմէ ի մատենին, թէ ամենայն մարմինն ձկան էր, և ընդ գլխով ձկանն՝ այլ գլուխ առ նմին պատշաճեալ։ և ի տտունն ոտք իրրե զմարդոյ. և բարբառ ըստ մարդկան բարբառոյ, որոյ պատկերն և ցայժմ դրեալ պահի։ Եւ զաղանին այնմիկ ասէ ցերեկ ընդ մարդկան շրջել, և ի կերակուր ինչ ամեննեին շնորհել։ և ուսուցանել մարդկան դպրութիւնս, և զտէսպէս հանգամանս արուեստից. զձես քաղաքաց, և զմեհնաց պատշաճութիւնս և զօրինաց խե ամտութիւնս և սահմանաց և բաժնից պայմանս ուսուցանել. և զսերմանց և զպտղոց ժողովս ցուցանել. և ամեննեին իսկ՝ որ ինչ ի դէպ ընտանութեան կենաց իցէ աշխարհի, աւանդել մարդկան. և յայնմ ժամանակէ հետէ այլ ումենք ինչ աւելի շդտանել։ Եւ ի մտանել արեգականն՝ Ռվանն զաղանի միւսանգամ անդրէն ի ծով մխել. և զցայդ ի համատարած ծովուն զետեղել. և այնպէս երկեկից իմս կեանս կեալ։ Եւ յետոյ և այլոց զաղանաց նմանեաց նմին յայտնել. զորոց ի թագաւորաց մասւնին ասէ յայտ առնել. և զջովան այն ասէ՝ զարարածոց և զառաքինութեանց զրել, և տալ խօսս և հարտարութիւն մարդկան։

Էր ասէ երբեմն, մինչ ընդ բնաւ խաւար և ջուր էր. և էին անդ այլ ինչ զաղանք, յորոց կէսքն ինքնածինք էին, և կերպարանս կենդանածինս ունել, և մարդիկ երկթեանս ծնանել. և զայլս չորեքթեան և երկդիմիս. և մարմին մի, և գլուխ երկուս, կեանացիս և առնիս. և երկուս բնութիւնս՝ արուականս և իդականս։ Եւ այլ մարդիկ՝ որոց բարձք այժից, և եղջիւրք ի գլուխ. և այլս ծիռտունս. և այլոց՝ յետոյ կուտէ ծիռց կերպարանք, և առաջոյ՝ մարդկան. որ զձիացլուց յուշկապարիկ կերպարանս ունիցին։ Ծնանել և ցուլս մարդապուխս, և շլւնս չորեքմարմինս, որոց ձեռքն իրրե զձկանց տտունս յետոյ կուտէ ի զաւակացն արձակիցին. և ձիս շնաղլուխս. և մարդիկ, և այլ ևս զաղանս ձիագլուխս և մարդապատկերս, և տտնաւորս իրրե զձեղունս. և այլ ևս աղգի աղգի զաղանս վիշապակերպս. և զձկունս յուշկապարիկս, և սողունս և օձս, և պէսպէս երես բազումս զարմանալիս՝ այլակերպս ի միմեանց. որոց զպատկնրս ի մեհենին Բէղայ մի բատ միոցէ նկարեալ պահէին։ Եւ իշխել ամենեցուն նոցա կնոշ միում, որում անուն Մարկայէ, որ քաղղէցերէն Թուղարժայ անուանի. և յունարէն թարդմանի թալաղղայ, որ է ծով։ Եւ մինչդեռ այն ամենայն յարուցեալ կայցէ միախուռան, յարձակեալ ի վերայ Բէղայ, Շերձու զկինն ընդ մէջ, զկէսն առնել երկիր և զկէսն երկինս. և զայլ ևս զաղանս որ ի նմա էին՝ սատակեալ։ Եւ առակաւ իմն ասէ այլ ընդ այլոց բարոյախուռեալ զայնորիսի բնութեանց, թէ մինչդեռ խոնաւ և ջուր էր ընդ բնաւ, և զաղանք միայն էին ի նմա, զիցն ոյնմիկ հատանել զիւր գլուխ։ և զարիւնն՝

որ իշանիցէ ի նմանէ, առնուլ այլոց դից, զանգանել ընդ հող, և ստեղծանել մարդիկ. վասն որոյ իմաստունս իսկ լինին, և դիւցազանց մշտացն հազորդել.

Եւ զբէզայն տակն՝ որ յունարէն Դիոս թարգմանի, և հայերէն Արամազդ, թէ ընդ մէջ կտրեաց զխաւարն, և զատանիլ ի միմեանց զերկինս և զերկիր, և յարդարել յօրինել զաշխարհ. և զազանաց ոչ ժուժել լուսոյ զօրութեան, և աստակել: Տեսանել Բէզայ աշխարհ ինչ անապատ և պտղարեր. Հրաման ուալ միում ի դիցն՝ յարենէն որ ի հատեալ զլխոյն իւրմէ իշանիցէ, զանգանել ընդ հող, և ստեղծանել մարդիկ, և այլ անտառնս և զազանս, որ կարիցեն այսմ օդոյ ժոյժ ունել. Հաստատել Բէզայ զաստեղս և զարեղակն և զլուսին, և զինդ աստեղսն պատրանաց»¹¹¹:

Հայ նկարիչներն այստեղ եղած էակապատկերներին և աշխարհաստեղծման առասպելի այլ մանրամասներին կարող էին ծանոթանալ ինչպես օտար ազրյուրներից, այնպես էլ հենց երգի հայերէն թարգմանությունից՝ կատարված դեռևս V դարում: Միսիթար Այրիվանեցուց տեղեկանում ենք, որ այդ առասպելը ոչ միայն ծանոթ է եղել նրան, այլև մեկնարանված է եղել (անշոշ, շուտ ավելի վազ ժամանակներում) ըստ քրիստոնեական զաղափարախոսության: Խոսելով աշտարակաշինության զրույցի մասին, նա զրում է. «Եւ ահա երեխալ Հրեշտակն Միքայէլ՝ ասէ Հրամանաւն Աստուծոյ. «Պադարեցէք ի զալոյ առ իս, զի ոչ կարէք. այլ ի լրման ժամանակի ես զամ առ ձեզ, և տամ ձեզ սանդուխը յերկինս ելանել»: Եւ այս ոչ է անհաւատալի, զի Ռվան զազան Հրեշտակն էր, որ ուսուցանէր մարդկան զամենայն հնարս կենցաղաբարութեան»¹¹²:

Պարզ է, որ Միսիթար Այրիվանեցին նույնացնելով Միքայէլ Հրեշտակապետին «Ռվան Գազան»-ի հետ, նկատի ունի Եվսերիոս Կեսարացու նկարուցած «զազան... Ռվան»-ին:

Այս առումով բացառիկ նշանակություն է ստանում միջնադարյան Ֆրանսիայի կղերական մատենագիր Բեոնար Կլերվուկու (շուրջ 1091—1153 թթ.) բողոքը՝ ժամանակի նկարչական նորաձեռնությունների դեմ: «Ինչի՞ համար են վանքերում կարգացող եղբայրների առջև՝ այս ծիծաղելի այլանդուկությունները... վայրի առլուծները... կենտավրները... կիսամարդիկ... շերտավոր վազրերը... Դու կարող ես այստեղ տեսնել բազմաթիվ մարմիններ՝ մի զլխով և ընդհակառակը, մի մարմնի վրա բազմաթիվ զլուխներ: Այստեղ... քառուտանիններ՝ օձային պոչով, այնտեղ ձուկը՝ շորքուտանու զլխով: Այստեղ զազանն է բարշ տալիս այծի հետույքը, առջելից ներկայանալով որպես ձի, այնտեղ եղջերավոր անասուն է վերջանում ձիակերպ: Վերջապես ամեն տեսակի ձեւերի այնքան մեծ և այնքան արտառոց բազմազանություն...», որոնք շեղում են միտքը՝ աստվածային օրենքներից»¹¹³:

Այստեղ կարծիս կրկնված են Եվսերիոս Կեսարացու զրբում առկա արարշագործության տեսարանները:

Այսպիսով կարող ենք ասել, որ մանրանկարչության մեջ և հատկապես խորաններում մեծապես վերաբռնադրված են նախաստվածաշնչային և աստ-

111 «Եւսերի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանականք...», Ա, Վենետիկ, 1818, էջ 17—26:

112 Միսիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 28—29:

113 H. A. Сидорова, Очерки по истории ранней городской культуры во Франции, М., 1953, էջ 221—222.

գածաշնչային տրարչադործության, հին ու նոր ուխտի զանազան դրվագների, վաղ քրիստոնեության, ապա քրիստոնեության շրջանի պատկերացումները, ինչպես նուև ազգային, առօրյա ըմբռնումներն ու զանազան իրողություններ:

Հսաւ այդմ էլ, նրանք այնքան ճոխ են ու բազմագան, այնքան հեթանոսական ու քրիստոնեական, այնքան ժողովրդական ու անհատական, այնքան երիտարանգ ու գուրինանային: Թևման ինքը, լինելով անսահման ընդուկումների խոտացում, մի կողմից ձգվում է մինչև յոթնահարկ երկնքի ծիածանային աղեղները, արեի, լուսնի, աստղերի. կենդանակերպերի խորհրդանշանները, իսկ մյուս կողմից գալիս է կապվելու ժողովրդի հնամենի ավտոնեների, մանավանդ, երկրագործական սիրո և պտղարերության առասպելների. նավասարդան տոների, վիշապասպան հերոսների, բնության մշտանորոդ վերածնդի, լույսի ու աղատության հավերժական երազանքների հետ: Այդտեղ խոտացված են անցյալի սերունդների լավագույն երազանքները՝ ներծըժված Տրդատ ու Մանվել ճարտարապետների, Մշո ճառքնտրի նկարիչ Ստեփանոսի, Թորոս Շոսշինի, № 9422 ձեռագրի անանուն նկարչի, մեծանուն բանաստեղծներ Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և նրանց նախորդների ու հաջորդների համբարով, երազանքով, մարդասիրությամբ: Ահա թե ինչու նրանք, առանց մանրակրկիտ մեկնաբանության էլ, այնքան հարազատ ու սիրելի են ոչ միայն հայ ժողովրդի, այլև բոլոր ժողովուրդների համար:

Այսպիսով մենք միաժամանակ կանգնում ենք հատկապես X—XIV դարերի մշակութային այն հզոր բռնկումների առջև, որոնց արդյունքը հանդիսացան Աղթամարի տաճարը, Մշո Առաքելոց վանքի գուռը, ձեռագրային խորաններն ու կիսախորաններն՝ իրենց տոհմածառային ճոխ լուսանցազարդերով և այլ հուշարձաններ: Դրանք ոչ միայն բարդ ու շքեղ, այլև հին ու նոր զարդամոտիվների ազնիպիսի համահավաք խոտացումների օրինակներ են, որպիսիք անցյալը չեր ծնել: Դրանք քրիստոնեության և հեթանոսության մշակութային նվաճումների հանճարեղ համադրություններն են՝ ծառայեցված իր ժամանակի ծաղեռը քաղաքների, վերընթաց ճաշակի և զարգացող մտքի պահանջներին: Այդ շրջանումն է, որ տատիճանաբար նահանջում է քրիստոնեական խոտոթյունը, որպեսզի կես հազարամյակից ավելի ձնշման տակ առնված, բայց ժողովրդի կողմից պահանջությունների նոր թարմությամբ ու նոր ընկալումով:

Այս, փոխվել էին ժամանակները, վերակերպարանափոխվում էր մշակութը, ժողովրդական պատկերացումների հեղեղը մտել էր աստվածաշնչային դոգմաների աշխարհը, ստեղծվում էր մի նորորակ արվեստ, որն արտաքնապես աշխարհիկ էր, սակայն խորքով՝ կրոնական: Հիշենք Աղթամարի որթատուների գարդագոտին: Ստեղծագործական հանճարն այսուղ հասել էր այնպիսի պոռթկումի, ինչպիսիք էին Գրիգոր Նարեկացու «Աշքն ծովի ծով»-ը, «Գոհար վարդ»-ը, «Սալլին այն իջաներ»-ը, «Աէր յառաւոտէ»-ն, Վարդան Անեցու ներբողը, Հովհաննես Սարկավագի «Առ ձագն» քերթվածք և այլ ստեղծագործություններ, ուր երկրային բմբոնումների փարթամության մեջ կարծես կորչում էր հոգևոր գաղափարի հատիկը: Բայց այդ հատիկը կար: Դա՛ էր օրինաշափիր և դրա՛ շնորհիվ էր նախապատրաստվում աշխարհականացման մեծ երեւյթի երկունքը: Ճիշտ է, երեմն երեան էին գալիս նաև առօրեական առանձին դրվագներ, անձինք, էակներ, սակայն, դրանք բոլորը ենթարկվում էին գրլ-

խավոր տրամադրությանը և նրա հետ հակասության մեջ չէին. Հակասության գաղափարը առկա էր ավելի նուրբ, ավելի համատարած ու ավելի ճակատագրական եղանակով: Նրանով էին ներծծված բոլոր կառուցվածքները՝ սկսած ճարտարապետական նախագծերից և վերջացրած առանձին բանդակ-միավորներով ու զունային նրբերանգներով: Երկնային գաղափարի երկրային մատուցում, աստվածաշնչային պատգամի ժողովրդական մեկնաբանություն: Եվ այդ բոլորը հանուն հասարակական զարդացող պահանջի և բայ նրբացու շաշակի: Այս էր դեպի աշխարհականացում տանող օրինական, պաշտոնական, հզոր ու անկատելի փոփոխությունների բնիթացքը X—XIV դարերում:

Ավարտելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ հայոց դիցարանական եղանակ, լինելով հայ մշակույթի ամենաերկարակյաց և ամենասիրված մուտքիներից մեկը, իր գոյության ողջ ընթացքում բայլել է ժամանակի առաջավոր գաղափարների հետ, ծերացել նրանց ծերացմանը զուգընթաց, բայց և մշտապես վերահմաստավորվելով, վերածնվել է (նկ. 20—25) հաջորդ ժամանակների համար: Նա չի մեռել երբեք: Այդ իսկ պատճառով նա մեզ առաջնորդում է մինչև զարերի հեռավոր խոսքերը, օգնելով բացահայտելու մեծարժեք իրողություններ ու տոեղծվածային բնույթի մի շարք հարցեր: Այդ ուղիով է, որ հասկանում ենք բրիտաննեական և հեթանոսական շրջանների մշակութային հարստությունների որոշ փոխառնչությունների առանձին օրինաշափությունները և հնարավորություն ունենում թափանցելու զարդարվեստային այնպիսի բարդ ու բազմարովանդակ խոտացումների ներաշխարհը, ինչպիսիք են Աղթամարի քանդակապատկերներն՝ իրենց ամբողջությամբ, ձեռագրային խորանները, կիսախորանները և արվեստի այլ հրաշալիքներ: Չի կարելի մոռանալ այն նշանակությունը, որ կարող են ունենալ հայոց դիցարանական եղանակությամբ մեկնաբանություն ստացած խնդիրները՝ նաև ուրիշ ժողովուրդների մշակույթի հետազոտման գործում:

Ա. ՄԻԱՑԼԱԿԱՆՅԱՆ

МИФОЛОГИЧЕСКИЙ ОЛЕНЬ В СРЕДНЕВЕКОВОМ АРМЯНСКОМ ИСКУССТВЕ

(Р е з ю м е)

Автор пытается доказать, что в армянской средневековой миниатюре олень, изображаемый вместе с богоматерью и Христом-младенцем, имеет мифологическое происхождение. Проводится параллель между указанными изображениями оленей и соответствующими барельефами эпохи раннего христианства. В статье приведены дополнительные факты из мартирологов первых христианских мучеников, из народных песен и византийского эпоса о Дигенисе Акритасе, в которых также фигурирует волшебный олень. Автор показывает его генеалогическую связь с оленями античной мифологии—спутниками языческих богинь Артемиды, Дианы, Анант. Рассматривается понятие о фан-

тастическом единороге как относящееся к тому же кругу мифологических представлений.

Благодаря новому подходу к указанному орнаментальному мотиву создается возможность дать новое толкование таким шедеврам средневекового армянского искусства, как барельефы Ахтамара и дверей монастыря св. Апостолов в Муше, миниатюрные хораны в манускриптах и др. Для толкования хоранов привлечены данные, идущие от их зачинателя Евсевия Кесарийского.

Затронутые в статье проблемы могут быть полезны при изучении различных сторон не только армянского искусства.

A. CH. MNATSAKANIAN

LE CERF MYTHOLOGIQUE DANS L'ART MEDIEVAL

ARMÉNIEN

(Résumé)

L'auteur de l'article essaie de démontrer que dans la miniature médiévale arménienne le cerf représenté avec la Vierge et le Christ-enfant a une origine mythologique. Il fait passer une parallèle entre ces représentations de cerfs et les bas-reliefs de même genre de la haute chrétienté et produit des preuves complémentaires prises des martyrologes des premiers martyrs chrétiens, des chansons populaires et de l'épopée byzantine de Digenes Akritas, dans lesquels le cerf magique figure également. L'auteur montre son lien généalogique avec les cerfs de la mythologie antique accompagnant les déesses Artémis, Diane, Anahide. Il examine la notion de la licorne fantastique comme se rapportant à la même sphère de notions mythologiques.

Grâce à cette nouvelle conception du motif ornemental apparaît la possibilité de donner une nouvelle interprétation à certains chefs-d'œuvre de l'art médiéval arménien, tels que les bas-reliefs d'Akhtamar et de la porte du monastère des Saints-Apôtres de Mouch, les miniatures des canons de concorde des manuscrits, etc. Pour l'interprétation des canons de concorde l'auteur utilise des données venant de leur initiateur Eusèbe de Césarée.

Les problèmes soulevés dans cet article peuvent être de quelque utilité pour l'étude de l'art des autres pays également.

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈՅՑԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՍԴՈՒՐԱԿԱՆԻ
ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ
ՈՐՄԱՆԿԱՐՉԵՐԻ ՄԻԶԵՎ

Կապադովկիայի ժայռափոր եկեղեցիների որմնանկարչության գիտական ուսումնասիրությունները սկսվել են մեր դարի 20-ական թվականներից: Անցել է շուրջ հիսուն տարի, և այսօր մասնագետների տրամադրության տակ դրված են մի շարք հիմնավոր ու բարձրարժեք աշխատություններ՝ դիտական հանգամանալի բացատրություններով, ցանկերով և ցուցադրական հարուստ նյութով: Որմնանկարների ուսումնասիրության այդ մակարդակը, անշուշտ, հնարավորություն է ընձեռում ոչ միայն ժամանակակից ուսումնական գործակի ուսումնական կազմի կապադովկիայի գեղանկարչական հուշարձանների մասին, այլև հիմք է տալիս, որոշ զգուշավորությամբ հանդիրձ, զուգահեռներ անցկացնել նրանց և հայ մանրանկարչական արվեստի միջև: Մենք նկատի ունենք մասնավորապես Վասպուրականի XIV—XV դարերի մանրանկարչությունը, որը կապադովկիայի եկեղեցիների որմնանկարչության հետ պրոերություն է մի շարք սերտ ընդհանրություններ:

Նախապես ասենք, որ այդ խնդիրը նորույթ չէ մասնագիտական շրջանների համար: Կապադովկիայի և հայ արվեստների աղերսը դեռ 20—30-ական թվականներին ընդհանուր կարգով նկատել և մատնացուց է արել ֆրանսիացի նշանավոր արվեստաբան Գ. դե Ժերֆանյոնը Կապադովկիայի որմնանկարչությանը նվիրած իր քառահատոր աշխատության մեջ¹: Այնուհետև Մ. և Ն. Թիերի ամուսինները, բելգիացի ժ. Լաֆոնտեն-Դոգոնը և այլք:

Կապադովկիայի եկեղեցիների որմնանկարներին նվիրված նրանց գրեթե բոլոր աշխատություններում, թեև շատ հպանցիկ, բայց նշվել է հայերի Կապադովկիայում գտնվելու փաստը և նրանց առնչությունը այդ երկրի հնամենի ու հետաքրքրական արվեստի հետ: Գ. դե Ժերֆանյոնը զրում է. «Լիկանդոս և Սամնդավ քաղաքներում վաղուց ի վեր հաստատվել էր Բարձր Հայրից եկած բնակչության մի հատված Մլեհ (Մելիաս) հայի զլիսավորությամբ: Նրանք իրենց բանակաթեմներն ունեին և եռանգուհի մասնակցություն էին ցուցաբերում տեղական կյանքին: Նրանք որոշակի դեր խաղացին այդ քաղաքների վերակառուցման գործում: իսկ եկեղեցիների ներսում գտնվող որմնանկարների հունական արձանագրությունները այնքան անկանոն ու սխալնե-

¹ G. de Jerphanion, Une nouvelle province de l'art Byzantin, Les églises rupestres de Cappadoce, Paris, tt. I, II, III, IV (1925, 1932, 1936, 1942) (նաև եռահատոր մեծ ալբոմներ):

րով են զրված, որ դրանց հեղինակների ոչ հույն լինելը կատած չի հարուցում»²: «Բելի բիլիսելի արտաքին գծերը, — շարունակում է այնուհետեղ Գ. դե Ժերֆանյոնը, — ուղղակի վերցված են հայկական ճարտարապետության սովորություններից: Նրա գմբեթի ու ներսի դեկորատիվ զարդահարդարանքի ոճածեաբանական առանձնահատկություններում դրսերվում է հայկական ազգեցությունը»³:

Գ. դե Ժերֆանյոնից հետո, մոտ 2—3 տասնամյակ անց, արդեն 60—70-ական թվականներին, հայկական և կապագովկիական արվեստների առնչակցության խնդիրը քննության է ենթարկվում բելգիացի գիտնական Ժակլին Լաֆոնտեն-Դոզոնի կողմից: 1963 թ. լույս ընծայած «Նոր տեղեկություններ Կապագովկիայի մասին» աշխատության մեջ՝ նա ևս, ինչպես Գ. դե Ժերֆանյոնը, անդրադառնում է Կապագովկիայում հայկական տարրերի առկայության փաստին, մասնավորապես խոսելով հայ Մլեհ (Մելիաս) զորավարի⁵, Եկեղեցիներից մեկում պահպանված նրա զիմանկարի մասին, որը, ինչպես ենթադրվում է, կատարված պետք է լինի հայ վարպետների կողմից, հավանաբար 964—965 թվականներին: Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը մասնագիտական հիմնավոր և համոզիչ համեմատություններ է անցկացնում մի կողմից հայկական գեղանկարչության նմուշների (այսուղ նա հիշատակում է նաև Գաղիկ թագավորի «Կարսի» կոչվող ավետարանի կերպարները), մյուս կողմից Կապագովկիայի այսպես ասած՝ հայկական ազգեցությամբ հատկանշվող եկեղեցիների որմնանկարների միջև⁶: Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը տեղեկություն է հազորդում նաև Գեղիի մոտ քարանձավում գտնվող հայկական Սուրբ Կարապետ եկեղեցու մասին, որի հայտնարերովն ու առաջին ուսումնաշիրողը, ըստ բելգիացի գիտնականի, եղել է Հ. Ռուտարը⁷: Այդ եկեղեցուց այսօր սույ ավերակներ են մնացել ու որմնանկարների առանձին բեկորներ:

Ինչ վերաբերում է Փյուրենլե Սեկիի, Դանիելի, Վիլմոնլե և Կոկարե եկեղեցիներին, ապա Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը այն կարծիքն է հայտնում, որ դրանք իրենց գրենցու մասին, որի հայտնարերովն ու առաջին ուսումնաշիրողը, ըստ բելգիացի գիտնականի, եղել է Հ. Ռուտարը⁷: Այդ եկեղեցուց այսօր սույ ավերակներ են մնացել ու որմնանկարների առանձին բեկորներ:

² Գ. դե Ժերֆանյոն, նույն տեղում, Հատոր IV, 1942, էջ 398—400: Ի դեպ, Կապագովկիայի հայերը գրել են հունարեն և, իհարկե, ոչ վարժ, այլ՝ սխալներով, մի բան, որն արտահայտություն է գտել նրանց եկեղեցիների որմնանկարների վրա գտնվող բացատրագրություններում:

³ Նույն տեղում, էջ 417: Հուշարձանների նույն խմբին, որոշ վերապահությամբ, Գ. դե Ժերֆանյոնը ավելացնում է նաև ել Նազար եկեղեցին, որի որմնանկարները ոչ հույն վարպետ ձեռքի գործ է համարում: Ուրիշ այլ առիթներով ես Գ. դե Ժերֆանյոնն անդրադառնում է հայ և հայկագովկիայի արվեստների հարցերին:

⁴ J. Lafontaine-Dosogne, Nouvelles notes Cappadociennes (Extrait de „Byzantion“, m. XXXIII, Bruxelles, pp. 121—183).

⁵ Հայ Մլեհ զորավարի պատկերի մասին առաջին հիշատակությունը կատարված է Գ. դե Ժերֆանյոնի կողմից: Նա է նշել, որ Մլեհի պատկերը այդ վանքում ներկայացված է բյուզանդական կայսրերի դիմանկարներից հետո:

⁶ SEL «Kouvelles notes...», էջ, էջ 129, 135, 136, 141 և այլն. տե՛ս նույնի նաև՝ La Kale kilisesi de Selime et sa Representation de donateurs* հոդվածը („Zetesis“, Antwerpen, 1973, p. 749).

⁷ H. Rott, Kleinasiatische dankmäler aus Pisiden, Pamphylien, Kappadokien und Lydien, Leipzig, 1908, p. 200 (այդ մասին առաջ Ժ. Լաֆոնտեն-Դոզոնի «Նոր տեղեկություններ...»-ում, էջ 140):

ու գեղանկարչության ավանդների կնիքը: Փորձառու զիտնականը այդ որմանկարներում որոշակի նմանություններ է տեսնում XI դ. հայկական միշտք ձեռագրերի մանրանկարների հետ թե՛ կատարման (հատկապես ուրույն զծառագրման), և թե՛ օգտագործված դուլների սահմանափակ քանակի մեջ (աշքի հն ընկնում հատկապես կանաչն ու աղյուսագույն կարմիրը)⁸: Մեզ համար այստեղ շափականց ուշագրավ է և այն, որ Փ. Լաֆոնտեն-Դոզոնը զեղանկարչության այդ սովորությունների արձագանքները պահպանված է տեսնում XV դ. հայկական ձեռագրերում (ամենայն հավանականությամբ նկատի են առնված Վասպուրականի մանրանկարները):

Պրոֆ. Վ. Ն. Լազարեի ծննդյան յոթանասունամյակի առթիվ 1973 թ. Մուկվայում հրատարակված ժողովածուում⁹ Փ. Լաֆոնտեն-Դոզոնը ներկայացավ «Զեմլեկչի քիլիսե կոշվող եկեղեցու որմանկարները և հայերի ներկայության խնդիրը Կապադովկիայում» խորագիրը կրող հոդվածով: Այդ աշխատանքը արդեն ամրողովին վերաբերում է Կապադովկիայի հետ հայերի ու հայ արվեստի ունեցած կապին¹⁰:

Կապադովկիայի ժայռափոր եկեղեցիների արվեստի հետազոտման գործում, հատկապես վերջին շրջանում, լուրջ ներդրում կատարեցին նիկոլա և Միշել Թիերի ամուսինները: Առանձնացնում ենք 1963-ին Փարիզում նրանց կողմից լույս ընծայած «Կապադովկիայի վիմափոր նոր եկեղեցիները» ստվարածավալ աշխատությունը¹¹, ինչպես նաև Ն. Թիերիի մի քանի արժեքավոր հոդվածները¹²: Թիերի ամուսինները ևս, ինչպես վիմափոր այդ եկեղեցիների նախորդ հետազոտողները, ուշագրություն են հրավիրում Կապադովկիայի հետ հայերի ունեցած կապին և այդ երկրների ժողովուրդների արվեստի սերտ փոխարարերությանը¹³:

Մեր աշխատանքի ընթացքում օգտվել ենք նաև այլ հեղինակների՝ Կապադովկիայի արվեստին նվիրված հոդվածներից, որոնց մասին խոսք կլինի շարադրանքի բնիթացքում: Ի դեպ, ասենք, որ հայ միջնադարյան արվեստի,

⁸ J. Lafontaine-Dosogne, „Nouvelles notes...“, pp. 171–172. Ի դեպ, վերահիշյալ շորս եկեղեցիները գտնվել են միջյանց մոտ, դաշտավայրի նույն մասում, և պատկանելիս են եզել նույն համայնքին:

⁹ „Վիզանտիա, Южные славяне и Древняя Русь, Западная Европа, искусство и культура (сборник статей)“, М., 1973.

¹⁰ Անդրագանալով Զեմլեկչիի եկեղեցու (XI դ.) որմանկարներին, Փ. Լաֆոնտեն-Դոզոնը գրում է. «Էնձ թվում է, որ այդ եկեղեցու որմանկարները դրսնորում են որոշակի կառեր ու միայն Կապադովկիայի մի շարք վանքերի գեղանկարչության հետ, որոնք վերագրվում են հայերին և կամ առանձնանում հայկական ազգեցությամբ, այլ նաև հայկական այն ձեռագրերի մասնակարների հետ, որոնց ես ծանոթացա երևանի Մատենագրանում» (նույն տեղում, էջ 78): Այդ հոդվածում հեղինակը բերում է մի շարք հետաքրքրական փաստեր, կատարում գիտուկ համեմատություններ համատելու համար, որ հայերը և, ընդհանրապես, հայկական արվեստը, որոշակի դեր են կատարել Կապադովկիայի մի շարք եկեղեցիների որմանկարչության ձևավորման գործում:

¹¹ Nicole et Michel Thierry, Nouvelles églises rupestres de Cappadoce, région du Hasan dagi, Paris, 1963.

¹² N. Thierry, Yusuf kos kilisesi église rupestre de Cappadoce, Ankara, 1974; Նույնի „Une iconographie inédite de la cène dans un Retable rupestre de Cappadoce“ („Revue des Etudes Byzantines“, t. 33, Paris, 1975); Նույնի „Eglises rupestres de Cappadoce“ („Corsi di cultura sull'arte Ravennate e Bizantini“, Ravenna, 1965, pp. 579–602).

¹³ Ն. և Մ. Թիերի, Nouvelles églises., էջ 5, 25, 83, 140 և այլն:

մանավանդ Վասպուրականի մանրանկարչության մասին՝ 20—50-ական թվականներին դնուս ամբողջական պատկերացում չի եղել դիտական լայն շրջաններում, որն, անշուշտ, դժվարացրել է վերոհիշյալ Հեղինակների կողմից համեմատական նյութի ավելի բազմակողմանի ընդգրկմանը¹⁴:

Նախապես մի քանի խոսք Կապաղովիի այնտեղ դարեր շարունակ ընակություն հաստատած հայերի և Հայաստանի հետ նրանց ունեցած կապերի մասին:

Կապաղովիի մի լեռնադաշտ է, որը կազմում է Փոքր Ասիայի ամենաբարձր մասերից մեկը: Հարավում հարում է Տավրոս լեռանը, արևելքից՝ Եփրատին, Հյուսիսից՝ Պոնտոսին, իսկ արևմուտքում՝ Աղի կոչվող անապատն է: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում, կապված քաղաքական անցուղարձների հետ, այս սահմանները երբեմն փոփոխվել են: Սակայն մի քանի շիշտ անփոփոխ է մնացել՝ արևելյան կողմից Կապաղովիի սահմանների շիռումը պատմական Հայաստանի տարածքի հետ:

Կապաղովիի ունի մոտ 250 կմ երկարություն և 150 կմ լայնություն: Նրա մակերեսը, հատկապես Արգեսու լեռան շրջանում, որտեղ փովտծ են մեղ հետաքրքրող վիճակուր եկեղեցիները, ծածկված է պասալաղյուն քարածայութերի կույտերով ու հալած լավայի նստվածքներով, որոնց վրա բուսական հողի ոչ թանձր մի շերտ է գոյացել:

Դեռևս մեր Ավարկության առաջին տարիներին Կապաղովիի նվաճվեց Հոռմեացիների կողմից և վերածվեց կայսրության դավանի: Հետագայում, շնայած այդ շրջանը պարբերաբար ընկնում էր Սասանյան Պարսկաստանի, արաբական խալիֆաթի և ասկա Պալմիրայի իշխանների տիրակալության տակ, բայց քնողուով մինչև սելջուկյան արշավանքները և այնուհետև էլ, որոշակիորեն կրում է բյուզանդական մշակույթի ներգործությունը, փասորեն հանդիսանալով նրա հեռավոր մի դավառը:

Պատմության դաժան ճակատագրի հայ Ժողովրդի մի որոշ մասը պարբերաբար թողել է հայրենի իր երկիրը և արտագաղթել արևմուտք՝ ապստան դանելով բյուզանդական կայսրության արևելյան տիրույթներում¹⁵: Այդ տեղաշարժերը ավելի մեծ ծավալ ընդունեցին VII դ. վերջում և VIII դ. սկզբներին, կալված արաբական տիրապետության ժամար շրջանի հետ¹⁶:

¹⁴ Գ. դե Ժերմանյոնի ժամանակը (մեր դարի 30-ական թվականներ) եվրոպական դիտական հասարակայնությանն առհասարակ թիշ քան էր հայտնի հայ միջնադարյան մշակույթից: Իսկ վերաբերում է ն. և Մ. Թիերի ամուսիններին և Ժ. Լաֆոնտեն-Դոզոնին, ապա նրանք ծանրթ չեն եղել վասպուրականի մանրանկարչության դպրոցին նվիրված որևէ ուսումնասիրության: Աւատի զարմանալի չէ, որ Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը իր համեմատությունների համար նախընտրել է միայն մի խումբ, ապակես ասած «փոքր ասիական» համարվող XI դ. հայեական ծեռագրերը (դա, հայանարար, ունեցել է նաև ժամանակադրական համապատասխան նշանակություն):

¹⁵ Դեռևս VI դ. սկզբներին, երբ պարսից Շապուհ 2-րդ արքան մտնում է Հայաստան, հայոց հոսրով 2-րդ թագավորը ստիպված է լինում իր կուսակիցներով տեղափոխվել կայսրության արևմուտքան սահմանները:

¹⁶ Խնդրու առարկա հարցը բավարար շափով շոշափված է հայ պատմագրության մեջ: Նկատի ունենք մասնավորապես ն. Աղոնցի «Արմենիա և էպոխ Յուստինիա» կապիտալ աշխատությունը (Ոճ, 1908, լ. IV, ստ. 66—90), ինչպես նաև Հ. Բարթիկյանի «Պատմանդին Սի-

Հ. Բարթիկյանի «Կոստանդին Սիրանածին» տշխատության մեջ հետաքրքրական փաստեր կան Բյուզանդական կայսրություն տեղափոխված հայերի մասին: Նրանց շարքերից գուրու եկած առանձին անհատներ աստիճանաբար բարձր դիրք գրավեցին երկրի քաղաքական կյանքում և հատկապես ասզմական ասպարեզում:

Կապադովկիայում հայկական տարրի ստվարանալու երևույթը հատկապես շոշափելի գարձագլ XI դարում: Հայտնի է, որ Բյուզանդական կայսրությունը արևելքում նոր երկրամասներ գրավելու համար զիվանագիտական ակտիվ գործունեություն էր ծավալում: Հայ և վրացի մի շաբթ իշխաններ, անկարող լինելով զիմադրել բյուզանդական ճնշմանը, ստիպված էին իրենց երկրները հանձնել կայսրության հովանավորությանը և հաճախ իրենք էլ ուղղափոխվել կայսրության արևելյան նահանգները: Քաղաքական այդ գոհերից եղավ նաև վասպուրականի հայկական թագավորությունը: 1021 թ. Սենեքերիմ Արծրունին, ավագանու և բնակչության մի մասի գլուխն անցած, թողեց իր հայրենի երկիրը և բնակություն հաստատեց կայսրության արևելյան նահանգներից մեկում՝ հին Փոքր Հայքի մայրաքաղաք Սեբաստիայում: Նկարագրելով Սենեքերիմի գաղթը, Միքայել Ասորին գրում է. «Հայերը բազմեցան այս կողմերը և անկից է, որ տարածության բոլոր Կապադովկիա, Կիլիկիա և Ասորիք»¹⁷. Այդ գեղքերի մասին մանրամասն տվյալներ կան նաև հայկական աղբյուրներում՝ Թ. Արծրունու, Ա. Լաստիվերացու, Մ. Առհայեցու, Մ. Անեցու, Վարդանի, Կիրակոսի մոտ:

Գ. դե Ժերֆանյոնը վկայում է խաչակիրների պատմիչներին, որոնք Կապադովկիայի հայաբնակ վայրերը գեռ այն ժամանակ կոշել են «Հայկական երկիր»¹⁸: Բատ որում, նշվում է, որ Հայերը հիմնականում բնակվում էին Գյորեմինի ու Սոգանլի Պերերի շրջանում (իսկ Փ. Լաֆոնտեն-Դողոնը գտնում է, որ նրանք ցրված էին ողջ լիոնացին Կապադովկիայում): Հայերը նոր թեմել են ստեղծել Կապադովկիայում հատկապես XI դարից. այդ ժամանակ նույնիսկ Բյուզանդիայում ապաստան գտած հայ և վրացի (կամ վրացադավան-երկարնակ հայ) իշխանները տեղափոխվում էին Կապադովկիա¹⁹:

«Վեց հարյուր տարիներու ընթացքին, որ Կապադովկիա կը մնար Բյուզանդական կայսերության տիրապետության տակ,— գրում է Ա. Ալպօյանց անը, — շարունակ պետությունը կը լցվեր Հայերով, որոնցմէ սովոր մաս մըն ալ ապահովարալ բաժին կինար Կապադովկիո, որուն մեկ կարեռը մասը արգեն Փոքր Հայքի սահմաններուն մեջ մտած էր Հոռմեական տիրապետության շրջանին հայ բնակության թվին աճումին պատճառով»²⁰:

բանաձին» ուսումնասիրությունը (Բյուզանդական ազգություններ, Բ. Երևան, 1970, տե՛ս «Կոստանդին Սիրանածինը» և նրա գրական ժառանգությունը բաժինը և առաջ էջ 171, 172—321, 330 և այլն):

¹⁷ Ա. Ալպօյաննեան, Պատմութիւն Հայ կեսարիոյ, Կոմիսու, 1937, էջ 338 («Մշուշ» de Michel La Sytien, Paris, 1905 թ. 133): Միքայել Ասորու այս խոռոքերը, ինչպես Ա. Ալպօյաննեանն է նշում, «ժամանակագրության» Հայերեն թարգմանությունների մեջ շկան կամ խիստ համառոտված են: Ի դեպ, զեռ Մովսես Խորենացին Կապադովկիան համարում է հայոց երկրի արևմտյան մասը («Պատմություն Հայոց», Ա, գլ. 14):

¹⁸ Գ. դե Ժերֆանյոն, Աշված աշխատ., Հատ. II, էջ 398 (Ժանով. 2):

¹⁹ ՏԵ՛ս Փ. Լաֆոնտեն-Դողոնի վերահիշյալ Հոգվածը:

²⁰ Ա. Ալպօյաննեան, նույն անում. էջ 334:

Մ. Օրմանյանը հանդամանորեն խոսում է Կապագովկիալի հայկական Հոգևոր թեմի զործունեության մասին, որը սերտ կապեր է պահպանել հայկական մայր եկեղեցու հետ²¹:

Կապագովկիալի հայկական բնակչության ու նրանց միջավայրի հարցերը Հ. Բարթիկյանը շոշափել է կապգած նաև հունական «Դիցենիո Սկրիտա» էպոսի հետ²²: Էպոսի հերոս՝ Դիցենիս, ինչպես և նրա հարսնացուն՝ Եվդոկիան, կապագովկիացիներ էին, որոնք իրենց կյանքի ու պայքարի ընթացքում առնչվել են հայերի հետ: Բյուզանդական աղքատություններում երբեմն նույնացվել են ոչ միայն Կապագովկիան ու Հայաստանը, գրում է Հ. Բարթիկյանը, այլև կապագովկիացիներն ու հայերը: Խոկ Ի. Մ. Դյակոնովը կապագովկիան լիզուն համարել է «պրոտոհայկական»²³: Հ. Բարթիկյանը նշում է նաև, որ հույն գիտնական Պ. Կարոլիգեսը կապագովկիան շատ բառերի և արտահայտությունների ծագումը կապում է հայերենի հետ²⁴:

Այդպիսի հիմքի վրա պարզ և միանգամայն համոզիչ է թվում հայ արվեստի, նրա սովորությունների սերտ կապն ու առնչակցությունը Կապագովկիալի վիճակուր եկեղեցիների որմնանկարչության հետ²⁵,

Այստեղ մեր խոսքը վերաբերում է մի մասնակի հարցի՝ Կապագովկիալի Եկեղեցիների որմնանկարչության հետ Վասպուրականի մանրանկարչության նմուշների բազմատմանը, որը, մեր համոզմամբ, նոր նպաստ կրերի հայ և կապագովկիան արվեստների միջև եղած ընդհանրությունների բացահայտմանը²⁶:

Կապագովկիալի եկեղեցիների նկարչությունը միատարր չէ: Ընդհանուր կողմերով հանդերձ կարելի է սահմանագատել ոճական, մասամբ նաև պատկերագրական երկու խումբ: Ըստ որում, հնամենի խմբի մեջ մանող հուշարձանները իրենց պարզունակ ձևերով ու անմիջականությամբ (նույնիսկ զեկորատիվ տարրերի օգտագործման հարստությամբ) ավելի հոգեհարազարդ արվեստի ժողովրդական տղղության ստեղծագործություններին: Մինչդեռ մյուս խումբը շատ տվելի շիման եղբեր ունի բյուզանդական արվեստի հետ: «Հազիվ թե հնարավոր լինի ընդունել ոճական և պատկերագրական ընդհա-

21 «Ազգապատում», Կ. Պոլիս, 1912, էջ 101:

22 «Վիզանտիйский эпос о Лигенисе Акрите и его значение для арменоведения (автореферат). Ереван», 1970, стр. 27—32.

23 И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, стр. 222.

24 Հ. Բարթիկյան, նույն տեղում (ավտոռեֆերատ), էջ 28:

25 Ի զետք, վերը նշված հեղինակներից բացի հայերի և կապագովկիալի արվեստի առնչության հարցին անդրադարձել են նաև Մ. Ռեյնուալը „Die Byzantinische Wandmalerei in Kleinasien“ Ե. դ. 1, 5, pp. 67—74: Ն. Օյկոնոմիդեսը „L'organisation de la frontière orientale de Byzance aux X-e siècle et Taktikon de l'escorial“ („Rapports“, 11, pp. 73—90), ինչպես և մեկ երկու այլ հեղինակներ:

26 Գերես 1911 թվականին Ա. Բառումշտարկը ծանոթանալով Վասպուրականի (Հիմնականում արտասահմանյան հայվարձուներում գտնվող) մանրանկարների հետ, գրել է. «Հին արևելյան-միջագետական գեղանկարչության սովորությունները (նկատի պետք է ունենալ և կապագովկիալի արվեստի հնագույն հուշարձանները՝ IX—XI դդ.) թերեւ ոչ մի տեղ այնքան անարատ ձևով չեն դրսելու վեց, ինչպես Վասպուրականի շրջանի ձեռագրերում: Այդ ձեռագրերի շնորհիվ է, որ XV—XVII դդ. հայկական մանրանկարները կամքջվում են գեղանկարչության հին ավանդների հետ» (A Baumschark, Eine gruppe illustriertes Armenisches Evangelien bücher des XVII—XVIII, j. in Jerusalem. Monatshefte für Kunsthistorie und Kunstwissenschaft, 1911, p. 48):

նուր մի շափանիշը բյուզանդական համարվող սճի և ժողովրդական կամ արևելահակ («օրինատալիստական») բնույթի այդ ստեղծագործությունների համար,— զբում է Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը, թեև այդ երկու ուղղությունների արվեստի միջև ընկած սահմանը կապաղովկիայում բավականին հեռու է՝ ուրշակիությունից²⁷:

Մեզ համար սկզբունքային նշանակություն է ստանում կապաղովկիայի եկեղեցիների ժողովրդական ուղղության որմնանկարների ու վասպուրականի ձեռագրերի նկարաշարի պատկերա-թեմատիկ նույն կարգը: Գրանցում, ավետարանական ընդունված թեմաների հետ մեկտեղ, ներառվում են նույն պարականոն գրականության նյութեր՝ վարքեր, առաքյալների գործեր և այլն²⁸: Առաջին պլանում Հիսուսի երկրային կյանքի դրվագներն են, որոնք ամփոփվում են «մարմնավորման» և «քավման» շարքում: Վերջիններիս մեջ հիմնական արտահայտություն են ստանում «Ծննդյան» և «Խաչելության» տեսարանները՝ իրենց հանգուցային-խորհրդանշական իմաստով, որտեղ «Ծննդին» միշտ նախորդում է «Ավետումը», իսկ «Խաչելությանը»՝ «Մատնությունը»: Փաստորեն այդ թեմաները հանդիսանում են քրիստոնեարանական պատկերաշարի համառոտագրումը. մյուս պատկերները լրացնում են հարստացնում են այդ:

Կասպուրականի ձեռագրերում նկարագրումները մեծ մասամբ սկսվում են «Արրաջամի գոհաբերության» տեսարանով: Կապաղովկիայում այդ թեման սակայն է հանդիսում: Բայց մեզ հայտնի սակավագեալ այդ օրինակներում էլ «գոհաբերությունը» ներկայացնում է հորինվածքային մի տարրերակ, որն իր ընդհանուր գծերով պահպանվում է առավելաւես վասպուրականի XIV—XV դդ. արվեստում: Կապաղովկիայում բնորոշը Այվալիկ եկեղեցու (922—930 թթ.) որմնապատկերն է (նկ. 1), որը մասամբ հիշեցնում է Աղթամարի եկեղեցու (918—921) որմնաքանդակը: Արրաջամը կանգնած է, ձախ ձեռքով իսահակի դիմում մազերի փունջը բռնած, աջով՝ սուրբ, հայացը և դեպի Աստծո կողմից ուղարկված խոյի կողմը²⁹: Այս պատկերաձևի և վասպուրականի մանրանկարների միջև սկզբունքային տարրերություններ գրեթե շկան³⁰:

²⁷ Տես „Rosnisi վերքու, նազվաւոյոյ Վեմլիկչե կիլիս...“: Որուես ժողովրդական կամ «օրինատալիստական» ուղղության պատկանող գործեր առանձնացվել են մասնավորապես Զեմլեկիի, Աշիկել արայի, Պյուրենի Սևկի, Գյորեմեյի, Էլ-Նազարի և մեկ-երկու այլ եկեղեցիների որմնանկարները: Համանարար շատ ավելի մեծ ընդհանրություններ կան հայկական և կապաղովկիայի եկեղեցիների ճարտարապետական առանձնաշատկությունների մեջ, որոնց բացահայտման ուղղությամբ զերև շատ քիչ բան է արված: Պետք է հիշատակն միայն Ժ. Լաֆոնտեն-Դոզոնի „L'aglise rupestre dite eskiraca kilisese et la place de la viergesans les absides Cappadociennes“ հոդվածը:

²⁸ Կ. Ջեյցմանը նկարների այլուժային այլպահի ծրագրայնությունը համարում է «կիսացիկլարին» (Illustration in Roll and codex. Studies in manuscript illumination, № 2, Princeton University press, 1947, p. 199):

²⁹ Տես Reiner Stichel, Auberkanonische Elemente in byzantischen Illustrationen des Alten Testaments. Romische Quartalschrift für christliche Altertumskunde und Kirchengeschichte Band 69, Heft 3—4, 1974, Herder Rom Freiburg, Nien. tabel. 5.

³⁰ Հայշված երկրորդական կարգի որոշ մանրությունը օրինակ՝ որմնանկարում տեսարանը երկու կողմերից շրջափակված է խսիռոսի և Ֆլավիոսի պատկերներով և այլն:

Պարզ սխեմայով է ներկայացվում Կապադովկիայում «Ծնունդը»: Այդ-տեղ մնձ մասամբ շի պատկերվում մանկանը երկրպագելու եկած մողերի դրվագը (դրան հատկացվում է առանձին տեղ):³¹ Ի դեպ, մողերի երկրպագության առիթով մի փաստի վրա ուշադրություն է հրավիրել Գ. դե Ժերֆանյոնը (հնագայում դրան անդրադառնում է նաև Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը): Կապադովկիայի որմնանկարների «երկրպագության» տեսարաններում սովորա-



Նկ. 1

բար դրվում են երեք սերունդները ներկայացնող մողաց թագավորների անունները՝ Մելքոն, Գասպար, Բաղդասար: Ըստ վերոհիշյալ ուսումնասիրողների, այդ անուններն ունեն զուտ հայկական հնչույթ և հանդիպում են միայն Քրիստոսի տղայության ավետարանի հայկական խմբագրության մեջ (գլ. XI, 1):³² Իսկ հայկական ձեռագրերում դա սովորական երևույթ է:

³¹ «Ծնունդն» առանց մողերի երկրպագության հանդիպում է նաև Վասպուրականի XIV դմբ շարք ձեռագրերում (Մատենադարան, ձեռ. № 2744, նկ. Սիմեոն Արճիշեցի, ձեռ. № 7456, նկ. Վարդան), թեև ամբողջությամբ վերցրած այդ տարրերակը այստեղ լայն տարածում չգտավ:

³² Գ. դե Ժերֆանյոն, նույն տեղում, հատ. IV, էջ 417: Ինչ վերաբերում է Հովսեփի՝ թիկունքով դեպի ծնունդը նստած պատկերագրական ձերն, որը Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը համարում է Կապադովկիային բնորոշ մոտիվ, ապա պիտք է ասել, որ Վասպուրականում ևս այդ տարրերակը հանդիպում է, միայն թե Հովսեփը պլուսը փոքր ինչ բարձրացրած է լինում՝ հրեշտակների երգի ձայնը լսելու համար: Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը ուշադրություն է հրավիրում նաև սրբնեց նվազող հովզի և լուր հաղորդող հրեշտակի վրա: Նա նշում է, որ ի տարրերություն բյուզանդական և

Կապադովկիայի եկեղեցիների որմնանկարչության և Վասպուրականի դպրոցի պատկերագրական ընդհանրության մեջ ուշագրավ օրինակ է անորհրդավոր ընթրիքը։ Երկուստեք քառանկյուն երկար սեղան է ներկայացվում։ առաքյալները տեղադրված են հանդիպակաց կողմում՝ ճակատացին դիրքով, Հիսուսը՝ ձախում, Հուդան կենտրոնում՝ ձեռքը պարզած պատառին։ Ն. Թիերին հատուկ ուսումնասիրության նյութ է դարձրել սակավագեղի հանդիպող այդ տարրերակը³³, և եկել է այն եղրակացության, որ XI դ. կեսերին կառուցված կապադովկիական Գարիկի և Գարանլի եկեղեցիների (նկ. 2), ինչպես նաև նույն ժամանակների վրացական Դավիթ Գարեջելիի եկեղեցու «Ընթրիքի» որմնանկարները³⁴ պատկերագրական այդ ձևի առաջին նմուշներն են միջնադարյան արվեստում։ Ինչ խոսք, եթե Ն. Թիերին քաջատեղյակ լիներ հայկական մանրանկարչության X—XI դդ. բոլոր հուշարձաններին, տպա «Խորհրդավոր ընթրիքի» վերոհիշյալ տարրերակի մասին խոսելիս կհիշատակեր նաև 974 թվականի «Մուրզութի» և 1038 թ. (Մատենադարան ձեռ. № 6201) ձեռագրերի «Ընթրիքի» տեսարանները։ Ավելի ուշ այդ տարրերակը արդեն հանդիպում է XIV դ. Վասպուրականի ձեռագրերում (նկ. 3, նկարիշ Հովսիան)³⁵, որը և մենք համեմատում ենք կապադովկիան նմուշների հետ։ Ուրիմն ոչ միայն Կապադովկիայում և վրացական Դավիթ Գարեջելիի եկեղեցում³⁶, այլև ավելի վաղ՝ X դարի, տպա և XIV դդ. հայկական ձեռագրերում առաջին էնքարտական մանրանկարչության մեջ տարրերակից, որն իր բոլոր տարածելություններով հանդերձ, չի ներառել լրաբեր հրեշտակի մոտիվը (նու նկատի ուներ XI դ. հայկական ձեռագրերը)։ Լրմբեր հրեշտակի բացակայությունը պատահական երեսը չէր, եղրակացնում է Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը, — այդպես ավելի հաճախ լինում է բրիտանիական արվեստի ժողովրդական հոսանքի ստեղծագործությունների մեջ (տե՛ս «Росписи церкви называемой Чемлекчи...»)։ Վատահորեն կարելի է ասել, որ Վասպուրականի XIV—XV դդ. մանրանկարների ընթրիքունը այդ կարծիքն է հավաստում (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 5543, 5355, 4928 և մի շարք այլ ձեռագրեր)։ Ի դեպ, Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը կանգ է առել նաև սրբահար հովվի վրա «Զուտ հայկական ընույթի հորինվածքներում երաժիշտը բացակայում է, — զրում է նա, — որը սակայն գործնականորեն հանդիպում է հավադովկիայի զրեթե բոլոր որմնապատկերներում» (նույն տեղում, էջ 85)։ Այստեղ միայն մեկ վերապահություն պետք է առել, Վասպուրականի XIV—XV դդ. մանրանկարներում զրեթե միշտ էլ առկա է երաժիշտ հովվը։

³³ N. Tallery, Une iconographie inédite de la scène dans un réfectoire rupestre de Cappadoce («Revue des Etudes Byzantines», tome 33, Paris, 1975, pp. 177—185).

³⁴ Աննա Վոլչեկայա, Ռուսիական մանրանկարների արվեստում կապադովկիայի պատկերները (տե՛ս Ա. Վոլչեկայա, նույն տեղում, նկ. 6, 7, 39):

³⁵ Մատենադարան, ձեռ. № 4806:

³⁶ Հայու որում, վրացական եկեղեցիներում հանդիպող օրինակները, հատկապես սեղանի ձեր, առաքյալների դասավորությունը և այլն, այնքան շեն նմանվում կապադովկիան հուշարձաններին, որքան հայկական մանրանկարչության նմուշները։

³⁷ Մեկ ընդհանուր սինծմայի առկայությամբ հանդերձ, իհարկե, կան որոշ զանազանություններ մանրություններում։



fig. 2




fig. 3

Եփման ընդհանուր եզրեր կան նաև «Մատնության» տեսարանում. ընդհանուր գասավորությունից բացի, այդուղի շեշտված է Հիսուսին կալանավորող զինվորների անսովոր մեծ զենքերը. «Զենքերին այդշափ մեծ տեղ հատկացնելը տռամբձնահատուկ երեսութ է ողջ փոքրասիական և անըրկովկասյան միջնադարյան արվեստում»— պրում է Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը³⁸: Այսուղի կան բնորոշ այլ գժեր ևս, որոնք կյանքի կոչվոծ լինելով ժողովրդական արվեստի բնությից. Հայտնի են դասնում առավելապես Խաղաղովկիայի և Վասպուրականի հուշարձաններում (օրինակ՝ Հիսուսը պայմանականորեն մեծացված համաշափություններով՝ Գելվերի եկեղեցու որմնանկարներում, իսկ Վասպուրականում՝ մանրանկարի Գրիգորի մոտ³⁹):

Ընդհանրությունների բացահայտման տեսակետից ուշագրավ է «Մատնությանը» հաջորդող «Պիղատոսի դատաստան»-ի տեսարանը: Հիսուսի հարցաքննությունից հետո Պիղատոսը ձգվել է աջ և ձեռքերն է լվանում. «Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչ ինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ չուր, լուաց զծեռս յառաջի ժողովրդեան և ասէ. քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք զիտասցիք» (Մատթեոս, իէ, 24): Ժամանակի ընթացքում, սակայն, այս հետաքրքրական թեման կարծես դուրս է մնում ընդհանուր պատկերագրության ցանկից⁴⁰: Մինչդեռ Կապաղովկիայի որմնանկարներում և Վասպուրականի XIV—XV դդ. ձեռագրերում պահպանվում է՝ ստանալով ավելի կենցաղագրական երանգ⁴¹:

Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը XI դ. Հայկական ձեռագրերի հետ նկատվող կապերի առնշությամբ անդրադառնում է նաև «Խաչելության» թեմային⁴²: Ի լրումն ըելզիացի զիտնականի ասածի, մենք ուշադրություն ենք հրավիրելու Վասպուրականի XIV—XV դդ. մանրանկարների հետ նղած այնպիսի ընդհանրությունների վրա, որոնք, թվում է, ավելի համոզիչ են դարձնելու նշված կապը: Վասպուրականում մեծ մասամբ նախընտրում են պատկերագրական հնամենի տարբերակները. Հիսուսը խաչափայտի վրա՝ ուղիղ մարմնով և ցավի արտահայտման բացակայությամբ, նիզակահարող զինվորը և սպունդ մատուցու-

38 «Բյուզանդիա, Հարավային սլավոններ...», էջ 81:

39 Գ. դի Փերֆանյոն, նույն տեղում, Հատոր 1 (ալբոմ), տախտակ 49: Զեռ. Մատ. № 4928, 4848 (Արտարին ձեռքի պայմանական փոփոխությունները Հատուկ է առավելապես արվեստի ժողովրդական ուղղության գործերին):

40 Հետզույն օրինակներից է Հռավենայի խճանկարը և Ռուսանոյի ձեռադիրը (Д. В. Айна-лов, Эллинистические основы Византийского искусства, СПб., 1901, стр. 70): Գ. Այնալովը այդ ձեր կապում է առորապաղեստինյան ավանդների հետ, որոնք իրենց հերթին սնվել են անվավեր գրականության նյութերից: Զեռերը լվանալու մոտիվի մասին անշանչ նաև ն. Կոնդակովի ժուռ («История Византийского искусства и иконографии по миниатюрам греческих рукописей», Одесса, 1876, стр. 80).

41 Անմիջական նմանության առումով համեմատելի է Կապաղովկիայի Կոկար քիլիմա վանքի որմնանկարը, Վասպուրականում՝ Թամբէլ Աղթամարցու մանրանկարը (ձեռ. № 5543):

42 Հսու որում, անզն ու տեղը կատարելով նաև վերապահություն. «Հիսուսի կողքին խաչված ավաղակները շկան XI դ. Հայկական ձեռագրերի խմբում, որոնք կատարվել են Փոքր Ասիայում: Անշանակի այս զեպքում էլ առիթ ունենք տեսնելու պատկերագրական հաւաքված մի տարբերակ, որը կարող է համեմատվել «Սննդյան» մեջ լրաբեր հրեշտակի բացակայության փաստի հետ»,— պրում է նա (նշված Հոդվածը, էջ 87): Պետք է ասենք, սակայն, որ «փոքրասիական» Համարվող XI դ. ձեռագրերի խումբը, պատկերագրական իր մի քանի առանձնահատկություններով փաստորեն հայկական մանրանկարչության «ժողովրդական» համարվող սուրբության համար մասնավոր նշանակություն է ստանում:

դր, երկու կողմերում խաշված ավագակները և այլն: Բացի այդ բոլորից, տոկա է ինքնատիպ մի մոտիվ ևս, որը, խիստ սակավագեալ լինելով, հանդիպում է նաև Կապաղովկիայի որմնանկարներում: Խոսքը Հիսուսի խաչափայտի երկու կողմերում մեծ շրջանակների մեջ տեղավորված արեի ու լուսնի պարզ սխեմայի փոխարեն մարդկանց կես հասակով (կիսանդրի) պատկերի մասին է⁴³ (նկ. նկ. 4, 5): Արեի և լուսնի մոտիվը դեռևս չորրորդ դարից հանդիպում է «Խաչելության» տեսարաններում: «Նրանց երեւությը բրիստոնեական արվեստի մեջ,—գրում է Գ. Հովսեփյանը,— առնված է ոչ միայն ավետարանական պատմության հետևանքով, այսինքն արեի խավարման, այլև՝ հեթանոսական ազգեցությամբ. ուստի և, երբեմն, երեան են դալիս իբրև անձնավորյալ պատկերներ կամ հեթանոսական աստվածություններ»⁴⁴: Ուշագրավ է, որ հեթանոսական սովորութից եկող այդ մոտիվները, նաև Ղունկիանոսի աշքի ապաքինման դրվագը, հանդիպում է մանրանկարչական արվեստի ոչ այնքան «պրոֆեսիոնալ-կանոնական» բնույթի դորձնում, որքան ժողովրդական լայն խավերի ստեղծագործության, այսպիս ասած՝ «ժողովրդական» ուղղության մեջ:

Ընդհանուր նմանության մեկ այլ օրինակ է «Դժոխիքի ավերման» կամ «Հոգիների փրկության» յուրատիպ հորինվածքը Կապաղովկիայի եկեղեցիների ու Վասպուրականի ձեռագրերի նկարչության մեջ⁴⁵: Անդրաշխարհային արհավիրքների, խորտակված դռների, կրակի ու ծխի բարդ պատկերի փոխարեն դժոխիքն այստեղ ներկայացված է շատ սեղմ ձեռով՝ հսկա մի վիշապի կերպարանքով: Դժոխային վիճերի մեջ հավիտենական տանջանքների դատապարտված մտրդիկ եռաշարք տեղավորվել են այդ զարհուրելի կենդանու ժարմնի առաջացրած ոլորապտույտների մեջ: Փաստորեն այս դեպքում էլ մենք դործ ունենք ավելի պայմանական-խորդանշական մի պատկերի հետ, որը միջնադարյան արվեստում հայտնի է դառնում գլխավորապես Կապաղովկիայի X—XI դդ. և Վասպուրականի XIV դ. Հուշարձաններից: Հասկանալի է, որ դա պատահական զուգագիպության օրինակ չէ, այլ՝ հին ավանդներից եկող ներքին սերտ կապերի դրսեորման հետեանք:

Առնվազն նախատիպերի նույնությունն են ցույց տալիս «Կոտորումն մանկանց» տեսարանը լուծման խիստ համառոտված ու պարզեցված ձևերով⁴⁶, «Ռունալվան», «Հարությունը»՝ յուղարեր կանանց Հիսուսի երեալու հնառն տարբերակով⁴⁷ և այլն:


43 Տե՛ս Գ. դի Փերֆանյոն, նույն տեղում, աղ. աղ. 40, 51: Դրա հնագույն օրինակը Կոսմաս Հնդկանավորդի ձեռագրում է (տե՛ս Դ. Անալօս, Էլլինիստիկա օսновы..., էջ 17):

44 Գ. Հովսեփյան, Համուց թափ Ամենափրկիչը և նույնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937, էջ 56:

45 Կապաղովկիայում՝ վիլանե քիլիսեռմ (տե՛ս Մ. Թիերի, նշված աշխ., նկ. 13, աղ. 41, էջ 59, 67, նաև Աշխելե քիլիսեռմ: Վասպուրականում՝ Մատենադարան, ձեռ. Ա. 5332, էջ 4ր):

46 Ի դեպ, նման սխեմայով է պատկերված այդ թեման նաև Աղթամարի եկեղեցու որմնակարում:

47 Կապաղովկիայում հատկապես Ալիկելե եկեղեցում, Վասպուրականի ձեռագրերում դրանք կանոնիկ բնույթը են ստանում (Մատենադարան, ձեռ. Ա. 2744, 4806, 4814 և այլն): Հնագույն օրինակը Բարութայի 586 թ. ավետարանում է (տե՛ս Ի. Պոկровский, Եвангелие в памятниках иконографии преимущественно византийских и русских, СПб., 1892, стр. 3:5):



vl. 4



vl. 5

Էսկի բակե կոչված եկեղեցու որմնապատկերում, որտեղ Աստվածամայլը ներկայացված է հրեշտակների ու սրբերի շրջապատում, կրկին տեղիք է տվել Ժ. Լաֆոնտեն-Դոզոնին անմիջական զուգորդություն կատարել Հայ արվեստի հուշարձանների հետ, հիշեցնելով նույնիսկ Տաթևի վանքի Աստվածամոր պատկերը⁴⁸: Նույն միտքը նա արտահայտել է նաև «Աստվածամոր վերափոխման» կապակցությամբ իր «Նոր տեղեկություններ Կապադովիկիայի մասին» աշխատությունում⁴⁹: Ընդ որում, երկու դեպքերում էլ՝ և Կապադովիկիայում, և Հայ արվեստում (նաև Վասպուրականում) շեշտված է տեսարանի մեկնարանությանը բնորոշ մի մանրամաս: Աստվածամոր Հոգեհանգստին ներկա գտնվող հրեաները պատկերված են լինում կտրված ձեռքերով: Ըստ ավանդության, նրանք միտք են ունեցել գողանալ Տիրամոր մարմինը: Ուստի և աստծու կամքով հրեշտակները այդ պահին կտրում են դեպի սուրբ մարմինը մեկնած նրանց ձեռքերը, և կտրված զաստակները ասես օդի մեջ կախված են մնում: Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը նկատում է, որ որոշ զեպքերում Հկարիչները Աստվածամորը միայն կես հասակով են պատկերեն, ցույց տալով նրա աննյութական, կամ հրեաների համար անմատչելի լինելը: Բելգիացի գիտնականը նշում է նաև, որ Հայկական ավանդությունները «Աստվածամոր վերափոխման» կամ նրա «Ննջման» մասին բավական ինքնատիպ են և տարբերվելով բյուզանդական ավանդություններից մոտենում են Կապադովիկիայում բնդունված սովորությներին⁵⁰:

Ինչ խոսք, ապագայում այս ուղղությամբ կատարվելիք պրագառումները կարող են նրանք բերել զուգորդությունների այլ հետաքրքրական փաստեր ևս, սակայն, կարծում ենք, սույն հոգվածում բերված մի քանի օրինակներն էլ Հիմք են տալիս պնդելու (անկախ միջնադարյան քրիստոնեական արվեստին հատուկ ընդհանրության)⁵¹, որ այստեղ ակնառու է մերձիմուտ կապերի, առնվազն սկզբնաղբյուրների նույնության պարագան:

Այժմ մի քանի խոսք ոճական տռանձնահատկությունների մտախն: Կապադովիկիայի նշված եկեղեցիների որմնանկարչության և Վասպուրականի մանրանկարների հիմքում ընկած է ժողովրդական արվեստին հատուկ կառուցվածքային բնույթը, որը արտահայտչական մի շարք կողմանություններում հակառակ է առաջարկության մասին:

⁴⁸ J. Lafontain-Dosogne, L'église tricèstre dite Eski Bace kilisesi et la place de la Vierge dans les absides Cappadociennes („Jahrbuch des österreichischen Byzantinistik“, 21 Band, pp. 161—178)

⁴⁹ Extrait de Byzantion*, t. XXXIII, p. 164—165

⁵⁰ Այս առումով շափականց հետաքրքրական է Պ. Ֆետակի ուսումնասիրությունը, որը հատուկ նվիրված է Հայկական միջավայրում ընդունված «Աստվածամոր վերափոխման» կամ «Ննջման» ավանդություններին (?: Vetter, Die armenische Dörmitio Mariæ, „Theologische quartalschrift“, 84, 1902, pp. 321—349 (§ 22, p. 344)).

⁵¹ Առավել բնութագրականը միջնադարյան արվեստի համար,— զրում է Մորելը,— զրելիք ամեն տեղ ու ամեն մի ժամանակի ընթացքում քրիստոնեական կրոնն է, նրա մտածողության ձերին ու արտահայտման եղանակները, որոնք լցիտեն ուսուայտական ու լեզվական սահմաններ (տե՛ս Ռ. Ալեքսանդր Խաչատրյան, Խոջեցւունակ պատկերազնության առաջնային գործերը, 1973, էջ 5): Նույնիսկ այս պարագայում Կապադովիկիայի ու Վասպուրականի մանրանկարչական արվեստում (խոսք առաջման պատկերագրության մասին է) առկա են միայն իրենց բնորոշ այնպիսի կոչեր, որոնց հանրագումարը, ըստ Էության, դառնում է ազգային յուրաքանչյուր արվեստի որակական հատկանիշը:

մետ է տիրող քրիստոնեական գաղափարախոսության գեղադիտական պատկերացումներին⁵²: Հասարակ ժողովողի ստեղծագործությունը միշտ էլ աշքի է, ընկել պարզունակությամբ ու պահպանողականությամբ, թեև եղել է անմիշական, դիպուկ ու շեշտված ձևերով, երբեմն հերիաթային, երբեմն զրոտեսկային հումորով լի կերպարնօրով⁵³:

Ժողովրդական արվեստում, մանավանդ երբ այն ներհյուսված է քրիստոնեական քմբոնումներով, կյանքի ու աշխարհի վերապատկերումը հնուանում է «իլյուզիոնիստական» իրատիպությունից: Առաջնայինը գաղափարական-իմաստային (սեմանտիկ) միտումներն են դառնում, որոնք արտահայտման համառոտածություններով, երբեմն էլ վերացականությամբ, միտեստակ պատկերանիշերի են վերածվում՝ ձեռք բերելով ավելի խորհրդանշական բնույթ⁵⁴:

Հորինվածքները կառուցվում են հարթապատկերին հնիքարկված՝ մասերի պարզ հաջորդականության եղանակով, որտեղ անտեսվում են նկարի խորքը և, ընդհանրապես, եռաչափ ձևերը:

Մոտեցման այդ սկզբնատարրերն էլ, ընականարար, ելակետ ևն հանդիպանում մեզ հետաքրքրող նկարների մյուս առանձնահատկությունների համար: Արտահայտման հիմնական միջոցը մնում է զիջը⁵⁵, որն իր շարժումակ (սիթմային) կառուցվածքով ներդաշնակում է շեղոք զույների հակագիր հաջորդական դասավորությանը:

Չծանրանալով մտնրամասնությունների վրա, նկարիչները հիմնական թեմայի (ինչպես նաև առանձին պահերի) դրսերմանը հասնում են ընդհանուր ձևերի միջոցով. այսինքն՝ ամբողջի մեջ և ամբողջի շնորհիվ է դրսերվում մասնակին: Գեղանկարչական լեզուն այդ դեպքերում աշքի է ընկնում ոչ այնքան պատկերամիջոցների հարստությամբ, զույների հոխությամբ, որքան պարզությամբ:

52 Քրիստոնեական արվեստի ակոնքներն էլ, թվում է, նույն հիմքից են զալիս, ինչը ժողովրդական արվեստին է: Հոգեհարապատ շատ բան կա պատկերավորման դրանց ըմբռնումներում:

53 Ենկել է ժամանակը պնդելու, — տեղին նկատել է Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը, — որ և՛ Կապադովիայում, և՛ փոքրասիական հայկական ձեռագրերում (այսուղ կավելացնենք՝ նաև Վասպուրականի XVI—XV դդ. մատրաններում—Հ. Հ.) մենք գործ ունենք ժողովրդական արվեստի ստեղծագործությունների հետ, բայց միաժամանակ ավելի պահպանողական ու ավելի հետաքրքրական, բան նրանք, որոնք գործ են նկել հարուստ և հզկած միջավայրից» (նույն տեղում, էջ 88):

Կապադովիան արվեստի ժողովրդական բնույթի մասին խոսել են նաև Գ. դե Ժերֆանյանը, Վ. Լազարես, Մ. և Ն. Թիերի ամուսինները, Ս. Տեր-Ներսիսյանը: Վասպուրականի կառակցությամբ՝ Գ. Հովսեփյանը, Ս. Տեր-Ներսիսյանը, Լ. Պուրնովոն, Տ. Խոմայովան:

54 Հայտնի է, որ կերպարվեստի նկատմամբ այդպիսի ժողովումը իր տեսական հիմնավորումն ստացել է միջնադարյան փիլիսոփայական մտքի, այդ թվում նրա հայ ներկայացուցիչների մոտ՝ սկսած V-դարից մինչեւ XV դ.՝ Համբրոնացի, Շնորհալի, Երզնկացի, Որոտնեցի, Տաթևցի և այլն:

55 Միջնադարյան գեղանկարչության մեջ զծի դերի ու նշանակության մասին վերջին շրջանում մեծ ճանաչում է ստացել Վ. Ն. Լազարեսի «Приемы линейной стилизации в византийской живописи X—XII вв. и их источники» աշխատությունը (տե՛ս «Труды XXV-го международного конгресса востоковедов», М., 1960, т. I):

Արույն բնույթի և ստանում հեռանկարի կազմակերպումը։ Այն շունի մեկ որոշակի դիտակետ (բազմահեռանկարայնություն)։ զա հնարավորություն է տալիս նկարիչներին անկաշկանդ մոտեցում ցուցաբերել հորինվածքների, նրանցում տեղ գտած առանձին կերպարների ու առարկաների նկատմամբ։ Գլխավոր կերպարը ներկայացվում է դիտման համար ավելի շահեկան մասում՝ կենտրոնում։ Նա որոշակիորեն ընդգծվում է, անշատվում ոչ միայն հորինվածքի ամբողջական դասավորության մեջ, այլև՝ սկայմանականորեն մեծացված համաշափություններով։ Նրա բացահայտմանն օժանդակում են մյուս երկրորդական կերպարները։

Բազմահեռանկարային եղանակի կիրառումը, գլխավոր ու երկրորդական կերպարների ազատ դասավորությունը, նրանց շարժումների ու շատերի միտումնավոր փոփոխությունները մեծապես նպաստում են հորինվածքի դադարական կողմի դիպուկ և սուր արտահայտմանը։ Բնականաբար, անխուսափելի են դառնում նաև անսովոր թվացող կրճատումները, առանձին տարածելությունները, վերացականության տարրերը։ իսկ երկրորդական մանրամասները՝ ճարտարապետական կառուցվածք, ծառ, զանազան լրացուցիչ առարկաներ, ինչպես վերեւում էլ ասացինք, կամ անտեսվում են և կամ հեշտությամբ վերափոխվում խորհրդանիշ ձևերի։ Փաստորեն իրականության նմանակումը որմերի կամ ձեռագրի հարթ մակերեսի վրա իր տեղը զիջում է գաղափար արտահայտող խորացված ձևերին։ Այդ գեղքում արգեն, վերջիններս, ասես ի փոխհատուցում իրականության խորթացման, ձեռք են բերում մեծ արտահայտչականության ուժ (էքսպրեսիվ թափ), զարդարին հակում։ Դիտողի մոտ, նրա երեակայության մեջ դրանք վերականգնում են ավետարանական սլաւմությունները իրենց զաղափարական որոշակի միտվածությամբ ու գունային հուզականությամբ։

Շփման ընդհանուր եղբեր տեսնում ենք նաև գունային լուծումներում։ Հիմնական գույները՝ կտրմիր, կանաչ, կապույտ, դեղին, կապաղովկիայի որմանակարներում ծավալվում են փոքր-ինչ երանգային նրբանցումներով, ստվերային մասերում՝ շեշտված նույն գույնի մուգ, կամ երբեմն շագանակագույնով։ Լուսավոր մասերն ունենում են սպիտակ շերտադեր։ Նույն գույնի մուգ գծահատվածների գործածությունը հատուկ է նաև վասպուրականի մանրանկարներին։ Փաստորեն երկու դեպքում էլ այդ աշխատանքները հատկանշվում են գունային-հարթապատկերային նման համակարգով։ Բացի այդ, Ժ. Լաֆոնտեն-Դոզոնի խոսքերով ասած՝ առկա է միևնույն շեղոք ֆոնը⁵⁵, որը վասպուրականում էցի ոսկրա-դեղնավուն մաքրությունն է, իսկ կապաղովկիայում՝ խակին տվյալ բաց կանաչի կամ դեղնաղյուսագույնի հավասար հարթությունը։ Գծային հստակ պատկերավորում ունեցող կերպարներն, ասես բանդակային զանգված, անշատվում են այդ հավասար խորքի հարթությունների վրա։

Ինչպես ժողովրդական արվեստում, մեզ հետաքրքրող հուշարձաններում ևս գույնը ծառայում է ոչ սոսկ տվյալ կերպարի կամ առարկայի բնու-

55 «Համարյա միևնույն տոնային շեղոք ֆոնը, ճարտարապետության գրեթե լրիվ բացակայությունը, վերջապես զարդաձեւերի ոճավորման էական գերը նույնպես վկայում են կապությունների քանի եկեղեցիների ու հայկական ձեռագրերի մանրանկարչության գեղանկարչական ընդհանրության մասին»— պրում է Ժ. Լաֆոնտեն-Դոզոնը (նշված հոդվածը, էջ 88)։

թագրման նպատակին, այլ նաև որոշակիորեն կրում սկայմանական-խորհրդանշական իմաստը՝ մասամբ սկայմանավորված լինելով էջի կամ որմնի դուռակապմակերպման շահերով։ Անխառն, վառ գույներն ստեղծում են պայծառ (բայց երբեմն էլ խորհրդավոր) տրամադրություն, նպաստելով ողջ հորինվածքի շարժունակությանը։

Կապագովկիայի որմնանկարների ու վասակուրականի մանրանկարչության ոճական ընդհանրությունները կարծեւ ավելի տեսանելի են զառնում մտնրամասների համադրության ժամանակ։ Կերպարները մեծ մասամբ ունեն ճակատային, կամ 3/4 թերթած դիրք, որն իր հերթին նպաստում է տպագորության հանդիսավորությանը։ Զարդայնությունն ու ոճավորումը տեղ է զտնում ոչ միայն հագուստների մեկնաբանման, այլ նույնիսկ դիմագծերի և վարսերի հարդարանքի մեջ։ Վերջիններս թե՛ Կապագովկիայում և թե՛ վասպուրականի ձեռագրերում ունեն ինքնատիպ զծաղասավորություն՝ հերաբաժուկների հորիզոնական և ուղղահայաց բնորոշ խաշածմամբ⁵⁷։ Արտենունքներն ու հոնքերը տրվում են երկար, աղեղնաձև վերջավորությամբ։ Այտերի վրա դրվում է կարմիր լուսափայլը։ Փաստորեն պատկերվում է նույն կամ նման մի կերպարանք՝ կլորիկ դիմագծերով, ընդգծված քիով ու շուրջերով, արտահայտիչ սև, մեծ աչքերով, որոնք երկար վերջավորություններ ունեն։ Այդ կրակու հայացքների մեջ որքան առնականություն, այնքան էլ թախծի ու նվիրաբերումի արտահայտություն կա։ Այդ պատկերները շես կարող համեմատել ոչ բյուզանդական ու պարսկական արվեստի մշակված պերճաշուր ձևերին, որոնց բնորոշ է բնավորությունների հանդարտությունը, և ոչ էլ արարական կերպարների դանդաղկոտ շարժուձևերին։ Գեղեցիկ գաղափարը այստեղ թվում է թե ընդհանուր է, արտահայտված վերացականության և իրականության, ասկեւտիզմի ու աշխարհիկ զգացողության յուրօրինակ միահյուսման մեջ, մի հատկանիշ, որը բխում է հասարակ ժողովրդի գեղագիտական ըմբռնումներից ու նախասիրություններից։

Ուշագրության են արժանի նաև երկու դեպքերում էլ նույնաձև գեղարվեստական բացառրապրությունները, որոնք հանդիս են պալիս պատկերների հետ դեկորատիվ միասնությամբ։

Ինելով տեղական ժողովրդական խավերի ստեղծագործության արգասիքը, Կապագովկիայի նշված եկեղեցիների որմնանկարները որոշակիորեն արտահայտում են նաև հայկական բնակչության նախասիրությունները, փաստորեն հանդիսանալով հայ արվեստի մի յուրօրինակ հյուզավորումը՝ արևելյան ու արևմտյան արվեստների խաշածման այդ բարդ հանգույցում, որ կային բարենպատ պայմաններ հարեւն ժողովուրդների վեղագիտական ավանդույթների հետ շփվելու, նրանց վրա ազդելու և ազդեցություններ կրելու։

57 Մազերի այդ ձեր Դ. Հովսեփյանը համարում է հին ասորական սովորություններից ակու «հազրակեանք և Պոռշեանք հայոց պատմութեան մէջ», Վաղարշապատ, 1928, էջ 150։

Г. АКОПЯН

НЕКОТОРЫЕ ОБЩИЕ ЧЕРТЫ МЕЖДУ МИНИАТЮРАМИ ВАСПУРАКАНА И КАППАДОКИЙСКИМИ РОСПИСЯМИ

(Резюме)

Исследователи росписей каппадокийских пещерных храмов отмечали факт наличия в Каппадокии армянского населения и черты общности их искусства с древним искусством этой страны. В данной статье приведены новые доказательства этих связей и обращено внимание на некоторые интересные и не публиковавшиеся до сих пор памятники васпураканской миниатюры.

В статье даются краткие сведения, касающиеся армяно-каппадокийских исторических и культурных связей. Особое внимание уделено иконографическим элементам в ряде сюжетов миниатюр, имевших сходное решение в каппадокийских и васпураканских памятниках. В частности рассматриваются иконографические схемы „Рождества“, „Тайной вечери“, „Предательства“, „Суда Пилата“, „Распятия“, „Сошествия в ад“ и др. Черты сходства заметны в стиле исполнения этих сцен, что становится особенно явным при сопоставлении отдельных деталей.

В основе интересующих нас произведений лежат сходные принципы, характерные вообще для народного искусства, наиболее полно отвечающего представлениям и мировоззрению той эпохи.

Являясь плодом творчества местных народных слоев, росписи некоторых каппадокийских храмов определенно отражают также интересы местного армянского населения.

Н. Н. НАКОПЯН

CERTAINS TRAITS COMMUNS ENTRE LES MINIATURES DU VASPOURAKAN ET LES FRESQUES DE CAPPADOCE

(Résumé)

Les chercheurs ayant étudié les fresques des temples rupestres cappadociens ont noté l'existence d'une population arménienne en Cappadoce et la communauté de son art avec l'art antique de ce pays. Dans le présent article l'auteur donne de nouvelles preuves de ces relations et attire l'attention sur quelques spécimens intéressants de la miniature du Vaspourakan inédits jusqu'à présent.

L'article donne de brefs renseignements concernant les relations historiques et culturelles arméno-cappadociennes. L'auteur accorde une at-

tention particulière aux éléments iconographiques de certains sujets de miniature traités analogiquement dans les monuments de Cappadoce et du Vaspourakan. Il analyse en particulier les schémas iconographiques de la Nativité, de la Cène, du Jugement de Pilate, de la Descente aux Enfers, du Crucifiement, etc. La ressemblance peut être observée dans le style de l'exécution de ces scènes et cela devient particulièrement évident lors de la comparaison des détails.

Les œuvres mentionnées sont basées sur des principes semblables, généralement caractéristiques de l'art populaire correspondant pleinement aux notions et à la perception du monde de cette époque.

Etant la création des couches de la population locale les fresques de certains temples cappadociens reflètent également d'une façon déterminée les intérêts de la population arménienne de la région.

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԳՅԱՆ

ԽԱԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՏՄՆ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵջ

Խազադրության արմեստի ծագման, զարգացման ու անկման հարցերը առավել հստակ կերպով ժամանակին բարձրացրեց Կոմիտասը¹:

Չեղնարկելով զրանց ուսումնասիրությանը, Ռ. Աթայանը շուրջ մեկ ու ենս տասնամյակ առաջ ընթերցող հասարակայնությանը ներկայացրեց խազադրության արվեստի պատմության՝ առ այսօր գիտությանը հայտնի միակ ամփոփումը, շարադրված հայ երաժշտության և ընդհանրապես մշակույթի անցյալին վերաբերող ամենաանհրաժեշտ տեղեկությունների ընդելուզումով²:

Որպես առաջին փորձ, այդ ուսումնասիրությունը, քնականաբար, իրագործված է «ի վերուստ ակնարկի» սկզբունքով, ուշագրությունը սեեռելով, չիմնականում, քննարկվող երևույթի ժամանակային զարգացման մայրուղու վրա: Նրանում երաժշտության տեսաբանը, հիմք վերցնելով հայոց պատմության ներկայումս ընդունված պարբերացումը, բնութագրում է խազադրության արվեստի հեղաշրջման երեք գլխավոր շրջափուլերը, կապված՝ վաղ ավատատիրության շրջանի (ծագումը և կիրառություն սկզբնական փուլեր), զարգացած ավատատիրության շրջանի (ծագումը, վերելքն ու բարձրակետը) և ուշ միջնադարի (աստիճանական անկումը) հետ:

Այժմ արդեն ինդիր է՝ հետզհետե մոտենալ խազագրության արվեստի օրինաշափությունների կատարելագործման, կիրառման ու մեկնաբանման

1 Կոմիտասը որոշակի աշխատանքներ է տարել այդ ուղղությամբ, որոնց արդյունքները, ցավոք, մեզ չեն հասել (տե՛ս Ն. Թանմիզյան, Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, «Կոմիտասական», № 1, Երևան, 1969, էջ 212—13): Գիտենք նաև, որ առողջանության արվեստի ու (նրան հատուկ խազագրերի գործածության) պատմական հեղաշրջման ուղին Կոմիտասը բաժանում էր երեք շրջանի, այսպես. հին (մինչև X դ. ներառյալ), որ ներկայացնում է առողջանության նշանների կիրառության սկզբնական փուլը, միշին (X—XV դդ.), որոնց վրա ընկնում է զարգացման բարձրակետը, ու վերջին (XVI—XVIII դդ.), երբ հիշյալ նշանների գործական կիրառության առումով անկում է նկատվում: Տե՛ս 1914 թ. Փարիզում, երաժշտագետների միջազգային կոնցրեսում Կոմիտասի կարդացած զեկուցումը՝ Le système des signes de prosodie de l'Eglise Arménienne (համառոտ և ընդարձակ խորագրություններով. ԴԱԲ, Կոմիտասի ֆոնդ, № 668 և 669): Եվ այս բաժանումը արտացոլում է բուն խազագրության հեղաշրջման փուլերը ևս: Քանի որ առողջանության (ասերգին) ու երգեցության վերաբերող խազանշանների համակարգերն ինչպես այլուր, այնպես էլ մեզ առաջ զարգացել են փոխադարձ սերտ կապերի պայմաններում:

2 Ռ. Աթայան, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, 91. 9 (Խաղային նոտագրության ժագումն ու զարգացման հիմնական էտապները, կապված հայկական միջնադարյան երաժշտության զարգացման հետ):

յուրատիպ առանձին կենտրոններին³, ծանոթանալ նրա աշխարհագրական ու, և ինչ նարավոր է, նաև սոցիալական զարգացման բավիղներին ու հանդուցներին, աստիճանաբար պարզել, լուծել դրանք⁴:

Այդ բոլորը կառարելու առաջին պայմանն է, նախ՝ զուգակշռել կենտրոնական Հայտատանի և Կիլիկիայի խաղաղիտական-խաղաղրական տվանդներն ու ըմբռնել դրանց հարաբերությունը⁵, որ և հանդիսանում է ներկո հոդվածի նպատակագրումը:

Մեր զլխավոր աղբյուրներն են՝ միջնադարյան խաղաղոր գոշազիր մատյանները՝ առողանության նշաններով ավետարանները, շարակնոցները և Մանրուսումն ու Գանձարան տիպի ժողովածուները: Դրանց ընձեռած տվյալների հիման վրա ստորև կարդով կանդրադառնանք հայ խաղաղրության երեք զլխավոր հատվածներին⁶, հաջորդաբար՝ հայ մշակույթի պատմության վերո-

³ Պետք է ասել, որ հայ երաժշտագիտության մեջ մինչեւ վերջիր սկզբունքորեն ընդունված իսկ չէր՝ խաղաղրության ուրույն ավանդներ ունեցող առանձին կենտրոնների դոյլությունը, զրանցում՝ խաղաղորման առումով տարբեր խմբագրություններ ներկայացնող մատյանների ստեղծման փաստը: Մինչգետե, հայ բանասիրության էջերում տակավին անցած հարյուրամյակի 80-ական թվականներին նշվում էր թէ՝ մասնավորապես «Սսո և Մեծ Հայոց երաժշտության կամ նրաց մեջ մեծ զանազանություն մեղած կերպի, և անկե շարականաց զանազան կոչումն. մեկն Քաղաքի, մեկայն Արևելի» (Դ. Ալիշան, Ծնորհալի և ուղարգալ իւր, Պենետիկ, 1873, էջ 90—91):

⁴ Սոցիալական զարգացում ասելով ավյալ գեսքում հասկանում ենք խաղաղրության զարգացումը երկու շերտավորումով: Կաթողիկոսանիստ, թագավորանիստ, քաղաքային մեծ կենտրոններում և կաթողիկե եկեղեցիներում կենցաղավարած քարձրառու երգեցողությունը արտացոլող խաղաղրությունը. և զյուղական, զավառական եկեղեցիներում, այլև հեռավոր անապատների հետ կազմած խաղաղրության արվեստը:

⁵ Միջնադարից մեզ հասած երաժշտական բազմաթիվ ու բազմազան ձեռագրերը (որոնք ստեղծված են տարբեր ժամանակներում և ամենատարբեր տեղերում, և որոնց մեջ, զրշության մակարդակի առումով, կան թէ՝ ընտիր ու բարձրորակ, և թէ՝ հետեւակ երգարաններ, թէ՝ առավելագույն բծախնդրությամբ, և թէ՝ բավական անխնամ խաղաղրությած ժողովածուներ), զիտեականից այսօր պահանջում են նրանցում մի քանի տեսակետներով կողմնորոշվելու կարողություն: Մասնավորաբար, տարբերել այն զրագրերը, որոնք թեև զաղափարված են ուշ միջնադարում, բայց առավել հին մի նախօրինակից. այն ձեռագրերը, որոնք թեև արտաքին գեղագրական առումով տպավորություն շեն զործում, բայց ըստ էության հշգրիտ ու ամբողջական են (և ընդհակառակը). այն մատյանները, որոնց զրական բնագիրը ցույց է տալիս զրշության արվեստի բարձր մակարդակ, իսկ խաղաղրությունը, ոչ (և ընդհակառակը). վերջապես այնպիսիք, որոնց խաղաղրությունը եղել է մասնազիտ ու սեփական վերաբերմունք է ցուցաբերել զեպի նախօրինակի խաղաղրությունը: Առաջընթաց կարեռագույն քայլ կլինի, եթե հիշյալ աշխատանքների շնորհիվ կարողանանք բայց որոշակի մատյանների (որպես տվյալ միջավայրի ու հեղաշրջման տվյալ փուլի խոսուն ցուցիչների), զծել խաղաղրության արվեստի ծագումը, վերընթացը, բարձրակետի նվաճումը, տեղբայրն ու վարբնթացը կազմող մեծ կորագիծը: Եվ զրանում, ժամանակի ու տեղի իմաստով, առավել հշգրտությամբ որոշել այն կիզակետը, որից առաջ՝ լինելության ընթացքն է տակավին, իսկ հետո՝ կատարելագործության խափանման ու աստիճանական անկման ընթացքը: Ինչպես դա բազմիցս փորձված է զիտության մեջ, մշակութային որևէ երեւյթի էությունը առավել հասակ դրսելություն է քննության լույսը նրա բյուրեղացած, ավարտուն (թեկուզ հարաբերականորեն ավարտուն) լինակին ուղղելիս: Թիվեատե լինում է նաև, որ այս կամ այն իրության պատմական զարգացման վերջին փուլից զեպի ետ զնալով, և կամ նրա կազմավորման ժամանակից զեպի առաջ դարձ ու հեղաշրջման յուրաքանչյուր աստիճանին հետևելով է, որ հասնում ենք ցանկալի արդյունքի:

⁶ Այդ հատվածների մասին տես մեր «Հիմնական դրույթներ խաղաղրության արվեստի վերաբերյալ» հոդվածը («Բանրեր Մատենադարանի», 1971, N 10, էջ 134):

հիշյալ երեք շրջափուլերի սահմաններում. բայց արդեն կարևորագույն նոր պայմանը հաշվառմամբ:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, խաղաղության զարգացման վաղ միջնադարին վերաբերող փուլը, որ սերտ կապված է բուն Հայաստանին, տևում է նույնիսկ մինչև XI դարի վերջերը⁷: XI—XIV Հարյուրամյակներում այդ արվեստի բարդավաճումն ու ծաղկումը իրավուրծվում է, զիստվորապես, կիլիկյան ու Կիլիկիային կապված Հայկական գրչակենտրոններում: Եվ սկսած XIV դարի շորորդ քառորդից նրա կենտրոնը դարձյալ տեղափոխվում է Հայաստան: Հաշվի առնելով այդ, ինչպես և սույն հոգվածի նպատակադրումն իսկ խաղաղության արվեստի պատմության մեջ հետաքրքրող երեք մեծ շրջանները (ծաղումն և սկզբնական հեղաշրջումը, կատարելագործումն ու ծաղկումը, և հետքնթացն ու անկումը), ճիշտ այդ դիրքերից էլ լուսաբանելու ենք այստեղ, այսինքն՝ բայ Հայաստան—Կիլիկիա—Հայաստան նախագծի:

1

Բվում է, այլևս անհրաժեշտություն շկա մասնավոր կերպով հերքելու Հայաստանում V դարում նորաստեղծ այրուքնի տառերը որպես ձայնանիշեր կիրառելու, և կամ առողջապահության հատուկ նշաններ գործածելու վերաբերյալ անցյալում արտահայտված այն կարծիքները, որոնք հենվում էին Սահակ Պարթևի մասին Դազար Փարսկեցու հազորդած մի տեղեկության թյուր ըմբռնման վրա⁸:

V հ հաջորդ դարերին վերաբերող երեսույթներից մեզ համար հույժ կարելու են երկուսը: Հայկական ութ-ձայնի հին (աստվածաշնչային երգերի հետ կապված) համակարգի արմատավորումը, որպես խաղաղության կիրարկումը կապես նախապատրաստած ազդակ: Եվ կետադրության նշանների գործածությունը, հատկապես ավետարաններում, որպես Հայկական երաժշտա-առողանական համակարգի հիմնական հանգույցները գրավոր հաստատագրելու միջոց:

7 Դա բացատրվում է նրանով, որ երաժշտարվեստը, տվյալ դեպքում երգարվեստը, արվեստի մյուս ճյուղերի համեմատությամբ, ընդհանրապես ավելի ուշ է արձագանքում հասարակության զարգացման հաջորդական փուլերին վերաբերող նոր հոգերին (կարծես «սպասելով», որ դրանք արտացոլվեն, նախ, մասնավորապես, բանաստեղծության մեջ): Իսկ երաժշտական մշակույթի շրջանակներում էլ, առավել ուշ զարգացող երեսույթներից մեկը՝ ձայնագրության արվեստն է ճիշտ, միջնադարի պայմաններում՝ խաղաղությունը (կամ նեմազբությունը):

8 Հմմտ. մեր հողվածը՝ Դիտողություն Փարավեցու պատմության մեջ Սահակ Պարթևին վերաբերող մի արտահայտության մասին, «Բանքեր Երևանի Համալսարանի», 1970, № 3, էջ 177—181:

Պետք է ասել, այժմ, այն բանից հետո, երբ լույս տեսավ Փարավեցու պատմության՝ Պողարյանի հայտնաբերած հատվածը (1419 թվակիր ճաղընտիրից), որը այդ պատմության ներկա գիտական հրատարակությունից հայտնի և Սահակ Պարթևին վերաբերող «հմուտ երգողական տառիցն» արտահայտության փոխարեն կարդացվում է «հմուտ քերթողական տառիցն», տարերայնորեն շատանում են վերջին ընթերցումը ավելի հարազատ համարողները: Թիշ է դա, նաև կարծողներ կան, որ Փարավեցին մեզ հետաքրքրող հատվածում «հմուտորական յայտնաբանութեան» ու «փիլիսոփայական արուեստից» հետ հիշատակելով «քերթողական տառերը», փաստորեն խոսում է ուսման եռյակ (trivium) առարկաների մասին: Մինչդեռ Փարավեցին այստեղ նկատի ունի Սահակի ստացած կրթության և ընդհանրապես նրա իմացության բարձրագույն ոլորտները: Անկախ այս բոլորից, մեր հիշյալ հողվածի բուն միտքն այն է, որ «երգողական տառից»

ինչպես պարզվում է, առողանությունը լայն և կամ բուն առումով (որպես եղանակավոր արտասանություն՝ ոգումն, առողասություն, առասացություն, առերգություն, ասերգություն և թվերգություն), ընդորեկում է ոչ միայն ընազրի արտահայտիչ շեշտադրությունը, այլև, նախ՝ նրա իմաստավորված տրոհությունը⁹: Ավելին, ասերգի կամ թվերգի խաղերի համակարգում արահության նշանները ներկայացրել են կենդանի փորձում առավել վաղ արմատավորված այն շերտը, որի գերը՝ այդ համակարգի կառուցվածքում եղել է հիմնարար: Պատահական չէ, որ Կոմիտասը համեմատելով Հայ եկեղեցական թվերգում կիրառված տրոհության նշանները՝ առողանական շեշտադրության խաղաղութերի հետ, հանգում է այն եղբակացության, որ առաջինները «շատ մը տառեր ու մտածումներ» են ներփակում, իսկ Երկրորդները՝ «մեկ տառ կամ մեկ րառ միայն»¹⁰: Եվ սա շատ պարզ ու հասկանալի է, քանի որ նույնիսկ «սուրակեատվ» սահմանազատվող խոսքի մասը լեզվամտածողական առումով շատ ավելի ծավալուն ու կարևոր մի իրողություն է, քան մի «երկար» (որպես առողանական շեշտամնշան) կամ «շեշտ» և կամ «պարոյկ» կրող ա-

արտահայտությունը ևս ունի իր համոզիչ բացատրությունը, որով սխալ, անտեղի կամ վրիպակ պիտի շհամարվի:

Տա ընդգծել է տակավին հին հույն մեկնիչ Ստեֆանը: Նա նույնիսկ հատուկ միհմարեկել է այն հարցը, թե ինչու Դիոնիսիոս Քերտականը նախ խոսում է տրոհության նշանների մասին (գրանք անշատելով առողանության խաղերից), և հանգել եղբակացության, որ Թրակացներ այդպես է վարվել՝ մանկավարժական նկատառումներով (տե՛ս H. Ածոնց, Դիօնիսի Փրակիոսկի և արմանական տոլկովածության արտահայտիչ շեշտադրության գույքիների պաշտոնով, մի քանի դար ուշացումով: Վերջին պարագան, այլև շեշտադրության հին արվեստի հարամուն պահանջները թելազրել են՝ նաև տարբերել զուտ շեշտադրական խաղաղութերը (շեշտ, բութ, պարոյկ), և, որպես ոլորակի ցուցիչներ, զբանք խմբավորել ամանակի, հագաղի, ու կրթի նշանների հետ, ինչպես արել է Դիոնիսիոս Թրակացին: Ուշագրավ է, որ Հունա-Հոռնեական աշխարհում առողանության հիշյալ լորս սեռերի նշանները ևս մեկնաբանվել են որպես տարրեր տիպի շեշտերի ցուցիչներ (տե՛ս P. Wagner, Neumenkunde, Paläographie des Liturgischen gesanges, Leipzig, 1912, էջ 18—19): Ավելի ուշ առողանություն (ոքունիք) խոսքի իմաստը ենթարկելով այլ փոփոխության, արտահայտել է առհասարակ «տաղաշափություն» եղբի բովանդակությունը: Իսկ առողանական շեշտադրության և տրոհության նշանները, միասին առած, երբեմն կոշվել են նույնիսկ «կետադրության» նշաններ, և այլն: Ներկայումս զիտության մեջ զերիշխում է՝ առողանության հին ու միջնադարյան արվեստի հարթության վրա՝ առողանական և տրոհության կամ բռն կետադրության նշանները որպես ասերգի նշանների համակարգի երկու խոշոր բաղադրիչներ ընդունելու նպատակային միտումը:

10 Տե՛ս Կոմիտասի զեկուցումը՝ «Հայ եկեղեցւոյ առողանութեան նշանները» (կարդացված 1914-ին Փարիզում, երաժշտագետների միջազգային կոնգրեսում): Այն նախազես զրված է եղել Հայերնեւ: Հետո բարնկամների օգնությամբ իրազորդվել է զրա ֆրանսերներ թարգմանությունը, երկու խմբագրությամբ: Համառոտ և ընդարձակ, որոնցից առաջինը ավելի հաջող է (որպես զեկուցում): Հեղինակային ինքնազիրը մեզ չի հասել: Ինչպես նշեցինք, այժմ Կոմիտասի երկանյան դիվանում պահպատ են զեկուցման թարգմանության երկու բնագրերը: Գոյություն ունի համառոտ խմբագրության հայերեն թարգմանությունը (Կոմիտաս վարդապետ, Հայ գեղարվել երաժշտութիւն զրբում, Փարիզ, 1938): Մենք ընդհանրապես նկատի ունենք զեկուցման թե՛ համառոտ, և թե՛ ընդարձակ խմբագրությունների բովանդակությունը:

սանձին վանկ (ինչքան էլ վերջինս ներկայացնի բառի ու նախադասության բարձրակետը)¹¹:

Եվ իրոք, երբ ասվածի լույսի տակ դիմում ենք Կոմիտասի այն ուսումնասիրությանը, ուր նա, ըստ ամենայնի վերլուծելով հայկական հոգեոր ասերգի կամ թվերգի պլխակոր ձևերը, բացահայտում է նրա երաժշտական կողմի կազմակերպմանը ծառայած խաղաղրերի զորությունը, տեսնում ենք, որ տրոհության շորս նշաններին¹² համապատասխանող մեղեղիական հանդաձերը երաժշտական նախաղասությունը ուրվագծող ամենատիպական, ծավալուն ու հիմնավորագույն տարրերն են ներկայացնում¹³:

Արդ եթե նկատի առնենք, որ հայկական առողանված ավետարաններում ևս զործածության մեջ մտած առաջին նշանները եղել են տրոհության նշանները, ապա առանց քաշըշուկի կարող ենք հանգել մի բնական հետևողության, տրոհության նշաններով ավետարանները՝ հայոց առողանության խաղաղրերի համակարգի սկզբնական գոյացման ժամանակը հուշող կարևորագույն վավերագրեր են: Դրանց երաժշտագիտական համապատասխան արժեքավորումը, սակայն, հանդիպում է արգելքների, որոնք պետք է հաղթահարել:

Մինչև X—XI դարերը հայկական գրչագրերում զրության գերիշխող ձևը եղել է բառակից՝ ուղղագիծ թե բոլորադիմ երկաթագրի օգնությամբ: Գրության այդ ձևով գաղափարված մտայանները, բացառությամբ ծիսական (ու երբեմն ևս արտածիսական) առանձին ձեռագրերի¹⁴, կետադրության և այլ նշաններով ընդհանրապես բիշ են օժտվել, գոնե մեզ համար՝ զարմանալիուրեն¹⁵: Երկաթագրի մտայաններում կետադրության նշան-

¹¹ Այս մասին ավելի մանրամասնորեն տե՛ս մեր Հոգմածը՝ Կոմիտասի մտարումները որոշության և առողանության նշանների հարաբերության մասին, «Երաբեր հասարակական պիտությունների», 1970, № 8, էջ 54—58.

¹² Առում ենք՝ յորս, հաշվի առնելով «բութը» ևս, որը ի տարրերության հին հունական համապատասխան Յաջուս նշանի (և չնայած հայկական հին քերականություններում նրան հունականի օրինակով առողանական-շեշտագրական իմաստ վերագրելու փորձերին), զրչագրերում կիրառության մեջ մտնելով փոքր-ինչ ավելի ուշ, քան մյուսները, մեկնարանվում է որպես տրոհության նշան:

¹³ Komitas Keworkian, Die Armenische Kirchenmusik, Sammelbände der Internationale Musikgesellschaft, Leipzig, Jahrgang I, Heft 1, 1899, s. 54—64.

¹⁴ Դրանցից մեկի՝ XIII—XIII դարերին վերաբերող իմաստասիրական բռվանդակության մյր զրչագրի երկաթագրի նախօրինակի վրա ժամանակին հատուկ ուշադրություն հրավիրեց Կոնիբիրը, նկատելով, որ զրչագրի առաջ ու բազմազան կետադրությունը գալիս է երկաթագրի նախօրինակից: Fr. Conybeare, A Collation With The Ancient Armenian Versions of The Greek Text of Aristotle's Categories, Oxford, 1892, p. XXVIII—XXIX, Հասկանալի է, որ բիշ ավելի հաճախ են հանդիպում տարրեր կետերով ու նշաններով երկաթագրի ծիսական մատյանները:

¹⁵ Որպէսուե այդ նշանների պաշտոնը ի վերջո եղել է՝ օգնել ընթերցողին ճիշտ հասկանալու բնագրի բռվանդակությունը, հարթելով զրության բառակից բնույթից բխող ոչ փոքրաթիվ կենսները: Ի դեպ՝ Կոնիբիրը զրանով էլ բացատրում է նոյն կետադրության վերաբերությունը վերոհիշյալ զրչագրի երկաթագրի նախօրինակին: Մնում է լոկ ենթադրել, թե երկաթագրի տիրապետության պայմաններում, որպես ընդհանուր կանոն, առաջնահերթ նշանակություն է արվել զրության զեղեցկագրական պահանջներին (էտու հավասար տողեր, տողում միևնույն քանակի և միատիպ մարդաբառաշար տառեր և այլն):

ներից ընդհանրապես կիրառված է մեկ կետը¹⁶ (բավականին խոշորեկեկ), այս կամ այն չափով հետևողականորեն՝ երեք տարրեր դիրքերով ու պաշտոններով. տողից ցած՝ որպես ստորակետ, տողի վրա՝ որպես միջակետ և տողից վեր՝ որպես վնարչակետ:

Առերգի կամ թվերգի նշանների հիմնական կրողների՝ զրչագիր ավետարանների թվակիր ու ամբողջական հնագույն օրինակները մեզ հասել են IX—XI դարերից: Մատենադարանում այժմ պահվում են մեկ ու կես տասնյակից ավելի այդպիսի հնագույն ավետարաններ¹⁷, որոնք անգնահատելի սկզբնադրյուրներ են Երաշշատա-Հնագրակետն հետազոտթյունների համար: Գրանց առանձնահատկությունների ուսումնասիրությունը հիմք է տալիս վստահությամբ ընդունելու նաև այնպիսի պրշագրերի մոտավոր թվագրումը, ինչպիսիք են՝ «Գոգարանի» Ավետարանը (IX դ.)¹⁸, «Բեղյունց» (XI դ.)¹⁹ և «Մուղնու» (XI դ.)²⁰ ավետարանները: Բացի այդ, հաջողվում է ծանոթանալ արտասահմանյան հավաքածուներում պահվող և կամ մասնավոր անձանց մուտքուղ մի քանի հին ձեռագրերի հետ ևս, որպիսիք են՝ «Մուղրութի» Ավետարանը (IX դ.)²¹, Մլք թագուհու Ավետարանը (851 թ.)²², Ղարսի Գագիկ թագավորի Ավետարանը (XI դ.)²³, և Սոֆիայի պետական գրադարանի հայկական Ավետարանը (966 թ.)²⁴:

¹⁶ Քնդհանրապես մեկ կողմ ենք թողնում բացառությունները, օրինակ՝ Տաշյանի մատնանշան հայատառ հունարեն զրությունը VI—VII դարերից, որ մեկ կետի փոխարեն միշտ երեսում է կրկնակետը (1). տե՛ս Յ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վիեննա, 1898, էջ 92—104:

¹⁷ Այդ թվում՝ Մատենադարան, ձեռ. №№ 6200 (887 թ., «Հազարյան» ավետարան, ունի լուսատիպ հրատարակություն՝ «Աւետարան բառ թարգմանութեան նախնեաց մերոց» և այլն, Եռուկա, 1899), 6384 (902 թ., «Որդրու» կամ «Բամնի» ավետարան), 6202 (909 թ., «Աշուապարապետի» ավետարան), 7735 (986 թ., «Սանասարյան» ավետարան), 8906 (988 թ.), 2374 (989 թ., «Էջմիածնի» ավետարան, ունի լուսատիպ հրատարակություն՝ «L'Evangile Arménien. Edition phototypique du manuscrit № 292 de la Bibliothèque d'Etchmiadzine» և այլն, Փարիզ, 1920), 4804 (1018 թ.), 283 (1033 թ.), 6201 (1038 թ.), 3723 (1045 թ.), 3793 (1053 թ.), 3784 (1057 թ.), 311 (1066 թ., «Մերաստիացի» ավետարան), 10434 (1069 թ., «Մաշտոցյան-Նարեկյան» կրկնակի արժեքով հոյակառ ավետարան, որ մեծ նպաստ է բերում հայ երաժշտական հնագրության հարցերի պարզաբանմանը, ինչպես կտեսնենք), 275 (1071—79 թ.) և 288 (1099 թ.):

¹⁸ Մատենադարան, ձեռ. № 10110 (Հմմա. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի, Բ, Երևան, 1970, էջ 1049):

¹⁹ Միակը, ի միջի այլոց, նշված ձեռագրերի մեջ, որ մեզ հասել է շատ թերի վիճակում (պահպանվել են քանի չափ թերթեր միայն, որոնք սակայն, բավական են նրա հետազոտության համար՝ մեր նյութի տեսակետով): Գրչագրիս մասին տե՛ս Գ. Ցովուկիեան, Յիշատակարանը Զեռագրաց, Անթիկաս, 1951, էջ 237. Կամ՝ Տ. Իզմայլովա, Եвангелие «Бегюнц», «Տանը Մատենադարանի», № 8, 1967, էջ 113:

²⁰ Л. Դյոնոսո. Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, стр. 22—25.

²¹ Զեռագրերը հայկական Մուղրութ պյուղի (Վրաց. ՍՍՀ) բնակիչներից մեկի սեփականությունն է (տե՛ս Մատենադարան, մասնավոր անձանց պատկանող ձեռագրերի ֆոնդ, № 1):

²² Հայկական Մանրանկարչութիւն, Միթթարեան Մատենադարան Զեռագրաց, Ա, Վեննարի, 1966, էջ 20—28 (և 1—3 բնական մեծության պատկերները):

²³ Երևանագետի Ա. Ճակորեանց վանքի Մատենադարանի № 2556 ձեռագրը (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, աշխարհի տարրեր կենտրոններում պահվող հայկական ձեռագրերի մանրաժամապալքնենների ֆոնդ, № 26):

²⁴ Սոֆիայի պետական գրադարանի № 580 ձեռագրը (Մաշտոցի անվ. Մատենադարան, մանրաժամապալքնենների նշված ֆոնդը, № 34):

Նշված ձեռագրերի հետազոտությունը ցույց է տալիս, որ միևնույն հարցուրամյակին վերաբերող ավեաարաններ երաժշտա-հնագրական առումով կարող են դոնվել զարգացման տարրեր մակարդակների վրա: Աւատի հաշվի պիտի առնել ոչ միայն ժամանակային զործոնը, այլև ուրիշ աղղակներ, որոշողը ընդօրինակման վայրն ու հարակից հանգամանքները, պատվիրատուի սոցիալական դիրքը, ճաշակը և նպատակը (մատյանը ցանկացել է ունենալ անձնական գործածության համար, թե որիէ եկեղեցու նվիրաբերելու մատղրությամբ), կատարողի մասնագիտական կրթությունը, վարպետության աստիճանը և այլն: Ոչ հազվագետ հանդիպող երևույթ է՝ նախորդ դարերին հատուկ երաժշտա-հնագրական լինգանուր պատկերի զրեթե անփոփոխ կրկնությունը՝ հաջորդ հարյուրամյակներում զարգարված ձեռագրերում, որ շփոթեցնող կետ է՝ տոանց այդ էլ հեղաշրջման շափազանց դանդաղ ու ստուն ընթացք ունեցած երկաթագիր բառակից գրության պայմաններում:

Ինչպես կտեսնենք իր տեղում, գրչագիր ավետարանները, VIII—XI դարերից սկսած, երաժշտա-հնագրական առումով թեակոխում են զարգացման մի նոր շրջափուլ: Զնայած զրան, IX հարյուրամյակին վերաբերող մեզ հասուծ ամբողջական ձեռագրերից երեքի մեջ²⁵ որպես տսերգի նշան տակալին վերոհիշյալ մեկ կետն է հանդիպում միայն: Այն զործածված է ողջ ընագրի տնտումանը զուգընթացաբար, որ նույնպես ունի բաժանարար կարեոր նշանակություն:

Ամեն ինչից երեսմ է, որ այդ ձեռագրերում նշված երկու պարագաներն ել (կետը և տնտումը) տեղ են զտել՝ որպես վաղուց արմատացած ավանդության երկյուղած կիրառումն: Դրան ապացուց են՝ ինչպես մեզ հետաքրքրող կետի տոկայությունը մոտավոր ճշտությամբ թվագրված ավելի հին ձեռագրներում ու նույնիսկ հնագույն արձանագրություններում²⁶, այնպես և մեր «Մաշտոցան-նարեկյան» անվանած հազվագյուտ ավետարանի գրության հանգամանքները, ամբողջական մեծարժեք ձեռագրի, որ երաժշտա-հնագրական անսակետով տառաշին անգումն է գրվում գիտական շրջանառության մեջ:

Այն բարեխսղճորեն ընդօրինակել է Հովհաննես գրիշը, 1069-ին, Անանիա Վարդապետի կրոնավորի պատվերով, Անանիա Նարեկացուն պատկանած նշանավոր նախօրինակից²⁷, որն և, ըստ ավալ պատմաշրջանում կենցաղավարած ավանդության, զարգարված է եղել Վդարում, Մհարով Մաշտոցի ձեռքով²⁸: Հնագրական տեսակետով ավետարանում հավատարմորեն վերարտա-

25 Այն է «Հապարյան», «Գովարանի» և Մլք թագուհու ավետարաններում:

26 Հմատ. Գ. Յովսեփիստն, Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, մասն Գ, Քարտէզ հայ հնագրութեան, Հազարշապատ, 1913, էջ 5—10 ու 22 (և Համապատասխան տախտակները):

27 Զեռողիքի Իր էջում (խաչի տակին) զրված է՝ «Անանիայի է սուրբ աւետարանս, աստուծ վայելել տացէ ի կամս իւր տաէնիս», իսկ 85ր էջում՝ «Անանիայի նարեկացոյ աստուծուղան հունորի և հղաւը վարդապետի է սուրբ աւետարանս այս: Եւ որք ընթեռնութ լիշեսցի ի տէր զատացող սորին աղաչեմ»:

28 «Հանապագ որախամաս» է փարթավճախամբ անթափելի ճոխութեամբ ի սորին աստուծուային և անհամեմատ լիութենելու, — հազորուում է ձեռագրիս ստացող Անանիա Վարդապետի կրոնավորը հիշատակարանում, — մանաւանդ վասն խտուգոյթեան սորին և ընտրութեան բանին աւետարյանի և տնհատի և ամենայն արուեստի, որ էր վկայեալ աւրինակն յամենայն պրտուականաց հայոց, զոր ասէին յաւանդութենի գրեալ ձեռամբ սրբոյն Մաստրովբայ (sic!) վարդապետի և թարգմանչի, և իմ այսմ ամենայնի հասու եղեալ և տեղեկացեալ վասն լաւութեան սորու, զոր ոչ արժէ աշխարհ զփոքրիկս զայս» և այլն (Մատենադարան, ձեռ. № 10434, էջ 286ր—287ա):

գրրված է Անանիա Նարեկացու ձեռագրի պատկերը: Իսկ վերջինս գիտակցաբար տարանշատված ձևով անդրադարձնում է V և X դարերը Հատկորոշող երկու հարթություններ: Հետեւզականորեն տնատված քնագրում սովորական նույն (սև) թանարով գծագրված մեկ կետը, իր երեք պաշտոններով բաժանում է նախադասությունների հատվածներն ու ամբողջական նախադասություններն իրարից:

Դա՝ V հարյուրամյակում բանեցված երաժշտա-քերականական արոհությունն է: Այդ մասին պիտի դատել ինչպես Հայ գրչության ավանդույթների վերաբերյալ վերն ասվածից, այնպես և V դարի հունական աստուածաշնչերից, որոնք նկատելի են եղել թե՛ տնատումով, և թե՛ կետի գործածությամբ²⁹, և որոնք օրինակ են ծառայել Հայ գրիշների համար:

Հ դարը բնութագրող մակարդակը հաստատագրված է կարմիր թանաքով: Կարմիրով աեղաբաշխված են՝ առողանական շեշտերից «Երկար»-ն ու «պարոյկ»-ը, և ճշտված են՝ այսինքն Հավելյալ կարգով և իրենց ուրույն ձեռնով են գծագրված մեկ կետի այն նշանակությունները, որոնք համապատասխանում են «ստորակէտ»-ին ու «վերջակէտ»-ին³⁰: Կետադրության երեք նշանների տարանշատ գծագրածների գործածությունը տարածվում էր արդեն (թե՛ դանդաղ)³¹ վաղ ավատատիրության պատմաշրջանի վերջում: Վերը բնութագրված ամբողջական ավետարաններից քաղված հետեւյալ երեք էջերը կարող են զաղափար տալ այդ մասին³² (տե՛ս էջ 77—78):

Առանձին խնդիր է առողանական շեշտանշանների կիրառության փորձի ժագման ժամանակի որոշումն ու նրա սկզբնական հեղաշրջման հանդամանքների պարզաբանումը: Այն քիչ թե՛ շատ բավարար շափով լուծելու համար անհրաժեշտ է հետազոտության ոլորտը ներքաշել այնպիսի նյութեր, որպիսի են թեկուզ Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող մաղաղաթյանադույն ձեռագրերի մնացորդ-հատվածները կամ պատառիկները: Դրանք հարատելել են թե՛ առանձին թերթերի, և թե՛ ավելի ուշ ստեղծված զրշագրերի պահպանակների ձևով: Այդ պատառիկներից ոմանք առողանության շեշտանշաններ են կրում, ուրիշներ՝ խաղաղբեր: Դրանց զուգահեռ քննությունը ժամանակին իրագործեց Ռ. Աթայանը:

Ընդհանուր ու նաև երաժշտական հնագրության տվյալների օգնությամբ տարբերելով մոտավորապես IX, X, XI և XII դարերին վերաբերող նյութերը, նաև կատարեց դրանց համեմատական վերլուծությունը և հանգեց հետեւյունների, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել: Դրանց զուգահեռ քննությունը ժամանակին իրագործեց Ռ. Աթայանը:

²⁹ Հմմտ. Encyclopaedia Britannica (a dictionary of arts, sciences and general literature), ninth ed., vol. XVIII, p. 163—64 (Palaeography—punctuation).

³⁰ Կարմիր թանաքով կատարված աշխատանքը տեղ-տեղ իրացված է նաև սեղ:


Բայ բոլոր տվյալների, գրիչը սույն գործը եւ նախապես սկսել է սև թանաքով, բայց քիչ անց հաստատապես անցնելով կարմիրն՝ կրկին սկզբից՝ այն հասցրել է վախճանին:

³¹ Դանդաղ՝ դարձյալ և դարձյալ երկաթագրի տիրապետության պատճառով: Քիչ ավելի ուշ, բոլորդի ընդհանրացումով, քննարկվող փորձը միանգամից ու վերջնականապես արժատացվ, և այն էլ՝ «բութ»-ի, որպես տրոհության շորրորդ նշանի կիրառության հետ միասին:

³² Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. (Համապատասխանաբար)՝ N 6200 (887 թ.), էջ 17թ (մեկ կետով), N 283 (1033 թ.), էջ 16թ (բայ գծագրածներ տարանշատված վերջակետով) և N 6201 (1038 թ.), էջ 136թ (նաև տարանշատված ստորակետով): N 10434 ձեռագրի (1069 թ.) երկգույնանի կետադրությունն այսուղ առաջ բերելու հնարավորություն լունենք:

иши . . . бояльные
сюзьиши . . . ико-
ны изображены
губернатор . . . кре-
стьянин . . . земля-
чий . . . смотреть
запись . . . землю
имущество . . . за-
траты на строительство
реквизита . . .
личные расходы
губернатора . . .
организации . . .
приемщиков . . .
изъятия . . .
стечеование . . .
приват . . . об-

առողջանական շեշտանշանների կիրառությունը ավելարտներում ու երգեցողության խաղաղրերի գործածությունը տարրեր ժողովածուներում սկիզբն առնում VIII—IX դարերում։ Մաղելով, մասնավորաբար, որպես երաժշտական արտասահմության զանազան երանդները հաստատագրելու պարզույն ձևեր, շեշտանշաններն ու խաղաղրերը զանզաղ ընթացքով անցնում են կատարելագործման երկար ուղի և մինչև XII հարյուրամյակը վեր են աժդում



այս կամ այն չափով ավարտուն համակարգի։ Նախապես ընդհանուր նշանով կամ խաղաղրով հաստատագրվող երաժշտա-արտասահմական կետերին (ինչպես ասերգում, այնպես և երգեցողության մեջ) աստիճանաբար հատկացվում են ինքնուրույն նոր նշաններ։ Վերջիններիս քանակը հետզհետե ավելանում է, դրանց գծագրաձևերը անհատականացվում են և զորությունները

ճշգրտվում³³: Մասնավորապես, առողջական գլխավոր շեշտանշանների թվաքանակը հասնում է երեքի («երկար», «սպառոյկ», «շեշտ»³⁴):

Սանոթությունը Աթայանի օգտագործած ձեռագրերի հետ ցույց է տալիս, որ նրա վերորեցալ եղբահանգումները բավականաշափ հիմնավոր են: Իրանը հաստատվում են այժմ ձեռքի տակ գտնվող ամրողական ավետարանների տվյալներով ևս: Վերջիններս մեր առջև պարզում են նույն պատկերը, ինչպես կարելի է համոզվել ձեռագրական հետեւալ երեք էջերից³⁵ (տե՛ս էջ 80—82):

Գալով տրոհության և առողջանության նշանների երաժշտական զորությունը, նշենք, որ ավելորդ կիններ շարադրել այստեղ Կոմիտասի վերոհիշյալ հոգվածի բովանդակությունը³⁶: Բնակլ ավելորդ շէ, սակայն, նորից ընդգծել հետեւալը: Այդ հոգվածից պարզ երևում է, որ Հայ հոգեոր թվերում տրոհության կետերին համապատասխանում են մեղեղիական տիպական ծավալուն բանաձեւը այն դեպքում, երբ առողջանության նշաններին հատկացվում են երաժշտական փոքրադույն պտույտներ:

Դառնանք խաղագրերի համակարգին (որն իր մեջ ընդգրկում է նաև թիշտության կետերը, և թե՛ առողջանության նշանները, որոնք այստեղ մեկնաբանվում են որպես երգեցողության նշաններ): Հնագույն պատառիկները, որոնք, ինչպես ասացինք, հետագոտել է Ռ. Աթայանը, ցույց են տալիս, որ խաղագրերի համակարգը վաղ միջնադարում սկզբունքորեն անցնում է հեղաշրջման նույն ուղին, ինչ և թվերով նշանների միավությունը: Բայց, բնականաբար, ավելի լայն շափացույցերով: Եվ մինչև XIII դարը իր գլխավոր բաղադրիչների քանակը բարձրացնելով շուրջ երկու և կես տասնյակի, գոյացնում է շարականի ութ-ձայն և երկու ստեղի երգերի խաղագրության հատվածը: Նրա բնորոշ առանձնահատկություններից մեկը, որ նշում է Աթայանը, այն է, որ խաղանշանները, ի տարբերություն զրական բնագրերի, բնդհանրապես հաստատագրվում են կարմիր թանաքով: Սակայն վնաքը խաղագրությունը սկզբունքորեն միավույն է: Ի վերջո՞ եթե մոտավորապես մինչև X դարը խաղանշանները գծագրված են զրական բնագրից վեր³⁷ և իրարից անջատ, ապա ավելի ուշ դրանքը միավցվելով գոյացնում են մեկ վանկի հետ զուգորդվելիք տիպական նշանախմբեր ևս, որոնք տեղադրվում են բնագրի մեջ՝ տուի վրա:

33 Ռ. Աթայան, Հայկական խաղային նոտագրությունը, Երևան, 1959, ֆլ. Ա և Բ:


34 Ինչպես «բութ»-ը՝ տրոհության նշանների խմբում, այնպես և «սուզ»-ը՝ առողջական խաղագրերի շարքում թիշտ ավելի ուշ է կիրառվության մեջ մտնում և առհասարակ հազվագետ է երեսում: Այն գործածվում է, գլխավորապես, տաղաւափյալ զրական խորեր ունեցող կտորներում, որը անհրաժեշտ է սղել ալիքալ հավելյալ վանկերի ամանակը:

35 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №№ (համապատասխանարար) 2374 (989 թ.), էջ 225ր («շեշտ»), 10434 (1069 թ.), էջ 17ր («երկար», «սպառոյկ»), 3784 (1057 թ.), էջ 17ր («շեշտ», «սպառոյկ», «երկար»):

36 Քններցողին կարող ենք հղել զննմաներենով լույս տեսած այդ հոգվածի հայերեն և ուղարկեն թարգմանություններին: Հայերենը, որ կատարել է Հ. Հարությունյանը, թույլ տալով տեսական կարգի մի քանի վրագումներ, տե՛ս Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ (Հավաքեց Ռ. Թերլիմենյան), Երևան, 1941, էջ 153: Խուսերեն ճշգրտված թարգմանությունը իրագործել է առղերիս Ըղինակը ու հրատարակի այն առաջարանով և անհրաժեշտ ծանոթագրություններով: Հմմտ., ԱՅ լի երաժշտական հասածիա Կոմիտաս, Արմանական մատուցության համար, 1969, № 10.


37 Կան նաև զրական տողից վար գրվող օժանդակ նշաններ, որոնք ներկայացնում են Հայոց այրության մի շարք բաղաձայն տառերը, և որոնք վերաբերում են տվյալ վանկի վրա տեղադրված խաղագրին:

Հետագա խորացումը՝ հայկական երաժշտական հնագրության ոլորտներում, հնարավորություն է տալիս լրացնելու վերը բերված տվյալները։ Նախ անհրաժեշտ է դիմել հիմնական խազերը օժանդակ նշաններից և նշանների տարրեր գուգորդություններից անջատելով ի մի բերելու միջնադարյան փորձերին։ Դրանց արդյունքները արտացոլված են ձեռագրական մի ամբողջ շարք նյութերում, որը առաջարկվում են հիմնախազերի տարրեր տախտակ-ցուցակ-



ներ։ Վերջիններիս դասակարգումն ու հետազոտությունը բոլոր հիմքերը տվեց հաստատելու, որ դրանք ըստ իրենց ներփակած նշանների թվաքանակի, ինչպես և մի շարք խազագրերի անվանակոչությունների ու գծագրաձևերի, բաժանվում են երեք խմբի։ Փաստորեն զործ ունենք հիմնախազերի երեք տիպի տախտակ ցուցակների հետ, առեղծված տարրեր ժամանակներում և տարրեր վայրերում։ Առաջինը («Ա») պարունակում է հետևյալ քանակորս նշանները.


Այս նշանները կիրառված են խաղաղության արվեստի հնագույն կոթողներում։ Սակայն ինքը տախտակը կազմված է Շարակնոցի խաղաղության համակարգի լիակատար արմատավորման ժամանակներից ոչ շուտ՝ XI Շարյուրամյակի վերջերին, ըստ բոլոր տվյալների՝ կենտրոնական Հայաստանում³⁸։



Երկրորդ տախտակը («Բ») ներփակում է 28 նշան։ Նրա խորագրում («Այս է անուն ձեներուն») արդեն չկա Շարակնոցի հիշատակություն։ Եվ իրոք, «Բ» տախտակի նշանները, սկսած XII դարից, գործածվում են ինչպես շարակնոց, նույնպես և խաղաղին զրության ավելի հարուստ հյուսվածք ունեցող

38 Իսկ մինչեւ մեր օրերը տախտակ-ցուցակը պահպանվել է մի քանի ուշ միջնադարյան գրագրերում և ուրիշ աղբյուրներում։ Այն՝ «Անուանք խաղից շարականաց» խորագրի տակ ներկայացված է մեր Մատենադարանի երեք ձեռագրերում (№ 9255, էջ 413բ. № 8404, էջ 788. 716—6

այլ տիպի ժողովածուներում։ Սակայն տախտակը կազմված է XIII դարում, կիլիկիայում, և պահպանվել է, բնականաբար, ավելի ևս ուշ ժամանակներին վերաբերող գրչագրերում³⁹։ Վերջապես երրորդը («Գ») թեև պարունակում է ընդամենը 23 նշան, բայց «արուեստաւոր» կոչված բարդ խաղեր (բերկած



և № 6985, էջ 69ր—70ա), Շարակնոցի Անկանլան (Ամստերդամ, 1664, էջ 773) ու էջմիածնական (1789, էջ 886) հրատարակություններում, Երյոդերի ռԱրամեկան լեզուին զանձաւառությունը բարձրացնելու ամենայն ռւամանցը մեծածավալ գործում (տե՛ս Հա. Բ. Վենետիկ, 1711, էջ 529): Հմմտ. նաև մեր հոդվածը՝ Խաշառություններին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսաբան, «Երարքի հասարակական գիտությունների», 1966, № 11:

³⁹ Տե՛ս Մատենագարան, ձեռ. № 7717, էջ 258ա, № 3050, էջ 207ա, № 5663, էջ 138ր, № 594, էջ 10ա, № 8575, էջ 19ա, և № 7049, էջ 97աւ Հմմտ. նաև մեր հոդվածը՝ Հայկական խաղագրության հիմնական նշանների երկու ցուցակների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1:

«Անուանք եղանակաց ձախից երգոց, զիւտից իմաստնոց» վերնագրի տակ՝⁴⁰, որոնք ցույց են տվել մեղեղիւական ամբողջական դարձվածքներ և գործածվել են ժանր, զարդուորում մեղնդիների տարրեր ժողովածուներում։ Տախտակի կազմումը, տվյալ զեպրում, ժամանակով շատ մոտիկ է համապատասխան նշանների գործնական լայն կիրառման սկզբին, և, ամենայն հավանականությամբ, ներկայացնում է ավատատիրական Հայաստանի մեծագույն երաժիշտ-բանաստեղծի՝ Ներսէալու հեղինակությունը⁴¹։

չեշտ՝ փուշ✓, բութ✗ պարուիլ●.
 երկար~, սուզ○, սուր/, թուր).
 ծունկՁ, թաշտ. ոլորակ●, խունճ~.
 վերնախաղ/~~, ներքնախաղակ/ բնեկորճ
 խոսրովային /, ծնկներօ՛, էկորճ~
 ձակորճՁ խում~, փաթութՁ,
 քարքաշ/~~(ավագ), հուհալՁ: զարկ✓:

«Բ» և «Գ» տախտակներում ամփոփված խաղագրերի գործնական կիրառությունը սկզբից ևել խառն է եղել «Ա» տախտակի նշանների հետ։ Դրան ապացույց են XII դարից պահանգած խաղավոր հնագույն շարակնոցի մտներն ու մանրուսման մի քանի էջերը⁴²։ Վերջիններս խոսուն են «Գ» տախտա-

40 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 8307, էջ 310ր, № 605, էջ 47ր, № 2068, էջ 356ր։ Հմմտ. նաև Ե. Տեղեսյան, Ազգային երաժշտություն, «Միոն» (Երևանգեմ), 1867, № 9, էջ 147։ և մեր հոդվածը՝ Հիմնական խաղերի միակցությունը, «Բանքեր Մատենադարանից», 1969, № 9։

41 Հմմտ. մեր աշխատությունը՝ «Ներսէալու հրդանան և երաժիշտ», Երևան, 1973, էջ 14—15։

42 Երկուսն ևս մի տուփի մեջ։ Մատենադարան, ձեռ. № 9838։ մեզ հետարրեռզ մասերն ու էջերը՝ 1193 թվականից, ըստ հիշատակարանի։ «Ի թուականութիւն Ութ (=1193) դրեցաւ, երգարան այս, զկնի զի՞ց անցնելոց ամաց առման քաղաքին սրբոյ երուսաղեմի» (ձեռ. № 9838, էջ 249ա)։ Ի դեպ սիստի ասել, որ խաղավոր սույն հնագույն ձեռագրի երուսաղեմում գաղափարված լինելու հանգամանքն ու մի շարք այլ փաստեր՝ քաղաքի հայ վանական դազութիւնատարած երաժշտա-մշակությին աշխատանքը մեր աշքին կամաց-կամաց բարձրացնում են հատուկ հնտագուտության արժանի ինքնուրույն ու նշանակալի երեւութիւն աստիճաններն, ինչպես հայ երգարվեստի, այնպես էլ ընդհանրապես արևելյան-բրիտոննեական արվեստի շափանիշներով։ Դաղութիւն՝ հայ երգաստեղծությանը մատուցած կարևորագույն ծառայություններից մեկը պիտի տեսնել, հենց խաղագրության զարգացմանը բներած նպաստի մեջ։ Արևելյան-բրիտոննեական արվեստի ասպարեզում այն՝ ըստ բոլոր տվյալների, մասնակցել է ութ-ձայնի տեսությանը վերաբերող մտքերի խմորմանը։ XIV դ. ընդօրինակված բյուզանդական մի զբաղություններով ութ-ձայնի համակարգի ստեղծողն է համարվում հույն-բանաստեղծ-երաժիշտ, երուսաղեմում գործած Հովհանն Քամասկացին (VIII դ.)։ Հետո պարզվեց, սակայն, որ Քամասկացին իրականում կարող էր լինել ութ-ձայնի տեսության VIII դ. ընդունված պաշտոնական նոր խմբագրության հեղինակը, իսկ ութ ձայննեղանակների դրությունն ինքը գալիս է շատ տվյալի վաղ ժամանակներից։ Բայց այս կազմակցությամբ միջազգային երաժշտագիտության մեջ առ այսօր խոսվում է լոկ ութ-ձայնի ասորական համակարգի մասին (անշուշտ ուրիշ փաստերի և

կի նշանների միակցությունը «Ա» և «Բ» ցուցակներին վերաբերող խազերի հետ միահամուռ գործածելու փորձը համաստելու առումով: Ինչ վերաբերում է Շարակնոցի մասերին, ապա դրանց մեջ առանց դժվարության տարրերվում են լոկ «Բ» և կամ սոսկ «Գ» տախտակներին հատուկ առանձին նշաններ՝ միրճված «Ա» տախտակի խազագրերի ընդհանուր զանգվածում⁴³: Նշանակում է՝ «Ա» տախտակում ամփոփված խազագրերի միակցությունը գործնականում իրոք արմատավորվել էր մինչև XII դարը, մինչ դրա հնատնախորքի վրա առանձին մյուս նշանները սկսել էին մուծվել XII դարում⁴⁴:

Կարեւոր է նշել, որ XII դարին վերաբերող Շարակնոցի մասերը Մատենադարանի № 9838 ձեռագրում երաժշտա-հնագրական (նեղ) առումով ևս հանդիսանում են խազավոր բոլորգրի մեջ հասած հնագույն օրինակը: Առավել ուշագրավ պարագան, առվագ դեպքում, այն է, սակայն, որ Հիշյալ շարակնոցի մասերում գրական բնագրերը դադարված են կրծատ գրությամբ: Հազիվ թե ժամանակին հնարավոր համարած լինեին՝ բոլորգրով իրացված առաջին Շարակնոցը կրծատ գրությամբ ընդօրինակել, որտեղից և պարզ է, որ մինչև XII դարը արդեն մշակվել էին խազագրերը ինչպես երկաթագրի, այնպես էլ բոլորգրի հետ զուգորդելու ավանդույթները: Ասենք, քննարկվող Շարակնոցում արտացոլված երաժշտա-հնագրական ավանդույթների հնության մասին պիտի դատել նաև խազագրերի՝ կարմիր թանաքով գծագրված լինելու հանգամանքից:

Համեմատության համար բերենք թե՛ երկաթագրի և թե՛ բոլորգրի հետ զուգորդված խազավորումների հետեւյալ օրինակները (տե՛ս էջ 85, 86 և 87):

Երեքն էլ XII դարի փաստաթղթեր են, որոնք մի անգամ ևս գալիս են ապացուցելու, թե ժամանակային ազդակը ամենեին միակը չէ, որ պիտի հաշվի առնվի նման տեսպքերում: Առաջինը խազագրված հին պատարագամատույցի թերթերից է: Նրա վրա ընդօրինակված է ներսես Շնորհազու ստեղծագործություններից մեկը «Ամէն. Հայր երկնաւոր»), որ խորագրում ունի հեղինակային պատկանելությունը ցուցանող նշում: Թերթը մեզ է հասել որպես ավելի ուշ ստեղծված գրչագրի մագաղաթյա պահպանակ⁴⁵: Երգը ընդօրինակված է երկաթագրով, և վերջինիս հետ զուգորդված մեղեդիական նշաններն էլ՝ համապատասխան կերպով, ներկայացնում են երկարավուն-մեծատառ խազագրության մի տիպ: Երկրորդ օրինակը XII դարի վերոհիշյալ Շարակնոցից մի էջ⁴⁶: Նրանում երաժշտանշանները զուգորդված են բոլորգրի հետ, ու ճիշտ դրա շնորհիվ էլ՝ իրենք ևս հանդիսանում են խազագրի բոլորագրիծ-փոք-

Կյութերի անմատչելիության պատճառով, տե՛ս G. Reese, Music in the Middle Ages, New-York, 1940, p. 71—75): Մինչդեռ, շատ խոսուն մի փաստ է այն, որ հայոց Սաղմոսարանը տակավին V դարակեղբամբ բաժանված է եղել ութ կանոնների ու երգելու բաժանմ (ի տարրերություն թե՛ հունականի, և թե՛ ասորականի): և որ ութ կանոնների այդ զրոյանը հույներն ու ասորիները մոտիկից ծանոթացած պետք է լինեին երուսաղեմում:

⁴³ Այդպիսի նշաններից են, օրինակ, «լերկ»-ը՝ «Բ» տախտակից, «Ժանրատրոպ»-ը՝ «Գ» տախտակից և այլն:


⁴⁴ Գծագրաձևերի հարթության վրա որոշ տարրերություններ կարելի է գտնել առաջ բերված «Ա» տախտակում և բննարկվող շարակնոցի էջերում տեղադրված խազանշանների մեջ: Բայց զրանք դյուրավ բացատրվում են, եթե մտարերում ենք մեր շարակնոցի ստեղծման հետագոր վայրը (Երուսաղեմ):

⁴⁵ Մատենագարան, ձեռ. № 8620:

⁴⁶ Մատենագարան, ձեռ. № 9838, էջ 24ր:

բառառ տիպը։ Այն՝ ավելի ևս հստակված շրջադերով ու նաև տողի վրա տեղադրված նշանների միացյալ դրությամբ՝ հանդես է գալիս երրորդ օրինակում, որ նույն ձեռադրում պահպանված հնագույն մանրուսման էջերից մեկն է⁴⁷։


Խաղաղության զարգացման առաջին շրջափուլին վերաբերող նյութերը, ներառյալ նաև այսուղ առաջին անգամ շրջանառության մեջ դրվածները, ընդ-



Հանրապետ ասած, սակավ են։ Եվ հայ երաժշտական միջնադարադիտության առաջնահերթ խմբիրներից է դրանք ըստ ամենայնի լրացնելը։ Անկախ դրանից, Եղած նյութերն ընդհանուր առմամբ ընդգրկում են խաղաղության երեք հիմնական հատվածները, և հնարավորությունն են տալիս քմբունելու խաղանշանների միակցության, որպես համակարգի էությունը։ Առանց մտնելու մանրամամսությանց մեջ, հիշեցնենք միայն, որ մեր դիտումների համաձայն՝ այդ համակարգը գտնվում է միշտզային դիտության մեջ «կոյզլինյան» անվանված երաժշտական դրության ընդհանուր հունի մեջ, որի գոյացման գլխավոր պայ-

⁴⁷ Նույն տեղում, էջ 248ր։

մանր եղել է ստեղծագործական ու կատարողական արվեստների անտարան-չառ զարգացումը։ Նույնին է եղել պարագան բյուզանդական փրականության շրջաններում ևս, անգամ մինչև XII դարի վերջերը։ Բայց՝ մինչ ավելի ուշ բյուզանդացիները անցել են գրության «ձայնամիջոցային» կոչված տիպին,




մեր նախնիները սկզբունքորեն պահպանել են երգիշ-կատարողներից ստեղծա-գործական նշանակալի ունակություններ պահանջող «կոյլինյան» տիպը ու ավելի ևս կատարելագործել նրա սկզբունքները⁴⁸

2

Զարգացած սվատասիրության պատմաշրջանին վերաբերող խաղաղրված բազմաթիվ ձեռագրերի ուշադիր ըննության ժամանակաշրջանը է, և ընորոշ մի շարք հիշատակարաններ է, իրենց հերթին, հուշում են, որ մեր միջնադար-յան երգարանների տեսակները այս կամ այն շափով տարբեր խմբագրություն-

⁴⁸ Ավելի մանրամասն՝ տես մեր Հոգվածը. Հիմնական դրույթներ խաղաղրության արվես-տի վերաբերյալ, «Բանրեր Մատենադարանի», № 10, 1971 թ.:

ներ են ունեցել՝ կանոնացված ստեղծագործությունների ինչպես երաժշտական գրության, այնպես և արտաքին ավագաներով միատեսակ հաստատագրված կտորների վատարման տեսակետներով։ Ոչ միայն բայ տարրեր հիսնամյակների և հարյուրամյակների, այլև բայ տարրեր և հաճախ իրարից հեռու ընկած



վայրերի, բայ այդ վայրերում գործող գրչական-մշակութային տարրեր կինուրունների, և անդամ բայ խաղավորող տարրեր երաժիշտների։ Որով նույնիսկ կանոնական ժողովածուներում իրենց արտացոլումն են դաել, թե՛ հայկական մատնադիտացված երգեցողության տեղական ավանդութները, և թե՛ հեղինակավոր երաժշտապետների անհատական հակումները։ Համապատասխան դիտումների հարուստ տեսադաշտ են ներկայացնում, նախ այն երևույթները, փաստերն ու նյութերը, որոնք վերաբերում են Կիլիկիայի մեր մշակութային

կենտրոններին, որոնք գտնվում էին Հայ մասնագիտացված երգարվեստի և խաղաղրության զարգացման մայրուղու վրա:

Նշանակալի զարգացում է ապրում թվերով երաժշտական բաղադրիչը: Հանդես են գալիս արոհության նշաններին համապատասխանող, մանավանդ, սկսելու և վերջացնելու մեղեղիական տիպական դարձվածքների ընդբանված ու զարգույրում տարրերակները: Համապատասխանաբար կատարելազործվում է նաև թվերով նշանագրության համակարգը, իր մեջ ներառնելով անգամ մեղեղիական երգեցողության խաղաղրերը⁴⁹: Այդ համակարգը ներթափանցելով կիրավում է Հայկական միջնադարյան ծիստեկան մատյաններից մի քանի-սում⁵⁰:

Խոսքը մասնավորելով ավետարանների շուրջ, հարկ է նշել, որ Կիլիկիա-յում դրանց գաղափարման ասպարեզում մշտիվում է տարրերակիված մոտեցում դեպի նախօրինակ ծառայելիք գրչագրերը, նույնիսկ ակսած XI հարյուրամյակի կեսերից⁵¹: Իսկ քիչ ավելի ուշ, երբ Սկեուան վերածվելով «Հայ գրչության արմեստանոցի»⁵², դաստիարակում է մի ամբողջ շարք կրթված գրիչներ, վաստակաշատ մատենագիրներ, գրչության արվեստի «լեզվական-քերականական տեսությունը» առաջ մղող դիտնականներ⁵³, մեկը մյուսի հունից հրապարակ են գալիս գիտության համար արմեսքավոր այն ավետարանները, որոնք ծանոթ են գաղափարող-խաղաղրող (երբեմն միաժամանակ և ծաղկող) վարպետ գրիչների անուններով: Դրանցից են՝ Կոստանդին Ռուհայեցին⁵⁴, Կողեռնը⁵⁵, Գրիգոր Մուրզանեցին⁵⁶, Կիլիկյան ճարտարագույն գրիչներից մեկը՝ Մտեփանոս Գոյներիցանցը կամ Գույներերիցանցը⁵⁷ և ուրիշներ⁵⁸:

49 Հայտնի է, որ թվերով նշանագրության համակարգում մուծված մեղեղիական երգեցողության խաղաղրերը նկատել է տակազին Կոմիտասը: Թնարկվող պատմաշրջանի ավետարաններում երբեմն հանդիպում են անգամ ձայնեղանակային նշաններ, որոնք «օրվա ձայնի» համեստված արարողական կորզն են ցույց տալիս:

50 Մասնավորապես՝ հաշոցներում, մաշտոցներում, հայամավորքներում:

51 Գա վկայող փաստերից մեկը վերաբերում է XII դարի սկզբներին: Նկատի ունենք 1113-ին Գրազարկում ընդօրինակված Ավետարանը՝ «ի ստոյզ և լիքնտիր գաղափարէ սրբոյն Մահակայ թարգմանչի»: Գարեզին Ա. կարողիկոս, Ճիշտակարանը Զեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 321:

52 Ն. Ակինեան, Սկնուայի աւետարանը 1197 թուականէն կվովի Հայ արքեպիսկոպոսարանի գրադարանին մեջ, «Հանդիս ամսօրհայ», 1930, № 1—2, էջ 112:

53 Լ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 57—58:

54 Գարեզին Ա. կարողիկոս, նշվ. աշխ., էջ 377 (Սդեմիայում 1161-ին ընդօրինակված ավետարանի ճիշտակարանը՝ «յամենալու աւրինակէ, որ կոչի Կոստանդին Ռուհայեցոյ»):

55 Նույն տեղում, էջ 664 (Հավանաբար XIII դարի վերջերում ընդօրինակված ավետարանի ճիշտակարանը՝ «ի ճշմարիտ և փառաւոր աւրինակէ, որոյ մականուն Կողուն»):

56 Նույն տեղում, էջ 801 (Խարբերդի շրջանում 1219-ին ընդօրինակված ավետարանի ճիշտակարանը՝ «ի փառաւոր աւրինակէ, որոյ Մուրզանեցի կոչիցի (Տ!»):

57 Տե՛ս Լ. Խաչերյան, ԺԴ դարի Հայերն ճեռագրերի ճիշտակարաններ, Երևան, 1950, էջ 169 (Երուսաղեմում, 1321-ին ընդօրինակված ավետարանի պերճախոս ճիշտակարանը. «Արդ, թէպէս և անարհեստ էի գրչութեանս, փանարի և անյարմար, այլ հանդիպէալ լաւ և ընտիր աւրինակի, որ զրած էր Մտեփաննու Գոյներերիցանց, այն որ լի էր և պատարուն յարհեստ գրչութեան և ընդ թնաւ հոչակեալ, նաև բանիւ կատարեալ և հոգուն լցեալ, որպէս անա յայտնի է իմաստնոց և ստոյզ զիտողաց, զի լի և կատարեալ էր արուեստի՝ ի բանս, ի բառս, ի լծորդս, և ի բացառու, և ի տրոհմունս առողանութեանց»):

58 Պատահում է, որ տվյալ Ավետարանի ճիշտակարանում հավաստվում է նախօրինակի սփառաւորք, կամ «հոշակաւորք» և կամ «ամենալաւ» լինելը, առանց գրչի անունը տալու:՝

Նրանց գաղափարած ձեռագրերը ուրույն խմբագրություններ են ներկայացրել՝ հատկապես թվերզի նշանների տեղաբաշխման առումով։ Դա երեսում է թե տարրեր անվանակոչություններ ունեցող և կամ առհասարակ տարրեր գրչակին տրուններում գաղափարված ովնտարանների համեմատությունից (ավետարաններ, որոնք թվերզի նշանների տեղաբաշխման մակարդակի վրա հաճախ խոտրվում են իրարից), և թե իրենց՝ գրինների թողած դիպուկ վկայություններից։

Վանական գրիշը, օրինակ, Հռոմում 1240 թվականին գաղափարած Ավետարանի հիշատակարանում, շոշափելով թվերզի նշանների օգնությամբ իր կատարած խաղավորումը⁵⁹, այն ընորոշում է «արտասանեմ» խոսքով (Ճիշտ միշտ չետառական իմաստով) և նշում հետեւալիք ։ «Արդ ես ըստ իմամ կարող գութեան արտասանեցի զսա որչափ կարացի, և դու ընկալ զսա, ով մարդ տուուոյ և պատուական եղբայր, և զեղկելիս յիշեա ի տէր»⁶⁰։

Ավելի լայն հայացրով ընդդրելով կիլիկյան ավանդույթներին մշապված և կամ Կիլիկիայում հրապարակված ուշագրավ ավետարանները, չե կարելի չնշել «ութ նմբարիչների» ավետարանը⁶¹, Սկներում 1329-ին գաղափարվածը, որն «ուղղել» է ոչ այլ ոք, քան Գևորգ Ավելուացին (կամ Լամբրոնացին)⁶², վերջապես՝ Սմբատ Գունդտտապիլի Ավետարանը⁶³ և այլն⁶⁴։ Վերջինս մեզ համար կարելու է երկու առումով։ Նբանում թվերզի նշանների միջրառմանը սեփական մոտեցում է հանդես բերել ինքը սպարապետը, իր աշխատամքը նույնիսկ էապես հակադրելով նախապես զբշի կատարածին⁶⁵։ Բացի դրանից, սպարապետը դիտակից վերաբերմունքով կիրառում է հայ հին քերականություններում

59. Խաշիկյան, նշվ. աշխ., էջ 73, 80 և այլուր։ Այլ դեպքերում՝ նախօրինակ ձեռագիրը (և նույնիսկ՝ նրանից սերված գրչագրերի ողջ խումբը) կոչվում է ըստ զրչության վայրի, ինչպես օրինակ՝ Սասոնցի ավետարանները (Գ. Մրվանձուեանց, Թորոս Ազրար Հայաստանի ճամբորդ, մասն թ., Կ. Պոլիս, 1884, էջ 308) և այլն։

60. Դրա առանձնահատկություններից է՝ «պարոյկ»-ի կամ «հարցուկ»-ի փախարեն դուն ուրիշ «ձայնաբաժ» գործածելը։

61. Մաշտոցի անվ. Մատենագարան, ձեռ. № 218, էջ 266ա։ Ի գեպ, գրի «համ»-ի, նրա «կարողության» և «հայեցակետի» այսօրինակ արժեքավորումը հազվագետ երեսույթ չէ, ինչպես կհամոզվենք տակապինն, ու ավելի հաճախ է հանդիպում ոչ-կանոնական զրկածքներում։ Ողբերգության Մատյանի ընդօրինակողներից մեկը, օրինակ, իջ բանի երկրորդ հատվածի ստորին լուսանցքում նշել է։ «Զշեշտերն յաղագս եղանակի եղի՝ որ ոտն շափն ուզորդ գայ և ի զոյնն զի լալիթ է» (զրչագիր նարեկ օրինակված Ղրիմում 1417 թ., էջ 71ա, անս Մատենագարան, մահաժապագին № 447)։

62. Մաշտոցի անվ. Մատենագարան, ձեռ. № 7651 (ստացող՝ Օշին թագավոր)։

63. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 219։

64. Կիլիկյան հիշարժան մի քանի այլ ավետարանների մասին (այդ թվում՝ Հովհաննես Արքանցորդ գաղափարածների, նաև վերոհիշյալ Սկնուայի և այլն) տե՛ս Պ. Ալիշան, Սիսուան և Լիոն Մեծագործ, «Հենեսափիկ», 1885, էջ 83, 146, 235, 298։

65. Սպարապետը թվերզի նշանները զծազրել է կարմիր թանարով ու ձեռագրի 124ա էջում թողել Հետեւալ շահեկան հիշատակագրությունը։ Հմեղաւոր Հողրս Սըմբատ՝ որ ստացայ զամառածախաւ աւետարանը և ոսոզեցի ըզսա բերթութեան արհեստին տասն ոսոզանութեամբն, չիշեցչիք բարի յիշմամբ ի Թրիստոռ՝ ով որդիք մակացութեան և ծնունդ սրբոյն Սիսոնի։ Եւ թէ ի կարդալն սորա հետ կարմիր նշանացն երթայր և տանիք զեղանակ կարդալուն, լաւ առնեց բայց դժվարապոյն է, զասն զի մոռացել են աղքս ի վազուց հետէ և աւտարացեալը ի հմլայ ութենէ սորինը։

բացատրվող առողջանական բոլոր նշանները, ու պնդում, որ ի՞ր արածն է ձիշտը⁶⁶:

Շարականներգության բնագավառում աշխի ընկնող նորությունը եղել է՝ դարձվածք, զարտուղի, ծանր ու ստեղի տիպի եղանակների ստեղծումն ու կատարումը, որ շփման եղբեր է ունեցել X դարից ծաղկած տաղային արվեստի հետ: Եվ այդ հիման վրա էլ շարականի խաղաղությունը օրդանապես հարստանում է գանձարաններին և մանրուսումներին հատուկ առանձին նշաններով, նշանախմբերով, այլև հյուսվածքի ձևերով: Շարակնոցի խմբագրման տակավին VII—VIII դարերում սկսված գործը⁶⁷, այժմ ընդորեկելով տաղաչափական և խաղաղիտական ավելի մանրակրկիտ աշխատանքներ, թեակոխում է ժամանակակից ամենավճռական փուլերից մեկը:

XII դարավերջին վերաբերող և մեր Մատենադարանի վերը հիշված N 9838 ձեռագրում ամփոփված Շարակնոցից հետո, Սում XIII դ. առաջին տասնամյակներում հրապարակվում է խաղավոր Շարակնոցի ամենահեղինակավոր խմբագրություններից մեկը՝ «Խըլու», «Խըլու պատու», «Սրցոյ», «Սուրուն», «Խըլկեցի» և կամ ու առավելապես «Խլկցի» կոչվածը՝ Գրիգոր Խովը նշանավոր երաժշտապետի աշխատասիրությամբ⁶⁸: Բայ բոլոր տվյալների, նույն հարյուրամյակի կեսերին, և հատկապես Հոռմելայում է ստեղծվուամ շարակնո-

66 Հայ երաժշտական միջնադարակիտության համար կարևոր է որոնել և գտնել ուրիշ ավետարաններ ևս, որոնք առողջանված լինեն Սմբատ Գունդստամլի ձեռագրում կիրառված սկզբունքով: Բայց լոկ վերջինիս գոյությունն իսկ խոսում է այն մասին, որ Փարիզում 1914-ին Կոմիտասի կարդացած վերօնիշյալ դասախոսությունը, ուր խոսվում է հայ հին բերականություններում առաջ բերվող առողջանության տառ խաղագրերի մասին, սոսկ տեսական նշանակություն չէ, որ ոնեցել է և ունի, ինչպես կարծեցին ոմանք: Զեռազրի 189ր էցում դարձյալ շեշտում է սպարապետը: «Առողջողիս տէր ողորմեաւ: Հետո՝ «Հալածեցա քերականաւ ուղղել զզաւ»: Եվ նշելով, «որ արվեստին հմուտ է... նա ճանաչել այն կարենա», էջի ստորին լուսանցքում մի անգամ ևս դարձրում է առողջանության տառը նշանները: Ընդհանրապես սույն (N 7644) ձեռագրի մասին տես նաև՝ Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 89—92:

67 Հմմտ.՝ Բարսեղ Ճռնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դարում, «Բաներ Երևանի համալսարանի», 1973, N 1: Եվ՝ Սյունեցի համանուն երկու երաժշտներ և հարության ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1973, N 2:

68 Սուեցի այս նշանավոր գիտնական-երաժշտի, խաղագետի, տեսարանի, երգչի և ուսուցչի անօի: ու զործունեության ժամանակաշրջանին վերաբերող շինուածնող տարրեր կարծիքներ են հայտնին անցյալում, նույնիսկ վաստակաշատ հայագետներ՝ Ղ. Ալիշանի, Հ. Տաշյանի, Հ. Աճառյանի աշխատություններում, որոնք հնարավոր է լինում ճշտել այսօր։ Գրիգոր Խովը ժամանակակից է Լեռն Բ.-ին (Մեծն): Շարակնոցի նրա ստեղծած խմբագրությունը նախօրինակ է ժառայիլ ոչ միայն Գեորգ Ակնառցու, այլև գրիշների մի քանի սերունդների համար, ընդհուպ մինչեւ XVIII դարը: Բայ ավանդության, «Խուլ» է կոչվել այն պատճառով, որ «մոմով խցանել» և ականչները, երաժշտության աշխարհիկ-նորաձեւացին այլազան արտահայտություններից չգայթակղզելու համար, որով փաստորեն մեծարվում է որպես հայ հոգեու երգաստեղծության մեջիկական աղքային-ավանդական մաքրության պաշտպաններից մեկը: «Խլկցի» նախօրինակից զաղագիւարված, զիտությանը հայտնի հնագույն շարակինոցը՝ վիեննայի Միխթարյանների հայերեն ձեռագրերի ընտիր հավաքածոյի N 145 գրչագիրն է՝ 1269 թվականից (Հմմտ.՝ Ղ. Ալիշան, Սիսուան... էջ 517, Հ. Տաշյան, Ցուցակ... էջ 446—447 և Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան):

յի «Կոստընկցի» խմբագրությունը⁶⁹: Մինչ դարավերջին Գևորգ Սկեռացի զիտ-նաևական և բանաստեղծ-երաժիշտ վարդապետը հատուկ զրադվելով «Խլկցի» շարակնոցով, գործնականում մշակում է, մասնավորապես, առողջանության շեշտանշանների երաժշտական-երգային կիրառման ակզրունքները, ու դրանով մի նոր մակարդակի բարձրացնում երգարանների խաղավորման արվեստն առնասարակ⁷⁰:

Եվ իրոք, հեղաշրջման այս փուլն է, որ իր կարեռը գծերի մեջ արտացոլված ենք տեսնում Հիմնադիմակների վերոհիշյալ «Բ» տախտակ-ցուցակում⁷¹: Աւ զիսավորապես այս բոլորից հետո է, որ XIV դարի առաջին երկու երեք տասնամյակներում, շարակնոցի կիլիկյան խմբագրությունն ստանում է իր դաստեկան կերպարանքը: Այդ խմբի զրշագրերից անհրաժեշտ է հիշատակել թեկուլ մեր Մատենադարանի № 1576 շարակնոցը⁷², և դրսում պահվող ձեռագրերից՝ օշին թագավորի նշանագոր ազոթամատոյցը, որը մի տուփի մեջ ներփակում է Սաղմոսը, Շարակնոցը, Ժամագիրը, Մանրուսումն ու Տոնացոյցը, և որը զաղափարված է արքունի ավագերեց, հոչակված երաժշտապետ Թորոս Թափրոնցի մասնակցությամբ⁷³:

Կիլիկիայում կանոնի էր սկսվել նաև «մանրուսման եղանակների» արվեստը: Ըստ Կոմիտասի՝ XI դարի երկրորդ կեսին⁷⁴: Հաջորդ հարյուրամյակի կեսերին այնպիսի ծավալ է ստանում այդ, որ ներսես Շնորհալին տիրացուներից պահանջում է «զմանը ուսմունս ձայնաւորացն արաշտել յեկեղեցիս, և ապա զալ ի ձեռնադրութիւն քահանայութեան»⁷⁵: Եվ, փնչպես նշեցինք, հավանաբար հենց ինքն էլ կազմում է զիսավորապես մանրուսման գրքերում կիրառվող «արուեստաւոր» կոչված խաղանշանների «Գ» տախտակ-ցուցակը: XII դարավերջից մեջ հասնում են ճոխ խաղագրված ու թվազրված մանրուսման զրքի (կամ խաղագրքի) վերոհիշյալ մի քանի էջերը: Իսկ սկսած XIII դարից հանդիպում ենք մանրուսման՝ ոչ միայն հայտնի զրշակինորոններում զաղափարված ու թվազրված քններ մատյանների (ինչպիսիք են, օրինակ, Սկեռացի ձեռագիրը⁷⁶, Սահմանադրությունը⁷⁷), այլև մի ամբողջ շարք ուրույն խմբագրությունների, որոնք հայտնի են ժամանակին ճանաշված, հեղինակավոր երաժշտապետների

⁶⁹ Նկատի ռւենք Զմմառի վանքի № 58 զրշագիրը Շարակնոցը, 1289 թվականից, ընդօրինակված Հռոմեակայում: Գլխավոր հիշատակարանի կարեռագույն ցուցմունքը՝ «գրեցաւ սա ի լաւ և ի ստոյդ աւրինակէ» որ կոչի Կոստոնկցին (տե՛ս Մ. Վեդ. Քեշիշեան, Յուցակ Հայերնեն Զեւսագրաց Զմմառի վանքի Մատենադարանին, Ա., Վիեննա, 1964, էջ 91—93):

⁷⁰ Հիմնական խաղերի միակցությունը, «Բանքեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 109—110:

⁷¹ Նույն տեղում, էջ 110—111:

⁷² Գրազարկ, 1328 թ.:

⁷³ Գրազարկ, 1319 թ.: Անհրաժեշտ է զիտակցել, թե նաև մանրանկարչական բացառիկ արժեք ունեցող այս ձեռագիրը, որը մինչեւ այժմ էլ պահպամ է Հայեսի Ա. Թառամնից եկեղեցում, և որը տակամին 1933-ին Բարեկեն Ա կաթողիկոսը տեսել էր «շատ ողբալի» վիճակում (Արտ. Այումելյան, Նկարագիր Օշին թագավորի ձեռագիր ժամագրքին, Անթիլիաս, 1933, էջ է), կարու է շուտափության՝ գունագոր լուսատիպ հրատարակության միջոցով:

⁷⁴ Կոմիտաս, Հռոմեածներ ու ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 113:

⁷⁵ Ներսես Շնորհալի, Բուղթ ընդհանրական, էրմիածին, 1865, էջ 79:

⁷⁶ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 759 (Սկեռա, 1278):

⁷⁷ Բրիտանական թանգարանի հայկական զրշագրերից № 40-ը (Սիս, 1274) տե՛ս Fr. Conybeare, A Catalogue of the Armenian manuscripts in the British Museum, London, 1913, p. 83—85.

անուններով. «Վաւծընցի»⁷⁸, «Կոստանդի»⁷⁹, «Առաքելցի»⁸⁰, «Կարապետցի»⁸¹, առավել ընդհանուր կոչումով՝ «Սացի» և այլն: Վերջապես Կիլիկիայում (մասնավորապես Սոսում) է ստեղծվել գիտությանը հայտնի հնագույն Գանձարանը, XIII դ. կեսերին, տակավին նոր կազմավորվող ներքին կառուցվածքով⁸², այնպիս էլ նույն մատյանի շատ ավելի բյուրեղացած վիճակը ցուցանող հին խմբագրություններից մեկը (XIV դ. վերջերին)⁸³:

Անհրաժեշտ է նշել, որ կիլիկյան գլխավորագույն գրչակենտրոնները միաժամանակ երգարվեստի ու խաղաղության տեսակետով ևս առանձին դպրոցներ են ներկայացրել: Որպես այդպիսիք, սակայն, բոլորը չեն, որ երկար կյանք են ունեցել: Վերը տեսանք, որ Հռոմեան, օրինակ, ըստ եղած տվյալների, նույնիսկ Շարակնոցի ուրույն խմբագրություն ստեղծեց: Բայց այն, դադարելով կաթողիկոսանիստ լինելուց, աստիճանաբար կորցրեց նաև գրչակենտրոնի իր հմայրը: Սկզբան, որի շուրջ 150-ամյա գործունեության նկարագրին նույնպես ծանոթացանք վերը, հրո ճարակ դարձավ 1279—80 թվականներին, այլազգի հորդաների արշավանքների ընթացքում: Վաղոց հաստատված փաստ է, որ Արքակաղինը հանդիսացել է մանրուսման արվեստի ու զրքերի ամենահեղինակավոր կենտրոնը⁸⁴: Եվ այն էլ զրեթե հիմնահատակ կործանվեց 1266-ի մեջ երկրաշարժի հետևանքով⁸⁵:

78 Մալտիկով-Շեղրինի անվ. գրադարանի (Լենինգրադ) հայկական ձեռագրերից № 4 (1331 թ.) հիշատակարանը (Մաշտոցի անվ. Մատենադարան, մանրաժամկետ, № 102). «Արդ. գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի մանրուսմուն, իւ լաւ և յընտիր արինակէ Վաւծընցի, զու յարմարեալ էին երաժշտագետքն Արքայկազնոյք...»:

79 ԺԴ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 88 («Գրեցաւ տետրակո այս... ի լաւ և յընտիր արինակէ Կոստանդէա»):

80 Տե՛ս և Խաչիկյան, ԺԵ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 390 («Գրեցաւ խաղաղեարս... ի լաւ և յընտիր օրինակէ, որ կոչի Առաքելցի»). Մե՛ս նաև էջ 428 (Մանրուսմունը):

81 Նույն տեղում, էջ 130—131 («Արդ. գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսմուն... ի լաւ և յընտիր արինակէ Կարապետցոյք»):

82 Այսինքն՝ գանձերի և տաղերի առանձին խմբագրումով: Խոսքը Փարիզի Ազգային գրադարանի հայկական № 79 ձեռագրի մասին է: Տե՛ս Fr. Mâcler, Catalogue des manuscrits arméniens... de la Bibliothèque Nationale, Paris, 1908, p. 36—37. Ձեռագրիս մանրաժամապահներ ունենք մեր Մատենադարանում: Նրա ուշագրավ հիշատակարանում (գրան մասամբ ծանոթանալու ենք ստորե), գանձերի միակցությունն է լոկ, որ «Գանձարան» է կոչվում, և տաղերի խումբը՝ «Տաղարան»: Անտեղի շփոթից խուսափելու համար, սակայն, ընդհանրապես ասած, հիշյալ ժողովածուները տարերելիս անհրաժեշտ է զեկավարվել նկատի առնելով նրանց ավելի ուշ ժամանակներում լրիվ բյուրեղացած կառուցվածքը: Ըստ այդու՝ Գանձարանը մեղ ներկայանում է որպես ծիսական մատյան, «գանձ», «տաղ», «մեղեղի» ու «որդորակ» կոչվող երգերով՝ զասավորված ըստ եկեղեցական տռների: Իսկ Տաղարանը՝ որպես արտաեկեղեցական գործածության զիրք՝ թե՛ հոգեոր, և թե՛ աշխարհիկ՝ ստեղծագործություններ ներփակող ժողովածու-Երգարան:

83 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ № 3503 (Սիս, 1394):

84 Հմմատ.՝ Պ. Ալիջան, Սիսուան, էջ 254: Ա. կիրիկյան, Բնաշխարհիկ բառարան, Ա. Աննետիկ, 1902—1907, էջ 330: Հ. Ասլյան, Կիլիկիայի վանքերը, Վիճանա, 1957, էջ 132: Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, Երևան, 1955, էջ 53:

85 «Հաշորը հիշատակագրությունները կուգան հաստատելու, — տեղեկացնում է Հ. Ասլյանը, — որ Արքակաղինի վանքը կվերաշինվի և արդյունավոր գործունեություն կունենա» (Կիլիկիայի վանքերը, էջ 127): Եզ սակայն, կարող ենք ավելացնել (զեթ Երաժշտության շուրջ մասնավորելով խոսքը), որ Արքակաղինը այնպիս էլ շկարողացավ վերահաստատել իր առաջատար դերը:

Եղված և մյուս վանքերի համեմատությամբ անվիճելի առավելությամբ է աշքի ընկնում Դրազարկը, և ոչ միայն արքայանիստ ու կաթողիկոսանիստ Սսին մոտիկ գտնվելու համար: Դրազարկը նաև երկար կլանք է ունեցել: «Յայս վայր համառոտեալ լիշտակարանք՝ ցուցին մեզ զԴրազարկ շէն երարդաւաճ՝ գրեաթէ ի սկզբանէ ԺԲ դարու ցկէս ԺԴ-ին. և այսու իսկ երկարութեամբ ժամանակի, որպէս և հնութեամբն, գուշակի առաւելութիւն նորին քան զյոգունց կամ զբնաւից վանորէից Սիսուանայ»—իրավացիորեն հետեցնում է Ալիշանը⁸⁶: Ու խազավոր ձեռագրերի համեմատությունը ևս ցույց է տալիս, որ տակավին XII դարից ծագելու Դրազարկը, XIII հարյուրամյակի կեսերից ժառանգելով վերոհիշյալ վանքերի լավագույն ավանդութիւններն էլ, մոտակա Սսի հետ միասին վեր է ածվում հայ երաժշտարվեստի կիլիկյան ողջ դպրոցի պատմա-մշակութային դիմանեկարը հանդիսադրող մեծ կենտրոնի:

Հնդհանուր առմամբ գիտենք, որ քուն Հայաստանում ևս XIII—XIV դարերում գգալի զարգացում ևն ապրում թե՛ երգչային կատարողական արվեստը, թե՛ երգաստեղությունը, և թե՛ խազագրությունը: Այդ մասին կարող ենք դատել մի շաբթ հանգամանքներից: Հայկական լեռնաշխարհում աննախաղեալ բազմամում են արվեստի ու գրչության կենտրոնները, գծադրելով մի ընդարձակ սահման՝ Հաղբատից ու Սանահնից մինչև Մեծուի, Գլածորից ու Տայենից մինչև Երզնկա: Հանդես են գալիս այնպիսի երաժիշտ-քանաստեղծներ, ինչ-պիսիք են՝ Հաղարծնի վանահայր՝ Խաչատուր Տարոնացին, «այր սուրբ և առաքինի և դիտութեամբ հոշակեալ՝ մանաւանդ երաժշտական արուեստիւ»⁸⁷. Հավուց թառի հայր Եղյա մեծ վարդապետը, «այն, որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց, որպէս թէ ամենեցունց լընդ մի բերան հնչել՝ եթէ բարձր և կամ ցած»⁸⁸. Խոր վիրապի դպրոցի ուսուցչապետ Վարդան Արևելցին (Մեծն), որ, ֆնչպես հայտնի է, նշանակալի մասնակցություն է բերել շարական երգերի ստեղծման գործին⁸⁹. Հովհաննես Երզնկացի Պլուզը, որպէս երաժիշտ-տեսաբան, շարականագիր ու նաև տաղասաց, վերջապես Գրիգոր Տաթեացին, որն իր համարատանում «ուսուցանէր զնախիլին երգիշ վարդապետաց վերաժշտութիւնս քաղցալուր ձայնի եղանակաւ»⁹⁰ և ուղիղներ: Նրանք քոլորն էլ քաջ տեղյակ են եղել հայ արվեստի շեշտակի վերընթացին Կիլիկիայում, իսկ մի քանիսը իրենց գործունեությամբ սերտորեն կապված են նաև Կիլիկիայի հետ:

Այս պատկերը միգուցե հնարավոր է, քիչ ավելի մանրամասնել, հատկապես Եթե դուրս գանք խազագրության արվեստի զարգացման հետ փապված փաստերի ու երևութիւնների շրջանակից⁹¹: Եվ սակայն, միևնույն է, շուտով կրախվենք այն փաստին, որ քաջաքական խիստ աննպաստ պայմաններն այս-

⁸⁶ «Սիսուան», էջ 236: .

⁸⁷ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 211:

⁸⁸ Անդ, էջ 172:

⁸⁹ Ծարակնոց, Կ. Պոլիս, 1815, էջ 5:

⁹⁰ Զեռազրական հատված, Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 7823, էջ 42—43 (առեւլ. Խաչիկյան, Գլածորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները, Երևանի ոլետական համալսարանի գիտական աշխատություններ, Համ. XXIII, Երևան, 1946, էջ 428):

⁹¹ Հմատ. մեր ուսումնասիրությունը՝ Քննական տեսություն Հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, «Հրաբեր հասարակական զիտությունների», 1971, № 5, էջ 36—38,

տեղ, քննարկվող պատմաշրջանում, ակներեարար խափանեցին արվեստի առաջխաղաց շարժումը: Կասեցրին այն, և կամ նոսրացրին այնպես, որ վերոհիշյալ մեծ տարածքների վրա երաժշտա-մշակութային լոկ առանձին օազիսներ մնացին: Գեթ դրանց գործունեությունը տարբեր կողմերից լուսարանող տվյալներն իսկ դեռևս բավարար չեն: Բայց հնարավորություն տալիս են շոշափելու մեր նյութի համար կարևորագույն այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ տարբեր հաջորդականությունը ծաղկած կենտրոններին հատուկ տեղական ավանդույթների հարցը, հայկական Կիլիկիայից եկող դրական ազգեցությունների հարցը, այլև կիլիկյան ավանդույթները քննական մոտեցմամբ յուրացնելու հարցը:

Դժվար չէ մատնանշել ծիսական մեզ հետաքրքրող մատյանների նմուշներ, որոնք Հայտառանում են ստեղծվել և անզրադարձնում են կամ տվյալ կենտրոնի ընդհանուր ավանդույթները, և կամ դադափարող գրչի՝ որպես կազմող խմբագրող մասնադիտի անհատական մոտեցումը: Այսպիս, 1329 թվականին գաղափարված մի ավետարանի ծաղկող, կազմող և գրիչ՝ Ավագ դպիրը, մատյանի հիշատակագրություններից մեկում հայտնում է, որ ձեռքի տակ ունեցել է եսայի «մեծ վարդապետի» (իմա՝ Նշեցու) ընտիր օրինակը⁹²:

Ծարակնոցներից հիշատակելի է Սանահնում 1423-ին գաղափարվածը⁹³: Նրա հիշատակարանում չկա՝ շարակնոցի որևէ հայտնի խմբագրություն որպես նախօրինակ ընդունելու մասին ակնարկ⁹⁴: Դրա փոխարեն, Հովհաննես Անեցի Ռակեփորիկ գրիչը դրվատական խոսքերով է մեծարում մատյանի ստացող Հովհաննես Սանահնեցուն, նրան անվանելով «երաժշտապետ»⁹⁵: Իսկ պատվիրառու երաժշտապետն էլ, իր հերթին, «շնորհազարդ և ճարտար» է կոչում գրչին, կարծես սկսունառարանելով, թե ինչու կարող էր լիակատար վստահությամբ վերաբերվել նրան⁹⁶: Գանձարան տեխարի մատյաններից էլ, այսուեղ քըննարկվող հարցի առումով, ուշազրավ է Երզնկայում 1366 թվականին ստեղծվածը: Գրիչ Գրիգորիս քահանան հիշատակարանում ողղակի վկայում է՝ «զրեցի և կազմեցի ըստ իմում կարի»⁹⁷:

Բոլորովին զատ խնդիր է այս և նման մատյանների գրչության ու խաղաղութան առարկայական մակարդակը⁹⁸: Բայց որ երգեցողական տեղական

92 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. Հրտ., էջ 218 («զատը աւետարանս ցանկագրեցի մեծ սիրով ի լընդիր օրինակէ մեծ վարդապետին եսայեա»):

93 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1587:

94 Թեսպիս դա չի նշանակում, որ Գրիչը ընդհանրապես օդաված սիտի լիներ իրեն ծանոթ ու մատչելի զրագրերից:

95 Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, էջ 302 («Գրեցաւ եղանակառը տառս... ի խնդրոյ հոգելից և շնորհաց աթարանի՝ աշակերտի քաջ բարունոյ Ղազարու և ձրզնազեաց հարազատի իւրոյ Յովաննու երաժշտապետի»):

96 Նույն տեղում, էջ 303 («Արդ, ես յատինս ի ծնունդս եկնդեցւոյ... ի մանկութենէ սնեալ և վարժեալ ի դրան սուրբ Աստուածածնիս Սանահնոյ, յաղագս յիշատակի հոգւոյ ի հաւալ ընկից իմոց ետու զրել Յովիաննէյս») արքինսկակապոսի մականուն Ռակեփորիկ վերաձայնելոյ՝ շնորհազարդի և ճարտար զր ի, որոյ յիշատակ նորին արհնութեամբ եղիցի» և այլն):

97 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 475:

98 Նկատի ունենք հատկապես քիչ առաջ վկայակուված Գանձարանը: Այն ևս պահպամ է մեր Մատենադարանում (ժողովածու տիպի № 7853 ձեռագրում): Ի մոտո ծանոթությունը ցույց է տալիս, որ Գանձարանս բովանդակությամբ թերի է ու խաղավորման առումով՝ ոչ այնքան որակյալ: Խաղավորման ավելի կայունացած մի սկզբունք նկատելի է «զանձաւ կամ «քարոզ» կոչված միավորներում (որոնց գրիչը, ի դեպ, ուրիշն է՝ Մարկոս քահանա): Մյուս միավոր-

ավանդույթների խորացումն ու զարդացումը տվյալ ժամանակաշրջանի Հայաստանում կենտրոնախույս միտումների գերակշռության վտանգ է սպառնացել, երեսմ է միաձեռքթյուն հաստատելու նպատակով եկեղեցու ձեռնարկած քայլերից: Բնութագրական են վաղուց կանոնացված աւղմուսերգությանը միակերպություն հաղորդելու փորձերը: Հայտնի է, որ այս ասպարեզում գրական բնագրի պաշտոնապես վավերացված խմբագրությունը չէ, որ կենցաղավարել է ամենուր:

Կարծվել է, որ դա՝ սաղմոսները անգիր երգելու հետևանք է⁹⁹: Հովհաննես Սարկավագ վարդապետը Հաղբատի մատենադարանում հանդիպելով Սաղմոսի հին, V դարից պահպանված ատուց մի օրինակի, կարդադրում է վաղափարելրազմացնել այն, և տարածել հայ իրականության մեջ: Բայց ահա, Հովհաննես Գառնեցուն ևս զբաղեցնում են սաղմոսներգության միաձեռքության-բարեկարգության հարցերը: Ու նա էլ գտնելով Սարկավագ վարդապետի հավանությանը արժանացած նախօրինակը, զանք չի խնայում նույնը բազմացնել ու տարածել տալու համար: Եվ սակայն, սպասված արդյունքին (ողջ Հայաստանի և հայ իրականության շափանիշներով) դարձյալ չի համեստամ¹⁰⁰:

Հայաստանում տարբեր կենտրոններին հատուկ տեղական ավանդույթների հարցը միառժամանակ կորցնում է իր արությունը՝ Կիրիլիայում ձեռք

ների՝ տազերի ու մեղեղիների մասն է, որ պակասավոր է, և առավելապես այդ մասին ու նրա խաղավորմանն են վերաբերում Գրիգորի գրչի այն խոսքերը, որով հիշատակարանում խնդրում է «անմեղազիր լինել խոշորութեան և անյարմար զրոց», զի այս շափ էր կար մերը: Տվյալ դեօքում, սակայն, մատյանը «ըստ իրում կարի» ստեղծելու երեսութիւն է, որ ամենեին հաղպահեալ չէ:

99 Թեև լոկ զրանով չի սպասվում երեսութիւն բացատրությունը: Ակզրից ենթ իրարից տարբերվել են, օրինակ, Սաղմոսի բանավոր (IV դարի ընթացքում արմատավորված) և զրավոր (V դարից տարածված) թարգմանությունները: Հմմտ. մեր հողվածք՝ Monodische Denkmäler Alt-Armeniens (Die Tradition der armenischen Psalmodie), „Beiträge zur Musikwissenschaft“, Berlin, 1970, Heft 1.

100 Դեռև ոչ միջնադարի ընթացքում էլ, համակված միենույն մտահոգությամբ, տեղյակ դրիներ որոնում, զանում ու զաղափարում են Գառնեցու անունով հայտնի Սաղմոսի օրինակները և այլն: Այսուեղ շահեկան կլիներ գեթ հատվածաբար ծանոթանալ ՍՍՀՄ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի հայկական ձեռագրերից Հ 64 մատյանի (Մելինութիւնը սաղմոսաց և Սաղմոս) հիշատակարանին: Մատյանը ընդօրինակված է Սուխարա վանքում, 1534-ին: Գրիչը՝ Մարգար Արճիշեցին, վկայում է. «ամենայն հաւատացեալ մանկունք հիեղեցւոյ ի բերան ունին զայտ նուազուդ... Բայց սաստիկ աղաւաղեալ թիւրեցաւ բանք սաղմոսիս... իսկ ևս՝ Գրիգորիս... ահա հանդիպեցայ ընտիր և լաւ աւրինակի, որ էր զրած յիշատակարանին, թէ զրեցաւ աայ յօրինակէ սուրբ վարդապետին Յովաննէս Գառնեցուն և այլն (Մաշտցի անվ. Մատենադարան, մանրածապավեն Հ 201): Ու դեռ զիտենք նաև Գառնեցու վկայությունը թէ՝ որոնեալ «գտի զրած ի թարգմանչացն սաղմոսաբան, զոր առեալ սուրբ վարդապետին Յովհաննու, որ Մարկար կոչիր, այն որ զտումարն երեւեցուց զհին հային. և նա սերմանեաց զայտ ուղիղ և զուղորդ սաղմոսուս: Առավել հետաքրքրական են, սակայն, այն պատճառները, որոնք ստիպել են Գառնեցուն հիշյալ որոնումները նախաձեռնելու: «[2] սաղմոս Գառնի, — զրում է նա, — մանաւանդ զերզս հոգույն սրբոյ՝ այլ և այլ և կամ ավելի և պակաս նուազին մանկունք եկեղեցւոյ. ոչ ուսեալլիք զնշորիտն և ոչ իմացեալլիք զնշմարիտն: Իրահամարձակիլլիք ումանք իմացմամբ՝ տարագրեցին զուղիղն և զուղորդն սաղմոս: Եւ այլլիք ումանք ծայրաքաղաքանեան, անզեղց սրահիք և անիմաստ բանիքր... Ամենայն աղջ բրիստոնէից երդին զսազմոսս սաղմոսաբանաւ... Եւ հայր ի բերան առեալ ասեն վայրապար... քահանայր և ուամիկը, մանկունք և կողեռը, նա և կահայր ևս և այլն: Տե՛ս Մատենադարան, ձեռ. Ն 4913, էջ 107ր—108ա:

բերված նովաճումներից օգտվելու դիրքակցական նույնանման մղումների առկայության հետևանքով, և շնորհիվ կիլիկյան բեղմնավոր ներթափանցումների համատարած բնույթի: Այդ ներթափանցումները իրացվել են այլազան ձևերով: Հայաստանից Կիլիկիա գնացել են սովորելու¹⁰¹, Պատմաշրջանի մի շաբանշանավոր վարդապետների գործունեության ողջ ընթացքը ուղեկցվել է Կիլիկիայի հետ ամենասերտ կապերի հետևողական խորացումով¹⁰²: Կիլիկիայից Հայաստան են բերվել խաղավոր ընտիր ժողովածուներ¹⁰³ և աշխատելու են եկել գրիշներ¹⁰⁴ ու երգիշներ¹⁰⁵: Այստեղ հստակ պատկերացում են ունեցել կիլիկյան ծիսական մատյանների տարբեր խմբագրությունների առավելությունների մասին:

Սերաստիո առաջնորդ Ստեփանոս Եպիսկոպոսը 1320 թվականին գտնվելով Կիլիկիայում, վերադարձին 02ին թագավորի բարեհաճությամբ որպես նվեր հետը վերցնում է ոչ այլ ինչ, քան վերոհիշյալ «ութ նկարիչների» ընտիր ավետարանը¹⁰⁶: Ունենք Առաքել Սյունեցու հեղինակավոր վկայությունը այն մասին, որ Գրիգոր Խուլի և Գեորգ Սկևուցու խմբագրած շարակնոցը նաև Հայաստանում ընդունված է եղել որպես «իմք: «Քերեալ, զտեալ և ճշմարիտ... բանք երգոցն, — զրում է նա, — Խլկայ օրինակն է ի Շարակնոցն, զոր մեծ վարդապետն ուղղեաց. այն որ զեսայի նախասացն մեկնեաց ի խնդրոյ Հեթում թագաւորին»¹⁰⁷: Վերջապես, երաժշտության մասնագիտորեն նվիրված Հովհաննես նրենի գրիշն ու արվեստագետը, որ XIII դարի կեսերին վերաբերող արդեն վկայակոչված Տաղարանը Դրագարկում ինքն է զաղափարել Յուսէփի նշանավոր երաժշտապետի տրամադրած օրինակից և բերել Հայաստան, ամեն կերպ ընդգծում է կիլիկյան երգաստեղծության բարձր զարգացած վիճակը¹⁰⁸:

101 Սրբեմն նույնիսկ Հայաստանում արդեն բարձրագույն կրթություն ստացած եկեղեցականներ, ինչպես Միսիթար Գոշը, որ սովորեց նաև՝ մշակութապես Կիլիկիային կապված Աև Լեաների վանքերում, և որն իրեն հեռու չէր պահում երաժշտուներից ու երաժշտական խնդիրներից:

102 Գրանցից են XIII դարի կարկառուն զեմքեր՝ բահաստեղծ-երաժշտուներ Վարդան Արենելցին և Հովհաննես Սրգնկացի Պլուզը:

103 Հայտնի է, որ Խաչատուր Տարոնեցի երաժիշտ վարդապետը (Գոշի ժամանակակիցն ու գործակիցը), կիլիկյան խաղավոր ձեռագրեր բերելով է, որ Հաղարծնում և առհասարակ Հայաստանի Հյուսիս-արևելյան կողմերում երգեցողության, երգաստեղծության ու խաղագրության արվեստի բնագավառներում նոր շարժում է ստեղծել:

104 Այդպիսիներից է՝ հայ մատևնապրության պատմության մեջ՝ Հայունի Պողոս կիլիկեցի գրիշը (Հմմտ.՝ Գ. Հովսեփյան, Խաղը ականք և Պողոս Հայոց պատմության մեջ, Անթիւմա, 1969, Բ, էջ 177):

105 ՏԵ՛ս Մ. Զմշեանց, Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1786, էջ 181:

106 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի Հայերին ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. Հրտ., էջ 162—163:

107 Գիրք Սահմանաց սրբոյն Դաւիթի անյաղթ փիլիսոփայի և յետ ժամանակի արարեալ լուծումն սորին Հոգեշան՝ մեկնութեամբ՝ Տեառն Առաքելի եռամեծ վարդապետի, Մադրաս, 1797, էջ 523—524:

108 Շահեկան և միաժամանակ խորապես հուզիչ է Հովհաննես երաժշտի թողած հիշատակարանը: «Կատարեցաւ երգարանս տաղաց ձեռամբ Յոհաննիսի՝ յետին և յոզնամեղի՝ ի թուակունիս Հայոց ԱՊ, ի վանս մեծ ուխտի և հոչակառոր անապատու Դրագարկի կոչեցեալ ի թագաւորութեանն Հեթոյ՝ որդոյ Կոստանդեա: ...ի իմ յանձին կալեալ և հետեւեալ երաժշտական արհեստի և ոչ ունելով տեղի և շնորհը, որպէս արժան է, այլ բազում ջանիւ և աշխատութեամբ Հասեալ ի ծայր տառիս և կարի գժուարահամբոյր կցըրդիս, և այլ ապա տառապանաւոր զբեկով, և ապա ժամանեալ յերկիրն իմ ի անդեան տեղ, և վասն զի ոչ ունելով տեղի և նախանձ վարժմանն այսորիկ, զի կարի մարդիկ

Այս բոլորը պարզ խոսում են կիլիկյան ավանդների բարերար ազգեցության մասին Հայաստանի երաժշտական տարբեր կենտրոնների վրա: Բայց դա չի հանգեցրել վերջիններիս հատուկ գատորոշիչ գծերի համարթեցմանը: Ավելին, ինչպես ցույց են տալիս առանձին փաստեր ու խաղավոր ձեռագրերի համեմատությունն իսկ, հիշյալ գծերից լավագույնների համախումբ կուտակումներ էլ իրականացվել են խոշոր դպրոցներում: Դրանց շարքում առաջին տեղը զուցե հարկ էր հատկացնել Անիի դպրոցին: Սակայն զանազան հանգամանքներ գերես մշուշի թանձր քողի տակ են պահում այն: Նույնիսկ նրա այն շրջանը, երբ այստեղ ուսուցչապետ էր Հովհաննես Սարկավագ վարդապետը: Մի փոքր հատականում է պատկերը մեզ հետաքրքրող հարցերի շրջանակներում, և այն էլ աստիճանաբար, երբ մնացած բազմաթիվ դպրոցների բավական մեծ ցանցում առանձնացնում ենք՝ Գլածոր-Տաթև-Մեծովի գիծը ու հետեւում դրան: Ուսուցիչ-աշակերտների մի կարևոր շարք ևս՝ Գոշ-Տավուշեցի-Արևելցի-Մշեցի-Նշեցի-Որոտնեցի-Տաթևացի-Մեծովիցի՝ դարձյալ նույն գծի վրա է դուրս բերում մեզ, ուր XIV դարի վերջին քառորդում նկատվում է նույնիսկ մի քննական մոտեցում կիլիկյան երաժշտարվեստի ու խաղավոր զրշագրերի վերաբերությամբ: Հարկավ, այդպիսի մոտեցումը միանդամից շէր կարող ծագել: Բայց որ այն՝ պարզորոշ երևաց հատկապես նշված ժամանակաշրջանում, հասկանալի է:

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից և Սսի ավերումից հետո մեծանում է մայր երկրում ծաղկող «արևելյան» վարդապետների հեղինակությունը, մի նոր հմայք ու նշանակություն են ձեռք բերում Տաթևի, իսկ քիչ ավելի ուշ նաև Սովորաց և Մեծովա վանքերի համալսարաններն ու նրանց ուսուցիչ-ուսուցչապետները, որոնց մեջ քիչ չէին ուղղություն տալու ընդունակ հմտություն երաժշտապետներ ևս: Դրանց շրջանում էլ առավել հատկ դրսկորվեց նշված քննական մոտեցումը: Գրիգոր Տաթևացու դիրքորոշումը հայ Շարակնոցի բովանդակության ու նրա զարգացմանը մասնակցություն բերած կիլիկյան երգիշ-բանաստեղծների նկատմամբ, երևում է թեկուզ շարականների հեղինակների նրա կազմած ցուցակից¹⁰⁹: Բնութագրական է նաև թովմա Մեծովիցու կարծիքը ժամանակի նախկին խմբագրությունների վերաբերյալ¹¹⁰: Եվ պատահական չէ, որ նա ինքն էլ փաստորեն հանդիսացավ հե-

յետու կացին ի յուսումնասիրութենէ և յաստուածասիրութենէ թուլացեալ ի վայր մեղկեցան ի սէր երկրային ինչ իրաց անցաւորաց, որ ոչ մնայ, ըստ տեսառն բանի, թէ ցեց ուտէ և ուտիւ ապականէ, և իմ տեսանելով զայն և կարի խոր վշտացեալ ընդ բազում աշխատանս իմ, զի ի տեղոքն յախնմիկ կարի անարդ էր և յոտի, և ոչ դար տեղի սերման, վասն զի ապառաժուտ էր վայրն, և իմ կանխեալ վերստին գոլով ի տեղի իմաստափրաց և ուսումնասիրաց՝ յերկիր Կիլիկիոյ, որոյ Քրիստոս պահապան կանգնի և ինքն պատսպարէ աշով իրով և այնու Տե՛ս Կ. Հովսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 946—47:

109 Գր. Տարեացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 638: Ուշագրավ են ցուցակը եղբայրակուզ խոսքերը: «Այսօքան շարականս ընդունելի է յեկեղեցի, և աւելին քան զայս՝ խոտելի է և անպիտան»: Ճիշտ է, հայ Շարակնոցը ի վերջո դարձավ ավելի հարուստ ժողովածու, քան հնաբարվում էր Տաթևացու ցուցակով: Բայց փաստ է նաև, որ այդ ժողովածուից դուրս մնացին, օրինակ, Գրիգոր Անավարդեցու հորինած բազմաթիվ երգերը:

110 Լ. Խաչիկյան, Ժիշտական ժամանակաշրջանը Հիշատակարաններ, Ա, Երևան, 1955, էջ 598 (Մեծովիցու շարադրած հիշատակարանը, իր հակողությամբ զաղափարված աղոթամատուցիչ վերջում: «սրբագրեցի զԱղօթամատուցա յընտիր յընտիր աւրինակաց յաստուածարան վարդապետացն... Արդ, ևս ժետինս ի կարգաւորաց և անգեղս ի մարդկան ականց գրեցի զսա ձեռամբ 716—7

դինակը ժամագրքի մի նոր խմբագրության¹¹¹: Թովմա Մեծոփեցու կենդանության օրոք, նրա մասնակցությամբ և կամ ցուցմոնքներով նորովի խմբագրվել են նաև Ավետարանը (կետադրության նշանների և առողջանության խաղաղութերի տեղաբաշխման առումով), Շարակնոցը, Մանրուսումն ու այլ մատյաններ: Գիտենք, որ Գրիգոր Խլաթեցին վերանայեց ու նոր նյութերով ճոխացրեց Հայոմավուրքն ու Գանձարանը¹¹²: Մի կողմ թողնելով խաղաղության արվեստի մասնագիտական մակարդակի հարցը, որ առանձին հարց է, պետք է նշենք. հիշյալ բոլոր մատյաններում կիրառված խաղավորումը ավելի կամ սրակաս շեղումներ ունի կիրիկյան նույն գրքերի համեմատությամբ: Երբեմն խողագրերի գծագրածերն անգամ զանազանվում են, չխոսելով բոլորովին տարբեր խաղագրված գրական միևնույն բնագրերի առկայության մասին: Ամեն ինչից երեսմ է, որ Մեծոփեցին ու նրա աշակերտները, Խլաթեցին ու նրա հետևորդները մեզ հետաքրքրող հարցերում ի կատար են ածել տակալին Գլածորում և Տաթևում խմորված գաղափարներ:

Եվ այսպես, զարգացած ավաստատիրության շրջանում կազմավորվում են հայկական մասնագիտացված երգարվեստի ու խաղաղության երկու խոշոր գպրոցներ. Կիլիկյան ու Հայաստանյան: Իրենց լնդհանուր գծերի մեջ տուած, այդ գպրոցների գոյության և որոշ յուրահատկությունների մասին դաղափար կարող ենք կազմել համբիր զուգակշռելով՝ Սում (ու Դրազարկում) և Մեծոփում (ու նրան կազմած վանքերում) գաղափարված միատեսակ մատյանները¹¹³: Սոորեւ բերվող հատուկ ընտրված զույգ օրինակների քննական համեմատությունը հեշտությամբ կարող է կատարել (առանց մանրամասն մեկնարանությունների) անգամ երաժշտության խնդիրներից հեռու կանգնած բանասերը, որն ունի ձեռագրական փրակությունների տեսողական ընկալման բավարար փորձ: Դրա համար անհրաժեշտ է հետևել զրական միևնույն բնագրերի կետադրական տարբերություններին (որը նույնական ունի, ինչպես հիշում ենք, նաև երաժշտական նշանակություն), ինչպես և միևնույն վանկի վրա զրված տարբեր խաղաղություններին^{113ա}: Ավետարանից մեջ ենք բերում Ղուկասու է զիսի 31-րդ տունը («Արդ՝ ո՞ւմ» և այլն)՝ Դրազարկում 1295-ին թորոս «միիլիսություն» գաղափարված (Ա¹)¹¹⁴ և 1441-ին Քաջրերունիքի Ս. Գե-

իմով՝ ևս թումայ վարդապետս, յիշատակ հոգու իմոյ և ծնողացն և աշականացն, ամէնէ Բայց աղաշնմ զիմաստուն գաղափարողսդ զնկարադիր բանիցն մի այլափոխէք. զի բաւական է, որ ինչ վոխեալ եղել ի բազում տարինակացայ:

111 Վ. Հայունի, Պատմություն Հայոց աղոթամատությին, Վեհեաիկ, 1965, էջ 313—314:

112 Երկու մատյաններում էլ Դրիգոր Խլաթեցին խմբագրական աշխատանքները կատարել է այնպես, որ նրանցուն ավելի հստակ արտացոլվեն հայ ժողովրդի աղատարադ երազանքները:

113 Ինչքան էլ որ Մեծոփեցու և Խլաթեցու գործունեության ժամանակաշրջանում հայ մասնագիտացված երգարվեստն ու խաղաղությունը մի կողմից՝ սկզբունքորեն վարընթացի մեջ ևն արդեն և բացում են հեղաշրջման ուշ միջնադարյան ուղիները, մյուս կողմից դրանք սկզբունքորեն վերաբերելով զարգացած ավատատիրության սլասմաշրջանին, ամփոփում ու Եղրափակում են նոյն այդ ժամանակահատվածը:

113ա Կարո՞ղ է պատահել, որ քննարկող տարբեր գործուներում, առանձին զնութերում՝ մեղեղիական միևնույն պառույտը լոկ զրավոր արտահայտելիս տարբեր խաղաղեր կիրառած լինենին ընդհանրապես ասած՝ այս. ինչպես եղել է և հակառակը, այսինքն՝ զրավոր միատեսակ (նոյն նշաններով) արտահայտված հատվածները երգելիս, տարբեր կերպ են հնչեցրել Բայց մենք համեմատության նպատակով ընտրեցինք այնպիսի հատվածներ, որոնք նման կառածներ պահե-

շնե հարուցում:

114 Մատենադարան, ձեռ. № 6290, էջ 193բ:

վորդ վանքում թովմաս զրչի ընդօրինակած (B¹)¹¹⁵ ձեռագրերից։ Շարակնոցից բերվող հատվածն է՝ Աստվածածնի ծննդյան կանոնի ԳԿ. ճաշուի Ա. տունը («Սառ կենաց»). ըստ 1328-ին Դրազարկում Մովսես զրչի (A²)¹¹⁶ և 1423—24 թվականներին Մեծոփա վանքում թովմաս զրչի (B²)¹¹⁷ ընդօրինակած զրշագրերից։ Մամրուսմունքից կանգ ենք տեսնում ԱԿ. կանոնագլխի Ա. տան վրա (սաղմոս ԺԴ՝ «Ասաց անզգամն ի սրտի իւրում», միաժամանակ շոշտիւ լինելու համար նաև ասղմոսիրդության հետ կապված վերոհիշյալ հարցերը), ըստ 1312-ին Սոսամ Գրիգոր քահանացի (A³)¹¹⁸ և 1441-ին Մեծոփա ժանքում դարձյալ թովմաս զրչի (B³)¹¹⁹ ընդօրինակած ձեռագրերից։ Եվ Գանձարան ժողովածուից ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք Գրիգոր Նարեկացու «Էին աշոյ» տաղի վրա, խազավորումը (հատվածարար) բերելով՝ 1394-ին Սոսամ Եսայի Սասնեցու (A⁴)¹²⁰ և շուրջ 1388-ին Յիպինա վանքում Գր. Խլաթեցու (B⁴)¹²¹ կազմած դրշագրերից (տե՛ս նաև էջ 100 և 101):

Սրբ ու մ նմանեցուցից զմարդիկ տպիս ալսորիկ։ և ու իցեն նմանողը։ Նրման են մանկուոյ որ ի հրապարակս նստիցին, կարդալցեն զմիւնեանս և ասիցին. փողս հարաք ձեզ և ոչ կաքաւեցէք։ սղրացաք. և ոչ լուսէք։

Ուրդ. ու մ նմանեցուցից զմարդիկ ազգիս ալսորիկ
և ու մ իցեն նմանողը. նման են մանկուոյ որ
ի հրապարակս նստիցին, կարդալցեն զմիմեանս
տսիցեն։ Փող հարաք ձեզ և ոչ կաքաւեցէք
սղրացաք, և ոչ լուսէք։

Համեմատվող խազավորումների տարբերություններն ինչ-որ շափով որաշմանավորված են, անշուշտ, ժամանակային զարգացմամբ ևս։ Թեպետև խմանացի է, որ համապատասխան ձեռագրերն իրարից բաժանող ժամանակաշատվածում խազավորության արվեստը սկզբունքային որևէ կատարելագործության շննդարելվեց։ Տեղում դոփեց, և կամ հայտնվեց վարընթացի սկզբում միայն։ Աւտի տվյալ դեպքում նկատի պիտի առնել, հիմնականում, տարածական ու մասսմբ ևս սոցիալական զարգացման հանգամանքները։

115 Մատենադարան, ձեռ. № 3892, էջ 183ր։

116 Մատենադարան, ձեռ. № 1576, էջ 6ր։

117 Մատենադարան, ձեռ. № 5114, էջ 3ա։

118 Մատենադարան, ձեռ. № 8623, էջ 4ր։

119 Մատենադարան, ձեռ. № 5667, էջ 4ր։

120 Մատենադարան, ձեռ. № 3503, էջ 32ր։

121 Մատենադարան, ձեռ. № 5328, էջ 73ր։

օտառ կիւնաց տընկեալ լաղին սուրբ կոյլու .
 ո՞ր բգնալրածինըն բըղիսեցե՞ր զծաղիկ
 և ետո՞ւ մամա՞ր ի՞ւ ժամա զո բդին պը տո՞ւ զ մարդկան .
 զ ո՞ւ որու զմարմին նըն ճաշակեալ անմահացան լասով .
 զասն որու աւրանարանինըք բգքե՞զ լաւո՞ւր քո ծնընդեան

օմա՞ն կե՞նաց տը նկեալ լաղին սո՞ւրբ կոյլու .
 ո՞ր զհալրածինըն բըղիսեցե՞ր զծաղիկ
 և ետո՞ւ մամա՞ր ի՞ւ ժամա զո բդին պը տո՞ւ զ մարդկան .
 զ ո՞ւ որու զմարմին նըն ճաշակեալ անմահացան լասով .
 զասն որու աւրանարանինըք բգքե՞զ լաւո՞ւր քո ծնընդեան

Անառաջ անըսպա : թէ ո՞չ զու ալո՞ւ :

ալէ հօ : շաւուիա :

Զի ո՞չ զո : լալու

ալէ հօ : շաւուիա :

ակայէլէ) հօ : յանամի : շաւուիա :

Անաց անզ զու ալո՞ւ :



ալէ հօ : յանամի :

Զի ո՞չ զու : ալու :

ալէ հօ : յանամի :

ակայէլէ) հօ : յանամի :

Այլ կերպ ասած, գործ ունենք թեև համագալացին նույն հունի մեջ գտնվող, բայց ոճականորեն (նաև արտաքին տվյալներով) տարրեր դպրոցների հետ։ Դա երևում է նույնիսկ լոկ աշխատարանների համեմատությունից։ Մի վողմ թողնենք առողջանական շեշտերի և գրական բնագրի վանկերի վրա դրանց տեղաբաշխման տարրերությունները։ Անդամ կետադրությունը այլատեսակ է։ Կիլիկյան մատյանում, այն, հաստկապես վերջակետի կիրառությունը, ավելի երաժշտական նկատառումներ ունի, քան նաև քերականական¹²²։ Մանրուսումների և գանձարանների բաղդատությունը նույնպես ինքնին պերճախու է տարրեր դպրոցների պարզորոշ բացահայտման տեսակետով։



Շարակնոցների զուգակշռումը ցույց է տալիս նրանց բավական մոտիկությունը¹²³։ Կարենը տարրերությունն այստեղ հանգում է առաջին վանկին հատկացված երկու տարրեր խաղերին¹²⁴։ Իսկ դա ու նման գեղքերը շատ մեծ տեղ չեն բռնում ամբողջական ձեռագրերի համեմատության խորքի վրա։ Ամեն ինչից երեսում է, որ հայ Շարակնոցի պատմական զարգացումն առհասարակ ընթացել է բաղդատարար կայուն քնդհանուր հունի մեջ։ Որով այժմ լրիվ շափով հասկանալի է գառնում կոմիտասի սուր դիտումն այն մասին, որ «շարականի եղանակները պարտադիր և գործածության մեջ սահմանափակ (իմա՝ ծիսակատարողական որոշակի սահմաններում տեղադրված—ն. թ.) լինելով, չեն փոխվել ըստ էության»¹²⁵,

122 Ընդհանրապես ասած՝ հայկական միջնադարյան ձեռագրերում կետադրության նշանների տաղաշատիական-երաժշտական կիրառման հարցը վերջերս տեղին ու ժամանակին շոշափեց Ա. Մնացականյանը։ Տե՛ս նրա ներսեմ Ծնորհայի, Ազր Եղիսիոյ, «Հրաբեր» (հաս. գիտությունների), 1974, № 2, էջ 98։

123 Դա նկատելուն պետք չէ խանգարի՝ երբեմն «շեշտի» ու երբեմն ևս «փուշի» փոխարեն դրված, վերջինիս հակադիր զարգացմանը հանդես եկող (և այդ պատճառով էլ հետագայում «փշադարձ» անվանված) խաղագիրը։

124 Ա2-ում՝ «խոսրովային» խաղագրի ընդհանրացած երկու այլագրություններից մեկը։ Ե2-ում՝ երկինուալոր սուրբք։

125 Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 111։ Ընդգծումը, որ մատնանշում է կոմիտասի արած կարեռագույն վերապահումը, կապված ոչի զարգացման խնդիրների հետ, մերն է—ն. թ.։

Ուշադիր գննելով բոլոր օրինակները, դժվար չէ նկատել, որ հայաստանյան գրչագրերում ավելի խիտ է՝ Կիլիկիայում համեմատաբար նոսր նշանագրված մատլանների՝ ավետարանների ու շարակնոցների խաղաղությունը. և բնդհակառակը, ավելի պարզ է՝ բնդհանուր առմամբ նշանագրության բարդ հյուսվածքով աշքի բնկած ժողովածումների՝ մանրուսումների և գանձարանների խաղաղությունը:

Այսպիսիք են զարգացած ավատատիրության շրջանին վերաբերող խաղաղություն բազմաթիվ գրչագրերի համեմատական վերլուծության արդյունքները:

3

Կարծվածից ավելի հարուստ ու բարդ է հայկական ուշ միջնադարի երաժշտա-մշակութային շարժումների ներքին բովանդակությունը¹²⁵: Եվ խաղաղության ու մասնագիտացված երգարիխութիւն բնագավառներում այս շրջանում կատարվածը նույնուր արժանի է ամենալուրջ ուշադրության: Շիշտ է, խաղաղությունն այժմ ըստ էության չեր կատարելագործվում, բայց շարունակվում էին խաղաղոր երգարանների վրա տարվող աշխատանքները, նպատակ ունենալով (ինչպես ցույց են տալիս մեր դիտումները) փրկելով միաձուլել կիլիկյան ու հայաստանյան լավագույն ավանդույթները: Այսուհետեւ, հոգեոր երգաստեղծությունը ստեղծագործական առաջընթաց չեր ապրում, աական շարունակում էր կենդանի մնալ, —թեկուզ «սեփական յուղի մեջ տապակվելու» միջոցով, — երգեցողությունը՝ որպես տրված շարժումակառուցվածքները ստեղծագործորեն վերաբարտադրելու արվեստը: Վերջապես նիշտ է, որ այդ արվեստը զոյատեսում էր անցյալի հարուստ ժառանգությունից փրկված թեև կարեռը, բայց սահմանափակ մի շրջանակում, և խաղաղոր երգարանների գործնական նշանակության նվազման պայմաններում: Եվ սական՝ ճիշտ է նաև, որ այն՝ սկզբունքորեն շխզելով փրկարեր խաղաղորված ժողովածուների հետ, միաժամանակ, քննարկվող պատմաշրջանի վերջում հայտնվեց ի նորո ճյուղավորված ձևով՝ առնվազն հինգ տարրեր երգվածքներով (էջմիածնի, Կ. Պոլսի, Երուսաղեմի, Նոր Ջուղայի և Վենետիկի): Եվ ահա, առաջին հայացքից զարմանալի թվացող այս երևույթը, ի վերջո, բացարվելու է՝ նույնիսկ միատեսակ խաղաղորված զրական բնագրերն երաժշտականորեն տրված սահմանների մեջ¹²⁷ ստեղծագործական որոշ ազատությամբ մեկնարանելու կատարողական հնագույն ավանդույթներով:

Անհրաժեշտ է նշել, որ հայկական երաժշտա-մշակութային զարգացման մայրուղին Կիլիկիայից դուրս գալուց հետո էլ դեռևս երկար ժամանակ շարունակվել է կիլիկյան ավանդույթների բարերար աղղեցությունը հայ իրականության վրա, ինչպես բուն Հայաստանում, այնպես և գաղթավայրերում (նույնիսկ հեռավոր Ղրիմում), նաև շահեկան է իմանալ, որ Սսի ու էջմիածնի

¹²⁵ Հմմտ. մեր հոգվածը՝ Թննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, «Լրաբեր» (Հայ. գիտ.-ների), 1971, № 9, էջ 27—40:

¹²⁷ Այդ սահմանների որոշումը անհնարին չէ, թեև շափառանց դժվար է: Թանի որ դրանք ևս շարժումական են և կախված են ոչ միայն հաստատադրված զրական բնագրերի կառուցվածքից, ասյն զանակային նշումից և խաղաղորերի տեղաբաշխությունից, այլև ժամանակի ու տարածության մեջ, ինչպես և սոցիալապես հարընդմիշտ զարգացող ստեղծագործական-կատարողական ազգային ոմից:

Հոգեոր պետերի միջև երբեմն-երբեմն ծաղած վեճերի ընթացքում շոշափվել են գրչության ու երաժշտական արվեստների կիլիկյան դպրոցի առաջնության խնդիրները ևս: Այսպես, օրինակ, Սիմեոն Բ Արեւելու թղթում, ուղղված Փելիպոս Աղքակեցուն, կարդում ենք. «Ահա գրչութիւնն յայտնի է ընդ ամենայն տեղիս, մանաւանդ բազում գրեանք, որ առ ձեզ են: Եւ երաժշտութիւնն յայտնի է, զի ընդ ամենայն աշխարհ ցրուեալ է, որպէս յԱսպահան հաշատուր վարդապետն, որ ի Վասիլ Կողբակոպոսէն էառ զպաշտմուն և ես զկարդ քահանայութեան, որպէս ասեն՝ Սաղմոսն ի Մշայ՝ խազն ի Սսայ» և այլն¹²⁸:

Սակայն, մինչ հոգեոր պետերն այսպիս վեճերի միջ են եղել, խաղաղություղ-գիտնական ու երգիշ-կատարող մասնագետ երաժշտները անազմունկ կարեոր հարցեր են լուծել: Սկսած XV դարից, նրանք՝ դպաստ մոտեցմամբ, աշխատել են ընդհանուր հայտարարի բերելով միաձուլել կիլիկյան ու հայաստանյան ավանդույթները¹²⁹: Գործը նախաձեռնողներն այս գեպքում ես եղել են Մեծովեցին, Խլաթեցին ու նրանց հետեւորդները: Քանի որ քննական ձուացում հանդես բերելով դեպի կիլիկյան ավանդույթներն ու ձեռագրերը, նրանք, ընդհանուր առմամբ հենվել են նույն այդ ավանդույթների ու ձեռագրերի վրա¹³⁰: Սույն եղանակով ստեղծված գրչագիր մատյանները,—որոնց թվում փրենց արժանի տեղն ունեն նաև XV հարյուրամյակի կեսերին ծաղկած նշանավոր երգիշ, «մեծ փիլիսոփիայ»¹³¹, խաղաղետ, գրիշ և պատմիշ, Աղթամարի վանքի միաբան Մինասինց թովմա վարդապետի դադափարած ավետարանները, Գանձարանը, Մանրուսոամը, Մաշտոցը, Նարեկը և այլն¹³²,— տարածվել են որպիս հայաստանյան ուրույն խմբագրություններ և ավելի ուշ դարձյալ հարաբերակցվել կիլիկյան ժողովածուների հետ: Արգլունը եղել է

128 Հ. Տաշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննայ, 1895, էջ 359 (ժողովածու տիպի № 90 ձեռագրի 41ա էջը): Հատվածն առաջ բերելուց հետո Տաշյանն ավելացնում է. «թղ. 41թ—երկար կտողվին այն ամեն եղիսկոպոսունք, որ Սուն ձեռնադրությունն առին, որոց մեջ կհիշվի նաև «Թորոսն կաֆայու» և այլք: Այս ամեն կետերուն համար ամեն կողմանէ ուշադրության արժանի է նամակու»:

129 Երեսի մեջբերման ընդգծված վերջին խոսքերը—«Սաղմոսն ի Մշայ՝ խազն ի Սսայ»—միշնադարյան հայտնի առած-ասացվածք են ներկայացրել: Եվ այնքան տարածված՝ որ բանագետ Ա. Ղանալանյանը մեր օրերում իսկ այն լուսու առիթ ունեցավ (մշեցիներից) ու զրի առավ: Հմմտ. նրա՝ Առաջանի, Երևան, 1960, էջ 326:

Տաշյանի Յուցակում «ետագեց բառը «խաչն» է կարդացվում, որ հավանաբար տպագրական վրիպակ է:

130 Ինչպես որ կիլիկյան երաժշտական ողջ մշակույթն էլ, իր հերթին, որիշ բան շեր, բան եթե Հայաստանում սկիզբ առած ու զարդացած մի ամբողջ շարք երեւլիների մեկտեղված, օրգանական շարունակությունը:

131 Հմմտ. Հ. Անայան, Հայոց անձնանունների բառարան, Հայ. Բ., Երևան, 1944 էջ 334—336:

132 Տամոր. մեր Մատենադարանում ունենք Մինասինց թովմայի դադափարած ավետարաններից նմուշներ (ձեռ. №№ 4436 և 4829) և գանձարանը միայն (ձեռ. № 5521):

այն, որ ավելի ևս խորացել ու ընդլայնվել է կիլիկյան ու հայաստանյան նվաճումների մեկտեղման բեղմնավոր փորձը:

Այս կապակցությամբ նախ ասենք, որ ուշ միջնադարում որակյալ խազաղեաները նվագել են, քայց երբեք էլ շեն անհետացել, այլ գոյություն են ոմեցել նույնիսկ մեր մշակութային այն կենտրոններում, որոնք հատկորոշվում են առավելագույն լճացմամբ։ Մի կողմ թողնելով խազավոր նախօրինակ դրագրերը բանիմաց կերպով և կամ քիչ թե շատ համեստալով գաղափարելու արհեստն, այստեղ խոսում ենք տարբեր տիպի երգարաններ մասնագիտուններուն (և, ըստ Հարկին, ի նորո) խազավորելու, այլև խազավորված քնագիրը ընթերցելու-կատարելու, զրանով սովորելու և սովորեցնելու արվեստի մասին, որ հարատեև է ընդհուպ մինչև XVIII դարի վերջերը։ Դա մենք պիտենք թե խազավոր գրչագրերի համեմատությունից, և թե մի ամրող շարք խոսուն հիշատակարաններից։

Ահա, Բերկրիում 1424-ին գաղափարված Շարակնոցի գրիչ Հակոբը հաղորդում է. «աղաշեմ յիշել ի տէր և զիս զանիմաստ գրիչս զՅակոր և զծնաւզոն իմ։ Նաև զհոգեոր որդեակս իմ, զԴրիգոր դպիր՝ որ բազում աշխատանք ունի ի տուն տալ խազելոյն»¹³³, Նմանապես, Արգելան մենաստանում (Տարբերունիք) 1464-ին ընդօրինակված Շարակնոցի գրիչ Ղազարը հարմնում է. «Դարձեալ, աղաշեմ զձեզ սուրբ Հայոք և եղբարք՝ զսուտանուն երէց զԱզարիա, որ զՇարակնոցս խազեցի և զսակաւ յիշատակարանս գրեցի, և զՄկրտիչ կրաւնաւորն, և զծաղկով վարպետն զՄինաս կրաւնաւորն, և զՅակոր կրաւնաւորն, որը աշխատեցան ի տուն տալ խազին [յիշեցէք]»¹³⁴:

Պատմական Հայաստանի անհայտ գյուղերից մեկում իսկ, 1466-ին գաղափարված Շարակնոցի գրիչ Ստեփանոսը հավաստում է. «Ո՞վ եղբարք, յոր ժամանակս յարգէք զսուտանուն զՍտեփանոսն յիշեցէք... Գրեցօ եղանակս ձեռամբ սուտանուն քահանալիս Ստեփանոսի»¹³⁵:

Այս բոլոր «խազողները», եղանակները «զրողները» և կամ խազավորմանը «տվողները» (իմա՞ մեղղդիները խազերով տուն առ տուն նշանագրողները) իրենց վրա են վերցրել ստեղծվող ձեռագրի խազավորման պատասխանատվությունը այն բոլոր դեպքերում, երբ նախօրինակ զրչագրի նշանագրությունը բավարար չի համարվել, և կամ պարտավորեցնող ոչինչ չի ունիցել խազագրության արվեստի մակարդակի տեսակետով։ Իսկ անցյալից ժառանգված երեկի նախօրինակների նկատմամբ այդ երաժիշտներն ուրիշ մոտեցում են հանդես բերել։ Որպես հիմք կամ ելակետ վերցնելով նման նախօրինակը, նրանք ձշդրտել են խազագրությունն այն հաշվով, որ համաձայնեցված լինեն նախօրինակում նշանագրվածն ու իրենց իմացածը։ Գամբաց երկրի ևնձորի գյուղում 1562-ին «Խլկցի» նախօրինակից գաղափարված Շարակնոցի հիշատակարանում կարդում ենք. «Եւ այսու աւրինակս Գրիգոր՝ մականուն ևու կոչի, զրած նորա. և եղանակեալ նշգրտեցաւ ձեռամբ Կոստանդիայ քարմատար գրչի»¹³⁶,

¹³³ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8599, էջ 327ա:

¹³⁴ Լ. Խաչիկյան, «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ 279։

¹³⁵ Նույն անզում, էջ 255։

¹³⁶ Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 1612, էջ 375բ (ընդգծումը մերն է—Ն. Թ.):

Անհրաժեշտ է նշել, որ Ախլիկիայում Գրիգոր անունով երաժիշտ-խազագրետ ուրիշ զրիչներ

Առարկայականորեն դատելով երդիչ-խաղաղետ Կոստանդին զրչի սույն աշխատանքը, տվյալ ձեռագրի սահմաններում, հանգեցրել է կիլիկյան և Հայաստանյան ավանդությների համաձայնեցմանն ու միաձուլմանը։ Չենք կարծում, որ մասնագետ երաժիշտը տարերայնորեն արած լիներ դա։ Եվ բոլորովին դատ խնդիր է, թե սույն ու նման գործերի կատարմանն ինչ մտկարդակ էր պարտադրում առհաստարակ ուշ միջնադարի ընդհանուր վիճակը, անգամ ժամանակի հմտւություն են ունեցել վերոհիշյալ ավանդությները մերձեցնելով ընդհանուր հայտարարի բերելու որդիշ միջոցներ ևս։ Այս է՝ տվյալ երգարանը գաղափարելիս հաշվի առնել նույն ժողովածուի խաղավորում ունեցող երկու (երբեմն և ավելի) տարրեր խմբագրություններ, երկուսից էլ վերցնելով լավագույնը։ Ասենք՝ գաղափարման-խաղավորման գործում ոյս կարգի մոտեցման մենք հանդիպում ենք տակավին XIV դարում։

Գալու անապատում 1325-ին Սիմեոն գրիշը մի խաղափարի, հիշատակարանում տեղեկացնելով հետևյալը. «Բայց զրեցաւ առ ի լաւ և ի ստոյդ աւրինակաց երկու[ց]՝ Կոստանդինայ] և Վաւել[ընցոյ]՝ զոր էր զրեալ Գրիգոր Զորոսկ»¹³⁷, Ինչպես արդեն գիտենք, երկու անվանումներն էլ խաղարքի ուրույն խմբագրություններ են մատնանշում, բայց որում երկրորդը՝ Արքակաղնի գարոցին վերաբերող խմբագրություն¹³⁸. Այս դեպքում, ուրեմն, երրորդ խաղափարն ստեղծվել է կիլիկյան երկու նախօրինակների հիման վրա։

Աշխատանքի նույն եղանակը քննարկվող պատմաշրջանում ուղղված է եղել այլազան երգարանների՝ կիլիկյան և հայաստանյան խմբագրություններից «երրորդը» ստանալու նպատակին։ 1503-ին գաղափարված մի ժողովածուում (գրիշ՝ Հովսեսի) զետեղված մանրուսման հիշատակարանում կարդում ենք. «ստուգեալ յերկուց աւրինակաց. ի Սրբոյն¹³⁹ և թ՝ Մինասենց տէր Թումի օրինակէն»¹⁴⁰; Արդ, այս «տէր Թուման» վերոհիշյալ անվանի երաժիշտ վարդա-

էլ են զործել։ Ականց անապատում 1312-ին Ներսես քահանան ընդօրինակում է մի ընտիր Շահակնոց, «ի թագաւորութեանն Հայոց Աւշինի, և ի հայրապետութեանն տեսան Կոստանդինայ», որն և խաղագրել և ծաղկել է Գրիգոր գրիշը։ Վերջինս զրում է. «Ո՛ եղբարք, եղբարք, աղաշեմ յիշել զեղկելի զրիշ Գրիգոր գալիք, որ զգիրս խաղեցի և զարդարեցի ոսկով և ծաղկիւ (և Խաշիկյան, ժԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 87—88)։ Ուշ միջնադարում այս Գրիգոր գրիշին շփոթել են Խուլի հետ։ Մեր Մատենադարանի № 1612 Շարակնոցը զննելիս մենք միշտ էլ կասկածել ենք. նույնը չէ՝ պարագան նաև այսուեզ։ Բոլոր դեպքերում, սակայն, Կոստանդին «թարմատար գրիշ» անհատական մոտեցումը գործին, և նրա ձգտումը համաձուկի կիլիկյան և հայաստանյան երգալիքին ավանդությները՝ լեն կորցնում իրենց էական նշանակությունը։

¹³⁷ Լ. Խաշիկյան, ժԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 197—198 (Երկրորդ անվան հապավումը մենք ենք բացում—ն. թ.)։

¹³⁸ «Յիշեցար ի տեղագրին Արքակաղնոյ,—զրում է Ալիշանը,—զի երգարան նրբից եղանակաւոր բանից Մանրուսմունք կոչի, և ընտիր օրինակ զրոցն վաւելընցի, ու պիտօն յանո՞ւն տեղույթ, եթէ հեռ և բաշի ուրումն երաժշտի մականուամբ» («Սիսուան», էջ 517)։ Մենք հակված ենք կարծելու, որ միշտը վերջինն է։

¹³⁹ Բնագրում՝ «սըսցեցն», որ ակնհայտնի գրիպակ է։ Մինչդեռ «Սըսցոյ» ձնը, որպես «եւկցի» խմբագրության երկրորդ՝ «Սըսեցի» կամ «Սըսցի» անվանակության հոլովումը, ձեռագրերում հանդիպում է։ Օրինակ՝ 1406-ին (Տաթևում) ընդօրինակված Շարակնոցի հիշատակարանում. «ի լաւ և յըստիր աւրինակէ Սըսցի, որ էր զրեալ ձեռամբ բազմարուեստ զրչի Գրիգոր գալրի, մականուն Խուլ կոշեցեալ»։ Հմմտ։ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, էջ 60։

¹⁴⁰ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2033, էջ 284ա.

պետ Մինասենց թովման է: Նրա գաղափարած մատյանները զրշության արվեստի առումով վերաբերում են մեծոփյան դպրոցի ոլորտին՝ խաղաղության ահակետով՝ ներկայացնելով ուշ միջնադարյան մակարդակի և ուղղվածության ընորոշ դրսնորումներից մեկը:

Վերանորոգության երկու հարյուրամյակների ընթացքում (XVII—XVIII դդ.), երաժիշտ-խաղագետ (թող որ նվազած) մասնագետ զրիչները նույն ուղղվածությամբ առաջ են տանում մելոված աշխատանքները: XV—XVI դարերի զրիչների օրինակով, նրանք՝ բռն նշանագրության ասպարեզում ավելի բայց են հատկացնում օժանդակ նշաններից կետին և զույգ-կետին¹⁴¹: Աշխատում են, այսպես առնենք, վակագծերից դուրս բերել զարգացած ավատատիրության շրջանում ինքնըստինքյան հասկանալի համարված միշտը իրակություններ¹⁴²: Շարունակում են, երկու կամ ավելի նախօրինակետերի առավելությունների հաշվառման հիման վրա, ստեղծել զրշագիր մատյաններ, որոնք ընդունելի լինելու համահայկական շափանիշերով: Բայց այս կարևորագույն գործում որոշ խզում է նկատվում, մի կողմից՝ ողջ երկրով մեկ մղձավանշային ժամանակներ ապրած և այժմ վերակենդանության ձգտող գործնական ընդհանուր պաշտոներգության, և մյուս կողմից՝ խաղավորող ժամանագետ զրիչների կատարած աշխատանքների միջև, որոնք հասցեագրվում են հին տիպի համարսարաններում ուսած երգիչներին: Իրոք, վերանորոգության դարերին հատուկ հարաբերական վերելքը շարժում առաջ շրերեց այդ տիպի երաժիշտների շրջանակներում: Բայց որ այդպիսիք կային տակավին՝ վաստ է¹⁴³:

141 Զեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, օրինակ, որ նախկինում և կամ այլուր առանց կետի գծագրված խաղանշանը, ավյալ միշտավորում և, ասենք, հիմնամյակում, նույն երգի նույն վանկի վրա ստանում է մեկ կետ. և ուրիշ տեղում ու այլ ժամանակ՝ զույգ կետ: Հեռուն շզնալու համար՝ այստեղ բազգատենք վերոբերյալ «Սառ կենաց» երգի առաջին վանկի նշանը հետեւյալ երեք ձեռագրերում: Տվյալ զետքում, երեքի մեջ ևս սուրբ կոշիկող նշանն է, բայց առաջինում (Մատենադարան, ձեռ. № 9838, էջ 6ա, Շարակնոցի նոր՝ 1526-ին ընդօրինակված մասից՝ A) «սուրբ» առանց կետի է: Երկրորդում (Մատենադարան, ձեռ. № 1609, էջ 5ա՝ B) այց «սուրբ» մեկ կետ ունի: Եվ երրորդում (ձեռ. № 5114, էջ 4ը՝ C) երկու կետ: Այս.



Գույ ընդհանրապես՝ կետերի ճոխ զորժածության ամենաբնորոշ օրինակները հանդիպում են ամենաբներում և խաղաղքերում:

142 Այդ կարգի իրակություններից մեկն է խաղավորված որևէ ընադիր շափանմուշ ծանոթ եղանակի (վերջինս ըստ գրական բնագրի կառուցվածքի ու երաժշտական ավյալ կապակցության) հիման վրա հնշեցնելու ավանդույթը: Ուշ միջնադարի պայմաններում, երբ ճիշտ հիշյալ ավանդույթը աստիճանաբար թուլանում էր, նրա կենցաղավարման ժամանակը երկարացնելու հոգատակով անհամատ շատանում են համազատասխան լուսանցագրությունները, հատկապես Դանձարաններում:

143 Բավական է հիշել թեկուղ ԽVIII դ. ապրած եփրեմ երաժիշտ վարդապետին ու նրա աշակերտներին: Ֆնշակն զրում է երաժիշտը, իր պատվիրած խաղաղոր տաղարանի հիշատակաւանում:

Վերանորոգության դարերը, սակայն, մի ուրիշ և մեծ նորություն բերին իրենց հետ. տպագրության տարածումը հայ իրականության մեջ. Դա լայն հնարավորություններ էր ընձեռում հրապարակ հանելու ահազին քանակությամբ միատեսակ մասույաններ, որով և, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, հավասարեցնելու սովորություններն ու ավանդությունները պաշտոններության բնագավառում: Վաղուց փ վեր այդ նպատակը հետապնդող ու այդ պատճառով էլ երաժշտա-հասարակական աշխատանքների լծված լուսամիտ գործիչները շհապաղեցին նախաձեռնելու հայ խաղաղրությունը ձեռագրական աշխարհից տպագիր գրքին փոխանցելու շնորհակալ գործը: Եվ դա՝ խաղաղորդ գրչագրերով ավելի գործնականորեն՝ պաշտոններգության առօրյա ընդհանուր պահանջների հաշվառմամբ, որադվելու մի նոր առիթ ու խթան հանդիսացավ: Հիշյալ գրիչներից և նրանց զլուս բերած հրատարակություններից այստեղ մեզ առաջին հերթին հետաքրքրում են Ասկան վարդապետն ու նրա լույս ընծայած Աստվածաշունչը, Շարակնոցն ու Ժամապիրքը:

Նախ հիշենք՝ մեր անդրանիկ հրատարակիչների առաջ ծառացած արհեստագիտական դժվարությունները: Հատկանշական է, այս տեսակետով, մեր տպագիր առաջին գրքերի ընդհանուր վիճակը՝ նրանցում հայոց լեզվի կետադրության ու առողջանության նշանների կիրառության առումով: Մեր հնատիող գրականության վրա հարկանցի ակնարկ իսկ նետելով նկատում ենք, որ նրանում հիշյալ նշանների գործածությունը արմատավորվել է աստիճանաբար և զրեթե այն ձևով (միայն, հասկանալի է, ավելի արագ մի ընթացքով), ինչպես դա տեղի էր ունեցել դարեր առաջ, նույն նշանները ձեռագրերում կիրառության մեջ դնելու ժամանակ¹⁴⁴: Տպագրիչների կողմից հաղթահարվելիք կարեվորագույն խնդիրների թվում եղել են նաև հրատարակության պատրաստվող այս կամ այն բնագրի ձեռագրերի քննությունը. Համեմատություն, ընտրություն և ի հարկին ուղղումներ կատարելը, թե որպես բնագրագետ, և թե որպես զրության արվեստի գիտակ ու խաղաղետ: Արդ՝ գործնական պաշտոններգության առօրյա պահանջների տեսակետից՝ առողջանության նշաններ պարունակող ձեռագրերում և խաղաղորդ գրչագրերում կողմնորոշվելու փորձին ընդհանուր առմամբ հատուկ է եղել հիշյալը: Մեր գործիչները բավական հստակ գաղափար են ունեցել ձեռագրի-խաղաղորդ Շարակնոցների մասին, և դժվարացել են բարդ ու խիտ խաղաղորդած ժամագրքեր, պատարագամատույցներ,

Առա գոն գրեալ մեղեղիքներ,
պարտ և պատշաճ առաջ և գանձեր:
Սովոր երգեն վարդապետներ,
Վաղցրանուագ հունակներ:
Ուսուցանեն աշակերտներ,
զարկ: զիր և լիրկ, բենկորձաներ...
(Մատենադարան, ձեռ. № 7717, էջ 258ա):

¹⁴⁴ Ծորչ կես դար տեսած այդ ընթացքը («Պարզատումարի» տպագրությունից մինչև «Յիսուս որդի» պոեմի 1660-ի Ամստերդամյան հրատարակությունը) հակիրճ քննել ենք ժամանակին: Հմմատ, մեր «Բական վարդապետն ու խաղաղորդության արվեստը» հոդվածը («Էջմիածին», 1966, № 11—12, էջ 159—160):

մանրուսումներ, գանձարաններ, ինչպես և մեղեղիապես հարստացված, ճոխ թվերգ ենթադրող և համապատասխանաբար նշանագրված աստվածաշնչեր ու ավետարաններ ուսումնաժիշտելիս¹⁴⁵:

Առհասարակ ողջ ուշ միջնադարի (ու նաև հետագա ժամանակների) համար բնորոշ այս գծերն արտացոլված են Ոսկանյան մեզ հետաքրքրող երեք հրատարակություններում ևս: Աստվածաշնչում (ինչպես մարդարեական գրքերում, այնպես և ավետարաններում) օգտագործված են հոգեոր թվերգի գրեթե բոլոր հիմնական նշանները, և ընդհանրապես՝ բանիմաց կերպով: Առհասարակ այստեղ պահպանված է մի մակարդակ, որն առ այսօր գերազանցված չէ տակավին¹⁴⁶: Միայն XIII—XV դարերի ընտիր աստվածաշնչերի և ավետարանների համեմատությամբ է, որ Ոսկանյան այդ տպագրությունը, ամբողջության մեջ, զիջում է թվերգի նշանագրության իր մակարդակով: Իսկ առանձին հատվածներ, ինչպես օրինակ մեզ արդեն ծանոթ ընթերցվածք բաղկատելիս, առաջին հայացքից որոշիչ տարբերություններ նույնիսկ չեն էլ նեկատվում¹⁴⁷:

Ուրիշ՝ ուժ նմանեցուցից զմարդիկ
ազգիս ալոսորիկ ։ և ուժ իցեն նմանողք:
նմանք են մանկուոյ որք ի հրապարակս
նոտիցին. կարդալցեն զմիմեանս և ասիցեն:
փողս հարաք ձեզ և ոչ կաքաւեցիք:
ողբացաք և ոչ լոցիք:

Հարակնոցի հրատարակությանը կապված աշխատանքների մասին խոսելիս, Ոսկան վարդապետը հիշատակարանում նշել է լոկ լեզվա-քերականական տարրեր կետեր: Մատյանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, սակայն, որ նրա վրա լուրջ ու արդյունավոր ջանքեր են թափվել՝ խաղավորությունը ևս խնամքով և օրինակելի մակարդակով վերաբտադրելու համար: Ըստ բոլոր տվյալների՝ որպես տիպ վերցված գրչագրի ընտրությունը կատարվել է հմտարար: Նրա խաղավորության տարրերը նախօրոք, ըստ ամենայնի, զիտակցվել ու տարբերացվել են. բժախնդրություն է ցուցարերվել խաղանշամների տպագրական գծագրաձևերին պարզություն, գեղեցկություն, հստակություն և նույնիսկ՝ ինչոր հնուց եկող «գրչագրական» հարագատ նկարագրի հաղորդելու առուանով. և որ գլխավորն է, նախատիպ գրչագրի խաղավորությունը տպագրին փոխանցվել է:

145 Տվյալ դեպքում հիմնական դժվարությունը կայացել է՝ կետադրության և առողանության նշանների առավելաբար երաժշտական (և ոչ թե հավասարապես՝ երաժշտա-քերականական) կիրառության հանգամանքներում կողմնորոշվելը:

146 Աստվածաշնչի Զոհրապյան հրատարակությունն իսկ, թվերգի նշանների կիրառության առումով համարյա թե կրկնում է Ոսկանյան հրատարակության պատկերը:

147 Հմմտ՝ Աստուածաշնչ Հնոց և նորոց Կտակարանաց ներպարունակող, Յամստերդամ, 1666, էջ 511:

լավատեղյակ, հասկացող ձեռքերի միջոցով։ Այս բոլորի շնորհիվ, հայ գրադիր շարակնոցների խազագրությունը տպագիր գրքին անցել է, եթե կարելի է ասել, նվազագույն կորուստներով։ Որով Ռոկանյան (այն է՝ մեր խազագործագիր առաջին) Շարակնոցը, մի կողմից՝ համեմատության շատ եզրեր է ձեռք բերում ձեռագիր նույնատիպ ընտիր ժողովածուների հետ, և մյուս կողմից՝ անջրելի տեղ ապահովում իրեն՝ տպագիրների շարքում։ Այն՝ խազագրության առումով յուրահատկություններ ևս ունի, որոնց մասին նախնական գաղափար կարող ենք կազմել համեմատությունների ոլորտը ներբաշխած «Ծառ կենաց» վկ. ճաշուի առաջին սողերի քննությունից¹⁴⁸:

Ծառ կենաց տընկեալ յառին սուրբ կոյս.
որ ըզհայրածինըն բըղիսեցեր զծաղիկ. և
ետու որ իժժամու զորդին պըժառու մարդկան.

Այստեղ առաջին վանկի խազն, օրինակ, կետավոր «Երկար»-ն է՝ ուստի և տարբեր՝ վերն համեմատված կտորներից, ուր տեսանք, համապատասխանաբար, «խոսրովացին» և զույգ-կետավոր «սուր» նշանները¹⁴⁹։ Որոշ տարբերությունների հանդիպում ենք Ռոկանյան Շարակնոցը նաև հետագա տպագիրների հետ համեմատելիս։ Բայց դրանք մանրամասներ են։ Իսկ ամբողջապես առած՝ Ռոկանյան Շարակնոցը մի նոր ու մեծ քայլ է ընդհանուր պաշտոններության շրջանակներում շարականների զանգվածը անկորուատ վերաբռնագրելու և դրանց կատարումը միասնական հունի մեջ դնելու ճանապարհին։ Նույնը շենք կարող անվերապահորեն կրկնել Ռոկանյան Ժամագրքի կապակցությամբ։ Սակայն, նրա հրապարակումը ևս, միասնականացման նույն միտումի թե՛ ընդհանուր, և թե՛ մասնավորապես երաժշտական կարևոր արտահայտություններից մեկն է անկատեած։ Ճիշտ է նկատում վ. Հացունին, նաև Ռոկանյան Ժամագրքի քննության կապակցությամբ, թե՛ ամեր Աղոթամատույցն այս շրջանիս գտած է արգեն իր լրումը՝ նկատմամբ այժմու վիճակին», և թե՛ առավագրությունն էր, որ ամենուն ձեռքը պիտի տար միենույն քնագիրը, ու պիտի հավասարեցներ սովորություններն ալ»¹⁵⁰։

Երգարանիս «Յառաջարանութեան» մեջ ինքը Ռոկանն այն անվանում է՝ «զբազմանաւայ մատեանս գայս, որ աստի և անտի հաւաքեալք են ի մի վայր, առ ի դիւրահասութիւն թերակատարից՝ և ի յօժանդակութիւն տհասից և

¹⁴⁸ «Երաժշտական երգեցմունք հոգևորականք...»։ Ամստերդամ, 1665, էջ 9։

¹⁴⁹ Անհրաժեշտ է նշել. ձեռագրերի քաղցատությունից երեսում է, որ «Երկարը» ավելի հաճախ «խոսրովացինին» է փոխարինել (այլագրության կամ սխալմունքի պատճառով, և կամ գիտակցված կերպով), քան թե սուրբին։

¹⁵⁰ Վ. Հացունի, Պատմություն հայոց Աղոթամատույցին, Վենետիկ, 1965, էջ 315 և 340—341։

պակասակրթից»¹⁵¹: Ընդգծված խոսքերը նկատի ունեն ոչ միայն այն, որ մեզ հետաքրքրող առենի մեծ ժամանակը ներփակում է (բացի «Հասարակաց ազօթքի» կարգավորությունից) Սազմուարանը, Տոնացույցը, ժամանակարարության խրատներ ու այլ փոքր նյութեր ևս: Քննությունից պարզվում է, որ ժամանակի խաղավոր հատվածներն էլ Ասկանը քաղել է տարբեր աղբյուրներից, մի շարք խաղագրություններ նա փնտրել է, բայց չի գտել և այլն¹⁵²: Չենք կարող պնդել թե՝ Ասկանի օգտագործած ձեռագիր աղբյուրները (Հիմնականում խաղաղատրեր և խաղավորված ժամանակեր), այս գելքում ևս ընտիր են եղել¹⁵³: Անկախ զրանեից, Ասկանը ժամանակի հրատարակության կապակցությամբ խաղագիտական ուշագրաւ աշխատանք է կատարել¹⁵⁴: Ու զիսավոր գծերի մեջ կանխելով հետագայում ստեղծվելիք Զայնազրյալ ժամանակը շըրջանակները, նա լուրջ նպաստ է բերել «Հասարակաց աղոթքին» միակերպություն հաղորդելու ընդհանուր գործին: Դա ժամանակաշրջանի հրամայական պահանջներից էր: Դրան հետամոտ եղավ նաև Սիմեոն Երևանցին, որ XVIII դարի 10-ական թվականներին, վերջին անգամ վերանայելով, հրատարակեց հայոց Տոնացույցը. ու իր հմուտ սարկավագներից մեկին Պոլիս ուղարկեց՝ հոգնոր եղանակների միակերպ կանոնավորությունն ապահովելու համար: Եվ դարձյալ՝ նույն գործին հետամոտ եղավ նաև Գևորգ Դ-ը, որ հարյուր տարի անց իրազործեց ձայնապրյալ Պատարագի, ժամանակի ու նարակնոցի հրատարակությունը, պաշտոնական վավերացումն ու տարածումը:

Սակայն հակառակ ողջ ուշ սիցնադարի բազմապիսի շանքերին՝ ուղղված միաձեռության հաստատմանը, XVIII—XIX դարերում մենք ունեցանք այս հոգեոր երաժշտության տարբեր երգվածքների՝ նույն ուշ միջնադարի պայմաններում կազմավորված հինգ մեծ ճյուղեր: Էջմիածնի (որ և մեր կարծիքով հիմնականն է), Կ. Պոլսի, Նոր Զուղացի (կոչված նաև Հնդկահայոց), Երուսաղեմի ու Վենետիկի¹⁵⁵: Ինչո՞ւ է բացատրվում առ. մասամբ՝ խաղագրության արվեստի գործնական նշանակության նվազմամբ, մասամբ էլ (և սա շատ կարևոր է) խաղագրության արվեստի ընձեռած այն հնարավորությամբ, որով խաղավոր միևնույն ժողովածուներից օգտվող տարբեր կենտրոնների երգիշներ կարող էին խաղավորված միևնույն զրական բնագիրը որոշ շափով տարբեր եղանակել, տարբերակել՝ համաձայն տվյալ տեղական ավանդությունի:

¹⁵¹ «Գիրք ժամանակարգութեան որ կոչի առենի», Մարսել, 1673, էջ 3 (ընդգծումը մերն է— Ե. Բ.):

¹⁵² Այսպիս, Ասկանը չի գտել, օրինակ՝ «Աշխարհ ամենայն», «Առաւոտ լուսոյ» և նման, անգամ շատ տարածված երգերի խաղագրությունները: Մինչդեռ զրանք կան, ասենք, էջմիածնում 1686-ին Եղիազար կաթողիկոսի պատվերով գաղափարված ժամանակը, որ պարզ է, թե պատճենված է ավելի հին մի նախօրինակից (Հմմտ.՝ Մատենադարան, ձեռ. № 435, էջ 23ա):

¹⁵³ Անկասկած ավելի ընտիր նյութերի հիման վրա է կազմված XIX դարի վերշերում իզն. Կյուրեղյանի հրատարակած խաղավոր ժամանակի բամագիրը: Հմմտ.՝ Կարգաւորություն հասարակաց ազօթքից Հայաստանեաց եկեղեցւոյ, Վենետիկ, 1898:

¹⁵⁴ Մասնավորապես՝ տաղագրական զյուրըմբունելի մայրեր ձուլելու նպատակով, նա գիտակ մարդու նախաձեռնությամբ տարանշատել է զրագրերում միացյալ զրությամբ և կամ կապիսազի սկզբունքով գծագրված բարդ նշանախմբերի այլապես դժվար հասկանալի բազագրիչները: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մեր վերոհիշյալ հոդվածը Շմեկան վարդապետն ու խաղագրության արվեստը», «Էջմիածն», 1966, № 11—12, էջ 166—167:

¹⁵⁵ Հիշյալ երգվածքներից միայն Երուսաղեմինը զարմանալիորեն հրատարակված է տակապին: Սակայն մենք մի ընդհանուր գաղափար, համենայն զեպս, ունենք նրա մասին:

* * *

Մեկ հայացքով ընդգրկելով ողջ միջնադարը, նկատում ենք, որ խազավոր ժողովածուներին համահայկական շափանիշերով միակերպություն հաղորդելու գործնական ձգուամները՝ ծագելով XIV դարի վերջերից և XV-ի ակզբներից, որոշակի արդյունքների հանդեցրել են մի ժամանակ, երբ անցյալի հայ մասնագիտացված երգաստեղծությունն ու երգեցողությունն արդեն տվել էին քանակական ու որակական զգացի կորուստներ: Բուն խազագրության արվեստը ևս անդրադարձնում է այդ ընթացքը: Վաղ միջնադարը (և նույնիսկ մի քիչ տվելի ուշ՝) այդ արվեստի կազմավորման ժամանակն է դեռևս: Զարգացած ավատատիրության շրջանում մեր դեմ հառնում են փնչպես երգաստեղծության երգեցողության, այնպիս և համապատասխան խազագրության երկու դպրոցներ: Կիլիկյան և Հայաստանյան (մի կողմ թողնելով յուրաքանչյուրի ներսում տարբեր կենտրոնների ու դրանց հատուկ ավանդույթների խնդիրը): Եվ փաստորեն ուշ միջնադարում է, որ առաջ է տարվում դրանք միավորելու հեռանկարացին գործը (ավագ, աննպաստ պայմաններում):

Այս եզրակացությունը մեզ օգնելու է խազագրության արվեստի կառուցվածքի հարցերում ևս կողմնորոշվելու մեջ: Տեսանք, թե ինչպիս զարգացած ավատատիրության շրջանում Կիլիկիայում և Հայաստանում գրական միւնույն քնագրեր տարբեր են եղանակել և տարբեր են խազագրել: Ուշ միջնադարում, դատելով զարգացման վերը բնութագրված ողջ ընթացքից, դրական միւնույն քնագրերի միանման (կամ գրեթե միանման), և կամ միասնականացման միտումով փրագործված խազագրուամների հիման վրա տարբեր երգվածքներ են առաջացել. որով պարզ է, թե խազանշաններին կատարողական տարբեր մեկնաբանություններ են տրվել: Եվ դեռ,— ինչպես ակնարկել ենք արդեն,— եղել է երրորդ հնարավորություն ևս (այն է՝ նույն կամ գրեթե նույն բանն են երգել, քայլ տարբեր են խազագրել) այսինքն դարձյալ՝ խազագրերին տարբեր նշանակություններ են հատկացվել (այս հարցին կանորադառնանք հարմար առիթով, երբ կապարզվեն կիլիկյան և Հայաստանյան ներքին կենտրոններին վերաբերող զանազանությունները՝ երաժշտական ավանդույթների մակարդակի վրա): Երեք պատմաշրջաններին կապված այս յուրահատկությունները այնքան սահուն անցումներով են իրար հաջորդել, և երբեմն նույնիսկ այնքան ընդելուցված ձևերով են գործել, որ մասնավորապես ուշ միջնադարի ընթացքում անգամ բթացրել են խազագիտ-երգիչների արթնությունը, զգաստությունը, վտանգի զգացողության նրանց ունակությունները և թույլ տվել, որ խազերով նշանաբերուու և կարդալու արվեստի ճգնաժամք անազմուկ առղոտկի երաժշտական տարբեր շրջանակների մեջ: XVIII հարյուրամյակի ընթացքում հայ երաժիշտներից ոչ ոք չի սրել խազագրության արվեստի ապրած ճգնաժամքի հարցը: Եռկ Գապասաքալյանն է հատկացրել դա XVIII դարի վերջին և XIX-ի ակզբներին, և այն էլ փաստորեն անուղղակիորեն¹⁵⁶:

Եզրափակելով անհրաժեշտ է նշել, որ խազագրության պատմական զարգացման հարցերի հետազոտության մակարդակի բարձրացմամբ անկասկած ավելանում են նաև այդ արվեստի կառուցվածքի խնդիրների ուսումնասիրության հնարավորությունները: Այժմ ավելի ու ավելի հստակ ենք բմրոնում, որ

¹⁵⁶ Հմմտ. մեր Հոգվածը՝ Գրիգոր Գապասաքալյանի «Համառոտություն երաժշտականի գիտութեան» անտիու աշխատությունը, «Բանբեր Մատենադարանի», 1973, N 11, էջ 294—295:

տարրեր խազագրությունների վերծանության աշխատանքները շատ դեպքերում անօգուտ է. Հիմնել սոսկ խազագրության արվեստի զուտ արհեստագիտական (տեխնոլոգիական) կողմի իմացության վրա. Այստեղ հարկ է տեսադաշտում ունենալ նաև պատմական, դրական, բանասիրական, նույնիսկ ընդհանուր մշակութային կարգի մի ամրող շարք իրակություններ, որոնք լուսաբանեին տվյալ երգի հորինման տեղը, միջավայրը, ժամանակն ու այլ պարագաներ. նրա հեղինակային պատկանելությունը, տվյալ կենտրոնին ու դարաշրջանին հատուկ երաժշտագիտական միտքն ու արվեստի ճաշակը, հոկտորության, բանաստեղծության, երգեցողության, մանրանկարչության և ձարտարապետության բնագավառներում տիրապետած հովերը և այլն: Եվ այնուհետեւ՝ երգի վերծանությանը մոտենալ ստեղծագործությունները, տալով նրա հանկարծարանական տարբերակման՝ որիէ պատմաշրջանի ու միջավայրի չափացույցերով հնարավոր ձևերից մեկը:

Н. К. ТАГМИЗЯН

ИСКУССТВО ХАЗОВОГО ПИСЬМА В ЕГО ИСТОРИЧЕСКОМ РАЗВИТИИ

(Резюме)

Работы, проводимые ныне по хазоведению, настоятельно требуют более углубленного изучения временного, пространственного и социального развития искусства хазового письма, выявления центров, где усовершенствовалась его технология и где слагались местные традиции его применения (как в смысле наделения литературных текстов знаками пения, так и в отношении истолкования последних в исполнительской практике).

Первым условием для успешного выполнения этих задач является выяснение отношений музыкально-семиографических традиций, открытое в коренной Армении и в Киликийском армянском царстве. Сравнительный анализ множества средневековых хазовых рукописей показывает, что в средние века, в результате длительной эволюции и последующего разветвления, в пределах единого русла национально-армянской музыкальной культуры формировались две крупные школы искусства хазового письма и пения по хазам. Одна — в Килийском армянском государстве, другая — в коренной Армении.

В эпоху позднего средневековья усилия многих армянских певцов-практиков и ученых-музыкантов направляются к синтезированию лучших сторон обеих школ, к унификации пения и различных редакций хазовых сборников, чему в большой мере способствует и книгопечатание. Несмотря на это, к концу названной эпохи, кроме Эчмиадзинской центральной школы пения, образовались и четыре другие — местные школы: Константинополя, Новой Джульфы, Иерусалима и Венеции.

Конечно, данное положение вещей объясняется и социально-политическими условиями жизни армянского народа и постепенной деградацией искусства пения по хазам. Но за всем этим наблюдается и другое, в частности, принципиальная возможность различного истолкования одних и тех же знаков пения и их комбинаций, в пределах границ, определяемых исторически развивающимися различными ветвями, местными стилевыми направлениями, жанрами, формами и мелодическими моделями армянской духовной музыки.

N. K. TAHMIZIAN

L'ART DE L'ÉCRITURE DES KHAZES DANS SON EVOLUTION HISTORIQUE

(Résumé)

Les travaux faits actuellement dans le domaine de l'étude des khazes exigent instantanément une étude plus approfondie du développement temporel, spatial et social de l'art de l'écriture des khazes, la découverte des centres où sa technologie s'est perfectionnée et où se sont formées les traditions locales de son emploi (tant dans le sens de l'accompagnement des textes littéraires de signes de chant que dans le rapport de l'interprétation de ces derniers dans la pratique de l'exécution).

La condition première pour la solution de ces problèmes est l'éclaircissement des relations musico-semiographiques des traditions cristallisées en Grande Arménie et dans la Royauté Arménienne de Cilicie. L'analyse comparative d'un grand nombre de manuscrits médiévaux comportant des khazes montre qu'au Moyen Age, par suite d'une longue évolution et de la ramification ultérieure, dans les limites d'un même courant de la culture musicale nationale arménienne deux grandes écoles d'écriture de khazes et de chant se sont formées; l'une dans la Royauté Arménienne de Cilicie, l'autre en Grande Arménie.

Au Moyen Age avancé les efforts de beaucoup de chanteurs arméniens et de savants-musiciens ont tendu à la synthèse des meilleures qualités des deux écoles, à l'unification du chant et des diverses rédactions des recueils de khazes, ce qui fut grandement favorisé par l'imprimerie. Malgré cela, à la fin de cette période, outre l'école centrale de chant d'Etchmiadzine, quatre autres écoles locales se formèrent: à Constantinople, à la Nouvelle-Djoulfa, à Jérusalem et à Venise.

Evidemment cet état de choses s'explique aussi par les conditions sociales et politiques de la vie du peuple arménien et la dégradation progressive de l'art du chant d'après les khazes. Mais outre cela nous observons autre chose également; particulièrement la possibilité, en principe, de l'interprétation différente des mêmes signes de chant et de leur combinaison dans les limites déterminées par les diverses ramifications développées historiquement, les courants stylistiques locaux, les genres, les formes et les modèles mélodiques de la musique liturgique arménienne.

В. В. КУШЕВ

К БИОГРАФИИ 'АЛИ-АҚБАРА ОРАҚЗАЯ—АФГАНСКОГО
ПОЭТА XVIII ВЕКА

(По его произведениям в уникальной рукописи Матенадарана)

Общее количество рукописей на афганском языке, зафиксированных в научной литературе в виде каталогов, списков, отдельных упоминаний, а также опубликованных, исчисляется несколькими сотнями для хранилищ всего мира. Более тридцати из них находятся в Советском Союзе, причем почти все они сосредоточены в Ленинграде, в рукописном собрании Института востоковедения АН СССР. Здесь есть несколько редких и уникальных манускриптов, среди которых— список дивана поэта второй половины XVIII века 'Абд ар-Рахима Хотака Кандахары; этот диван, отсутствующий даже в самых богатых в мире хранилищах Афганистана и Великобритании, недавно введен в научный обиход¹.

Известны еще две афганские рукописи, хранящиеся в нашей стране. Обе они содержат произведения поэтов того же времени и обе по-разному интересны. Ташкентская рукопись дивана первого правителя независимого афганского государства Ахмад-шаха Дуррани охарактеризована в каталоге собрания Института востоковедения АН Узбекской ССР. Она цenna своими художественными достоинствами и тем, что была изготовлена при жизни ее автора, однако отмечены и другие списки дивана. Эта рукопись тоже изучается².

Совсем по-иному интересна другая рукопись—два собрания стихов из коллекции Матенадарана (фонд восточных рукописей Матенадарана, № 538). Это уникальный список произведений афганского поэта; до недавнего времени ни о нем самом, ни о его сочинениях ничего не было известно. Лишь в 1964 году статью об этой рукописи опубликовал афганский филолог Абдулла Бахтанай, который дал ее описание, сообщил имя автора и название, приложил скопирован-

¹ Ближний и Средний Восток (история, культура, источниковедение). Сборник статей в честь 70-летия профессора И. П. Петрушевского. М., 1968, с. 67—72.

² Собрание восточных рукописей АН Узбекской ССР. том II, Ташкент, 1954, № 1594; Э. Якубова, Редкая рукопись.—«Узбекистан маданияти», 12.Х.71.

ный им текст нескольких стихотворений. Большего он не успел сделать за короткое время ознакомления с книгой³.

Автор настоящей статьи узнал о рукописи значительно позже, в конце 1969 года, когда совершивший поездку по городам Закавказья и Средней Азии научный сотрудник Эрмитажа А. А. Иванов, любезно выполнив просьбу узнавать всюду о наличии афганских рукописей, привез из Еревана сведения о ее шифре и названии. Только на следующий год в Кабуле автор узнал от А. Бахтана о его статье и смог ее прочесть. Афганский ученый высказал предположение, что детальное изучение рукописи поможет больше узнать об авторе.

Рукописный отдел ЛО ИВ АН при любезном содействии директора Матенадарана акад. Л. С. Хачатяна и профессора А. Д. Папазяна получил микрофильм рукописи, и более глубокое изучение его позволило обнаружить еще немало фактов, дающих представление об авторе, о лицах, которые его окружали, о событиях, участником и очевидцем которых он был, о местах, которые он посетил. В своих сочинениях—разнообразных по стилю и жанру—автор предстает перед читателем и как одаренный поэт и прозаик, писавший на двух языках, и как полководец и политический деятель. Кроме того он был каллиграфом и художником, о чем будет сказано ниже.

Не ставя перед собой задачи литературоведческого анализа произведений, мы касаемся только всего этого материала, имеющего источниковедческий характер.

Рукопись состоит из двух основных частей: собрания стихотворений на пашто и собрания стихотворных и прозаических сочинений на персидском языке. Каждому из них предпослано персидское предисловие. Эти собрания не могут быть названы диванами, так как стихи в них не приведены в необходимый порядок. О причинах этого мы узнаем от самого автора (см. ниже), который, кстати, предпочитает называть свою работу „сборником“ и реже прилагает к ней название „диван“. Книгу заключают миниатюры с разного рода записями и сборник коротких рассказов-шуток.

Почти все части книги дают информацию о ее авторе.

Полное имя поэта названо им самим в обоих предисловиях—‘Али-Акбар ибн Қасим-хан Оракзай, родом афганец, житель Тираха в Хайбере (лл. 16а, 80а); часть своего имени—Акбар—он избрал тахаллусом, который употреблен в газелях, за исключением *макта*⁴—одной из них, где встречается форма ‘Али-Акбар-хан.

В первом предисловии поэт знакомит читателя с некоторыми моментами своей творческой биографии, с историей появления на свет:

عبد الله بختانی—علی اکبر آپریدی اود هنگه قلمی دیوان «گدشن»³
افغان»—محلہ کابل—(۱۳۴۳) (۱۹۶۴) (۷—۵۴)

обоих „диванов“, открывает свое отношение к поэзии и языку литературы.

Из этого предисловия к сборнику явствует, что самую раннюю его часть составляют газели. Поэт рассказывает читателю, что он „в юном возрасте, в детские годы, когда натура его подобно ладони юного было лишена звонких монет поэтической науки и сокровищница его груди еще не наполнилась динарами содержания и смысла, по велению султана желания зачернил несколько страниц набросками газелей на афганском языке... И они были написаны и переписаны на разных листах“ (л. 16а). Позднее, после знакомства со стихами известных поэтов и изучения поэтики Акбара его ранние стихи показались „никчемными и заслуживающими уничтожения“, он стал их стыдиться, не хотел собирать их вместе и редактировать, а намеревался выбросить, но все же в последнюю минуту, „повинувшись голосу разума“, сохранил их, надеясь, что найдутся люди, которым эти стихи доставят удовольствие (л. 17а).

Совершенно очевидно, что Акбар очень любил свой родной язык и заботился о его сохранении и о его совершенствовании как языка поэзии. Он вообще высоко ценил такой „божий“ дар человеку как речь и язык.

152ր ցուցանէ յուշախաղաց և փութաթուող¹: Եւ զլը յնթացողսն² գիւրն արդակեալ ըստ իւրում բնութեան³ որակադրէ իրը յանդս իմն ահաւորս: Եթէ ի վերոյ դիտեսցես ըստ մասին եռակարգեան⁴ բաղկանայ, եթէ ի կողմանէ՝ զհակարաշն, եթէ ի ներքոյ՝ ստոյզն բազմակերպ յոգնապատիւ իշխանականին: Ելանել համարեալ բնութիւն դիրք և ձաւնիւք⁵ և առ այլսն ըստ շափոյ ստորիջի պակասումն ըստ մանեակ⁶, և անդր նուազեալ քերչի⁷ ասել:

Խոյ հպեալ եռանգիւնոյ անջրպետ միջագէտին⁸ յարտակ (կ) ետոսի⁹ Ցուլ հպեալ Պեռսեսի¹⁰ անջրպետ միջագիտի արդակ միջոյ ձապատողի: Եկատր հպեալ ենիուքայ¹¹, անջրպետ միջակի արդակ Բոռառ¹² և նապատակակի: || Խեցգետինն¹³ անմիջակաւ անջրպետել¹⁴ միջակիտի արդակ գիխոյ Վիշապին երկրորդի¹⁵: Առիւծն¹⁶ անմիջակաւ անջրպետեալ միջակիտի արդակ (կ) ոնքին¹⁷ և միջոյ Վիշապին երկրորդի: Կոյսն անմիջակաւ անջրպետեալ միջակիտի արդակ Ազուաւոն և տտան Վիշապին:

20 Հայերեն թարգմանության մեջ շոշափված հարցերին Արատոսը անդրադառն է նաև իր Փառական օրուեմի 462—558 և 559—732 տողերում, որտեղ խոսվում է երկրագնդի շրջանների, ինչպես և աստղերի ծագման ու մայր մտնելու մասին:

21 E. Maas, հիշ. աշխ., էջ 42—43, 46; J. Martin, հիշ. աշխ., էջ 281:

22 Δρανδάχνη, Μεγάλη Ἐλληνική Ἑγκυροπατίσια, τόμ. Ε', σελ. 335:

1) Վ. փութաթուող: 2) Վ. բնութացօղն: 3) Վ. բնութեամքն: 4) Վ. եռակարգեան: 5) Վ. ձօնիք: 6) Վ. մասնեակ: 7) րերջիր: 8) Վ. միջակիտին: 9) Բ. յարդակետոսի, Վ. արտակետոսի: 10) Ճիշտը՝ Պեռսեսի: Երկու գրչագրերում էլ՝ Պեռսենի: 11) Վ. ենի (բառը կիսատ է թողնըգած): 12) Երկու գրչագրերում էլ սխալմամբ՝ Բոռտա: 13) Վ. խեցգետին: 14) Վ. անջրպետեալ: 15) Վ. ավելացնում է՝ «և նանն»: 16) Վ. Առիւծ: 17) բնագրում՝ արտակոնքին, Վ. արդակ կոնքին: 18) Վ. առդոնէ (բառը կիսատ է թողնված):

երկրորդի և Առզոնէսոյ¹⁸: Բայց ոմանք ասեն զԱրգոնէսոս¹⁹ հանդեպ Առջոյն Մեծի ընդ միջոց Խեցգետին և Առիւծոյ : Կշիռ²¹ Հպեալ Ռոխոնի²² անջրապետ միջակիտի արդակ²³ Քերոնի²⁴: Կարին Հպեալ վիշապագոտոյն Եփիոնայ և նա Հպեալ Պասկին և Տարածելոյն և Առկտուրայ, անջրապետեալ միջակիտին արտակ Բոցակերպին և Թիատեռիոնի: Աղեղնատր Հպեալ Արծիոյն²⁵ և նա Հպեալ է Խոռնի²⁶, անջրապետ միջա-
151ր կիտի: ||Այծեղչերն Հպեալ Դլֆնի² և նա Հպեալ Սազին, անջրապետ մի-
ջակիտի արդակ Կարդաձկան²⁸: Զբոսն Հպեալ Պիդատոսի²⁹ և նա Հպեալ
Կեփուսի³⁰ անջրապետ միջակիտի արդակ միջոյ Վիշապին Մեծի: Զկունի
Հպեալ Անդրոմիդայ և նա Հպեալ Կասիպայ³¹ անջրապետ միջակիտի
յարտակ տըտանն կիւ...: Եւ Հաղորդը միջակիտի³² Արշն Մեծ և Փոքր
և Վիշապն Մեծ, և Հաղորդ սուլտանին Ենզոնիաս³³ և Գանըր, և
Չուկն Մեծ Հանդերձ Հնկիւք³⁴ Երեկլաւը³⁵ աստեղօքն Հայեցելովքն³⁶ ի
յինքն: Եւ ոմանք ասեն զիսուպս³⁷ սոցա ոչ առկայունս, այլ շարժունս³⁸
լինել, բայց ամս³⁹ ձիւս: Իսկ այս զինչ որ Հեթանոսական⁴⁰ անուանք՝
զաստեղաց խուպս⁴¹ կոչեն: Եթէ ոչ Հարկաւորութիւն անմարդ⁴² այ-
լազգ⁴³ այտարարութեան⁴⁴ որպէս⁴⁵ առաջազոյն⁴⁶ Հարի⁴⁷ ի նամակի: Եւ
այս ինչ որ զծոցոյ զնդին արտաքոյ նշանակեմք օրինակ և այս ոչ ի
զնդի, այլ ի միադէպ բոլորի և անմարթ է, զի ոչ պատշաճի: Վասն
150ա որոյ և երիս || առ անձն զատուցի բոլոր: Իսկ եթէ ի զունդաւորի, մարդ
է կերպարագործեալ միաւորում: Բայց ի պարագայիցն, զոր Հարկաւորի
յինքեան խորհրդով իրրե ի տեսութինէ միշտ առնթեր բերելով Հպա-
տրութեամբ յիւրաքանչիւր խմալից, բատ զնդին շրջանակաց, բատ ար-
նակ(“) իւրաքանչիւր շարժմանց զթիւ Համարել խառնելով զանց իւր զաս-
տեղատանցն առանձնակութիւնսն, որպէս և ի բոլորիդ կա տպաւո-
րեալ:

«Յաղագս միաւոր զնդին» Երկում հանդիպող աստղերի,
համաստեղուրյունների, կենդանատեսակների անունները և նրանց
համապատասխան հունարեն անվանումները:

Ազուտ—Կորչէ	Բոցակերպ—Σειρίος (?)
Առզոնէսոս (Արդոննիսոս)—'Արշն (?)	Դանոր (Դանոս) ^o —Δανάχη
Առկտուրայ (սեռ.)—'Առշունուզ	Դլֆին—Δλφին
Անդրոմիդալ—'Անդրունչա	Ենզոնիաս—Ἐνζόνιασ
Բոռոտո (սեռ.)—Եռօչուց	Ենիոքալ (սեռ.)—'Հնօչոչ

19) Բ. զարդոննիսոս, Վ. զարդոնն (բառը կիսատ է թողնված): 20) Վ. ընդ (բառը կիսատ է թողնված) Խեցգետնոյ և Առուծի: 21) Վ. Կշիռ: 22) Բ. սոխոնի, Վ. սոխոնի: 23) Բ. արդակը: 24) Վ. Քիրոնի: 25) Վ. Էփուսն: 26) Վ. Դլֆինի: 28) Վ. կարդաձկանն: 29) Վ. Պիդատոսի: 30) Վ. Կեփուսի (Հիշտը՝ Կեփուսի): 31) Վ. Քասիպեալ (Ճիշտը՝ Կասիպեալ): 32) Փակադերի մեջ տընդած բառերը բնագրում բացակայում են: Վերականգնված են Վենետիկի պաշտորի Հիման վրա, ընդ որում «տըտանն-ից հետո եկող բառը (զուցե անունը) կիսատ է թողնված: 33) Վ. Ենդոնի (անունը կիսատ է թողնված): 34) Վ. Հնզիւք: 35) Վ. Երեկլեօր: 36) Վ. Հարեցելովք: 37) Վ. զիսումբս: 38) Վ. շարժմունս: 39) Վ. յամս: 40) Վ. Հեթանոսակ (բառը կիսատ է թողնված): 41) Վ. բացակայում է «խուպս» բառը, որի տեղում թողնված է պարագ տարածություն, իսկ Հաղորդ՝ «կոչեն» բառի փոխարեն զրված է՝ «պակ ոչ ենչ: 42) Վ. անմարթ: 43) Վ. շիթ «ազգ» բառը: 44) Վ. յայտարարութեան: 45) Վ. շիթ «որպէս» բառը, որի տեղը պարագ տեղ է թողնված: 46) Վ. յառաջազոյն: 47) Վ. շիթ «Հարի» բառը, որի տեղը պարագ տեղ է թողնված:

Եփիոքա (սեռ.) — 'Օչոնցի՛;
Թիւտեսիոն — Թուշի՛
Իւսոն — ?
Կասովալ (սեռ.) — Կասուէպուա
Կարդաձուկն — Խէ՛օչ; (?)
Կհոռոս — Կէ՛ջօչ;
Կհիֆոս — Կրջօչ;
Ճապատող — 'Օչ:

Նապաստոկ — Առջօնէ;
Շոն — Կօօն
Ռոբոն — 'Չրիօն
Պերսես — Պէրսէն
Պիդատոս — Արձաւուա
Պոտկ — Հուժանօչ
Մազ — Կէռօն; (?)
Վիշապ — Ճրձան
Քիրոն — Խէ՛րօն

2

ՊԱՐՊՈՍԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՅ ՆԱԽԵՐԳԱՆ
Ի ՆԵՐՔՍԱԾՈՒԹԵՆԼ

Քերովիք Պատկանյանն իր «Անանիա Շիրակունոյ մնացորդք քանից»¹ պրում հրատարակել է և մի երկ, որ կրում է հետեւյալ խորագիրը. «Պատղոսի Աղեքսանդրացոյ նախերդան ի ներքսածութենէ յոյժ»: Բովանդակությունը աստղաբաշխական մի նյութ է, նվիրված կենդանատեսակներին (գորիակին):

Ինչպես հայտնի է, թ. Պատկանյանը խնդրու առարկա գրքին ոչ մի ուսումնասիրություն չի կցել, հետեւարար դժվար է կռահել, թե ձեռագրերում Պողոս Աղեքսանդրացու անունը կրող այս երկասիրությունը նա ի՞նչ նկատառումներով է տեղադրել Անանիա Շիրակացուն պատկանող գործերի շարքում:

Պողոս Աղեքսանդրացին IV դ. երկրորդ կեսի նշանավոր աստղաբաշխ է, սովորել է Աղեքսանդրիայի հայտնի դպրոցում, որը V դ. վերջում գլխավորում էր Հելիոպորոսը, Պողոս Աղեքսանդրացու գործերի մեկնարաններից մեկը: Պողոս Աղեքսանդրացու կյանքի ու գրական գործունեության մասին շատ քիչ բան գիտենք: Նա հեթանոս էր, իր ժամանակվա շատ զարգացած մարդկանցից մեկը: Կարդացել էր աստղաբաշխության և աստղագուշակության մասին մեծ թվով ուսումնասիրություններ, որոնցից մեզրերումներ կան մեզ հասած իր երկում: Այն գրված է 378 թ. և հավանաբար նախապես կրում էր Եւսաշառական (Ներքսածականք) խորագիրը: Այս երկի երկրորդ հրատարակությունն է պահպանվել՝ ձուլված հեղինակի որդի Կրոնամոնին (միջնադարում հենց այս են հայերեն թարգմանել), որի արժեքն այն է, որ հեղինակը, օգտագործած լինելով շատ հին աղբյուրներ, հնարավորություն է տալիս քրմական և ժողովրդական աստղագուշակության մասին պատկերացում կազմել: Միջնադարում Պողոս Աղեքսանդրացու երկը շատ էր տարածված: Ենթադրում են, որ հեղինական մեզ շհասած „Paulisa Siddhānta“ խորագիրը կրող գիրքը Պողոս Աղեքսանդրացու «Ներքսածականք»-ի մեկնությունն է եղել: Ալ-Բիրունին ծանոթ է եղել այդ մեկնությանը, որն անվանում է Pulisa:

Պողոս Աղեքսանդրացու աշխատության հունարեն բնագիրը առաջին անգամ հրատարակվեց Շատոյի կողմից 1588 թ. Վիտտեմբերգում, որից հետո նա ունեցել է բազմաթիվ հրատարակություններ²:

թ. Պատկանյանը ձեռքի տակ չի ունեցել Պողոս Աղեքսանդրացու գործի

¹ Ա. Պետերուրը, 1877, էջ 67—73:

² Մանրամասն տե՛ս W. Gundel-ի Paulus von Alexandreia հոգիածը. Paulys Realencyclopädie der Classischen Altertumswissenschaft. Erste Reihe, 36. Halbband, 3. Drittel, Stuttgart, 1949, S. 2376—2386.

Հումարեն բնագիրը, որն անշափ օգտակար կարող էր լինել սրբազնելու համար հայ գրիշների թույլ տված սխալները, որոնք քիչ չեն: Գրիշներին, սակայն, չի կարելի մեղադրել, քանի որ կենդանատեսակների մասին այս աշխատությունը խոտ մասնագիտական երկ է, բացի այդ այնպիսի ստրկական, տառացի թարգմանություն է կատարված (Հավանաբար Հումարան դպրոցին հետևող մի անձնավորության կողմից), որ առանց Հումարենի իմացության, զգվար և այն հասկանալ: Բնագրի շատ մասեր անվերծանելի են մնացել հրատարակիչ Պատեկանյանի կողմից, այլ կերպ չի կարելի բացատրել նրա կիրառած կամաց ական գետադրությունը: Նա հաճախ նախադասության մեջտեղում վերջակետ է դրել, Պաղոմեոսի, Ապոդինարի աշխատությունների վերնադրերը միաձուլել է շարադրանքի մեջ և այն: Մեր խոռոքը շոշափելի դարձնելու համար բավարպենք մեջ բերելով «Ներքսածականք» «Նախերգանի» Հումարեն բնագիրը, նրա հիման վրա մեր սրբագրած ու ճշգրտած Հայերեն թարգմանությունը, ապա և Ք. Պատկանյանի հրատարակած բնագիրը (տե՛ս էջ 145):

Պողոս Աղեքսանդրացու «Ներքսածականք»-ը վերահրատարակեց Ա. Արքահամյանը, լրացնելով Ք. Պատկանյանի հրատարակած բնագրի մեջ առկա թերությունները՝ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերում պահպանված բնագրերի հիման վրա³: Նա հանգել է այն եղբակացության, որ խնդրո առարկա երկը գլուխների է բաժանել հրատարակիչ Ք. Պատկանյանը, և որ «նշված բոլոր գլուխներն էլ հաջորդական շարունակությունն են հանդիսանում իրարև մի ամբողջության մասեր են»: «Մեզ թվում է,—դրում է Ա. Արքահամյանը,—հենց այս էլ պիտի լինի Ծիրակացու տիեզերագիտության վերջին մասը»⁴:

«Իր «Անանիա Ծիրակացու մատենագրությունը» աշխատության «Ծիրակացու աղբյուրները» գլխում սակայն Ա. Արքահամյանը միանգամայն ճիշտ նշել է, որ այդ աշխատությունը Ծիրակացու հեղինակությունը չէ, այլ թարգմանական մի գործ, որի թարգմանիչն է Անանիա Ծիրակացին:

Պողոս Աղեքսանդրացու այս աշխատությունը, Հավանաբար ոչ անմիջաբար, այլ թերեւ Պողոս Աղեքսանդրացու դպրոցին հետեւ մի այլ հեղինակի միջնորդությամբ, օգտագործվել է Ծիրակացուն վերագրվող մի ուրիշ երկում ևս, որը՝ ձեռագրերում կրում է «Անանիայի Համարողի վասն ընթացից արեգական» ըստ կենդանատեսակացն և է զոտեացն, զոր կատարէ ի տունչելայն յաւուրս ՅԿԵ և ժամա Գ» խորագիրը⁵:

Ծագման տեսակետից վերոհիշյալ երկու երկերին է հարում և Ք. Պատկանյանի, և Ա. Արքահամյանի կողմից նույնպես Ծիրակացուն վերագրված և ձեռագրերում՝ Պողոս Աղեքսանդրացու «Ներքսածականք»-ին անմիջապես հաջորդող այն վերը երկասիրությունը, որ ունի հետեւյալ վերնագիրը. «Յաղագս խառնաբան աստեղաց»⁶: Այս աշխատությունը, որ ամենայն Հավանականությամբ նույնպես թարգմանված է Հումարենից, աստղագուշակական բովանդակություն ունի: Մեր ասածը հաստատելու համար վերցնենք պատահական մի նախադասություն. «Յուլն, յորում են աստեղք երկուտասան, եթէ Հայիս և տեսանես զնոսա յեղջիւրս հարեալ, գիտեա՝ թէ վաղվաղակի լինի»:

³ Անանիա Ծիրակացու մատենագրությունը, էջ 327—330:

⁴ Նույն տեղում, էջ 134:

⁵ Հրատարակել է Ա. Արքահամյանը: Նույն տեղում, էջ 315—317:

⁶ Անանիա Ծիրակացու մատենագրությունը, էջ 331—333: Ք. Պատկանյանի հրատարակած բնագիրը «Մնացորդը բանից...», էջ 73—75) թերի է:

պատերազմունք և կոփոր»⁷: Կամ. «Աղեղնաւորն, յորում են աստեղք վեց, եթէ տեսանիցես նուա ի թրթումանց, գիտասչիր թէ առաքին ի նոցանէ աստեղք հանգոյնք, ծովք խոռովին, և ամպք զուարճանան և թագաւորք զուարճանան»⁸:

Այս և նմանօրինակ տասնյակ այլ զուշակողական հատվածների առկայությունը հուշում է, որ տվյալ աշխատության հեղինակը չի կարող լինել Անանիա Շիրակացին, մի գիտնական, որ քաղմիցս ծաղրուժանակի է ենթարկել նման հակագիտական հայացքները:

Պողոս Աղեքսանդրացու աշխատությունը և ձեռագրերում նրա հայերեն թարգմանությանը հաջորդող «Յաղագս խառնարան աստեղաց» գործը, ինչպես և «Վասն ընթացից արեգական՝ բատ կենդանատեսակացն...» աշխատությունը պատկանում են աստղաբաշխական միևնույն դպրոցին: Հին հույն հեղինակները այդ գործերում արտահայտված գաղափարները վերագրում են բաղդեացիներին: Հետաքրքրականն այն է, որ խնդրո առարկա աշխատություններում արծարծված մտքերը հին հույնները անվանում են շեշտածուցիա, այն է՝ «Ծննդաբանութիւն», ցույց տալով, որ քաղդեացիները, զրազվելով հանդերձ այդ «ծննդաբանությամբ», իրենց վերամբարձորեն հորչորջում էին մաթեմատիկոս և աստղագետ (γενεθλιαλογία, դուստրուս և այլութեան աստղագետության հենթարկվեցին հենց անտիկ մտածողների կողմից): Այդ տեսակետից յուրահատուկ տեղ է գրավում Սեքստոս էմպիրիկոսը (230—180 թթ. մ. թ. ա.)՝ անվանի հույն փիլիսոփա և բժիշկ, որ Պյուրրոնի և էնեսիդեմոսի հետ համարվում է սկեպտիցիզմի ամենանշանավոր ներկայացուցիչը: Սեքստոս էմպիրիկոսի աշխատությունը, որ վերնագրված է «Ընդդեմ աստղագուշակների» (Պրὸς ἀστρολόγους), ամբողջությամբ նվիրված է քաղդեացիների աստղագիտական հայացքների քննադատությանը: Հեղինակը սկսում է իր գործը շարադրելով նախ և առաջ ակենդանատեսակ բոլորակության» (ζωδιաκός κύκλος) մասին քաղդեացիների սկզբունքները, հայտնում է, որ նրանք «կենդանատեսակ բոլորակությունը» բաժանում են 12 կենդանատեսակների, յուրաքանչյուր կենդանատեսակը՝ 30 մասի, յուրաքանչյուր մասն էլ 60 երմասի: Կենդանատեսակների մի մասը արական են համարում, մյուսը՝ իգական, մի մասը եղանական, մյուսը՝ ոչ, մի մասը երկտարրական, մյուսը հաստատում և այլն: Այսպես, հաջորդարար, նա շարադրում է այն ամենն, ինչ որդեգրել է հետագայում Պողոս Աղեքսանդրացին, որից հետո ցույց է տալիս, թե ինչպես քաղդեացիները աստղերի և կենդանատեսակների դիրքից որոշում էին, թե ինչ ճակատագիր կամ բախտ կունենա այս կամ այն աստղի տակ ծնված անձնավորությունը: Էմպիրիկոսը մեկ առ մեկ զրում է նրանց «փաստարկումները»:

Այս բոլորից հետո անհրաժեշտ է խորամուխ լինել Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» ստորև բերվող հատվածի բովանդակության մեջ. «Բայց

⁷ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 331:

⁸ Նույն տեղում, էջ 332:

⁹ Sexti Empirici Opera, rec. Hermannus Mutschmann, vol. III, Adversus mathematicos, Lipsiae, 1954, p. 141; Sextus Empiricus with an English Translation by the Rev. R. G. Bury, vol. IV, Cambridge—London, 1961, p. 322.

և կշամբեցից զբաղեացացն ծննդաբանութիւնսն՝ որում բազումք հաւանեցան. և յունաց և այլոց ազգաց՝ վարժիլ¹⁰ սնութիւք, և կշտամբեցից ո՛չ իմբանիւ՝ այլ սրբոյն Բարսղի, որ ասէ այսպէս. Բայց մեզ չէ ինչ դանդաղելի եւկրուրդել զանհամ պատմութիւնս նոցա. քանզի ի հաւաստաբան ճշմարտութենէս մերմէ կշտամբեալ գտանին: Եւ արդ դարձցուք անդրէն զնորիմբը վերստին: Եւ ահա սկսանիմ ասել իբր ո՛չ եթէ զիմ բանս ինչ խառնեմ ի ներքս, այլ ի նոցուն բանից երկրորդեմ ընդդէմ նոցա կշտամբել զնոսա անդստին յիւրեանց բանիցն. զի թերես որք կանիսաւ անկան յամբարշտութիւնս նոցա՝ բժշկութիւն գտցեն: Եւ որ ո՛չ իցեն զայթակղեալ անկեալ ի պատրանս նոցա՝ զգուշութիւն ստասցին: Զի յայսպիսի բանս և որ նման սոցին իցեն մի՛ յօժարհսցին անկանել»¹¹:

Այնուհետև Շիրակացին, Սեբստոս էմալիրիկոսի նման, հաճախ օգտագործելով նույն բառերը ջրում է բաղդեացիների «ծննդաբանությունը» հենվելով Բարսեղ Կեսարացու վրա և կրկնելով վերջինիս խոսքերը «Եւ արդ զին՞չ արարից, զի իբրև հարկ իմն համարիմ երկրորդել զանհամ պատմութիւնս նոցա»¹²:

Թվում է, թե միտք շունի այլևս շարունակել: Շիրակացին քննադատում է բաղդեացիների «ծննդաբանությունը», ինչպես իր ժամանակին քննադատել է Սեբստոս էմալիրիկոսը և շատ ուրիշներ: Իսկ Սեբստոս էմալիրիկոսը քննադատել է այն մտքերը, որոնք հետագայում որդեգրեց Պողոս Աղեքսանդրացին, ինչպես և անհիմն կերպով Շիրակացուն վերադրված «Յաղագս խառնաբանաստեղաց» և «Վասն ընթացից արեգական՝ ըստ կենդանատեսակացն...» աշխատությունների հեղինակները: Ըստ այդմ պարզ է դառնում, որ վերոհիշյալ աշխատություններից և ո՛չ մեկը շենք կարող մեծանուն Անանիա Շիրակացու զրչի արգասիք համարել: Պարզ է ուրեմն, որ Շիրակացին աստղաբաշխությամբ զրադվող միակ հայ հեղինակը շի եղել: Հայաստանում եղել են աստղաբաշխներ, որոնք հետեւել են Պողոս Աղեքսանդրացուն ու նրա համախոհներին. և այդ երկու՝ գիտական ու գուշակողական դպրոցների միջև պայքար է բռնը բռքվել նաև մեզանում: Այլ կերպ շի կարելի բացատրել բաղդեացիների «ծննդաբանությունը» Շիրակացու տված կրքուտ քննադատությունը: Ուստի կարելի է վստահ ասել, որ Շիրակացին չէր էլ կարող վերոհիշյալ երկերի թարգմանիչը լինել, քանզի նրա համար տաղտկալի է եղել նույնիսկ նրանց անհամ պատմություններն երկրորդելը:

Պողոս Աղեքսանդրացու «Ներքսածականք»-ը բազկացած է Նախերգանքից - և 37 գլուխներից: Ք. Պատկանյանի և Ա. Աբրահամյանի հրատարակությունը բնագիրը բովանդակում է այդ երկի «Նախերգանքը» և կենդանատեսակների մասին գլուխը ոչ ամբողջությամբ (վերջից պակասում է երկու պարբերություն):

Ստորև տրվում է Պողոս Աղեքսանդրացու երկի հայերեն թարգմանու-

¹⁰ Հավանաբար՝ վարիլ:

¹¹ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տուար, աշխատասիրությունը Աշ. Արշամյանի, Երևան, 1940, էջ 23—24:

¹² Նույն տեղում, էջ 27: Անանիա Շիրակացու՝ Բարսեղ Կեսարացու գործերից կատարած հղումների մասին տե՛ս Կ. Մ. Մուրադյան, Ծնդհանուր հատվածներ ու սրբագրություններ Կեսարացու և Շիրակացու գործերում, «Էրարեր», Խ 1, 1975, էջ 55—71:

ΠΑΥΛΟΥ ΑΛΕΞΑΝΔΡΕΩΣ

ΕΙΣΑΓΩΓΙΚΑ ΔΕΥΤΕΡΑΣ ΕΚΔΟΣΕΩΣ

⟨α'⟩ Προοίμιον

Πάνυ καλῶς, ὡς φίλε παῖ Κρονάμων, ἐψευδογραφη-
κότας ἡμᾶς ἀνευρὼν ἐν τῇ πρὸ ταύτης ἐκδόσει τῶν εἰσι-
γωγικῶν προετρέψω ἔτέραν συντάξαι, λειπομένην ἐν οὐ-
δενὶ τῶν εἰς τὴν αὐτῆς πρόθεσιν συντεινόντων θεωρη-
μάτων, μετὰ τοῦ καταναγκάσαι καὶ τὰς κατὰ Πτολε-
μαῖον ἀναφορὰς ἐπιλογισαμένους πρὸς τοῖς ἀποτελέσμασιν
ἐκθέσθαι· ὡς ταύτας εὐχρηστοτέρας κατειληφότων ἡμῶν
ἀντοῦ τε τοῦ Πτολεμαίου ἐν τῷ ‘Περὶ Χρόνων Ζωῆς’
αντοῦ τὴν πραγματείαν ποιουμένου καὶ Ἀπολλιναρίου
παρακελευομένου ἐν τῷ ‘Περὶ Ἀφέτον καὶ Οἰκοδε-
σπότον καὶ Ἀναιρέτον’ ταύταις κεχρησθαι· προσεπὶ
τούτοις καὶ Ἀπολλωνίου τοῦ Λαοδικέως ἐν τοῖς ἴδιοις
πέντε βιβλίοις διαβάλλοντος τοὺς Αἰγυπτίους, ὡς πολλὴ
ἀπάτη αὐτοῖς γεγένηται ἐν ταῖς τῶν ζωδίων ἀναφοραῖς.

⟨β'⟩ Περὶ τῶν δώδεκα ζωδίων

‘Ο ζωδιακὸς κύκλος κινεῖται λοξῶς, διηρημένος εἰς
τμήματα δώδεκα, ἅτινα καλεῖται ζώδια. ἔχει δὲ τὸ ζώδιον
δεκανοὺς μὲν τρεῖς, μοίρας δὲ ἦ, η δὲ μοίρα ἔχει λεπτὰ ξ.
ἔστι δὲ ἡ ἀρχὴ τοῦ ζωδιακοῦ κύκλου ὁ Κριός, ἀρσενικόν,
ἰσημερινόν, τροπικόν, ἐαρινόν, οἶκος Ἀρεως, ὑψωμα
‘Ηλίου περὶ μοίρας ω’, ταπείνωμα Κρόνου περὶ μοίρας χ’,
τρίγωνον ἡμέρας μὲν ‘Ηλίου, νυκτὸς δὲ Διός. κεῖται δὲ
⟨ἐν τῷ⟩ κλίματι τῷ τῆς Περσίδος, ἀπομεμερισμένον
ἀνέμῳ Ἀπηλιώτῃ. κυριεύει δὲ κεφαλῆς καὶ ὅλου προσώ-
που. ἀνατέλλει δὲ τὸ ζώδιον κατ’ Αἰγυπτίους ἐν τῷ δι’
Ἀλεξανδρείας κλίματι τρίτῳ ὅντι ἐκ τοῦ ἀφανοῦς τοῦ

թյամբ մեզ հասած մասի հունարեն բնագիրը¹³ և նրա հին հայերեն թարգմանությունը¹⁴:

ՊԱՒՂՈՍԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ ՆԱԽԵՐԳԱՆ Ի ՆԵՐՔՍԱՇՈՒԹԵՆԵԼԻ

Յոյժ գեղեցկարար, ով որդի սիրելի Կրաւամոն, ստագրաւոս զմեզ գտեալ² յոմանց յառաջ քան զայս արտագրութեան ներքսածականացն, յորդորեցեր միւս շարադասել, նուազել ոչ իւիք յայնցանէ, որք ի նոյն նախագրութիւն պատշաճի[ն] տեսութեան[ց]³, համանգամայն հարկեցուցանելով զՊատղոմեան վերաբերութիւնսն համեմատելով առ յանգսն արտադրել⁴, իբրև զայնոսիկ պիտանեղոյնն հասանելով մեր, նաև նորին փոկ Պաղոմ ե այ «Յ աղ ա գ ս ա մ ա ն ա կ ա ց կ ե ն ա ց» նոքօք⁵ զիրագործութիւն առնելով, և Ապողին արի հրաման տալով առ ի «Յ ա ր ձ ա կ չ ի ն և Տ ա ն ու - տ ե ա ռ ն և Բ ա ց բ ա ր ձ ու թ ե ա ն»⁶ այսոքիւք վարիլ⁷: Ի վերայ այսոցիկ և Ապողոնի լաւոդիկեցւոյ յինքեան Ե (5) մատեանսն դորովելով զԵղիպտացիսն, որպէս թէ բազում մոլորութիւն լեալ է նոցա փ կենդանատեսակացն վերաբերութիւն[ս]:

Յ ա ղ ա գ ս կ ե ն դ ա ն ա տ ե ս ա ա կ բ ո լ ո ր ա տ ե ս ու թ ե ա ն⁸

Կենդանատեսակ բոլորութիւն շարժի առշեղապէս, բաժանեալ ի հատածս ԲԺ-Ն (12) որ կոչին կենդանատեսակք: Եւ ունի կենդանատեսակն պարունակս Գ (3), մասունս և (30). և մասն ոմի<մասունս Կ (60) և > մանրերորդակս Կ (60):

Յաղագս Խոյին: Արդ է սկիզբն կենդանատեսակ բոլորակութիւն Խոյն, արական, հասարակօրեայ, յեղանակ[ան]⁹, դարնանային, տուն Հրատի, բարձրութիւն Արեգականն [մասանց]¹⁰ ԺԹ (19), նուաստութիւն Երկակի՝ մասանց Ի (20), եռանգիմի՝ ի տուրնչեան Արեգականն, իսկ ի գիշերի՝ կուսնթագի: Զաւնեալ է նահանգին Պարսից, բաժանաւզ¹¹ Հողմոյն Արեկելականի: Եւ տիրել զլխոյ և բոլոր երեսացն: Եւ ելանէ կենդանատեսակ ըստ Եղիպտացոցն և Աղեքսանդրացոցն նահանգին, որ է երկրորդ¹², յաներեւութիւն յերեւելի աշ-

13 Պողոս Աղեքսանդրացու երկի հունարեն բնագրի նորագույն հրատակությունը լույս է տեսել Լայպցիգում, 1958 թ. Paulus Alexandrinus. Εἰσαγωγὴ γένεσις. Edidit A. e. Boer Lipsiae, 1958.

14 Արագես Հիմք ընդունված է Մաշտոցի անվան Մատենագարանի № 1973 ձեռագիրը:
[] Անկյունավոր փակագծերի մեջ առնված տառերն ու բառերը ավելացրել ենք մենք՝ Հիմքներվագ հունարեն բնագրի վրա: Սուրանկյուն փակագծերի մեջ (<>) առնված են այն տառերն ու բառերը, որոնք կան հայերեն բնագրում, բայց որոնք համարում ենք ավելորդ:

κύσμου <μέρους> εἰς τὸν ἐμφανῆ κόσμον ἐν ὥρᾳ ἰσημερινῇ ἀ γ' θ' χρόνοις δὲ καὶ β''. ἔστι δὲ ἐν τούτῳ τῷ ζωδίῳ τὸ μεσονυχανοῦν κέντρον τοῦ κοσμικοῦ διαθέματος.

Δεύτερον ζώδιον Ταῦρος, θηλυκόν, στερεόν, ἑαρινόν, οἶκος Ἀφροδίτης, ὕψωμα Σελήνης περὶ μοίρας γ', ταπείνωμα οὐδενός, τρίγωνον ἡμέρας μὲν Ἀφροδίτης, νυκτὸς δὲ Σελήνης. κεῖται δὲ ἐν τῷ κλίματι τῷ τῆς Βαβυλῶνος, ἀπομεμερισμένον ἀνέμῳ Νότῳ. κυριεύει δὲ τραχήλον καὶ τένοντος. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥρᾳ ἀ β'', χρόνοις δὲ καὶ προκείμενον κλίμα.

Τρίτον ζώδιον Δίδυμοι, ἀρσενικόν, δίσωμον, ἑαρινόν, ἀνθρωποειδές, οἶκος Ἐρμοῦ, ὕψωμα οὐδενός, κοίλωμα οὐδενός, τρίγωνον ἡμέρας μὲν Κρόνου, νυκτὸς δὲ Ἐρμοῦ. κεῖται δὲ <ἐν τῷ> κλίματι τῷ τῆς Καππαδοκίας, ἀπομεμερισμένον ἀνέμῳ Λιβί. κυριεύει δὲ ὄμων καὶ χειρῶν καὶ δακτύλων. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥρᾳ ἀ β'' ε' με', χρόνοις δὲ κατὰ τὸ προκείμενον κλίμα καὶ γ'. ἐν ταύτῃ δὲ τῇ τριζωδίᾳ ἀπιρτίζεται ἡ τῆς ἑαρινῆς ὥρας τροπή, ἥτις καλεῖται ἀήρ.

Τέταρτον ζώδιον Καρκίνος, θηλυκόν, τροπικόν, θεοινόν, οἶκος Σελήνης, ὕψωμα Διὸς περὶ μοίρας ιε', ταπείνωμα Ἀρεως περὶ μοίρας κη', τρίγωνον ἡμέρας μὲν Ἀφροδίτης, νυκτὸς δὲ Ἀρεως. κεῖται δὲ <ἐν τῷ> κλίματι τῷ τῆς Ἀρμενίας, ἀπομεμερισμένον ἀνέμῳ Βορρᾶ. κυριεύει δὲ στήθους καὶ στομάχου. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥραις β' θ', χρόνοις λαὶ β'' κατὰ τὸ μνημονευθὲν κλίμα. ἔστι δὲ ἐν τούτῳ τῷ ζωδίῳ ὁ τοῦ κόσμου ὠροσκόπος.

Πέμπτον ζώδιον Λέων, ἀρσενικόν, στερεόν, θεοινόν, οἶκος Ἡλίου, ὕψωμα οὐδενός, κοίλωμα οὐδενός, τρίγωνον ἡμέρας μὲν Ἡλίου, νυκτὸς δὲ Διός. κεῖται δὲ <ἐν τῷ> κλίματι τῷ τῆς Ἀσίας, ἀπομεμερισμένον ἀνέμῳ Ἀπηλώτῃ. κυριεύει δὲ πλευρῶν. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥραις β' γ', χρόνοις δὲ ι.ε κατὰ τὸ μνημονευθὲν κλίμα.

խարհն¹³ ի ժամու միում հասարակաւրոյ, յեռանդիմի¹⁴ և ինն երմասին¹⁵, և տմանակաց իԱ. (21) և Բ (2) մասանց: Եւ է յայսմիկ կենդանատեսակի երկնամիջոցակետն աշխարհական տրամադրութեանց:

Յաղագս Ցլուն: Երկրորդ կենդանատեսակ է Ցուզն, իգական, հաստատուն, գարնանային, տուն Լուսաբերի, բարձրութիւն Լուսնոյ, ունի մասունս Գ (3), նուաստութիւն ոչ ուրեք, եռանդիմի՝ ի տուրնչեան Լուսաբերի, իսկ ի գիշերի՝ Լուսնոյ: Չամեալ է նահանդին Բարելացւոց, բաժանաւղ¹⁶ Հողմոյն Հարաւոյ: Եւ տիրեալ է ուլանն և պարանոցին: Եւ ելանէ կենդանատեսակ յաներեսութէն յերեսոյթն [աշխարհի] ի ժամու միոչ և Բ (2) մասանց, և ամանակաց իԵ (25)-ից առաջիկա նահանդին:

Յաղագս ԵՐԵԿաւորին: Երիր կենդանատեսակ է ԵՐԵԿաւորն, արական, երկտարրական, [գարնանային], մարդակերպ, տուն Փայլածուին Երմու, բարձրութիւն ոչ ուրուք, նուազութիւն ոչ ուրուք, եռանդիմի՝ ի տուրնչեան Երեակի Կրաւոս, իսկ ի գիշերի՝ Փայլածուի: Եւ ձամեալ է նահանդին Գամլաց, բաժանեալ Հողմոյն Լիրէացւոց¹⁷: Եւ տիրել է ուսոց և ձեռաց և մատանց: Ելանէ կենդանատեսակն յաներեսութէն յերեսոյթն ի ժամու միում և Բ (2) մասանց և է (7) մասին և իԵ (45) [ԵՐԵԿաւորին, և ամանակաց իԱ. (21) և երիր մասին յիշեցելում նահանդին]¹⁸: Եւ յայսմ կենդանատեսակի¹⁹ աւարտի գարնանային ժամուն յեղանակ, որ կոչի Աւդ:

Յաղագս Խեցգետնին: Չորիր կենդանատեսակ է Խեցգետին. իգական, յեղանակ[ան], ամառնային, տուն Լուսնոյ, բարձրութիւն Լուսնթագի՝ ի մասունս ԺԷ (17), նուաստութիւն Հրատի Արէս առ ի մասունս իԲ (28), [Եռանդինի]²⁰ ի տուրնչեան Լուսաբերի Ափրոդիտէս, իսկ ի [գիշերի]²¹ Հրատի: Եւ ձամեալ է նահանդին Հայոց, բաժանեալ Հողմոյն Հիասիւսոյ: Եւ տիրել է լանջաց: Եւ ելանէ կենդանատեսակն յաներեսութէն յերեկի աշխարհս ի ժամու Բ (2) և ինն երմասին և ամանակաց լԱ. (31): Եւ յայսմ կենդանատեսակի աշխարհին²² ժամադէսոն:

Յաղագս Առիւծուն: Հինգերորդ կենդանատեսակ է Առիւծն, արական, հաստատուն, ամառնային, տուն Արեգական, բարձրութիւն ոչ ուրուք, եռանդիմի՝ ի տուրնչեան Արեգական, իսկ ի գիշերի՝ Լուսնթագի: Եւ ձամեալ է նահանդին Ասիացւոց, բաժանեալ Հողմոյն Արեկելից: Եւ տիրեալ է կողից: Եւ ելանէ յաներեսութէն յերեսոյթն ի ժամս Բ (2) և Գ (3) մասունս և ամանակս լԵ (35):

Ἐκτον ζώδιον Παρθένος, θηλυκόν, δίσωμον, θερινόν, οἶκος καὶ ὕψωμα Ερμοῦ περὶ μοίρας *ιε'*, ταπείνωμα Ἀφροδίτης περὶ μοίρας *κζ'*. τρίγωνον ἡμέρας μὲν Ἀφροδίτης, νυκτὸς δὲ Σελήνης. κεῖται δὲ *<ἐν τῷ>* κλίματι τῷ τῆς Ελλάδος καὶ Ἰωνίας, ἀπομεμερισμένον ἀνέμῳ Νότῳ. κυριεύει δὲ λαγόνων καὶ τῆς ἄνω κοιλίας καὶ τῶν ἐντὸς πάντων. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥραις *β γ' ε'* μέ', χρόνοις δὲ *λη γ'*. ἐν ταύτῃ δὲ τῇ τριζωδίᾳ ἀπαρτίζεται ἡ τῆς θερινῆς ὥρας τροπή, *ἥτις καλεῖται πῦρ*.

Ἐβδομον ζώδιον Ζυγός, ἀρσενικόν, ἰσημερινόν, τροπικόν, μετοπωρινόν, οἶκος Ἀφροδίτης, ὕψωμα Κρόνου περὶ μοίρας *κ'*, ταπείνωμα Ἡλίου περὶ μοίρας *ιθ'*, τρίγωνον ἡμέρας μὲν Κρόνου, νυκτὸς δὲ Ερμοῦ. κεῖται δὲ *<ἐν τῷ>* κλίματι τῆς Λιβύης καὶ Κυρήνης, ἀπομεμερισμένον ἀνέμῳ Λιβί. κυριεύει δὲ *ἰσχίων* καὶ *γλουτῶν*. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥραις *β γ' ε'* μέ', χρόνοις *λη γ'*. ἔστι δὲ ἐν τούτῳ τῷ ζῳδίῳ τὸ τοῦ κόσμου κέντρον *ὑπόγειον*.

Ογδοον ζώδιον Σκορπίος, θηλυκόν, στερεόν, μετοπωρινόν, οἶκος Ἄρεως, ὕψωμα οὐδενός, κοίλωμα Σελήνης περὶ μοίρας *γ'*. τρίγωνον ἡμέρας μὲν Ἀφροδίτης, νυκτὸς δὲ Ἄρεως. κεῖται δὲ *<ἐν τῷ>* κλίματι τῷ τῆς Ἰταλίας, ἀπομεμερισμένον ἀνέμῳ *Βορρᾶ*. κυριεύει δὲ αἰδοίων καὶ κύστεως καὶ βουβώνων. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥραις *β γ'*, χρόνοις δὲ *λε.*

Ἐννατον ζώδιον Τοξότης, ἀρσενικόν, δίσωμον, μετοπωρινόν, οἶκος Διός, ὕψωμα οὐδενός, κοίλωμα οὐδενός, τρίγωνον ἡμέρας μὲν Ἡλίου, νυκτὸς δὲ Διός. κεῖται δὲ *<ἐν τῷ>* κλίματι τῷ τῆς Κιλικίας καὶ Κρήτης, ἀπομεμερισμένον ἀνέμῳ Ἀπηλιώτῃ. κυριεύει δὲ μηρῶν. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥραις *β θ'*, χρόνοις δὲ *λα β"* κατὰ τὸ μηνιμονευθὲν

Յաղագս Կուսանակին: Վեցերորդ կենդանատեսակ է Կուսանակն, իգական, ամառնային, երկտարրական, տունն և բարձրութիւն Փայլածուին՝ ի մասունս ժե (15), նուաստութիւն Լուսաբերի՝ առ ի մասունս իէ (27). Եռանգիւնի՝ ի տուրնչեան Լուսաբերի և ի զիշերի՝ Լուսնոյ: Եւ ձաւնեալ է նահանգին Քաղդէացւոց²¹, բաժանեալ Հողմոյն Հարաւոյ: Եւ տիրեալ է Կշտից և ստորին²² որովայնին և ամենայն փորոտոյն: Եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթ աշխարհիս ի ժամս Բ (2) և երիր մասին և է (7) երմասին²³ և է (47) երմասին, և ամանակաց է (7)²⁴ և Գ (3) մասին: Եւ յայսմ կենդանատեսակի²⁵ աւարտի ամառնային ժամուն յեղանակն, որ կոչի Հուր:

Յաղագս Կշինին: Եթներորդ կենդանատեսակ է Կշին, արական, Հասարակաւրեայ, յեղանակ[ան], աշնանային, տուն Լուսաբերի, բարձրութիւն Երեւակի՝ առ ի մասունս ի (20)²⁶, նուաստութիւն Արեգական՝ առ ի մասունս ժե (19) Եռանգիւնի՝ ի տուրնչեան Երեակի, ի զիշերի՝ Փայլածուի: Եւ ձաւնեալ է նահանգին Լիրէացւոց և Կիւրենացւոցն, բաժանեալ Հողմոյն Լիրէացւոց: Եւ տիրեալ է կոթանցն²⁷: Եւ ելանէ կենդանատեսակն յաներեւութէն յերեւոյթն ի ժամս Բ (2) և Գ (3) մասին և է (5) [եր]մասին և և [ե (5) եր]մասին և ամանակաց լիր (39) և է (7) մասանց²⁸: Եւ է աշխարհական տրամադրութեան կէտ Եթերական²⁹:

Յաղագս Կորին: Ութերորդ կենդանատեսակ է Կորն, [իգական], Հաստատոց, աշնանային, տուն Հրատի, բարձրութիւն ոչ ուրեք, նուաստութիւն³⁰ Լուսնի՝ առ ի մասունս Գ (3), Եռանգիւնի՝ ի տուրնչեան Լուսաբերին, ի զիշերի՝ Հրատին: Եւ ձաւնեալ է նահանգին Իտալացւոց, բաժանեալ Հողմոյն Հիւսիսոյ: Եւ տիրեալ է առնացի անդամոցն և դանձակի և ցայլիցն: Եւ ելանէ կենդանատեսակն յաներեւութէն յերեւոյթն ի ժամս Բ (2) և Գ (3) մասունս, և ամանակս և (35):

Յաղագս Աղեղնատրին: Իններորդ կենդանատեսակ է Աղեղնաւորն, [արական], երկտարրական, աշնանային, տուն Լուսնթագի, [բարձրութիւն ոչ ուրուք, նուազութիւն ոչ ուրուք, Եռանգիւնի՝ ի տուրնչեան Արեգական, իսկ ի զիշերի՝ Լուսնթագի]³¹: Եւ ձաւնեալ է նահանգին Կիլիկեցւոց և Կրետացւոց, բաժանեալ Հողմոյն Հարաւոյ³²: Եւ տիրեալ է Երանացն: Եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթն ի ժամս Բ (2) և Բ (9) երմասին, և յամանակս լԱ (31) և Գ (3)

κλίμα. ἐν ταύτῃ τῇ τριζωδίᾳ ἀπαρτίζεται ἡ τῆς μετοπωρινῆς ὥρας τροπή, ἥτις καλεῖται γῆ.

Δέκατον ζώδιον Αἰγόκερως, θηλυκόν, τροπικόν, χειμερινόν· οἶκος Κρόνου, ὕψωμα Ἀρεως περὶ μοίρας κη', ταπείνωμα Διός περὶ μοίρας ιε'· τρίγωνον ἡμέρας μὲν Ἀφροδίτης, νυκτὸς δὲ Σελήνης. κεῖται δὲ <ἐν τῷ> κλίματι τῷ τῆς Συρίας· ἀπομεμερισμένον ἀνέμῳ Νότῳ. κυριεύει δὲ γονάτων. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥρᾳ αἱ β" ε' με', χρόνοις δὲ κη γ'. ἔστι δὲ τοῦ κόσμου κέντρον δυτικόν.

Ενδέκατον ζώδιον Υδροχόος, ἀρσενικόν, στερεόν, χειμερινόν· οἶκος Κρόνου, ὕψωμα οὐδενός, κοίλωμα οὐδενός. τρίγωνον ἡμέρας μὲν Κρόνου, νυκτὸς δὲ Ερμοῦ. κεῖται δὲ <ἐν τῷ> κλίματι τῷ τῆς Αἰγύπτου ἀπομεμερισμένον ἀνέμῳ Λιβί. κυριεύει δὲ κυνημῶν. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου ἐν ὥρᾳ αἱ β", χρόνοις δὲ κε.

Δωδέκατον ζώδιον Ἰχθύες, θηλυκόν, δίσωμον, χειμερινόν· οἶκος Διός, ὕψωμα Ἀφροδίτης περὶ μοίρας κε', ταπείνωμα Ερμοῦ περὶ μοίρας ιε'. τρίγωνον ἡμέρας μὲν Ἀφροδίτης, νυκτὸς δὲ Ἀρεως. κεῖται δὲ <ἐν τῷ> κλίματι τῷ τῆς Ἐρυθρᾶς θαλάσσης καὶ Ἰνδικῆς χώρας· ἀπομεμερισμένον ἀνέμῳ Βορρᾶ. κυριεύει δὲ πελμάτων καὶ τῶν λεγομένων ἀκροποδίων. ἀναβαίνει δὲ τὸ ζώδιον ἀπὸ τοῦ ἀφανοῦς εἰς τὸ ἐμφανὲς τοῦ κόσμου μέρος ἐν ὥρᾳ αἱ γ' θ', χρόνοις δὲ καὶ β". ἐν ταύτῃ δὲ τῇ τριζωδίᾳ ἀπαρτίζεται ἡ τῆς χειμερινῆς ὥρας τροπή, ἥτις καλεῖται ὄδωρ.

Καὶ πρὸς μὲν τὴν κατὰ μέρος ἔκθεσιν τὰ δυοκαίδεκα ζώδια ὡδέ πως εἰρήσθω, πρὸς δὲ τὸ συλλήβδην αὐτὰ νοεῖν οὕτως ἐκτεθείσθω.

Ἄρσενικὰ μὲν ζώδια εἰσὶ τάδε· Κριός, Δίδυμοι, Λέων, Ζυγός, Τοξότης, Υδροχόος, θηλυκὰ δὲ τὰ τούτων ὑπόλοιπα Ταῦρος, Καρκίνος, Παρθένος, Σκορπίος, Αἰγόκερως, Ἰχθύες καὶ καθόλου εἰπεῖν, δσα περιττὸν ἀριθμὸν ἐκδέχεται ἀπὸ πρώτου Κριοῦ ἀρχόμενα, ταῦτα ἀρσενικὰ νοείσθω, δσα δὲ ἀρτιον θηλυκά.

մասին³³: Եւ յայսմ կենդանատեսակի³⁴ աւարտի աշնանային ժամուն յեղանակ, որ կոչի Երկիր:

Յաղագս Այծեղջերն: Տասներորդ կենդանատեսակ է Այծեղջիւրն, իգական, յեղանակ[ան], ձմեռնային, տուն Երկակի, բարձրութիւն Հրատի՝ առ ի մասունս [իլ (28), նուաստութիւն Լուսնթագի՝ առ ի մասունս]³⁵ ԺԵ (35). Եռանգիւնի՝ ի տուրնջեան Լուսարերի ի դիշերի՝ Լուսնոյ: Եւ ձաւնեալ է նահանգին Ասորոց, բաժանեալ Հողմոյն Հարաւոյ: Եւ տիրէ ծնդաց: Եւ ելանէ յաներեւութէն յերևոյթն ի ժամու միում և Բ (2) մասին և է (7) մասին և Խէ (47) երմասին, և ժամանակաց Իլ (28) և Գ (3) մասանց: Եւ աշխարհական տրամադրութեան կէտ սուզական:

Յաղագս Զրահեղն: Մետասաներորդ կենդանատեսակ է Զրահեղն, արական, հաստատուն, ձմերային, տուն Երկակի, բարձրութիւն ոչ ուրուք, նուաստութիւն ոչ ուրեք, եռանգիւնի՝ ի տուրնջեան Երկակի, ի դիշերի Փայլածուի, բաժանեալ Հողմոյն Լիրէացւոց: Եւ ձաւնեալ է նահանգին Եգիպտացւոց: Եւ տիրնեալ է սրանցն: Եւ ելանէ յաներեւութէն յերևոյթն ի ժամու միում և Բ (2) մասանց և ամանակաց ԻԵ (25):

Յաղագս Զկանն: Երկոտասան կենդանատեսակ է Զկոնք, փղական, երկտարրական, ձմեռնային, տուն Լուսնթագի, բարձրութիւն Լուսարերի՝ առ մասունս ԻԵ (25), նուաստութիւն Փայլածուի՝ առ մասունս ԺԷ (17). Եռանգիւնի՝ ի տուրնջեան Լուսարերի, ի դիշերի Հրատի: Զաւնեալ է նահանգին Կարմիր ծովուն և Հնդկաց աշխարհին, բաժանեալ Հողմոյն Հիւսիսոյ: Եւ տիրեալ է Բաթից ոտիցն և կոշեցելում ծայրից մատանցն: Եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթն ի ժամ Ա (1) և Գ (3) մասն և Թ (9) երմասին³⁶ և ամանակաց ԻԵ (25)³⁷ և Բ (2) մասանց: Եւ յայսմ կենդանատեսակի աւարտի ձմեռնային յեղանակ, որ է³⁸ Զուր:

Վ ե ր ա գ լ խ ո ւ թ ի ւ ն
ե ր կ ո տ ա ս ա ն կ ե ն դ ա ն ա տ ե ս ա կ ա ց ն³⁹

Ըստ իւրաքանչիւր տարբերութեանց ԲԺ (12)-ան կենդանատեսակացն այսպէս ինչ ասաց, բայց առ միահամուռ զնոսա իմանալ այսպէս արտադրեսցի:

Արականք են այսոքիկ. Խոյ ԵՐԵԿաւոր, Առիւծ, Կշիռ, Աղեղնաւոր, Զրահեղն, իսկ իգականք սոցա մնացուածն. Յուլն, Խեցգետին, Կուսանակն, Կորն, Այծեղջիւրն, Զկոնքն. Եւ համանգամայն իսկ ասել որքան աւելորդութիւն ունելով սոցա յառաջմէն հաւելով ի Խոյէն, այսոքիկ քեզ արականք իմացեալ լիցին, իսկ որքան հաւասարք՝ իգականք:

Τροπικὰ δὲ Κριός, Καρκίνος, Ζυγός, Αἰγόκερως· ἵση-
μερινὰ δὲ Κριὸς καὶ Ζυγός· ἵσάρτημα δὲ τούτοις τὰ στερεὰ
Ταῦρος, Λέων, Σκορπίος, Ὅδροχόος, τῶν δὲ δισώμων
ἵσαρίθμων τυγχανόντων αὐτοῖς, ἃ ἐστι Δίδυμοι, Παρ-
θένος, Τοξότης, Ἰχθύες· καὶ συναρετικῶς εἰπεῖν, ὅσα
διὰ τεσσάρων διέστηκε, ταῦτα τὴν αὐτὴν τῶν ζωδίων
ἐκδέχεται φύσιν.

Οἰκητήρια· Κριὸς καὶ Σκορπίος Ἀρεως, Ταῦρος καὶ
Ζυγὸς Ἀφροδίτης, Δίδυμοι καὶ Παρθένος Ἐρμοῦ, Καρ-
κίνος Σελήνης, Λέων Ἡλίου, Τοξότης καὶ Ἰχθύες Διός,
Αἰγόκερως καὶ Ὅδροχόος Κρόνου.

Ὑψώματα δὲ Κριὸς μὲν Ἡλίου, Ταῦρος δὲ Σελήνης,
Καρκίνος Διός, Παρθένος Ἐρμοῦ, Ζυγὸς Κρόνου, Αἰ-
γόκερως Ἀρεως, Ἰχθύες Ἀφροδίτης· ὅσα δὲ τούτων
ἀπὸ ζωδίων διέστηκε, τούτων αὐτῶν τὰ ταπεινώματα
τυγχάνει.

Τρίγωνα δὲ Κριός, Λέων, Τοξότης, ἥμέρας μὲν Ἡλίου,
νυκτὸς δὲ Διός. Ταῦρος, Παρθένος, Αἰγόκερως, ἥμέρας
μὲν Ἀφροδίτης, νυκτὸς δὲ Σελήνης. Δίδυμοι, Ζυγός,
Ὕδροχόος, ἥμέρας μὲν Κρόνου, νυκτὸς δὲ Ἐρμοῦ. Καρ-
κίνος, Σκορπίος, Ἰχθύες, ἥμέρας μὲν Ἀφροδίτης, νυκτὸς
δὲ Ἀρεως.

Προσωκείωται δὲ τὸ μὲν πρῶτον τρίγωνον τῷ Ἀπη-
λιώτῃ, τὸ δὲ δεύτερον Νότῳ, τὸ δὲ τρίτον Λιβῇ, τὸ δὲ
τέταρτον τῷ Βορρᾷ.

Προσπαθεῖ δὲ ταῖς χώραις τὰ ζώδια· ὁ μὲν Κριὸς
τῇ Περσίδι, ὁ δὲ Ταῦρος τῇ Βαβυλῶνι, οἱ δὲ Δίδυμοι τῇ
Καππαδοκίᾳ, ὁ δὲ Καρκίνος τῇ Ἀρμενίᾳ, ὁ δὲ Λέων τῇ
Ἀσίᾳ, ἡ δὲ Παρθένος τῇ Ἑλλάδι, ὁ δὲ Ζυγὸς τῇ Λιβύῃ,
ὁ δὲ Σκορπίος τῇ Ἰταλίᾳ, ὁ δὲ Τοξότης τῇ Κρήτῃ, τοῦ
Αἰγακέρωτος τῇ Συρίᾳ ἀπονενεμημένου, τοῦ Ὅδροχόου
τὴν Αἴγυπτον λαχόντος, τῶν Ἰχθύων τὴν Ἰνδικὴν χώραν
προσωκειωμένων.

իսկ յեղանականք Խոյ, Խեցգետին, Կշիռ, Այծեղջիւր. իսկ հասարակաւորքն՝ Խոյ, Կշիռն. իսկ զուգաթիւք նոցա են հաստատունքն՝ Ցուլն և Առիւծներին, Զրահեղն: Երկտարրական սոցա զուգաթիւք⁴⁰ գոլով են այսոքիկ. Երկաւորեակն և Կուսանակն, Աղեղնաւորն, [Զկունքն]: Եւ շարառոցելով ասել⁴¹, որքան քառիւքն բաղկացեալ այսոքիկ, զնոյն զկենդանատեսակաց բնութիւն:

Եւ բնակարանք են. Խոյի և Կարճի՝ Հրատ-Արէս, Ցուլն [և Կշիռն]՝ Լուսաբերի-Ափրոդիտեայ, Երկաւորեակն և Կուսանակն՝ Փայլածուի-Երմու, Խեցգետին՝ Լուսնոյ, Առիւծն՝ Արեգականն, Աղեղնաւորն և Զկունքն՝ Լուսնթագիդիս, Այծեղջիւրն և Զրահեղն՝ Երկակի-Կրաւոս:

Եւ բարձրութիւն[ք] են Խոյն՝ Արեգական, Ցուլն՝ Լուսնոյ, Խեցգետինն՝ Լուսնթագի, Կուսանակն՝ Փայլածուի, Կշիռն՝ Երկակի, Այծեղջիւրն՝ Հրատի, Զկունքն՝ Լուսաբերի: Եւ որքան զայս հեռի տեսակով⁴² տրոհեալք են, այսոքիկ նուաստութիւնք են:

Իսկ եռանգիւնիքն՝ Խոյն, Առիւծն և Աղեղնաւորն ի տուընչեան՝ Արեգական, իսկ ի գիշերի՝ Լուսնթագի: Ցուլն և Կուսանակն և Այծեղջիւրն ի տուընչեան՝ Լուսաբերի, իսկ ի գիշերի՝ Լուսնոյ: Իսկ Երկաւորեակն և Կշիռն և Զրահեղն ի տուընչեան՝ Երկակի, իսկ ի գիշերի՝ Փայլածուի: Խեցգետին և Կորն և Զկունքն ի տուընչեան՝ Լուսաբերի, իսկ ի գիշերի՝ Հրատի:

Եւ ընտանացեալ է առաջին եռանգիւնիւն Արեկելից, Երկրորդն՝ Հարաւոյ Երրորդն՝ Լիրէացւոց, Հորբորդն՝ Հիւսիսոյ:

Նաև ցաւակից լինին զաւառացն կենդանատեսակ[ք]ն. Խոյն՝ Պարսից, Ցուլն՝ Բարելացւոց, Երկաւորն՝ Գամբաց, Խեցգետին՝ Հայոց, Առիւծն՝ Ասիացւոց, Կուսանակն՝ Ելլադացւոց և Ցունաց, Կշիռն՝ Լիրէացւոց, Կարիճն՝ Իտալացւոց, Աղեղնաւորն՝ Կիլիկեցւոց⁴³, Այծեղջիւրն՝ Ասորոց, Զրահոսն՝ Եղիպտացւոց, Զուկն՝ Հնդկաց աշխարհին⁴⁴:

ՍԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եվ Ք. Պատկանյանի և Աշ. Արրահամյանի հրատարակությունների խորագիրն է. «Պատղոսի Աղեքսանդրացւոյ նախերգան ի ներքսածութենէ յոյժ» բառի առկայությունը զերնազրում անհմաստ է: Հասկանալի է, որ այն պատկանում է բնագրին, նրանով է սկսվում բուն բնագիրը, և ոչ թե ավարտվում վերնագիրը: Նույն սխալը գտնում ենք նաև Հ. Տաշյանի (տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մինիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 1057) և այլ ուսումնասիրողների մոտ:
2. Զեռագրերը տալիս են «գրեալ» ընթերցվածը, որ գրչական սխալ է: Պիտի լինի «գտեալ», այն համապատասխանում է հունարեն բնագրի անշրջառ-ին:
3. Աշ. Արրահամյանը ուղղում է՝ «ի նոյն նախազրութեան պատշաճ ի տեսութեան»: Սակայն հունարեն բնագրին ունի. Տես շնորհած ուղարկութեան թեարդութեան, ըստ որի պետք է սրբազրել այսպես. «ի նոյն նախազրութիւն պատշաճին» տեսութեանց»:
4. Զեռագրերում դրված է. «Համեմատելով առն յանդս արտագրել»: Բայց հունարենի սրբազրում ենք. «Համեմատելով առն յանդսն արտագրել»:
5. Բնագրում «նորօք»: Հունարեն բնագրի բննական հրատարակության մեջ՝ անշնուր—նորաբայց մի շարք ձեռագրեր, օրինակ Parisinus gr. 2506 ունի ծի՞ածուն «նորօք»: Սա ապացույց է այն բանի, որ հայ թարգմանչի ձեռքի տակ եղած հունարեն բնագրիը հարում է վերոհիշյալ № 2506 ձեռագրի խմբին:
6. № 1267 ձեռագրերը տալիս է «բացրարձրութեան» ընթերցվածը, որ սխալ է:
7. Բոլոր գրչագրերը տալիս են «վարին» որ անհմաստ է: Մենք ուղղեցինք «վարին» հունարենի բնագրի շահճական վրա:
8. Հունարեն բնագրում վերնագիրն է. Այսի շահճական վարին հրեկուասան կինդանատեսակաց:
9. Ամենուրեք հայերեն թարգմանությունը տալիս է «յեղանակ», որ սխալ է: Միայն «Վերագրիութեան» մեջ միանդամայն ճիշտ հանդես է գալիս սկզբնական ձեզ՝ «յեղանակական» որ համապատասխանում է շահճական-ին: Հայերենում սխալի պատճառը ենթադրյալ «յեղանակ»-ից հետո հանդես եկող ժամանակն է (ամառնային, աշնանային և այլն), որ գրիշներին ենթագրել է տվել, թե խոսքը տարվա եղանակների մասին է: Մեր ուղղումը արդարացվում է այն իրողությամբ, որ թեև բոլոր տասներեկու կինդանատեսակները պատկանում են շորս եղանակներից որևէ մեկին, բայց եղանական են միայն շորսը, և «յեղանակական» բառը հանդես է գալիս միայն շորսի կապակցությամբ:
10. Հայերեն բնագրին ունի «Բարձրութիւն» արեգական ժմբ (19): Հունարեն բնագրում շարեգական բառից հետո կա ուշիք, չօքիք, «մասանց», որ հայ գրիշը բաց է թողել: Բայց մի քանի բառ հետո այդ դարձվածքը կրկին է հանդիպում ուշիք չօքիք չ:
11. Հայերեն բնագրի այս հատվածում, ինչպես մեկ անգամ ևս, դրված է «բաժանաւղ»: մնացած բոլոր դեպքերում հանդիպում է ճիշտ ձեզ՝ «բաժանեալ» (Հունարենում ձևով՝ լաքուանուալ):
12. Հունարեն բնագրում «երրորդ» (թրիտ):
13. Զեռագրում «աշխարհ» բառի փոխարեն հանդես է գալիս զազափարագիր, որ Ք. Պատկանյանը և Աշ. Արրահամյանը կարդում են «երկիր»: Հունարեն բնագրը տալիս է չօշած, որ «աշխարհ» է նշանակում: Մեր ուղղումը արդարացվում է հետեւալ հանգամանքով: Միայն մեկ անգամ «կշիռ» կինդանատեսակի շարադրվածքի վերջում համապատասխան տեղում գրիշը զազափարագիր չի գործածել և տառերով գրել է. «աշխարհական»: Բացի այդ «Վերագրիութեան» վերջում գրված է բառերով. «Հնդկաց աշխարհ» իսկ իր տեղում, «Զկուեք» կինդանատեսակի առնշությամբ ասված է. «Հնդկաց», որի կողքին գրված է ինդրո առարկա զազափարագիրը: Ք. Պատկանյանն ու Աշ. Արրահամյանը ընթերցել են «Հնդկաց երկրին», բայց «Վերագրիության» մեջ բացված զազափարա-

զիրը տալիս է «աշխարհ»: Այս հանգամանքները նկատի ունենալով, այս գաղափարացիրը մննք վերծանում ենք «աշխարհ»:

14. Հայերնն թարգմանության մեջ այստեղ կա աղճատում, պրված է «հուանգինի»: Հունարենն ունի շ' այն է «Դ (3) մասին»:

15. Բնագրում «իննեակա», որ աղճատում է: Հունարեն բագիրը տալիս է Դ'—ԵՌ (9) երմասին:

16. Տե՛ս ծանոթ. 11:

17. Հունարենում տվյալ հոգմն անվանված է Լէ՛յ (սեռականը՝ Լէ՛յ) և կիրիակի հետ որևէ առնչություն չունի լ:

18. Հայերնն թարգմանության մեջ կա բառերի հերթականության շփոթություն: Հայերենում այսպիս է, «Եւ ին ելր]մասին յիշեցելում նահանգին և ամանակաց իԱ և երիր մասին»: Մենք վերականգնեցինք բառերի ճիշտ հերթականությունը, «Եւ ին ելր]մասին և ամանակաց իԱ և երիր մասին յիշեցելում նահանգին»:

19. Հայերնն թարգմանության մեջ «կենդանատեսակի»: Բայց հունարենն ունի τρէ՛սօնիշ—«եռակենդանատեսակի»: Հունարենում այդ բանը կրկնվում է շրոս անգամ, յուրաքանչյուր եռյակից հետո՝ երրորդ՝ վեցերորդ, իններորդ և տասներկուերորդ կենդանատեսակի: առնչությամբ, որտեղ ընդհանրացում է կատարվում: Հայերնն թարգմանության մեջ ամենայն հավանականությամբ, «եռակենդանատեսակի» փոխարեն զրված էր «Գ. կենդանատեսակի» և հայ զրիշը շնասկանալով, չնշել է առաջին Գ.-ն:

20. Զեռագրում՝ «աշխարհոյ ինն ժամադեմն»:

21. Հունարեն բնագիրը «Թաղղեացոց»-ի փոխարեն ունի Էլլանօս շ.թ. Պոնիաչ («Հելլ-

լադացոց և Յոնիացոց»): «Վերագլխութեան» մեջ Հայերենը միանդամայն ճիշտ փոխա-

նակ Քաղղեացոց, տալիս է «Ելլադացոց և Յոնաց»: Վերջին դեպքում էլ Հունարեն-

րնագիրը չունի Պոնիաչ-ը:

22. Հունարեն քննական բնագիրն ունի չ'ոչ—վերին: Բայց մի շաբթ ձեռագրերում, այն է Parisinus gr. № 2506 և Parisinus gr. № 2425 չ'ոչ-ի փոխարեն ունեն չ'ոչ—

ստորին, ինչպես Հայերեն թարգմանության մեջ: Հմմտ. ծանոթ. 5, 30:

23. Հունարեն բնագրում շ'—Ե (5):

24. Հունարեն բնագրում ՀՊ—ԼԸ (38):

25. Հմմտ. ծանոթ. 19:

26. Հայերենում կա բառերի հերթականության շփոթություն, որարձրութիւն առ ի մասունս Երեակի ի (20): Մենք ուղղեցինք «Բարձրութիւն Երեակի» առ ի մասունս ի (20):

27. Հունարենը «տիրեալ է կոթանցն» բառերից հետո ունի չ.թ. Կլուշոն (և յետոյին), որ հայ զրիշը բաց է թողել:

28. Հունարեն բնագրում շրջօնու ՀՊ շ' այսինքն «ամանակաց ԼԸ (38) և Գ (3) մասանց»:

29. Հունարենը «եթերական»-ի փոխարեն ունի Սովորություն—սուզական:

30. Հունարեն քննական բնագիրն ունի չ'ոչ-օրիշ—նուազութիւն, բայց մի շաբթ ձեռագրեր, օրինակ Parisinus gr. № 2506, ունի չառանօրշ—նուազութիւն, ինչպես հայ թարգմանության մեջ: Այս փաստը մի անգամ ևս հաստատում է, որ հայ թարգմանչի ձեռքում եղած Հունարեն բնագիրը պատկանում էր Parisinus gr. № 2506 ձեռագրի իմբին:

31. Անկյունավոր փակագծերի մեջ առնված նախադասությունը հայ զրիշը բաց է թողել: Դրա պատճառը մեր փակագծերից առաջ եղած «Հուննթագի» բառն է: Բաց թողնված նախադասությունն էլ վերջանում է «Հուննթագի» բառով:

32. Հունարեն բնագրում ձե՛չքաջ Առյէ: առողմոյն արևելականի:

33. Հունարեն բնագրում Բ'—ԵՌ (2) երմասին:

34. Տե՛ս ծանոթ. 19:

35. Անկյունավոր փակագծերի մեջ եղած բառերը հայ զրիշը բաց է թողել: Պատճառը եռյնն է, ինչ ցույց ենք տվել 31-րդ ծանոթագրության մեջ: Բաց թողնված նախադասությունը վերջանում է շառ ի մասունս բառերով: «Առ ի մասունս» բառերով է վերջանում բաց թողնվածին անմիջապես նախադասությունը:

36. Հայերեն թարգմանության մեջ կա բառերի հերթականության շփոթություն: Այնտեղ գրված է, «և տիրեալ է թաթից ոտիցն և կոչեցելումն ծայրից մատանց, և Բ (9) երմասին եւ ելանէ յաներնութիւն յերեսյթն ի ժամ Ա (1) և Գ (3) մասն»:
37. Հունարեն բնագրում՝ —իւ (21): Մատենադարանի 1267 և 1973 ձեռագրերում բացակայում են «և ամանակաց Իւ (25) և Բ (2) մասանց» բառերը: Դրանք գտնում ենք Ք. Պատկանյանի հրատարակության մեջ (էջ 71—72):
38. Բնագրում շահեւ՛շ:— «որ կոչիք»:
39. Հունարեն բնագրուց վերնագիրը շունի: Այն հանդիպում է Պողոս Աղեքսանդրացու խնդրուառարկա աշխատության սկզբում (Անաւպահաւութեաւու: Ենականութիւն): Հայ հրատարակիչները այս բաժինը վերնագրել են պարզապես «Վերագլխութիւն» որով հաջորդող նախադասությունը սխալ է ստացվել: Նրանց մոտ նախադասությունն այսպիս է հանդես գալիս: «Երկատասան կենդանատեսակացն ըստ իրաքանչիւր տարրերութեանց երկուասան կենդանատեսակացն այսպէս ինչ ասաց», երբ իրականում մեր կողմից ընդգծված բառերը պատկանում են վերնագրին՝ «Վերագլխութիւն երկուասան կենդանատեսակացն», որով և վերնագիրն է հասկանալի դառնում և հաջորդող նախադասությունը տրամաբանական դառնում:
40. Հայերեն թարգմանության մեջ «զարութիւն», որ աղճատում է: Հունարեն բնագրում հանդիպում է իշարմանաց, այն է զուգաթիւր:
41. Հայերեն բնագրում՝ «ասենք: Ճիշտն է՝ ասելք»:
42. Բնագրում «հեռի տեսակով»: Հունարեն բնագիրն ունի ձևութեան համար հաջորդող համարական դառնում:
43. Ճիշտը պիտի լինի «Կիլիկեցւոց և Կրետացւոց», ինչպես ասված է բուն տեքստում (Հմմտ. «Աղեղնաւոր» կենդանատեսակի մասին գրվածի հետ): Հայերենը վերագլխության մեջ պահպանել է միայն «Կիլիկեցւոց»-ը, իսկ Հունարենը միայն «Կրետացւոց»-ը:
44. Հայերեն թարգմանությունը պակասավոր է: Բաց է թողնված ընդամենը երկու պարրերություն:

Պողոս Աղեղնաւորացու «Ներքածականք-ում հանդիպող տերմինների հին հայերեն բարգմանուրյունը և նրանց համապատասխանող հունարեն անվանումները

Աղեղնաւոր—Τοξότης
Ամանակ, ժամանակ—γράνος
Ամառնալին—θερινός
Ալժեղիւր—Λιγόνερως
Աներեոլիթ—ձօսանին
Աշխարհ, աշխարհական, աշխարհական—χάσμος, աօստին, տօն չօստիո
Ասիւծ—Δέων
Արական—ձօսանին
Արեգակն—Հλιոս
Արեելական (հողմ) — Απρατόνης
Աւղ—ձիր
Բարձրութիւն—սկզբա
Բացբարձութիւն—ծագօքան
Բոլորատեսութիւն, բոլորութիւն—չօչկան
Գանձակ—շնչառ
Գարնանալին—չշրջնոց
Գիշեր—գիշեր

Դլուխ—չօչառչ
Եռանգիւնի—τρίγωνον
Երկաւոր, երկաւորեակ—Διδυմոս
Երկիր—γῆ
Երկնամիջոցակէտ—μεσօρχανոն չնարոց
Երկուարրական—ձօսանին
Երկակ—Կρόνոս
Զուգաթիւր—իշարմանաց
Ժամ—ώρα
Ժամապէտ—ώρօշչուոս
Իգական—θηթևան
Իրաւութիւն—πραγμաτεία
Լիրեացւոց (հողմ)—անընօս Լիոն
Լուսարեր—Աֆրօնիու
Լուսին—Σεլήνη
Լուսնթագ—Ζεύς (սեռ. Ճ:օչ.)
Խեցկետին—Կարκίνոս

Խոյ—Կրիօս	Յեղանակ—շրոպչ
Կենդանատեսակ—Հաֆլու	Յեղանական—շրոպչու
Կէտ—հենցրու	Նահանգ—ուժիք
Կշիռ—Հուշօս	Ներքուածականք, ներքուածոթիւնք— տեսացույնականք
Կոր—Σκορπίօս	Նուազութիւն—խօնակութիւն
Կուսանակ—Ազրենոս	Նուազութիւն—տառենութիւն
Հասարակաւրեալ—օստիզրիան	Պարտնակ—ծառացօս
Հաստատն—շաբաթօս	Ջոր—նծառ
Հաստած—շրջիք	Ջրանեղ—Դերջինութիւն
Հոդմ—ձնեմոս	Մուզական—ծառութիւն
Հոդմ Հարաւոյ—ձնելոս Խոյօս	Տանտելք—Օւաճառութիւն
Հոդմ Հիւսիսոյ—ձնելոս Յօրդատ	Տիւ—Դրերա
Հրատ—”Արց”	Տոն—օւխօս
Հուր—πῦρ	Տրամադրութիւն—ծանրութիւն
Հզունք—”Իշթառ”	Յալլք—Յութիւն
Մանրերկրորդակք—էպու	Յուլ—Տահրօս
Մասն—բօրա	Վերաբերութիւն—ձնաշօրժ
Մարդակերպ—ձնաքոռութես	Փալլածու—Երանէ
Յարձակիչ—ձքչոս:	

Р. М. БАРГИКЯН

ДРЕВНЕАРМЯНСКИЙ ПЕРЕВОД АСТРОНОМИЧЕСКИХ ТРУДОВ АРАТА ИЗ СОЛ И ПАВЛА АЛЕКСАНДРИЙСКОГО

(Р е з ю м е)

В конце XIX в. было известно около семидесяти имен греческих авторов, сочинения которых в средние века были переведены на армянский язык. Подавляющее большинство этих авторов относится к раннему средневековью. Древнегреческая (античная) литература занимает скромное место. Последние изыскания показывают, что в армянских рукописях можно обнаружить совершенно новые, неизвестные ранее (или же известные под другим авторством) переводы сочинений древнегреческих авторов. Из многочисленных сочинений Арата из Сол до нас дошел только труд под названием „Фաւուչ“, вторая часть которого в раннем средневековье была переведена на армянский.

Большой интерес представляет фрагмент космографического сочинения, встречающийся в других армянских рукописях и носящий заглавие: „О единой сфере, из Арата“. Данный фрагмент, по всей вероятности, является частью утерянного труда Арата из Сол „Կախու“, где говорилось о небесной сфере.

В средневековой Армении имели популярность и чисто астрологические представления „халдеев“, известные по трудам Павла Александрийского.

сандринского. Написанный им в 378 г. труд „Եօսայուս“ в раннем средневековье был переведен и армянами, по всей вероятности до VII в., приверженцем грекофильской школы. „Եօսայուս“ состоят из „Оглавления“, „Введения“ и 37 глав. До нас дошел перевод „Введения“ и почти полностью главы, посвященной зодиаку.

Армянские переводы трудов Арата и Павла Александрийского свидетельствуют о том, что в средневековой Армении существовали обе—научная и астрологическая—противоборствующие школы.

Н. М. BARTIKIAN

LA TRADUCTION ARMÉNIENNE ANCIENNE DES OUVRAGES
ASTROLOGIQUES D'ARATUS DE SOLI ET DE
PAUL D'ALEXANDRIE
(Résumé)

À la fin du XIX^e siècle on connaissait environ soixante-dix noms d'auteurs grecs dont les œuvres avaient été traduites en arménien au Moyen Age. La plus grande partie de ces auteurs remonte au haut Moyen Age. La littérature grecque antique occupe une place modeste. Les recherches récentes montrent que l'on peut encore découvrir dans les manuscrits arméniens de nouvelles traductions d'auteurs grecs inconnus jusqu'à présent (ou connues sous un autre nom). Des nombreuses œuvres d'Aratus de Soli nous possédons seulement l'ouvrage intitulé „Փալուրեա“, dont la seconde partie a été traduite en arménien au haut Moyen Age.

Le fragment d'une œuvre cosmographique contenu dans deux manuscrits arméniens et intitulé: „Sur la sphère unique, extrait d'Aratus“ présente un grand intérêt. Ce fragment est probablement une partie de l'œuvre disparue d'Aratus de Soli „Կառու“, où il parlait de la sphère céleste.

En Arménie médiévale les notions proprement astrologiques des „chaldéens“, connues d'après les œuvres de Paul d'Alexandrie étaient également populaires. L'ouvrage écrit en 378 et intitulé „Եօսայուս“ fut traduit par les Arméniens au haut Moyen Age, selon toute probabilité avant le VII^e siècle, par un adhérent de l'école grécophile. „Եօսայուս“ se compose d'une Table de Matières, d'une Introduction et de 37 chapitres. La traduction de l'Introduction et de presque tout le chapitre consacré au Zodiac est arrivée jusqu'à nous.

Les traductions arméniennes des œuvres d'Aratus de Soli et de Paul d'Alexandrie témoignent du fait qu'en Arménie médiévale existaient également deux écoles—scientifique et astrologique—complètement opposées.

Բ. ՌԻԺԻԵ

(Սոլեմ—Ֆրանսիա)

ԱՊՈՂԻՆԱՐԻ ՄԻ ԲՆԱԳՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՓՐԵՄԻ ԱՆՎԱՆ ՏԱԿ

Ապողինար կավողիկեցի հայիսկոպոսը, որը հակարիոսականության հունդուն ախոյան էր, ինքն էլ վերջում որպես հերետիկոս դատապարտվեց Կոստանդնուպոլիսի ժողովում, 381 թվականին։ Նրա քրիստոսարանական գրածքները, որոնք արտահայտությամբ միաբնյա էին¹, հասել են, այնուամենայնիվ, մինչև մեր օրերը շնորհիվ հեղինակային կեղծանունների (Աթանաս, Գրիգոր Սքանչելագործ, Հովհոս և Փելիփոս Հոռմայեցիներ)։ Այդ մասին նշելով իր թանկարժեք «Հայկական մատենագիտության» մեջ, բանասեր Հ. Ս. Անասյանը շատ իրավացիորեն զրում է. «Շատ հավանական է, որ հայ մատենագրության մեջ ևս հայտնաբերվի նման փաստ՝ եթե հետազոտություն կատարվի այդ ուղղությամբ» (էջ 1042)։ Առանց ձեռնամուխ լինելու այդ ուղղությամբ հատուկ պրատումների՝ մենք պատահեցինք մի բնագրի, որն արդարացնում է այդ հավաստումը և միաժամանակ ի հայտ է բերում Ապողինարի մի նոր կեղծանունը, որ չէ Եփրեմ Ասորի։ Խոսքը վերաբերում է «Յաղագակ հաւատոյ և մարմնաւորութեան» թղթին, որը հունարենում, լատիներենում և ասորերենում ավանդվել է Հովհոս Հոռմայեցու անվամբ²։

Գրվածքի հայերեն թարգմանությունը, որն ուղղակի հունարենից է կատարվել, կարող է լինել հունարեն դպրոցի դարաշրջանից։ «Կնիք հաւատոյ»-ն, որը նրան չի վկայակոշում, ապահովաբար նրանից առաջ է։

Մենք այդ հրատարակում ենք՝ հիմնվելով մեզ հայտնի երեք ձեռագիր օրինակների վրա, որոնք բնագիրը տալիս են լրիվ։

Ա — Կ. Պոլիս, Ղալաթիայի Հայոց Ազգային մատենագարանի ձեռ. № 54, քրիստոսարանական ժողովածու, ժԴ դ., էջ 324—325։ Սկզբից և վերջից թերի այս ձեռագիրն արդյոք չի՝ պարունակում Հովհանն Մայրագոմեցու և կամ Անանիա նարեկացու կորած «Հաւատարմատ»-ներից մեկը։

Բ — Եթեան, Պետական Մատենագարանի ձեռ. № 5115, Եփրեմի ճառերի ժողովածու, ժԴ դ., էջ 254բ—256ա։ Կտուց անապատից եկած այս ձեռագրի հիշատակարանից մի քանի տողեր են մնացել³։

¹ Տե՛ս H. de Riedmatten, La Christologie d'Apollinaire de Laodicee, ի Studia Patristica II (Texte und Untersuchungen, 64), Բեռլին, 1957, էջ 208—234։

² H. Lietzmann, Apollinaris von Laodicea und seine Schule, I, Տյուրինգեն, 1904, էջ 135—137 և 194—203։

³ Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Մատենագարանի տնօրեն ակադ. Լ. Խաչիկյանին, որը մեզ տրամադրեց այս ձեռագրի մանրաժամկենը։

С — էսկորիֆալ, ձեռ. Escorial Ψ II. 9, որը Յ-ի մի անուղղակի տպանն է՝ կատարված կվովում, 1565 թ., էջ 186—187:

Հետևողական մի քննություն հավանաբար ի հայտ կրերի ուրիշ օրինակներ ես՝ զինի լրիվ բնագրի, թե բեկորների: Այդ ժամանակ հնարավոր կլինի վերականգնել տարբերակները՝ միաբնակների և երկարնակների միջև եղած հակածառությունների առիթով հրապարակ եկած տերմինարանության առտիճանական զարգացման պատմական համապատկերի մեջ և այս թղթի ունեցած ազդեցության ծավալը հայկական ավանդության մեջ⁴: Հրատարակությունում մենք ընդգծում ենք այն մասերը, որոնք բացակայում են հունարեն սկզբնագրում⁵:

ԵՓԲԵՄԻ Ի ՍՈՒՐԲ ԵՐԲԱԲԻԱԹԻՒԹԻՒՆՆԵՐ

Մի ոք անգոստեսցէ զփրկական⁶ մարմինն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ի պատճառս⁷ համագոյութեանն⁸. զի եւ⁹ ոչ մեր ժողովս եւ ոչ որ զմարդկային¹⁰ խորհուրդն¹¹ ունիցին¹², զմարմինն¹³ քստ ինքեան համագոյական Աստուծոյ ասէ եւ կամ խորհի. բայց եւ¹⁴ ոչ յերկնից զմարմինն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ասեմք¹⁵, այլ ի սրբոյ¹⁶ կուսէն Մարիամայ¹⁷ խոստովանիմք մարմնացեալ զԱստուծոյ Բանն¹⁸ եւ ոչ բաժանեմք¹⁹ զնա յիւրմէ մարմնոյն²⁰ յերկուս դէմս, եւ ոչ յերկուս բնուրիմս, քանզի եւ ոչ միտք մարդոյն²¹ յիւրմէ²² մարմնոյն բաժանին. այլ մի դէմք²³, եւ²⁴ մի բնութիւն²⁵, բովանդակ մարդ:

Այդ թէ²⁶ քստ նմանութեան մարդոյն²⁷ հաւատամք եկեալ զՏէրն²⁸ մեր Յիսուս Քրիստոս, ի նմին փոկ ի²⁹ կուսական յղութենէ³⁰, քստ որում եւ³¹ աստուծածին ցուցաւ կոյսն³²—այս է³³ խորհուրդ փրկութեան մերոյ մարմնանալն³⁴ Աստուծոյ Բանին—եւ անորոշելի եւ անմեկնելի յիւրմէ մարմնոյն, առ Աստուծած Բանն միաւորութեամք քստ բնական համագոյութեանն Բանին³⁵ առ

⁴ Դիտելի է, որ Ա ձեռագրի լուսանցքներում ընթերցողները կարիք են զգացել անձիշտ համարկած որոշ բառեր կամ մասեր բացատրելու կամ ուղղելու:

⁵ Այդ մասերը տպագրվում են շղագրով: Հայերեն բնագրում կարիք կա լրացնելու մի քանի բառեր, որոնք գուրս են ընկել թարգմանության ընթացքում: Այսպիսի՝ ծննդ. 6-ից հետո, ոչ մեր ոչ մեր ժողովս», 22-ից հետո. «բովանդակ մարդ եւ բովանդակ Աստուծո»; 58-ից առաջ շեւ Աստուծած հզաւըն», 59-ից հետո, երկուսի միջև, անհետացել է մի ամբողջ հատված. զդի և ոչ..., 64-ից հետո. «աստուծածին խորհի այլ մարդկային», և վերցալիս 81-ից հետո, հունարենն ունի մի հատված, որը պակասում է ինչպես հայերենում, այնպես էլ ասորերեն և լատիներեն թարգմանություններում:

¹ AB Նորին Եփրեմի: 2 B Երրորդութիւն: C Նորին Երանելոյն արքա Եփրեմի ասացեալ յաղագս ի սուրբ Երրորդութիւնն: 3 B զտիրական և զփրկան: 4 A պատճառք: 5 A համագոյութեան: 6 BC շիբ: 7 BC եւ մարդկային: 8 BC խորհուրդս: 9 BC ունիցի: 10 BC զմարմին: 11 BC շիբ: 12 A ասեմք զՏէրն. BC զմարմին. A զմարմինն: 13 A սուրբ: 14 A ի Մարիամայ. C կուսէ Մարիամա: 15 BC զմարմնացեալ Բանն: 16 A բաժանեմ: 17 B զնայ յիւրմէ մարմնոյն. C զնա յիւրմէ մարմնոյն: 18 A մարմնոյ: 19 B յիւրմէլ: 20 A դէմ: 21 BC շիբ: 22 BC մարմին: 23 BC եթէ: 24 A մարդոյ: 25 A զՏէր: 26 BC շիբ՝ իսկ ի: 27 B յղութենէն: 28 BC շիբ: 29 A սուրբ կոյսն: 30 A շիբ: B եւ այս է: 31 BC մարմնանալ: 32 A համազ. Բանին. BC Բանին միաւորութեամք:

Հայր, վասն զի հաւասար է անուանն, եւ³³ մարմինն³⁴ նորա, եւ մարմին՝ ճշմարտապէս։ Զմարմնաւորութիւնն³⁵ խոստովանիմք լիալ³⁶ Բանին Աստուծոյ։ Եւ եթէ ոչ հաւասար է ամենայնիւ³⁷, ապա³⁸ ի բաց կայ³⁹ յաստուածութենէն, եւ ոչ Բանն եւկրպազեցի, եւ⁴⁰ ոչ փրկութիւն առանց Բանին. ամենայն իրավու⁴¹ հաւատացելոցն⁴² դհետ երթայ առանց էռեթեան⁴³ աստուածային երրորդութեանն։

Քանզի ոչ երկրպագելի⁴⁴ ոք և ոչ⁴⁵ փրկութիւն է⁴⁶ առանց աստուածային երրորդութեանն, այլ աւելորդ և տարածամ նոյն ինքն⁴⁷ ցուցցի⁴⁸ մարմնաւորութիւնն⁴⁹ սուս⁵⁰ գոցի եւ անսուսն⁵¹ եւ⁵² աստուածային⁵³ գիրք⁵⁴ եթէ Բանն մարմին եղեւ եւ⁵⁵ եթէ ծնաւ մեզ⁵⁶ Յիսուս Քրիստոս Տէր⁵⁷ ի քաղաքի Դագթի. սուս գոցի եւ Յիսուս մանուկն⁵⁸ եւ ամենայն նորին նմանք⁵⁹. զի եւ⁶⁰ ոչ մեծ ինչ եւ պատուական քրիստոնէից⁶¹ պարզեւր, բան թէ ի մահ նորա մկրտութիւնն⁶² բան ունիցի⁶³, եւ եթէ⁶⁴ ոչ թուելի է⁶⁵ յաստուածայինն⁶⁶ երրորդութեանն մարմնաւորութիւնն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ապա եւ ոչ մկրտութիւնն փրկութիւն եղեւ։ Քանզի ի մահն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մկրտին ամենայն հաւատաց (էջ 325) ցեալք⁶⁷:

Բայց մեզ խոստովանելի է զՈրդին Աստուծոյ Աստուած ճշմարիտ՝ նախ քան զյաւիտեանս, համագոյական⁶⁸ Հաւր⁶⁹, զՅիսուս Քրիստոս զՏէրն⁷⁰ մեր, զոր կոյսն ծնաւ փրկիչ եւ կեցուցիչ. և նմա զերկրպագութիւնն⁷¹ հարկաւորապէս⁷² մատուցանեմք. եւ ոչ որոշի⁷³ յերկրպագութենէ մարմինն նորա, քանզի անհնար⁷⁴ է որոշի⁷⁵ յաստուածային⁷⁶ կենացն, որոշի⁷⁷ երկրպագութեանն. զի յորժամ մարմնոյն ոք⁷⁸ ոչ պագանիցէ⁷⁹ երկիր⁸⁰, նմա ոչ⁸¹ երկրպագէ, որպէս աւետարանիշն մի զկեանս⁸² Բանին և մարմնոյն աւետարանելով, ասէ՝ Բանն մարմին եղեւ. ապա⁸³ ուրեմն եթէ⁸⁴ Բանն մարմին եղեւ⁸⁵ Բանին երկիր պագանելով⁸⁶, մարմնոյն երկիր պագանէ⁸⁷. եւ երկիր պագանելով⁸⁸ Յիսուսի Քրիստոսի առաքեալքն⁸⁹ մարմնոյն երկիր պագանէին եւ Բանին Աստուծոյ⁹⁰ ընդ նմին. եւ հրեշտակը⁹¹ նմա սպասաւորէին⁹² որպէս իւրեանց Տեառն, մարմնոյն երկիր պագանելով⁹³. նոյնական կոյսն ի սկզբանն մարմին ծնանելով, զԲանն⁹⁴ եւ է Աստուածածին. եւ⁹⁵ հրեալքն⁹⁶ զմարմինն խաշելով⁹⁷ զԱստուած խաշեցին. եւ զի ոչ մի ինչ իսկ է բաժանումն Բանին եւ մարմնոյն նորա⁹⁸ յաստուածային գիրսն⁹⁹. այլ է մի բնութիւն, մի զարութիւն, մի դէմք¹⁰⁰, բոլորն Աստուած եւ բոլորն մարդ նոյն¹⁰¹ ինքն։

33 BC շիբ։ 34 BC բնութիւն։ 35 BC զմարմնաւորութիւն։ 36 A լիեալ։ 37 BC ամենայն։ 38 BC բանիւ։ 39 A եկաց. C կաւ։ 40 A շիբ։ 41 B իրօր։ 42 BC հաւատացելոց։ 43 BC էռեթեանն։ 44 A երկրպագի։ 45 BC շիբ։ 46 BC շիբ։ 47 BC աւտար ի ժամուն ինքն։ 48 BC ցուցանի։ 49 BC ի մարմնաւորութեան։ 50 A տար։ 51 A եւ անս. B գոցի անսուտ։ C անսուտ։ 52 A շիբ։ 53 C աստուածաին։ 54 BC գիրն։ 55 BC շիբ։ եթէ... եւ 56 BC ձեզ։ 57 AC շիբ։ 58 BC Քրիստոս փիս. եւ... մանուկն։ 59 B նորին նմաներն. C նման նորին։ 60 BC շիբ։ 61 A քրիստովնէից։ 62 BC շիբ։ 63 BC ունի։ 64 BC շիբ։ 65 BC շիբ։ 66 BC աստուածային։ 67 BC շիբ։ մարմնաւորութիւն... հաւատացեալք։ 68 C համայնական։ 69 B Հօր։ 70 BC զՏէր։ 71 BC զերկրպագութիւն։ 72 C հաւասարապէս։ 73 BC ոչ որ իշխէ։ 74 A անհնարին։ 75 A որոշելո։ 76 B յաստուածային։ 77 BC շիբ։ 78 BC շիբ։ 79 BC պազիցէ։ 80 C յերկիր։ 81 BC ոչ ոք։ 82 BC կեանս։ 83 A ապայ. B ապ։ 84 BC շիբ։ 85 C շիբ։ ապա... եղեւ։ 86 C երկրպագանելով։ 87 BC Երկրպագէ. A երկիր պագանէ զի։ 88 BC երկիր պագելով։ 89 A առաքեալքն երկիր պագանելով Յիսուսի Քրիստոսի։ 90 BC շիբ։ 91 A հրեշտակը։ 92 B սպասաւորէին նմա. C նմայ սպաս։ 93 BC երկիր պագելով։ 94 B զԲանն ծնաւ։ 95 A նոյն աւրինակ եւ։ 96 C հրեալք։ 97 A խաշելով զմարմինն։ 98 BC որ։ 99 AB. գիրս։ 100 B զօրութիւն. C մի զէմք մի զարութիւն։ 101 A եւ նոյն։

Եղիթին նորա¹⁰² ըստ անտեսանելոյ¹⁰³ աստուածութիւնն¹⁰⁴, եւ ըստ տեսանելոյ մարմինն¹⁰⁵: Ոչ աւտարացաւ¹⁰⁶ եւ ոչ բաժանեցաւ յաստուածային Երրորդութենէն մարմնաւորութիւնն¹⁰⁷ Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի յերրորդութեանն¹⁰⁸ թուեալ ասէ¹⁰⁹ ի մկրտութեանն զՈրդի¹¹⁰: Եւ զայս ասելով ոչ բաժանեմք զմարմինն. վասն զի ի¹¹¹ մահ¹¹² նորա մկրտութիւնն¹¹³ ի թողութիւն մեղաց և ի¹¹⁴ մարմնոյ յարութիւն տուեալ լինի. որ է աստուածութեանն գործ եւ ոչ արարածոյ բնութեան¹¹⁵: Քանզի մի եւ նոյն մարմինն եւ Աստուածորոյ մարմինն է¹¹⁶ եւ ոչ փոփոխելով մարմինն յանմարմնութիւն, այլ ունի զինքեան¹¹⁷ զմարմինն որպէս¹¹⁸ ծնաւ ի կուսէն¹¹⁹ եւ առաւել քան¹²⁰ զմեզ ըստ որում ի¹²¹ յԱստուած Բանն միաւորեցաւ:

Б. УТИЕ

(Солем—Франция)

ОБ АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ ОДНОГО ТРАКТАТА
АПОЛЛИНАРИЯ ПОД АВТОРСТВОМ ЕФРЕМА

(Резюме)

Из истории христианских литературу известно, что часть христологических произведений известного еретика Аполлинария Лаодицкого (IV в.) дошла до нас под мнимым авторством считаемых православными Афанасия Александрийского, Григория Чудотворца, Юлия Римского и Феликса Римского. В данной статье автор доказывает, что маленькое произведение „О святой Троице“, известное в армянской словесности под авторством Ефрема Сирине, также является трудом Аполлинария, сохранившимся на греческом, латинском и сирийском языках под авторством Юлия Римского. Армянский текст, переведенный с греческого, издается на основании трех рукописных списков (Константинополя, Еревана, Эскуриала).

B. OUTTIER

(Solesmes—France)

LA TRADUCTION ARMÉNIENNE D'UN TEXTE D'APOLLINAIRE
SOUS LE NOM D'EPHREM

(Résumé)

On sait que dans l'histoire des littératures chrétiennes une partie des œuvres christologiques du célèbre hérétique Apollinaire de Laodicée

¹⁰² բնութիւն նորա. BC էութիւն եւ նոյն ինքն մարդ: ¹⁰³ BC տեսանելոյ: ¹⁰⁴ BC աստուածութիւն: ¹⁰⁵ BC տեսանելոյ մարդ: ¹⁰⁶ Յօստարացաւ: ¹⁰⁷ BC մարմնաւորութիւն: ¹⁰⁸ BC զան զի ընդ Երրորդութիւն: ¹⁰⁹ BC ասէ: ¹¹⁰ BC զմարդկութիւն Արդոյ: ¹¹¹ BC շիր: ¹¹² Ա մահն: ¹¹³ BC նորայ մկրտութիւն: ¹¹⁴ BC շիր: ¹¹⁵ BC բնութիւն: ¹¹⁶ BC եւ ոչ Աստուածորոյ մարմին է. Ա շիր՝ է: ¹¹⁷ BC յինքեան: ¹¹⁸ BC որ: ¹¹⁹ Ս կուսէ: ¹²⁰ Ա եւ քան: ¹²¹ Ա եւ:

(IV^es.) est conservée et connue sous les noms d'Athanase d'Alexandrie, de Grégoire le Thaumaturge, de Jules de Rome et de Félix de Rome, auteurs considérés comme orthodoxes. Dans cet article l'auteur démontre que le petit ouvrage „Sur la Sainte Trinité“, connu dans la littérature arménienne comme appartenant à Ephrem le Syrien, est également l'oeuvre d'Apollinaire, mais portant en grec en latin et en syriaque le nom de Jules de Rome. L'édition du texte arménien, qui est traduit du grec, est basée sur trois manuscrits (de Constantinople, d'Erévan, d'Escorial).

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԲՆԱԳՐՈՎ ԶՊԱՀՊԱՆՎԱԾ ՎԱՐՔԱԳՐԱԿԱՆ
ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆ

1897 թվականի ամսանը ակադ. Ն. Մառը գործուղվել էր Աթոս՝ Իվերոն մայրավանքի ձեռագրական հավաքածոն ուսումնասիրելու։ Անդրադառնալով իր հիմնական անհիբներին, գիտնականը գրում է. «Աթոս ուղևորվելու իմ նախանշած գլխավոր աշխատանքը հին վրացական եկեղեցական մատենագրության, կարծում եմ, հիմնական հարցի շուրջ՝ հայ մատենագրության ազգեցության հարցը վրացականի վրա, նյութեր հավաքելն էր։ Այն նշանակություն ունի ոչ միայն վրաց մատենագրության համար, այլև հայկական, իսկ մասամբ էլ ատորականի համար։ Ինչպես երկում է, առանց այս մասնավոր հարցի լուծման, առանց վրաց մատենագրության վրա հայոց ազդեցության շափերի ու որակի լուսաբանության ոչ մի հնարավորություն շկա պատկերացնելու գրական ու առհասարակ Ասորիքի, Հայաստանի ու Վրաստանի քրիստոնեական-մշակութային հազորդակցման բնույթը»¹։

Հիշյալ առումով առանձնապես նշանակալի եղավ Իվերոնի հավաքածուի № 57 գրչագրի ուսումնասիրությունը։ Այն վարքագրական հուշարձանների ժողովածու է՝ Վարք սրբոց, գերազանցապես թարգմանված հայերենից։ Զեռագիր Խ դարի է, մագաղաթյա, նուսխուրի գրչության, ընդօրինակված ասոմթավրուլի (երկաթագիր) գաղափար օրինակից²։ Այս ձեռագրում են պահպանվել մեր ներկա ուսումնասիրության առարկա հուշարձանները՝ «Բնիքեցումն երկու սուրբ եղբայր տղաների՝ Դավիթ և Տիրինանի» (էջ 302ր—308ա, այսուհետե կոչելու ենք՝ «Դավիթի և Տիրինանի վկայաբանություն») և «Վկայաբանություն ըվառ ինք սուրբ տղաների, որոնք սուրբ ավազանի մկրտությամբ նոգեռ եղբայրներ էին, իսկ ծնված՝ յուրաքանչյուրն իր մորից» (էջ 173ա—175ա, այսուհետե՝ «Վկայացիների վկայաբանություն»)։

Ն. Մառը մտադիր էր Աթոսի № 57 ձեռագրի և նրա բովանդակած նյութերի ուսումնասիրությանն անդրադառնալ հատուկ աշխատությամբ՝ «նվիրված վրաց հին մատենագրության վրա հայոց ազդեցության քննությանը»³։ Այդ իսկ գրքում էլ պետք է հրապարակվեն տպագրության պատրաստված բնագրերը։ Ցավոք, բաղմազբաղ գիտնականը շհասցրեց գրել ծրագրվող աշխա-

¹ H. Marr. Из поездки на Афон. СПб., 1899, стр. 10.

² Զեռագրի նկարագրությունը տես H. Marr. Агиографические материалы по грузинским рукописям Ивера, ч. I, СПб., 1900, стр. 47—72, նույն R. Blake, Catalogue des manuscrits géorgiens de la Laure d'Iviron au mont Athos (Extrait de la „Revue de l'Orient Chrétien“, 1931—1934, p. 30—41). Հարկ է նշել, որ Բլեյկի ժամ ձեռագիրը նկարագրված է № 8-ի տակ։

³ H. Marr. Агиографические материалы..., стр. 47.

տությունը, իսկ իր կուահումներն ու եզրակացությունները մասամբ միայն հրապարակ բերեց: Այսպես, մեղ հետաքրքրող «Դավթի և Տիրիմանի վկայարանությունը» նա համարում էր «անկանած հայկական ծագման», որը չհայ դրականությունից անհետ չբացել է», իսկ «վրաց մատենագրությունը թարգմանաբար պահել է հայոց հին վարքագրության կորած հուշարձանը»⁴:

«Կողացիների վկայարանության» կապակցությամբ գիտնականը այլ կարծիք է հայտնել, այն համարելով «թերեւ ինքնուրույն վրացական ստեղծագործությունը»⁵: 1903 թվականին նա հրատարակեց վկայարանության բնադիրը, այն օժտելով ուսւերեն թարգմանությամբ ու կարճառու ներածականով: Այստեղ ի մասնավորի նշվում է, որ հուշարձանը առանձնակի կարևորություն է ներկայացնում քրիստոնեության մուտքի հետ կապված հանգամանքներ ըննելիս, քանի որ նրանում նկարագրված է քրիստոնեության և տեղական հեթանության պայքարը, սրբագրելով «քրիստոնեության՝ կայծակնալին արագությամբ տարածվելու» մասին եղած ավանդական պատկերացումները: Ընդ որում՝ «Ակներեւ է, հուշարձանը (իմա՝ Կողացիների վկայարանությունը—Պ. Մ.) շատ հին է, ինչ վկայվում է և լեզվի հնավանդությամբ ու գրչագրով (X դ.)»⁶:

Այսպիսով, բատ ակադ. Ն. Մառի «Դավթի և Տիրիմանի վկայարանությունը» թարգմանություն է հայերենից, իսկ «Կողացիների վկայարանությունը» թերեւ ինքնուրույն վրացական ստեղծագործություն է:

1902 թ. Աթոսի վրաց մայրավանքում պրապտումներ էր կատարում պրոֆ. Ա. Խախանաշվիլին: Նրա հանձնարարությամբ ընդօրինակվում են N 57 ձեռագրի բովանդակած վարքերից շատերը, այդ թվում նաև «Դավթի և Տիրիմանի վկայարանությունը» (տպագրվեց 1910 թվականին)⁷: Ա. Խախանաշվիլին և կարծում է, որ սույն երեք թարգմանություն է հայերենից, «շավանդված հայերեն բնագրով»⁸: Նոր և ուշագրավ է Ա. Խախանիշվիլու այն դիտողությունը, թե հայերեն բառերի առատությունը, ոչ հարթ ոճն ու խառնիխուռն ուղղվագրությունը վկայում են, որ «այդ վարքերը (խոսքը հիշյալ ձեռագրում եղածների մասին է—Պ. Մ.) հայերենից վրացերեն են թարգմանել վրացերենին ոչ կատարելապես հմտացած հայերը»⁹: Այս բնորոշումը, հարկավ, վերաբերում է նաև մեղ հետաքրքրող «Դավթի ու Տիրիմանի վկայարանությանը»:

Ինչպես արդեն նկատեցինք, ոչ Ն. Մառը և ոչ էլ Ա. Խախանաշվիլին արծարծվող բնագրերի հետ կապված հարցերը հատուկ քննության նյութ չեն դարձրել: Ն. Մառը իր նախնական դիտարկումներն է հրապարակել, մասնա-

⁴ «Որ վրացերեն տերսաք ներկա գետքում սովորական թարգմանություն է հայերենից,— պուտ է Մառը,— զրանում համոզում են ինչպես բառագանձային ու ոճական հայկարանությունները, աշնողես էլ հուշարձանի իսկ բովանդակությունն ու շարադրանքի եղաները, ի միջի ալլօց՝ դեռքերի թվագրումը բատ Հայաստանին տիրապետած օտարերկրացի թագավորների ու Հայոց կաթողիկոսների» (H. Marr. Из поездки... стр. 21).

⁵ Աշվ. աշխ., էջ 16:

⁶ H. Marr. Мученичество девяти отроков колаинцев. ТР АГФ. т. V. стр. 53—61.

⁷ Աշվ. աշխ., էջ 54:

⁸ Материалы по грузинской агиологии (по рукописям X века), с предисловием издал А. Хаханов. М., 1910, стр. 72—77.

⁹ Աշվ. աշխ., էջ XXIII.

¹⁰ Աշվ. աշխ., էջ XXIV.

վոր ուսումնասիրությունը թողնելով իր ծրագրվող դրաֆին, իսկ Ա. Խախանիշվիլին՝ մեկ պարբերությամբ պարզապես ծանոթագրել:

«Դավթի ու Տիրիմանի վկայաբանության» համեմատաբար հանգամանաւ-լից բնագրագիտական գննությունը կատարել է ակադ. Իվ. Զավախիշվիլին¹¹: Նրա կարծիքով Հուշարձանը թարգմանական է, գրված VIII դարից ոչ շուտ և վրացերենի թարգմանված IX դարին մոտիկ շրջանում»¹², քնզ որում «այս Հուշարձանը գրեթե ոչ մի պատմական արժեք չունի»¹³: Իվ. Զավախիշվիլին գտնում է նաև, որ Դավթի ու Տիրիմանի և Կողացի մանկանց վկայաբանությունների միջև որևէ առնչություն-ընդհանրություն չկա և որ «Կողացիների վկայաբանությունը» թարգմանական լինելու նշաններ չունի»¹⁴: Արձանագրելի է, սակայն, որ գիտնականը նման եզրակացոթյան է հանգում առանց բնադրագիտական անհրաժեշտ վկայակույնների, մի քանի, որ բնորոշ չէ նրա հիշյալ աշխատության մյուս հատվածներին:

«Կողացիների վկայաբանության» հետ կապված խնդիրներ արծարծված են իվ. Զավախիշվիլու մեկ այլ աշխատության մեջ ևս¹⁵, ուր այն համարվում է «շատ կողմերով ուշազրավ» հուշարձան, գրված IX դարից ոչ վաղ, սակայն մեկ-երկու անգամ խմբագրված-վերանայված։ Գիտնականի եզրակացությամբ, վկայաբանությունը կարևոր աղբյուր է Վրաստանի պատմության, իրավունքի պատմության և եկեղեցական արարողության հին շրջանի պատկերի հետ կապված հարցեր լուսաբանելու համար։ Վկայաբանությունը դիտվում է իր և ինքնուրույն վրացական ստեղծագործություն։

Վարքագրական այս երկու հուշարձանների մասին այլ կարծիքի է ակադ.
Կ. Կեկելիձեն¹⁶: Նա գտնում է, որ «Կողացիների վկայարանության» մեջ ներ-
կայացված պատկերը քրիստոնեության հնագույն շրջանի է, վեցերորդ դարից
ոչ ուշ», որի վկայությունն են՝ ժամասացության խիստ պարզունակությունը,
արարողության իմաստով ժամորա (յօթօծ) տերմինի գործածությունը, գե-
տում մկրտություն տոնելը և այլն¹⁷: Կ. Կեկելիձեն արձանագրում է նաև, որ
այդ երկու վկայարանությունները խիստ աղերսվում են միմյանց, «ինչպես
արտաքուստ, այնպես էլ բովանդակությամբ»¹⁸: Նույնական է նրանց ոճը,
ընդհանուր է տերմինոլոգիան (օրինակ՝ Եցօ-խելի, Սույցօ-սոփիելի, Ցուզօ՛ռօ-
մբավարի), գործողությունը երկու հուշարձանում էլ նույն՝ Տայքի միջավայրում
է տեղի ունենում, զրեթե բնդհանուր է ոյտուն (մի դեպքում հարազատ եղ-
բայրներ են, մյուսում՝ հոգևոր, երկուսում էլ մանկահասակ, երկուսում էլ հա-
նուն քրիստոնեության նահատակվող, սպանողները՝ մերձավոր ազգականներ):
Հետեւաբար, «կամ երկուսն էլ ինքնուրույն վրացական ստեղծագործություններ»:

“ ვანე ჯავახიშვილი, ძელი სომხური საისტორიო მწერლობა, ტფ., 1935,
გვ. 32-38.

12 *Vijf*, *wijf*, *tien*

13 *Անդր*

14 *U2if*, *m2fu.*, *b2 372*

¹⁵ ვანე ჯავახი შვილი, დელი ქართული საისტორიო მწერლობა, თბ., 1945, გვ. 61—66.

¹⁶ କୌର ନ୍ଯାଲ୍ ପାଦେଶୀଲ୍ ଏ. ହାରିତୁଳିଙ୍ଗ ଲାଂଟ୍ରେଣ୍ଟାର୍ଟ୍ରିବରୀସ ଇସଟିମଣ୍ଡା, ପ. I, ପତ୍ର., 1960, ପୃ. 516—520

17. *U24L. m2fus., t2 517:*

18 *Ugyl. wylw., t. 518.*

են, իններորդ դարից ոչ վաղ գրված... կամ թե՛ երկուսն էլ փնքնուրույն հայկական ստեղծագործություններ են, վրացերեն թարգմանված իններորդ դարից ոչ շուտ...»¹⁹: Գիտնականը հակված է զեսի երկրորդ և զրակացությունը, ուստի կարծում է, որ «Դավթի և Տիրիմանի վկայարանության» մեջ Հերակլ կայսեր անունը կարող է ընդմիջարկված լինել և վրացի թարգմանչի կողմից, իսկ մեկ այլ առիթով սույն երկը հիշատակում է վրաց թարգմանովան վարքերի շարքում²⁰: Կ. Կեկելիձեն նույնիսկ անհրաժեշտ է համարում նկատել, որ «առհասարակ իվ. Զավախիշվիլու գրութները, թե այս երկու հուշարձանները շեն մերձենում միմյանց ոճականորեն ու բովանդակությամբ՝ թյուրիմացության արդյունք են»²¹:

Արծարծվող վկայարանությունների կապակցությամբ բավականաշափ ինքնատիպ դրույթ առաջադրեց պրոֆ. Ի. Արուլաձեն, ըստ որի Տայքի աստիճանաբար վրացականացող հայ բնակչությունը «շահագրգոված էր հայոց վարքագրական հուշարձանների թարգմանության կողքին, գոյություն ունեցող ավանդությունների հիմքի վրա, ստեղծել տեղական, Տայքի հետ կապված նահատակների վկայարանության երկեր (զրքեր), փնչպես և հիշատակ սահմանել (կարգել) այդպիսիներին փրենց եկեղեցում: Այսպիսի գործունեության արդյունք պետք է լինեն, մեր եղբակացությամբ, Դավթի և Տիրիմանի ու Կողացիների վկայարանության երկերը»²²: Նա քերում է մի շաբթ բառ-տերմիններ, որոնք բնդհանուր գործածություն ունեն այս վարքերում և բնորոշ չեն նույն միջավայրում հայերենից կատարվող թարգմանություններին, իսկ որ այդ երկու հուշարձանն էլ բաղկեղնական հայերի ստեղծագործություն են՝ ապացուցում է «Դավթի և Տիրիմանի վկայարանության» մեջ պահպանված ակնարկումներով. եղելությունը թվագրվում է ըստ հայոց թագավորի ու կաթողիկոսի, Ներսեսը՝ կոչված է «սուրբ Հայր մեր» և այլն²³, Բայց միաժամանակ՝ «եթե Դավթի և Տիրիմանի վկայարանությունը հայերենի թարգմանություն ներկայացներ, այն ժամանակ, անկատած, բնագրի ազգեցությամբ այստեղ էլ ինչ որ մի տեղ ի հայտ կգար առանց թարգմանության թողած որևէ հայերեն տերմին»²⁴: Նույն միջավայրում ու շրջանում է ստեղծվել նաև «Կողացիների վկայարանությունը». «Երանց գոյացումը IX դարի կեսերից է հնարավոր, Տայքի այն հայ բնակչության ծոցում, որը վրացիների հետ դավանական կատի մեջ էր գտնվում և, ինչպես երեսում է, վրաց մշակույթի այնպիսի մեծ ազդեցություն է եղել, որ հայրենի մատենագրության հուշարձանների տարածման համար դրանք (խոսքը թարգմանական մյուս երկերի մասին է—Պ. Մ.) վրացերենի են թարգմանել և միաժամանակ՝ սեփական ստեղծագործությունն էլ (նկատի ունի մեզ հետաքրքրող երկու վկայարանությունները—Պ. Մ.) այդ նույն լեզվով շարադրելը»²⁵:

Այսպիսով, Ի. Արուլաձեն մերժում է Ն. Մատի, իվ. Զավախիշվիլու և

19 Անդ:

20 Տ. ՃՈՃՈԾՈՅ. ՅԵՐԱԳՐԵՅՈ.... Ը. V, ՅՅ. 123. Հմմա. «ՅԵՐԱԳՐԵՅՈ...», Ը. X, ՅՅ. 130.

21 Տ. ՃՈՃՈԾՈՅ, մՅ. յարու. Ըստ. ՍՊ. օԵՒ. 1, 518, ՑԵ. 2,

22 ՕՂՈՅ ՃՈՃՈԾՈՅ. յարությունը ու Սոմեցորո լուրջը անուշուղությունը պատճենաբանութեան ԽՍ-ԾՈ. 1944, ՅՅ. 064.

23 Անդ:

24 Եղվ. աշխ., լէ 067:

25 Եղվ. աշխ., լէ 070:

Ա. Կեկելիձեի դրույթը՝ «Դավթի և Տիրիմանի վկայաբանության» թարգմանատկան լինելու վերաբերյալ, բայց ընդունում է Կ. Կեկելիձեի եզրակացությունը, որ այս և «Կողացիների վկայաբանություն» երկերը նույն միջավայրի ծնունդն էն, միմյանց խիստ աղերսված, դրանք համարելով հայ քաղկեդոնականների միջավայրում ստեղծված՝ տեղապես իսկ վրացալեղու, ինքնուրույն երկեր²⁵:

Պրոֆ. Ի. Արուլաձեն, ինչպես երեւում է, հետագայում որևէ շափով չի վերանայել իր առաջադրած հիմնական դրույթը, ուստի այդ վկայաբանությունների ընազրերը դետեղված ենք գտնում 1964 թվականին նույն դիտնականի դեկավարությամբ ու խմբագրությամբ լույս տեսած «Հին վրացական վարքագրական մատենագրության հուշարձանների» առաջին հատորում, ուր ամփոփված են բացառապես ինքնուրույն-վրացական երկերը²⁶:

Այսպիսին է վարքագրական այս երկու ուշագրավ հուշարձանների ուսումնաժիրության և հրատարակության պատմությունը²⁷: Ինչպես տեսնում ենք, նրանց գնահատության խնդրում տարակարծությունները բավական շատ են, չանավանդ՝ թարգմանական թե ինքնուրույն լինելու հարցում: Պատճառն այն է, որ ընազրերն ուսումնաժիրող կամ հրատարակող գիտնականներին յի հաջողվել մատնացույց անել ընազրագիտական այնպիսի կովաններ, որոնք վճռական նշանակություն ունենային հիշյալ խնդիրը պարզաբանելիս: Ստորև կհամոզվենք, որ այդպիսի շնկատված կովաններ փրոք կան: Բայց մինչև այդ անհրաժեշտ է հիշեցնել, որ այդ երկու վարքագրությունների միջև ակադ. Կ. Կեկելիձեի նկատած ընդհանրությունները անհերքելի փաստեր են, իսկ պրոֆ. Ի. Արուլաձեի վկայակոչած նույնական տերմինների գործածությունը խոսում է դարձյալ ի նպաստ Կ. Կեկելիձեի եզրակացության: Կարելի էր լրացնել փաստեր վկայակոչել (օրինակ՝ նույն Ցցօլցեծություն-կարել, կարողանալ բայի խոնարհման հետ կապված վրիպումը երկու տեքստերում²⁸, ծըցիո-խաղ, խաղալ տերմինի գործածությունը²⁹ և այլն), սակայն ընդհանրությունն այնքան ակներեն է և անսպես հիմնավոր ապացուցված, որ որա անհրաժեշտությունը չկատարվել է ինչպես այդ գործերը սկզբնապես հայերեն են գրվել, թե՞ վրացերեն:

Պրոֆ. Ի. Արուլաձեն, ինչպես ասվեց, երկուսն էլ համարում էր վրացերեն գրված, վկայակոչելով հետևյալ կովանները.

²⁵ Գրքի համեմատում Ի. Արուլաձեն հրատարակել է հիշյալ երկու վկայաբանությունների ընազրերը, ինչպես նաև Դավթին և Տիրիմանին ձևաված միջնադարյան ներբողյանը (նշվ. աշխ., էջ 178—183, 184—186, 199—201):

²⁶ „Ժշելո յարուցու ազողոցուցուցու լարուցուցու ժշշելու”, 1. Ըստածելու մոամեցոյն ու ածուլացոյն, 6. ատանելու թշուլմա, 6. զոշուցոյն, լ. յաջարած, օ. ժշուց-ժյու, օ. շանցուցմա ու օ. շլամում, ոլոր ածուլացու ծյութուցանցուղունու ու հաջայցուու, ուժ., 1964, զ. 183—185, 186—191. Այսուհետեւ՝ ժշշելու:

²⁷ «Կողացիների վկայաբանությունը» պրոֆ. Դ. Անդրի կողմից թարգմանվել է անգլերեն (տես նրա՝ Livres and Legends of the Georgian Saints, London (1956), էջ 40—43):

²⁸ „Ժշշելու”, 1. 185₁₁, 186₄₃.

²⁹ նշվ. աշխ., էջ 184₃—187₃₅:

³⁰ օ. ածուլացու, նշվ. աշխ., էջ 064,

ա) «Դավթի և Տիրիմանի վկայարանության» հեղինակը ապրել է 860 թվականից ոչ շուտ, տայեցի է եղել, հետեւարար և՝ երկարնակի: Եթե միարձնակի ստեղծագործություն լիներ, ապա վկայարանությունը ընդունելի կլիներ հայոց եկեղեցու համար, իսկ նրա հետքը միջնադարյան ժողովածուներում ինչ-որ կերպ կպահպանվեր: Մինչդեռ վրաց եկեղեցին հիշատակի օր է սահմանել, շարականներ ձոնել:

Նախ դիտենք, որ այս երկու վկայարանությունների հեղինակի երկարնակ լինելու մասին ոչ մի դրվագ կամ ակնարկ չկա, ուստի ի. Արուլաձեն իր վարկածն առաջադրել է խիստ թեական ձևով, քիզ հետո ավելացնելով՝ «դավանական ինչ շրջանից էլ եղած լինի»³²: Այնուհետև՝ հեղինակի տայեցի լինելը, ինչպես այժմ պարզված է, երկարնակ համարելու բավարար հիմք չէ, քանի որ Տայքում միարնակ հայեր կային ոչ միայն IX, այլև X—XI դարերում, որի լավագույն ապացույցը Բոյիլասի կտակում եղած հիշատակություններն են³³. Սակայն եթե անգամ ենթադրենք, թե այս վկայարանությունների հեղինակը իրոք հայ-քաղկեդոնական է, հիշյալ պարագան դարձյալ վրացերենով ստեղծագործելու երաշխիք չէ, քանի որ մատենագրության պատմությունից բավականաշատի փաստեր են հայտնի՝ երկարնակ հայոց շրջանում հայալեզու դրականության գոյության մասին³⁴:

Ինչ վերաբերում է սրբերի հիշատակը եկեղեցում կարգված շլինելուն, ապա, կարծում ենք, այլ բացատրություն պետք է փնտրել. VIII—IX դարերից արդեհ, Տայքը մշակութային ու դավանական, նույնիսկ մասամբ քաղաքական առումով զգալիորեն օտարվել էր հայ իրականությունից, ուստի այս միջավայրում ստեղծված մատենագրական երկերը տեղական շրջանակներից դժվար էին դուրս գալիս և կամ՝ ավելի շուտ վրաց ու վրացախոս հոգևոր գործիչների ուշադրությունն էին գրավում, քան հայոց: Թերեւ այս է պատճառը, որ տեղական-տայքյան ծագում ունեցող IX—X դարերի հուշարձանները (ինքնուրույն թև թարգմանական) պահպանված ենք գտնում վրայց մատենագրության մեջ և վրացերենով:

Բ) Թարգմանական հուշարձաններում հայկական սոցիալական ու աշխարհագրական տերմինները փոխանցված են նույնությամբ (նախարար, զորավար, ավան...), մինչդեռ «Դավթի և Տիրիմանի վկայարանության» մեջ այդ տերմինները վրացերեն համարժեքներով են տրված (նախարարի դիմաց՝ ծուցանում—մրավարի կոմ թարհինջեցլո—ծարչիներուի, զորավարի փոխարեն՝ ծուցանում—մրավարի կոմ ցհօստացո—երիսրավի, իսկ ավանի դիմաց՝ եռցյու—ստիելի կոմ ջածա—դարա):

Այդ ամենը, իհարկե, ճիշտ է, բայց դրանք իրրե կովան կարող էին օգտագործել միայն այն դեպքում, եթե նշյալ գործածություն-համապատասխանու-

32 Եղիշ. աշխ., էջ 065:

33 Տե՛ս Հ. Բարբիկյան, Եվստրաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության սկզբնադրյուր, «Բաներ Մատենագրականի», № 5, Երևան, 1960, էջ 393—429:

34 Տե՛ս Ն. Ալիմեան, Միմէռն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերենէ, «Վիեննա, 1951, էջ 224—266: Հմմ. Հ. Բարբիկյան, „Narratio de rebus Armeniae“, Հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնադրյուր, «Բաներ Մատենագրականի», № 6, էջ 457—470: Հմմ. Պ. Առաքյան, Վրացերեն արձանագրությունները Հայաստանում (Պղնձահանեց): «Լրաբեր», 1973, № 1, էջ 39—58:

թյամբ բնորոշ լինեին միայն քննության առնվող երկու վկայաբանություններին: Ի. Արուլաձեն ինքն էլ դիտել է, թե այդ համապատասխանություններին «այլևայլ թարգմանական հուշարձաններում էլ ենք հանդիպում»³⁵: Եվ իրոք, նույն տայրյան միջավայրում ու նույն ժամանակաշրջանում (*IX—X դդ.*), հայերենից վրացերեն թարգմանված «Պատմութիւն սրբոյն Ներսիսի հայրապետին և Խաղայ հպիսկոպոսին» երկում Հայերենի «Նախարար» տերմինը վեց անգամ գործածված ու թարգմանված է թուշարությունում՝ ի հակառակ՝ «Վկայութիւն սրբոյն Սանդուղք...» և «Վկայաբանութիւն սրբոյն Ատոմայ...» նույնավիճակ երկերում՝ ֆարհինցեծով³⁶: Հայերենի «զարավարը» թուշարություն է թարգմանված «Վկայութիւն սրբոց քաւիցիցն, որք վկայեցան ի Բագրեանդ գաւառի ի Սուկաւէտ լեռնն» և «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկայ» (համառոտ խմբագրություն) վրացերեն տեքստերում (գործածության հինգ դեսք)³⁸, ինչպես նաև յհոստազությունում՝ թարգմանական եթեկերում կա և «աւան» բառի სոցյոլու համապատասխանություն⁴⁰:

Այսպիսով, մեզ զբաղեցնող երկու վկայաբանություններում հիշյալ տերմինների գործածությունը՝ նրանց ոչ թարգմանական հուշարձան լինելու ապացուց չի կարող ծառայել, որովհետև, ինչպես տեսանք, դրանք հատուկ են թարգմանական այլ երկերի ևս, և գործածվել են ըստ հեղինակի կամ թարգմանչի նախասիրության: Ուստի հարցի լուծման համար անհրաժեշտ են լեզվաբառագանձային կարգի այլ իրողություններ:

«Դավթի և Տիրինի վկայաբանության» բնագրագիտական քննությունը երևան բերեց, մեր կարծիքով, վճռական նշանակություն ունեցող նոր փաստ։ Այստեղ կարդում ենք։

შენ, უფალო, ყოვლით კერძოვე
მოწყალეო და ყოველთა მწყალობე-
ლო, მამაო ობოლთაო და მსაჯულო
ქურივთაო, რომელმან მცირენი ესე
და მდაბალნი ყრმანი ესე არა: უგუ-
ლებელს-ჰყვენ და ზიარ-ჰყვენ იგინი
ნაწილსა წმიდათა მოწამეთასა, შვილ-
ნი ესე ჩემნი, რომელთა-იგი შენთვს
მრავალი ჟანჯვა: დაითმინეს და
მოილეს ზეცისა იგი გვრგვნი დაუჭ-
ნობელი და ცხორებამ იგი წარუვა-
ლი, ამათი ესე სიჩჩოსა წაშება: ღირს
უვენ ესენი მათ თანა შუებასა

Դու, տե՛ր, բոլոր կողմերով ողորմած բոլորին դժացող, հայրեղ որբերի ու դատավոր այրիների, որ այս փոքրիկներին՝ այս խոնարհ տղաներին, շանտեսեցիր և նրանց հաղորդ արիր սուրբ Առաքարակների վիճակին՝ իմ այս որդիներին, որոնք հանուն քեզ բազում շարչարանք կրեցին ու երկնային անթառում պսակ և հավիտենական կյանք ստացան՝ նրանց մանկտի այս վկայությունը, արժանի արա սրանց՝ նրանց հետ (սուրբ Առաքարակների) ուրախության և խրն-

35 o. აბელაძე, ზედ., მუნ., ს. 065:

³⁶ *Sēn* n. ձօղլուծյ, նշյ, աշխա., էջ 71₂₀, 72₅, 14, 74₂₁ (26), 76₁₁ (15), 29 (33):

27 *Sb' u hnejhs w2fus., t2 4₁₆, 98₂ (6):*

32 51a-5

³⁹ *Sku* p. 287 in *ad* 2. *u2j*, *u2ju*, *tq* 363-181.

Ի. Արույաձեն անհրաժեշտ ճշգրտումներ արել է (Նշվ. աշխ., էջ 066—067):

და სიօნ Հულ ს 3 3 0 6 0 და მათ
თანა განსუյნებასა და მათ თანა
გვრგვნსა, მათ თანა განკურნებასა
ვნებულთასა,—ვითარცა იგინი, 08-
რეთვე ესენი⁴¹.

Բնդգծված «խնդրության մեջ» արտահայտությունը (բնագրում՝ Սօնահուլս 3060) ակներև թյուրիմացություն է, որովհետեւ նախորդ ու հաջորդ հատվածի իմաստը այս է՝ սուրբ նահատակների հետ նույն վիճակին արժանի դարձու։ Ընդ որում, «խնդրության մեջը» չի կարելի կտրել նախորդ արտահայտությունից («նրանց հետ ուրախության և...»), քանի որ նախադաս «նրանց հետ»-ին հարաբերվում է «և» շաղկապով։ Ավելին, ոչ ըստ շարադրանքի, ոչ քերականուն և ոչ էլ ոճականորեն ախնդրության մեջ» չպետք է ունենայինք, այլև՝ «արժանի արա արանց (Թավթին ու Տիրիձանին)՝ նրանց հետ (իմա՞ սուրբ վկաների—Պ. Մ.) ուրախության ու խնդրության, նրանց հետ հանգչելու, նրանց հետ՝ պսակի...»։ Եթե առաջարկվող սրբագրությունը արտացոլենք վրացերեն բնագրում, ապա այնտեղից պետք է հանել 3060-ն (մեջ)։ Արդ, բառու վրացական զրշական հիմքի վրա տեղի ունեցած աղավաղման արդյունք չի կարող լինել, քանի որ նրա փոխարեն վրացերենում առհասարակ որեւէ բառ կամ քերականական մասնիկ սպասելի չէր, գրչի հավելում կամ ընդմիջարկում ևս չի կարող լինել, որովհետեւ անտեղի ու անիմաստ կիրառություն է։ Ամեն ինչ պարզ կդառնա, եթե այն բացատրենք թարգմանության միջոցին առաջացած թյուրընկալումով։ Ենթադրյալ հայերեն տեքստում այդ հատվածի դիմաց սպասելի էր «...ընդ նոսա յուրախութիւն և ի խնդրութիւն...»։ Արտահայտության առաջին մասը շեշտում է միասնության գաղափար (ընդ նոսա...), երկրորդ՝ նպատակ, սկեռում (ի խնդրութիւն), երկու գեպքում էլ գործածված հայցականով։ Ահա, հետո այդ ի նախդիրն է, որ թարգմանիչը կարող էր ընկալել «մեջ» նշանակությամբ և փոխանցել վրացերենի։ Իսկ այսպիսի թյուրընկալում հնարավոր է միայն թարգմանության և միայն հայերենից թարգմանելու միջոցին։

Նման բացատրությունը ապացուցվում է թարգմանչի մեկ այլ վրիպումով։ Պատմելով քրոջ որդիներին հետապնդող թևեցոսի մասին, վարքագիրն ասում է, թի նա ջանահան թուսա թօնա («դարանակալեց լեռան մեջ»), մինչդեռ սպասելի էր՝ ծեզա («վրա»)։ Նշանակում է՝ կրկին ի նախդրի սիալ ընկալման հետ զործ ունենք (հայերենում պիտի լիներ՝ դարանամուալ ի լերինն)։

«Թավթի և Տիրիձանի վկայաբանության» վերջին հատվածում պատմվում է, որ Թավթին՝ վկայաբանության մայրը, Շահը ու կայությունը մամուռանուսատա, Սույցըլսա, Ռոմելսա Ֆրիզան Շահանուն, დա թյուն Շեյսլուն։ Դա Ս ա ջ լ ա զ ն օ մօնուցա ալմուցենեց շուրնեցասա — ռդնաց Մամրվանից Զորք (Խենի Մամորվանիսանի), Տաճարք (Տաճարանի) կուվող գյուղն ու այնտեղ հանգավ, իսկ նրա զերեզմաններն էլ բժշկության [տեղի] դարձան»⁴²։ Արդ, Թավթին մեկ գերեզ-

⁴¹ Ժցլյան, 33. 190.

⁴² Բնագրում՝ და Տայլացնո մօնուցա ալմուցենեց շուրնեցասա — բառացի թարգմանությամբ եվ նրա զերեզմաններն էլ բժշկության են ծնում (բունեցնում)։ Ալմուցենեց բայց (անել, բարձրանալ, բռննել, ծեր, հայտ դալ) թիրես տեղին չի գործածված։ Արդյոք այսպիս էլ որին վրիպում չկա՝ (բժշկութիւն անել — բժշկութիւն անել?)։

ման պետք է ունենար (սուրբ նահատակ չէ, որպեսզի նշխարները տեղից-առել տանեին) մինչդեռ վրացերենում ևօգլազնո— գերեզմաններ է գրված: Կարծում ենք, Հոգնակի այս կիրառությունը ևս անիմաստ ու անտեղի է և բացատրելի Հայերնի Հիմքի վրա: Ենթադրյալ բնագրում, ինչպես երևում է, եղել է «գերեզման»-ի հոմանիշ և բավական հաճախ գործածվող «դիր-դիրք» բառը⁴³: Հայկական աղբյուրներում «դիրքը» երբեմն ընկալվել է իբրև անեղական և գործածվել մեկ գերեզման ցույց տալու համար⁴⁴: Անիի Սոաբելոց եկեղեցու վիմագրերից մեկում ավանդված է. «Եւ դիրք սուրբ ոսկերաց նորա բժբշկութիւն առնել ամենայն ախտաժետաց»⁴⁵, ուր դիրք-ը թե՛ եղակի նշանակությամբ է կիրառված և թե՛ համանման կոնտեքստում:

«Դավթի և Տիրիձանի վկայաբանության» թարգմանիչը «դիրքը» կարող էր ընկալել իր բուն զրոց նշանակությամբ, ծանոթ լինելով (կամ մոռանալով) նրա ունեցած կենդանի-խոսակցական գործածությանը, և թարգմանել ևօգլազնո (սափլավնի) — «գերեզմաններ»: Այսպիսի իրողություն, կրկնում էնք, հնարավոր է թարգմանության միջոցին և այն էլ հայերնից թարգմանելիս⁴⁶:

Վկայակոչված փաստերից բխում է մեկ եղբակացություն՝ «Դավթի և Տիրիձանի վկայաբանությունը» թարգմանական է, որի հայերն ընագիրը կամ մեզ չի հասել և կամ՝ դեռ երեան չի հանված: Եվ քանի որ այս երկը, ինչպես արդեն նշվեց, նույն բնույթի ու բառադրանձային առումով նույնական է չեղացիների վկայաբանության» հետ, ապա նրանք երկուսն էլ թարգմանական են: Ակադ. Կ. Կեկելիձեի կոահումները միանգամայն հիմնավոր ու արդարացի են:

Այս վկայաբանություններին անդրադարձ պիտնականները, հատկապես պրոֆ. Ի. Արուլաձեն, ասկացուցել են, որ վրացերեն առկա տերստերը IX դարից վաղ գրված լինել չեն կարող (հատկանշական է Եռօցյալու սովելի տերմինի «գյուղ» նշանակությամբ գործածությունը), իսկ քանի որ զրանք պահպանվել են X դարի վերջերին գրված գրչագրում, ապա վրացերեն թարգմանությունը կատարված պիտի լինեի IX—X դարերի միջոցին, իսկ և իսկ ժամանակակից ու բախտակից նույն ձեռագրում պահպանված և հայերնից թարգմանված մյուս հուշարձաններին: Սակայն դիտելի է, որ այս երկու հուշարձանները մասամբ տարբերվում են համարնություն մյուս թարգմանություններից (մանավանդ որոշ տերմինների հետեղական գործածությամբ), իսկ սույն պարագան թերեւ այլ թարգմանչի գոյություն է հուշում, այն էլ՝ ոչ անպայման հայ-քաղ-

⁴³ «Տապան», «գերեզման» նշանակությամբ դիր-ը գործածված ներ գտնում Դվինում Հայութաբերդած VI—VII դարերի երկու տապանագրերում (տե՛ս Կ. Ղափաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 244, հմմ. Ս. Ավագյան, Բառաքենություններ վիմական արձանագրություններում, «Լրաբեր», 1971, № 4, էջ 52):

⁴⁴ ՏԵ՛Ս ՆՀԲ, 627, հմմ. աշխարհաբարի դիր-ք-եր Հոգնակին: Վրացերենում հանդիպող ևօգլազցնուն (Մարկ. Ե, 2) համապատասխանում է «գերեզմանք»-ին (Սամահունձանո), որ է վերեզմանց: Եօգլազնո ունենք XI դարի մի նմիկագրում («Ճանաչ. Սամահունձան. Ժամանակակից արձանագրություններում», «Լրաբեր», 1971, № 4, էջ 52):

⁴⁵ Դիվան Հայ վիմագրության, 1, 26:

⁴⁶ Հայկաբանության հետքեր կան այլ հատվածներում ևս անընդունակ ցույցը առ ծոված արտահայտությունը, կարծում ենք, արդյունք է հայերնի պատճենման, որ պիտի լիներ՝ ոչ ևս խոսի բնդ նմա կամ՝ ոչ ևս յաւելոյց խոսի բնդ նմա: Հայերնի պատճենում էր ենթադրում և համարակալու արտահայտությունը (աղեղինդ):

կեղոնական, ինչպես մյուսների դեպքում է: Կարծում ենք, թարգմանության ժամանակ պետք է համարել հենց IX դարը. տեքստի ուսումնասիրությունից պարզված է, որ X դարի գրչադիրը թարգմանչի ձեռադրով ստեղծված նախագաղափար օրինակը չէ, այլ ընդօրինակություն: Մեզ հետաքրքրող վկայաբանությունների հրատարակիչները գոհացել են մի քանի ուղղագրական վրիպակների սրբագրումով կամ արձանագրումով, չնկատելով «Դավթի և Տիրիձանի վկայաբանության» բնագրի երկու կարևոր խաթարում, երբ շարադրանքը անսպասելիորեն ընդհատվում է: Ահա այդ հատվածը.

Ըստ մշնջյուղացքի եռլոր ամբեջրճա ծերացարու օցո գովրուսեա և ալշա յըրուտուրու տվեսու ծերասա ծաս նեցա ցրուած մալալսա, հաշտամցա օնօլսա յըրու օցո գո ցուլուսեմա—յոմցա մոնցի օցո նուուտուսա ծուս. Ըստ ցուտարուցա օնօլսա յըրու օցո նուուլը ծուլու գո յըրուստացու մատո մթյօնարու մթյօնարու [.]. Ըստ աձա յըրու մոնցու ծացտու օցո ամծուսեա ծուս [.], հոմելու-օցո ոյմնա նուուլտա մուստա նեցա ներարուսա տացնեստա. Ըստ օլուցա ցուցայու օցո տացնե գո օլուցլուրու մտալ.

Դիվրի իշխանը գնացել է իրարանցման պատճառը հասկանալու և երբ տեսել է զորք ու զորապետ, սպասելի էր՝ կոահել է եղելությունը: Պարզ ի պարզու այդ է թելադրում կիսատ մնացած նախադասության շարագրանքը: Եարունակության մեջ հին վրացերենում պիտի ունենայինք [ջուլուսեմա-յու յմնուլու օցո մատու], որ հայերն կլինի՝ «հասկացավ նրանց կատարածը»: Երկույուն գրչության պարագայում մեր վերականգնածը մեկ տող է կազմում, իսկ որ ձեռագրերի ընդօրինակության միջոցին նման բացթողումներ հնարավոր են՝ կարելի է հավաստել տասնյակ օրինակներով: Ի դեպ, կարելի է նույնիսկ մանրամասնության մեջ մտնել՝ բացթողման պատճառը իրար հարող տողերի նույնահանդ վերջավորությունն է. հաջորդում գո աձա յըրու մոնցու ծացտու.

Վկայակոչված հատվածում մյուս բացթողումը վերաբերում է տեղանդանը. սպասելի էր, որ բնագրում ասվեր, թե բոքը գնաց հասավ այն տեղը. ուր ապրում էր թագինեն, դրանով իսկ բնական կլիներ թագինեն «վեր կենալն» ու «սարն ի վեր փութալը»: Քանի որ նախորդ հատվածներից հայտնի է, այդ բնակավայրի անունը, ուստի կարծում ենք, պիտի ունենայինք օձ յըրու մոնցու ծացտու ծացտու օցո ամծուսեա ծուս [զայցնալ], հոմելու-օցո (իմա՞... բոթը զնաց-հասավ վածգան):

Այսպիսի խաթարումները վարող են պատճառաբանվել հուշարձանի՝ մինչև Աթոսի № 57 ձեռագիր հասնելը գեթ մեկ-երկու անգամ ընդօրինակված լինելով կամ զաղափար օրինակի՝ ինչ-որ շափով հնացած-մաշվածությամբ⁴⁷:

47 Ծնդօրինակության միջոցին տեղի ունեցած վրիպումով կարելի է բացատրել ձեռագրում առկա շանչանու ընթերցումը: Եփոթված են մրգլովանի Ն և Յ գրերը:

Երկու դեպքում էլ իրերի փաստական վիճակը մեղ կարող է առաջ տանել մինչև IX դարը: Բայց դա թարգմանության ժամանակին է վերաբերում և ոչ հայերեն բնագրի ստեղծմանը: Վերջինիս հետ կամված խնդիրներ արծարծելիս որոշ կովաններ է ընձեռում վկայաբանություններում նկարագրված առանձին դրվագների բննությունը: «Դավթի և Տիրիճանի վկայաբանության» տկարում ասվում է, թե նահատակությունը տեղի է ունեցել «այն ժամանակներում, երբ աշխարհակալ թագավորներ էին Հունաստանում՝ Հերակլ արքան, Հայաստանում՝ Արշակը և Պարտկաստանում՝ Վուամշապուհը»: Հայտնի է, որ Արշակի գահակալության տարիներն են 345—367/8 թվականները, Վուամշապուհինը (եթե դա Շապուհ Բ-ն է)՝ 309—379, Հերակլինը՝ 610—641: Հաջորդ պարբերության մեջ հիշատակվում է և հայոց կաթողիկոսը՝ Ներսես Մեծ (353—373): Ներկա դեպքում Հերակլի հիշատակությունը պարզ անախրոնիզմ է: Արշակի, Ներսեսի ու Վուամշապուհի (իմա Շապուհ Բ) ժամանակակից բյուզանդական հինգ կայսր է եղել (Կոստանդ, Հովհանոս Ուրացող, Հովհանոս, Վաղենտիանոս, Վաղես), բայց ոչ Հերակլը: Քանի որ երկու վկայաբանություններում էլ խոսքը տեղական հեթանոսության ու նորամուտ քրիստոնեության պայքարի մասին է, ուրեմն սխալ կարող է լինել Հերակլի անվան հիշատակությունը և ոչ շորորդ դարի վերոհիշյալ իրական անձնավորությունների: Բայց հենց այս անախրոնիզմն էլ վկայում է (իհարկե, եթե այն հետագա կամ թարգմանության ժամանակ կատարված ընդմիջարկություն չէ), որ «Դավթի և Տիրիճանի վկայաբանությունը» (հետեաբար և «Կողացիների վկայաբանությունը») զրված պիտի լինի Հերակլի թագավորության տարիներից (610—641) հետո: Այդ, ինչպես նկատել է Իվ. Զավախիշվիլին, փաստվում է և մեկ այլ հիշատակությամբ. վկայաբանության վերջում Ներսես Մեծը դառնում է «մեր սույր հայր Ներսես Հայոց կաթողիկոս», որը «իշխանից տեսնում էր հրաշքը», «փութով հասնում Դիվրի»: Խշխանից գնացողը արդեն Ներսես Տայեցին է (641—661): Ինչ խոսք, միայն VII դարի երկրորդ կեսից հետո կարող էին հիշատակվել այս երկու անձինք՝ Հերակլն ու Ներսեսը: Եթե վկայաբանությունների հեղինակը ժամանակակից լիներ այդ երկուսին, կամ թեկուզ միայն Ներսեսին, ապա նրան չէր շփոթի Ներսես Մեծի հետ և ոչ էլ Հերակլին՝ Արշակի ժամանակակից կայսր կհռչակեր: Այդպիսի անտեղյակություն կամ անախրոնիզմ թույլ տալու համար նա հիշյալ դեմքերից գեթ 50—100 տարի հետո ապրած պիտք է լիներ, որի աղբյուրը ժամանակակից իրականությունը չէ, այլ սերնդից-սերունդ անցած ավանդությունը: Անտեղի կլիներ ևնթագրել, թե այս անհարթություններն առաջացել են թարգմանության ժամանակ կամ հետագա ընդօրինակությունների ընթացքում, քանի որ նման պարագայում որոշակի միտում էր ակնկալելի, ինչպիսին իրականում չկա: Կարծում ենք՝ սխալված շենք լինի, եթե եզրակացնենք, թե արծարծվող վկայաբանությունների հայերեն բնագրերի երևան գալը սպասելի է VIII դարից ոչ շուտ և ոչ քան IX դարը, երբ նրանք արդեն վրացերենի են թարգմանվել⁴⁸:

⁴⁸ Իվ. Զավախիշվիլին և Ի. Արուլաձեն վկայակոչում են ժամանակագրական ցուցում պարունակող մեկ ուրիշ փաստ ևս, որ, մեր համոզմամբ, կովան լինել չի կարող: Նահատակության անդում Դավթի ձեռքից գետին է ընկնում կաղնե ճիպոտն ու «լեռան վրա մեծ ծառ զանում»: Եվ մնաց այդ ծառը մոտ երկու նարյուր տարի, ու ուստավորները ի հիշատակ տարանաւ: Այս երկու հարյուր տարին հիշյալ դիտնականներն ընդունել են իրրե ցուցում և, ավելացնելով Ներսես Տայեցու գահակալության տարիների վրա, ստացել 860-ական թվականները նման հաշիվը ամե-

Որ սույն վկայարանություններն արժեքավոր են տեղական հեթանոսության և նոր մուտք գործող քրիստոնեության բախումներն ուսումնասիրելու առումով՝ արդեն նկատված փաստ է: Պատմական Հայոց աշխարհի սահմաններում այդ շրջանում կատարված իրադարձությունների մասին այլուստ որևէ ամփոփ տեղեկություն չունենք, ուստի քննարկվող վկայարանությունների հաղորդումները առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում: Պակաս արժեքավոր չեն նաև Տայքի պատմական աշխարհագրությանը (տեղագրությանը) վերաբերող տվյալները: Բասեանի գավառի Օնկոմ (իմա՞ Օկոմի)⁴⁹ ավանում իշխող վարդանի կինն ու զավակները, նրա մահվանից հետո ապաստանում են «Հյուսիսային կողմ»—Տայոց աշխարհում, ապատվելով Բասեանի գավառի մեկ այլ իշխանավորից՝ Թևոսից: Թագինեն հաստատվում է Տայքի Վաժգան ավանում⁵⁰, իրենց ազգական Վաղգեն (բնագրում՝ Վահգեն) իշխանի մոտ: Ուշագրավ է, որ այս երեք իշխանների միջև էլ աղղակցություն—արյունակցություն կա, իսկ վարդանն ու նրա կին Թագինեն «թագավորական տոհմից էին»: Տայքի պատմության ապագա ուսումնասիրությունը պետք է պարզի՝ սրանք պատմական-իրական գեմքեր են, թե՛ վարքագրական հերոսներ (նույնը վերաբերում է և Դիվրի կոչվող գյուղում նստող իշխանին): Արդյո՞ք նրանք բոլորը իրոք իշխաններ են՝ իրենց զորքով, ինչպես վկայարանություններում է ներկայացվում:

«Կողացիների վկայարանությունը» այսքան լայն աշխարհագրական ընդդրկում չունի. նրանում խոսվում է միայն Կող գավառում (Տայքի գավառներից առաջինը), «Կուր կոշվող գետի ակունքի մոտ» գտնվող մի գյուղի մասին: Սակայն հենց այդ միակ բնակավայրի հիշատակությունն էլ հետաքրքրական է. «Աշխարհացոյց»-ում ասվում է, որ «...Տայք... ունի գաւառու ութ. զԿող յելից կուտէ, յորմէ բղխեն աղբիւրք գետոյն Կուրայ, ի գեղջէն, որ ասի Կրի ակունք»⁵¹: Վկայարանության մեջ փաստորեն հենց այդ «Կրի անկունք—Կրակունք» գյուղն է հիշատակվում (Կուր կոշվող գետի ակունք), անվան կազմության թելաղբան-ըով մի քիչ նկարագրական ձևով:

Մասնավոր քննության առարկա կարող են լինել և Դավթի ու Տիրիձանի վկայարանության տեքստում հանգանե հիշատակված որոշ գործիշներ: Հեղինակը, եղելության ժամանակը սահմանելիս, Հայոց կաթողիկոս Ներսես Մեծի հետ միաժամանակ վկայակոշում է Աղամ Արագածոտնեցուն: Վերջինս, դատելով հիշատակության հանգամանքներից, IV դարի վրա, որից հետո հերկու հարյուր տարի դոյսենել է և ոչ՝ Տայեցու գահակալության, բանի որ վերջինիս հիշատակությունը պարզորոշ անախրոնիզմ է:

49 Արքատակես Հաստիվերտցին Օկոմի-ն կոչում է «մեծ աւան», «մարդաշատ և ընշատէտ» (Կ. Յուղբաշյանի հրատ., էջ 29, 102), հմմ. Պուկաս Խնճինեան, Ստորագրութիւն Հին Հայաստանեաց (Մեծ Հայք), Վենետիկ, 1822, էջ 385—386:

50 Վաժգան տեղանունը ստուգարանելի է իրեկ վիճական—վճական—վաժգան (վիճել—վիժան—բազմական) բառից, հմմ. Խ. Ածոնց, Արմենիա և էպոխա Յուստինիան, Երևան, 1971, ստր. 144—145):

51 Տե՛ս Ս. Սեմյան, Հայաստանը բառ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 110:

րիս հեղինակին ուրիշ որևէ տեղեկություն հայտնի չէ: Անցուղարձի վայր շտապած ներսիս Տայեցին (sic!) իր հետ բերում է քահանաներ՝ Հովհաննես: Սահակ, Գրիգոր: Ովքե՞ր են այս անձինք, իրո՞ք իշխանում գործող քահանաներ: Եթե ելակետ ընդունենք Հ. Աճառյանի կազմած «Անձնանունների բառարանը», ապա Թագինե անունը պիտի համարենք հայ մատենագրության մեջ շավանդված և սույն բնագրով միայն ներկայացող: Մասնավոր ուշագրության է արժանի Տիրինան անունը: Բնագրում ստուգաբանորեն վկայվում է, թե այդպես են կոչել հայերեն լեզվով (յնօտա Սոմեցեց՛օտա), իսկ «Արուեստ Դիոնիսիայ Քերականի» երկի հայերեն թարգմանիչը հունարեն Ծէօն «անուն ինչ քերդոցեալի» դիմաց դնում է Տիրինան, ակնհայտորեն ելակետ ունենալով նրա տեր բաղադրիչը⁵² և «ցանկանալով հայկականացնել հունարեն անունը»⁵³:

Բրակացու աշխատության հայերեն թարգմանության և Տայրում գրված վկայաբանության մեջ Տիրինան սակավ գործածական անվան հիշատակությունը կարող է օժանդակ ազբյուր ծառայել թե՛ քերականության թարգմանության միջավայրը որոշելիս և թե՛ վկայաբանության հետ կապված հարցեր արծարծելիս: Կարելի է նույնիսկ վարկած առաջադրել, թե վարքի հեղինակը կամ վրացերենի թարգմանողը անձնանունն ստուգաբանելիս ծանոթ է եղել Բրակացու հայերեն թարգմանության կամ նրա մեկնիշների մոտ եղած հիշյալ բացատրությանը⁵⁴:

Վարքագրական այս երկու հուշարձաններում կան և այլ բնույթի նկատառելի վկայություններ: Նրանցից մեկում, օրինակ, նյութեր կան ժառանգության իրավունքի, քեռու խնամակալության (avunculus), ապաստանության և այլ խնդիրների վերաբերյալ: Ազգագրության համար հետաքրքրական են խաշնարածությանը, մանկական խաղերին վերաբերող տեղեկությունները: Ի վերջո, երկու վարքերն ել մանուկների մասին գրված կարճառոտ ու անպատճեց պատմվածքներ են: Նրանցից կարելի է գրականագիտական մակարերումներ կատարել գործողությունների զարգացման, հոգեբանական պատճառաբանվածության, կերպարավորման և նման այլ հասկացողությունների իմաստով: Թերեւ կարելի է նյութեր հայթայթել և արարողության պատմության համար, բայց ներկա դեպքում այդ ամենի քննությունը մեր նպատակից զուրս է:

Ստորև թարգմանաբար հրապարակում ենք հիշյալ վկայաբանությունները, աշխատելով, ուր հնարավոր է, հարազատ մնալ բնագրին: Տերմինները փոխանցվում են հայերենի՝ ըստ ժամանակակից ու դրավոր վկայված համապատասխանությունների: Հատուկ անունները, բնական է, հայերենին ընտանի ձևով են տրվում, ինչպես եղել է նրանց սկզբնագրում: Որևէ նկատառում կամ տարակուսանք ունենալիս փակագծում տալիս ենք վրացերենի տառագարձությունը: Թարգմանությունը կատարված է վրացերեն տերուերի վերջին հրապարակությունից («ԺԵՂՋՅՈՒՅՈ...», Ժ. I, 1964):

⁵²Տե՛ս Հ. Ածուկ, Դիոնիսի Փրակիական և արմանական տոլկութեալներ, Պր, 1915, стр. 16.

⁵³Հ. Ածուկ, նշվ. աշխ., էջ ԱԼԽII. Անահուն մեկնիշը ընդունում է այդ ստուգաբանությունը (... ի տիրապետների Տիրինան), իսկ Ստեփանոս Սյունեցին այն վկայակոչում է իրեն երկու անկատար դոյլականներից կազմված բարդություն (Անդ, էջ 142):

⁵⁴Հմմ. Հ. Marr, [Рец. на кн.] Դիոնիսի Փրակիական և արմանական տոլկութեալներ, издал и исследовал Н. Аծուկ, X. В. Դ. V, вып. I, Петроград, 1916, стр. 60. Անտոն կանալի է միայն, որ այսուղ Ն. Մառը Տիրինանի համարում է «армянский святой VII века». Թերեւ դա վրիութեալ է:

I

ԸՆԹԵՐՑՈՒՄՆ ԵՐԿՈՒ ՍՈՒՐՅԱ ՏՎԱՎԹԻ ԵՎ ՏԻԹԻՃԱՆԻ

Այն ժամանակներում, երբ աշխարհակալ թագավորներ էին՝ Հունատանում Հերակլ արքան, Հայաստանում՝ Արշակը և Պարսկաստանում՝ Վասմշտպուհը, եղավ այս սրբերի մարմինների նվիրումն՝ ի զոհ տիրոջ:

Նրանելի Մեծն Ներսես կաթողիկոսի և Աղամ Արագածոտնեցու ժամանակներում Հայոց աշխարհի կողմերում՝ Բասեանի գավառի Օնկոմ կոչվող ավանում, ումն ավագանի և իշխան մարդ կար՝ Վարդան անունով, իսկ նրա կնոք անունը Թագինն էր: Նրանք երկուսն էլ թագավորական տոհմից էին և սուրբ երրորդության ճշմարիտ ու ուղիղ հավատ ունեին: Ապրում էին նրանք տստվածապաշտությամբ, ամենայն արժանավորությամբ և աստվածավախությամբ: Եվ աերը նրանց երկու զավակ տվեց՝ որպես ծաղիկներ գեղեցիկ, եղեմական գրախտի տունկ: Ուրախացան ծնողները, որովհետև աստված լսելի արեց նրանց ազոթքները ու երկու տղա տվեց. առաջնեկին կոշեցին Դավիթ՝ հանուն մեծն թագակիր և մարգարե Դավթի*: Այս երկրորդին նույնպես անվանակոշեցին մարգարենությամբ, քանի որ նա ևս երկնային տիրոջ կողմից վկայության թագի արժանի եղավ. թեև այս եղծելի անցավոր լաւացից: Իսկ նրա հաջորդին՝ էղբորը, հայեցի լեզվով Տիրիճան կոշեցին:

Մեծացան սրանք ուղիղ հավատով: Նրանց մոր եղբայրը Թեղոսն էր, որ հեթանոս էր ու հեթանոսների անօրեն հավատ ուներ: Եվ տակավին Դավթի ու Տիրիճանի մանկության շրջանում մահացավ իշխան Վարդան զորապետը, իսկ Թեղոս անաստվածը բռնի խլեց Վարդանի իշխանությունն իր քրոջորդուց, ինչպես նաև գրավեց նրանց ժառանգությունը: Եվ երբ այդ շար գազանը տեսավայս սուրբ տղաների վայելլությունը, մտածում էր, թե «Մի գուցե կատարելահասակ [դառնալուց] հետո նրանք հզորանան և իր հանգեալ շարություն անելու ելնեն»: Զկարողացավ սրտապնդվել, այլ առավել նենգությամբ խորամանկություն մտածեց, չզոհանալով նրանց ժառանգությունն ստանալով, ուզում էր բոլորովին ջնջել նրանց:

Իսկ արժանավորն աստծո երանելի թագիննեն լսում էր իր հանդեպ գյութած այս ողջ շարությունը: [Եղբայրն] ասում էր. «Թողեք այդ խաշեցյալի զենքը և դու ու քո որդիք ընդունեք իմ հավատը, և թող այդ տղաներն իմ որդիները դառնան, ու ես մեծացնեմ նրանց մեծ խնդությամբ և ուրախությամբ»: Իսկ երանելի կինը ամենենին շրնգունեց այդ հոգիներ խաթարող գազանի անմիտ թովքությունը, այլ ասաց նրան. «Որդիներիս այս ժառանգությունն ու նրանց հոր ողջ ստացվածքը բավ է քեզ, իսկ երկնային հոր կողմից ու տստծուց տրված այն անգողանալի գանձն ու անկալելի ժառանգությունը՝ անկարող եմ»:

Երբ կնոջը Քրիստոսի հավատի հանդեպ այսպիս հաստատուն տեսավ, այլևս շշարունակեց վերստին խոսել նրա հետ, այլ առանց իրենց մոր՝ կանչեց երանելի այդ տղաներին և որպես թե՝ քաղցր խոսրով ուզում էր նրանց զառնության փոխել: Իր անմտությամբ նույնիսկ խորհում էր, թե «Կիործեմ

* Բառացի՝ հանուն մեծն թագակիր Դավթի և մարգարե Դավթի:

ստուգությամբ այս կերպով, թե ընդունեն իմ հավատը՝ իմ հանդեպ իրենց սրտում ոխ չեն պահի»:

Բերեց նրանց, հավաքեց ու համբուրում էր՝ իրրև թե սիրով, [նա], որ նախ նրանց հոգու մահն էր տեսչում: Իսկ երբ սրանով շկարողացավ հաղթել, որոշեց ոչնչացնել նրանց և այսպես էր տում. «Դուք, որդյակներ, այժմ իմ զավակներն եք ու ես այսօր՝ որպես ձեր հայրը, և այժմ իմն էլ ձերն է: Այս միայն կատարեք իմ հանդեպ և ինչ ձեզ առեմ՝ լսեցեք ինձ, որպես սիրելի հնագանդ որդիք: Այդ հավատը, որ ձեր հայրն ուներ, թողեք, և ես ավելի լավ հավատ կտամ ձեզ»: Իսկ սուրբ տղաները լուսիթյունից հետո պատասխանեցին իրենց մորեղբորք և ասացին. «Մեզ համար բավական է այն հավատը, որ մեր հայրն էր զավանում և կպահենք այն՝ քանի դեռ այս հոգին կլինի մեր մարմինների մեջ: Իսկ հանուն աստծո սիրո և համբերության՝ այլ կերպ, առանց հավատը թողնելու, պատրաստ ենք, իրրև մեր հորը»: Եվ երբ խուզարկու [հայացքով] նայեց այդ անգութ ու քարսիրտ* թևեղոսը, քրիստոնյա ժողովողդի [առկայության] պատճառով շահնդգնեց սպանել նրանց, այլ որոշ ժամանակ թողեց, և մտադիր էր ոչնչացնել նրանց:

Այս բանն զգաց թագինեն՝ նրանց մայրը, և մտածում էր, թե ո՞ր կողմ փախչի: Վերցրեց որոշ բան ամուսնու ինչքից և իր զավակներին ու փախավ հեկավ հյուսիսային կողմ՝ զեսի Տայոց աշխարհ (Տավո երկիր): Եկավ մի ավան, որ կոշվում էր վաժգան: Այնտեղ այդ սրբերին ազգական մի փշխան կար՝ վազգեն** անունով: Եվ ապավինեցին այդ իշխանին ու, տեղի ամրության պատճառով, հուսագրվեցին իրենց մորեղբոր հալածանքից: Այնտեղ բնակվեցին ու ապրում էին աստվածապաշտությամբ, իսկ իրենց ժառանգության ու օտարության [մեջ գտնվելու մասին] շէին էլ հանդգնում [մտածել], այլ այդ սակավով ու փոքր ինչքով վին գոհանում, քանի որ նրանց խնդությունն ու հարստությունը Քրիստոսի հավատն էր: Իրենց մայրը մի քանի ոշխար ուներ, որոնց հետ զնում էին այս երանելի եղբայրները՝ զվարճանալու կամ հովվություն անելու: Ու աստծո այդ անարատ գառներն ու ճշմարիտ զոհերը ոշխարների գառների հետ էին խաղում, իսկ նրանց անարատությունը միմյանց էր փոխանցվում և արդարե վերեն աստծո մատուցման պատրաստվում:

Իսկ նրանց մորեղբայր թևեղոսը զինվում էր երփներանդ խարեւությամբ և զազանի պես շէր կարողանում թաքցնել իր զայրույթի բարկությունը: Նրա շար սրտում քենն էր՝ տղաներին իր ձեռքերից բաց թողնելու և նրանց փախուստի համար: Ռւղարկեց իր սպասավորներին ու լրտեսեց տղաների կյանքը: Հայտնվեց նրանց անմեղ արյանը հետամուտ այդ գազանին, թե «Կա մի սար՝ բարձր զագաթով, այնտեղ են բարձրանում տղաները՝ ոշխարների հետ»: Ու երբ այս՝ այսպես իրազեկ արին, բազում զորք հավաքեց և զգուշությամբ ծպտյալ եկավ ու դարանակալեց լեռան վրա, որ*** անջրդի էր: Եվ խիտ անտառ էր՝ անջրդի ու ժանտընկուզավոր:

Կանչեց մայրը երեխաներին և ուղարկեց վաժգանից ձորք (ենինի վաժգանիսանի), ինչպես Հակոբը Հովհանքիին՝ Քերրոնի հովիտներ, և ասաց նրանց. «Գնացեք, իմ որդիներ, և նայեցեք մեր սակավ [աթիվ] ոշխարներին»: Գնացին որախությամբ և սարը բարձրացան. իրար զվարճացնելու համար թոշկուում

* Բառացի՝ պղնձե ազի [ունեցող], իմա՝ աղեպինդ:

** Զեռազրում՝ վահցին:

*** Բառացի՝ քանդի:

էին և այսպես ելան-հասան այդ լեռան կատարը: Իսկ բոնակալները զարանակալել էին առյուծի պես: Եվ երբ արդեն կենտրոն եկան, ժաղացալները ձայն տվեցին, և շրջվեցին տղաները: Վեր թռավ նրանց մորեղբայր Թևդոսին ու սուրաց նրանց հանդեպ՝ կոտորելու: Իսկ անմեղ երեխաները հաց էին ուտում՝ կաթի հետ, քանի որ իրենց ոչխարները փարախ էին արել: Սարսկցին երեխաները, ահարեկվեցին և սկսեցին այս ու այն կողմ նայել՝ շհամկանալով պատճառը: Եվ [երբ] երանելի Դավիթը ճանաշեց իր մորեղբորը, սրտապնդվեց ու ուրախ դեմքով, մաքուր սրտով բնդառաջ վազեց և ընկավ իր մորեղբոր ձեռքերին: Իսկ նա ձգեց ձեռներն ու նրան առավ բազուկներին և համրուրիու փոխարեն՝ սուրբ քաշեց, տվեց ու սպանեց նրան: Ու վկայություն կատարվեց, իսկ նա (Դավիթը) անմիջապես գտավ երկնքի ճանապարհը և նահատակության պատկ առավ: Մինչ նրա ձեռքերից թռած ճիպոտը կազնի էր, որ ընկավ գետին ու լեռան վրա մեծ ծառ դարձավ: Մնաց այդ ծառը մոտ երկու հարյուր տարի, և ուխտավորները իրրե օրհնություն տարան:

Տիրիճանը երբ տեսավ իր եղբոր անողորմ մահը, վախեցավ ու շտապեց փախչել, դիմեց դեպի հովիտ, Դիվրի կոշվող զյուղից արևմուտք*, որին մարդիկ շարությամբ** են հորչործում. Ու երբ [Դիվրի] իշխանը զգաց այդ իրաւանցումը և տեսավ զինավառ առաջացող ու սրերը պարզած մարդկանց, սկսեց բարբառել ու շտապ զորք հավաքել, որովհետեւ կարծեց, թե իրեն սպանելու հն գնում: Անմիջապես նրանց քեմ կռվելու պատրաստվեց: Իսկ հետապնդողները հասան սուրբ Տիրիճանին և սպանեցին նրան: Թողեցին նրան ու իրենք ետ դարձան: Նրանց շտապ դարձր զարմացրեց իշխանին. առաջ շարժվեցին տեղացի մարդիկ և տեսան տղային՝ գետնին ընկած, ծանր վերքով վիրավոր և հոգին թե առած՝ իր արարչի մոտ գնալու: Նրանք ափսոսացին մանկահասակին և շգիտեին նրա մահվան պատճառը: Այն ժամանակ եկավ հասավ նաև Դիվրի իշխանն ու տեսավ անմեղ թափված արյունը, զարմացավ ու խիստ սարսափեց: Անմիջապես հասան և տեղացի կանայք, ու տղայի վրա մեծ լացուկոծ եղավ:

Երբ Տիրիճանին սպանողները առաջացան ու բարձրացան լեռը, իրենց զորավար թևդոսին գտան տիսուր և ամենեին անկարող տեսնելու: Սրանք ևս սարսափեցին ու շվարած մնացին: Զորականների բազմությունը ևս շփոթմունքի մատնվեց և սկսեց տրտմել ու շշմել տեսած հրաշքից: Սարսափեցին ու շկարողացան խոսել, ոչ էլ փախչել, քանի որ առնվեց նրանց առաջնորդը և գանահարվեց կուրությամբ, ինչպես երանելի այն Պողոսը, երբ դուրս եկավ նա սպավածային պատգամից:

Եվ անմիջապես ողորմածության երասանակ գրվեց նրա բերանը, որպեսզի գոնե ետ դառնա նրա վայրենացած բանականությունը և զեթ կարող լինի իր անձն զգալու՝ [թե] այդ ինչ են արել, որովհետեւ կարծում էր, թե «Անպատշաճ բան շարի, որ կոտորեցի իմ քրոջ որդիներին»: Ուստի այս մերապով էլ նմանվեց Պողոսին. նա ևս սպանեց իր քրոջ որդի Ստեփանոս Նախավկային:

Եվ Դիվրի իշխանն անմիջապես ձին թամրեց ու իր զորքերի հետ բարձրացավ այդ հույժ բարձր լեռը, որպեսզի գոնե տեսնի [այնտեղի] զորքն ու

* Բնագրում զօնացուցագ. որ կարելի էր թարգմանել նաև՝ «դեպի վար տանող»:

** Բառացի՝ դեռորդամբ:

Հասկանա իրարանցման պատճառը: Ու երբ զորքը տեսավ սարսափահար, իսկ նրանց զորապետը տրաում՝ [Հասկացավ նրանց կատարածը]: Եվ ահա, այն է՝ [Վաժգան] հասավ երանելի թագիների որդիների հանդեպ կատարված խառնակության բռթը: Վեր կացավ կինն այդ թագինե և փութաց սարն ի վեր: Եկավ-հասավ նա երեսը ծեծելով, և իր որդիների [Կորստյան] ցավից՝ զառիվերի աբղախի դժվարությունն [իսկ] շնորհցրեց նրան. ձայն էր տալիս նա լացով ու գառնացած հոգով: Պատուց հագի հանդերձն ու ասաց իր եղբայր թեղոսին. «Ինչո՞ւ հանեցիր իմ աշքերի լուսը, ինձ բավ չէ՞ր ողբալ այրիությունս, քեզ բավ չէ՞ր իմ որդիների ժառանգությունն ու իմ՝ այս աշխարհի անդնդում լինելս: Բավ չէ՞ր քեզ ամուսնուս ժառանգությունը, և անապատ եկար ու ոչխարների հետեւից գառներին կոտորեցիր, տապալեցիր այս երկու անմեղ հովիվներին, և անապատի վրա նրանց հոտը անհովիվ մնաց: Թեղո՞ս, ո՞վ անդութ զաղան, քեզ ի՞նչ շարություն էին արել իմ այս որդիները, ինչո՞ւ խավարեցրիր արես՝ օրվա առաջին իսկ ժամին, մինչև ո՞ւր շգաղարեցիր ինձ հալածելուց: Բավ չէ՞ր քեզ այս մեկը որսալ, ո՞վ շար զաղան, զոնե մեկը ինձ թողնեիր, զեթ այրիությանս խղճայիր: Հիմա էլ ինչպե՞ս, ո՞վ է լինելու իմ ապավենոր կամ իմ հույսը: Սպանիր և ինձ, ո՞վ անաստված, և հագեցիր արյամբ, ով ինձդ արյունառուշտ: Թող այլևս շգնամ այստեղից, այլ, ինչպիս որդիներիս կենդանության ժամանակ էի ուրախանում՝ նրանց տեսնելով, այժմ էլ թող մահս նրանց մահվան հետ լինի: Թող մեսնի հոգիս՝ արդարների հոգու հետ, և մեր մարմինները թող մեկ գերեզմանում լինեն, ինչպիս իմ այրիության տարիներին մեր մահին էր մեկը: Թեղոս, շիշեցի՞ր զոնե բու և իմ ծնողի արդանդը և ստինքները, որոնցով սնվեցինք դու և ես: Ո՞վ լիովին զազրելիդ, ինչո՞ւ համար այսքան զորքով դուրս եկար անդոր կնոշ ու նրա մանուկ տղաների [դեմ] կովելու: Ինչո՞ւ մարեցիր մոմերս, ո՞վ անհավատ»:

Այս ու այսպիսի և այլ՝ սրանց նման խոսքեր էր ասում երանելի թագինեն: Իսկ հավարված ողջ բազմությունը լոել ու ողբում էր և ինչպես վտակներ՝ արցունքներ թափում: Թեղոսն անդամ նրանց հետ լաց էր լինում:

Իսկ երանելի թագինեն երբ տեսավ իր սիրելի Դավիթ որդուն սպանվածընկած, աշքերը այս ու այն կողմ ընկան՝ որոնում էր իր Տիրիձան որդուն, որ թեկուզ մահացած՝ նրան էլ տեսնի: Իսկ նա այնտեղ շէր: Եվ վշտից ու նեղությունից կտրտվում էր նրա սիրաբ:

Իսկ թեղոսը շէր կարողանում հասկանալ այդ կուրությունը: Այն ժամանակ սկսեց խոսել թեղոսն ու ասաց իր քույր թագինեին. «Ո՞վ քույրդ իմ թագինե, ինձ մոտ արի և տես, որ այսպիս՝ լեռան կատարին խավարը պատել է ինձ, ինչպիս խոր ձորերում կամ անձավում, անդունդներում: Ինձ վրա է գալիս խավար մեղք, իսկ քեզ՝ անհաս լույս պայծառափալեց՝ այն անանցողիկ լույսից ու ճշմարիտ այն հավիտենական լույսից: Իսկ այժմ իմ հանդեպ, անգութիս ու անարժանիս ողորմածություն... Եվ մի՛ հատուցիր արարքներիս համեմատ, այլ աղերսիր դու սուրբ նահատակներին, որպեսզի ողորմածություն անեն ինձ, որպեսզի այս անարժանս արժանի դառնամ ողորմած աստված Քրիստոսի կնիքին, որ հանուն մեղավորների եկավ: Հավատում եմ ևս ճշմարիտ աստծուն»:

Ու երբ [Թագինեն] ուշի եկավ և տեսավ, թե աստծուն զո՞հ մատուցվեցին այդ գեղեցիկ մատաղները՝ իր որդիները, տեղնուտեղը ուրախությամբ լցվեց ու անմիջապես թոթափովեց իր որդիների ցավի վշտից: Նոյն ժամին ողբին ու-

րախություն փոխարինեց, համբուրեց իր եղբորի ու ասաց նրան. «Թող աստված թողություն տա քեզ և ողորմած տերը թող իմ որդիների ու քո քեռորդիների մահը քեզ վրա շհաշվի, ինչպես ժամանակին՝ Պողոսին՝ իր քրոջորդի Ստեփանոս Նախասարկավագի հանդեպ»:

Ազերսում էր աստծուն, [աշքերը] երկինք հառում, օրհնում տիրոջը և վայանում արցունքից, որպեսզի առ ոչինչ համարի նրա մտքի բորբոքումը, և իր բուրավետությամբ ցիրուցան լինի նրա խունկը: Կին այդ թագինե ասում էր. «Դու, տե՛ր, քոլոր կողմերով ողորմած ու բոլորին զթացող, հայրդ որբերի ու դատավոր այրիների, որ այս փոքրիկներին՝ այս խոնարհ աղանդերին, շանտեսեցիր և նրանց հազորդ արիր սուրբ նահատակների վիճակին՝ իմ այս որդիներին, որոնք հանուն քեզ բազում շարչարանք կրեցին ու երկնային անթառամ պսակ և հավիտենական կյանք ստացան՝ նրանց մանկակի այս վկայությունը, արժանի արա սրանց՝ նրանց հետ (սուրբ նահատակների) ուրախության և խնդրության, նրանց հետ հանգչելու, նրանց հետ՝ պսակի, նրանց հետ՝ շարշարանքների բժշկության, վնասի նրանք՝ այնպես էլ սրանք: Եվ որ իմացվի, թե Հաճու էր քեզ, տո՛ւր և իմ եղբորը բժշկություն, որ տեսնի»: Ու վերցրեց Դավթի արյամբ շաղված հողն ու ցիսեց նրա աշքերին: Եվ նրա աշքերն անմիշապես բացվեցին: Այս երկու սքանչելիքները կատարվեցին սուրբ Դավթի հանդեպ:

Մարդասերն աստված պարտ համարեց նաև, որ բոլոր մարդկանց հայտ առնի նրանց խիզախությունը և տեղեկացնի, թե աստվածահամ էր նրանց նահատակության այդ զոհը. այդ գիշեր փայլատակեցին լույսերը՝ ինչպես լուսատղեր, լուսե սյան տեսքով, որոնց կատարը երկինք էր հասնում, ինչ տեսնում էին աշխարհի բոլոր մարդիկ, և ովքեր գիտեին՝ փառարանում էին աստծուն, իսկ հեռու գտնվողները տեսնում էին այդ լույսը, զարմանում և միմյանց հարցուսիորձում:

Այն ժամանակ, երբ մեր սուրբ հայր Ներսես հայոց կաթողիկոսը իմացավ այս եղելությունը, քանի որ ինքն էլ իշխանից տեսնում էր հրաշքն ու անհամ լույսի [այն] փայլատակումը, որ[ով] տերը փառավորեց իր արժանավորներին, սուրբ հոգու շնորհիվ կոահեց կատարվածն ու փութով հասավ Դիվրի և հետքը քերեց Հովհան, Սահակ և Գրիգոր քահանաներին: Իսկ թեղոսն ընկավ Ներսես կաթողիկոսի ոտքերն ու խոստովանեց նրան այն բոլոր հանցանքները, որ կատարեց, և Քրիստոսի մնիք առավ, իր ողջ սրտով հավատաց մեր տեր Հիսուս Քրիստոսին և նրա բոլոր վկաներին ու սրբերին: Ազա սուրբ Ներսեսը նրանց մոր՝ Թագինեի ու Թեղոսի ներկայությամբ իր ձեռքով պատեց այդ սրբերի մարմինները: Նրանցից մեկին հողին հանձնեց լեռան վրա, մյուսին Դիվրի* ներքեսի կողմում՝ Հեղեղատի ձորից (Խելի նազուարեկսա) արևմուտք:

Եվ Թեղոսը ծախսեց ունեցվածքը և Դավթի [զերեզմանի] վրա եկեղեցի կառուցեց, պահեց ու կարգեց նրանց հիշատակը, իսկ Դիվրի իշխանը առավ Տիրիմանի սուրբ ոսկորների նշխարներն ու նա ևս եկեղեցի կառուցեց ի վկայություն այն բանի, որ կատարվեց նրա սահմաններում՝ այդիների մեջ:

Իսկ երանելի թագինեն զնաց Մամրավանից ձորը՝ Տաճարանի կոչվող դյուլը, և այնտեղ հանդավ: Նրա զերեզմանն էլ բժշկության [տեղի] դարձավ:

* Բնագրում՝ Դերի:

Մինչ Դիվրի իշխանը այլեստանների^{*} մեջ եկեղեցի կառուցեց՝ ի փառս Հոք և Որդու և սուրբ Հոգու՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

II

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՎԱՎ ԻՆԸ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԱՆՑ, ՈՐՈՆՔ ՍՈՒՐԲ ԱՎԱՋԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵՎՈՐ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԷՒՆ, ԻՍԿ ԾՆՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆԶՅՈՒՐԻ, ԻՐ ՄՈՒՐԻՑ

Կուր կոշվող մեծ զետի ակունքի մոտ, Կողա կոշվող զավառում մի մեծ զյուղ կար: Այդ գյուղի բնակչության մեծամասնությունը հեթանոսական կուռքերի պաշտող էր, ժողովրդի փոքր մասը՝ քրիստոնյա, աստվածապաշտ: Եվ ինչպես երեխանների սովորությունն է, հավաքվում էին քրիստոնյանների ու հեթանոսների տղաները խաղալու ու խաղում օրն ի բուն: Իրիկնաժամին երեցը կոշնակում էր, և քրիստոնյանների երեխանները եկեղեցի էին գնում աղոթելու, ինչպես քրիստոնյանների ծեսն է, մինչդեռ հեթանոսների թվով ինը երեխանները հետեւում էին նրանց, որովհետեւ ընտելացել էին քրիստոնյանների երեխաններին և սիրում էին քրիստոնեական կրոնը: Ու երբ մոտենում էին եկեղեցու դռներին, քրիստոնյանները եկեղեցի չէին թողնում, այլ այսպես էին ասում նրանց, թե՝ «Դուք կուտաշաշտների որդիներ եք, և պատշաճ չէ ձեզ մտնել տունն աստծո»: Եվ նրանք գնում էին սրտաբեկ ու ամոթվոր: Մանուկները բազմիցս էին այսպես անում:

Այնուհետև հեթանոսների երեխանները գնացին քրիստոնյանների եկեղեցի և ցանկացան նրանց հետ, հարկադրելով, ներս մտնել: Այն ժամանակ քրիստոնյաններն ասացին. «Եթե ուզում եք մեզ հետ եկեղեցի մտնել, հավատացեք մեր տեր Հիսուս Քրիստոսին և մկրտվեցեք հանուն նրա, հաղորդվեցեք նրա խորհուրդներին և միացեք քրիստոնյաններիս»:

Նրանք տեղնուսեղը ուրախությամբ ընդունեցին քրիստոնյանների խրատն ու խոստացան այդպես անել: Շտապ գնացին քահանայի մոտ, որն այդ գյուղի երեցն էր, աղնիվ արժանավոր ու հարգարժան մարդ, և հայտնեցին նրան երեխանների արարքը: Իսկ նա հիշեց Ավետարանի այն խոսքը, որ ասաց տերն մեր Հիսուս Քրիստոսը. «Որ ոչ թողու զհայր իւր և զմայր իւր, զքեռս և զեղրայրս, զկին և զորդիս և ոչ առնու զխաշ իւր և զայ զկնի իմ» չէ ինձ արժանի»^{**}:

Այն ժամանակ քահանան գնաց այդ մեծ զետի ակունք և նրա հետ՝ քրիստոնյանների բազմություն: Հեթանոսների երեխանները ևս նրանց հետ էին: Զմեռ ժամանակ էր և ցուրտ գիշեր, քանի որ հեթանոսների ահից ցերեկը շէր կարող հանդգնել մկրտել նրանց և [ապա]՝ տերն մեր Հիսուս Քրիստոսը և Հորդանան զետում Հովհաննեսի կողմից գիշերը մկրտվեց: Զուրը բարկ սառնություն էր տալիս: Եվ երբ այդ երեխանները զետը մտան, երեցը մկրտեց՝ հանուն Հոք և Որդու և սուրբ Հոգու, այս աղոթքն (ժամոքա) ասելով «Առոք Հոգին իբրև աղավնի իջավ Հորդանանի վրա, երբ Քրիստոսն էր մկրտություն առնում, հրեշտակները մոտն էին կանգնած [ու] այս շարականն էին ասում. ալելույա» զուրն այն ժամանակ շատ տաքացավ, ինչպես բազանիք, և

* Բառացի՝ խաղողների (որթատունկերի) մեջ:

** Հմմ. Մատթ., Ժ, 37—38:

տառձու հրամանով հրեշտակները երկնից սպիտակ զգեստներ պարզեցին և մարդկանցից աննկատ հազրին այդ նոր մկրտյալ մանուկներին։ Իսկ այն քրիստոնյա երեխաները նրանց կնքահայր եղան։ Եվ մկրտված տղաներն այլևս չդարձան իրենց ծնողների մոտ, այլ մնացին քրիստոնյաների մոտ և նրանց հետ եղան։

Որոշ ժամանակ անց, նրանց ծնողներն զգացին այս եղելությունը, և մեծ արամարհանքով ու բարկությամբ, զայրութով ու պարսավանքով բռնի փախցրին տղաներին քրիստոնյաների տներից և տարան իրենց տուն։ Ճեղքեցին նրանց զլուխները, սաստիկ ծեծով կապտացրին նրանց մարմինները։ Մինչդեռ նրանք միայն այսքանը պատասխանեցին ու ասին իրենց ծնողներին։ «Մենք քրիստոնյաներ ենք և պատշաճ չենք, որ անգամ ուտենք կամ խմենք կոոց մատուցվածից»։ Ու տղաները յոթ օր առանց ուտելու և խմելու մնացին, ոչինչ շճաշակեցին, այլ սնվեցին սուրբ հոգու կողմից, որ զգեցան մկրտության ժամանակ։ Այն ժամանակ նրանց ծնողները խոստանում էին ամենայն բարիք ու գույնզգույն խայտարդետ հագուստ, իսկ նրանք նույն խոսքն էին ասում, թե «Մենք քրիստոնյաներ ենք և ձեզնից ոչինչ չենք շենք ուզում, այլ թողեք մեղ, որ զնանք քրիստոնյաների մոտ»։

Եվ երբ անկարող եղան [կոտրել] նրանց ամուր հավատը, գնացին այն ժամանակվա իշխանի մոտ, որովհետեւ նա ևս հեթանոս էր, և հաղորդեցին ողջ եղելությունն ու մանուկների արարքը։ Իսկ իշխանն ասաց նրանց. «Չեր որդիներն են, ձեռնհաս եք, արեք՝ ինչ կկամենաք»։ Նրանք ասացին. «Հրամանքդ արդ մեզ հետ, քարկոծ կանենք նրանց, որպեսզի ուրիշները շրնդօրինակեն նրանց և քրիստոնյա դառնան»։ Ոչ պակաս նեղություն հասցրին և երեցին. ավար վերցրին նրա ողջ ինչը և [իրար մեջ] բաժանեցին նրա ունեցվածքը։ Սանր վերք հասցրին նրա զլխին, քիչ մնաց անգամ սպանեին, և վտարեցին նրան իր բնակությունից։

Այն ժամանակ այդ սուրբ վկաների շարշարանքի օր նշանակեցին։ Դուրս եկավ իշխանը և նրա հետ՝ ժողովրդի անթիվ բազմություն։ Եվ եկան աղքերակոմք, ուր մկրտություն առան այդ սուրբ մանուկները, հույժ խոր գուր փորեցին, իսկ նրանց ծնողները բերին այդ սուրբ մանուկներին ու զցեցին գրի մեջ։ Նրանցից ոմանք ինը տարեկան էին և ոմանք՝ յոթ կամ՝ ավելի կամ պակաս։ Ուրիշ ոչինչ շգիտեին, որ գոնե ասեին, միայն այս էին ասում. «Մենք քրիստոնյաներ ենք և հանուն նրա էլ կոտորվում ու մեռնում ենք, հանուն որի մկրտություն առանք»։

Այն ժամանակ անաստված ծնողները շարդեցին նրանց զլուխներն ու քարկոծ արին։ Օձերն ու իժերը, զազանները գութ գիտեն ձագերի հանդեպ, իսկ այս անհավատները շգթացին իրենց երեխաններին։ Ու հավաքված բազմությունը քար շպրտեց, մինչև լցվեց գուրը, և քարով ծածկվեցին նրանց սուրբ մարմինները, իսկ փորված հողը լցրին վրան։ Այնժամ կատարվեց ավետարանի խոսքը. «Մատնեսց եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի. և հառնիցն հայր ու մայրը ի վերայ որդուց և սպանանիցն զնոսա»*։

Եվ կատարվեց նրանց նահատակությունը, ու նրանք անցան նախավկաների թիվը և նրանց հետ պսակ առած հրճվում են երկնային արքայությունում՝

* Հմմ. Մատթ. Ժ, 21, Մարկ., ԺԴ, 12:

մեր տեր Հիսուս Քրիստոսի առաջ, որին վայել է փառք ու պատիվ և երկրապահություն՝ ընդ Հոր և սուրբ Հոգու, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից, ամեն:

Պ. Մ. ՄՈՐԱԴՅԱՆ

ДВА НЕСОХРАНИВШИХСЯ В АРМЯНСКОМ ОРИГИНАЛЕ АГИОГРАФИЧЕСКИХ ПАМЯТНИКА

(Резюме)

Выявленные Н. Я. Марром в афонской рукописи № 57 (по Р. Блейку—№ 8) агиографические памятники „Мученичество Давида и Тиричана“ и „Мученичество девяти отроков колайцев“ не раз подвергались историко-филологическому исследованию. По мнению Н. Я. Марра, первый из них „несомненно армянского происхождения“, а второй, возможно, представляет собой оригинальное грузинское сочинение. К аналогичному же заключению пришел и И. А. Джавахишвили, в то же время отрицая их сюжетно-стилистическую общность. И. В. Абуладзе, в отличие от Джавахишвили, доказал общность встречающейся в данных памятниках терминологии, признавая их агиографическими сочинениями, возникшими в армянской халкедонитской среде. К. С. Кекелидзе доказывал несомненную общность сюжета и слога этих памятников, считая, что либо оба они оригинальные грузинские сочинения, либо переведенные с армянского. Сам он был склонен ко второму заключению.

Проведенный нами текстологический анализ выявил ряд новых доказательств, подтверждающих их перевод с армянского: дважды встречающееся в тексте Յօբ (Յօբա՛րյուլի Յօբ և Յօմա Յօբ) представляет неточный перевод арм. ի, а ми. число слова Յօվլազբօ вызвано буквальным переводом арм. термина գիրք. Эти и другие арменизмы позволили установить, что рассматриваемые памятники, оригиналы которых не дошли до нас, переведены с армянского. Установлены также некоторые лакуны в тексте „Мученичества Давида и Тиричана“ и предложены корректизы. В работе определенное место уделено вопросам хронологических рамок составления армянских текстов и их перевода на грузинский язык (VIII—IX вв.).

Оба эти памятника содержат интересные материалы по истории распространения христианства в Армении, в частности, в области Тайк (груз. Тао). Они одинаково важны для изучения наследственного права в древней Армении, культа дяди (авункулат), некоторых этнографических вопросов и т. д. К тому же в них содержатся сведения по исторической географии и административному делению края, по ономастике (Тагинэ, Тиричан), вместе с тем названы лица (Адам из Арагацотна, князья Вардан и Вазген), не известные по другим источ-

никам. Весьма любопытен факт упоминания имени „Тиричан“ в мученичестве и в армянском переводе сочинения Дионисия Фракийского.

В заключение ставится ряд вопросов, требующих дальнейшего специального исследования, и прилагается армянский перевод текстов.

P. M. MOURADIAN

DEUX OUVRAGES HAGIOGRAPHIQUES DONT L'ORIGINAL ARMENIEN A DISPARU

(Résumé)

Les ouvrages hagiographiques „Le Martyre de David et de Tirlchan“ et „Le Martyre des Neufs Adolescents de Kola“ découverts par N. Marr dans le manuscrit № 57 d'Atos (d'après R. Blake № 8) ont fait plus d'une fois l'objet de recherches historico-philologiques. D'après N. Marr le premier est „incontestablement d'origine arménienne“, tandis que le deuxième présente, peut-être, une œuvre originale géorgienne. I. A. Djavakhichvili en est venu à une conclusion semblable, tout en niant leur communauté de sujet et de style. I. V. Abouladzé, au contraire, a démontré la communauté de la terminologie de ces ouvrages, les reconnaissant pour des œuvres hagiographiques parues dans le milieu des Arméniens Chalcédoniens. K. S. Kékélidzé démontre la communauté incontestable du sujet et du style de ces ouvrages les tenant soit pour des œuvres originellement géorgiennes, soit pour des traductions faites de l'arménien. Lui-même penchait à la seconde conclusion.

L'analyse textologique partagée par l'auteur a fait paraître un certain nombre de preuves nouvelles confirmant le fait de la traduction de l'arménien: les mots Յօն („Նօնանցլես Յօն“ et „Յօնաս Յօն“) se rencontrant deux fois dans le texte sont la traduction inexacte de l'arménien „Նօնանցլութեան“ et le pluriel du mot est le résultat de la traduction à la lettre du terme arménien «*զիրը*». Ces arménismes et d'autres encore ont permis d'établir que les ouvrages en question ont été traduits de l'arménien et leurs originaux ne sont pas arrivés jusqu'à nous. L'auteur a découvert également certaines lacunes dans le texte du „Martyre de David et de Tirlchan“ et propose des correctifs. Les questions de limites chronologiques de la composition des textes arméniens et de leur traduction en géorgien (VIII^e—IX^e ss.) ont trouvé une place déterminée dans ce travail.

Tous les deux ouvrages comportent des matériaux intéressants concernant la propagation du christianisme en Arménie, en particulier dans la région de Taïk (Tao en géorgien). Ils sont également importants pour l'étude du droit d'héritage en Arménie ancienne, du culte de l'oncle (avunculus), de quelques questions ethnographiques, etc. En outre ils

renferment des renseignements sur la géographie historique et les divisions administratives de la région, l'onomastique (Taghiné, Tiritchan) et l'on y trouve des noms de personnes (Adam d'Aragatzotn, les princes Vardan et Vazguen) non mentionnés dans d'autres sources. La mention du nom Tiritchan dans le Martyre et dans la traduction arménienne de Denys de Thrace est assez curieuse.

En conclusion l'auteur pose un certain nombre de questions exigeant une étude spéciale et donne les traductions arméniennes des textes.

ՀԱՅՈԲ ՓԱՓԱԶՅԱՆ

ԱԿՈՌՈՒ Ս. ՀԱԿՈԲԱ ՎԱՆՔԻ ՔՅՈԹՈՒԿԸ

1973 թ. Մաշտոցի անվան Մատենադարան մուտք գործած ձեռագրերի մեջ իր ինքնատիպ բնույթով առանձնանում է 10573 համարի տակ գրանցված Ակոռու Ս. Հակոբա վանքի նվիրատվությունների փոքրիկ մատյանը։ Գրշագիրը բաղկացած է 204 թերթից, նյութը թուղթ է, մեծությունը՝ 13×10 սմ., ունի կաշեպատ տախտակի կազմ, աստառը՝ կապույտ կտավից, պիճակը բավարար, տեղ-տեղ կան խոնավության հետքեր, մասամբ՝ ցեցակեր¹:

Զեռագրի սկզբի 1ա—9ա էջերի մանր նոտր գրով գրված «յիշատակադրութիւն»-ից իմանում ենք, որ 1663—1671 թթ. Ս. Հակոբա վանքի հին եկեղեցու կաթուղիկեի վերանորոգումից, ստորերկրյա ջրանցքի ու ջրամբարի կառուցումից, ինչպես նաև այլ շինարարական աշխատանքներից հետո, պատրաստվել է այս փոքրիկ մատյանը, որտեղ համառոտակի նկարագրված են շինարարական աշխատանքներն ու թվարկված նյութական միջոցներ տրամադրող նվիրատումների ու մեկենասների անունները։ Այնուհետև ձեռագրի յուրաքանչյուր թերթի առաջին էջի վերին մասում խոշոր բոլորդրով գրվել է Ակոռու բնակիչների, ավելի ճիշտ համայնքի անդամ յուրաքանչյուր տան կամ ծխի անունը, նրանց կողմից, նույն այդ թվականին և հետագա տարիներին վանքին կատարված և կատարվելիք նվիրատվությունների գրանցման համար։

Վանքերին ու եկեղեցիներին կատարվող նվիրատվությունների հատուկ մատյաններ ցարդ մեզ չեն հանդիպել։ Զեռագրաց ցուցակներում և ձեռագրադիտական ուսումնասիրություններում ևս այս կարգի գրշագրերի մասին հիշատակություններ չկան։ Սովորաբար այդպիսի արձանագրությունները փորագրվում էին եկեղեցիների որմերին և կամ գրի էին առնվում տվյալ եկեղեցական հաստատությունում գտնվող Ավետարանների, Հայամավուրքների և ծիսական բնույթի այլ ձեռագրիր մատյանների դատարկ էջերում²։ Զեռագրադիտ-աղբյուրագետներին հայտնի է, սակայն, այս կարգի արձանագրությունների և տնտեսական գործարքների մասին գրառումների Սանահնի վանքում պահպանված հարուստ մատյանը, որն ուսումնասիրողների կողմից վկայակոչվում է «Քեօթուկ Սանահնի վանուց» վերնագրով³։

1 Զեռագրը նախապես պատկանել է իրանահայ բանասեր Հայկ Աճեմյանին, և վերոհիշյալ թվականին, այլ ձեռագրերի հետ Մատենադարանին է նվիրել Հանգույցյալի այրին՝ տիկ. Հասմիկ Աճեմյանը։

2 Այս նյութերի աղբյուրագիտական գնահատականը տրված է լ. Խաչիկյանի «Տնտեսական դրույթների մասին դրառումները Հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը» հոդվածում, տե՛ս «Բանքեր Մատենադարանի» № 5, Երևան, 1960, էջ 21—42։

3 Մատենադարան, ձեռ. № 3031։ Ուսումնասիրողներից ռմանը «Տաթևի վանքի բյոթուկ» են անվանում, Մատենադարանի 6271 թվահամարը կրող և Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն

Ս. Հակոբա վանքի նվիրատվությունների մատյանը թեև անհամեմատ ավելի համեստ բովանդակություն ունի, սակայն ձեռագրագիտական տեսակետից և աղբյուրագիտական արժանիքներով այն կարող է դասվել այս կարգի հուշարձանների շարքը: Ուստի կարծում ենք իրավացի են ձեռագրի առաջին նկարագրողները, երբ մայր քարտում այն վերնագրել են «Քեօթուկ Ս. Յակոբայ վանից Ակոռույ»:

Պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Մասյացոտն գավառի Ակոռի գյուղավանը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Նրա մասին առաջին անգամ հիշատակում է Վ դարի պատմիչ Ղազար Փարագցին⁴: Հետագա մատենագիրների երկերում, ձեռագրաց հիշատակարաններում և այլ աղբյուրներում եղած տեղեկությունները դալիս են վկայելու, որ Մասսի լանջին թառած այս հին ավանը, կուրծք տալով ժամանակի արհավիրքներին ու աղետներին, շարունակել է գոյատեև մինչև 1840 թ. հունիսի 2-ը, երբ հիմնովին կործանվեց ու բնակիչներով հանդերձ թաղվեց, մնալով լավայախառն տիղմի ու Մասսի հրաբխային ցնցումներից պոկված լեռնարեկորների վկածքի տակ:

«Ակոռի» տեղանվան ժողովրդական ստուգաբանությունը՝ «արկուոի», ըստ որի իրը նոյր իշնելով Արարատից առաջին անգամ այնտեղ է տնկել խաղողի որթը, ավելի լայն տարածում ստացավ ուշ միջնադարում: Այդ շրջանի աղբյուրներում և ձեռագրաց հիշատակարաններում մեծ մասամբ գյուղն անվանվում է «Արկուոի»:

Մատենագրական աղբյուրների և XVII—XIX դդ. ճամապարհորդների տվյալներով Ղ. Ալիշանն ու Ս. Էփրիկյանը տալիս են գյուղի աշխարհագրական և տեղագրական նկարագիրը, ինչպես նաև Ս. Հակոբա վանքի լեզենդախառն, կցկուր պատմությունը, ավարտելով այն երկրաշարժի և գյուղի կործանման նկարագրությամբ⁵:

Կործանմանը անմիջապես նախորդող տասնամյակին վերաբերող ամենաավաստի տեղեկությունները պահպանված են Ֆ. Պարրատի «Ռուսորություն դեպի Արարատ» ուղեգրական զեկուցագրի⁶ և Ի. Շոպենի 1852 թ. լույս տեսած Հայկական մարզի վիճակագրական ուսումնասիրության մեջ⁷:

Ս. Հակոբա վանքի քյոթուկի տվյալները, ինչպես ամեն, հիմնականում վերաբերում են XVII դ. 60—70-ական թվականներին: Թեև նվիրատվությունների մի մասին վերաբերող, տարրեր անձնավորությունների ձեռքով կատարված արձանագրությունները, XVIII դարից են (23թ էջի արձանագրությունը ունի Հայոց ՌՃՇԳ (1704), իսկ 8թ էջինը ՌՃՇԳ (1707) թվականները):

նահանգին Միսական»-ի XIV դ. ընդօրինակությունը բովանդակող ձեռագիրը, որի վերջին 337թ—383թ էշերում կան Տաթեի վանքապատկան գյուղերից ստացվող եկամուտների և այլ կայութեամբների ու անտեսական հարցերի մասին կատարված արժեքավոր հիշատակագրություններ ու արձանագրություններ:

⁴ Ղազարաչ Փարագցույ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյան, Տփղիս, 1904, էջ 123, 125:

⁵ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 459, 470—474, Ս. Էփրիկյան, Բնաշխարհի բանարան, Վենետիկ, 1902, հ. 1, էջ 81—87:

⁶ Կ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1956, հ. 7, էջ 221—299:

⁷ И. Шопен. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, стр. 490, 563—566, 1803—1806 (այսուհետեւ Շոպեն).

Զեռագրի գրչության ժամանակը համբնելում է Արևելյան Հայաստանի խաղաղ և համեմատաբար բարգավաճ տարիներին, երբ առկա էին տնտեսական կյանքի զարգացման քիչ թե շատ տանելի պայմաններ: Այս շրջանում մեծ թվով վանքեր ու եկեղեցիներ վերանորոգվեցին: Հատկանշական է, որ շատ եկեղեցիների՝ էջմիածնի մայր տաճարի, Հոփիսիմեի, Մուղնու, Դարաշամբի, Թաղեի, և ինչպես վերը նշվեց, նաև Ակոռն Ս. Հակոբա վանքի կաթողիկոնները (զանգակատներ) այս տարիներին են կառուցվել կամ վերանորոգվել: Դարասկզբի մեծ արձավիրքներից բավական ժամանակ էր անցել, զյուղերն ու ավանները մասսամբ վերաշինվել էին: Նվիրատվական արձանագրությունների տվյալներով, XVII դարի 60-ական թվականներին Ակոռն բնակչությունը շուրջ 250 ծուխ է եղել, այսինքն միջին հաշվով 1250—1500 շունչ⁸: Ամենայն հավանականությամբ մեկուսի և մասսամբ անմատչելի վայրում գտնվելով Շահ-Արքասի մեծ գաղթի ժամանակ տեղահանման շի հնաբարկվել: Առաքել Դավրիժեցին տեղահանման ենթարկված վայրերի մեջ Սուրբային ու Մասլացոտնը չի հիշում:

Անհավանական չէ, որ Արքասի ձախափնյա շրջանի զյուղերից և այլ վայրերից, ովքեր որ կարողացել են դուրս պրծնել զաղթի հոսանքից, ապաստան ևն գտել Ակոռնում: Այսպես օրինակ նվիրատունների մեջ բազմիցս հիշվող փառակեցիները պետք է որ եկած լինեն նախիշեանի Գողթան գավառի Փառակա զյուղից: Հիշված են նաև այլ դրսեցիներ, ինչպես օրինակ «ջուղայեցի Եղնարախշը», «գաստակցի Վելիճանը», «զափանցի մահղասի Ասլանը», «Բորմեցուց Պետրոսը» և այլն: Քյոթուկի տվյալները թույլ են տալիս ասելու, որ XVII դդ. վերջերին Ակոռն բնակչությունը անհամեմատ ավելի շատ է եղել քան ՀI դդ. 30-ական թվականներին, երբ ի. Շոպենի վկայությամբ, զյուղավանի բնակչության ընդհանուր թիվը 1358 շունչ էր, որից 342-ը նորաբնակներ էին, դադար Արևմտյան Հայաստանի մերձակա շրջաններից⁹:

Զաքարիա Ազուկեցու վկայությամբ երթևեկությունը դեպի Ակոռի կատարվում էր Խոր-Վիրապի վրայով: Այդ հաստատում են նաև Ֆ. Պարրոտն ու մյուս հանապարհորդները: Այս դժվարին վերելքը Զաքարիա Ազուկեցին կատարել է դեպի Ս. Հակոբա վանը ուխտագնացության նպատակով, 1672 թ.. «Ամայ զնալ դալն ԺԿ (13) աղաջ կայ. դժվար ճանապարհ է», — զրում է նա¹⁰: Այդ նշանակում է, որ Խոր-Վիրապից մինչև Ակոռի ձգվող ճանապարհի երկարությունը մոտ 36 կիլոմետր էր:

Զաքարիա Սարկավագը, պատմելով 1679 թ. Երևանի երկրաշարժի մասին, ավելացնում է, որ Ազերբայջանի վեզիր Միրզա-Իբրահիմը գալով Երևան, իր մոտ է կանչում շրջակա խաններին և սուլթաններին, հանձնարարելով նրանց վերականգնել բերդը, Հրազդանի կամուրջը և այլ շինություններ և կարգի բերել քաղաքի ջրամատակարարումն ու ոռոգման ցանցը: Հրազդանի մեջ եղել է նաև Ակոռի սուլթանը¹¹: Այս փաստը իսոսում է հիշյալ թվականներին Ակոռու վարչական նշանակության մասին: Ըստ Շոպենի 1828 թ. գրավումից

⁸ Եթե հաշվի առնենք, որ ձեռագրից բավական թերթեր կան պակված, որոնց վրա նույնպես կարող էր այլ բնակիչների անուններ դրանցված լինել, ապա թվում է, թե բնակչության թիվը 1500 շնչից ավելին պետք է եղած լինի:

⁹ Շոպեն, էջ 563—566:

¹⁰ Զաքարիա Ազուկեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 109:

¹¹ Զաքարիա Սարկավագ, Պատմագրություն, Վազգարշապատ, 1870, հ. 2, էջ 105:

առաջ Ակոռին պետական (դիվանի) սեփականություն է եղել: Նա տալիս է նաև զյուղական համայնքի կողմից պետությանը հատուցվող հացահատիկի քանակը¹²: Պետք է ենթադրել, որ XVII դ. 70-ական թվականներին զյուղից ստացվող մալոչհաթը և այլ հարկեր տրված է եղել այնտեղ նստող սուլթանին որպես թիուլ: XVII դարում առանձին շրջանների հարիմ նշանակված սուլթանների ոռնիկները մեծ մասամբ վճարվում էին ի հաշիվ նրանց պաշտոնավայրի բնակչությունից գանձվող հարկերի: Այդպես էր օրինակ Կաղզվանի հարիմ նախաս-սուլթան Սաղուն, որ համարվում էր տեղի թիուլզարը¹³:

Քյոթուկը ուշագրավ տեղեկություններ է պարունակում զյուղի ջրամատակարարման և ոռոգման սիստեմի մասին: Պարզվում է, որ ոռոգումը հիմնականում կատարվել է մեծ ամբարտակի (բանդ) շնորհիվ ստեղծված ջրամշարի (գօլ) միջոցով, որտեղ կուտակվել են ձնհալից հոսող ջրերը: Այդ ջրերով ոռոգվել են արտերն (ջրին) ու պարտեզները (բաղչա): Խմելու և առանձին գործածության համար ստորերկրյա ջրանցքներ (գաճրիղ) են փորվել, որոնք որոշակի մուտքեր (դրբխայաղ) են ունեցել: Խստորեն պահպանվել է օգտագործման կարգը, արգելելով նոր անցքեր փորելն ու ջրի հոսանքը փոխելը:

Նվիրաբերվող անշարժ ստացվածքների մեջ կան հողագործության տարրեր աշխատանքների հետ առնչվող օրյեկտներ՝ արտեր, մանր հողակտորներ (պատառ), ոռոգելի հողեր (ջրբին), հացահատիկը կալսելու առանձին հարմարություններով օժտված վայրեր՝ կալեր, այգիներ և պարտեզներ (բաղչա) և այլն: Նվիրվող կամ «վախուս» տրվող օրյեկտների տեղն ու դիրքը ճշտող համառոտ բացատրությունները տեղագրական արժեք ունեն: Դրանց մեջ պահպանված են զյուղավանի ճանապարհների, մոտակա վայրերի, հանդերի, ագարակների և այլ տեղանուններ. «Սիլուառ ճանապարհներ Կրկչարտու պատառներն», «Գրեռումն մեկ արտ», «Գրեռեզմանուտի ճրակենց դիմի կալին կեսն», «...մէկ լաւ ջրբին ետ, Մազրումն էր», «Եինին ձոր մեկ բաղչայ, Գլուտումն մեկ պատառ ճրապին» և այլն:

Նվիրատվությունների բնույթից և որոշ նվիրատունների անուններին նախորդող և նրանց զբաղմունքը հուշող «ավել անուններից» կարելի է գաղափար կազմել բնակչության սոցիալական դրության, տնտեսության և նյութական բարեկեցության մակարդակի մասին: Քյուղավանում եղել են մեծահարուստ խոշաներ, ինչպես օրինակ Փշրկենց գերդաստանից խոչա Հայրապետը, նրա որդին խոչա Մարզարեն և վերջինիս որդիներ խոչա Սահակը և խոչա Զաքարիան, որոնց միջոցներով են կառուցվել ջրամբարի ամբարտակն ու փորվել քաճրիղն իր երեք աշխով: Խոչա Մարզարեն կառուցել է նաև մի կարավանատուն (քարվանսարա) իր օթևաններով (օգա) և հիմնովին նորոգել Ս. Հակոբա վանքի կաթողիկեն: Մեծատուն խոշաների բազմանդամ գերդաստան է եղել նաև Փառակեցոնց ընտանիքը, որոնցից նույնպես երեք սերունդի նվիրատուններ են հիշված:

Նվիրատունների մեջ հիշված են նաև տարրեր զբաղմունքի տեր արհեստավորներ. ջուղհակ, որմնադիր (բանահ), փայտահատ (բալթաճի), գինեգործ (ճմլօղ), կոշկակար (բաշմաղչի), դերձակ (դերզիկ), մաղաղործ (ալաքչի), հնակարկատ (փինայչի) և այլն:

12 Շուն, էջ 1083—1086:

13 Խոքանդար-բեկ Թուրքեման (Մունշի), Թարիխ-ե ալամարայի Արքասի, (պարսկ. բնագիր), Թեհրան, 1957, էջ 656, 743:

Բնակչության սոցիալական խորը շերտավորման և տնտեսական անհավասարության մասին է վկայում այն փաստը, որ մեծածախք կառուցումներով և թանկարժեք նվերներով հանդիս եկող խոչաներից և ունեոր գյուղացիններից, ինչպես նաև ավելի համեստ նվիրատվություններով հիշվող արհեստավորներից ու միջակ գյուղացիներից զատ, գյուղավանում զգալի թիվ են կազմել նյութական սուղ պայմաններում գտնվող ընտանիքները, որոնց հատկացված «Քյոթուկի» էջերում, տասնամյակների ընթացքում նրանց կողմից կատարված որևէ նվիրատվության մասին գրառումներ չկան: Այդպիսի տընտեսությունների թիվը 70-ի է հասնում, որը կազմում է գյուղի ընակչության մոտ 30% -ը:

Մեծահարուստ խոչաների առկայությունը ավանում, ինչպես նաև նվիրվող իրերի ու առարկաների տեսականին, թույլ են տալիս ասելու, որ թեև Ակունքն անմիջապես առևտրական մայրուղու վրա շէր գտնվում, սակայն ապրանքաշրջանառության ոլորտից դուրս շէր մնացել: Հիշատակված են ամենատարեր վայրերից բերված ապրանքներ, «Բուրսու բան կարպետ», «Բուրսու բարձ ծածկոց», «Դիզաղայ կարպետ», «Թարսիզայ բան հաղլուխ», «Հնդրստանու բան դալամբար վարաբուր», «Ֆուանզի քիմիայ», «Ֆուանկի պասմայ բեմի ծածկոց» և այլն: Կարավանատան կառուցման անհրաժեշտության փաստն ինքնին խոսում է առևտրականների հաճախակի երթևեկության մասին: Առևտրականներ, որոնք հիշված են նաև նվիրատվական արձանագրություններում: «Աստուած աւրհնէ բազրրկաններն, Ա. (1) Սարգիս գիրք բերին Ա. Յակոբին»:

Ակոռու ընակիշները, նույնական, եկեղեցական սպասքից և հանդերձանքից զատ, մեծ թվով ձեռագիր Ավետարաններ և ծիսական բնույթի այլ գրչագրեր են նվիրել Ս. Հակոբա վանքին, որոնց թիվը հասնում է 50-ի: Այդ թվում 1 Աստվածաշունչ, 13 Ավետարան, 4-ական Հայոմավուրք և Մաշտոց, 3-ական Սաղմոսարան և Քարոզգիրք, 2-ական Շարակնոց, Հիսուս Որդի, Ճաշու գիրք (Ճաշոց), Խորհրդատետր, Գանձարան և Տոնացույց և մեկական Ճառնտիր, Հարանց վարք, Աղոթամատույց, Ավետարանի մեկնիչ, Ժամի մեկնիչ, Հարցմունք (Գր. Տաթևացու «Հարցմանց գիրք»-ը), Սարգիս գիրք (Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթողիկեայց»-ը), Զայնավոր գիրք (Մանրուսմունք), Զայնաքաղ (Շարակնոց) և Ֆուանկի գիրք (Ունիթոռական գրակ.): Նվիրված է նաև մեկական տղագիր (պասմայ) Աստվածաշունչ, Սաղմոս և Քաղուածուական:

Սրանք Քյոթուկի գրշության ժամանակին հաջորդող տասնամյակների ընթացքում կատարված նվիրատվություններն են: Անշուշտ գրանից առաջ և վանքում եղել են ձեռագիր մատյաններ, և մինչև վանքի ավերումը այլ գրքեր էլ են մուտք գործել վանքի մատենադարանը: Ուստի անհավանական շէ, որ կործանման ժամանակ վանքում մեծ թվով գրչագրեր են եղել և թերեւ մնացել են փլվածքի տակ: Հայտնի շէ, հետագայում ձեռագրեր գտնելու նպատակով որոնումներ կատարվել են այնտեղ, թե ոչ: Քյոթուկի առկայությունը, սակայն, թույլ է տալիս մտածելու նաև, որ որոշ ձեռագրեր զանազան առիթներով դուրս են բերվել վանքից, նախքան վանքի կործանումը, կամ էլ հետո պեղվել և հանվել են հողի տակից: Պետք է հուսալ, որ մեր ձեռագրական ֆոնդերի պատմությունը ուսումնասիրող մասնագետներին երբեք կհաջողվի պարզել փրոյությունը:

Նվիրված են նաև տարրեր շափուի ու որակի սրբապատկերներ. «մէկ Աս-

տուածածնի պատկեր», «բեմի խաշկալի պատկեր», «մէկ մեծ պատկեր», «մէկ տախտակէ Աստուածածնի պատկեր», «մէկ փոքրիկ արծաթէ Աստուածածնի պատկեր» և այլն (շուրջ 12 հատ), որոնց մեջ հավանաբար եղել են նաև արժեքավոր դործեր և որոնց հետագա ճակատագրի մասին ևս ստույգ տեղեկություններ չունենք:

Ժամանակի կենցաղի և ազգագրության պատմության ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև նվիրվող առողջին օգտագործման կահկարասին, ամանեղենն ու այլ առարկաները: Կամ փոքրածքի զանազան տեսակներ՝ «խալի», «խալիշայ», «կարպետ», «ջաջիմ», «թաքնամադ», տարրեր նյութի և որակի գործվածքներ. «շիթ», «պասմայ» կամ «դալամբար» վարագույր, «զառքաշ» կամ «քաթան», «պասմայ» ժածկոց, «զառ» և ուրմաքաշ» կամ այլ տեսակի «մահրամաներ», «զառ» կամ «ապրիշումէ եայլուխ», «մախմուռ», «քիմխա» կամ «թաւթայ» շապիկներ, «մետաքսյա» կամ ոսկեթել «մանդիլներ» և այլն:

Հետաքրքիր են նաև եկեղեցական ինվենտարի մասին տվյալները, որոնց մեջ զգալի թիվ են կազմում ծանրաքաշ արծաթե փրերն ու ոսկերանվածք հանդերձները. «զառպատ շուրջառ», «զառ փեշկիր», «քանդաքար խաշեալ» և այլն:

Ազգագրական հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ամանեղենն ու խոհարարական առարկաները, ինչպիսիք են օրինակ կլայեկից կամ արծաթյա «իրրուղները», պղնձե «սիլիֆչաները», մեծ մասամբ պղնձից կամ այլ մետաղներից պատրաստված ջրի, ճաշի և այլ սննդամթերքների և տնտեսական նշանակություն ունեցող ամանները. «գուկում», «բաղիայ», «լական», «լանգարի», «դազդան», «թանձարայ», «թափշի», «նալբարի», «սազաղի» և այլն:

Չեռագրի սկզբի «յիշատակագրութեան» հեղինակը, ինչպես նաև հետադա նվիրատվությունների մասին գրառումներ կատարողները նշումներ են աւրել նաև համայնքի ընդհանուր նախաձեռնությամբ և հավաքական ջանքերով կատարված մեծ կամ փոքր կառուցումների, ծախսերի և նվիրատվությունների մասին: Դրանք փաստեր են, որոնք այլ աղբյուրների գուգահեռ տվյալների հետ օգնում են ավելի որոշակի զաղափար կազմելու XVII դարի գյուղական համայնքի ներքին կազմակերպության, իրավունքների, հավաքական ուժի և նյութական հնարավորությունների մասին: Մեծ մասամբ, ինչպես նույն դարշարջանի այլ աղբյուրներում, Քյոթուկում ևս համայնքն անվանվում է «ժողովուրդ»: «Աստուած ժողովուրդն օրհնէ, մէկ պասմայ Քաղուածոյ Շարական առին», կամ «Աստուած որհնէ ժողովրդեան, մեծամեծաց և փոքրուց, մէկ լաւ անօթի հմար ամբար շինիլ տվին»: Սակայն հաճախ «էլ» և «ըոհիաթ» բառերը ևս նույն իմաստով են գործածված. «Նոր եկեղեցին էլով շինեցին, թվին ՌՃՇ (1701)-ումն աւարտեցաւ: ...[կէս] թումանէ մինչի Ճ (100) դիան ըոհիաթն քոմակ արին, Աստուած մեր քանդիսուդէքն, էլն, կանայքն, մեծ և փոքրն անփորձ և անսասան պահեսցէ» և այլն:

Քյոթուկում գրի առնված արձանագրությունների մեջ հայոց լեզվի պատմությամբ և բարբառագիտությամբ զբաղվողները ևս հետաքրքիր տվյալներ կարող են գտնել: Այնտեղ զգալի նյութ կա նաև արական և իգական անձնանունների, տոհմանունների, ավել անունների կամ մականունների և ազգագրությանը հետաքրքրող տարրեր հարցերի վերաբերյալ:

Համառոտակի ուրվագծելով Ակոսու Ս. Հակոբա վանքի «Քյոթուկի» աղբյուրագիտական նշանակությունը, կարծում ենք, որ ծավալով ոչ մեծ, սակայն բովանդակությամբ ինքնատիպ և որպես սկզբնաղբյուր որոշակի գիտական արժեք ներկայացնող այս բնագրի հրապարակումը, կարող է օգտակար հանդիսանալ ուշ միջնադարի պատմության, վերը ընդգծված և այլ հարցերի լուսարանման համար:

Բնագրից զեղչված են միայն 1ր—5ա էջերի փառաբանական հատվածներն ու յուրաքանչյուր նվիրատուի անվանը նախորդող «Աստուած օրհնէ» արտահայտությունը: Ինչպես սկզբի «յիշատակագրութեան», այնպես նաև հետագա տասնամյակներում, տարբեր գրիշների ձեռքով կատարված գրառումների ուղղագրությունը պահպանել ենք նույնությամբ: Տողատակում տրված են միայն օտար բառերի և տերմինների ծագումն ու իմաստը լուսաբանող խիստ համառոտ բացատրություններ:

* * *

1ա Յաղագս հոգեորական անջնջելի յիշատակագրութիւն ի սուրբ եկեղեցիս Սբ. Յակոբայ սքանչելագործ հայրապետի, զոր բովանդակեալ զամենայն զգեստի մի ըստ միոչէ, ըստ շափու հաւատոց և ըստ կարողութեան ընշից, շարակարգեցաք զամենայն և բացայացեմք ի սուրբ տեղիս՝ առաջի ահաւոր և փրկագործ անմահ պատարագիս յականցս ձեր: Զի և դուք ով աստուածատէր և ուղղադաւան միահամուռ ժողովուրդք՝ մեծամեծք և փոքրմք, արք և կանայք, ծերք և տղայք, պարտիք մտադրութեամբ ունկն զնել և ամենայն ընծայաբերաց ի սուրբ եկեղեցիս՝ օրհնել և Աստուած-ողորմի ասել միաբանութեամբ, զի և դուք ընկալչիք մասն և բաժին ի սրբոցն Աստուծոյ || (1թ) առատածից ողորմութիւն ի բարերարէն Աստուծոյ աստ հազարապատիկ և բիւրապատիկ և ի միւսանգամ գալստեան նորայ՝ զերկնից արքայութիւնն ժառանգեսչիք ընդ ամենայն ննջեցելովք ձերովք. ամէն:

Բայց յառաջ քան զյիշատակարանսն կարդալոյ, պարտիմք ամենեքեան օրհնութիւն, զոհութիւն և փառ մատուցանել ամենասուրբ Երրորդութեան...»¹

5թ Աստուած ողորմի ասացէք միաբանութեամբ Փշրկէնց Մահղասի Հայրապետին և իւր որդի մահղասի խօճայ Մարգարէին, որ ետուն ընծայ սուրբ եկեղեցւոյս Ա. (1) զառ² շուրջառ, Բ. (2) մեծ խաչ, Ա. (1) մարգարտաշար վակաս, Բ. (2) շուխտ³ ծնծղայք, Ա. (1) բեմի խաչկալի պատկեր, || (6թ) Ա. (1) Աստուածաշունչ, Ա. (1) Յայսմաւոր, Ա. (1) [Ճաշ]շու զիրք, Ա. (1) մազաղաթեայ Շարակնոց, Ա. (1) խալիշայ⁴, Ա. (1) ֆոանզի քիմիայ⁵ շուրջառ, Ա. (1) արծաթէ կանթեղ, քաշն ձ՛լ. (108) մսխալ,⁶ Գ. (3) զառ եազլուխ⁷,

* Զեռագրի 1թ—5ա էջերը ունեն զոհաբանական բովանդակություն:

¹ պրսկ. Այ՝ սոկեգույն, սոկերանված:

² պրսկ. Հաշու՝ զույգ

³ պրսկ. Ջաշու՝ փոքրիկ զորք:

⁴ պրսկ. Խաչու՝ մետաքսյա զունավոր զարդարուն դործվածք:

⁵ արար. Ալֆաչա՝ թանկարժեք մետաղների բաշի միավոր, որ հավասար էր 4,72 գրամի:

⁶ թրք. Բաշկինակ:

Գ. (3) զարբաֆ⁷ սաղաւարտ, մէկ մարմար աւագան, Ա. (1) աթոռ, Սիզուտու հանապարհին Կրկըշարտու պատառներն: Այլև մահղասի խօճայ Մարդարէն Ա. (1) քարվանսարայ⁸ շինեաց իւր օտայներովն⁹. ինչ որ օտաներուն գալուր¹⁰ լինի, ի վերայ քարվանսարին պակասութեանն խարճեն¹¹, որ հանապազ շէն մնայ:

Աստուած ողորմի ասացէք մահղասի խօճայ Սահակին և իւր եղբայր խօճայ Զաքարիային, և իւրեանց կողակցացն՝ Մարիամանց, և իւրեանց ծնօղացն՝ մահղասի խօճայ || (6թ) Մարդարէին և նազլուխանին, պապուն իւրեանց՝ մահղասի Հայրապետին, և մամուն՝ Յուստիանին, հօրարեցն Խօնձուն և //ին, և //կամին, և Մարդարտին, և այլ ամենայն առուարեան մերձաւորացն՝ կենդանեացն և առ Քրիստոս ննջեցելեացն, որ գոլին¹² հիմանէն մինչև ի Խաչի յիշատակարանն Ը. (8) գագ¹³ սկիզբն արարին հաստահիմն և կոփուածու վիմօք, գեղեցիկ բրչերօք¹⁴ և ամրախիճ կրօք շինեցին, և գահրիզի¹⁵ առաջի ձորի բանտն¹⁶, որ գահրիզի ջուրն անց են կացուցել, անտի մինչև ի դուռն սր. եկեղեցւոյս Գ. (3) տեղի զըրխայաղ¹⁷ է շինած, մէկն՝ Աստուածածնի դռանն, մէկն՝ բարւանսարի մօտն և մէկն՝ եկեղեցւոյ դրանն: Այսչափ վարձք և աշխատանք յիւրեանց հալալ և արդար վաստակոցն կամ յօտարաց, ով ոք յայտնի կամ ի ծածուկ ջուր բաժանէ և տանի յայլ տեղիս հանցէ, նա յանմահական զրոյն ծարաւ մնասցէ, յերեք հարիւր ժ և Ը (318) հայրապետացն նզովեալ և անիծեալ եղիցի, մասն և բաժին ի Կայենէ և ի Յուդայէ ընկալցին մեր մեղացն պարտական լիցին և տեղերս առ մեզ գայցեն: Այլ միայն յայս Գ. (3) տեղիս հաստատուն և անշարժ մնասցէ մինչև յափտեան: Խնդրեմք ի ձէնչ, որ մեր հոգւոցն Աստուած ողորմի տէք ամենեթյան. ողորմածն Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի տստ և ի միւսանգամ գալստեան իւրում, և ինքն օրհնեալ եղիցի այժմ և անզրաւ յափտեանիւ յափտեանս. ամէն:

7 պրսկ. **جَرْبَاف** — ուսկերանվածք:
 8 պրսկ. **كَارْدَانْسُرْ** — կարավանատուն, իշեան:

9 թրք. **أوْطَه** — սենյակ:

10 թրք. **گَلْوَر** — եկամուռ:

11 արար. **خَرْج** — ծախսեն:

12 թրք. **گَول** — շրավագան

13 պրսկ. **گَزْ** — երկարության շափ, 0,90—1,10 մետր:

14 պրսկ. **جَرْبَ** — աշխարակ:

15 պրսկ. **جَرْبَرْ** — ստորերկրյա շրերը օգտագործելու նպատակով փորված շրանցք:

16 պրսկ. **جَنْدَل** — ամբարտակ, պատնեշ:

17 թրք. **قَرْقَ آيَقْ** — գեղի ստորերկրյա շրանցքը տանող սանդուղքներ, որ բառացի նշանակում է «բառասուն ոտք» կամ «բառասուն սանդուղք»:

Զայս ևս ծանուցումն լիցի մեծամեծաց և փոքրուց, թէ գոլին և թէ աղբերն եճ և Ս (550) թուման խարճ է զնացել. ԳՃՍ (350) թումանն զոլին է զնացել և ԲՃ (200) թումանն աղբիւրին խարճն է: Որոց փոխարէնն հաստատում արասցէ: Տէր մեր Ցիսուս Քրիստոս ըստ առաջ ողորմութեան իւրում՝ ի Հանդերձեալ դատաստանին իւրոյ, ամէն: Հայր մեր, որ յէրկինսդ ես:

Դարձեալ եկեղեցւոյն հին կաթողիկէն, որ խիստ քաշ և խամ էր շինած
Դ. (4) սիւնքն, այլ Դ. (3) գօշէ¹⁸ և խախուտ, մահղասի փօճայ Մարգարէն
սիւներն նոր լցնել ետուր քա|| (8ա) բով և կրով, Դ. (4) անկյունք շինեաց և
զկաթուղիկէն նորոգեաց և բարձրացոյց գեղեցիկ յօրինուածովք և մեծամեծ
լուսամտերօք. սոցա խարճն իԳ. (23) թուման գնաց: Յիշեցէք և Աստուած ո-
ղորմի տսացէք սոցա հոգւոյն. ամէն:

Աստուած աւրհնէ¹⁹ Փշիկէնց խօջայ Մարդարի որդի Նազարէլին—մէկ շաբի:

Տր Եւ դարձեալ նոր եկեղեցին էլով²⁰ շինեցին, թվին ՌՃԾ (1701)-ում
աւարտեցաւ, մնաց կաթուղիկէն: ՌՃԾԶ (1707) կաթուղիկէն շինեցինք: Կա-
թուղիկին շինութիւնն... Օվանէսի որդի Մկրտիչն ետուր ԺԴ. (14) թուման,
...Մկրտչի որդի Այվազն ետուր Թ. (9) թուման կէս,... Փիրսօլթանէնց Վարդա-
նի որդի Գրիգորն և Մարտիկի որդի Սարգիսն ետուն Թ. (9) թուման կէս, մահ-
ղասի Յովսէփի որդի Նազարէթն Դ. (4) թուման ետուր՝ կաթուղիկին խաչն ե-
տիր զլսին, խարջն էլ քաշեց: Դարձեալ այս կաթուղիկիս մնացեալ խարջն
Ե. (5) թուման, ջառն²¹, հացն, խորակն²² էլ ետուր: || (9ա) [կէս] թումանէ
մինչեւ Ճ. (100) գիան ըսիաթն²³ քօմակէ²⁴ արին: Աստուած մեր քանդիսուղէքն²⁵,
էյն, կանալքն, մեծ և փոքրն անփորձ և անսասան պահեսցէ. ամէն:

10ս ... Ներքի Ասկանն — Ա. (1) խաչ վախտ ետուր Սր. Յակոբին:

10թ ... Խօշխարաբէնց պառաւն — Ա. (1) Փոքրիկ խաչ, Գրէրումն մէկ արտ ետ:

... *Фарзил* *Заманыгъ*:

11ս ... Թարդուկու որդի Դավիթն — Ա. (1) լաւ վարագուր, Ա. (1) լաւ սկսէ եամբուխ, մէկ խաչ փոքր:

11p ...Բժուշկէնց մահպասի էվազ—Ա. (1) փոքրիկ Մաշտոց:

12ս ... Մալա Մկրտչենց Գրիգորն:

12ր ... Կարապետէնց Աւետիքն, Մարտիրոսն և Սատուրն և դստերքն՝ Մապահն և Շնչաւորն և Մարթէն — Ա. (1) լավ մազաղաթ Շարակնց:

13ա ... Ամիրճանն, որդի Մինասն — Դ. (4) թօփ շաբիթ²⁶:

18 *appalı*. *اپپالی* — *անկյունի*:

10 Յուրաքանչյուր նվիրատուի անվանը նախորդում է «Աստուած արշնե» խոսքը, որն ստորև առնելու փոխարինվելու է երթեղ կետով:

20 *μρρ.* — أَلْ — *εποκούλητη*, *επαμμαγίης*:

21 *արար.* Հար — աշխատանքին օդնող:

22 *պրակ.* **Հ**այ — ուսելիք, բանվորների սնունդ:

23 *արար.* — *رَعْيَتْ* — *ժողովուրդ,* *ուսյամի:*

24 *appuhi*. كِبْك — *aqnusifjusim*:

25 *սպակ*. — **կլխլ** — գեղջտվագ, սահնուանբ:

26 *ப்பை.* சென்—ஏமாற்றி, பந்தி:

13թ ... մահղասի Սօլթանրէկն — Ա. (1) պղնծէ բուրվառ, Ա. (1) Կիզաղտ կարպետ, Ա. (1) ջահ, Ա. (1) մեծ խաշ:

14ա ... Փառակեցոնց Սարգիսն և Մուրատն և իւրեանց հայր Ղազարն — Ա. (1) սկի, Ա. (1) հաղորդատուփ, Ա. (1) սուրմայի²⁷ սկու եաղլախ, Ա. (1) չիթ վարագուր, Ա. (1) ծնծղայք, Ա. (1) կաշէ բհմի ծածկոց, Ա. (1) արծաթէ իբրուղ²⁸, Ա. (1) պղնծէ սիլիփչչայ²⁹, Ա. (1) արծաթէ խաշ, Ա. (1) Բուրսու բան³⁰ կարպետ: Ա. (1) լաւ արծաթէ խաշ այլ Ղազար[ն] նոր ետուր, Ա. (1) զառաք շուրջառ:

14թ ... Փառակեցոնց Սարգիս և իւր որդի Մարտիրոսն — մէկ լաւ զառաք շուրջառ, Ա. (1) արծաթէ խաշ, Ա. (1) Բուրսայի կարպետ, Բ. (2) շապիք, մէկ Յայսմաւուր, մէկ մեծ արծաթէ կանթեղ, առքն Զ. (6) թուման, Բ. (2) շաբիք, Երեք լաւ մեծ շամաղան³¹, առքն Ճ. (105) ոսկի, Ա. (1) խալիչայ, Ա. (1) մեծ խաշ, առքն //³²:

15ա ... Փառակեցոնց Մարտիրոսն:

... Փառակեցոնց մահղասի Սարգսի որդի Յարութիւնն և նազարն — մէկ չափ ոսկատուփ Աւետարան փոր մահլամովն³³, Բ. (2) շապիք:

... Նազարի կին Մանուշակն — մէկ զառքաշ³⁴ սաղաւարդ:

... Փառակեցոնց Սարումն և իւր եղիսար Աւետիքն, մէկ զառքաշ փարանց, մէկ վակագ:

16ա ... Փառակեցոնց Մկրտիչն, Պետրոսն, Մարտիրոսն, Փիլիպոսն և իւրեանց հայր մահղասի Մարգարէն — մէկ մեծ խաշ, Ա. (1) կարպետ, վարագուցին համար՝ մէկ մեծ երկաթի շամբուր:

16թ ... Մուրատէնց Ավետիկ — մէկ սկու տակի ծածկոց, մէկ Աստուածածնի պատկեր, մէկ սուրմայինեախալու³⁵ շապիք:

17ա ... Ղարիպճանն:

17թ ... Անապատի մայրապետ Եղիսապետն — Երես Սր. Յակոբայ մէկ չույսու պազպան³⁶, մէկ վակաս:

18ա ... Տերտէրէնց Անտոնն և իւր հայրն — Ա. (1) խաշ ետ, Ա. (1) լաւ շաշից³⁷:

19ա ... Փառակեցոնց Յովսէփն — Ա. (1) արծաթէ խաշ ետ Սր. Յակոբին: Իւր որդի Սատուրն — Ա. (1) լաւ արծաթէ թագ:

27 պրսկ. **سَرْجَـ** — սուրմայած, սուրմայով զարդարած, նաև՝ մուզ կապույտ:

28 պրաբ. **أَبْرَـ** — ըրի աման՝ լվացումների համար:

29 պրսկ. **كَـ** — չրամանի՝ իբրուղի տակը դրվող մեծ պնակ:

30 Բուրսա քաղաքում պատրաստված:

31 պրսկ. **نَـ** — մոմակալ:

32 շաբունակությունը չնշված է:

33 պրաբ. **أَـ** — մեծ թաշկինակ, սրբիչ:

34 պրսկ. **زَـ** — սուկեցրած:

35 Բրբ. **لَـ** — օձիքը սուրմայով նախշած:

36 պրսկ. **بَـ** — դաստակակապ:

37 Բրբ. **مَـ** — փոքրիկ կարպետ:

... Մահղասի Ռւսէփի որդի Նազարէթն — Նոր Եկեղեցուն ետուր մէկ լաւ զարապ³⁸ շուրջառ, մէկ շամատան, թ. (2) մումի, տեղ, մէկ Աստուածածնի սպատկեր: Սատուրի կին Մարինոսն — մէծ սեղանին խաչկալ սպատկեր ետ:

19թ ... Մուրատէնց Ղազարի որդի Սամուէլ — մէկ մեծ խաչ, մեծ բեմի բանգարար³⁹ խաչկալն, թ. (2) սպատկեր, մէկ մոռոնտանէր:

... Մուրատէնց Տէր Ահան — մէկ Գաղարան, մէկ խորհուրդի ղետր մէկ դաստառակ. Աստուած իւր մեղքն թողի:

20ա ... Խաչիկէնց Մուրատն:

20թ ... Մարտիրոսի կին Մարիամ — Ա. (1) լաւ շաբիկ:

21ա ... Մխիթարէնց Գրիգորն:

... Ճիճանքէկ և իւր որդիք՝ Աթանհայ և Յովակիմ — մէկ փոքր խաչ:

22ա ... Խաչիկէնց մահղասի Առաքէլն և Մուրատն — Ա. (1) պղնձէ բուրգառ, Ա. (1) ժամարարի աբա⁴⁰, Ա. (1) շաբիկ, Ա. (1) փոքրիկ մոմտան ետուն, Ա. (1) Բուրսու բան կարպետ, Ա. (1) լէէֆ⁴¹, Ա. (1) բարձ, Ա. (1) Բուրսու կարպետ մենակլովն ետ:

... Խաչիկէնց Մուրատ — մէկ զառալար շուրջառ:

23ա ... Շուշէնց Պետրոսն:

23թ ... Թորոսն — Ա. (1) արծաթէ խաչ, ՃԶ (106) մսխալ, Ա. (1) ապրշմէ⁴² յեազգախ, թվին ԾՃԺԳ (1664):

24ա ... Գուլճանն — Ա. (1) ոսկետուփ Անետարան:

25ա ... Բաշմաղլոնց Յակոբն — Ա. (1) լաւ կարպետ:

26ա ... Նէպումի աղա Պարոն:

26թ ... Սօլթանշահ և իւր փեսայ Քօլոզ:

.... Նէպումինց մահղասի Հայրապետն և իւր եղբայր Երիշանն — ետուն Սր. Յակոբայ մէկ պասմայ⁴³ վարագուր կաշէ, Դ. (4) կաշէ շամզանի սեղան:

27ա ... Ամիրճանէնց պառան — մին թանճարա⁴⁴:

28ա ... Սալոնց Թաթէոսն — Բ. (2) լաւ տտենի զանզակ:

29ա ... Քոսակ Յովանէս և իւր որդի մահղասի Խաչատուրն — Ա. (1) մէջ խաչ, Բ. (2) արծաթէ թափշի⁴⁵, Ա. (1) արծաթէ բաժեկի աման, Ա. (1) կարմիր մախմուռ⁴⁶ շուրջառ ետուր Սր. Յակոբայ, Ա. (1) խաչվառ:

30ա ... Աթարեկինց մահղասի Պետրոսի սոսիք Պօղոսն, Սատուրն, Խաչիկն — մէկ պասմայ Աստուածաշունչ ետուն Սր. Յակոբայ Սատուրն — մէկ լաւ բիմխայ շուրջառ ետուր, մէկ շաբիկ ալ:

³⁸ պրսկ. *جَرْبَافِ* — ոսկե բաննվածք:

³⁹ պրսկ. *كَلْكَوْكَلْ* — փորապրած:

⁴⁰ արար. *لَبَّعَ* — թիկնոց:

⁴¹ արար. *لَفَعَلَ* — վերմակ:

⁴² պրսկ. *پُلْتَنْزِي* — մեռաբաւ:

⁴³ թրք. *دَوْصَارِ* — տպած, դաշտ:

⁴⁴ թրք. *دَوْصَنْ* — կաթսա, մեծ աման:

⁴⁵ թրք. *تَبَسَّى* — մեծ ափսե կամ փոքրիկ մատուցարան:

⁴⁶ արար. *لَفَعَلَ* թաղիշ:

31ա ... Բէրամն — Ա. (1) մեծ խաշ ետուր Սր. Յակոբայ, Բ. (2) լաւ ատեհի մոմտան⁴⁷:

32ա ... Եղիայի որդի Մխիթարն — Ա. (1) լաւ զառ շուրջ [առ] ետ Սր. Յակոբայ: Իւր որդի Գէորքն — Երեր մէկ զոխստ⁴⁸ շամտան, Բ. (2) զարմակ ատենի ճռամ:

33ա ... Խութլուրէկն:

... Զուղայեցի Եղնաբաշխ — մէկ զառ փոքր ծածկոց, Ա. (1) լաւ խալի⁴⁹ ուօ Սր. Յակոբայ:

..... Քամբէկէնց Պետրոսն — մէկ շապիք ետուր:

34ա ... Ծկալոնց էճանէսն — մէկ արծաթէ խաշ, քաշն ՀՊ. (74) մսխալ:

35ա ... Քամբէկէնց Յովանէսի տղա Մարգիսն — Ա. (1) սաղաւարդ ետուր:

... Գօղալին հոգուն — մէկ լական ետուր Սր. [Յակոբայ]:

36ա ... Քամբէկէնց Պետրոսն:

36բ ... Ալիբարէնց Մարգարիտ — մին մահրամայ:

37ա ... Սաւոնց Թասալին և իւր հայր Մարտիրոսն — Ա. (1) փոքրիկ պղնձէ իրրուղ ետուր Սր. [Յակոբայ]: Եւ իւր որդի Մուքայէլն — ետուր մէկ իւրը ծածկոց:

38ա ... Պապաճանէնց Էվազն և իւր փեսայ Առաքէլն — Ա. (1) խաշվառ ետ, Ա. (1) յեազլիս:

39ա ... Չօպանի տղա⁵⁰: Ջինամիրէնց Միլզի փեսայ Մարտիրոսն — Ա. (1) Ղֆէ⁵¹ տվօ Սր. Ակորին, Ա. (1) ատլաս⁵² պօղչալ⁵³:

39բ ... Փօթէնց Միբայէլի դուստր Հոռումն — ետուր մէկ Խորհրդատեր Սր. [Յակոբայ]:

40ա ... Բաղդասարի տղա:

41ա ... Աղամն — Ա. (1) փոքրիկ ծառնտիր, Ա. (1) դեղին փէշկիր⁵⁴, Ա. (1) չիթ փէշկիր ետուր Սր. Յակոբին, Ա. (1) խաշ:

42ա ... Փուշկէնց Խաշատուրն և իւր որդի ծանիեարն — Գ. (3) շամդան, Ա. (1) Քարոզգիրք ետուն Սր. Յակոբայ:

43ա ... Խութիեար — Ա. (1) զոխստ զառ բազպան:

44ա ... Խութիեարէնց Մարտիրոսն — Ա. (1) Շարակնոց, Ա. (1) հին Սաղմոսարան, Ա. (1) բաղիայ⁵⁵:

45ա ... Խութիեարէնց Պետրոսն:

45բ ... Անդրէսս վարդապետն — մէկ խալիշայ ետուր Սր. Յակոբայ:

⁴⁷ պրսկ. مومدان — մոմակալ:

⁴⁸ պրսկ. حفت — զույգ:

⁴⁹ պրսկ. وَالى — զորզ:

⁵⁰ չնչված:

⁵¹ արար. قفل — կողոքիք, փականք:

⁵² արար. اطليس — մհարայա փայլուն կերպար:

⁵³ պրսկ. بُخْرَى — կապաց:

⁵⁴ պրսկ. شِكْرَى — զողնոց:

⁵⁵ պրսկ. يادِيَة — մեծ պղնձե կամ կավե չրաման:

46ա ... Օղովրեկէնց Կիրակոսն — Ա. (1) լաւ փարուզ, Բ. (2) նալբարի⁵⁵, Ա. (1) քաշած եաղլուխ, Ա. (1) ապրիշումէ մեծ բան եաղլուխ, Ա. (1) մաղաս, Ա. (1) մեծ կարպետ, մէկ Մաշտոց՝ ԺԵ. (15) մսխալ արծաթէ խաչ վերէն:
... Թամրազն — Բ. (2) շաբիք ետուր:

.... Իւր որդիքն Ազիզքէկն և Գիրակոսն — Բերին մէկ լաւ փառաւոր խաչ տեղի պատմուտանով⁵⁷, մէկ ջուխտ շամատան ջոխտակ մումատեղով, մէկ արծաթէ զանթեղ:

46բ ... Սարգսի որդի էվազն — ետուր մէկ լաւ շուրջառ, մէկ Աւետարան, մէկ զանկակ:

47ա ... Օղովրէկն, իւր կինն — մէկ ջոխտ սուրմայ բազրան:

48ա ... Գաւումն և իւր եղբայր Մարտիրոսն — Ա. (1) զառ շուրջառ ետ, Ա. (1) փոքրիկ խաչ Սր. Յակոբին, Բ. (2) զանգակ, Ա. (1) շապիկ:

49ա ... Տէր Վարդանի տղայ Յովաննէս վարդապետն — մէկ խալիշայ:

50ա ... Զլբացէնց Վարդան:

50բ ... Եաղուափի որդի մահցասի Թեղանն և որդիքն — մէկ ջոխտ լավ արծաթէ բշոց, մէկ լավ սկու եաղլախ՝ զառ, մէկ էլ զառ կոսիուուայ⁵⁸: Եւ իւր դուստր Գարաբն — ետուր մէկ զառքաշ փոքր ծածկոց:

51ա ... Խարմէնց:

52ա ... Զլբացէնց Խաչատուրն — Ա. (1) ֆուանկի զիրք, մէկ թօփ⁵⁹ շարիթ:

53ա ... Զլբացէնց Դաւիթ:

54ա ... Փութէնց:

55ա ... Քաշալին տղայ Աւետիքն:

56ա ... Ճշակ Սիմոնի թոռն:

57ա ... Պուղտիկի տղա Յովաննէսն — Ա. (1) զահ ետուն Սր. Յակոբին:

58ա ... Սահակէնց Մէլիքսէթն և Պօղոսն — Ա. (1) զահ, Ա. (1) սղընձէրութառ, Ա. (1) սպիտակ շարկուլ⁶⁰ եաղլախ ետուն], Գ. (3) սղնձի կանթեղ:

59ա ... Զլբացէնց Մարկոսն:

60ա ... Անիեաթէնց Յակոբն և իւր կին Անախաթունն — ետուր մէկ խալիշայ, մէկ շապիկ, եկեղեցուն էլ շորեղեն այ տվէլ:

61ա ... Քամրազէնց տղայքն — Ա. (1) շուրջառ ետուն Սր. Յակոբին: Եւ Կոստանդի կին Հուսումն — մէկ Աւետարան, մէկ փէշկիր եաղլունուս, զերեղմանումն Շատիրէկէնց կալի կէսն իւրան էր, ետուր զերեղմանի վախուզ:

62ա ... Մուհրիեարէնց:

63ա ... Ահլիմանէնց մահցասի Մարդարայ և իւր որդի Սիմոնն — Ա. (1) մեծ սկիհ ետուն Սր. Յակոբին, Ա. (1) խալիշայ:

56 պրսկ.  — փոքրիկ ափսէ:

57 Հավանաբար՝ պատվանդան:

58 լատ. corporalis — պատարազի ժամանակի օգտագործվող ճերմակ կտավ:

59 թրք.  — կծիկ, զունդ, փաթեթ:

60 պրսկ.  — բառանկունի, հավանաբար նաև շորս անկունները ծաղկազարդ բաշկինակ:

65ա ... Ահլիմանէնց Պետրոսն, Մարտիկն և իւր որդի Նիկօղայոսն — Ա. (1) արծաթէ ազի աման, Ա. (1) լաւ սկիչ, Ա. (1) սպիտակ մուսաշառ⁶¹ շուրջառ, Ա. (1) փոքրիկ խաչ ետ:

66ա ... Մուշագէնց Հայրապետն:

67ա ... Կարապետէնց Գրիգորի տղայ Հայրապետն — մէկ քաթան⁶² պասմայ բեմի ծածկոց:

...Մուքայիլն և իւր դուստր Բանկսօղն — Բ. (2) կարպետ, մէկ խալիչաչ, մէկ ատենի Մաղմոս՝ բասմայ, մէկ Աստուածածնի պատկեր, մէկ խաշվառ: Մուքէլի դուստր Գուլին — իւր հոգոյ բաժինի փողէն՝ մէկ արծաթէ վակազ առաւ: Աստուած ողորմի փրն, ամէն:

68ա ... Վարդաշահէնց Առաքէլն — Ա. (1) լաւ զառաֆ շուրջառ:

69ա ... Վարդաշահէնց Յովանէսն և իւր որդի Յոհանն — Ա. (1) զառ ուրար, Ա. (1) լաւ խաչ, Ա. (1) զառ եաղլուխ՝ սկու, մէկ էլ խաչէ (‘) սեղանի ծածկոց:

69բ ... Վարդաշահէնց Զաքարէն և որդիքն — տվին եկեղեցուն մէկ լաւ զառապ շուրջառ: Եւ միոյս որդի Փօլաթ — մէկ լաւ շուրջառ:

...Խաշատուրի որդի Բամբազն — մէկ լաւ սուրմայ սկու մահրամայ:

70ա ... Արիշէնց Ծատուր — Ա. (1) Աւետարան ետ Ար. Յակոբին:

71ա ... Խուրիեարէնց Ղազար:

71բ ... Ճմլօղէնց Ղազարի որդի Աթանհէն — մէկ լաւ սկիչ մաղղմանով⁶³: Ա. (1) լաւ մասնատուփ, Դ. (4) հատ մանր շամտան, մէկ տախտակէ Աստուածածնի պատկեր, մէկ այլ մէկ երեսէ պատկեր, մէկ լաւ խաշվառ, մէկ սեղանի սպիտակ ուրար շարապով⁶⁴:

72ա ... Ճմլօղ Յոանէսն, իւր որդի Յակոբն — մէկ փոքրիկ արծաթէ Աստուածածնի պատկեր:

73ա ... Ղլիճէնց Յովսէփն:

74ա ... Ղլիճէնց Սահակ:

75ա ... Ղլիճէնց Գրիգոր:

76ա ... Ամիրիսանն — (1) փոքրիկ խաչ, Ա. (1) մեծ զաղղան⁶⁵, Ա. (1) լաւ խարպետ, Ա. (1) խալիչաչ:

77ա ... Վերի Մկրտչին տղայքն՝ Ղօկասն, Գրիգորն:

78ա ... Ահլիմանէնց Մարտիկ:

78բ ... Զօրհապի որդիք՝ Սարումն և Մանուկն — մէկ լավ Հնդստանայ վարաքուր, մէկ արծաթէ աղաւնի⁶⁶:

79ա ... Թանեսն — մին շապիք, մին փոքր խաչ, մէկ շոխտ բեմի զառ փէշկիր, մէկ Մսրալ մոմտան:

... Զանիկէնց [Հայրալետն — մէկ լաւ ֆուանկի] պասմայ բեմի ծածկով[g], Դ. (4) հատ ֆուանկի ծաղիկի], մէկ զառքաշ վակաս]:

⁶¹ արար. — ժուղավոր:

⁶² արար. — վաշշայ դորժվածք:

⁶³ Հին պարսկ, կամ ասոր. ծագում ունեցող բառ—պետք կամ սկավառակ:

⁶⁴ արար. — ծոպ:

⁶⁵ թթթ. — կաթսա:

⁶⁶ բնագրում՝ առամի:

79թ ... Փիրսօլթանէնց Մանուկ — մէկ Յիսուս Որդի, մէկ մահրամայ:

80ա ... Շահանշահէնց Մարգարայ — մէկ խաչ ետ:

80թ ... Զառկարտան Ղազարն:

... Մահրասի էվազն և իւր թոռն էվազն — ետուր մէկ լաւ Հնդստանու բան զալամքար⁶⁷ վարաքուր, եկեղեցուն քուլի⁶⁸ փանջարոց⁶⁹ մաւթուլ⁷⁰ երեր, եկեղեցին էլ խասիրով իւից, փանջարէքն ամէն ճամակալէց⁷¹, մէկ զառ ծածկոց իւր փէշկիրովն:

81ա ... Տէր-Աւետիսէնց Առաքէլն, իւր Հարսն Մարգարիտն — ետուր մէկ սիմ⁷² սեղանի ծածկոց:

81թ ... Տէր-Բագրատն և իւր թոռն Տէր-Արքահամն — ետուր մէկ լաւ ժամարարի զունար⁷³:

82ա ... Պուտաղն, մէկ իրրուղ:

... Օվանէսի որդի Մկրտիչն—մէծ լաւ սկիհ, մաղրզման սուրմայ մահրամովն:

82թ ... Տէր-Իսրայէլն և իւր որդի Յակոբն—տվին մէկ խալիչայ, մէկ լաւ փոքր ձեռաց խաչ, մէկ ժամփի Մեկնիշ, Բ. (2) զառպատ շուրջառ, մէկ դեղին, մէկն կանանչ:

83ա ... Սարկաւագ Ղազարն:

... Բալթաճու որդի Մինասն և որդի Օվանէս — մէկ զառ շուրջառ, մէկ էլ սուրմայի զառպատ շուրջառ, մէկ սկու տակի ձաձկոց:

84ա ... Տէր-Յակոբն:

84թ ... Տէր-Ալիքսան, իւր որդիքն Օվանէս — երեր մէկ խաչ:

85ա ... Շնհաւորն և իւր դուստր Մարիամն — Ա. (1) խաշուվառ:

86ա ... Ախոնց տղայքն՝ Մկրտիչն և Գրիգորն:

87ա ... Բալէն, իւր որդի Առաքէլն — ետուր մէկ ատլաղ ծածկոց սեղանի, մէկ էլ քաթան բեմի ծաձկոց:

88ա ... Տօղմիշ — Բ. (2) շարիք:

88թ ... Պալապան Ավում — մէկ զուխտ մանղլէ⁷⁴ փէշքիր:

89ա ... Սուտարէնց Ամիրօր և իւր որդիի^[ի] Մարգիս — Ա. (1) արծաթէ խաչ, Ա. (1) ապրիշումէ յեաղլուխ ետուր, Ա. (1) փոքր խաչ, մէկ լաւ զառբաֆ, շուրջառ, մէկ բեմի ծածկոց:

90ա ... Քասպարի տղա Արիստակէսն ու Ղարամէնց Մանուկն — Ա. (1) արծաթէ վակաս ետ:

Քարաթ Արիստակէս — Ա. (1) եալաղատ⁷⁵ զառ եաղլուխ, Ա. (1) շամիք, Ա. (1) շամտան:

⁶⁷ պրսկ.  — նկարազարդ տպածու:

⁶⁸ պրաբ.  — ամրադզ, քուոր:

⁶⁹ պրսկ.  — լուսամուս:

⁷⁰ պրաբ.  — ոլորած ձետաղալար:

⁷¹ պրսկ.  — ապակի բառից, լուսամուսները ապակեպատել:

⁷² պրսկ.  — արծաթ բառից, արծաթաթէկ բանվածք:

⁷³ պրաբ.  — զռտի, որ օգտագործում էին քահանաները:

⁷⁴ պրաբ.  — մեծ թաշկինակ, ոմանղլէ փեշկիր» — մեծ թաշկինակից կարած զովեոց:

⁷⁵ բրգ.  — վեալլուն ծալքերով:

- 91ա ... Մուրատիսան — Ա. (1) հավա⁷⁵ բարձ, Բ. (2) լաւ կարպետ: Եւ իր որդի Աղիզրէկն — մէկ քեմիսայ քեմի ծածկոց, մէկ ժամի ուրար, մէկ շուխտ բազրան, մէկ լաւ արծաթէ կանթեղ:
- 92ա ... Մուրատիսանէնց Առաքելն:
- 93ա ... Ղարիպճանի տղա Հայրապետն:
- 94ա ... Էվագիկն:
- 94բ ... Սաւանդուկն — իւր տան առաջևն տնատեղ կէր մինչև ձրակին Արամիին կալն, ետուր Սր. Յակոբայ եկեղեցուն վախուս, մէկ զառ հաղլուխ: Իւր հարսն Խսապետն և Ճանիեարի դուստր Աղամաթն — ջոխտն առին մէկ լաւ զառլու պարանոց. Աստուած իւրանքն օրհնէ:
- 95ա ... Արգանոնց մահցասի Թաթէոսն — Ա. (1) փոքր թաքնամանդ⁷⁷,
- 95բ ... Հայրապետէնց Աղամիր — մէկ լաւ կոսղած Աւետարան.
- ... Ամիրդուկունց Ռվանէսի որդի Յուսէփն — բերաւ Սր. Յակոբին մէկ փառաւոր ըսկի իւր սուրմայ մահրամովն և մաղղմանովն, Բ. (2) ջարմակ մոմտան:
- 96ա ... Սաֆարէնց Մեսրոպն:
- 97ա ... Սաֆարէնց Մկրտիշն — մէկ լաւ քաշած փէշկիր:
- 97բ ... Տրդատէնց Պողոս — Ա. (1) արծաթէ խաչ:
- 98ա ... Քսուրկէնց պառաւն և Միքայէլն — Բ. (2) շապիկ, մէկ զանգակ:
- 98բ ... Երիշանէնց Գուրիազն — մէկ լաւ խաչ իւր պատոնդանովն:
- 99ա ... Ղարամանէնց Գրիգոր — Ա. (1) Բուրսու կարպետ: Եւ Ղարամանի կին Մարինոսն — մէկ լավ խաչվառ: Գրիգորի կին Շահսանամն — մէկ ջոխտ սուրմայ փէշկիր, մէկ սուրմայեախաւ շապիկ, մէկ էլ ջարմակ փէշկիր:
- 100ա ... Արամիէնց Թաթէոսն և իւր որդի Անանիայն — Ա. (1) մեծ խաչ ետ:
- 101ա ... Ղարամանէնց Մանուկն:
- 102ա ... Փօլաթէնց Գրիգոր
- 102բ ... Աթարէկէնց Յովսէփն, Հայր Հայրապետն — Ա. (1) քաշած ծածկոց ետուն:
- ... Ծատուրն — ետուր մէկ լաւ կանթեղի ճառ, մէկ ջառ⁷⁸, մէկ ուրար:
- 103ա ... Մարտիկն:
- 104ա ... Բէհնամէնց Յովսէփն — Ա. (1) սուրմայքաշ զունար ետ եկեղեցւոյն, Ա. (1) խորհրդայտեար:
- 104բ ... Արզունէնց Յովսէփի որդի Ծատուրն — մէկ լաւ արծաթէ կանթեղ, Ա. (1) լաւ պապտոն եազլուխ, Ա. (1) զառպապ ուրար, մէկ լաւ ճառ կանթեղով:
- 105ա ... Աթարէկէնց Պետրոսն — Բ. (2) բատալի⁷⁹, Ա. (1) կարպետ, Ա. (1) պղտիկ շամդան, Բ. (2) մախաղ, Ա. (1) թաւթալ⁸⁰ շապիկ մէկ մեծ խաչկալ, Ա. (1) զառ սկու մահրամայ:
- 106ա ... Միրիշանի տղա Աւետիքն — մէկ լաւ շահ, մէկ [թօ]փ շարիթ:

75 Հավանաբար թրք. (عَجَابٌ) — զգած բուրդ:

77 պրսկ. دهْنَكْلَى — թաղիքի փոքրիկ կապերա:

78 Հավանաբար՝ քահ:

79 թերես պրսկ. բաղիա բառի աղավաղված ձեն է, պղնձեկ կամ կազե շրաման:

80 պրսկ. دَهْنَقْلَى — լավ զտված բամբակյա զործվածք:

107ա ... Վարդագարի տղա Գրիգոր և Սարքիսն և Բագարատն — մէկ սուր-մաքաշ մահրամայ ետ Սր. Յակոբայ:

... Բագարատն — մէկ ջուխտ ծնծղայք, մէկ զանկակ, ատենի Աւետարանի արծաթէ խաչն իւր հաշիան⁸¹ կռատղել ետուր:

108ա ... Շահիկէնց տղայքն — Գ. (3) արծաթէ կանթեղ ԲՃԿ (260) մսխալայ, Բիվն ՌՃՃԳ (1664):

109ա ... Փօլաթէնց էվազն:

110ա ... Վարդան, Վարդանէնց տղա Ղասում — Ա. (1) խաչ ետ Սր. Յակոբայ:

111ա ... Ըորմեցոնց Պետրոսն:

111բ ... Մուրադիանի տղա Ազիզրէկն — Ա. (1) քիմխա ծածկոց, Ա. (1) ժամի ուրար, Ա. (1) ջուխտ բազրան⁸²:

... Արզանունց Ոհանի որդի Աւետիքն — մէկ լաւ եկեղեցոյ դռան զափալղ⁸³ երեր:

112ա ... Արզանոնց Աւետիքն, Մուրատիանն և իւրեանց եղբայր Բաթիկոսն — Գ. (3) զառ եազլուխ, Ա. (1) արծաթէ բուրվառ, Ա. (1) հազորդատուփ, Ա. (1) շիթ վարագուր, Բ. (2) խաչվառի պատկեր, Բ. (2) զառ կարմիր սաղաւարդ, Ա. (1) զառ փէշկիր, Ա. (1) Աւետարան ետ, մէկ սաշաղի⁸⁴:

112բ ... Տօղմիշէնց էվազն:

... Երանի — մէկ ժամի պարանոց, մէկ ջուխտ պազպան, մէկ ուրար:

113ա ... Փիրումն:

113բ ... Ավրամրէկն — Բ. (2) եազլուխ, խաչկալի տախտակն վարաղով⁸⁵ շէնէց: Ավրանրէկի մայր Սօփիկն — Լուսաւորչի խաչկալն, իւր սեղանի վարարուրն, Բ. (2) լաւ կոսղաձ Աւետարան, մէկ ժամարարի զունար, մէկ լաւ սկու ուորմայ մահրամայ. Աստուած ինքն օրհնէ:

114ա ... Շատիրէկէնց Գրիգոր — Գերեզմանուտի ճրակէնց կալին զլխի կալին կէսն իւրան էր, կէսն Քամրագէնց, իւր բռասաթն⁸⁶ ետուր գերեզմանի վախուադ:

... Քաջալ ճանոնց Անտոն — Ա. (1) զառ եազլուխ:

114բ ... Շահլիեարէնց Սատուրն և Մկրտիչն:

115ա ... Թանիսէնց Սատուրն, Ետգարն, Թանէսն — Ա. (1) խաչ, Ա. (1) ծնծղայք, Ա. (1) փէշկիր, Ա. (1) փոքրիկ խաչ, Թանիսն Ա. (1) Մաշտոց ետուն Սր. Յակոբին:

115բ ... Օլքէնց Սարգիսն — մէկ պղըն]ձէ քշոց:

116ա ... Ետգարն և իւր որդի Յակոբն — Ա. (1) Դիզաղա կարպետ ... Յակոբի որդիք Ոհան և Փոանկուն — մէկ լաւ քիմխայ շուրշառ:

... սոցայ մայր Անիկն — Սր. Յակոբի սեղանի խաչկալ պատկերն:

⁸¹ արար. ճաշակ — լուսանցք, շուրջ, եղբ:

⁸² Այս տողը փորձել են չնշել:

⁸³ թրք. چیچالیق — փականք:

⁸⁴ թրք. چیچاچ — կաթսայի (տապակ) եռոտանի պատվանդան:

⁸⁵ արար. چուք — թերթ՝ մետաղյա, հավանաբար արծաթէ:

⁸⁶ արար. շաք — բաժին:

117ա ... Անտոն — Բ. (2) շամտան երեր, (2) շապիք: Կրեանց Առաքէլն — մէկ խաչ, մէկ սկու մահրամայ, մէկ լու զունար, մէկ լաւ ձառ, Գ. (3) փռանկի ծաղիկ: Կրան Գրիգորի կին — երետ մէկ ջուխտ փէշկիք, մին պլեխտուն⁸⁷ պարձ:

117բ ... Առաքէլի դուստր Համազն — մէկ զառու սկու տակի ձանկոց, Բ. (2) ժամի փոքր խաշվառ, մէկ մասնատուպ:

118ա ... Մուղամէնց:

118բ ... Վարդաշահանց Զաքարի որդիք Սարգիսն և Փօլաթն — մէկ զառը շուրջառուն⁸⁸:

119ա ... Շահվելոնց Թաթոսն — մին լաւ կորփիւրայ, մին լաւ դուֆլ⁸⁹:

120ա ... Շահվելոնց Յովանէսն և թոռնունք՝ Եսան, Աւումն — տվին Բ. (2) սկու մահրամայ, մէկ Աւետարան խաշովն, մէկ սկու սուրմայ մահրամայ:

121ա ... Բէկիարէնց Սարգիսն — Ա. (1) պատկեր բերաւ յեկեղեցոյն:

122ա ... Տէր-Բարդուղիմէսոն և իւր թոռն Խաչումն — ետուր մէկ արձաթէ աղաւնի:

123ա ... Աթաճան, իւր տղա երանի — Ա. (1) պատկեր Ետուն Սր. [Յակոբայ]:

124ա ... Երիշանն:

125ա ... Թանիսէնց Գրիգորն — մէկ մեծ պատկեր⁹⁰ ետուր, Ա. (1) Տօնացոյց ետուր:

... Թանիսէնց Մինասն և իւր որդի Սարգիսն — ետուն մէկ լաւ կարմիր քիմխայ շուրջառ:

126ա ... Տէր-Յոհանն և իւր Հայր Գրիգորն — մէկ Յիսուս Որդի, մէկ Զայնաւոր գիրք, մէկ պիրքակալի շապիկ, Բ. (2) զանգակ:

127ա ... Փշրկէնց Աթանեայն — Ա. (1) փոքր կարպետ, Ա. (1) շաբիք:

128ա ... Նասիսէնց Յոհանն — մէկ փոքրիկ արծաթէ խաչ ետուր:

... իւրանց որդիքն և թոռունքն և նասիս և Շիրինն — մէկ զառապատ շուրջառ:

129ա ... Ճարակ մահդասի Հայրապետն — Ա. (1) պատկեր, Ա. (1) զանկեկ, Ա. (1) կանթեղի շահ, (1) Բուրսու կարպետ:

... Ճարակ Յվանէսի որդիք՝ Հայրապետն և իւր եղբայր էվազն — ետուն մէկ լաւ զառապատ շուրջառ:

129բ ... Ջանամիրէնց Ղազարն, Միրզէն — Ա. (1) Գիրք Գանձի ետ Սր. Յակոբայ:

130ա ... Միրզէն — մէկ լաւ զրբին⁹¹ ետուր, Մազրումն⁹² է:

131ա ... Ղափանցի մահդասի Ասլանն:

132ա ... Իլանչի Կիրակոսն:

87 Հավանաբար պրակ. ՇՇԱՅՑ — կլապտուն կամ կլապիտոն բառն է, որ նշանակում է մետաքսե զույնդգույն թելերով բանգածք:

88 Քնչված:

89 արար. ԱԼՅՈՒՅ — կողակիք:

90 Քնչված:

91 Քրաբրին, ոռոգվող Հողամաս:

92 արար. ՃԸՐՅԱ — աղարակ բառից, այսինքն քյուզի հանդես:

133ա ... Գուշտոնց տղայքն՝ Մարգարէն, Կարապետն — մէկ գուկում⁹³, է՛ն (7000) զիան ետուր, Ասլանէնց կալն խառ, վախմ ետուր Գերեզմաներին:

134ա ... Ասլանէնց Աւետիքն — մէկ զառ եազլուխ, և տղայքն ետուն մէկ լավ խաշվառ:

... Հայրապետն — տվին մէկ լաւ ձեռաց խաչ, մէկ խորհրդանոցի ծածկոց:

135ա ... Պատիկ իրիցէնց Անանիայն — Ա. (1) ժամարարի գունար տւաւ:

136ա ... Պտալէնց Յակոբն — Ա. (1) արծաթէ կանթեղ, Լ. (30) մսխալ:

136բ ... Նաւասարդ — մէկ արծաթէ խաչ, մէկ պըղընձէ ձագար, մէկ խալչայ:

137ա ... Շահճանն և իւր որդիքն՝ Պետրոսն և Աթանիայն — Ա. (1) արծաթէ խաչ ետույն] Սր. Յակոբայ]:

138ա ... Եհանէսն — Ա. (1) խաչ, և տղայքն ետուն մէկ շաբիք: Խաչատուրի կին Ղանումն — ետուր մէկ շուփստ միջկիր:

138բ ... Նրումէնց Պետրոսին — Ա. (1) պղնձէ իրրուղ, Ա. (1) շամպան ետուր Սր. Յակ[ոբայ]:

139ա ... Գուլնադարէնց Հայրապետն և իւր որդի Սահակն, ոք մեռաւ, տսկականն ինչ որ ունէր. Ծինին ձոր մէկ բաղչայ, Գլուտումն մէկ պատառ ճրպին⁹⁴, թէ պղինք, թէ շոր տուին եկեղեցուն վախուալ:

140ա ... Կոստանդն:

141ա ... Բուլութի տղա:

142ա ... Փառակեցոնց Փիլիպոսն:

143ա ... Բանահ⁹⁵ Աւետիքն, Պօղոս — Ա. (1) զառ շուրջառ ես:

144ա ... Քոչբէկէնց Սատուր:

145ա ... Քոչբէկէնց Առաքէլն — մէկ լավ սուրմայ ժամարարի գունար երեր:

146ա ... Պօղոսն:

147ա ... Գալուստէնց տղա Պիտիկն:

147բ ... Փանաչուց Կարապետն — ետուր Սր. Յակոբայ Դ. (4) տարայի⁹⁶ շապիք:

... Աւետիքն և իւր կին Խօստով — ետուն մէկ սուրմայ պարանոց՝ ժամարարի, մէկ քաթպի⁹⁷ ծախեցին, եկեղեցուն կտերն խարչեցին:

148ա ... Ճաքէնց Կիրակոսն, զուստրն — Ա. (1) միջկիր ես:

... Ճակէնց Դաւիթ — իտուր Սր. Յակոբին մէկ լաւ Աւետարան իւր խաչովն և մահրամովն:

149ա ... Ամիրեաթէնց Հայրապետն:

150ա ... Քոռ Տէրունէնց տղայքն:

151ա ... Միրումէնց Յուանկուլն — մէկ պղնձէ փուրվառ երեր:

⁹³ Թրք. گوچուկ — պղնձէ սափոր:

⁹⁴ Ճրարրին, ոռոգվող հողամաս:

⁹⁵ արար. Աշ. — Հինարար վարպետ, որմնադիր:

⁹⁶ պրսկ. دار آری — բամբակախառն մետաքսյա գործվածք:

⁹⁷ արար. کاتبی — կարճ թերով հագուստի տեսակ:

152ա ... Փիրշապանի աղջիկ Աղատն — Ա. (1) սարաթ⁹⁸ երեր:

153ա ... Կէսատ Հայրապետն⁹⁹, Միլըլդէն:

154ա ... Փիրութանէնց տղա Մովսէսն — Ա. (1) զուխտ կլէկէ մեծ տտենի շամտան, Ա. (1) զուխտ էլ փոքր շամտան, Ա. (1) կլէկէ փարուղ իւր սալիփչովն, Բ. (2) քահրիրաբէ¹⁰⁰ խաչ՝ արծաթապատ, քաշն ԽԵ. (45) մսխալ, մէկն իւր հայր Դուկասխին յիշատակ, մէկն՝ Խաթունչանին. Աստուած ողորմի:

154բ ... Վարդան — մին սկուշ մալհըմայ, Ա. (1) լաւ սկիհ, իւր մազզմանովն, մէկ էլ շարիբ:

155ա ... Բաշմաղոնց Սարգսի տղա¹⁰¹, Ա. (1) զառ ուրար ետուր Սր. Յակոբին:

... Քլօլիլիրէկէնց Մինասն — մէկ շուրջառ:

156ա ... Քամալ և որդիք՝ Աւաքն, Ոհանն, Կարապետն — տվին մէկ լաւ վարարուր, եկեղեցուն մեծ զուռն շինեցին, Ժ. (10) թուման խարջ: Ոհանի որդի Վալաթն — երեր մէկ լաւ շուրջառ:

157բ ... Տէրունէնց պառաւ Խսապետն — մէկ սաղաւարդ, մէկ շապիկ, Վարարուրի շանկուր շինելին երկաթ էլ դվառ:

158բ ... Աստուած ժողովուրդն շէն պահի, մէկ լաւ զառպապ շուրջառ և մէկ արձաթէ թակ առին, Աստուած իւրանքն օրհնէ:

159ա ... Զինարէնց Մանուկն — Ա. (1) միլաք¹⁰² շուրջառ ետ Սր. Յակոբին, Ա. (1) արծաթէ վակաս, Ա. (1) վարագուր, Բ. (2) շապիք: Եւ իւր որդի Աստոմն, — մին սիպտակ զառ շուրջառ:

... իւրանց Պունեաթն — մէկ զումաշ¹⁰³ շապիկ:

159բ ... Խօլու Կարապետի որդիք՝ Գրիգորն և Ովանէսն — մէկ սղննձի բուրվառ, մէկ ժամարարի փոքր իպրող և լական, մէկ զանգակ, մին արծաթէ կանթեղ:

160ա ... Զինարէնց Պաղտին — Ա. (1) զառ բեմի ծածկոց: Եւ Պաղտու որդի Ովանէս — մէկ լաւ արծաթէ բուրվառ:

161ա ... Շէրումն:

162ա ... Ղարամանէնց Հլդաթին տղա Ներսէսն, Հայրապետն:

163ա ... Դարամանէնց Սարգիսն:

164ա ... Թօփալ Ցովանէսի տղա:

165ա ... Եարոնց Մարութայն:

166ա ... Ասպահան:

166բ ... Աստուած ժողովուրդն օրհնէ, մէկ պասմայ Քաղուածու Շարական առին: Աստուած իւրանքն օրհնէ:

167ա ... Վարոցկէնց Մինասն, Առաքէլն — Ա. (1) յեաղլուխ:

168ա ... Քաղաքաթէնց Դաւիթ:

⁹⁸ պրսկ. Ճճաւ — զամբյուղ:

⁹⁹ քնչված:

¹⁰⁰ պրսկ. Հայք — սաթ

¹⁰¹ քնչված:

¹⁰² արար. ملکی — իշխանական, այստեղ՝ պատվական:

¹⁰³ արար. فداش — ընտիր գործվածք:

169ա ... Նաւասարդէնց Առաքէլի տղա Նաւասարդն:

170ա ... Նաւասարդէնց Մարտիրոսն:

171ա ... Ամիրդալի — Ա. (1) արծաթէ խաչ: Եւ իւր որդի Մարգարէն — մէկ շուխտ ծնծղայք:

172ա ... Մուսէլէնց Մարտիրոսն — Ա. (1) արծաթէ մեռնաշուշ, Ա. (1) պղընծէ բուրգառ, Ա. (1) բեմի կաշէ ծածկոց ետ, Ա. (1) կարպետ:

173ա ... մահղասի Մէլիքշահն և մահղասի Սօլի — Ա. (1) զառ սպիտակ բեմի ծածկոց, Ա. (1) բաժկաման, Բ. (2) արծաթէ քշոց ետուն Սր. Յակոբին: Ա. (1) զարբար շուրջառ Մէլիքշահն չոկ երեք եղբօրէն, Ա. (1) Հարանց վարք, Ա. (1) փոքրիկ արծաթէ խաչ էլ, Ա. (1) շարիք:

173բ ... մահղասի Մէլիքշահայ որդիքն, մահղասի Աւետիքն և Գրիգորն — Ա. (1) քիմխայ շուրջառ, Ա. (1) շալէ շապիկ, Ա. (1) պղնծէ բուրգառ, Ա. (1) արծաթէ ձեռաց խաչ, Ա. (1) ապրիշումէ եաղլուխ, Ա. (1) Յայսմաւոր, Ա. (1) պողայ, մէկ մեծ խխալի, մէկ շարմակ զարբար շուռշառ էլ ետով կարել տվին:

174ա ... Մէլիքշահի թոռն Յովանէս և Մարտիրոս — երեք շափիք տվին: Եւ Ովանէսի որդիք Աթիկն և Եսայն — Գ. (3) փոքր շամատան, մէկ սուրմայ սկու մահրամայ:

175ա ... Մէլիքշահէնց Սատոր:

176ա ... Ալաքընց տղա Մարգարա:

177ա ... Մարթին տղա Հերապետն — Ա. (1) զառ ուրար ետուն Սր. Յակոբին: Եւ իւր կողակից Մարիամն — մէկ մասնատուք ետուր, մէկ զառ մահրամայ:

178ա ... Աղպեղէնց Զանու տղա Ատոմն, Մարտիրոսն:

179ա ... Յեազմուրն:

180ա ... Թասալին — Գ. (3) լաւ ֆուանկի բան մոմտան, Ա. (1) մախաս¹⁰⁴, Ա. (1) գասդա¹⁰⁵ շարիթ, մէկ լաւ խաչ, Գ. (3) չիթ շապիք:

181ա ... պառաւ Սառիկ¹⁰⁶, Տէր Մէրտչէնց Սառիկ — Ա. (1) Աւետարանի Մեկնիլ ետուր Սր. Յակոբին:

181բ ... Ալիրարէնց մահղասի Փիլիպոս և Մէլիքշահանց Մահղասու կին Հուսումն — եկեղեցուն կանանց մէկ դուռն շինեցին:

182ա ... դերգիկ Մէրտչէնց տղայքն՝ Պօղոսն և Պարսամն:

182բ ... Թաթումի որդիքն — բերին մէկ ձնձղայք, մէկ զանկակ:

... Դաշէնց Սիմոնին — բերաւ մին զար բեմի ծածկոց:

183ա ... մահղասի Մուլքումն — Ա. (1) շաբիք, Ա. (1) սկու տակի շոր:

183բ ... Փինայշի Մուրատի որդի Աւետիք — մէկ շիթ շաբիք:

184ա ... Ալիրարէնց մահղասի Փիլիպոսն — մէկ շապիկ:

184բ ... Խօջումի որդիքն, Ղեռնդն — բերաւ Բ. (2) փոքր շամտան:

... Խօջամէնց Պղէքն Պուղտանն և Մաթէսն — կենդանիքն և հանկուցալքն — բերին Սր. Յակոբայ մէկ լաւ ատլաս պասմայ շուրջառ, մէկ ձաձկոց:

185ա ... Փինաշի Մուրատի տղա Գրիգորն և որդիք Յակոբն և Մուրատն — բերին մէկ ծածկոց, մէկ ուրար, մէկ լաւ սուրմայեախալու շապիք:

104 արար. ԾՃԱ — մէրատ, որով մոմի ծայրերն էին կարում:

105 պրակ. ՃՆԱՎ — կապ, փունչ, կծիկ:

106 շնչված:

186ա ... Սէվլար Հայրապետն:

186բ ... Բէրամէնց Պետրոսի որդի Պօղոսն և Յովհանն, ետուն Սր. Յակոբայ մէկ սուրմալու սկու մահրամայ:

... Սէլոնց Աւում և իւր որդիքն — մէկ լաւ բասմայ կաշէ ծածկոց սեղանին:

187ա ... Նաւասարդէնց Յակոբն:

188ա ... Քաղբաթէնց Թաթէոսն և Դաւիթն — Ա. (1) խաչ, Ա. (1) Գանձարան ետուն, Ա. (1) Բուրսու բռն կարպետ:

... Վէվան — մին լաւ սկիհ ետուն Սր. Յակոբայ:

189ա ... Նաւասարդէնց Զաքարիայն:

189բ ... Տէր-Արրահամն և իւր որդիքն Եսայն և Աւումն ետուն Սր. Յակոբայ մէկ լաւ սիւրմայ սկու մահրամայ, մէկ Աստուածածնի պատկեր:

190ա ... Յակոբէնց Ղազարն — Բ. (2) լաւ մոմտան:

190բ ... Ղարաման դուստր Մարեամն — ետուր մէկ Մաշտոց Սր. Յակոբայ:

191ա ... Մինասն:

191բ ... Արզունէնց Յովսէփի որդիք Յակոբն, Ծատուրն և իւրանց եղբայր Հանգուցեալ Ղազարին — տվին յիշատակ նոր եկեղեցուն մէկ տարայի շաբիք, մէկ ջոխտ փեշէկիր, մէկ Բուրսոյ բարց ծածկոց:

192ա ... Միրիբէկն:

192բ ... Պաղտու որդի Նիկողաոսն — ետուր նոր եկեղեցուն մէկ լաւ խորհրդանոցի վարաբուր: Եւ իւր եղբօրակին նօխուտն — ետուր Սր. Յակոբայ մէկ յիորը ծածկոց:

193ա ... Տէր-Արրահամն և իւր եղբայր Մարութէն — Ա. (1) ոսկէտուփ Աւետարան, Ա. (1) Աղօթմատոյց՝ Տօնացոյցն այլ հետն: Ա. (1) Յիսուս Որդի, Ա. (1) փոքրիկ Քարոզգիրք, Ա. (1) Տօնացոյց այլ շոկ ետուն Սր. Յակոբին վախմ, Ա. (1) Զայնքաղ էլ հետն: Տէր-Արրահամի կինն — Ա. (1) կարպետ, Ա. (1) լՇէպ¹⁰⁷, Ա. (1) բարձ, Ա. (1) դօշակ¹⁰⁸ ետ:

193բ ... Թիրէն և իւր որդի Անդրէասն — երեր մէկ սուրմայքաշ սկու մահրամայ:

194ա ... Տէր Արրահամի տղա Պօղոսն:

194բ ... Ներքի Խականդարէնց Պետրոս և Պօղոս — մէկ արձաթէ կանթեղ գ. (3) ձակով:

... Խականդարի կին Մարգարիտն — Բ. (2) լաւ կարմիր փէշէկիր:

195ա ... Խականդարն — Ա. (1) լաւ լական, Ա. (1) լաւ փալրուղ Ա. (1) լաւ խաչ, ՃԺԸ. (118) մսխալ, Ա. (1) Թարվիզոյ բանն հաղլուխ:

... Ասկանդարէնց Թանէսին և իւր որդի Պօղոսին — երես Սր. Յակոբին մէկ ըսկի իւր մազզմանովն և մէկ սուրմայ էլ ըսկուն մահրամայ, շատ լաւն, թիվն ԽՃԺԳ (1664):

195բ ... Խուշուշէնց Միքայէլն — ետուր Բ (2) կարպետ: Եւ իւր դուստր Թանկսօղն — մէկ խալիշայ Սր. Յակոբայ: Եւ իւր որդի Մկրտիչն — ետուր մէկ ստենի Սաղմոսարան¹⁰⁹:

¹⁰⁷ արար. **ՁԱՅՆ** — վերմակ:

¹⁰⁸ պրսկ. **ՁԱՅՆ** — ներքնակ:

¹⁰⁹ շնչված:

196ա ... Ազարիայն — Ա. (1) Ճաշու գիրք, Ա. (1) փոքրիկ Հարցմունք վախմ ետ Սր. Յակոբին:

197ա ... Աթաճանէնց Սահակն — Ա. (1) ատլաս բեմի ծածկոց ետ, Ա. (1) լաւ քաշած շապիք:

... Տէր-Մարդարին կինն — մէկ ջոխու բազրան ետ Սր. Յակոբայ:

198ա ... Փառակացոնց Մուրատն և իւր կողակիցն Գայիանէն — Ա. (1) ձեռաց խաչ: Ա. (1) թագ ետ, Ա. (1) արծաթէ խաչ: Եւ իւր որդի Ղազարն — մէկ լաւ զառաֆ շուշառ: Եւ իւր որդի Մուրատ և Աւոմն — Բ. (2) շարիք ընձաւեցին Սր. Յակոբայ:

199ա ... Գուլփաշէնց Զանի, Տափումն — մէկ բաղչայ ետուր Աստուծածնին, Բ. (2) շապիկ ետուր Սր. Յակոբայ:

199բ ... Առաքել վարդապետն — Բ. (2) փարտակ¹¹⁰, Ա. (1) լաւ զանձարան, Ա. (1) քաթան կորփիւր ետ, Ա. (1) սհաթ¹¹¹:

200բ ... Ժողովրդեան՝ մեծամեծաց և փոքրոնց — մէկ լաւ անօթի հմարամբար¹¹² շինել տվին:

201ա ... Շնչաւորին — Ա. (1) Յայսմաւուրք, Ա. (1) զառ շուրջառ, Ա. (1) մարդարտէ վակաս, Ա. (1) շարիկ ուրարով և բազպանով, Ա. (1) մեծ խաչ վախմ ետուր Սր. Յակոբին:

Դարձեալ Ասլանի կին Շնորհաւորն և իւր դուստր Մարիան — մէկ լաւ տարայի շապիկ, մէկ փէշկիր:

201բ ... // -ի որդիք // և Գրիգորն — մէկ լաւ ձեռնայխաչ:

202ա ... Գուշտինց Մահտափն — Ա. (1) Աւետարան, Ա. (1) Ատենի Մաղմոսարան վախմ ետուր Սր. Յակոբին:

203ա ... Աթաճանէնց Սահակն, Բաղտոնց Գրիգորն, Բարաճանէնց էվազն, Զիլէնց Ասլանն — Ա. (1) արծաթէ վակաս, Ա. (1) արծաթէ թագ վախմ ետուր Սր. Յակոբին:

203բ ... Սողոմօն պարոն-տէրն — Ա. (1) պղնծէ թաս ետուր Սր. Յակոբին:

... Շէկ Ղազարին — Ա. (1) խաչ ետ Սր. Յակոբին վախմ:

204ա ... Տէր-Աւետիսին — Ա. (1) Մաշտոց ետ Սր. Յակոբին:

... Դաստակի Վէլիճան — Ա. (1) լանգարի¹¹³ ետ Սր. Յակոբին:

... Բազրրկաներն¹¹⁴ — Ա. (1) Մարգիս զիրք բերին Սր. Յակոբին:

204բ ... Վանոնց Մարտիրոսին — Ա. (1) լաւ զառ շուրջառ, Ա. (1) փոքրիկ խաչ, Ա. (1) թաս վախմ ետուր Սր. Յակոբին:

... Բարդամն — Ա. (1) Քարոզգիրք ետուր Սր. Յակոբին:

¹¹⁰ պրսկ. օձ շաք — վարագույր:

¹¹¹ արար. س ساعت — ժամացույց:

¹¹² պրսկ. ازیز — պահեստ:

¹¹³ թրք. لئگری — կերակուրի մեծ աման:

¹¹⁴ պրսկ. بزرگان — վաճառական:

А. Д. ПАПАЗЯН

«КЕТУК» МОНАСТЫРЯ св. ИАКОВА СЕЛЕНИЯ АКОРИ

(Резюме)

Поступившая в Матенадаран в 1973 г. и записанная под № 10 573 небольшая, содержащая список пожертвований Акорийскому монастырю св. Иакова рукопись (Кетук) имеет определенную источниковедческую ценность. Список составлен после завершения строительных работ в монастыре и селении Акори в 1663—1671 гг. Рукопись состоит из 204 (формат 13×10 см), листов, каждый из которых относится кциальному члену общины: в нем перечислены его пожертвования монастырю и специально оставлено место для записи его пожертвований в будущем.

Записи, сделанные в вышеупомянутые годы и в последующие десятилетия, содержат важные данные о социально-экономической жизни, численности, торговых связях населения этого целиком погибшего в 1840 г. во время землетрясения древнейшего селения, о его системах водоснабжения и мелиорации. Эти записи дают также представления об экономическом состоянии монастыря, рукописях его библиотеки и других культурных ценностях.

Издаваемый текст представляет интерес и для этнографов и специалистов армянского языка.

A. D. PAPAZIAN

LA „KEUTOUK“¹ DU MONASTÈRE ST. JACQUES
DU VILLAGE AKORI

(Résumé)

Arrivé au Maténadaran en 1973 et inscrit sous le numéro 10 573 le petit manuscrit (Keutouk) contenant la liste des donations faites au monastère St. Jacques d'Akori présente un intérêt déterminé au point de vue de l'étude des sources. La liste a été dressée après la fin des travaux de construction au village d'Akori en 1663—1671. Le manuscrit se compose de 204 feuillets (format 13×10 cm), chacun desquels concerne un membre de la commune: ses donations au monastère y sont inscrites et on a laissé de la place libre pour inscrire ses donations futures.

Les inscriptions faites aux années mentionnées et durant les décennies suivantes contiennent des données importantes se rapportant à la vie sociale et économique, au nombre d'habitants et aux relations com-

¹ Livre des Donations.

merciales de cette localité fort ancienne ayant complètement disparu lors du tremblement de terre en 1840, de ses systèmes de distribution d'eau et de bonification. Ces inscriptions donnent également une idée de la situation économique du monastère, des manuscrits de sa bibliothèque et des autres valeurs culturelles.

Le texte publié est également important pour les ethnographes et les spécialistes de la langue arménienne.

U.S. Subsidies

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 12

1977

Բ. Լ. ԶՈՒԳԱՍՅՈՅՑԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

1971—72 թթ. ձմռան ամիսներին մասնավոր այցով գտնվելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Հնարավորություն ունեցանք ծանոթանալու տարրեր քաղաքների թանգարաններում ու գրադարաններում, ինչպես նաև առանձին անհատների մոտ պահպող հայկական ձեռագրերի: Որոշ անձինք, մեր խնդրանքով, իրենց պատկանող ձեռագրերը նվիրաբերեցին Մաշտոցի անվան Մատենադարանին, որտեղ հազարավոր այլ ձեռագրերի հետ զրանք հավերժ կուտանքեն իրենց նվիրատունների անուններով: Եղան և այնպիսիք, որոնք սիրահոժար թույլատրեցին նկարագրել իրենց մատյանները և ընդօրինակել դրանց հիշատակարանները:

Միացյալ Նահանգների գրադարանների հայկական ձեռագրերի փոքրիկ հավաքածուների մանրամասն նկարագրությունը պատրաստել է Կալիֆորնիայի Համալսարանի Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ պրոֆ. Ավետիս Սահակյանը, որը բարյացակամորեն մեզ տրամադրեց իր նկարագրած 160 ձեռագրերի ցանկը: Սրանից դուրս Կոնգրեսի գրադարանում (Վաշինգտոն) և Ս. Երրորդություն հայկական եկեղեցում (Ֆրեզնո) ծանոթացանք մինչ այդ ոչ մի հայագետի կողմից չնկարագրված մի քանի հայերեն ձեռագրերի, որոնք անգամ գույքագրված ու համարակալված չեին, ուստի նպատակահարմար գտանք զրանք ևս նկարագրել և մյուս մատյանների նկարագրության հետ մեկտեղ հրապարակել: Ֆրեզնոյի ձեռագրերը մեզ հայտնի դարձան այդ քաղաքից մեկնելուց մի քանի ժամ առաջ, ուստի միայն կարողացանք դրանց հիշատակարանների լուսապատճենները վերցնել:

Նկատի ունենալով, որ այս ձեռագրերի նկարագրությունը, մեր տրամադրության տակ եղած ժամանակի սղության պատճառով, կատարում էինք շափագանց շտապ, Հնարավոր է, որ լինեն որոշ վրիպումներ, որոնց Համար խնդրում ենք ներողամիտ լինել:

ԱՄԵՐԻԿԱ կատարած մեր աշխատանքների մասին 1972—74 թթ. մի քանի հոդվածներ ենք տպագրել մեր հանրապետության թերթերում ու հանդեսներում, որտեղ գնահատանքի խոսք ենք ասել մեր միջոցով ձեռագրեր և թանգարանային այլ արժեքներ հայրենիքին նվիրաբերողների հասցեին. օգտվելով այս պատճենությունից մեկ անգամ ևս մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր սիրահոժար մեզ օգնեցին հայտնաբերելու հայկական ձեռագրերի նոր հասցեներ, ինչպես նաև նրանց, ովքեր հայրենասիրաբար իրենց մատյանները նվիրաբերեցին Մատենադարանին:

ԱՄԵՐԻԿԱ կատարած մեր շրջադարձությունը ցույց տվեց, որ դեռևս զիտության անձանոթ հայկական շատ ձեռագրեր կան՝ ցրված աշխարհով մեկ, ուս-

տի անհրաժեշտ է դրանք Հայտնաբերելու նպատակով ծրագրված աշխատանք կատարել:

1

Ա. Ի Ե Տ Ա. Ր Ա. Ն

(Լոս Անջելոս, Արշակ Տիգրանյան, № 2)

Լիսոնկա — Ծիծեռնքոյն

ԳԺԹ — 1270

Գրիչ՝ Բարսեղ: Ստացող՝ Հովհաննես: Թերը՝ 328: Նյուր՝ մագաղաթ: Մեծուրյուն՝ 12,8×17,8: Գրուրյուն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 19: Մանրանկարչուրյուն՝ հորան 8 (Եւսեբիոսի թղթով և Համարարրառ կանոններով): Մատթեոս՝ 10ր, Մարկոս 99ր, Ղուկաս՝ 159ր, Հովհաննես՝ 252ր: Կիսախորան՝ 11ա, 100ա, 160ա, 253ա: Լուսանցաղարդ՝ բուսական: Զարդադիր՝ թոշնագիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմաղարդ: Վիճակ՝ բավարար:

Հիշատակարան

Գրչի

251ր. Ով հրաշափառ և երջանիկ երկնաւոր հրեղէն դասուն... Հեղ յիս՝ յանարժուն ծառայս քո ի Յովիաննես և ի մեղուցեալ զծողս Բարսեղ, զզութեան վտակս և մի՛ տար, Տէր, դատ ընդ ծառայիցս քո, որ ոչ արդարանամք, այդ մաղթանաւք մար քո, Քրիստոս, զմեղաց լուծն մեր խորտակեա՛ և քաւա՞մ, և քեզ փառք յափուեանս յափուենից. ամէն, ամէն:

Ո՞վ ամեներջանիկ և դասք սրբազան քահանայից, որք հանդիպիք աստուածային սուրբ Աւետարանիս, յիշեսչիք [ի] Տէր զարքայն Հայոց զէսսն և զբարեպաշտ թագուհին իւր զինեռան և զորդին իւրեանց Կոստանդին՝ զբարի շառաւիդն ի բարի արմատոց, որոյ Տէր Աստուած տացէ ժամանակս երկայնս և խաղաղականս և զարպացուցէ ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի և պարագայից ամաւք շնորհեսցէ մեզ ընդ երկայն աւուրս. ամէն, ամէն: Եւ որ զմեզ յիշէա աղաւիթիւր, և՝ նա եղիցի յիշեալ:

323ր. Ի յեթն Հարիւրորդի տասներորդի իններորդի (1270) թուարերութեան տումարի Հայոց, յառաջնորդութեան և դիտապետութեան անրիծ հեղինակին և յաջորդութիւն Աթոռոյ սրբոյն Գրիգորի՝ Տեղան Յակոբայ և ի թագաւորութեան Կիղեկեցոց նահանգիս Հերմոյ բարեպաշտի, և ի պարոնութեանն Հայոց Ասոնի՝ որդույ Հերմոյ արքայի, զոր Տէր Աստուած տացէ սոցա ժամանակ խաղաղութեամբ երկայն տմաւք, և յետ յայսմ աշխարհ և ի հանդերձեալ կեանքն զանսպառ բարիսն պարզեսցէ: Նաև երջանիկ ամենալորձնեալ ամուսնոյն Առնենի՝ Կիր Աննայի և դեռարոյս մանկան նոցա Հերմոյ տացէ Ցիսուս Քրիստոս Հոգի հեղութեան և իմաստութեան և երկիղ աստուածապաշտութեան և բազում ժամանակ խաղաղութեան և հանդիստ յափուենական ի յանվախճան կեանսն: || (324ա) Վասն որոյ աղաշեմ զամենեսեան առ հասարակ, եռ նուաստրս Յոհաննես, յետինս յորդիս եկեղեցւոյ, որ ցանկացող եղայ այսմ լուսայեղձ և կենսակիր, քառաշահեան, մշտալոյս բանից Տեղան մերոյ Ցի-

սուսի Քրիստոսի աւետեաց Ամետարանիս, և ստացա զսա բազում աշխատութեամբ ի լուսատրութիւն մանգանց նորածնելոց նոր Սիովնի և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցոյ, ի քժշկութիւն հիւանդաց և ի վանում այսոց շարաց, ի պարծանըս քրիստոնէից և փառը Քրիստոսի Աստծոյ մերոյ, ի յիշատակ հոգոց մերոց և ծնաւղաց և բնաւ զարմից և կենդանեաց և մեռելոց սորա, որ ստացաւ ի յարդար վաստակոց իւրոց՝ ի վայելում անձին իւրոյ և Թուրոսի հանգուցելոյն ի Քրիստոս և յիշատակ Գրիգորի քահանայի և կենակիցն իւրոյ Հովի վիշտակ մէ*, և ամենայն հաւատացելոց ննջեցելոց:

Արդ, ո՞վ սուրբ ճղնազգեայ կրաւ||(324ր)նաւորը և առաքելազումար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ, եղեմատունկ, աստուածառոյզ վտակաց աստուածային աւետարանական բանիցս, յիշեսչիք առաջի զենլոյն Քրիստոսի զստացող սորին զՅովիաննէս՝ ողորմութիւն զտանել յահեղ աւուրն ի մեծի ծագմանն յաներեկ ատենին, մանաւանդ զգծող սորին՝ զԲասիլ քահանայ, որ ի բազում աղաշանաց յանձն էառ զգծել սորին բազում աշխատութեամբ և տկար մարմնով յանխաղաղ նաւահանգիստ՝ այսր և անդր շրջելով յայրս և ի ծէրպս, զոր իմաստուն ընթերցողքդ և հմտական մտառուքդ ճանաշէք զարուեստ և զիմաստութիւն, որ ի սմա զանձեալ կայ, վասն որոյ աղաշեմ զամենեսեան՝ ընդ ստացողիս և զգրիշ յիշեսչիք ի Տէր, ողորմութիւն զտանել ի Քրիստոսէ: Եւ || (325ա) նոյն ինքն հասարակաց պարզմատուն՝ ամենեցուն ողորմեսցի՝ ստացողիս և զրշին և այսմ յիշատակարանի զրողիս ի վայելողացդ. ամէն:

Արդ, զրեցաւ սա ի Լեառնս Կարմիր, մերձ յանառիկ դղեակն Բարձրերդ, ի վանքս Լիսոնկա, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Նշանին, և աւարտումն սորա՝ ի յանապատս Միծոնբոյն եղե... ||:

326ր. Յերեսս անկեալ աղաշեմ զամենեսեան, որք պատահիք սմին, յիշեցէք ի սրբամաքուր աղաւթս ձեր զերիցս երտնեալ ծերունի պատվական քահանայն Յոմոձգեցի, որ զարինակն շնորհեաց, նաև զգրող աւրինակին զԷորստակէս, և Տէրն փառաց ամենեցուն ձեզ և մեզ ողորմեսցի առ հասարակ ի յահեղ հրապարակին, ուր դործք թագաւորեն և սատանայ ամաւթինի:

Հետազայի

ա. 327ա. Նաև զպատճառ եղեալ կազմութեան սորա զքեռ թագաւորին Հայոց Հերմոյ և զորդի աստուածասիրի և բարէպաշտի Կոստանդնեա թագաւորահաւրն զՀոեփսիմի կրաւնաւորն յիշման արժանի արասչիք, և զկազմող սորա զԳրիգոր փակակալ և զեղբայր նորին զՍտեփանոս վանական քահանայք:

բ. 327ա. Զվերբռստին նորոգող սուրբ Աւետարանիս զպատուական քահանայն զՏէր Մարտիրոսն յիշեցէք ի Քրիստոս, ո՞վ մանկունք սուրբ եկեղեցոյ և դասք լուսերամից, զի ետ նորոգել և կազմել զսուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն իւր՝ Զրախիմին և իւր որդոյն՝ Ֆառաշատին և իւր կողակցին, և մաւրն փորոյ՝ Մարիամին, և եղրաւրն իւր՝ Պրահիմին, և ամենայն արեան մերձաւորա || (327բ)ցն իւր՝ Հընոցն և նորոցն, կենդանեաց և հանգու-

* Ցրիվ Հատվածը գրված է այլ ձեռագրով թերված տողի վրա:

ցելոցն, և որ յիշէ և յիշման արժան առնէ՝ յիշեալ լինի փ Քրիստոսէ Աստուծոյ մերոյ իւր միւսանգամ զալըստեանն. ամէն:

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՏէր Մարտիրոսն և զկողայկիցն իւր և ծնաւզսն իւր և լի բերանով Աստուածողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

Եւ դարձեալ յիշեցէք ի յերկնայթոիշ աղաւթս ձեր զկազմող սուրբ Աւետարանիս՝ զկողոյ սուտանուն սարկաւազս, որ տառապեալ եմ և կորեալ և յուժ կոխան եղեալ փորձողին, բայց յուս զՔրիստոս ունիմ և զՏիրամայր սուրբ Աստուածածինն: Կաղմեցօ սուրբ Աւետարանս ի թվին նժէ (1568). ամէն,

գ. 1ա. Սառայ Տեառն՝ մեղսալի Տէր Մովսէս քահանայս թիւյլոյ ՌՄՀ (1821) ամի սեպտեմբերի ժե (15) եկի Մերտին, օթէվանս մեր եղե Ամքէցի Ղազաննի Վարայ. Եան պարոն Մելքոնին, զոր և խնդրեմ ի Տեառնէյտացէ կիւանս երկարս, շէն և պայծառ պահեսցէ. ամէն:

դ. 1ա. Թուին ՌՄՀ (1824) փետրվարին եկի Մերտին Ղազանչի պարոն Մելքոնին տուն, ես՝ Սուրբ Գևանեալայ ըսպասաւոր Մելքիսէք վարդապետս, և վասն իմ մեղացս քաղաքն մահսարայ եղաւ (շրջապատվեց), մնացի. Տէր Աստուած այց արասցէ. ամէն:

Ե. 328ա. Պատճառ գրոյս այս է, որ ես մեղապարտ Տէր Կարապետ եկի ի սուրբ Երոսաղեմայ նիբակութիւն ի թւին ՌՄՀ (1824), ես //:

զ. 3ա. (Գրչափորձ) Հասցէ զիրս Տիարպահիր Հասան փաշի խանն Ղալապիզատա մահտեսի խօճայ պարոն Յակոբին ձեռն ի բարին. ամէն (նույնը՝ 9ա):

Է. 189ա. 1867 Հոկտեմբեր ամսոյ գնեցի զԱւետարանս ի Տիգրանակերտ, յորժամ յուղի էաք գնալ ի Սղերդ՝ ձեռնազրելոյ Հովիւ նոցա զԱլիաս Նիկոմեացին:

Ս. Գաւրեան Սիմեօն Հովիւ աւետարանական հայոց ի Բաղէշ: Ես ծնընդեամբ Սասունցի Փրնկոյի տունէն, Զիրենաց զիւղէն:

2

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Նյու-Յորք, Հ. Փ. Քրաուլ)

ԺԳ—XIII

Գրիշ Վարդերի ընդօրինակած երկաթագիր մեծագիր թղթյա այս մատյանը հնագետ ու պատմաբան, Թուրքիայում Ֆրանսիայի նախկին դեսպան Ժոզիի մոտ տեսել և նկարագրել է Արտ. արք. Սյուրմեյանը (տե՛ս «Մայր ցուցակ Հայերեն ձեռապրաց Եվրոպայի մասնաւոր հաւաքումներու», Ա, 1950, էջ 5—8): Ժ. Պողին մատյանս գնել է 1936 թ. Կ. Պոլսում Ալեանաք անունով մեկից:

1971 թ. ապրիլի 30-ին Ժ. Պողիի ձեռագրերն ու այլ հնություններ աճուրդի հանվեցին Փարիզում, որտեղ և այս ավետարանը ձեռք բերեց նյույորքարնակ պրավաճառ Հ. Փ. Քրաուլը (16 East 45th st., New York):

Պրն. Հ. Փ. Քրաուլը հոժարակամ մեզ ծանոթացրեց ձեռագրին և մեր խնդրանքով արամադրեց մանրանկարների սլայդները:

3

ՄԱՍՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻ

(Նյու-Յորք, Փյուլյեն Հովսեփյան)

ԺԴ—ԺԴ—XIII—XIV

Թեր՝ 1. Նյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ $12 \times 9,5$: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Մանրանկարչուրյուն — Մկրտություն (պահպանված են Հիսուսի և Հովհաննես Մկրտչի գլուխները): Վիճակ՝ եզրերը պատռված, մանրանկարը դունաթափ:

Սնը. Այս պատառիկը 1972 թ. փետրվարի 11-ին Նյու-Յորքում տողերիս գրողի միջոցով ժ. Հովսեփյանը նվիրել է Մաշտոցի անվան Մատենադարանին (Պատառիկ № 1913):

4

ԱԻԵՏԱՐԱՆ

(Ման Ֆրանցիսկո, Ն. Մարտիկյան, № 5)

Եղեգիս

ԶՄԵ—1306

Գրիշ և ծաղկող՝ Սարգիս կր.: Ստացող՝ Դանիել: Թեր՝ 453: Նյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ $24 \times 31,5$: Գրուրյուն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 15: Մանրանկարչուրյուն — Խորան (Համարաբառով՝ կանոն Բ, է-Ը)՝ 137թ, 140թ, Հարություն Ղազարու՝ 138ա, Հարություն Քրիստոսի՝ 351ա, քայլայված տարբեր մանրանկարների մասերից կազմված մի թերթ՝ 139թ, իշեցումն խաչից և Հովհաննես ավետարանից (երկու նկարների տարբեր մասերը իրար են միացված)՝ 352թ, ինքնատիպ լուսանցագարդեր, յուրաքանչյուր ավետարանի զարդագրերը արված են տվյալ ավետարանիցի խորհրդանշանով: Վիճակ՝ վատ, թանաքակեր:

Սնը. Ավետարանից պակասում են բազմաթիվ թերթեր, կազմ և պահպանակներ չունի, թերթահան է: Սրանցելի մանրանկարները վնասված են:

Ե. Լալայանը այս ձեռագրի մասին խոսում է իր «Նախիջևանի գավառուսումնասիրության մեջ (տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք XII, 1905, էջ 171) և բերում է գրչի հիշատակարանի մի փոքրիկ հատվածը, որը և վերահրատարակված է պրոֆ. Լ. Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում», Երևան, 1950, էջ 42:

Այս Ավետարանը Ե. Լալայանը տեսել է վերին Ազուլիսի Ս. Հովհաննու Մկրտչի եկեղեցում, սակայն թյուրիմացարար նշել է որպես մագաղաթյա ձեռագիր: Լալայանը գրում է, որ ձեռագրերը ավետարանիշների պատկերներ ունի, մինչդեռ ներկայումս միայն Հովհաննես ավետարանիցի պատկերի մի մասն է պահպանվել:

Ինչպես տեղեկանում ենք ձեռագրի վերջին կցված հիշատակագրություններից (453ա և 459թ), Ազուլիսի դեպքերից (1918 թ.) հետո այն տարվել է:

թավրիդ և վաճառվել: Հավանաբար հենց այդ ժամանակ էլ Ավետարանը կազմահան է արվել և մեծարվեստ մանրանկարները բարբարոսաբար պատռութել են:

Զեռագրի մի քանի էջերի վրա դրված գրաքննչական պարսկերեն կնքադրոշմբ (1310. ձևակերպ և գաղտնաշխատ թիւ) (թավրիդ), ստուգվեց և քննվեց, 1310=1931 թ.) ենթադրել է տալիս, որ 1931 թ. իրավունք է ձեռք բերվել Ավետարանը Իրանից դուրս տանելու համար:

40-ական թվականներին ձեռագիրը գտնվել է նյույորքաբնակ գորդավաճառ և հնահավաք Պարույրյանի մոտ, որից և ձեռք է բերել ն. Մարտիկյանը:

1972 թ. Հունվարին Սան-Ֆրանցիսկոյում տողերիս գրողը այս ձեռագիրը նվեր ստացավ Մաշտոցի անվան Մատենադարանի համար (№ 10525):

Հիշատակարան

Գրչի

450ա, Աստուածապետականին բոլոր ինքնութիւնքն ի վեր ... || ... (450բ) ... Արդ, այսմ աստուածունակ և քրիստոսազաւր սուրբ Աւետարանիս փափաթելի տեսնշմամբ ցանկացեալ աստուածասէր և ցանկալի այրս Դանիէլ և ի թուականութեան Հայոց ԶԾԵ (1306) ետ գրել զսա և ծաղկեալ ուկեզարդ տնաւրինականաւք ի ձեռն իմոյ մեղսաներկ և անպիտան կրաւնաւորի՝ Սարգսի, ի մայրաքազաքս Եղեգիս, ընդ Հովաննեաւ երից տաղաւարացս՝ Սուրբ Կարողիկիս և Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Նախավիկյախիս, ի յաշխարհակալութեան դան Խարպանտին, զոր ազգն Խսմաէլի սուլտան անուանեն, ի թագաւորութեան Հայոց Հերմով, և յիշխանութեան այսմ նահանկի իշխանաց իշխանի բարեպաշտ և ամենաւրհնեալ նուրբէլին և Յուղտախին՝ որդոց քրիստոսասէր և փառազարդ իշխանաց իշխանի Լիլիկումին՝ որդով մեծին Տարսահին զոր Տէր Յիսուս յերկար ժամանակեալ արասցէ մեզ ընդ երկայն աւուրս, ի հայրապետութեան աստուածապատիւ Տեառն Գրիգորի Անաւազեցով Հայոց կաթողիկոսի, ի վերադիտողութեան տանս Սիսակավ սուրբ և ընտրեալ քաջ Հովաննեաւ սովիեստի Տէր Յովանէսի Աւապէլ արքեպիսկոպոսի, որդոց իշխանաց իշխանի Լիպարտի, յաջորդող և աթոռակալ զկնի Տեառն Ստեփանոսի, զոր տացէ զսա մեզ Տէր ընդ երկայն աւուրս ուղեղ վերակացութեամբ:

Արդ, բարի և աստուածասէր այր Դանիէլ՝ որ|| (451ա)դի Մանուէլի, Հայոց եցեալ և իմացեալ, թէ այսմ կենցազս դիւրաւ սպառելոց է և վաղիւ կործնշելոց և նկատեալ զիմանալի աշխարհն և ցանկացեալ սիրոյն Քրիստոսի, ստացաւ զսա ասպնական և բարեխսաւս իւր և ծնաւղաց իւրոց, հաւր իւրոյ՝ Մանուիէլի և մաւր իւրով տիկնոցն բարի ամուսնով իւրոյ՝ արքատիկնավ և ծնաւղաց իւրոց և քրիստոսատուր զաւակաց իւրոց՝ Մուսէսի, Մանուիէլի և այլոցն, և Հոգևոր որդով ըստ աւազանին Դաւրի Թավրիմեցոյ, որ և զիս յորդորեաց յայս գործս բարի, և հարազատ եղբարց իմոց՝ Պարսամին և այլոցն:

Արդ, ես անարժան ծառայս Աստուծոյ Դանիէլս ի գում անկեալ աղաշեմ զձեզ՝ զկայծակնաճաշակ և զաստուածամաքուր սուրբ քահանայսդ և զայլ ամենայն հաւատացեալսդ, որք ժողովիք առ զուրս Սուրբ Կարողիկէիս, որք ընթեռնուր և աւգուրիք և որք լսէք և ի միտ առնուր, վասն սիրոյն Քրիստոսի, յիշեցէք զիս և զվերագրեալրս ի սմա, և Աստուած զձեզ յիշեցէ յայսմ աշխարհի և ի

Հանդերձեալն յիւրում արքայի յութեան, և դուք և մեք առ հասարակ ի միասին տրնեալ եղիցուք ի շնորհաց Որդոյն Աստուծոյ, զամէնն և զեղիցին աստացեն սուրբք և հրեշտակք, որպէս և նմա փառք յաւիտեանս:

137ր. Զամէնաւրհնեալ այրն Աստուծոյ զ'Իանիկին յիշեցէք ի Քրիստոս և աստուած զձեզ յիշէ:

224ր. Յիշեցէք ի Քրիստոս զ'Իանիկին և զծնաւզս նորա:

354ա. Քրիստոս, յիշեա զ'Իանիկին և զծնոզս նորա:

449ր. Մժշլըմ, լշրւ վրոծոհջ վժթժղոմ (=Սարգիս որիշ յիշեցէք յաղաւթս):

Թէ կարդաս՝ դպիր ես և թէ ոչ՝ մի մեղադրել, պատճառ իմաստից է:

Որ յայս սուրբ Աւետարանէս թուխթ որոշէ վասն կտրելոյ, որ որոշել լիցի և նա ի շնորհաց Հոգոյն Աստուծոյ:

450ա. (Ներքեփ լուսանցքում այլ գրչով լուծված է առաջարկվող գաղտնագիրն և առաջարկված նորը).

Եղբայր սիրո, և խոհեամ ըստ հանձարո, ծանիր փակեալ զիրդ այս թէ՝ զՄարթի զիշէլ յաղաւթս] յիշեցէք:

Ապա թէ այլ գրես համանդամայն զորոյ որ կամիս կամ զառաջին գրերն զրէ՝ կամ զվերջին]: Այս մինն յառջնէն է և մինն ի յետնէն: Եւ զիմս կարդա. թ՛, թ՛, թ՛, է՛, է՛, ո՛, ո՛, ո՛, թ՛, թ՛, է՛, //:

Հետազայի

ա. 452ա. Զվերջին նորոգաւզ այս լուսաւոր մաքրափայլ և մեծապայծառ սուրբ Աւետարանիս, բարեմիտ և զսրասէր և մեծահաւատ առն Ղամբար, որ ետ կազմել զսուրբ Աւետարանս՝ յիշատակ իւրն և իւր ծնաւղացն, հաւրն՝ Խսպահանշին և մաւրն՝ Խոնդկարին և կենակիցն իւր՝ Ովուղանին, պահապան իւրն և իւր զաւակացն, և ետ նորոգել զսայ ի հալալ ընչից իւրոց և բրժիշկ հոգոյ իւրոյ, կցորդ, լոյս և ապաւէն առ Քրիստոս և ճար՝ ճանապարհին վերջին և բանալի՝ դրան արքայութեան և զանձ՝ յերկինս անկողոպտելի և առ Քրիստոս միջնորդ և բարեխաւս իւրն և իւր ծնաւղացն և ամենայն արեան մերձեաւուցն, ամէն:

Դարձեալ աղաչեմ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Զամէնս քահանայ հանդերձ ծնաւղաւըն, ընդ նմին և զԱստուածատուս, որ աւզնական եղէ ի կազմելն սորայ. և որ շատ և որ սակաւ աշխատանք ունին ի յայս սուրբ Աւետարանս, Աստուած միոյն հարիւրապատիկ տացէ այժմ և ի հանդերձելումն. ամէն:

Աղաշեմ զձեզ, ով սուրբ ընթերձողք, յորժամ ընթեռնուք կամ աւրինակէք, յանամքով բռնէք, զի թուխան խիստ բարակ է և բազում աշխատութեամբ կազմ հեղաւ, զի յոյժ հնացեալ էք և ծերացեալ այս սուրբ Աւետարանս: Ի թվականիս Զի՞ (1494) կազմեցաւ:

բ. 452բ. Եւ դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս, ով հարք իմ և եղբայրք, զվերջին զրող սուրբ և կենսատու, ամենափրկիչ Աւետարանիս ընթերձողք,

ԶՍտեփաննոս մեղօք լցեալ
եզ քահանայ անուամբ կոշեալ,
Բայց ի գործոց յոյժ հեռացեալ,
Զելով միայն կեղծաւորեալ,

ի յաշխարհէ ալեաց նմանեալ,
Բազում տեղիք շրջագայեալ,
Յետոյ եկեալ ի յայս բնակեալ,
Որ Ազուլեալ վանք կոչեցեալ,
Որ է Թօմաս սուրբ առաքեալ:

Արդ, ի թվականութեանն Հայոց ՌՄԻ և Բ (1773) եղե նորոգումն սուրբ Աւետարանիս, որ անկեալ է ի ձեռս անօրինաց, որ և եղեն պատշառ սորայ նորոգելոյն Ազուլեցի Օվանէսի որդիք՝ Մկրտիչն, Կարապետն, Զաքարիայն և Յարութին, Աստուած իւրեանց կար և կարողութիւն տացէ, գործոց նոցին բարիազումն տացէ, և իւր ծնողացն և համայն ննջեցելոցն հանգիստ և արքայութիւն պարզեցացէ, և իւրանքն որքան կենդանի են, սուրբ Աւետարանիս զօրութեամբ ամենայն շարեաց և փորձանաց փրկեալ ազատեացէ. և թէ հարցանէք սոցա՝ մականուամբն Շեխինց տղայքն: Եւ յետ նորոգելոյն Դ (4) Ե (5) դարի անցաւ, գրող շի գայր, որ սորա պակասն զրէր և լցուցանէր. յարք եղե մեղաւորիս, սորա պակասն զրեցի խիստ նեղութեամբ, զրա (որովհետեւ) աշքա չէր տեսնիլ, ձեռքս կու դողայր. ժերութեան ժամանակիս կարողութեամբն Աստուածոյ աւարտ հասուցինք: Ով ոք որ ընթեռնուք, զրի խոշորութեան և սղալա նացն ներումն շնորհէք, քանզի կար մեր այս էր:

Արդ, աղաշեմ, զձեզ, ով ընթերձողք սուրբ Աւետարանիս, միով Հայր մերիւ յիշեցէք զվերոյզրեալ նորոգողքն, և զգողն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, և զուք յիշեալ լինիք առաջի Քրիստոսի, ամէն:

Եղե նորոգումն ի հայրապետութեան սուրբ էջմիածնի տեառն Սիմէն կաթողիկոսի և սուրբ ուխտիս առաջնորդ Թօմաս վարդապետի. լիցի երկար կեանս. ամէն:

գ. 453ա. «Արտագրութիւն յիշատակարան»

Ի 1827 ամի Տեառն և ժամանակս խոռվութեանց պատերազմի Ռուսաց և Պարսից, եկին յանկարծ հէնք բարբարոսք յաւանն մեր Ազուլիս, որ առ. զետովն երախայ, և անողորմաբար զգրաւեցին զազս մեր, և աւերեցին ուռնս մեր, ընդ նոյն յափշտակելով և զեկեղեցին, և զսուրբ սքանչելագործ Աւետարանս զայս: Որ և երբեմն ի պիրառէ (") ազատեալ է ի տոհմէն Շխիմանց: Իսկ արդ մեր չորքին եղբարքս Գեորգ, Թիան, Զաքարեայ, և Յովհաննէս Մկրտչին Հյայիսիայանց Վերին Ազուլեցի, վառեալ ի սէր սուրբ հաւատոյ, և աղդի, և եկեղեցւոյ, զնայաք ի զանազան տեղիս դառն աշխատանք կրելով հարց և փորձ արարեալ և ի հրաշագործութենէ նորայ զտեալ՝ և բարբարոսաց տւեալ բազում գանձս՝ յետս դարձուցաք. և մեծաւ հանդիսին հանգուցաք յիշեղեցւոց Սուրբ Յովհաննէս Մկրտչին եկցեայլուայ թաղին:

Եւ արդ յերեսս անկեալ պաղատիմք զմաքրումից ընթերցողաց և չերմեռանդ հանդիպողաց սուրբ ամենափրկիլ ձեռազիր կարմրակազմ Աւետարանիս և նոր Կտակարանիս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յիշեսչիք ի Քրիստոս յոյսս ամենից մաքուր աղօթիւք զծնողսն մեր, զազս, և զընտանիս և զմիզ զկենդանի յիշատակս նոցա, որպէս զի արժան աղօթիւք ձերովք և բարի մաղթանօքն հաշտեցի ընդ նոսա և ընդ մեզ ամենազօր անաշառ դատաւորն ի միւս անդամ զարտեան իւրում, յիշեցէ և զամենայն հաւատացեալս յարքայութեանն երլիկից պարզելով մեզ զիսուտացեալ պարզև միմիթարական ձայնիւ և երանական և կենդանի մնացելոյս օրհնեցէ զերկրաւոր զկենանս՝

ողաճելով ի խաղաղութեան, և յիշողքը յիշեալ լիշիք առաջի Քրիստոսի Աստուածոյ մերոյ ի հանդերձեալ աշխարհի. ամէն: Ի 1848 ամի, ի 25 հոկտեմբերի ամսւայ:

Հայանալու հնիտեայ սոյն յիշատակարանը արտադրւեց* ի 1931 թ. մայիս 2-ին ի Թաւրիզ (Պարսկաստան):

Հ53թ. 1918 թւի Աֆուլիսի կոտորածից թալանին Աֆուլիսն էր և բերում են ծախում Պարսկաստան՝ Թաւրիզում և Խոյում:

1921 թւ. Թաւրիզ. Գարսէվան Սոլոմոնեան, տարագիր Շաղկածորցի: (Նույն էջի վրա դրոշմաթուղթ). «Made in Persia, Աւետարան, № 21»:

5

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան, Արտ. MS № 4)

Երուսաղեմ

• 22—1321

Գրիչ՝ Ներսես արեղա: թեր՝ 562 էջ: Նյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ 12,5×14: Գրություն՝ երկսյուն: Տող՝ 21: Մանրանկարչուրյուն—Կիսախորան՝ յուրաքանչյուր Ավետարանի սկզբում: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ հանդուցագիր: Գույներ՝ սև, երեմն կարմրագեղով: Կազմ՝ դրոշմագարդ կաշեպատահատակ, աստակ՝ մետաքսե գործվածք: Պահպանակ՝ վերջում երկու թերթ թղթէ ձեռագրից (ԺԴ—ԺԴ դարեր): Վիճակ՝ բավարար, միայն կազմի վերեի տէ անկյունը չարգված, կաշին պատոված:

Ծնք. Չեռագիրը թերթակալված չէ. Էջաքանակը՝ ըստ գրադարանի քարտի: Մատթեոսի Ավետարանի սկզբնաէջի վրա՝ կնքաղրոշ «7260»:

Չեռագրին կցված անգլերեն շորս էջանոց մի նամակում, գրված 1891 թ. Հունիսի 22-ին Քլիֆոն Սփրինգսից (Նյու-Յորք), հասցեագրված դր. Հ. Ֆութերին, նամակագիր Մերի Փ. Ռայթը հայտնում է, որ ինքը քննել է միս Բուշի կողմից Հ. Ֆութերին նվիրված ձեռագիրը, և տեղեկություններ է տալիս գրչի, ժամանակի և բովանդակության մասին: Նամակագիրը ըստ երեւյթին, ժանոթ չէ եղել հայկական տոմարին, ուստի և ժամանակի համար նշում է ոչ ուշ քան 14-րդ դար, մինչդեռ հիշատակարանում պարզ գրված է հայոց 92 թվականը (1321):

Հ Ա Յ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ր Ա Ն

Գրչի

Ուսուր... Գրեցաւ լուսապայծառ և սուրբ Աւետարանս այս ձեռամբ մեղապարտ գծողի ներսէսի սուսանուն արեղայի, ի սուրբ քաղաքս Երուսաղեմի, ընդ հովանեու սուրբ տնաւրինականաց Քրիստոսի աստուծոյ մերոյ փրկչի և

* Այս հիշատակարանը իրականում ոչ թե արտագրված է, այլ մեկ առանձին թերթի վրա առագրված և էջված է ձեռագրին:

Սուրբ Հրեշտակապետաց Միքայէլի և Գաբրիէլի և Ռափայէլի, ի թագաւորութեանն հայոց Առնի, որդոյ Աւշին թագաւորի, և ի հայրապետութեան Տեղան Կոստանդի, որ կոչի Գրագիշվիլի, ի յաթոռակալութեանս Երուաղէմի Տէր Վարդիայնի:

Արդ, աղաշեմ զամենեսեան, որ հանդիպիք ի սմա ընթերցման բանի և սղալի՝ նա զուր ուղղեցէք սիրով և մի եպերելի, զի ի վշտալից ժամս գրեցի, յորժամ անաւրէն աղջն Մահմետի յարեան ի վերա երկրին Կիլիկիի և աւար տրարին և բազումք գերի վարեցին և զուրբը եկեղեցիսն վերուստ ի վայր տապալեցին, որ էջմիածին անուն կոչի, և զայլսն:

Դարձեալ աղաշեմ անմեղադիր լինել խոշորութեան, զի կար մեր այս էր, այլ զի ցանկայի սուրբ Աւետարան և վասն չունենորութեան համարձակեցայ զրել զսուրբ Աւետարանս ի վայելումն ինձ և յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց՝ Աստարշահի և Շնոհիորի և մեծ մայրկան իմոյ՝ Մէնտիկնայ և քեռեկանն իմոյ՝ Յովանիսի, որ Կրակի կոչի և մարաքաւր որդոյն իմոյ՝ Կոստանդին արեղայի:

Գրեցաւ ի յնտիր աւրինակէ, որ Զորկի կոչի, ի թուարերութեանս Հայոց 22 (1321), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ...

Հետագայի

ա. (Մատթեոսի Ավետարանի սկզբնաթերթի վրա) Խաչատուր Հ. Մինասեան Հողեցի:

բ. (Ղուկասի Ավետարանի վերջում) Ես // ոս երէցս զնեցի զԱւետարանոյ ի Կիրակոս երիցոյն Կ (60) տայիրի՝ ինձ յիշատակ և ծնոխղացն իմոց:

6

Մ Ա Ն Բ Ո Ւ Ս Մ Ո Ւ Ն Ք

(Նյու-Յորք, Տիրան արքեպս. Ներսոյան)

Ակներ

ԶՀԲ—1329

Գրիշ, ծաղկող, կազմող՝ Կարապետ: քեր՝ 210: Նյուր՝ մագաղաթ: Մեծուրյուն՝ $10 \times 7,2$: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ բոլորդիր: Տող՝ 16: Մանրանկարչուրյուն—ճակատազարդ՝ 1ա, 45ա, 61բ, 93ա, 158բ, 172ա, 191ա: Լուսանցաղարդ՝ բուսական: Զարդագիր՝ թոշնագիր և հանգուցագիր: Կազմ՝ գրոշմաղարդ կաշեպատ տախտակ, աստառ՝ խաչաղարդ գործվածք. խաչերի թերթին՝ ՏՐ ԱԾ ՅՍ ՔՍ: Վիճակ՝ բավարար. վերջին թերթերը չուր տեսած, մասմբ սկացած և որոշ տեղեր անընթեռնի:

Մեր. Զեռագիրս 1972 թ. Հունվարի 21-ին Նյու-Յորքում տողերիս գրողի միջոցով գեր. Տ. արքեպս. Ներսոյանը նվիրեց Մաշտոցի անվան Մատենադարանին (№ 10523):

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

209ա. *Փառք... զրել* (209բ) ցաւ եղանակի աւոր տառս, որ կոչի՝ Մանրուսումն [ի թվին ԶՀԲ] // Յակոբայ, [ի թագաւորութեանս կելոնի, ի Հրեշտակարնակ վանաւորէից, որ կոչի Ակներ, [ձեռամբ] կրկնամեռ անձին Կարապետի] *:

Արդ, որք պատահիքը // կամ աւրինակաւ, լիշտեցէք ի մեղսաքաւիչ աղաւիթս ձեր զեղկելի զրողին, այլ և զծաղկաւդ և զկազմաւդ սորա զիւարապետ // և ծնաւուն մեր, զի խիստ ի կարիս ենք, և Տէրն հասարակաց ձեզ յիշովացդ և մեզ յիշելոցս ողորմեսցի յիւր կրկնակի զալստեան, և նմա փառք: Գրեցաւ տեսարակս յաւրինակէ Գրիգորի, որ մական // || (210ա) [հոգոյ] իմոյ և ծնողացն իմոց] // Մանկուաւակ] // Մամխարունին // եացն ի Քրիստոս և ամենայն ազգականաց] իմոյ: [Աղա] շեմ զամենեսեան [որք հան]դիպիք [սմա]յ, յիշեսչիք ի մաքրավութս ձեր ի Քրիստոս զմեզ. ինքն, որ առատն է ի տուրս բարեաց, մեզ և ձեզ ողորմեսցի յաւուրն մեծ և ահեղ զատաստանին, և նմա փառք յափտեանս. ամեն:

171բ. Զզրողիկս յիշեա Տէր-ողորմեալիւ:

Հետագայի

ա. 210ա. Արդ զնեցի սայ յերուսաղէմ ի թվին Հայոց ՊԺ (1361) ամի // և այժմ է թվիս ՊիԳ (1374) ամին, և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամեն:

բ. 210բ. Նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի, որ զնեցի զգիրքս տեսակս ի վայելումն անձին իմոյ թվին ՊՃՀԶ (1427): Ո՛վ սուրբ դասք լոյց երամից սրբոյ եկեղեցոյ մանկունք, յիշեցէք ի սուրբ յաղաւիթս ձեր զմուրքուր իմ զՄարգարիտն, որ զգիրքս զնեց: Դարձեալ աղաշեմ թողութիւն խնդրէք ծնողաց իւրոց Մամխարունին և հաւր նորա Մկրտչին և զաւակի նորա Մարեմբագին և զեւրխարունին. թողութիւն խնորդեցէք] //:

* Գեր. Տ. արքեպո. Ներսոյանը մեզ հայտնեց, որ ձեռագիրը համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին լուսոնում իր մոտ է եղել և վնասվել է զրից, որի հետեւանքով հիշատակարանի որոշ հատվածներ անընթեռնելի են դարձել, բայց բանի որ ինքը նախագիտ ծանոթ է եղել հիշատակարանին, 209ա էջի լուսանցքում սև թանաքով նշել է թվականը՝ «ԶԾԲ (1309)», վայրը՝ «Ակներ» և դրշի անունը՝ «Կարապետ», ավելացնելով, որ «թրչուելէն առաջ յատակ կը կարդացուեր. Ե. Վ. ՏՏ»:

Մատենադարանի աշխատակից, ձեռագրագետ Օ. Եղանյանը կարողացավ հիշատակարանի վնասված որոշ հատվածներ վերականգնել, որով պարզվեց, որ ձեռագիրը ընդօրինակված է ԶՀԲ (1329 թ.) և ոչ ԶԾԲ (1309) թվականին: Միաժամանակ պետք է ավելացնել, որ 1309 թ. Լևոն թագավոր չենք ունեցել: Հիշատակարանի մեջ զկայակուվածը Լևոն Պ-ն է (1321—1342): Սրա ժամանակ, նույն 1329 թ., Ակներում եղել է Կարապետ անունով մի զրից, որ այս հիշատակարանի ոճով այլ հիշատակարան է թողել իր ընդօրինակած մի Ավետարանում (անշահմար հայերեն ձեռագրերի հիշատակարաններ), կազմեց Հ. Խաչիկյան, 1950, էջ 219):

ՄԱՆՐՈՒԻՄԱՆՔ

(Յրեղնո, Միքայել Փափազյան)

Գրազարկ

ԶՀ9.—1327

Գրիշ՝ Ստեփանոս. Ստացող՝ Վասիլ սարկավագ: Թերը՝ 243: Եյոր՝ մա-
գաղաթ (թուղթ՝ 155, 157—161, 163, 243): Մեծուրյուն՝ 9×12,5: Գրուրյուն՝
միասյուն: Գիր՝ բոլորդիր: Տող՝ 16: Մանրանկարչուրյուն—Ճակատապարդ՝
27ր, 55ր, 76ր, 116ա, 180ա, 196ա, 212ր: Լուսանցազարդ՝ բուսական: Զար-
դագիր՝ թռչնագիր և հանգուցագիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմա-
զարդ: Պահպանակ՝ սկզբում 2 թերթ թռչն (ժէ դ., բոլորդիր, միասյուն, մասն
քարոզի): Վիճակ՝ բավարար, կազմի Բ փեղկի տախտակը կոտրված:

Սնր. Զեռագիրս 1972 թ. հունվարին Յրեղնոյում տողերիս գրողի միջոցով
պրն. Միքայել Փափազյանը նվիրեց Մաշտոցի անվան Մատենադարանին
(№ 10524):

Հ ի շ ա տ ա կ ա ւ ա ն

Գրչի

76ա. Զմեղաւր դատապարտեալ ծառայս Աստուծոյ զՍտեփանոս յեր-
կայն] յիշեցէք աղաւթիր՝ ի մեղաց թողութիւն:

212ա. Զստացաւզ մատենիս՝ զպատուական սարկաւագ Վասիլ և զմեղա-
ւր Հողս՝ Ստեփանոս յերկայն] յիշեսչիք ի մեղաց թողութիւն:

236ա. Փառք... ի թուականին Հայոց ի ԶՀ9 (1327) գրեցաւ եղանակալոր
տառ ի սուրբ և Հոչակաւոր ուխտա Գրազարկ ձեռամք մեղսաթաւալ || (236թ)
և անարհեստ, սուտանուն գրչկայ Ստեփանոս յերկայն] ի թագաւորութեան
Առնի գեռարոյս պատանեկին, զոր Տէր Աստուծու ընդ երկայն աւորս պահես-
ցէ, և ի Հայրապետութեան Տէր Յակոբայ, ի խնդրոյ աստուծազարդ և սրբա-
սէր եպիսկոպոս Տէր Վարդանայ և քուէրորդույն իւրոյ՝ պատուական սարկա-
վագ Վասիլին:

Արդ, աղաշեմ զամենեսեան, որք Հանդիպի]ք սմա ուսմամք կամ աւ-
րինակ դնելով, յիշեսչիք աղաւ || (237) թիւք մեղաց թողութիւն զյառաջասացեալ
սրբասէր եպիսկոպոս Տէր Վարդան և զՎասիլ սարկաւագ և զծնողս նոցին,
նուև զմեղաւր Հողս Ստեփանոս և ծնողսն մեր, և որք յիշերդ զմեղ սրբի
մըտաւր՝ յիշեալ լիշիք և զուր ի նոյն ողորմած Տէրն, որ է աւրհնեալ յափ-
տեանս, ամէն:

Աղաշեմ Ալինել մեղադիր խոշորութեան և սխալանաց, զի կար մեր այս էր:
Բայց գրեցաւ ի ստոյք և յընտիր աւրինակաց, որպէս ահա յայտնի է ստոյք
շիտուղաց:

Հետազայի

Ա. 243ա. Ի թյուարերութիւնս Հայոց ԶՀ9 (1532) վասն քարոզութեան և
ողորմութեան աշխարհիս, դարձեալ նոյնմերի ԺԴ (13) ելաք և ձանտպար:

արարաք բարի երթալու Երուսաղեմէ, և մեր բազկատարած և հառաջմամ [ր] սրտիւ հանապաղ տալով զաստուածային աւրհնութիւն իմ հոգեոր եղբաւըն Տեր Յովանէս աւագ քահանային. ամէն:

թ. 161ա (ԺԹ դ., շեղագիր)

Զեռքս զըն[ալ]՝ դառնայ ի հող,
Գիրըս մընայ՝ յիշատակող:
Կափիրացի Մ. Յովանէսի հրնագէտն է զայս զրող,
Ոտից կոխան ձերց ի հող:
Հայ[ր] մեր որ:

Ծնր. Կից՝ ձեռագրիս համառոտ նկարագրությունը (կատարված Գ. Հովսեփյանի կողմից) և ներսես Ակինյանի հետեւյալ արժեքավոր նամակը՝ հասցեագրված վերջին ստացող Միքայել Փափազյանին.

Վիեննա, 19 յունիս 1934

Մեծապատիւ

սր. Մ. Փափազյան

Հաճութեամբ կարդացի Զեր պատուական զրութիւնը, որ կը հաղորդէր ինձ նորութիւն ձեռագրական աշխարհէ:

Ձեռագրիդ բովանդակութիւնն է Մանրուսմունք, կոչուած նաև Խազտեսոր և Խազգիրը: Կը պարունակէ մեսեղիներ և կցուրդներ, որոնք կ'երգեցուին (նաև այսօր) գիշերային, առաւոտեան, ճաշու և երեկոյեան ժամերգութեան ժամանակ: Պետք է նկատել «Մանրուսմունք» տեսակ մը դասադիրք կամ առաջնորդ, որ նպատակ ունի երաժշտասէրներուն ուղղութիւն ցոյց տալ յիշեալ հատուածներն—որոնք սովորաբար ունի կ'երգեցուէին—ի բերան ուսանելու: Մանրուսմունքներ երեան կու դան ձեռագիրներու մեջ սկսեալ ԺԴ դարու վերջերէն: Ինձի ծանօթ են օրինակներ 1312-էն (գրուած ի Սիս Գրիգոր քահանայէն), 1325-էն (գրուած ի վանս Գալու Գրիգոր Չորովի օրինակէն), 1352-էն, 1353-էն, 1365-էն, 1373-էն ևն: Զեր օրինակին գրիշն Ստեփանոս Երկայն ծանօթ է ուրիշ ձեռագիրներէ ալ: Զարմանքով նկատեցի, որ Զեր օրինակի վրայէն ծագած է Գաղատիոյ Զարխափան վանքի թ. 8 Մանրուսմունքը, գրուած հաւանօրէն ԺԴ դարուն, ուր պահուած են նաև յիշատակարանները ամբողջութեամբ բառ առ բառ (ըստ Աղան վ. Համամճեանի ցուցակագրութեան. անտիպ): Գրազարկի մէջ գրուած ձեռագիրներու շարքին կը զրաւէ Զեր օրինակը յետնագոյն տեղին, գոնէ շատ ժանօթ չեն 1327-էն յետոյ այս վանքին մէջ գրուած ձեռագիրներ:

Կը յուսամ թէ տողերս պիտի գոհացնեն Զեր հարցասիրութիւնը:

Կը շնորհաւորիմ զԶեզ, որ ունիք այսպիսի պատուական Ձեռագիր մը և կը մաղթեմ, որ իբրև մնացորդ նախնեաց պահպանէք խնամով, մինչեւ որ հասնի մեծ Մատենադարան մը, ուր գտնէր պատուաւոր տեղ մը ի վայելս գիտութեան, յատկապէս երաժշտագէտներու:

Ես շափաղանց շնորհակալ եմ Զեր ազնուութեան, որ բարի եղաք ժանութացնել ինձ ձեռագիրս. իցի՛ւ հետեւէին Զեր բարի օրինակին ոչ միայն ուրիշ նման հնութեան սեպհականատէրներ, այլ և մեծ հաւածոյըներու տէրեր...

որոնք կը սիրեն միայն ամբաժածուկ պահել նախնեաց մնացորդները, իրենք չեն օգտուիր և թոյլ ալ շեն տար այլոց օգտուելու: Փորձառութիւնս յայսմ մեծ է դժբախտաբար:

Երախտագէտ զգածումներով և յարդանքներով.

Հ. Ակինեան

8

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

(Ման Ֆրանցիսկո, Ն. Մարտիկյան, № 2)

Չեմնակի վանի (Ղրիմ)

Պիթ—1373

Գրիշ և ծաղկող՝ Քրիստոսատուր: Ստացող՝ Մաղաքիա: Էջ՝ 301: Գրուրյուն՝ երկայուն: Դիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Մանրանկարչություն—Լուսանցաւարդ՝ բուսական: Զարդագիր՝ թոշնագիր: Կազմ՝ դրոշմազարդ կաշի: Վիճակ՝ շավաբար:

Մնք. Զեռագրի 1 և 300 էջերի մրա զրված է զրաքննչական պարսկերեն կնքադրոշմ (տե՛ս № 4 ձեռագրի ծանոթ.):

40-ական թվականներին ձեռագիրը գտնվել է նյույորքարնակ զորդավաճառ և հնահավաք Պարույրյանի մոտ, որից և ձեռք են բերել Մարտիկյանները:

Հավանաբար այս մատյանը պատկանում է 1918 թ. Ազուլիսից թալանված և հետագայում թափրիզում վաճառված ձեռագրերի խմբին (հմմտ. № 4):

Բ Ա Վ Ա Ն Գ Ա Կ Ա Ւ Բ Յ Յ Ա Ւ Ն

Էջ 1—277. Մատեան Ողբերգութեան Գրիգորի Նարեկացւոյ. բան Ա—ՂԶ:

Էջ 277—278. Յիշատակ մատենիս գրութեան:

Էջ 278—299. Վարք որբոյ առնն Աստուծոյ Գրիգորի Նարեկացւոյ:

Հ Ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

Էջ 299. Փառք... || (Էջ 300)... Արդ, եղեւ զրաւ զրչութեանս բստ հոլովման շրջագայութեան ամաց թվակի ազգանազեան ազին արեթական տումարի երկեակ քառից հարիւրոց և տասանց վեցից և թուոց վեցից (1373), յաշխարհն հանաց, որ կոչի Ղեիմ, ի հայրապետութեան Գրիգորի և մերոյ արքալիսկոպոսին Տէր Կիւտեղին, ձեռամբ թարմատար և փցուն զրչի Քրիստոսատուր պիտականուն կրաւնաւորի, ընդ հովանեաւ հոչակաւոր երկնահանգէտ և սուրբ ուխտիս, որ կոչի Քեմնակի վանք, յանուն կենսակիս մաւրն լուսոյ Սուրբ Աստուծածնին և առ հանգստաբան երջանիկ և սուրբ հաւրն մերոյ խաչաշարչար խոտաւարակ մեծ ճգնաւորին Քրիստոսի և ի տիեզերալոյս Աւետիք վարդապետին՝ յոյժ վայելու զուարթատեսիլ և տրտմահալած լետոնային և դաշտային ծովահոյեաց:

Արդ, այսմ հոգէպատում սուրբ կտակիս և աստուածաբանեալ սուրբ մատով (էջ 301) ենի՝ հոգէնորոգ և արտաւարածին, այսահալած և բուժիչ ցաւոց լուսաւորիչ հոգւոց և փարատիչ խաւարային խորհրդոց, խորտակիչ ամբարտաւանութեանց և վարժիչ նուաստախոհութեանց, ցանկացաւղ եղեալ սրբասնեալ և կուսակրան քահանայն Մաղաքիա (քերված և զրված «Յոհանն») և ստացնուզա արդեանց իւրոց՝ ի վայելումն անձին իւրոյ և հրահանգ և վարժիչ հոգւոյն և մտաց և ի յիշատակ ծնաւզաց իւրոց (բաց թողնված տողեր են եղել, որտեղ զրված է հետազայի հիշատակաբան):

Որբ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսչիք ի մաքրամատիայլ յաղաւթս ձեր Մաղաքիա (քերված և զրված «Յոհանն») արեղան՝ զստացաւղ զրոցս և զծնաւզան իւր և զամենայն արեան մերձաւորսն, և զիս զանայիտան զծողակս զՔրիստոսայտուր արեղայն և զիմսն ամենայն: Յիշեսչիք և զշնորհաւղ աւրինակիս զՄարգիս կրաւնաւոր՝ սպասաւոր Սուրբ Նշանին (մեկու կես տող բաց) և զուր յիշեալ յիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

Էջ 3. Զնուաստ հոդս զՔրիստոսատուր կրաւնաւոր և ստացաւղն զՄաղաքիա (քերված) կրաւնաւոր յիշեսչիք ազաւթիւր առ Քրիստոս:

Էջ 71. (Էջի ներքեմ լուսանցքում) Զշեշտերն յաղաւզ եղանակի եղի, որ ոտնաշափն ուղորդ զայ և ի զոյնն, զի լալիք է:

Էջ 122. Զանարժան զձոզս աղաշեմ յիշել ի Տէր:

Էջ 192. Ո՞վ սուրբը Աստուծոյ, որբ աղաւթէք լուսափզ մատենի, զողորմելիս և զանարժան յ Քրիստոսատուր կրաւնաւորս և ստացաւղ սուրբ կտակիս Մաղաքիա կրօնօրն յիշել սչիքյի Քրիստոս:

Հետազայի

Ա. Էջ 299. Արդ, ես խօչայ Փիրումս ստացայ զսուրբ գիրքս, որ կոչի նարեկ ի հալալ արդեանց իմոց առ ի վայելումն որդույն իմոյ Տէր Յոհանին և յիշատակ ի զուռն Թումայի սուրբ առեմելոյն: Մի՛ որ իշխանցէ հանել և կամ վաճառել զսա ի զրանէ սորին: Եւ որբ յանդգնին՝ զբաժակն Յուղայի արքցեն:

Էջ 301. ...Խոչա Փիրումին և Մարիամին և եղբարց իմոց՝ Հախնազարին. Հայրապետին, Թէոդորոսին, Անդրէասին, Ստեփանոսին, Մկրտչին և ամենայն բնտանեաց իմոց:

Եւ յորժամ ստացայ զսա, էք թուական Հայոց ՌՃԻ (1671),

Բ. Էջ 146. (Վերի լուսանցքում) Յայոց թվին ՌՄԻ (1799). Լիժես (ծածկագիր):

շարյուն—նորան՝ 7 (թուղթ եվսերի՝ 2ր, 3ա, Համաբարբառ կանոններ՝ 4ր, 5ա, 6ր, 7ա, 8ա, 9ր, 10ա): Մատթեոս՝ 14ր, Ղուկաս՝ 139ր, Հովհաննես՝ 219ր, Երկույն (կարմիր և կապույտ): Կիսախորան՝ 15ա, 140ա, 220ա: Լուսանցաղարդ՝ բուսական: Զարդագիր՝ թոշնագիր: Կազմ՝ արծաթապատ տախտակ, զրան խաչելություն, Բ փեղկի վրա մի քանի զունավոր քարեր, աստառը՝ շերտավոր գործվածք: Վիճակ՝ բավարար:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Հետազայի

ա. Կազմի վրա, խաչելուրյան ներքեռում՝ Յիշայալայի է ոսկերիչ Յաներին, ՌՄԾԳ (1804):

թ. 14ա. Աստուած լուսաւորի Հօռոմի հոգին մէ զօլաթեմ Ավետարան գին տվեց: Աստուած լուսաւորէ Ղիմարի հոգին]...

գ. 90 թ. 1918 թ. մարտի 7-ին մենք փախանք:

դ. 139ա. Յիշատակ է սուրբ Ավետարանս Յովհաննես և իր եղբայր Համբարձումին, և իր զաւակ Գէորգը յաշխարհ եկաւ 1892 թուին: Աստուած իրայն յարեշատութիւն տացէ և խաղաղ կօնօք պահեսցէ. ամէն:

149ա. (Նույն ձեռքով) իս Գէորգը Յովսէփիենց մնաց անկատար:

289թ. Վայ քեզ, Մինաս, Ռ (1000) բերան:

10

Ա հ ե Տ Ա Բ Ա Ն

(Նյու-Յորք, Արսեն և Արմանդ Փուշմաններ, № 2)

ՊՀ—1421

Գրիշ՝ Բարսեղ: Ստացող՝ Նորշա: Թերը՝ 237: Նյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ 16,5×23,8: Գրուրյուն՝ երկսյուն: Գիր՝ բոլորդիր: Տող՝ 18: Մանրանկարչուրյուն—բոլորէջյան առյուծ՝ 69ա, Մարկոս՝ 69թ, Ղուկաս՝ 112թ: Կնոջ նկար՝ 236ա, Բարսեղ գրչի պատկերը՝ 236թ (մակադրված. «Սուրբ Ստեփանոս, բարեխաւս առ Աստուած վասն անարժան Բարսեղի, զի տաց զմեղացն թողութիւն»): Լուսանցաղարդ՝ բուսական: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմաղարդ: Պահպանակ՝ մագաղաթ, 1 թերթ սկզբում, 2 թերթ վերջում՝ Ժ—ԺԱ. դդ.: Վիճակ՝ բավարար. վերջին թերթերը մաշված: Նախկինում վերանորոգված և թերին լրացված:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրշի

235թ. Փառք... Շնորհիւն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին կառարեցի զսուրբ Աւետարանս Ժ (10) ամով և անսկաղ ձեռամբ իմով՝ Բարսեղի

արուս և անպիտան զրչի, մեղաւոր անձամբ: Արդ, աղաշեմ զամենեսեան՝ սխալանաց անմեղաղիր լինել, վասն զի ատաւապտնաւը և հեծութեամբ զրչի ստոյդ աւրինակէ՝ զցանն և զայլ խորհուրդն ի յալլուստ քերելով:

Արդ, աղաշեմ զամենեսեան զընթերցողսդ, որ ընթեռնոյք և լուսաւորիք կամ որք աւրինակէք զրշութեամբ, ինձ և ծնողաց իմոց՝ Կոստանդին և Մամացանին, ևս նոցա մաւրն՝ Մաղկոցայ, և եղբարց իմ՝ Արքինամա և Կարապետին և Գեղին և քվեր՝ Մատրոտին, և Հայրապետին և Երնեկին, և ծրողիս՝ Քարսեղիս և ամուսնոյ իմոյ: Ով Հայլը իմք, թողութիւն խնդրէք յԱստուծոյ, և նու կարող է ողորմութիւն շնորհել մինչի ձեզ, ամէն, ամէն և ամենայն թամ||... (շար. էջերը թափված):

Սաացողի

237ա. Փառք... որ Հասույց զմեզ ի վերջ տառիս և աստուածաբան սուրբ Աւետարանիս: Արդ, աղաշեմ զամենեսեանքդ, որք Հանդիպիք այսմ բուրաստանիս կամ տեսնելով և կարդալով, կամ աւրինակելով, կամ ||| ով և ի սրանցելացն Քրիստոսի բժշկութիւն և ի հիւանդս և ախտամետս ցուցանելով, յիշեցօիք ի մաքրափայլ յազութս ձեր զստացողս սորա զհայր նորշա և զանդրանիկ զորդին իւր՝ զԶվանն, զսիրեցեալ յԱստուծոյ և յամենայն միահամուն և կեղեցոյ ուխտէս և Հասարակ ժողովրդոցս՝ մեծամեծաց մինչև զփոքունս, և զմեծ եղբայր իւր՝ զԱշխիբէկ, և զհոգեոր մայրն մեր՝ զԹունիայ և զսրբառէք դուստրն քոյրն մեր զԳուլմէլիք և զթոռնելրն՝ Աստուծառու, Խաչառու ||| Վահանիս, Արամէլիք, որ են կենդանին՝ օրհնէ և զհանգուցելոցն՝ ողորմի ||| Ամիրշայ, Սիրանչաւ, Ռոկի, Հոփիլսիմէլ. ըստացաւ և ետ կազմելը Հալալ լրնչից ի յիշատակ իւրեանց Հոգոյն և նո ||| յիշող յիշեալ լիշիք ի միւս անգամ, ամէն: Բվին ՊՀ (1421),

Հետազայի

ա. 236ա. Աստուած վկա, ևս Յովիաննէս անպիտան արեղէս զրեցի: Փառք... ևս Սմեւնս, ևս Աղաջանս, ևս Վրդանեսս, ևս Մարիամս տվինք մեր Հայրենիք վերի ամբարն շափարովն վախսմ ի դուռն Սուրբ Յովաննէս Մկրտչին յիշատակ ծնաւղաց մերոց, Հաւրն մերոյ՝ Փանոսին, Աղաջանին մայրն մեր՝ Թոխինարին, Հասուլին և եղբարց մերոց՝ Մելիքին, Հանգուցեալ առ Քրիստոս Եղիլին, Երբիանոսին, Միրզաջանին և քվերն մեր Հանգուցեալ առ Քրիստոս՝ Չինարին, և Հարսն մեր Հանգուցեալ առ Քրիստոս՝ Գուշինանին, վկայութեամբ Գրիգոր վարդապետին Յաղնեցի: ևս Ամիրդուլի որդի տանուտէր Հայրապետ վկայ, ևս Ասլանի որդի Սարգիս վկայ, ևս Ամիրի որդի Փիրղալամս վկայ: Ով Հակառակ լինի այլոյ վախմի... (անընթեռնելի երկու տող):

բ. 237բ. Այլ մերձեալ աղաշեմք յիշատակել յազօթս զհայր վանացն զմահատեսալն Սուրբ Ստեփանոսին, զհայր Մարգարէն և զանգրանիկ զաւակ երիտասարդն իւր զՍտեփանոս, զզեռարուսիկ ծաղիկն և զեղկելի կազմող՝ զԹօլոս Յաղեցի, զաւելածուս սուրբ Շուշանիս, և յիշողը՝ յիշեալ լիշիք ի միւս անգամ զարուստն. ամէն:

գ. 237բ. ևս մահցասի Պօղոս իմ սրտիւ յաւժարութեամբ ի՛տ (20.000) դա-

Հեկան տվի դուռն սուրբ Յովանէս Մկրտչին վահմու, որ բանացընի, դարենն Բ (1000) դահեկան տայ եկեղեցուն լուսազին։ Որ որ այլես //:

11

Ա Ի Ե Տ Ա Բ Ա Ն

(Վաշինգտոն, Բարեկեն եպս. Վարժապետյան)

Սահմանին

ՊՂ—1441

Գրիշ և ստացող՝ Տերունական։ Մաղկող՝ Հովհաննես։ Թեր՝ 302 (604 էջ)։ Եյուր՝ թուղթ։ Մեծուրյուն՝ 14×17։ Գրուրյուն՝ երկսյուն։ Գիր՝ բոլորգիր։ Տող՝ 19։ Մանրանկարչուրյուն—Համբարձում՝ էջ 465։ Մատթեոս՝ էջ 4, Ղուկաս՝ էջ 286։ Կիսախորան՝ էջ 5, 175, 287։ Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմազարդ։ Վիճակ՝ բավարար։ Աղակասում են Մարկոս և Հովհաննես ավետարանիշների և տերունական նկարները։

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

Էջ 599. Փառք... || (էջ 600)... Արդ, ևս Տերունական արհեղայս, յետինս ի կարգաւորաց, յիշեցի զրան մարգարէին, որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն կամ ընդանի յերուսաղեմ։ Ընդ որս և ես մեծ յուսով և սուրբ սիրով գրեցի զԱւետարանս։ զի թէպէտ չէի լաւագոյն, հմուտ այսմ արհեստի, այլ սէր կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն, ապաւինեցա յամենակարողն Աստուած, Բանն Հաւր և շնորհաւր Սուրբ Հոգոյն կատարեցի և հոռու ծաղկել Յոհաննէս վարդապետի տիրական պատկե|| (էջ 601) բաւր, բոլոր տնաւրինականօք, միանոր աւետարանշօք և զեղեցկատեսիլ խորանօք և դիւրահաեաց ծաղկաւր և դոյներանկ գեղօք, ծերացեալ աշաւր յաշխատեալ և նեղացեալ յոլով և կատարեալ կարողութեամբն Աստուածոյ։ Նոյն և ես՝ Տերունական, ծերացեալ և նեխեալ անձամ[թ], յետինս աշակերտաց նորա, որով վրստահացոյց զիս ի շուր պատկերաց, կատարեցաւ շնորհաւր Սուրբ Հոգոյն դառն և դժնեա ժամանակիս, որով էառ զնամշուլտա Զահանշա ամիրգեն, զերեաց և կոտորեաց ի թվին ՊՂ (1441) ի յերկնայանգետ և զերահովակ] սուրբ ուխտոս Սահմանին, առ ոռան մաւր լուսոյ Աստուածածնիս, կամացկութեամբ եղբարցս ներսէս փիլիսոփաի և այլ միարանիցս։

Արդ, ևս Տերունականս, հողս և մոխիրս, ստացայ զսուրբ օետարանս յիշատակ ինձ՝ հոգոյ [ի]մոյ և ծնողաց իմոց, հօր իմոյ՝ Ետիլին և մօր իմոյ՝ || (էջ 602) Թամրա խաթունին, եղբարց իմոց և քերց և ամենայն յարեան մերծուրաց, որք ի Քրիստոս են հանգուցեալ։ Վասն որոյ յերեսանկեալ աղաշեմ զհամայգումար դասրդ քահանայից, որք օգտիք ի սմանէ և լուսաւորիք սովո, յիշեցէք ի Քրիստոս՝ զիս զբազմամեղս զՏերունական, որ ստացա զստ յիշատակ ինձ ի վայելումն, զի մեծ յուսով ստացա և սիրովն Քրիստոսի գրեցաւ և

ժաղկեցաւ {լ}ով տաժանմամբ, այլ և բարերարն Աստուած տացէ զիւր առաջ ողորմութիւնն մեղ և ձեզ:

Դարձեալ յերես անկեալ աղաշեմ զհանը դիպողք աստուածախաւս բուրաստանիս, զի սահման է զգալի աշացս՝ նաել ի զեղեցիկ իր. լուսաւորի միտքն և իմաստանա, քաղցրանա կամքն և ուրախանայ, առա ախորժի ամենայն զգայ ||(էջ 603)արանքն և տայ ի լեզուն զշահարար սերմն և լսելիս բազմաց և բերէ զպտուղ անուշ և արդիւնարար, այսինքն զբարի յիշումն և զԱստուածողորմայն ի խորոց սրտէ:

Արդ, որք նախք ի ծաղկազարդ և հոգելից զրախտս, յիշեսչիք առ հասարակ զգրեալքս ի սմա ի սուրբ աղաւիթս ձեր, և ձեզ յիշողացդ և մեղ յիշելոցս ողորմի Քրիստոս Աստուած, և նմա փառք յաւիտեանս, ամէն:

Սաղկողի

Էջ 287. ԶՅՈՒԱՆԻՍ մեղապարտ նկարիչ աղաշեմ յիշել ի մեղաց թողութիւն, վասն սիրոյն Քրիստոսի:

Հետազայի

Ա. Էջ 2. Ես Տէր Պետրոս թողի զԱստարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց, (նույն ձեռորով տողամեջ՝ «և կողակցին իմոյ նիկարին») և որդոցն իմոյ՝ Պուկասին, Հայկազին, Գրիգորին, Անտոնին, և զըտերացն իմոց՝ Սառային, Եղիսաբետին, և հարսին իմոյ՝ Սիրայխարունին, Մարիանին, և թոռանց իմոց՝ Պետրոսին, Մէլքոնին, Քասպարին, Անտոնին, և միւս այլ Պետրոսին և դստերաց նորին՝ Մարիանին, Խարուննանին, Յարուալին, Սալվինազին, և այլ ամենայն յարքեանը մերձաւորաց իմոց՝ կենդանեաց և հանգուցելոցն, ամէն:

Այլ ոչ ով զաւի շիլնի ո՛չ իմոց և ո՛չ աւտարաց, և թէ քահանայ լինի ազգի իմոյ՝ պաշտելոյ զսուրբ Աստարանս, և եթէ ոչ, յիշատակ տանն իմոյ մնացէ մինչև ի խորին ծերութիւնն: Աստուած ողորմի Տէր Տէրունականին, որ զրեց զսուրբ Աստարանս և ծախեաց մեղ, ամէն:

Եւ զիս՝ անարժան Մկրտիչս մի բերան յիշեր, զրող յիշատակարանիս:

Բ. Էջ 603. Արդ, աղաշեմք յիշել ի Տէր կրկին ստացող սուրբ Աստարանիս զԱմիրն, որ ստացաւ զսա ի հալալ արդեան իւրոյ՝ յիշատակ հոգոյ և մարմնոյ ի ամենայն արեան մերձաւորաց, զի փափաթէի և առի, կարաւտ էի և տեսի, ծարաւ էի... (շար. Էջ 604, անընթեռնլի):

Գ. Էջ 1. Զայս զըրչայ Աստարանս առի Տէր Մինասեան տապաղ Կարապետեանց // մենէ, որ փըրօթեսթանտ է. ինձ ծախեցին, արժեքը հինգ զուրուցօվ, Շեկոյ անպիտանիս: Վրկայ բանիս սրբազան Յակոբ վարդապետ և Տէր Կարապետ, Տէր Յակոբեան և Առուսեան Յօհաննես. Հազար ութ հարիւր վաթսուն և մէկ, մարտի 25ին. Տիկրանակերտ (ստորագր.) Յակոբ վարդապետ Տիգրանակերտցի (երկու կնքադրոշմ):

Էջ 6. Ընծայի Աստարանս Սուրբ Կիրակոս եկեղեցույն Տիկրանակերտի և Շեկոյ ձայնառը վարժապետէ:

Էջ 174. Ընծայի սուրբ Աստարանս Սուրբ Սարգիս եկեղեցոյ ձայնառը

վարժապետ Շեկոյ դպրէ ի դուռն Սուրբ Կիրակոս եկեղեցոյ. 1881 օգոստոս 15
Տիբրանակերա (նման՝ էջ 283):

12

Ա. Ի Ե Տ Ա. Բ Ա Ն

(Լոս Անչելոս, Արշակ Տիգրանյան, № 3)

Վասպուրական

ԶԺԸ.—1462

Գրիշ՝ Մկրտիչ թհ., Ստացող՝ Հովհաննես կր., Թերը՝ 344. Նյուր՝ թուղթ.
Մեծուրյուն՝ $17,5 \times 25,5$. Գրուրյուն՝ երկայուն։ Գիր՝ բոլորգիր։ Տող՝ 21. Ման-
րանկարչուրյուն—Մննդաբանություն՝ 1թ, Ավետում և Աստվածաշայր Հովսեփ՝
2ա, Մողերի երկրպագությունը՝ 2թ, Քառասունօրյա զալուստ՝ 3ա, Մկրտու-
թյուն՝ 3թ, Պայծառակերպություն՝ 4ա, Հարսանիք Կանայում՝ 4թ, Անդամալու-
ծի բժշկությունը և Ղազարոսի հարությունը՝ 5ա, Մուտք Երուսաղեմ՝ 5թ, Վեր-
նատուն՝ 6ա, Մատնություն՝ 6թ, Խաչելություն և թաղում՝ 7ա, Դժոխքի ավե-
րումը՝ 7թ, Հարություն՝ 8ա, Համբարձում՝ 8թ, Հողեզալուստ՝ 9ա, Ղազարոսը
Արրանամի գոգում և Մեծատունը տապակի մեջ՝ 9թ, Քրիստոսը քառակերպ-
յան աթոռի վրա և Ավետարանի պատվիրատու Հովհաննես կրոնավորը իր
հոր՝ Տեր Մարտիրոսի հետ՝ 10ա: Խորան՝ 10 (թուղթ եվսերի՝ 10թ, 11ա, Հա-
մբարբառ կանոններ՝ 11թ, 12ա, 12թ, 13ա, 13թ, 14ա, 14թ, 15ա): Մարկոս՝
105թ, Ղուկաս՝ 166թ, Հովհաննես և Պրոխորոն՝ 267թ: Կիսախորան՝ 16ա, 106ա,
167ա, 268ա: Լուսանցազարդ՝ բուստական, կենդանական: Զարդարիք՝ թոշնակիր,
Հանգուցազիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, զրոշմազարդ, Պահպանակ՝ մաշտ-
ղաթ, մեկական թերթ սկզբից և վերջից՝ «Պատմութիւն Յովասափի և Բարտ-
ղամու», Ժ—ԺԱ դդ.: Ախճակ՝ բավարար:

Մեր. 1972 հունվարի 8-ին Լոս Անչելոսում տողերիս դրողը այս ձեռագի-
րը նվեր ստացավ Մաշտոցի անվան Մատենադարանի համար (№ 10521):

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

104թ. Քրիստոս Աստուած, քո սուրբ աւետարանշիս բարեխաւութեամբ
ողորմեա ստացողի սուրբ Աւետարանիս՝ Յովաննէս կրաւնաւորին, և ծնաւղացն՝
Մարտիրոս բահանալին, և մօրն || (105ա), և ամենայն արեան մերձաւորացն
իւրոց, և ինձ մեղապարտ գծողիս՝ Մկր[տ]չի, և ծնաւղացն իմոց, և թող զմեղու
մեր ամենացուն, և այնոցիկ, որ ասեն զամէն:

166ա. Զստացող սուրբ Աւետարանիս՝ զՅովհաննէս կրաւնաւորն, որ եռա-
փափագ սիրով ստացաւ զսա՝ զԱւետարանս աստուածախտաւ, ի յիշատակ Հո-
գոյ իւրոյ և ծնաւղաց և ամենայն արեան մերձաւորաց իւրոց:

Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, լիշեցէք զսոսա
անմոռաց յիշմամբ ի սուրբ աղաւթս ձեր և մեղաց թողութիւն խնդրեցէք ի

Քրիստոնէ, և Աստուած, որ առատն է ի տուրս քարեաց, ձեզ և մեզ առ հասարակ ողորմեսցի. ամէն:

341ա. Փառք... || (342ա)... [ե]ւ սա [տե]սեալ զսորայս անձառ փրկարգործոթեան խորհուրդ, ոմն Յովիաննէս կրաւաւոր, զոր ի վաղուց հետ ցանքացաւզ եղեալ աստուածախաւս սուրբ մատենիս, և ետ զրել զսայ, յիշաւակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն՝ Մարտիրոս քահանային և Աղուրին, և ամենայն արեան մերձաւորացն և երախտաւորացն:

Եւ արդ, ես յետինս ի քահանայս և անարժանիս ի մանկունս եկեղեցւոյ՝ Մկրտիչ քահանայ, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական քանէն, որ ասէ. Յոր կոչումն կոչեցար՝ ի նմին կացջիր...

342բ. ...Արդ, զրեցաւ սուրբ Աւետարանս այս ձեռամբ սուտանուն զրշիս՝ Մկրտչի, անիմաստ և անախմար: Եւ իմ անընդունակ զոլով յարուեստ զրշութեան և քազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարդեյին եաց մեզ մարդասէր հոգին, քազում աշխատասիրեալ իմ սմայ, զրեցի անարժան ձեռաւք իմովք լլընտիր և ի ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանաւք և քազում պանդխտութեամբ, նեղեալ յերենի և յաներենոյթ թշնամեաց, ըստ նմանութեան կամ ծովու, որ յալեաց տատանեալ: Իսկ զրեցաւ սուրբ աւետարեր Աւետարանս ի մեծ թուականութեանս Հայոց Զօն (1462) ի կաթողիկո||... (շար. էջերը թափված):

Հետազայի

ա. 1բ. (Նկարի շրջանակի ստորին մասում կապույտ խորրի վրա սպիտակ յրկաթագրով, մասամբ անընթեռնլի) ԶՊ //| Եւ զծնաւզսն իւր յիշեցէք ի քրիստոյս:

բ. 105ա. (Այլ ձեռագրով, բոլորդիր, ժե դար) Յիշեցէք ի Քրիստոս զՊումրի խարուն, զԹուրանդէն և զԱվրան և զԹարսէն և Աստուած ողորմի ասացէք սոցա. ամէն:

գ. 5ա. (Նկարի լուսանցքում) ես Տէր Պիեյտրոս Ռիայլէշեցի, ոյր կողի որդիի Տէր Սարգսյի, որ եկայի զրոկան ժեղովք Սապրոկորու Սուրբ Կարապետին, որ հանդիպայ այս Աւետարանիս թուին ՌՄՄԴ (1805)-ին:

դ. 266բ. Զայս Կարմիր Աւետարանս զնեցի Առաջի Յարուրին վարդապետէն ի Բաղեջ Սիմեօնս Սասունցի Դաւթեան: 1873 թիւ Փրկչի, հոկ. 10:

Գրիչ՝ Ղուկաս. Թերը՝ 474: Նյուր՝ թուղթ. Մեծուրյուն՝ 7,5×9,5: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ բոլորդիր: Տող՝ 17: Մանրանկարչուրյուն—Ճակատագարդ՝ 72ա, 138բ, 175ա, 371բ, 399բ, 433բ: Լուսանցքարդ՝ բուսական: Զարդարդ՝ Ղուկաս:

զագիր՝ թոշնագիր, հանդուցագիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, գրոշմաշարդ: Վիճակ՝ քայլքայված, ցեցակեր, սկզբից, միջից և վերջից ոլակասավոր:

Ծնր. Զեռագիրս 1972 թ. Հունվարին Սան-Ֆրանցիսկոյում տողերիս ընդունակությունը միջոցով ն. Մարտիկյանը նվիրեց Մաշտոցի անվան Մատենագարանին (N 10526):

Հիշատակական լուսական յիշեցեր:

Գրչի

300ր. Զմեղատոր և զանարժան կուկասս յիշեցեր:

14

14

ԵԱՐԱԿՆՈՅՑ

(Ֆրեզնո, Սուրբ Երրորդություն Մայր եկեղեցի, N 4)

ԺԵ—XV

Հիշատակարան չունի:

15

ՅՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՅԻՌԻ ԼՈՒԾՄՈՒԽՆՔ ԳԺՈՒԱՐԻՄԱՅ ԲԱՆԻՑ
Ի ՄԵԿՆՈՒԹԻՒԽՆ ԳՐՈՅՆ ՅՈՅԱՅ

(Ֆրեզնո, Սուրբ Երրորդություն մայր եկեղեցի, N 5)

ԺԵ—XV

Գրիչ՝ Մարգիս:

Հիշատակական լուսական յիշեցեր:

Գրիզոր Տարեացու

/// [Ե] ժողովողն մեկնութեան[ս է] Վանական վարդապետն՝ աշակերտ Մխիրար վարդապետի, որ Գոշ անուանի, և է սա վարդապետն Վարդանայ, և Վարդանն՝ Ներսէսի, և նա՝ Տավայեայ վարդապետին, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն:

[Ա.] բդ, ևս վերջինս ի ծնունդս եկեղեցոյ Գրիզոր մականուն խնդրող բանի, որ ի վաղուց հետէ փափաքէի բոլոր Մեկնութեան Յորայ: Եւ ի թուականութեանս Հայոց ՊԾէ (1408) ամի եկեղալ մեր յերկիրս Քաջրերունի և ձմերեալ ի հրեշտակարնակ վանքս Մեծոփոյ, ի սպասու դամբարանաց վարժապետացն սրբոց: Եւ ընթերցմամբ Հաւաքեցի զդժուարալոյժ բանս Յորայ և զմեկնչաց նորա, այլ և սակաւ ինչ լուծումն Առիստակիսի և Գեղրզեա ի խրատս գրչու-

թեան, ընդ նմին և զքաղուածոյ մեկնութեանն Յովհաննու աւետարանչի, և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղույս ուսումնասէր անձանց՝ ուղղադաւան մտաց [և] ի զլուխս բաժանելով վասն մտաւոր տեսութեան և զարդ ուսման ի պէտս բեմասացութեան և ի խրատս զրուցատրութեան:

Արդ, եթէ գոցի ինչ ի սմա ըստ հաճոյից խնդրողաց՝ Տեառն շնորհ[ք և թէ] ոչ՝ այնպէս շնորհ[ք և պակասն [փոքր] ընկալ անաւթոյս մերոյն[երես] յցի, որ և լուսաւոր վարդապետին մերոյ Յովհանն Որոտնեցոյ ի սմա մասն բարեաց լիշեալ եղիցի: Որ և մ[եզ] յուսողաց և ձեզ յիշողաց ողորմութիւն Տեառն հասարակեցի:

Այլ և աղաչեմ զմտերիմ գաղափարաւզս, զրել զսակ[կ]աւ յիշատակ մեր, և զու[ք] զրեալ լիշիք ի զիրն կենացն յափտեանից. ամէն: Եղիցի, եղիցի:

ԳՐՀԻ

Այլ և կրկին աղաչեմ յիշեցէք ընդ վերոյ ասացեալն զբազմամեզ զրիչս զՍարգիս և զծնողն իմ և խոշորութեան անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր:

16

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

(Նյու-Յորք, Ալիս Գավուքչյան)

ԺԵ—XV

Գրիշ՝ Զաքարիա: Սաղկող՝ Թումայ: Նյուր՝ թուղթ: Մեծություն՝ 21,5×31: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորդիր: Տող՝ 21: Մանրանկարչություն—Քրիստոսը քառակերպյան աթոռի վրա՝ 2ր, Խսահակի զոհաբերությունը՝ 3ա, Ավետում՝ 3ր, Ծնունդ՝ 4ա, Մոգերի երկրպագությունը՝ 4ր, Քառասունօրյա գալուստ՝ 5ա, Կոտորումն մանկանց և Մկրտություն՝ 5ր, Հարսանիք Կանայում՝ 6ա, Նկանակների բաշխումը՝ 6ր, Անդամալույժների բուժումը՝ 7ա, Պայծառակերպություն և Ղաղարոսի հարությունը՝ 7ր, Մուտքը երուսաղեմ՝ 8ա, Ոտնվակ և Մատնություն՝ 8ր, Քրիստոսը Պիղատոսի ատյանում՝ 9ա, Խաչելություն՝ 9ր, Դժոխքի ավերումը և Հարություն՝ 10ա, Համբարձում՝ 10ր, Հոգեգալուստ՝ 11ա, Սարգիս և Թեոդորոս զորավարներ՝ 11ր: Խորան՝ 10 (թուղթ եվսերի առ Կարպիանոս՝ 12ր, 13ա, Համբարբառ կանոններ՝ 13ր, 14ա, 14ր, 15ա, 15ր, 16ա, 16ր, 17ա): Մատթեոս՝ 18ր, Մարկոս՝ 95ր, Ղուկաս՝ 146ր, Հովհաննես և Պրոխորոն՝ 217ր: Կիսախորան՝ 19ա, 96ա, 147ա, 218ա: Կազմ՝ կաշեպատախտակ զրոշմազարդ. Ա փեղկին մետաղյա 5 խաշեր, մեկը կապույտ ակով: Խաշերի վրա՝ «Աղայըքի», «Ալիխան» «Յուխան», «Ֆոանգ[ով]», «Թրկէլդյ» (*): Պահպանակ՝ մագաղաթյա, երկուական թերթ սկզբից և վերջից, մասն Ավետարանի, ժ—ժԱ. ղդ.: Վիճակ՝ բավարար, միայն կողի կաշին պատոված:

Սնը. 1972 թ. Հունվարի 23-ին Նյու-Յորքում տողերիս զրողը այս ձեռագիրը նվեր ստացավ Մաշտոցի անվան Մատենադարանի համար (№ 10522):

Հիշատակարան

Գրչի

285ր. Փառք... որ տրամատեաց զմատունս վերջացեալ տկար ողոյ՝ Զայեռյ սուտանուն կրանաւոր, զրեալ և կարգեալ ըզմառս երախտեաց աստուածագործ սքանչելեացն, զոր ճշմարիտ և աստուածարան միաժին Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս ի վախճան աւուրցս այսոցիկ կատարեաց զնշանս և զարուհատս, որպէս զի որբ ընթերցին, ի միտ առցին, թէ նոյն Տէր է, որ Մովսէսի հրամայեաց||... (շար. էշերը թափված):

Սաղկողի

16ր (Խորանի վերին Հեծանի վրա) Զթումա ծաղկողս յիշեցէք ի Քրիստոս աղաւեմ:

Հետազայի

Ա. 286ա. Ով լուսերամ զասք քահանայից և մանկունք սուրբ եկեղեցոյ, յորժամ հանդիսիք սուրբ Աւետարանիս, ասացէք Աստուած-ողորմի Վարդանին և ծընօղացն՝ Արքեխամուն և Գօղալին, կողակցուն՝ Մարանին, որդոյն՝ Յովանէսին, Յոհանէսին և Մկրտչին, զստերացն՝ Սինուքարին, Մարգարտին, Ալրունին, Հարսներաց՝ Զամանին, Գաֆարին, Հոռոմսիմին, Արքեխամուն, Մանուկին, Մավիխանին. ասացէք Աստուած ողորմի, որ ստացաւ զսուրբ Աւետարան ի հալալ վաստակոց իւրոց, ասացէք Աստուած-ողորմի, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

Արդ, ևս՝ Վարդանի որդի Յովանէս և եղբարն իմ՝ Յոհան և Մկրտիչն զնեցինք զսուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց մերոց՝ յիշատակ հոգոց մերոց և ծընօղաց մերոց՝ Վարդանին և Մարանին, և ծընօղաց նորին՝ Փանոսին և Խոռոմին, և Տէր Յոհան սրբասէր քահանային, որ կամակից եղեւ այս բարի բանին, թվին ՌՃԿԲ (1713):

Բ. 287ա. Փառք... Զվերչին զստացողս սուրբ Աւետարանիս՝ բարեմիտ և հուատարիմ աղա Միհայէլ և կողակիցն իւր Թուրանդէն առին զսուրբ և փրկարժ Աւետարանն հրաշալի և բժշկաբար իւրեանց հոգոյն, յալալ վաստակոց իւրոց, անշինչ յիշատակ իւրեանց հոգոյն և ծնօղացն իւրոց՝ աղա Բաղդասարին, կողակցուն՝ Եղիսաբետին, եղբօրն՝ Յակոբին, բուրոշ՝ Թումարետին և հանդուցելոց նոցին, ամէն:

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք աղա Միհայէլին, կողակցուն՝ Թուրվանդին, Հօրն՝ Տէր Պետրոսին, մօրն՝ Զմրուրին, եղբօրն՝ Յովանային, ամէն. որդոցն՝ Բաղդասարին, կողակցուն՝ կրտեմսիմին, Յարութենին, կողակցուն՝ Եղիսին, Մուրադիսանին, կողակցուն՝ Գարիանին, Գուլամիրին, կողակցուն՝ Զարիֆին || (287ր) Աւետին, կողակցուն... (անվան տեղը բաց), Ասլիխանին և Հանսուցեալ որդոց՝ Թումաշանին, Ասլիխանին, ամէն:

Դարձեալ կրկին անգամ աղաշեմք զսրբութիւնդ ձեր, ով լույսերամ դասք քահանայից և մանգումք սուրբ եկեղեցոյ և առ հասարակ ժողովուրդը, յիշեցէք ի մարրափայլ յաղօթս ձեր, լի տրիւ և բոլոր հաւատով Աստուած-ողորմի ասացէք աղա Բաղդասարին, կողակցուն՝ Եղիսաբետին, որդոյն՝ աղա Միքայէլին, կողակցուն՝ Թուրքանդին, Տէր Պետրոսին, կողակցուն՝ Զմեուրին, որդոյն՝ Յովասափին, Բաղդասարին, Մուրադխանին, Եղիսին, Զարիֆին, Աւետին, Ասլիխանին, Աստուածատուրին, Թումին, Աղուրին, մեծին և փորին, առ հասարակ ամենեցուն. ամէն:

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք յիշատակ զրողաց Հոգոյն, Աստուած ողորմեսցի փոք միւսանգամ զալստեամն և ի յահեղ զատաստանին. ամէն:

Թովին ՌՃԶ (1734)-ին. ամէն:

Գրչափորձ (Հայերեն և Հայտառ թուրքերեն). 1ա, 2ա, 286թ:

17

Մ Ա Շ Ս Ո Յ

(Չիկազո, Օսկան և Լուսին իսպիրյաններ)

ԶՄԳ—1504

Գրիչ՝ Յակոբ Եպս., Մկրտիչ. Ստացող՝ Պօխաճի Ասլան. Թերը՝ 131. Նյուր՝ թուղթ. Մեծուրյուն՝ 18×13,5. Գրուրյուն՝ միասյուն. Տող՝ 15—18. Կազմ՝ կաշեպատ տախտակ, զրոշմազարդ. Պահպանակ՝ մագաղաթ, երկուական թերթ սկզբից և վերջից, Ժ—ԺԱ. դգ., մասն Մատթեոսի Ավետարանի. Վիճակ՝ բավար. պահպանակները վնասված:

Սնը. Զեռագիրս 1971 թ. դեկտեմբերին տողերիս զրողի միջոցով իսպիրյանները նվիրեցին Մաշտոցի անվան Մատենադարանին (№ 10519):

Հիշատական

Գրչի

115ա. Որ ողորմի մեղաւոր Մկրտչիս և ամենայն երախտաւորաց մեր և ծնողացն. ամէն:

130թ. Ով ամենաբարի Տէր Յիսուս, քո կամաւոր խոնարհութեամբդ ողորմեա մեղաւոր և անարժան զրշիս և ամենայն երախտաւորաց մեր և արեան մերձաւորաց մերոց, և թղական կոկողի՝ մահղասի Տէր Ղազարի և արեան մերձաւորացն:

Գրեցաւ ի թվականիս ԶՄԳ (1504), և խոշորութեանս անմեղաղիր լերուք, զի աւորք ձմեռնային էր, բայց վասն թախանձանաց եղբաւը զրեցաւ յայս դժնղակ աւորքս, որ է յունվարի ԺԸ (18), և Քրիստոսի փառք յափառեան:

131ա. Փառք... Գրեցաւ սուրբ Մաշտոցս ձեռամբ Բ (2) զրշաց՝ Յակոբ

եղիսկոպոսի և Մկրտիչ գրչի, ի խնդրոյ վարպետ Ալանին պօյիաձյուն և իւր կենակցին՝ Փաշախարունին և ամենայն զարմիցն և զաւակացն:

Արդ, յերես անկեալ ազաշեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ տասիս, յիշեսցիք ի մաքրափայլ յաղաթս ձեր զստացաւղ սորա՝ զպօտճի Ալանն և զկենակից նորին՝ գՓաշախարունն, և ձեզ յիշողացդ և մեղ առ հասարակ ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր. ամէն:

Հետազայի

ա. 106ր. (Նոտրգիր). Այս գիրս Բալվցոնց մահտեսի Թումանան որդի տիրացու Տօնապետրս 173. (1781) գիրեց, որ (=ով) որ կանգանէ (=կարդանէ)՝ օղորմիս հանէ:

115ա. Բալվցոնց մահտեսի Գեվորգին որդին Օնանի այս սընըն 1729 (1780) Վարդեվառին կիրակէն եղեալ է:

115բ. Գիրս զրեալըն 173. (1781): Գիրըս զրելալ Բալվցոնց մահտեսի Օվակմին թօռըն՝ մահտեսի Թումանանին որդին տիրացու Տօնապետս զրեց: Այս գիրքըս տիրացու Օնանի || (116ա) որդի մահտեսի Գեվորգին է. իւր որդի յօնայնըն եղեր է վառդէվառին բարկէտին [կիրակ]էն: Այս գիրըս եղեալ սընըն 1729 (1780): Այս է սընըն 1729 (1780):

բ. 121ր. (Նոտրգիր, այլ) Յիշատակ այս գիրս տիրացու Թումանանին, տիրացու Մարտիրոսին, տիրացու || (122ա) Գրիգորին, տիրացու Ենօքին, տիրացու Կասպարին, ով որ կարդանը՝ ողորմիս ասէ:

(Ռենոթ-Հարթֆորդ, Քըննեթիքեթ, օր. Ժոզեֆին Պարթ)

Եվանա զյուլ, Կեսարիա

ԱԹ—1560

Գրիշ՝ Հակոբ քհ. Սարգսյան: էջմ' 567: Մանրանկարչություն—«Միջորայի և որոշ շափով գունաթափ»: Վիճակ՝ լավ:

ա. էջ 1—146 Նախերգան և Մեկնութիւն Արիստոտելի Ստորոգութեանցն՝ արարեալ Դաւթի անյաղթ փիթիսոփայի:

բ. էջ 146—252 Յաղագս մեկնութեան Պերի արմենիլասի]:

* Այս ձեռագրի նկարագրությունը, որը կատարել է Տեր Մեսրոպ ծ. վրդ. Մեմերձյանը, և Սմբատ Գունդստաբլի Հիշատակարանի լուսապատճենը մեզ է տրամադրել պրոֆ. Ա. Ռելուզայանը (Նյու Հյուսի): Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, անտիպ ձեռագրացուցակներ № 127:

գ. էջ 253—281 Արխատոտելի իմաստասիրի Յաղագս ամենայն աշխարհի:
դ. էջ 282—321 (Բովանդակությունը նշված չէ Մ. ծ. վրդ. Սևմերճյանի
նկարագրության մեջ):

Ե. էջ 321—462 Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ տսացեալ Վասն բնութեան
մարդոյ:

Չ. էջ 463—552 Գրիգորի Էպիսկոպոսի՝ Եղբօր Բարսղի Տեսութիւնի ի մար-
դոյ կազմութիւն:

Ֆ. էջ 552—560 Հերմա Եռամեծի Առ Ասկղեպիոս (Սահմանք).

Ո. էջ 562—567 (Այլ գրչի կողմից բնդօրինակված Սմբատ թագավորի Հի-
շատակարանը—տե՛ս ստորե):

Հիշատակաւան

Հատված

«...ի քաղաքն Կեսարիայ և ի գիւղն յեւառայ, ընդ հովանեաւ Մըրոյ Կա-
տապետի ... սուրբ վանացն և ձեռամբ հանճարեղագոյն Տէր Յակոբ շնորհալի
քահանացի»:

(562) Յաղագս լիշտակարանին ի վերջ մատենի այնորիկ յորմէ մեր
զգիրքս զայս օրինակեցաք, զոր բարեպաշտ թաքաւորն Սմբատ ոտանաւոր
շափմամբ շարադրեալ էր այսպէս.

Ո՞վ հանճարեղը իմաստ բանիս
Եւ մակացուք լոյս արհեստիս,
Մտադրութեամբ միտ դիք բանիս՝
Անյաղթ գիտուն վարդապետիս,
Որ զընթանուրն առեալ զոյիս,
Դնեալ բաշխեաց մարդկան ազգիս՝
Իրր զընթանուր զկենդանիս,
Բաժանեաց ի ձիս և ի ջորիս,
Զորս հոմանւամբք առնէ տեղիս,
Իսկ բաշխելով զանւանս զոյիս՝
Միաւորէ դարձեալ ի միս:
Եւ յարանւամբք զու նմանիս,
Օրովէս յարի ազգէն արիս,
Կամ ի միոյն նոյնն իսկ առ միս:
Արդ, ո՞նց պատմեմ զոյլ ժն զրանիս,
Երբ կարի խիստ կարճ է տեղիս:
Բայց թէ հազար կարճեալ բանիս,
Հարկն կոշէ զիս այս տեղիս՝
Յիշել զմայրն ամէն զոյիս
Եւ զսլատճառն ծնընդականիս,
Զգոյացութիւնն որով լինիմք
Եւ զոյանամք ի յաշխարիս:
(563) Եւ զիննէքին ընկերք սորին,
Թր սա զլուխ է տասնէկիս,
Զորս անւանեաց Արիստոտէլ

Ստորոգութիւնք տասն սեռիս.
 Եւ զոր զրեաց Արփատոտէլ
 Նամակ և գիր զարմանալիս
 Առ Աղեքանդր իւր աշակերտ
 Տիեզերակալ երեք կուսիս,
 Երբ հեռացեալ էր ի նմանէ
 Առնուլ զշորս կողմն աշխարհիս,
 Զորս ընթանրեաց ի քիչ տեղիս՝
 Զգիտութիւն անձառելիս
 Եւ ժողովեաց ի միասին
 Զիմանալիս և զգալիս,
 Ընթերցիք և զարմացիք,
 Որք ի խնդիք լինիք բանիս,
 Զմակագիք բնութեան ազգիս.
 Գրիգորի Նիւայ վարդապետիս,
 Որ ժողովեալ ի մի տեղիս,
 Յարմարեցի ի պատեհիս՝
 Եւ մեղաւորս և ողբալիս,
 Տրուալ զինորս և եղկելիս,
 Սմբատ անուն իմ հայկազնիս,
 Տէր և պարօն Պապեղօնիս
 Եղբայր Հէրմոյ թագաւորիս
 Եւ սպայապետ հայոց գնդիս:
 Նոյն և շինօղ ի ընէ նորոյ
 Զանառ զղեակն անմարտելիս,
 (564) Որ ըստ իմոյ անւանս եղի
 Սմբատակլայ քաջ ամրոցիս:
 Զորս աղաչեմ զամենեսին,
 Որք ընթերցօղ լինիք զրբիս,
 Խնդրել պայր լոկն ի Քրիստոսէ
 Զթօղութիւն մեղաւորիս,
 Եւ պարզեօղն առատաձիք
 Տրիտոր բարեաց այս է բարիս,
 Ի հայ ազգիս ի թվականիս
 Ի վեցհարիւր իննիսուն երրորդիս (տողամեջ՝
 «693»)

Գրեցի վարար ձեռօքս
 Անլար ըզգիք յիշատակիս:

Եւ աստուծոյ մեծին հզօրին, անմահին, միայն կարողին, ընդհանուր գոյիցս արարողին և յետ ճշմարիտ հայրենի տէր և յետմնաց մնացողին, զի սուս և խաբերայ է ասել այլ ումէք ապրել կամ վայելել և կամ ճոխալ ի վայելլութիւնս աշխարհի, բայց միայն ի նմանէ, այլ մահկանացւածս պարտ է սրմենայնի խոկալ զմեռանիլն ըստ զրոյն և տեկանաւն և գործնականաւն զարդարել զբարս և զմշտենչենաւորին առնակից լինել, որում պարզեռդին փառք յաւիտեանս. ամէն:

Անք, Սմբատ Գունդստարլի այս հիշատակարանը այլ ձեռագրից հատվածարար (տողք՝ 41—48, 49—52 և 59—62) հրատարակել է Դ. Ալիշանը նախ «Սիսուանում» (1885, էջ 71 և 76), այնուհետեւ ամբողջապես՝ «Հայապատումում» (1901, էջ 481—482), իսկ Գ. Հովսեփյանը իր «Յիշատակարանը ձեռագրացում» (1951, էջ 954) բերել է դրա մի այլ տարրերակը, վերցնելով Գրիգոր Նշուացու «Յաղագս բնութեան» և Արիստոտելի «Ստորոգութիմք» աշխատությունները բնդգրկող մի ձեռագիր մատյանից, որը Սմբատ Գունդրստարլի պատվերով ընդօրինակվել է 1239—1244 թթ.:

Հիշատակարանը այստեղ կրկին հրապարակում ենք ամբողջությամբ, որովհետեւ սա ևս մի նոր տարրերակ է և ունի բազմաթիվ տարբնթերցումներ:

19

Ա. Ի Ե Տ Ա. Բ Ա Ն

(Յրեզնո, Սուրբ Երրորդություն Մայր եկեղեցի, № 3)

ՌԻԶ—1577

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

Փառք... Ծնորհիւ Տեսան սկսայ և խնամաւք նորին կատարեցի եռափափաք սիրով հոգi... (Հաջորդ թերթն ընկած) սորին հեք և փանաքս, և տկար անձամք՝ կատարեցի զառածին մեղաւք Տէր Խորիանոս (‘), մեծ Տէր Թումայ, միջնեկ Տէր Թումէն, փոքր Տէր Թումայ, Տէր Դանիէլ, Վարդանէս, Մկրտիչ, Մագլում, Աւանէս, Նաւասարդ, Սարգիսին, Նաւասարդին, Մարիանին, Անրառանին, Եղիսաբերին, Հոռմսիմին, Մարգարիտին, Փանոսին, Սիմէոնին, Մարտիրոսին և ամենայն արին մերձաւորեաց կենդանին այս հնչեցելոց յիշեցէք առ Քրիստոս, և Աստուած զձեղ յիշէ իր միւսանգամ զալըստեան. ամէն:

Յետոյ զրեցօ սակաւ յիշատակարանս. թվին ՌԻԶ (1577) էր. անմեղայդիր լեռուր, զի կար մեր այս է:

Հետազայի

ա. Արդ, վերջին ըստացող սուրբ Աւետարանին հեղահոգի և բարձրմիտ աստուածասէր Մատուրին և ծնողացն իմոց՝ Դանիէլին և մայրն՝ Շահիսրւին և կողակցին՝ Հուրին և եղրօրն իմ՝ Ավատին, կողակցին՝ Հէրիմին, որդին՝ Ալահիվէրտին: Դարձեալ յիշեցէք Մատուրն, որ սուրբ Աւետարանս գերի էր անգեալ ի ձեռն տաճկաց, որ ազատեաց սայ հալալ վաստակօք՝ իւրեանն յիշատակ: Դարձեալ յիշեցէք տանուտէր Մատուրն, կողակցին՝ Հուրին, դուստր Շնաւուրն, որ առ Քրիստոս է հանգուցեալ: Դարձեալ յիշեցէք թշիկելի թոռն

Տէր Կարապետ, որդի՝ Դանել, Դափին, Սարգիսն, յիշեցէք Ավագ, կողակցին՝ Հերիք, որդի՝ Ալահիկերտին:

Դարձեալ յիշեցէք բարեմիտ Ծատուրն, որ ետ նորոգէլ սուրբ Աւետարանս, անարժան և սուտանուն Բարսեղ իրիցոյ, և յուսուցիչ իմ Սարգիս քահանայն, որք ողորմին ասէք, ամէն: Թվին ՌՃՀԶ (1727) նորոգեցաւ ի գուղ, որ կոչի Պարսումեցիք: Ով որ ծախի կամ կրաւի սուրբ Աւետարանս ԳՃԺԸ (318) Հայրապետաց նզովեալ լիի, Ռւդայի մասնակից իլի:

Ո՞վ եխրայրք, Սարու Մուտափիայ վաշէն, որ Դանճալ առաւ թվին ՌՃՀԶ (1724) էր:

Բ. (Շեղագիր) Ո՞վ եղբայրք, երէք թուխտ կարթաչ այս կօղմից, թիւն կու իմանաք. որ է թիւն 1026 թիւն (1577), նօրօգեալ է 1196 թիւն (1747):

20

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Եյու-Յորք, Արսեն և Արմանդ Փուշմաններ, № 1)

Խնդրակատար Ա. Աստուածածնի վանք

ԹԼԳ—1584

Գրիչ՝ Հովհաննես վրդ., Ներսես արեղա: Ստացող՝ Տէր Արքահամ: Թերը՝ 285: Եյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ 13×18: Գրուրյուն՝ երկայուն: Գիր՝ բոլոր զիր: Տող՝ 21: Մանրանկարչություն—Խորան՝ 10 (Եվսեբիոսի թղթով և Համարաբառ կանոններով): Մատթեոս՝ 6թ, Մարկոս՝ 86թ, Ղուկաս՝ 140թ, Հովհաննես և Պրոխորոն՝ 223թ: Կիսախորան՝ 7ա, 87ա, 141ա, 224ա: Լուսանցաղարդ՝ բուսական: Զարդագիր՝ թոշնագիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, զրոշմազարդ, աստառը՝ անզարդ գործվածք: Պահպանակ՝ սկզբում և վերջում մեկական թերթ շգրված անմշակ մազաղաթ: Վիճակ՝ բավարար:

Հ Ի Ղ Ա Մ Ա Լ Ա Ր Ա Ց Յ

Գրչի

Փառք... Արդ, կատարեցաւ աստվածախաւս և տիեզերաքարոզ Աւետարանս ի խնդրոյ պատուական և հաւատարիմ կրօնաւորին Տէր Արքահամուն՝ յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Թումաջանին և մօրն՝ թեզիչանին, եղբօրն՝ Սահակին և կողակցին՝ Զանազանին և որդոց նորին՝ Տէր Յակոբին, Վարդանին, Արսէնին, Նուրիջանին, Միրզաջանին և այլ եղբարցն՝ Մելիքսէրին, Սարխոնին, և զհօրեղբաւր որդիքն՝ զՏէր Յովանէս և զՏէր Մովսէսն, և զջոջ մամն իւր՝ զՏալիքէն, և այլ ամենայն արեան մերձաւորաց՝ կենդաննեաց և հանգուցելոց. ամէն:

Եւ արդ, ես ունայնս ի բարեաց գործոց, որ անուամբ եմ և էթ և ոչ արդեամբ տէր ձայնիւ բարձրացեալ երէց գոլով և հոգով կովով յացեալ և մտաւք մոլար, ըստ իմում տկարութեանս գրեցի զսուրբ Աւետարանս ի վանքու որ կոչի Խնդրակատար, ընդ հովաննեաւ Սուրբ Աստուածածնին և այլ ամենան սրբոցն:

Եւ արդ, յայսրան և յայսպիսի բարեվայելուզ և մեծափառ սրբոց զումար՝ բարեխօս աշխարհի և ապաւէն ապաստանի և քաւութիւն մեղուցելոց, զոր դիմեալ մեծաւ յուսով բարի արմատոյ շառաւիզն կատարեալն հաւատով և գործովք բարեաց զՏէր Արքահամն կրաւնաւորն, որ ստացաւ զսուրբ Աւետարանն ի հալալ արդեանց իւր՝ յիշատակ իւր և ծնաւղացն իւրոց, հաւըն՝ Թումաշանին և մօրն՝ Բէզիշանին, և եղրօրն՝ Սահակին, և կողակցին՝ Զանազանին և որդոց նոցին՝ Տէր Յակոբին, Վարդանին, Արսէնին, Խուրիչանին, Միրզաշանին, և այլ եղրարցն՝ Մելիսերին, Սարխոշին, և հաւեղրօր որդոց՝ Տէր Յովանիսին և Տէր Մովսէսին, և զոշ մամուն՝ Տալիքին, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց, զոր Տէր մեր Յիսուս Քրիստոս ողորմեացի նոցա և թողութիւն շնորհեցէ մեղացն նոցա և արժանի արացէ արքայութեան իւրոյ. ամէն:

Արդ, զրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց Ռէֆ (1584) ձեռամբ մեղաւոր Յովաննէս նորաբոյս վարդապետի, որ յայսմ ամի եառ զզաւաղանն շնորհալի և զիս՝ զանարժանս և զմեղաւոր անպիտանս, ունայնս ի բարեաց և փարթամս ի շարեաց զներսէս արեղայս, որ միայն զանունս ունիմ և ոչ զործու: Եւ որք կարդայք կամ արինակէք, լի բերանով Աստուած-ողորմի ասացէք ինձ Յովիաննէս վարդապետի և ծնողաց իմոց, Հօրն՝ Մարտիրոսին և մօրն՝ Շահրստանին, և եղրարցն՝ Արքահամուն և Խալիֆին, և քուէրցն և զամենայն արեան մերձաւորս, և զիս անարժանս զներսէս՝ մօրաքուերորդին նորին:

Հետազայի

Ա. 283բ. Ողորմի Աստուած Սախակին և իւր կողակցին՝ Ռսկուն և իւր որդոյն Վայր Եղանին, Սարգսի և քուրոշն Զանայզանին, որ զԱւետարան եղն մեր գնեց. Աստուած զուր մեղք թողնու. ամէն:

Բ. 284ա. Այլ և վերջապէս Աստուած-ողորմի ասացէք Նուրարին, որ աշխատեցաւ կամ սպասաւորեաց սուրբ Աւետարանին. ևս Աստուած ողորմի ասացէք Նուրարին, Մանուշակին, Յարութէնին. ամէն:

Գ. 284բ. Յիշեցէք ի Քրիստոս զՍախակ և զՍառայ, Այլմայստ, զԱյլրուն, որ ազատեաց ի զերութենէ սուրբ Աւետարան:

Դ. 285բ. (Անընթեռնի հիշատակագրություն. միայն կարդացվում է «Ռէֆ» (1634) թվականը):

րան 10 (թուղթ Եվսեբի՝ 2ր, 3ա և Համաբարբառ կանոններ՝ 4ր, 5ա, 6ր, 7ա, 8ր, 9ա, 10ր, 11ա): Տիրամայր՝ 12ր, Քրիստոս՝ 13ա: Մատթեոս՝ 16ր, Մարկոս՝ 92ր, Հովհաննես՝ 221ր: Կիսախորան՝ 17ա, 142ա, 222ա: Լուսանցաղարդ՝ բուսական: Կազմ՝ կաշեպատ տախտակ, աստառը՝ հասարակ գործվածք: Պահպանակ՝ թուղթ: Վիճակ՝ բավարար, բայց թերթահան:

Ծնր. Զեռագիրը վ. Վարդանյանը ժառանգել է Թավրիզում՝ իր մորից:

Հիշատական

Գրչի

89ր. Զծոյլս ի բարին Յարսեղ և եթ կրօնաւորս յիշեսչիք ի մաքրափայլ յօղօթս ձեր. ամէն:

138ր. Զառածեալս մեղօք Յարսեղ և եթ կրօնաւորս յիշեսչիք ի Տէր:

219ր. Աւրհնութիւն որ կարդայ, զովութիւն՝ որ լսէ. փառք տուողին և յիշատակ Յարսեղ և եթ կրօնաւոր գրչիս. ամէն:

Հետազայի

280ր. Զարրոյ Աւետարանիս զբստացօղն և զընծայ տուողն Արքյ Աստուածածնի եկեղեցւոյս ոչ զոյր զրեալ ի սուրբ Աւետարանս, որոյ տըւօղն և նրափրօղն յիշեալ լիջի առաջի Քրիստոսի Աստուծոյ, և զացի ողորմութիւն յաւորն աներեկի անհուն զթութեան նորին. ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զնորովող և զկազմել տրւօղ սուրբ Աւետարանիս՝ զաւագերէց սրբոյ եկեղեցւոյս զՏէր Յովսէփին հանդերձ իւրովք միաբանիւքն. ամէն:

Նորոգ կազմ սորին եղի ի թուականութեանս ՌՃՂԱ (1742) և յունվարի Ա. (1) //:

22

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Նյու-Յորք, Արևն և Արմանդ Փուշմաններ, № 4)

ԺԶ—ԺԷ—ԽՎ1—ԽՎ11

Թեր՝ 28: Նյուր՝ մագաղաթ: Մեծուրյուն՝ 11×16,8: Գրուրյուն՝ երկայնս: Գիր՝ բուլորդիր: Տող՝ 23: Մանրանկարչուրյուն—Լուսանցաղարդ՝ ավետարանական թեմաներով: Զարդարիր՝ թոշնագիր, հանգուցագիր: Վիճակ՝ վնասված և պակասավոր:

Ծնր. Զեռագիրը Փուշմանների հայրը, անվանի նկարիչ Հովսեփ Փուշմանը (մահ. 1966), ստացել է զրող Զարել Եսայանից Փարիզում:

Ա Կ Ե Տ Ա Ռ Ա Ն

(Սան-Ֆրանցիսկո, Ն. Մարտիկյան, № 3)

Սեպ-Լովան

ՈՒԴ—1605

Գրիշ՝ Միթթար: Սաղկող՝ Տեր Խաչատուր: Մեսրոպ սկ.: Ստացող՝ Հովհաննես քհ.: Թերը՝ 312: Նյուր՝ թուղթ (մագաղաթ՝ 312): Մեծություն՝ 14,5×19,5: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորդիր: Տող՝ 20: Մանրանկարչություն—Մարկոս՝ 86ր, Ղուկաս՝ 142ր, Հովհաննես՝ 236ր: Կիսախորան՝ 1ա, 87ա, 143ա, 237ա: Լուսանցաղարդ՝ բուսական: Կազմ՝ կաշեպատ տախտակ դրաշմաղարդ: Վիճակ՝ բավարար, միայն Մարկոս և Ղուկաս ավետարանիշների պատկերները վնասված:

Մեր. Զեռագրի մի քանի էջերի վրա դրված է զրաքննչական պարսկերեն կիքադրոշմ (տե՛ս № 4 ձեռագրի ծանոթ.):

Այս Ավետարանի մասին գրել են՝ Մ. Մաքատյանը («Նկարագիր և Կորապետի վանից Երնջակա...», 1904, էջ 308), Ե. Լալայանը («Ազգագր. Հանդես», 1905, էջ 159), Մ. Մաքսուդյանը («Արարատ», 1911, էջ 315), Գ. Հովսեփյանը («Հայաստանյաց Եկեղեցի», 1944, Հոկտ., էջ 20): Գրչի հիշատակարանը, ըստ «Արարատի» (որտեղ կան փոքր վրիպակներ) հրատակված է «Հայերեն ձեռագրերի ժեղարակականներում», Հ. Ա. (կազմեցին Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան, 1974, էջ 191):

Զեռագրի ժամանակին ունեցել է 351 թերթ, պակասում են սկզբի 25 թերթերի վրա եղած մանրանկարները և խորանների մեծ մասը:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

310ա.

Ազաշեմ զձեզ յօժար սրտիւ,
Որը հանդիպիր այսմ տառի,
Յիշման առնէք զմեզ արժանի.
Եւ որ ասէ Աստուած-ողորմի
Բատացօղի սուրբ Աւետարանի՝
Քաջ և արի Տէր Յովանիսին,
Որ մականուն Քաշիշ կոշի.
Ի միտ առեալ զրանն Եսայի,
Որ ասէ թէ՝ Երանի,
Որ ունիցի ընդանեակ յերուսաղէմ,
Եւ զաւակ ի Սիովնի:
Բատացաւ զսայ յաւժար սրտիւ,
Հալալ արդեանց իւր ամենի,
Սա է անջինչ սուրբ յիշատակ
Հոգոյ իւրոյ և ծնօղի՝
Տէր Միւայել անուն կոշի,
Եւ մօր նորա՝ Փաշաշանի:
Եւ որ առատն է պարզեի՝
Քրիստոս Աստուած ամենայնի,

Զարբայութիւն տացէ ձրի
Տէր Յովանէս քաջ վարպետի,
Եւ սուտանուն Միմիքար գրշի,
Որ տկար անձամբ ի յանձն առի,
Եւ տառապեալ կենօք գրեցի
Ի դառն և ի նեղ ժամանակի, || (310բ)

յորում նեղիմք ի յանօրինաց հարկապահանջութենէ, ևս առաւել ի սղութենէ հացի, որ լիտր ալիւրն ի Գ (3) շահի ու Գ (3) փարայ ծախեցին: Ու զրզվաշն եկաւ ի վերայ Վանայ ու բազում ոճիր գործեաց, ու արենհեղութիւն արարին ի միմեանց, բայց զառաջիկայն Աստուած պիտէ, որ աշխարհս ամէն ի մէջ նեղութեանց և տառապանաց է, մեթէ մթան լուսարարն Քրիստոս՝ լոյսառնէ ամենայն աշխարհի:

Ծնորնիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զուրբ Աւետարանս ի յերկիրն Մայեկաց, ի գեօդն որ կոչի Սեպ, և ծաղկեցաւ ի մայրաքարս Խիզան, ընդ հովանեաւ սուրբ է խորանացս՝ Սուրբ Յարութեան և Սուրբ Աստուածածնին, Սուրբ Յովանիսին և Սուրբ Գրիգորին, Սուրբ Ստեփանոսին, Սուրբ Սարգսին և Սուրբ Մարտիրոսին, ի թւականիս Հայոց ի ՌԵԴ (1605), ի հայրապետութեան Տեառն Տէր Մելքոնէր կաթողիկոսի եջ|| (311ա)միածնայ և ի մերոյս Ախրամարայ՝ Տէր Գրիգորիս կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Արդ, աղաշեմք զամենեսեանսդ՝ զմանկունսդ սուրբ եկեղեցւոյ, զի որք հանդիպիք սուրբ Աւետարանիս տեսութեան՝ կարգալով կամ օրինակելով և կամ հարեանցի տեսանելով, նա Աստուած-ողորմի ասացէք ինձ՝ մեղապարտ Գրիգորիսի, և հօրբէր որդոյն իմոյ՝ Տէր Խաչատուր վարպետին, և Մեսրոպ սարկաւագին, որ աշխատեցան ի հետ անարժանիս՝ ի ծաղկել սուրբ Աւետարանիս, և մեղաց թողութիւն հայցեցէք մեղ և ծնողաց մերոց և ամենայն աշխատաւորացս ի սմա. ամէն:

Արդ, որք ճաշակէք յաստուածային սեղանոյս և վայելէք յանմահական բուրաստանէս, նա Աստուած-ողորմի ասացէք և մեղ[աց] թողութիւն հայ- [ցե]ցէք ըստ[ացողի] Աւետարանիս Տէր Յովանէս բ[արեմիտ] քահանային և ծն[ողա]|| (311բ) յն՝ մահդասի Տէր Միքայէլին և Փաշաջանին, և կողակցին՝ Անլիփաշին, և որդոցն՝ Վարդանիսին, Յոհանիսին և Ամիրսէրին, և եղբորն՝ Ամիրսէրին, և քւերն՝ Նուրանիաշին, և հօրեղբարցն՝ Միքայէն, Գուլազրին և մահդասի Ամիրազրին, և իւր որդոցն՝ Տէր Գրիգորյին և Սենեֆարիմին], և ամենայն ազգա[կանաց] նոցին՝ կեն[դանեաց] և հանդուցիցն], և որ առէ [զԱստուած] ողորմին, նա Աստուած իւրն ողորմեսի. ամէն:

Դարձեալ կրկին անդամ յիշեցէք ի Քրիստոս զբստացող սուրբ Աւետարանիս՝ զհեղահոգի Յովանէս քահանայն, և ըղծնօղսն իւր՝ Տէր Միքայէլին և զՓայշայշանն, և զայլ ամենայն արեան մերձաւորս սոցա՝ զկենդանիս և զհանգուցնալս, և որ ի սուրբ գիրքս աշխատանք և երախտիք ունին, նա Տէրն ինքն Քրիստոս ողորմեսի սոցա յիւր միւսանդամ զալուստն. ամէն:

Հետազայի

312ա. Դարձեալ կրկին անդամ յիշեսցիք զվերցի ըստացող սուրբ Աւետարանիս և ոսկեզօծ բուրաստանիս՝ Ազուլեցի պարոն Թուման, որ ի դառ-

նաև յերկրէն նընտկաց ի Թէոդորօլիս, հանդիպեալ էր անտանօր սրբոյ Աւետարանիս, զոր ուխտի ըստացաւ զա ի հալալ ընչից իւրոց՝ առ ի ընծայելոյ ի դուռն Սուրբ Թովմայի առաքեալի վանիցն, որ զկնի զալոյն իւրոյ յԱզուլիս, երեր ընծայեաց ի դուռն Սրբոյ առաքելոյս Թովմայի, և ետ յիշատակ փւրն և ծնողացն իւրոց՝ հեղահոգի հանգուցեալ մահտասի Բաղտուն, և մօրն՝ Մուրվարին, և կողակցոյն՝ Ասլուն, և եղբարցն՝ Յովաննիսին, Գէորգին. Ստեփանին, և քերցն՝ Ղայիրին, Աննային և Ռոկինարին, որդւոցն՝ Կարապետին, և զստերըն՝ || (312թ) Սրբումտյն, և այլ ամենայն արեան մերձաւորացն իւրաց. որ և յիշատակ անջնջելի լիցի իրեւ որդի կենդանի ի մէջ սուրբ եկեղեցւոյ, բերելով զպտուղ անհատ միշտ յունկնզրութիւն կենդանեաց և հանգուցելոց, յաղգաց յազգս և յորդոց յորդի, անզրաւ յաժիտենիւ. ամէն: Հայրմէր որ: Հստացուած սորա եղեւ ի հազարերորդի հարիւրերորդի ութսուն և մի յարաբարդի (1732), յամսեանն սեպտեմբերի յեօթներորդի:

24

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Նյու-Յորք, Տիգրան Տեյիրմանճյան)

Խիզան

ՈՒԷ—1608

Գրիշ և ծաղկող՝ Կիրակոս: Ստացող՝ Ներսես արքեպիսկոպոս: Թէրը՝ 343: Նյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ 13.6×18.7: Գրուրյուն՝ երկսյուն: Գիր՝ բալորդիր: Տող՝ 21: Մանրանկարչուրյուն—Ավետում՝ 5թ, Ծնունդ՝ 6ա, Քառասունօրյա զալուստ՝ 7թ, Մկրտություն՝ 8ա, Պայծառակերպություն՝ 9թ, Ղազարոսի հարությունը՝ 10ա, Մուտք երուսաղեմ՝ 11թ, Ոտնալվա՝ 12ա, Խաչելություն՝ 13թ, Թաղում՝ 14ա, Դժոխիք ավերումը՝ 15թ, Հարություն՝ 16ա, Հոգեգալուստ՝ 17ա, Խաչ տերունական՝ 18թ, Քրիստոսը քառակերպյան աթոռի վրա՝ 19ա, Խորան՝ 10 (թուղթ եվսերի՝ 20թ, 21ա: Համաբարբառ կանոններ՝ 22թ, 23ա, 24թ, 25ա, 26թ, 27ա, 28ա, 29թ): Մատթեոս՝ 33թ, Մարկոս՝ 114թ, Ղուկաս՝ 173թ, Հովհաննես և Պրոխորոն՝ 265թ: Կիսախորան՝ 34ա, 115ա, 174ա, 266ա: Խազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմազարդ: Վիճակ՝ բավարար:

Ծնը. Զեռագիրը S. Տեյիրմանճյանը գնել է 1943 թ. Հունվարին, Նյու-Յորքում, պարսկական և Մերձավոր արեելյան արվեստի գործերի Քարմինաթիի հավաքածուի հրապարակային աճուրդում: Այս հավաքածուի մեջ եղել են նաև այլ հայերեն ձեռագրեր, կեռն հայոց արքայի 1197 թվականի արձանագրությամբ թուրք և հայկական պղնձե մի խաչ. ձեռագրերից երեքը՝ ըստ աճուրդի ցուցակի (տե՛ս The Carminati Collection of Persian art. Public Auction sale. Parke-Bernet Galleries, Inc., 1943) №№ 155, 156 և 170, գնել է նյույորքարնակ պրն. Հարություն Հազարյանը, իսկ մնացած հինգ ձեռագրերի (№№ 23, 115, 150, 157, 161) և վերոհիշյալ իրերի ճակատագիրն անհայտ է: 1972 թ. վետրվարի 14-ին նյու-Յորքում պրն. S. Տեյիրմանճյանը տո-

զերիս զրողի միջոցով Մաշտոցի անվան Մատենադարանին նվիրեց այս ձեռագիրը (N 10520):

Հիշատական

Գրչի

334ա. Փառք... || (337ա) ... Ոմն ի լուսածնեալ զարմից ներսէս արքակիս կոպոս, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախօս այսմ մարզարտաշար, լուսափթիթ սուրբ Աւետարանիս, և ետ զրել՝ յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց, ի միտ առեալ զրանն || (337բ) Եսայայ, որ ասէ. երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանեակ յերուսաղէմ: Վասն այն յուտոյն ետ զրել զսուրբ Աւետարանս և զարդարել ետ ոսկով և երանդ երանդ ծաղկով, յիշատակ իւրն և իւր ծնողացն, Հօրն՝ Գրիգորին և մաւրն՝ Մողանին, և եղբարցն՝ Վանէսին, և որդոցն՝ Վարդանիսիյին, Դաւիթին, Յոհաննիսին, Սարգսին, և միւս Հզրօրն՝ Նահապետին, Թումին և որդոյն՝ Մարգարին, զստերացն՝ Մողանին, Թաւրէզին, Մարգարտին և քերն՝ Արուսին, և ամենայն արեան՝ մերձաւորաց նոցին. ամէն:

Արդ, որ ճաշակէք յամենառատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս, յիշեսչիք ի մաքրափայլ յաղօթս ձեր առաջի անարիին զենմանն ի ժամ սոսկալի սուրբ պատարազին և լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուածողորմի ասացէք ստացողի լուսալայծառ սուրբ Աւետարանիս՝ ներսէս եպիսկոպոսին, և ծնողաց նորին, Հօրն՝ Գրիգորին և մօրն՝ || (338ա) Մողանին, և եղբարցն՝ Վանէսին, Նահապետին, Թումին, և որդոցն՝ Դաւիթին, Վարդանիսին, Սարգսին, Յոհաննիսին, Մարգարին, և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն:

Եւ արդ, ես յետինս ի կարգաւորաց և անարժանս ի մանկուս եկեղեցւոյ, անարուեստ ի զիրս զրչութեան՝ Կիրակոս անարժանս, Հրաման առեալ ի պատուիրանազիր առարիւական բանէն, որ ասէ. Յոր կոշումն կոշեցար՝ ի նմին կացչիր: Շնորհի Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախօս և զաստուածարնակ տառս՝ զլուսազարդ սուրբ Աւետարանս ի լաւ և յրնտիր արինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի Ծի և Ծէ (1608) ամին, ի քաղաքիս, որ կոչի Խիզան, ընդ հովանեաւ աստուածարնակ սուրբ տաճարացն՝ Սուրբ Յաւուրեան և Սուրբ Սատուածածնին, Սուրբ Յովաննէս Մկրտչին, Սուրբ Ստեփաննոսին և Սուրբ Գրիգորին, Սուրբ Սարգսի Յօրավաւեին և որդույ նորա Մարտիրոսին, ի Հայրապետու || (338բ) թեառն տեսոն Աղքամարայ նորրնծար Ստեփաննոս կաթողիկոսին: Տէր Աստուած պահանջէ զնա անսասան ի պարծանս մեր եւ ի Հ... (ընդհատված):

339ա. Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զներսէս արհիշտիկոպոսն և Աստուածողորմի ասացէք նմա: Ես ներսէս եպիսկոպոս զնացի սուրբ քաղաքն յերուսաղէմ և հանդիպեցա այս աստուածախօս Աւետարանիս, և բատացայ բզստ ի հալալ յարդեանց իմոց՝ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց, Հօրն՝ Գրիգորին և մօրն՝ Մողանին, և եղբարցն՝ Վանէսին, կողակցին՝ Սալամին և որդոցն՝ Վարդանիսին, կողակցին՝ Նղաշին և որդոցն՝ Գրիգորին, Վարդիսարունին, Սահակին, Աւետիսին, Դաւիթին, կողակցին՝ Մողանին, որդոցն՝ Բարունակին, Յովաննիսին, Դարմանին, զստերցն՝ Նարգին.

Խարունին, Յովանիսին, կողակցին՝ Ինախին, զստերն՝ Շուշանին, Սարգսին, կողակցին՝ Խանումին, որդոյին՝ Արքահամին, քրւերն՝ Զաղին և իր որդոցն, և միւս եղբօրն՝ Խահապետին, կողակցին՝ Ալամին, ղաւակացն՝ Հայրապետին. Մոջանին, Թաւրէզին, և միւս եղբօրն՝ Թումին, կողակցին՝ Զանեկին, որդոյն՝ Մարգարին, կողակցին՝ Սալլ(339թ)լամին, որդոյն՝ Կարապետին, Հոռոմին, քրւերն՝ Արուսին, որդոյին՝ Մարգարին, Հայրապետին, Մկրտչին, և Հարսին՝ Դարիալին, Խարունին, և Հօրեղբարցն իմոց՝ Սահակին, Միլիտոնին, որդոյին՝ Մուրատին, կողակցին՝ Խարունին, որդոյին՝ Առաքելին, կնոջն՝ Հոռոմին, և Սաւնին, կողակցին՝ Գովումին, որդոցն՝ Պարսամին, Գրիգորին, Խանէսին, Խլդարին, և գեղի քահանայիցն և տանուտերացն՝ Տէր Յոհանիսին, Վարդանիսին, Սահակին, և ամենայն արեան մերձաւորաց սոցին, և որ լի քերանով և բոլոր սրտիւ Աստուած-ողորմի ասէ սոցա, Աստուած իւրն ողորմեսցի. ամէն:

Քրիստոս Աստուած, քո անձառելի ծնընդեամբդ և սրանշելի յարութեամբդ ողորմեա և մեղաց թողութիւն շնորհեա ներսէս արքեսիսկոպոսին և ծնողաց նորին, Հօրն՝ Գրիգորին և մօրն՝ Մոջանին, և եղբարցն՝ Վանիսին և Սալամին, և որդոց նոցին, և միւս եղբօրն՝ Խահապետին, [կողակցին՝] Ալամին և որդոց նոցին, և միւս եղբօրն՝ Թուլ(340թ)մին, [կողակցին՝] Զանեկին և որդոց սոցին, և այնոցիկ, որ ի սուրբ Աւետարանս մասն ունիցին՝ Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին և զիւրեանց յիշատակն խաղաղական կենաւը պահէ, ամէն:

340ա. (Նույն բոլորզրով) Դարձեալ յիշեցէք ի Քրիստոսի զվերջին ստացող լուսազարդ, պայծառ և պատուական սուրբ Աւետարանիս՝ զիսօչա Սատուրն, որ ստացաւ սա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց յիշատակ, և ետ վերըստին ուկով զարդարել զտնագլխներն ի վայելլութիւն սուրբ Աւետարանիս, յիշատակ հոգոյ իւրոյ և իր ծնողացն, Հօրն՝ խոջա Մուրատին և մօրն՝ Զախարունին, և եղբարյն՝ Աղափիրուն և Աղամիրուն, և կողակցուն || (340թ) իւրոյ՝ Գշխունին, և որդոցն՝ խոջա Գրիգորին, Մուրատին և Սանասին, և դստերացն՝ Մէրտատիկին և Զախարունին, և միւս կողակցուն՝ Շուշանին, և որդոցն՝ խոջա Աւետին, Խաչիկին, Աղափիրուն և Պետրոսին, և զստերացն՝ Մէրտատիկ, Թագունուն և Յուղիդին. ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զիսօչա Աւետիկն և զկողակիցն իւր՝ Գուլնարբն և զորդին իւր՝ խոջա Խաչիկն (շար. ուշ նոտրզրով) և զիսօչա Աղափիրի, և զկողակիցն իւր՝ Ազատխանն, և զորդին իւր՝ պարոն Ավետաղէն և զիօչամալին և բզՄուրասէն. ամէնն:

Հետագայի

ա. 340թ. // ի նոր Զուղայ թվին Փրկչի ՌԾՃԷՂԴ (1834) համիրայ, Աստուած պտուղ պարզեց, օրի շաբաթ, որ էր սուրբ Յակոբաց տօնախմբութիւնն, խնդրու հմք, զաղամօվ լինի կամավն Աստուածոյ: Ես մեղավոր չնշին ծառայ՝ Գ. Մ.

բ. 344ա. Պարոն Տիգրան Տէյիրմանձեանի սոյն Աւետարանը քննեցի և յիշատակարանից առանձին թղթի վրայ գրեցի Հարկաւոր տեղեկութիւնները:

Դարեգին արքեպիսկոպոս

[Յովսէփիկան]

Նորի. Պյուկին

1943, 30 նոյեմբ.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Ելու Յորք, Հ. Փ. Քրառով)

Սպահան

ՈՒԹԻ—1615

Իրանի Սպահան քաղաքում գրիչ Հայրապետ երեցի ընդօրինակած և Մեսրոպ Խիզանցու ծաղկած այս Ավետարանի մասին առաջին տեղեկությունները տալիս է Հ. Տեր-Հովհանյանցը («Պատմութիւն Նոր Զուղայու», Ա., Նոր Զուղա, 1881, էջ 67—68), ըստ որի մատյանը «կայ յԱմենափրկիչ եկեղեցւոց երեան թաղի»: Սակայն գեղեցիկ մանրանկարներով պատկերագրված այս Ավետարանը հետագայում բնկել է Ժ. դը Մորգանի հավաքածուի մեջ. Ֆր. Մակլերը այն մանրամասն նկարագրել է «Ժուռնալ Ասիաթիբում» (տե՛ս Frédéric Maclear, Notices de Manuscrits arméniens vus dans quelques bibliothéques de l'Europe centrale, Paris, 1913. Extrait du Jurnal Asiaticque (septembre—octobre et novembre—decembre, 1913, p. 643—651).

Պետք է ենթադրել, որ փոքր ինչ ավելի ուշ մատյանը Ժ. դը Մորգանից ձեռք է բերել հնագետ ու պատմաբան, Թուրքիայում Ֆրանսիացի նախկին դեսպան Ժան Պողին, որի ձեռագրերն ու այլ հնությունները աճուրդով վաճառվեցին Փարիզում 1971 թ. ապրիլի 30-ին: Այստեղ խնդրո տուարկա մատյանը գնեց նյույորքարնակ գրավաճառ Հ. Փ. Քրառովը (16 East 46th st., New York):

Պրմ. Հ. Փրառովը հոժարակամ մեզ ծանոթացրեց ձեռագրին և, մեր խընդունով, տրամադրեց մանրանկարների սլայդները:

Զեռագրիս հիշատակարանը տե՛ս Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի կազմած «Հայերեն ձեռագրերի Ժեզ հիշատակարաններ», Ա., Երևան, 1974. Էջ 569—570:

Ժ Ո Ղ Ո Վ Ա Շ Ո Ւ

(Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան, Արտ. MS № 3)

Հալեպ

ՈՃԲ—1653

Գրիչ՝ Արքահամ երեց: Ստացող՝ Հովհաննես սրկ.: Թերը՝ 259 (էջ 518): Նյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ 15×21: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ նոտրդիր: Տող՝ 15: Կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմագարդ: Վիճակ՝ բավարար:

Սնը. Զեռագիրը Կոնգրեսի ըրտարանին է նվիրված՝ այս դրադարանի հայկական հավաքածոյի կոմիտեի և Բեյրութի հայկական մշակութային միության միջոցով 1953 թ. մարտի 15-ին: Կազմի վրա՝ «Near East 163»:

Բ Ա Վ Ա Կ Ա Կ Ա Ւ Թ Յ Ա Ւ Ն

- ա. էջ 1. Առաքելի Սինհցւոյ Աղամզիրբ:
- բ. էջ 274. Քարոզ Վասն մարդեղութեան:
- շ. էջ 292. Քարոզ Վասն յարութեանն Քրիստոսի:
- դ. էջ 322. Քարոզ Վասն զղջման և ապաշխարութեան:
- ե. էջ 347. Քարոզ Վասն խոստովանութեան:
- զ. էջ 383. Քարոզ Վասն ապաշխարութեան:
- է. էջ 408. Քարոզ Վասն ողորմութեան:
- ը. էջ 451. Հանգիստ երանելոյն Յոհաննու աւետարանչին:
- թ. էջ 464. Հարց Վահրամայ վարդապետի և պատասխանիք վարդապետին Վանականայ:
- ժ. էջ 466. Պատմութիւն տնաւրէնութեան Քրիստոսի:
- ժա. էջ 470. Քարոզ Աւագ ուրբաթուն՝ Վասն խաչելութեանն Քրիստոսի:

Հ Ի Ղ Ա Մ Ա Կ Ա Ր Ա Ն

Գրչի

էջ 515. Այս է Յիշատակարան գրոց—Փառք ...Որ ետ կարողութիւն նուաստ ողոյս՝ Արքահամ անարժան երիցւոյս, հասանել աւարտ զրոյս, որ է պատմութիւն հախահաւըն մերում Աղամայ...

Արդ, այս ամենայն բարուլ(էջ 517)թեանցո և աստուածատունկ բուրժատանիս ցանկացաւդ եղել սմայ աստուածամեծարն և հեղահոգին հոգեոր որդիակս մեր՝ Յովաննէս սարկաւագն, որ է երկրէն Արաբկերու, ի զեղչէն Մաշկերու, եւ ետ զրել զսա ի հալալ ընչիցն և արդար վաստակոցն՝ յիշատակ իւր անձինն և իւր ամենայն արեան մերձաւորացն: Զոր և հայցեմք և խնդրեմք ամէնաւընեալ Տեառնէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ բարով վայելել տացէ սմայ երկար ամաւք և բազմերամ ժամանակաւք մինչև ի խորին ծերութիւն ամէն:

Արդ, զրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՃԲ (1653) ի մայրաքաղաքս ի Հայաստ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածին և Սուրբ Քառասունք եկեղեցեացու և այլ եկեղեցեացու, որ աստ կան || (էջ 518) հաւաքեալ ի պահպանութիւն ամենայն հաւատացելոց: Գրեցաւ սայ ի թագաւորութեանն տաճկաց Սուլտան Մուհամատ նորրնծայ թագաւորին, ի կաթողիկոսութեան Տանն Կիլիկիյան Տեառն Տէր Ներսէսի սրբազնն հայրապետին և ի կաթողիկոսութեանն եջմիածնի Տէր Փիլիպպոս խարազնազեաց ճգնաւորի: Արդ, որը հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, կամ հարեանցի տեսանելով՝ յիշեսչիք ի մաքրափայլ և երկնաթոփ ազաւթս ձեր զվերոյ յիշեալ զՅովաննէս սարկաւագն և զիս զանարժան զծողս՝ զԱրքահամ երէցս, որ զանունունիմ և ոչ զզործս: Այլ որ առատն է ի տուրս բարեաց, տացէ ձեզ յիշելոցդ և մեզ յիշեցելոցս զիւր երկնից արքայութիւնն. ամէն: Հայր:

Շ Ա. Բ Ա. Կ Ն Ո Յ

(Սան Ֆրանցիսկո, Ն. Մարտիկյան, № 4)

Խկոնիոն

Թձկ—1658

Գրիչ՝ Գրիգոր: Ստացող՝ Աստուածատուր մահասի: Թերը՝ 362: Նյուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ $10,2 \times 14$: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ բոլորդիր: Տող՝ 24: Մանրանկարշուրյուն—Կիսախորան՝ 3ա, 12ա, 109բ, 137ա, 291բ, 312բ, 338բ: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդազիր՝ հանգուցազիր, թոշնազիր (կարմիր և կապույտ): Կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ, աստառը՝ ծաղկազարդ դործվածք: Պահպանակ՝ սկզբում 2 թերթ մազազաթ: Վիճակ՝ բավարար:

Հ Ի Հ Ա Մ Ա Կ Ա Ր Ա Ւ Յ

Գրչի

362ա. Փառք... Արդ, զրեցաւ եղանակաւոր տառա, որ կոչի Շարակնոց, այսինքն՝ շարեալ ակունք, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ ասի Խլու Պապու, որ է յրդկեալ և յրստակեալ առաջին վարդապետացն և վարժապետացն, ձեռամբ մեղսամած Գրիգորիս, ի յերկիրս Խկոնիոն, որ ասի Ղօնիա, ի դուռն Սույր Աստուածածնին, ի թվականիս Հայոց յամի ԾՃկ (1658):

Արդ, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ աւրինակելով, յիշեսցիք զգծող սորա՝ զԳրիգորն միով Տէր-ողորմեայիս, որ և ձեզ լիցի ողորմութիւն յամէնողորմ արարչէն. ամէն:

Եւ դարձեալ յիշեսցէք ի Տէր զստացող սորա՝ զմահասի Աստուածատուրն, որ այժմ հանդեաւ ի Քրիստոս: Ով ոք յիշէ՝ լիշեալ լիցի ի Քրիստոսէ. ամէն: Հայր մեր որ յերկինս:

Ա. Ի Ե Տ Ա. Բ Ա. Կ Ն

(Նյու Յորք, Արտեն և Արման Փուշմաններ, № 3):

Քարահատ գյուղ

Թձկ—1659

Գրիչ, ծաղկող և կազմող՝ Գրիգոր Երեց: Ստացող՝ եղիա: Թերը՝ 319: Նյուր՝ մազազաթ: Մեծուրյուն՝ $12 \times 16,3$: Գրուրյուն՝ Երկայուն: Գիր՝ բոլորդիր: Տող՝ 19: Մանրանկարշուրյուն—Խորան՝ 8 (Թուղթ Եվսերի՝ 3ա, 4ա և Համարձառ կանոններ 5բ, 6բ, 7ա, 8ա, 9բ, 10ա): Մատթեոս՝ 13բ, Մարկոս՝ 105բ, Ղուկաս՝ 162բ, Հովհաննես՝ 250բ: Կիսախորան՝ 14ա, 106ա, 163ա, 251ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդազիր՝ թոշնազիր և հանգուցազիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, Ա. փեղկին՝ արծաթյա խաշելություն: Պահպանակ՝ մազազաթ: Վիճակ՝ բավարար:

Հիշատական

Գրչի

ԳԵՂՐԳ ԲԱՄՊՈՒՔՃՅԱՆ

(Ստամբուլ—Թուրքիա)

ՄԱՄԲՈՒԼԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐ

Պրն. Գեղրդ Բամպուքճյանը, որ Մաշտոցի անվան Մատենադարանի անշահախնդիր բարեկամներից է և պարբերաբար արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իր տեսած ձեռագրերի, հնատիպ զրերի, հազվագյուտ թերթերի ու ամսագրերի վերաբերյալ, այս անդամ մեզ է տրամադրել Ստամբուլում եղած Հայերեն ձեռագրերից հինգի համառոտ նկարագրությունները՝ հիշատակարաններով հանդերձ, որոնք և հրապարակվում են ստորև:

Դրանցից առաջինը (№ 1) Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցու հայտնի ձաշոցն է՝ զրված 1356-ին Ղրիմի Սուրբաթ քաղաքում, հաջորդ 3-ը (№№ 2—4) Կեսարիայի եկեղեցակատկան ձեռագրերից են (Մաշտոց—1506, Շարակոց—1547, Հայոմավուրք—1554) և այժմ գտնվում են Հայոց պատրիարքարանում, իսկ վերջինը (№ 5) Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցու 1672 թվականի Շարակոցն է, որը, ըստ հեղինակի, այս իր տեղում չէ:

Խմբ.

Ճ Ա Շ Ո Յ

Սուրբ (Պետր)

ՊԵ—1356

Գրիչ՝ Խոսրով քահանա: Մաղկող՝ Առաքել քահանա, Կիրակոս երեց: Կազմող՝ Առաքել քահանա (ծաղկողը): Ստացող՝ Քրիստոսատուր կրոնավոր: Թերը՝ թերթակալված չէ: Նյութ՝ գեղնորակ ընտիր հաստ թուղթ: Մեծուրյուն՝ 31×23 : Գրույրյուն՝ երկույուն (24×15): Գիր՝ բոլորդիր (բնագիրը՝ սև, խորագրերը՝ կարմիր և մանրատառ): Տող՝ 31: Կազմ՝ զրոշմազարդ տախտակ: Մանրանկարչուրյուն՝ կիսափորաններ (սկիզբը երկու և մեկական ջատեկի և Աստվածածնի վերափոխման առթիվ), լուսանցազարդեր (երրեմն նկարներ) և զարդագրեր, բոլորն էլ գունավոր, սակայն միջակ նարվեստով: Վիճակ՝ բավարար: Տեր՝ [Կ. Պոլիս, Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցի]:

Հ Ա Շ Ո Յ Ա Ր Ա Ն

Գրչի

Փառք... (նոր էջէ) Եւ հս՝ յետնեալ հողս, մեղապարտ Խոսրով, կոշեցեալ անուամբ և ոչ գործով ի կարդ քահանայութեան, անպարապ անձամբ ձեռնար-

կեցի ի սա՝ հրամանաւ և իշխանութեամբ վարդապետին իմոյ Մելքիսեդեկ քահանայի և ստացողի սորա Քրիստոսատուր և սրբամաքուր կրաւնաւորի, վեհականի և ճշմարտի, որ ի կանուխ ժամանակաց հետամուտ եղեալ փափագելի տենչմամբ իւրով սիրոյ սորա, ետ զրել զսա անպիտան ձեռինս, ամենայն հսկաբարձութեամբ, անհանգիստ հոգւովք երկնեալ ի քառեակ եղանակս զտիւ զգիշեր, ամենայն աւգնականութեամբ, ևս առաւել աղաւթիւր և խնդրուածովք, վասն առաւել և շերմ սիրոյն իւրոյ, մանաւանդ վասն պատուելի տիազարդ հասակին, զի թերես տեսցէ զկատարումն սորա՝ ի յիշատակ փոք առ Տէր, և ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ:

Արդ, խնամաւը խնամակալ էին, եղել զրաւ սորա, թէպէտ և անագան ի բազում զբաւսանաց աշխարհի, ի ժամանակս յոյժ անբարի, զի վասն ծովացեալ մեղաց իմոց կողմս հիւսաւական, խրատուր շարին, ի զումարի զոլով մի ամաւը, կամք մնալով անյիշշաշարին և անոխակալին՝ այց առնել համայն խրայնոցս, զի մի՛ գերեալըս և վարատեալըս ի վայրս նրժգհհութեան կրկին կողոպտեսցուր մեղաւը մնրովք:

Այժմ, աղաշեմ զամենեսեան զդասս լուսերամից, որք հանդիպիք այսմ աստուածային խրախճանութեան, յիշեսջիք ի մաքրավայլ աղաւթս ձեր զփափագմամբ ստացողն սորա՝ զՔրիստոսատուր կուսակրաւն կրաւնաւոր, և զհայրն իմ՝ զՅովինաննէս զարեամբ նահատակեալն, և զմայրն իմ՝ զՆունահաւան. և զմաւրբոյրն իմ՝ զՄամախարունն, և զհարազատ եղբայրքն իմ՝ զբարիձրիշաւակքն զԲնգեատիոսն, և զԳորգէոսն, և զԳրիգորիոսն, և զամենագովելի քորքն իմ՝ զՓառանց տիկինն, և զԹիմա տիկինն, նաև զՀաւրինդրայրն իմ՝ զԶարդանոս և զորդին իւր՝ զԱստուածատուրն, և զպապքն իմ՝ զալեաւը ծերունիրն զԱստրիկն ու զԵռշահն, և զՄիփրաւն, և զպարոն Ստեփաննոսն: Այլև յերկոսին կողմանց զմամերն իմ՝ զԵնօֆոր տիկինն, և զՄայր տիկինն, և զՎարդ տիկինն, և Փոփիսիկն, և զքեսիքն իմ՝ զՍտեփաննոսն և զՀազրպետն, նաև զսիրեցեալն յԱստուծոյ զերավստաւորն իմ զփոքք քեռին՝ զՅովիաննէսն, և զզեռարոյս զաւակն իւր՝ զՄահակն, նաև զՅակովը սարկաւագն, և զՅովիաննէսն, որ յայսմ ամսեան յանկարծանաս սրոյ մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս, և զբորի կենակիցն իւր՝ զԳրոցն, նաև զԳրիգորն և զորդին՝ զԵահն, և զնորարող զեռարոյսն զԱստուածատուր սարկաւագն, ևս առաւել զգովելի և զպատուելի զվարդապետ և զուսուցիլ զՏէր Աւետիսն՝ զփոխեցեալն առ Քրիստոս, նաև զմիւս ուսուցիչն իմ՝ զՂեռնդ երէցն, և զորդիքն իւր՝ զՍիմէոն կրաւնաւոր, և զՍիոն միայնակեց, և զԳրիգոր սարկաւագ, նաև զԱստարշան:

Եւս առաւել յիշեսջիք և զամենայն արեան մերձակեայսն մեր՝ զծերս և զպայս, զարսն և զկանայսն, զկենդանիսս և զհանգուցեալսն, զպատուիրեալս և զանց արարեալսն, զբարերարս և զվշտացուցիլս, նաև զմեր միարանեալ եղբարքս՝ զժողովեալըս առ ուսս Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սիմէովնի, և Սուրբ Աւետենդիոսի, զՂազար կրաւնաւոր, և զՍտեփաննոս կրաւնաւորս, և զմիւս Քրիստոսատուր կրաւնաւոր, և զայլ պազի (մնացյալ) զործաւորսն՝ զտնտեսն և զմաճկալքն, զհովին. նաև, թէ արժանի համարիք զանարժանս՝ զսուտանուն քահանայս, ցաւակցարար յիշման ի փառաւոր և ի սոսկալի աւեանն:

Կատարեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԵ (1356), յունուար ԻԲ (22), ի հայրապետութեան Տեառն Մխիրաւայ, յեպիսկոպոսութիւն արհիականին Տէր

Ստեփաննոսի, || ի թագաւորութեանն Կոստանդիանոսի, յաշխարհակալութիւնն ձանիպէկ զանին, ի հոչակաւոր քաղաքու Սուրդար, ի գաւառիս Դրիմ, առ ոտո Սուրբ Ստեփաննոսի, և Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Լուսաւորչին, և Սուրբ Գէռզեայ, և Սուրբ Սարգսի, յորում ի հասեալ ժամանակիս պաշտիւր տաճարս երկնաշանգէտ ի պատուելի և ի սրբամաքուր քահանայից արժանաւոր պաշտամբք է և տասն (17) կարգաւորաւը խորհրդական թուովք:

Յիշեսչիք ի Տէր զերախտաւոր վարդապետն և զգուաուցիչն իմ՝ զգորովազութն և զպատուականն զՏէր Մելքիսեդէկն, որ զաւրինակն շնորհեաց: Յիշեսչիք ի Տէր և զպատուելի քահանայ զՏէր Վարդանն և զմեծ մայրն զձուիառն: Նաև՝ ի քարի արմատոյ զքարի շառաւիդն զՏէր Յովհաննէսն, որ մանուկ հասկաւ վերափոխեցաւ առ Քրիստոս. տացէ նմա Տէր Աստուած զերկնից սուրբ արքայութիւնն, փառակից և պսակակից արասցէ զնա ընդ երկնաքաղաքացոյն Յովհաննու, և ընդ Յովհաննու աւետարանչի, և յընդ Յովհաննու Ռոկիբերանին, և ընդ այլ սրբոցն:

Նաև յիշեսչիք ի Տէր զգորովազութ մայրն մեր, զհաւրքոյրն, և զերախտաւոր քոյրն իմ՝ զմաստիանէն, որ ի տող շափելն յոյժ աշխատեցաւ, նաև զՏիրուիին, զՄարիանէն և զգեռաբողբոչ զաւակսն իւր՝ զՄեղիսէն, և զներսէն, և զպատանին զվարդանն: Յիշեսչիք ի Տէր և ի սրտէ սիրեցեալ զկնքաւորն իմ՝ զՏէր Կարապետն, նաև զծնաւզն իւր, և զամենայն արեան մերձաւորայսն: Նաև առաւել՝ զգորովազութ հայրն իմ զԱվեանն՝ զփոխեցեալն առ Քրիստոս, զմայրն իմ՝ զՔուրխարունն, որ բազում ջանաւք և աշխատութեամբ սպասաւորեաց սմա. Նաև զեղքայրն իմ՝ զԱմիրմելին, և զհարսն իմ՝ զՀոփիսիմէն, և զբորքն իմ՝ զՔարամ խաթունն և զպատանեակն իւր՝ զՍարգիսն, և զՀատիամելին և զաւակսն իւր՝ զմեծ և փոքր, և զամենայն արեան մերձակայսն իմ || յիշեցէք միով Տէր-ողորմայիւ, և Աստուած զյիշողսդ և յիշեցողս յիշէ և վարձուարեաց պարզեսցէ յիւրում միւսանգամ զալստեանն:

Յիշեցէք ի Տէր զծաղկող և զկազմող սորա՝ զԱռաքել քահանայ, որ բազում աշխատութեամբ զարգարեաց զաստուածաշունչ և զհոգիարուղք բուրաստանս. ընդ նմին և զնիւրակոս երէց և ծաղկաւզ, որ ըստ կարի իւր աշխատեցաւ ի սմա, յիշեցէք ի Տէր, և Աստուած զձեզ յիշէ յահաւոր և ի սոսկալի աւուրն. ամէն:

Հետազայի

— (Վերջավորության) Այլ և զվերջի կազմող տառիս՝ զանիմաստ, միայն անուամբ Գաւիք երէց յիշել աղաշեմ հանդերձ ծնօղիւք, որ բազում աշխատութեամբ յանգեալ կազմեցի ի թուականիս Հայոց ՌՃԵ (1656), յունվար ամսոյ Ի (20), վերակացութեամբ և խնդրո հեզանոգի և առարինի Տէր Կարապետ աւատերէց վերածայնեալ ի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին, զոր Տէր Աստուած զինքն ընդ երկայն աւուրս արասցէ՝ ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյն: Այլ և զմեծաշ իշխանսն և զերեսփոխանսն այնմ զանի՝ զխոճայ Գաւիքն, զխոճայ Գանիէլն, զխոճայ Մկրտիչն, զխոճայ Սողովմոնն, և զխոճայ Քրիստոսատուրն, զխոճայ Եխտիարն, զխոճայ Մուրատն, և զխոճայ Եղիայն յիշեսչիք ի սուրբ տղօթս, զոր ջատազով եղեալ այսմ հոգէլից մատենիս, ետում վերըստին կաղմէլ. միթէ բարերարն Աստուած տացէ իւրեանց սխալանացն թողութիւն, հանգերձ ննջեցելովք իւրեանց. ամէն:

ՄԱՇՏՈՅ

Կեսարիա

ԶՍԵ—1506

Գրիշ՝ Ներսես:

Թերը՝ 160 (Նախապես՝ 167): Նյուր՝ դեղնորակ հաստ թուղթ: Մեծություն՝ 16,5×13: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 16: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Մանրանկարչություն՝ խորանազարդք, լուսանցազարդք և զարդադիրք, միջակ արվեստով: Վիճակ՝ սկզբեն պակասավոր, տեղ-տեղ ցեցակեր, թերթերը դեղնած և աղտոտված, վարի մասի եզերքը մելան թափած, կազմի և փեղկին ընկած: Տեր՝ Կ. Պոլիս, Աղգային պատրիարքարանի Կեսարիո ֆոնդ (Հին թիվ 14, նոր թիվ 41):

Հիշատակառան

Գրշի

159թ Փառք... Գրեցաւ աւրհնութիւնաբեր || (160ա) ցուցակսայս ի թվարիրութեանս Հայոց ԶՍԵ (1506), ձեռամբ ամենամեղ... (2—3 բառ ջնջված) Ներսէսի սուտ [անուն]... (2—3 բառ ջնջված) Կեսարիոյ... (1 բառ ջնջված), որ կոչի... (1 բառ ջնջված), ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Յոհոնոսի զինաւորին:

Արդ, երես անկեալ աղաշեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա տեսանելով կամ աւրինակելով, յիշեցէք յառատ յողորմութիւնն Աստուծոյ զներսէս գծողս, և զուսուցիչան իմ՝ զՅովանէս նաղաշն, ոյի մաքրեսցէ Տէր Աստուած ոյանցանս նորա և իր սուրբ արքայութեան արժանի արասցէ զնա. ամէն: Դարձեալ յիշես || (160թ) զիք ի Քրիստոս զննչեցեալ ծնաւզսն մեր՝ զՅոհան քահանայն, և զմայրն իմ՝ զՏովլարն, որ ի մայիս ամսոյ ի ժե (15) փոխեցաւ ի մահուանէ ի կեանք, և զեղրայրքն իմ՝ զԱստուածատուր եպիսկոպոսն, և զՅաւմանն, և զՃայրապեան, և զն[ն]շեցեալ քուերքն իմ՝ զԱննայն և զԽարունն, և զդեռարոյս որդիքն իմ՝ զՊալինուխն և զԱւետիքն: Եւ որք որ զմեզ յիշէ յառ Քրիստոս աղաւթիւք կամ Հայր յերկինս, նոյն պէս և ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ, և ի յիւր սուրբ ահեղ ատենին. ամէն:

Ընք. Թվականին երրորդ տառը է (7) ալ կրնա ըլլալ, որովհետեւ վարի մասը ջնջված է: Վայրը Կեսարիո գյուղերեն մին պիտի ըլլա, հավանաբար Ս. Կարապետ վանքը և կամ Թավլուտուն, որոնց մեջ Ս. Թեոդորոսը հիշված է:

3

ԶԱՅՆԱՔԱՂ ՇԱՐԱԿԱՌ

Աերաստիա

ԶՊԳ—1547

Գրիշ՝ Հովաստի սարկավագ: Ստացող՝ Խոճա Հապաշ:

Թերը՝ թերթակալված չէ: Նյուր՝ թուղթ: Մեծություն՝ 20×15: Գրություն՝ միասյուն (15,5×11): Գիր՝ բոլորգիր: Տող՝ 25: Կազմ՝ կաշեպատ տախտակ:

Մանրանկարչություն՝ ունի կիսախորան և լուսանցագարդ, սակայն անարվեստ: Հանգամանք՝ կազմը քայլայված և թերթերը խոնավութենե աղղված, սկզբեն ողակասավոր: Տեր՝ Կ. Պոլիս, Ազգային պատրիարքարանի Կեսարիո ֆոնդ (թիվ. 28):

Սնը. Զայնաքաղիս վերջավորության «...Քիր վորցութեան իստ Խայլամի» խորագրով աղավաղյալ և թրթերեն բառերով խառն ոտանավոր ճը կա:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

Փառք... Արդ, զրեցաւ Զայնաքաղս ի լաւ և յընտիր որինակէ, որ կոչի Խրլկցի, ամենայն Անձինքիւ և Յիշեսցուքիւ, և ամենայն որպիսութեամբ՝ վասն գիշերապաշտման, ձեռամբ անարհեստ, մեղապարտ և ասիլկար փցուն զրչի՝ Յովասափ սարկաւազի, ի քաղաքի Սեբաստիո, ի դուռն Սուրբ Աստուածածնին և Սուրբ Լուսաւորչին, ի թվին Հայոց ԶՂԶ (1547): Այլ աղաշեմ զմեզ, յերես անկեալ պազատիմ, ով սուրբ տեսողը և ընթերցողը, անմեղադիր լերուք պակասութեան գրիս և սղալանացն, զի մեր պակասութիւնն շատ է, քայց միայն յիշման արժանի առնէք զմեղապարտ գրիչս, և որ յիշէ զմեզ, յիշեալ լիցի ի Քրիստոս Աստուծոյ մերոյ. ամէն: Հայր մեր:

Յիշեցէք յաղաւթս ձեր զրստացող զրոցս (ասկե վար գրիշը և մելանը տարբեր) գիտճայ Հապաշն և ըդնաւզսն՝ Խսպանդեար և զԱնուշմելիքն, և աստուածայլաբզն զաւակնին, որ զրել երիտ Զայնաքաղս իւրէնն և իւր ծրնողացն և զաւակացն... (տող մը շնչված) ի հալալ ընչից իւրոց: Եւ դուք, յորժամ հանդիպիք սուրբ գրոցս՝ պաշտելով կամ աւրինակելով, լի բերանով և ուղիղ հաւատով Աստուած ողորմի ասացէք նոցա, և Աստուած որ առատն է ի տուրս բարեաց, պարգևէ զիւր արքայութիւն ձեզ և մեզ և ամենայն հաւատացելոց ի Քրիստոս. ամէն: Հայր մեր որ երկինս:

— (Միշին մասում) Ո՞հ, ո՞հ, և վայ զիս՝ զմեղաւոր անձն իմ զառածեալ Յովասափս, զի յայսմ ամի մեռաւ զեղեցիկ մանուկ եղբայրն իմ՝ պարոն Գրիգոր և քուրորդին իմ՝ խոճայ Ախինանն. մէկ տարու տղաք էին, լի՛ (32) տարու մեռան՝ հետ և (40) աւուրն մի ամի, և ես խիստ եմ մոլորեալ:

— (Վերջավորության մոտ) Յերես անկեալ աղաշեմ լրզձեզ, ով սուրբ տեսողը և ընթերցողը, անմեղադիր լերուք պակասութեան գրիս և սղալանաց, զի մեղք իմ անթիւ, և ըսրազմունք պատեալ է զիս:

Հետազալի

— (Վերջավորության) Վաղանեցաւ Տէր Յովանէսն ի թվականութեանս Հայոց Ծեսէ (1598), նոյեմբերի օհէ (17), աւրն ուրբաթ, ի յիններորդ ժամուն յաւանդեաց զհողին իւր առ Աստուած, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն:

— Վաղձանեցաւ Տէր Կասիլ վարպետն թվին ՌՀԲ (1629):

— Վաղձանեցաւ Տէր Գրիգորն թվին ՌՀԱ (1632), Հոկտեմբեր Զ (6), օրն Ե-շաբթի: Աստուած ողորմեացի.

- Վաղճանեցաւ Տէր Ազարիան թվին ՌԴԵ (1646), սեպտեմբերի ժԴ (13) օրն Խաչվերացի:
- Վաղճանեցաւ Տէր Աստուածատուրն թվին ՌԴԶ (1647), փետրուար ամսոյ թ (9), օրն Առաջաւորի պահոց Գ-շաբթի:
- Վաղճանեցաւ Տէր Ալիքսանն ի նոյն ամի, ապրիլ ամսոյ իԶ (26), օրն Բ-շաբթի:
- Վաղճանեցաւ Տէր Յովսէկին... (բառ մը անընթեռնլի) ի նոյն ամի, սեպտեմբեր ամսոյ իԲ (22), օրն Պ-շաբթի:
- Վաղճանեցաւ Տէր Արքահամըն թվին ՆԴԹ (1650), սեպտեմբեր ամսոյ ի (20), աւրն ուրբօթ:
- Վաղճանեցաւ Տէր Աստուածատուրն թվին ՌՃ (1651), աւգոստոս ժԴ (13), օրն Պ-շաբթի:
- Վախճանեցաւ Տէր Ղազարը թվին ՌՃԼԴ (1685):
- Վախճանեցաւ Տէր Ալիքսան ի նոյն ամի:
- (Ներքեր) Յաս ժամագիրքը Տէր Պողոսին է: Յաս Շարականն Տէր Պողոսին է:

Մնր. Վերոգրյալ քահանաները, Հավանաբար, պաշտոնավարած են Սերաստիո Ս. Աստվածածին Մայր եկեղեցին:

— (Սկիզբը, էջին ներքեր, նոր ժամանակյա) Յիշատակ է Սուրբ Թորոս Ակեղեցին Տէր Կարայլետի օրի Հաճի Միսանի:

4

Յ Ա Յ Մ Մ Ա Ի Ո Ի Ը Ք

ԱԼԱՐԻԱ

ՌԳ—1554

Գրիչ՝ Մովսես քահանա, Աստվածատուր արեղա, Պողոս դպիր: Շաղկող՝ Պողոս դպիր (գրիշը): Ստացող՝ Մովսես քահանա (գրիշը):

Թերը՝ թերթակալված չէ: Նյուր՝ կոկած հաստ թուղթ: Մեծություն՝ 44×27 : Գրություն՝ երկայուն (33×22): Գիր՝ բոլորգիր (բնագիրը՝ սև, խորագրերն ու սկզբնատողերը՝ կարմիր): Տող՝ 36: Կազմ՝ շունի: Մանրանկարշություն՝ արիդ-ըր հատ մը կիսախորան, անարվեստ, լուսանցագարդք՝ միշակ արվեստով, զարդագիրք՝ թոշնագիր և հանգուցագիր սկզբնատորը: Վիճակ՝ սկզբեն և վերջնեն խաթարյալ, լուսանցային մասերը խոնավութենե ազդված, վերի մասեն մկները: Տէր՝ Կ. Պոլիս, Ազգային պատրիարքարանի Կեսարիո ֆոնդ (հին թիվ 60, նոր թիվ 4): Մնր. Հիշատակարանին մեջ նշված Սուլթան Սելիմը 1566—1574 թթ. թագավորած է, հետեւաբար 1554-ին չէր կրնար հիշվիլ:

Հ Ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրշի

Փառք... Որ տրամադրեաց զմատունս վերջացեալ գծագրեացս և տկար ոգուցմ՝ Աստուածատուր արեղայի և Պողոս դպիր (վերջինս չնշված, բայց ըն-

թեռնելի): Արդ, շնորհիւ քարերարին Աստուծոյ սկսայ և աւարտեցիւ շնորհիւն: ողորմութեամբն Աստուծոյ զւտառ աստուածայարմար և զանգին մարգարիտս՝ զքնարս աստուածաշունչ և զհոգիաբողը բուրաստանս, զսաղարթալիքի և զոգնապտուզ: Քանզի ունի ամբարեալ լինքեան զիշատակս սուրբ Աստուածածնին ու զսրոց առաքելոցն, և սրբոց մարգարէիցն, զսրոց հայրապետացն, և վարդապետացն, զքահանալից, և զմիանձանց ճգնաւորաց և կուսանտաց, և համարէն մարտիրոսաց՝ զյայտնեացն և զանյայտնեացն, որ վասն Քրիստոսի զարիւնս իւրեանց հեղին: Եւ կոչի սա Յայսմաւոր, որ յամենայն աւր սիրով և զբւարճանալով և աւրինակ բարի լինելով՝ ուրախացուցանէ զյայսոսիկ, որ աստուածային սիրովն են զմայլեալ և հարըստացեալ: Արդ, զայս ամենայն բարութիւնս տեսեալ, որ աստ հաւաքեալ կան, և փառաց սոցա ցանկացեալ աստուածապարիւսկ հոգին և երանաշնորհ սրբասնեալ Մովսէս քահանայն, և լիշեաց զբանն որ ասէ. Երանի որ ունիցի զօակ ի Սիոն և ընդանեակք իցեն նորանրուսաղէմ: Քրիստոսի ողորմութեանն փափաքեալ և իւր սրբոցն կարաւտեալ, եռափափաք սրտիւ և յաւժար կամօք զրեաց զայս աստուածամերձ արանց պատմութիւնս և ոչ հան ի յաւարտ, բայց փոխեց առ Աստուած: Յիշատակ իւր՝ Մովսէս քահանային, լիշատակ իւրն և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Յոհաննէս քահանային և մաւրն՝ Ազիզին, և որդոյն՝ Անարոնին, և մաւրն՝ Հոփիսիմին... (բառ մը ջնջված) և քաւրն՝ Շնոհորին և Վարդէիատին: (Այսուհետեւ սյունակին մնացյալ երկու երրորդը պարապ. հաջորդ մասը նոր էջով կսկսի):

Եւ արդ, աղաշեմ զդասս լուսերամիցդ՝ զսուրբ կրաւնօռքդ և զքահանայրդ, և զժողովուրդ, որք հանդիպիք յընթերցմունս գրոյս, ամէնքդ կամաւք և լիս սիրյով, և յաւժար մտաւք Աստուած-ողորմի ասացէք Մովսէս քահանային և ամենայն մերձաւորաց իւրոց. ամէն:

Դարձեալ, արդ, զրեցաւ աստուածախաւ գիրքս Բ (2) զրչաւ՝ Աստուածատուր արեղայի, որ էր ի գաւառէն Տարունոյ, ի գեղջէն Յազւալ, և ծառայ էր Սույր Կարապետին և այլ ամենայն սրբոցն, որ անդ կան հաւաքեալ: Յիշատակ իւր և ծնաւղացն իւրոց, հաւրն՝ Կոնանին և մօրն՝ Խանտուտին. ամէն: Եւ արդ, զրեցաւ սուրբ գիրքս ի թվականիս Հայոց ՌԳ (1554), ի գաւառն Կեսարու, ի հոշակաւոր վանըս Սույր Կարապետու և Սուրոյն Թէոդորոսի զինաւորքն, և այլ ամենայն սրբոցն նորա, որ կան հանգուցեալ, և ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Տէր Յովաննէս Հեղ և խոնարհամիտ, բարի և հնազանդարհակիսկոպոսին, և ի հայրապետութեան սուրբ Աթոռոյն Տէր Ստեփանոս կաթողիկոսին, և ի բռնակալութեան Սովորան Սելիմին, ի դառն և ի մեղ ժամանակին, որ հարկապահանջութեամբ ազգս հայոց տապալի:

Արդ, ես՝ Մովսէս հանգուցեալ քահանայս, աղաշեմ զամեննեսեան, հողացեալս ի գերեզմանի, ոչ ոքիմ թէ աւդնեսցէ ինձ յայսմ տեղոց. զի՞ յիշեմ զամենաթագաւորն զՔրիստոս և զահեղ ատեան նորա, և յոյժ սրտարեկեալ կամ: Բայց արտասւալի աշաւք և հառաշմամբ սրտիւ դէմս ի ձեզ ապաւինիմ, զի վասն իմ աղաշէք զողորմածն Աստուած, զի ողորմեսցի ինձ բազմամեղիս,

զի ի ձեռն այլոց ազաշանաց կարող է Աստուած ողորմել մեղորաց. զի և զուք առնուք ողորմոթիւն յողորմած փրկչէն. ամէն:

Յիշել ազաշեմ և զմեզ՝ զանյիշելի գրիշա՝ զԱստուածատուր արեղայն և դՊաւոս գպիրն, որ շատ աշխատեցաք ի գրել սորին, և խոշորութեան և սղաշանաց անմեղագիր լինել, զի զործնառութիւն վասն ի սիրոյ և ի հարկէ եղե և ոչ ի մակացութեան արեսատից, զի այս շափս գրեցի և ծաղկեցաք զսա կարուցութեամբն Աստուծոյ, այլ և զթզտի կոկոզ սորա՝ զՄարեկոս սարկօազն, որ բազում աշխատեց ի կոկել թըղափս. Աստուած հատուցանէ զիւր փոխարէն ի հանդերձեալն. ամէն, այլ և զկերակրողքս մեր՝ զմուշի յաեցի Մուրատն, որ բազում աշխատանք և երախտիք ունի ի զուռն Սուրբ Կարապետու. Աստուած հատուցէ զիւր փոխարէն զԲ (2) մամուկն:

Շ Ա. Ր Ա Կ Ն Ո Յ

Անսարիա

ԹՃԻԱ. — 1672

Ստացող՝ Մարտիրոս տիրացու:

Էջ՝ 476 (թվագրված): Նյուր՝ մաղաղաթ: Մեծուրյուն՝ 24×16,5: Գրուրյուն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ ? Կազմ՝ կաշեպատ տախտակ: Մանրանկարչուրյուն՝ խորանազարդք, լուսանցազարդք և զարդագիրք, ընտիր արգեստով: Վիճակ՝ խոնավութենէ ազդված: Տեր՝ 1950-ական թվականներին հանդիպած ևմ Սկյուտարի Սուրբ Խաչ եկեղեցին, սակայն մի քանի տարի տուաջ փնտրեցինք և չգտանք զայն: Մեր. 476 էջին ետք կա «Առաւոտ լուսոյ», ցանկ և հետո՝ հիշատակարան:

Հ Ի Չ Ո Ւ Ա Կ Ա Ր Ա Ն

Ստացողի

Փառք... Արդ, գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, ի լաւ և յընտիր օրինակէ, որ յորջորջի Խլկեցի, ի թվականիս Հայոց ԹՃԻԱ (1672), ապրիլ ամսոյ իւ (25), ի մայրաքաղաքս Կեսարիայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և Սրբոյն Սարգսի զօրավարին, և այլ բազմահոյլ ժողովս սրբոց, որք աստ կան հաւաքեալ: Արդ, ազաշեմ զդասս լուսերամիցդ և մանկանցդ սուրբ Սիօնի, որք հանդիպիք սմա տեսանելով և կամ զաղափարելով, լիշեսցիք ի մաքրափայլ յազօթս ձեր զստացօղ սուրբ տառիս՝ զբարեպաշտ և երկիւղած տիրացու՝ Մարտիրոսն, և եղբարքն և քվերքն, որ բազում փափառանօք և շանիւ ետուն զծագրել զսա ի հալալ արգեանցն իւրեանց՝ [ի] լիշատակ բարի ծնօղաց խրոց՝ մահտեսի երարշալին, և մօրն, և եղբարցն, և քուերցն, և ամենայն արեան մերձաւրացն՝ կենդաննեացն և ննջեցելոցն հոգույն, և եղին ի զուռն Սուրբ Աստուածածնին: Եւ ոչ ոք շունի իշխանութիւն հանել զսա ի դրանէ սորա. եթէ ոք յանդգնի՝ զնզովքն Կայենի առցէ և զպատիժն Յուղալի. ամէն: Եղիցի, եղիցի:

ԱՆԳԻԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՅՑԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղոց ի վեր հասունացել է հայկական հին մատենագրության երախայրիքների քննական բնագրերի նոր շար ստեղծելու պահանջը։ Հրատարակությունների այդ շարը հետապնդում է հայոց լեզվի, գրականության, դիտության ու մշակույթի գանձերը գիտական առավել կատարյալ եղանակներով ներկայացնելու, հրապարակում այդ կարգի գրականության բացակայությունը վերացնելու բարի նպատակները։ Ի թիվս բնագիր երկերի, ծրագրված է կազմել նաև թարգմանական երկերի, այդ թվում և «թագուհի թարգմանությանց» Աստվածաշնչի քննական բնագիրը։ Քանի որ Աստվածաշնչի քննական բնագիր պատրաստելը խիստ աշխատատար ու բարդ գործ է, որոշված է այն իրականացնել բայ նրա առանձին գրքերի։ Դա ինքնըստինքյան ենթադրում է տարրեր աշխատակիցների ընդուրկում, երկար ժամանակամիջոց, աշխատակիցների անշատվածություն, որոնք, բնականաբար, կարող են առաջ բերել տարրեր սկզբունքների կիրառում մի երկի տարրեր գրքերի քննական հրատարակություններում։ Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է դառնում կատարվող ու կատարվելիք աշխատանքների համար ընդհանուր ու միասնական սկզբունքներ մշակելը։

Քննական բնագիր կազմելու նախապատրաստական աշխատանքների ընթացքում ծագել են լուծման կարոտ այնպիսի հարցեր, ինչպես.

1. Բավարարվել քննական բնագրերի տողատակերում ցայժմ օգտագործված ավանդական հապավումներով (փխ, շիք, տող, Զինուագիր) և այլն), թե՝ յուրացնել Սովետական Միությունում և արտասահմանյան երկրներում առավել տարածված և արդեն իսկ համընդհանուր ընդունելության արժանացած տողատակային պայմանական նշանները, որոնք ընդունելի ու պարտադիր լինեն հետայրությունը քննական բնագրեր կազմողների համար։

2. Ի՞նչ կարգի տարրնթերցվածներ հաշվի առնել, բոլորն անխտիր, թե՝ կարելուները։ Եթե միայն կարելուները, ապա ո՞րը համարել այդպիսին և ո՞րը անկարելու։

3. Քննական բնագրեր կազմելիս համեմատվող միավորները՝ պատասիկները, ձեռագրերը, տպագրերը և այլն պայմանական ինչպիսի՝ նշաններով արտահայտել, ի՞նչ սկզբունքով։ Աստվածաշնչի գրքերը պարունակող ամեն մի ձեռագրի տարրեր գրքերի քննական հրատարակություններում ունենա իր անփոփոխ պայմանական նշանը, որը պարտադիր լինի Աստվածաշնչի բոլոր գրքերի քննական բնագրերը կազմողների համար, թե՝ յուրաքանչյուրն իր օգտագործած ձեռագրերին պայմանական նշաններ դնելիս առաջնորդվի «ա-

մեն մեկն ըստ իր օգտագործած ձեռագրերի քանակի ու հայեցողության ակզրությով։

Եվ այսն և այն։

Հեռու լինելով բոլոր հարցերին պատասխանելու հավակնությունից, ցանկանում ենք վերջին հարցը լուծել հետեւյալ առաջարկությամբ։

ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ ՏԱՐԲԵՐԻ ԳՐՔԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՒԹԻՄ ԿԱԶՄԵԼԻՄ ՀԱՄԵՄԱՏՎՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՏԱԼ ԱՆՓՈՓՈԽ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԲՆԴԱՒՆԵԼԻ ՈՒ ՊԱՐՏԱԳԻՐ ԼԻՆԵԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ ԲՈԼՈՐ ԳՐՔԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԸ ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ,

Սա ունի այն առավելությունը, որ որևէ ձեռագրում լեզվական, պատմական, գրականագիտական, սոցիոլոգիական որևէ իրակություն քննողը, անհրաժեշտության գեպքում, հեշտությամբ կգտնի մեկ և մյուս քննական բնագրերում իրեն անհրաժեշտ և պայմանական նույն նշանն ունեցող ձեռագիրը։ Դիցուք Մաշտոցյան Մատենադարանի № 199 ձեռագիրը, ստանալով Ե5 պայմանական նշանը, Ծննդոց, Ելից կամ Երգ Երգոց գրքերի քննական բնագրերի տողատակերում կներկայանա միշտ որպես Ե5՝ այստեղից բխող իր բոլոր առավելություններով։

Դրա համար անհրաժեշտ էր նախ կազմել բոլոր ձեռագրատներում, գրադարաններում, մասնավոր հավաքածուներում զանվող այն ձեռագրերի ցանկը, որոնք պարունակում են Աստվածաշնչի գրքերը։ Ամբողջական Աստվածաշնչերից բացի, այդ ցանկում պետք էր ընդգրկել տարրեր բնույթի ու բովանդակության այն ժողովածուները, որտեղ զետեղված են Աստվածաշնչի զոնե երկու և ավելի գրքեր։ Ցանկից գուրս պետք է մնային միայն նոր կտակարան, միայն Սաղմոսարան կամ Հին կտակարանի միայն մեկ գիրք պարունակող ձեռագրերը՝ դրանց պայմանական նշաններ դնելու հարցը թողնելով այդ գրքերի քննական բնագրերը կազմողներին։

Թերթելով տպագիր ու անտիպ ձեռագրացուցակները, քաղելով զանազան աղբյուրներից տեղեկություններ Հին կտակարանի գրքեր պարունակող ձեռագրերի մասին և, վերջապես, անելով 1915 թվականից հետո կորած և այժմ զանազան հաստատություններում դրանցված ձեռագիր Աստվածաշնչերի հաշվեկշիռը, պարզվում է, որ այդպիսի ձեռագրերի թիվը ամբողջ աշխարհում կազմում է 228։ Ընդունում։

1. Մաշտոցյան Մատենադարանում	127
2. Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատնը	37
3. Վենետիկի Միհիթարյանների ձեռագրատնը	24
4. Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրատնը	13
5. Վիեննայի Միհիթարյանների ձեռագրատնը	5
6. Լենինգրադի արևելագիտության ինստիտուտում	3
7. Կանզաս, Ռիչիտա, Հ. Քյուրտյանի հավաքածու	3
8. Ջմմառում	2
9. Հռոմի հայոց հյուրանոցում	2
10. Վիեննայի Կայսերական մատենադարանում	1
11. Էջմիածնի վանքի ձեռագրատնը	1
12. Հալեափի Քառասուն մանկունք եկեղեցում	1
13. Բեռլինի Արքայական գրադարանում	1

14. Վատիկանի Հայոց Հյուրանոցում	1.
15. Պլովդիվում (Հ. Արամյանի սեփականություն)	1.
16. Օքսֆորդի Բողեյան գրադարանում	1.
17. Թբիլիսի Վրացական արխիվում	1.
18. Լենինգրադյան էրմիտաժում	1.
19. Լոնդոնի Բրիտանական թանգարանում	1.
20. Լայզենի Համալսարանի գրադարանում	1.
21. Լոնդոն, Հարոլդ Ուոլտեր Բելլի հավաքածու	1.

Որոշ պրագտումներից ու ստուգումներից հետո, մասնավորապես Մաշտոցյան Մատենադարանի գիտական աշխատակից Օ. Եղանյանի՝ Զեռագրացուցակների հիման վրա կազմած Համեմատական տախտակների միջոցով, պարզեցինք 1915 թվականից հետո ոչնչացումից փրկված և Մաշտոցյան Մատենադարանում ապաստան գտած որոշ ձեռագրերի հարցը: Անհետ կորած են ի թիվս այլ ձեռագրերի Անկյուրիայի 8, Վասպուրականի 7, Ազուլիսի 3, Մուշի 2, Նիկոմեդիայի, Արդնիի մեկական ձեռագիր Աստվածաշնչերը, անհայտէ Սերաստիայի 2, Կեսարիայի 1 Աստվածաշնչերի վիճակը: Ե. Լալայանի՝ Վասպուրականում գրանցած 14 ձեռագիր Աստվածաշնչերից 7-ի և Երնչակի 3՝ Աստվածաշնչերի հասցեները հայտնի են (Մաշտոցյան Մատենադարան), Ամրդու վանքի 5 Աստվածաշնչերի մի մասը Մաշտոցյան Մատենադարանում է, իսկ մի մասն էլ կորած: Այսպիսով, եթե պարզ թվարանական գործողություններ կատարենք, Մաշտոցյան Մատենադարանից զուրս գրանցված 149 ձեռագրերից 48-ը կամ կորած է, կամ զտնվում է Մաշտոցյան Մատենադարանում: Ստացվում է 101: Դրան զումարած Մաշտոցյան Մատենադարանի 127 ձեռագիր, որով Աստվածաշնչը մատյանների (ամբողջական կամ մասունք) թիվը կազմում է 228:

* * *

Աստվածաշնչի բննական բնագրերում համեմատվող միավորները կարեն է բաժանել հետեւյալ խմբերի:

Ա. Պատառիկներ ու պատառիկ-պահպանակներ.

Բ. Համեմատվող ձեռագիր Աստվածաշնչը մատյաններ.

Գ. Զեռագիր զանազան ծիսական կամ մեկնական մատյաններ, որտեղ կան Աստվածաշնչի տարրեր գրքերի քաղվածքներ, մեկնությունների բնարաններ՝ Մաշտոցներ, ծաշոցներ, Մեկնություններ և այլն.

Դ. Տպագիր Աստվածաշնչեր:

Ե. Գ. Դ. Խմբի միավորների համար գերազանցի է օգտագործել հետևյալ պայմանական նշանները.

Ա. Պատառիկների ու պատառիկ-պահպանակների համար հունական չ-օ տառերը: Բնդ որում, քանի որ ամեն մի գրքի համար տարրեր պատառիկներ ու պատառիկ-պահպանակներ պետք է օգտագործվեն, ուստի այս խմբի ամեն մի միավորի պայմանական որ տառը դնելու հարցը մնում է տվյալ գրքի բննական բնագիրը կազմողի հայեցողությանը: Եթե համեմատվող պատառիկներն ու պատառիկ-պահպանակները 24-ից ավելի են, այսինքն ավելի շատ, քան հունարենի տառերը, կարելի է դիմել օժանդակ միջոցի՝ արարական միանիշ թվանշանների օգնությանը՝ չ-օ, ա-օ, ա-օ₂ և այլն հաջորդականությամբ:

Բ. Աստվածաշնչի գրքերից բազվածքներ, բնաբաններ պարունակող ձեռագիր Մաշտոցների, Ճաշոցների, Մեկնությունների և այլ միավորների համար նպատակահարմար ենք գտնում օգտագործել լատիներենի ա—ը փոքրատառերը՝ որպես բնտրությունը նույնպես թողնելով տվյալ գիրքը կազմողի հայեցողությանը, քանի որ ամեն մի գիրք տարբեր ձեռագրերի օգտագործում է ենթադրում։ Տառերը ըբավականացնելու դեպքում կարելի է դարձյալ դիմել վերահիշյալ միջոցի՝ ա₁—ը₁, ա₂—ը₂ և այլն։

Գ. Տպագիր Աստվածաշնչերի համար օգտագործել 1—0 արաբական միանիշ թվականները։ Եվ քանի որ այս, ինչպես նաև ձեռագիր Աստվածաշնչուն միավորների օգտագործումը, ի տարրերություն նախորդ երկուսի, ընդհանուր է նրա բոլոր գրքերի քննական բնագրերը կազմողների համար, ուստի ի սկզբանե անտի տպագիր ու ձեռագիր Աստվածաշնչերը պետք է ունենան իրենց որոշակի պայմանական նշանները։ Դրաբար Աստվածաշնչը ունեցել է 10 հրատարակություն։ 1666 թ. Ամստերդամում, 1705 թ. Կ. Պոլսում, 1733 թ. և 1805 թ. Վենետիկում, 1817 թ. Պետերբուրգում, 1817 թ. Սիրամպուրում, 1860 թ. Վենետիկում, 1892 թ. և 1895 թ. Կ. Պոլսում, 1929 թ. Վիեննայում։ Դրանք համապատասխանաբար ստանում են 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 0 պայմանական նշանները։

Դ. Համեմատվող միավորների մեջ ամենակարևորն ու ամենաշատը, անշուշտ, ձեռագիր Աստվածաշնչերն են, որոնք և պահանջում են պայմանական նշաններ դնելու առավել կուռ ու վերջնական համակարգ։ Համեմատվող ձեռագիր Աստվածաշնչերի համար առաջարկում ենք երկու տարրից բազկացած պայմանական նշաններ։ լատինական մեծատառեր Ա-ից մինչև Z, որոնք ոչ թե ձեռագիր են նշանակում, այլ պարզապես ձեռագրի գրության տարեթվի կամ դարերի ցուցիչներ են։ Որքան ձեռագրերն ունեն լատիններն այրութենի ուկանական տառերը, այնքան հին են նրանք։ Ընթերցողը, տեսնելով A ցուցիչը, չի տարակուած, որ գործ ունի հնագույն ձեռագրերի հետ։ Ժամանակի այդ ցուցիչների կողքին դրվում են պայմանական երկրորդ նշանները՝ 1-ից մինչև 0 արաբական միանիշ թվանշանները, որոնք արդեն որոշակի որևէ ձեռագիր են նշանակում։ Այսպիսով Ա₁ ձեռագիրը լինում է մեզ հասած ամենահին Աստվածաշնչը։

Կարենոր է և այն հարցը, թե ձեռագրերը ըստ հերթականության դասավորելիս ի՞նչ ելակետ պիտի ունենալ։ Նպատակահարմար ենք գտել ձեռագրերը դասավորել ըստ նրանց ընդօրինակության ժամանակի։ նախ դրվում է հնագույն գրությունն ունեցող ձեռագիրը, որին հաջորդում են հետագայում գրվածները՝ դարձյալ ըստ նրանց գրության հնության¹։

Արդ, ձեռագրերն ըստ հնության դասավորելուց և դրանց հերթականությանը համապատասխան պայմանական նշաններ դնելուց հետո ստանում ենք։

¹ Ճիշտ է, հետագա դարերում արտագրված մի ձեռագիր հնության ավելի շատ տարրեր կարող է պարունակել իր մեջ, քան իրենից առաջ դրված, ուրեմն և հին ակունքներին ավելի մոտ դանձող մի ձեռագիր, սակայն, նախ, որ շատ չեն այդ դեպքերը և, բացի այդ, հրատարակվող գրքի բնագրադիտական ներածականում տվյալ ձեռագրի ընութագրականը տալիս անպայմանուրեն կնշվի, թե որ դարի ձեռագրից կամ ձեռագրերից է արտագրված և ինչ հատկանիշներ ունի, որ իրենից հետո չունեն, հետևաբար ընթերցողը պարզիալարզ կնկատի և այս, և՛ մյուս ձեռագրերի արժանիքները։

Ա/Տ/Վ հ/մ	Պայմանական հշաբն	Զերակի կուտաց բացանակ	Վայրը, ուր զանգում է ձեռագիրը:		Զերակի կուտաց պատճենի համարները
			4	5	
1	2	3			
1	A ₁	1081	Նոր Զուգո (183)		Հ. Ա. 12
2	A ₂	ԺԲ	Երեսն		7753
3	A ₃	ԺԲ	Նոր Զուգո (184)		Հ. Ա. 13
4	A ₄	ԺԲ—ԺԳ	Վենետիկ (Հ. թ. 1311)		20
5	A ₅	1201	Վենետիկ (Հ. թ. 696)		22
6	A ₆	1219	Երեսն		5979
7	A ₇	1230	Եղմիածին		233
8	A ₈	1253—5 ³	Երեսն		175
9	A ₉	1257	Վենետիկ (Հ. թ. 1312)		17
10	A ₁₀	1258	Երեսն		287
11	B ₁	1263—6	Երեսն		4243
12	B ₂	1269	Երեսն		142
13	B ₃	1269	Երուսաղեմ		1925
14	B ₄	1270	Երեսն		345
15	B ₅	1271	Երեսն		199
16	B ₆	1272	Երուսաղեմ		306
17	B ₇	1274	Երուսաղեմ		353
18	B ₈	1284—8	Երեսն		195
19	B ₉	1285	Երեսն		5560
20	B ₁₀	1291—8	Երուսաղեմ		540
21	C ₁	1292	Երեսն		179
22	C ₂	1295	Երեսն		180
23	C ₃	1295*	Երեսն		181
24	C ₄	1299	Երեսն		193
25	C ₅	1300	Երուսաղեմ		369
26	C ₆	ԺԳ	Երեսն		177
27	C ₇	ԺԳ*	Երեսն		718
28	C ₈	ԺԳ	Երեսն		1500
29	C ₉	ԺԳ	Երեսն		1746
30	C ₁₀	ԺԳ	Երեսն		3604
31	D ₁	ԺԳ	Երեսն		5942
32	D ₂	ԺԳ	Երեսն		6058
33	D ₃	ԺԳ	Վենետիկ (Հ. թ. 841)		5

2 Հիմնականում ցույց են տրված ձեռագրերի՝ Զերակացուցակներում ընդունած համարները: Առանձին դեպքերում նշված են երանց գրադարանային շիֆրերը:

3 Եթե տարեթիվն ունի աստղ, նշանակում է տվյալ ձեռագիրը դրված է նաև հետագա տարբերին կամ դարերում:

1	2	3	4	5
34	D ₄	ՃԳ	Վենետիկ (Հ. թ. 376)	21
35	D ₅	ՃԳ	Վենետիկ (Հ. թ. 1195)	23
36	D ₆	ՃԳ	b _{բուսագիւմ}	304
37	D ₇	ՃԳ	Նոր Զուղա (34)	Հ. Ա. 162
38	D ₈	ՃԳ—Դ	Վենետիկ (Հ. թ. 1006)	6
39	D ₉	ՃԳ—Դ	Վենետիկ (Հ. թ. 1482)	18
40	D ₁₀	ՃԳ—Դ	Լենինգրադ (Ելմիռած)	VP-1011
41	E ₁	ՃԳ—Դ	Նոր Զուղա (181)	Հ. Ա. 14
42	E ₂	ՃԳ—Դ	Վիեննա (Հ. թ. 29)	71
43	E ₃	ՃԳ—Դ	Վիեննա (Հ. թ. չկա)	542
44	E ₄	1303—4	b _{բեան}	182
45	E ₅	1308	b _{բեան}	183
46	E ₆	1308	b _{բուսագիւմ}	1926
47	E ₇	1309	b _{բուսագիւմ}	477
48	E ₈	1312	b _{բեան}	231
49	E ₉	1313	b _{բուսագիւմ}	3121
50	E ₁₀	1314	b _{բեան}	6230
51	F ₁	1314	Լենինգրադ, արենլազիտության ինստիտուտ	B 87
52	F ₂	1315	b _{բեան}	192
53	F ₃	1316	b _{բուսագիւմ}	1931
54	F ₄	1317	b _{բեան}	76
55	F ₅	1317	b _{բեան}	353
56	F ₆	1318	b _{բեան}	206
57	F ₇	1319	Վենետիկ (Հ. թ. 1508)	.
58	F ₈	1323	b _{բուսագիւմ}	1930
59	F ₉	1326	Լենինգրադ, արենլազիտության ինստիտուտ	B 1
60	F ₁₀	1327	Վենետիկ (Հ. թ. 212)	19
61	G ₁	1332	Վենետիկ (Հ. թ. 1007)	12
62	G ₂	1337	Վիեննա (Հ. թ. 39)	274
63	G ₃	1338	b _{բեան}	2627
64	G ₄	1338	b _{բեան}	4429
65	G ₅	1341—55	Վենետիկ (Հ. թ. 935)	8
66	G ₆	1358	b _{բուսագիւմ}	1153
67	G ₇	1361	Նոր Զուղա (336)	Հ. Ա. 23
68	G ₈	1363	b _{բեան}	5608
69	G ₉	1367—71	b _{բեան}	352
70	G ₁₀	1368	Վիեննա (Հ. թ. 14)	55
71	H ₁	1379	b _{բեան}	159
72	H ₂	1384	b _{բեան}	4113
73	H ₃	1390	b _{բեան}	346
74	H ₄	1400—1	b _{բեան}	184
75	H ₅	ՃԳ	b _{բեան}	73
76	H ₆	ՃԳ	b _{բեան}	141

1	2	3	4	5
77	H ₇	ՃԴ	ԵՐԿԱՆ	143
78	H ₈	ՃԴ	ԵՐԿԱՆ	156
79	H ₉	ՃԴ	ԵՐԿԱՆ	185
80	H ₀	ՃԴ	ԵՐԿԱՆ	230
81	I ₁	ՃԴ	ԵՐԿԱՆ	354
82	I ₂	ՃԴ	ԵՐԿԱՆ	1667
83	I ₃	ՃԴ*	ԵՐԿԱՆ	2705
84	I ₄	ՃԴ	ԵՐԿԱՆ	5603
85	I ₅	ՃԴ	ԵՐԿԱՆ	6569
86	I ₆	ՃԴ	ԵՐԿԱՆ	7141
87	I ₇	ՃԴ	ԵՐԿԱՆ	7336
88	I ₈	ՃԴ	ԵՐԿԱՆ	9116
89	I ₉	ՃԴ	ԵՐԿԱՆ	10175
90	I ₀	ՃԴ	Ուիշիտա (Հ. Քյուրոյանի սեփ.)	
91	J ₁	ՃԴ	Ուիշիտա (Հ. Քյուրոյանի սեփ.)	
92	J ₂	ՃԴ	Լայզեն Օր. 5504 (Cod. arm. 25)	
93	J ₃	ՃԴ—Ե	Վենետիկ (Հ. թ. 1270)	9
94	J ₄	ՃԴ—Ե	Զմբառ (Հ. թ. 310)	1
95	J ₅	1418—22	Վենետիկ (Հ. թ. 280)	10
96	J ₆	1421—2	ԵՐԿԱՆ	207
97	J ₇	ՃԵ	ԵՐԿԱՆ	144
98	J ₈	ՃԵ	ԵՐԿԱՆ	232
99	J ₉	ՃԵ	ԵՐԿԱՆ	9874
100	J ₀	ՃԵ	Հռոմ (Հայկական Հյուրանոց)	1
101	K ₁	ՃԵ	Վիեննա (Հ. թ. չկա)	316
102	K ₂	ՃԵ	ԵՐՈՒՍԱՂԵՄ	297
103	K ₃	ՃԵ	ԵՐՈՒՍԱՂԵՄ	255
104	K ₄	1550—3	ԵՐԿԱՆ	4070
105	K ₅	1591	ԵՐԿԱՆ	3918
106	K ₆	1595	ԵՐԿԱՆ	2856
107	K ₇	1596	ԵՐՈՒՍԱՂԵՄ	397
108	K ₈	ՃԶ	ԵՐԿԱՆ	2585
109	K ₉	ՃԶ	ԵՐԿԱՆ	8106
110	K ₀	ՃԶ—Ե	ԵՐԿԱՆ	5809
111	L ₁	ՃԶ—Ե	Նոր Զուղա (70)	Հ. Ա. 11 3043
112	L ₂	1606	ԵՐՈՒՍԱՂԵՄ	11
		1608-ից	Վիեննա (Հայուել. Cod. arm. 11)	
113	L ₃	առաջ		4114
114	L ₄	1608—10	ԵՐԿԱՆ	186
115	L ₅	1611	ԵՐԿԱՆ	2558
116	L ₆	1615	ԵՐՈՒՍԱՂԵՄ	741
117	L ₇	1616	ԵՐՈՒՍԱՂԵՄ	351
118	L ₈	1616—9	ԵՐԿԱՆ	
119	L ₉	1618	Նոր Զուղա (256)	Հ. Ա. 7

1	2	3	4	5
120	L ₈	1619	bpmusamqbd	711
121	M ₁	1620	bpmusamqbd	428
122	M ₂	1624	bpmusamqbd	2560
123	M ₃	1625	զատիկան (Cod. arm. 1)	1
124	M ₄	1627	bphm	146
125	M ₅	1627	նոր Զուղա (96)	չ. Ա. 8
126	M ₆	1628	bphm	1465
127	M ₇	1630	bphm	79
128	M ₈	1631	bphm	75
129	M ₉	1634	Զմառա (5. թ. 26)	2
130	M ₀	1635	bphm	2628
131	N ₁	1635	զենետիկ (5. թ. 1507)	13
132	N ₂	1635	bpmusamqbd	1127
133	N ₃	1635—9	bphm	6485
134	N ₄	1638	bpmusamqbd	1090
135	N ₅	1638	Արիշիտա (Հ. Քյուրոբանի սեփ.)	37
136	N ₆	1640	bphm	187
137	N ₇	1640	bphm	2397
138	N ₈	1640	bpmusamqbd	1932
139	N ₉	1641	bphm	2669
140	N ₀	1641	նոր Զուղա (71)	չ. Ա. 10
141	O ₁	1641	զենետիկ (5. թ. 1634)	2
142	O ₂	1641—3	bphm	188
143	O ₃	1643	bpmusamqbd	1934
144	O ₄	1645	bpmusamqbd	1933
145	O ₅	1647	bphm	74
146	O ₆	1648	bphm	2587
147	O ₇	1648	զենետիկ (5. թ. 623)	3
148	O ₈	1648	bpmusamqbd	1928
149	O ₉	1649	bphm	4905
150	O ₀	1649	bphm	8523
151	P ₁	1649—50	bphm	189
152	P ₂	1651	bpmusamqbd	797
153	P ₃	1651	bpmusamqbd	1927
154	P ₄	1653	bphm	1177
155	P ₅	1653	զենետիկ (5. թ. 1258)	14
156	P ₆	1653—8	bphm	200
157	P ₇	1654—61	bphm	348
158	P ₈	1655	bphm	7623
159	P ₉	1655	զենետիկ (5. թ. 229)	4
160	P ₀	1656	bpmusamqbd	542
161	Q ₁	1656	զենետիկ (5. թ. 1182)	7
162	Q ₂	1657	bphm	347

1	2	3	4	5
163	Q ₃	1657—9	bphawn	5571
164	Q ₄	1659	bphawn	190
165	Q ₅	1660	bphawn	201
166	Q ₆	1661	bphawn	5132
167	Q ₇	1661	bphawn	9582
168	Q ₈	1661	Բեռլին (Ms. or. Paterm. I, 136)	1. 4
169	Q ₉	1661	Պլովզիք	1
170	Q ₀	1662	Նոր Զուղա (15)	Հ. Ա. 1
171	R ₁	1663	bphawn	191
172	R ₂	1664	bphawn	7093
173	R ₃	1666	bphawn	202
174	R ₄	1666	bphawn	203
175	R ₅	1666	bphawn	1390
176	R ₆	1667	bphawn	6281
177	R ₇	1667—8	bphawn	3545
178	R ₈	1668	bphawn	2706
179	R ₉	1671	bphawn	8699
180	R ₀	1674	Լոնդոն (Հ. Ու. Բեյլի սեփ.)	5
181	S ₁	1680	bphawn	1661
182	S ₂	1686	bphawn	349
183	S ₃	1686	bphawn	9100
184	S ₄	1688	Հալեն (Հ. Պ. Կ.)	137
185	S ₅	1690—9	Վենետիկ (Հ. Պ. 1336)	16
186	S ₆	1691	bphawn	2113
187	S ₇	1698—9	bphawn	3478
188	S ₈	1700	bphawn	350
189	S ₉	ԺԵ	bphawn	9
190	S ₀	ԺԵ	bphawn	77
191	T ₁	ԺԵ	bphawn	81
192	T ₂	ԺԵ	bphawn	147
193	T ₃	ԺԵ	bphawn	204
194	T ₄	ԺԵ	bphawn	205
195	T ₅	ԺԵ	bphawn	229
196	T ₆	ԺԵ	bphawn	271
197	T ₇	ԺԵ	bphawn	1887
198	T ₈	ԺԵ	bphawn	2236
199	T ₉	ԺԵ	bphawn	2658
200	T ₀	ԺԵ	bphawn	2732
201	U ₁	ԺԵ	bphawn	3514
202	U ₂	ԺԵ	bphawn	3705
203	U ₃	ԺԵ	bphawn	3823
204	U ₄	ԺԵ	bphawn	3963
205	U ₅	ԺԵ	bphawn	5497

1	2	3	4	5
206	U ₆	ԺԷ	bրեան	5508
207	U ₇	ԺԷ	bրեան	5621
208	U ₈	ԺԷ	bրեան	6090
209	U ₉	ԺԷ	bրեան	6640
210	U ₀	ԺԷ	bրեան	6753
211	V ₁	ԺԷ	bրեան	10238
212	V ₂	ԺԷ	վենետիկ (Տ. թ. 1710)	24
213	V ₃	ԺԷ	bրուսաղեմ	501
214	V ₄	ԺԷ	bրուսաղեմ	742
215	V ₅	ԺԷ	bրուսաղեմ	1232
216	V ₆	ԺԷ	bրուսաղեմ	1929
217	V ₇	ԺԷ	bրուսաղեմ	2557
218	V ₈	ԺԷ	bրուսաղեմ	2561
219	V ₉	ԺԷ	Նոր Զուգո (16)	Հ. Ա. 2
220	V ₀	ԺԷ	Նոր Զուգո (17)	Հ. Ա. 3
221	W ₁	ԺԷ	Նոր Զուգո (71)	Հ. Ա. 9
222	W ₂	ԺԷ	լենինգրադ, արևելադիտության ինստիտուտ	B. 31
223	W ₃	ԺԷ	Օքոֆորդ (ms. առ. D. 14)	41
224	W ₄	ԺԷ	Լոնդոն (Բրիտ. թանգարան)	Օր. 8833
225	W ₅	1710	վենետիկ (Տ. թ. 897)	15
226	W ₆	1773	վենետիկ (Տ. թ. 1)	11
227	W ₇	ԺԷ	Թրիլին (Ա. 582)	27
228	W ₈	ԺԷ	Հանդ (Բիզ 40)	2

Սույն ցանկից պատահաբար դուրս մնացած, երջանիկ պատահականությամբ նոր հայտնաբերված և Աստվածաշնչի միայն մեկ գիրք պարունակող ձեռագրերը կարող են ստանալ ազատ մնացած W₉—Z₀ պայմանական նշանները:

Այժմ, երբ նաև թարգմանական երկերի, մասնավորապես Աստվածաշնչի գրքերի քննական բնագրեր կազմելը տարբեր երկրներում իրողություն, իսկ Սովհետական Հայաստանում օրակարգի հարց է⁴, անհրաժեշտ է քննության նյութ դարձնել այդ կարենոր ու ծավալուն ձեռնարկման հետ առնչվող ամեն մի հարց:

Անելով սույն առաջարկությունը, սիրահոժար կունկնդրենք առարկությունները, դիտողություններն ու նոր առաջարկությունները:

Միաժամանակ խնդրվում է գիտական ու թանգարանային հաստատություններին, ինչպես նաև մասնավոր անձանց, նշված ցանկից դուրս ձեռագիր Աստվածաշնչի հասցե իմանալու դեպքում այդ մասին տեղյակ պահել Մաշտոցի անվան Մատենադարանին:

⁴Տե՛ս Ա. Խաչիկյան, Յուրիկեզու հայ գրականությունը շորորդ դարում (Ներսես Պարիսի և եպիփանի նորահայտ «Հարցման» առթիվ) («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 47), Հ. Անասյան, Աստվածաշնչը մատյանի հայկական բնագիրը («Էջմիածին», 1966, ԺԱ—ԺԲ, էջ 97), ինչպես նաև Շ. Աճեմյանի հոդվածը Մայքլ Սթոունի խմբագրությամբ լույս տեսած «Armenian and Biblical Studies» ժողովածուում (Երուսաղեմ, 1976):

Б. Л. ФОНКИЧ

ГРЕЧЕСКИЕ РУКОПИСИ МАТЕНАДАРАНА

Фонд греческих рукописей Матенадарана состоит из двух частей: 1) 8 полных рукописей—Фонд иноязычных рукописей, № 12, 25, 31, 68, 69, 77, 95, 131; 2) 70 фрагментов—а) 19 единиц хранения, прежде бывшие защитными листами армянских рукописей и ныне отделенные от последних (Фонд иноязычных фрагментов, № 1—19), и б) 51 фрагмент—отрывки греческих рукописей, использованные в старину в качестве защитных листов армянских рукописей и исполняющие эту роль и в настоящее время (Фонд армянских рукописей, № 141, 287, 527, 539, 586, 591, 612, 796, 807, 812, 915, 919, 1038, 1049, 1192, 1197, 1201, 1249, 1251, 1297, 1373, 1424, 1544, 1547, 1601, 1624, 1634, 2105, 2164, 2168, 2274, 3461, 6122, 6953, 7095, 7168, 7371, 7378, 7470, 7477, 7517, 7643, 7650, 8163, 8193, 8254, 8482, 8546, 9456, 10382, 10385).

Сведения о греческих рукописях Матенадарана содержатся в следующих работах: Л. Хачикян. Сокровища Матенадарана.—„Вопросы истории“, 1951, № 12, стр. 195—199; Е. Е. Гранстрем. Греческие рукописи в собраниях Советского Союза (Дополнительные сведения).—„Византийский временник“, XI, 1956, стр. 285—287 (указаны 2 рукописи и 59 фрагментов, краткое описание № 25, фото фрагмента Диоскорида); M. Richard. Répertoire des bibliothèques et des catalogues de manuscrits grecs. Paris, 1958, p. 92 (указаны 2 рукописи и 57 фрагментов); А. Г. Абрамян. Рукописные сокровища Матенадарана. Ереван, 1959, стр. 92 (сведения о фрагменте Диоскорида, фото); K. Treu. Zu den neutestamentlichen Handschriften in der UdSSR.—„Forschungen und Fortschritte“, 38, 1964, S. 118—122; M. Richard. Répertoire des bibliothèques et des catalogues de manuscrits grecs. Supplément I (1958—1963). Paris, 1964, p. 23 (о рукописи № 25); K. Treu. Die griechischen Handschriften des Neuen Testaments in der UdSSR. Eine systematische Auswertung der Texthandshripten in Leningrad, Moskau, Kiev, Odessa, Tbilisi und Erevan. Berlin, 1966 (Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur, Bd. 91), S. 355 (указаны 3 кодекса, 15 отдельных фрагментов и 42 фрагмента в переплетах); Б. Л. Фонкич. Греческие рукописи советских хранилищ (в печати).

Каталога всех греческих рукописей Матенадарана пока не существует. Краткое описание 7 полных рукописей (№ 12, 25, 31, 68, 716—20

Рис. 1. Фонд иноязычных рукописей, № 12, л. 1.




Рис. 2. Фонд иноязычных рукописей, № 131, л. 2.

речи, а и пифия огнью. иже аще
устреши огнем фебес, огни аще уш-
оффес. иже въ динамике въ природѣ
сѧ, въ градусахъ альбуминум.
Затѣмъ съвѣтъ бѣшъ отъ пра-
вомъ, и да съвѣтъ мъ съсъ Га-
вань рѣшитъ и въ мъ? и въ съсъ.
И въ чѣмъ оправданиемъ:
О и въ ономъ тѣстѣ и въ огнѣ съвѣ-
тъ альбуминъ фасциа тѣстъ и въ съсъ
и въ тѣстѣ и въ съсъ. огни Гоголи, въ съсъ
и въ съсъ и въ тѣстѣ и въ съсъ. и въ съсъ-
и въ съсъ и въ тѣстѣ и въ съсъ и въ съсъ-
и въ съсъ и въ тѣстѣ и въ съсъ и въ съсъ и въ съсъ-
и въ съсъ и въ тѣстѣ и въ съсъ и въ съсъ и въ съсъ.

— 11 —
6:

Рис. 3. Фонд иноязычных рукописей, № 131, л. 10.

Рис. 4. Фонд иноязычных рукописей, № 131, л. 24.




Рис. 5. Фонд иноязычных рукописей, № 77, л. 61.

ανθρώπων τε. γέλωντας δέ προσέρχεται οι πάντες μόνον

ζωντεν.

τοιαύτην δέ πάντας τον φυγήν.

παραπομπής αὐτού τοῦ φύγοντος. οὐδὲ τίνων
διέλειπεν οὐδενί. οὐδὲ τοιαύτην καταβασιν,
τοιαύτην τοιαύτην εἰσερχεται. τοιαύτην μάλιστα, τοιαύτην
τοιαύτην πάντας τοιαύτην. οὐδὲ τοιαύτην τοιαύτην
τοιαύτην. διαπομπής αὐτού τοιαύτην, τοιαύτην, τοιαύτην.

τοιαύτην τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην
πάντας τοιαύτην, πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην
πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.
τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.
τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.

τοιαύτην πάντας τοιαύτην.

τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.
τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.

τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.
τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.

τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.

τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.
τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.

τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.
τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.

τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.
τοιαύτην πάντας τοιαύτην. τοιαύτην πάντας τοιαύτην.



Рис. 6. Фонд иноязычных рукописей, № 77, л. 91.

τὸν πειρῶν
μηδεροπή^τ
παῖς τῷ·

Δέσμῳ ἐλαύνω. Εἰφιλέπιπτρε.
ποίεισθε τὰς ἀρμάσιους. ποίεισθε
τὰς πρόκαταμας. Οὐδὲ λαθέως τῷ
Δικαιούμε
μοστὸ φιλόφορ
τορ. ποδεύτον
αγχούμαθη^τ
Θεος θάρετο. ὡν
ταῦτα πρότερον
απεχθέποιμε
στόλιοφύλακτε
διηγελυμαρον
μαράντης. ν
Διαφυχορραβούστας.
Διοτανούδεσσόπομποκρατηρ. Οπιρτούσις
ζεναιορένιμοριεχν. Οπαυταξσάφοιε θε
λαρυονθενακθετεστοιγρωσηνάλιθειας θεθη.
δέομεθα καταρακαλούμενος. τεντυχε,
τούδούλοισουτο, παρτούδοτασσούλορ. πο
οικητηριεστρατερωσορ. Οτισουρολ
τοιεπεπολεμοιε. οάμορθωντικατερριμ
μένοιε. ιελτιστοράπτολποιμορ. κοί
ορτηπαρασούρενοις. ούρασηδιποτεφιλ

Рис. 7. Фонд иноязычных рукописей, № 77, л. 127.




Рис. 8. Фонд иноязычных рукописей, № 25, л. 266.



Рис. 9. Фонд иноязычных рукописей, № 95, л. 45.

ας ἐπιτίθεται. Τούτη τις σήμερνη μέγερη μετά ταύτας πρέπει
την αὐτήν είναι κάποιας ολοκληρωμένης άρχιστάρης τούτης θρησκείας
την αυτήν πάντας μόνην παρατηθεῖσαν πάρα πολύ λαμπεῖσα. Ήσαν
ταυτότητας αποδεικτική της παρουσίας πάντας,
επειδή προσεύχονται ουρανούς από την οποίαν προσεύχονται, καὶ την ουρανούν
παραβούν, καὶ ιχθύας παρασκευάζουν. Καὶ την πάσην θρησκείαν εργάζονται
ταῦτα ταῦτα κατά την οὐρανούν. Εμαντούνται πάντας πάντας,
καὶ τὰ ουρανά ταῦτα παρατηθεῖσαν χαράτων γίνεται τούτην την οὐρανούν
μεταβαίνειν απότιττα, ούτως ποιῶνται χριστιανοί τούτην την οὐρανούν
παραδειγματικήν την θρησκείαν παραπομπήν την οὐρανούν
μεταβαίνειν απότιττα. Καὶ μετατίθεται παραπομπή.



Ταῦτα διατίθεται ταῦτα παραπομπήν την οὐρανούν
μεταβαίνειν απότιττα.

1. ○ Μεταβαίνειν απότιττα, παραπομπήν την οὐρανούν ταῦτα
παραπομπήν την οὐρανούν ταῦτα παραπομπήν την οὐρανούν
2. ○ Επειδή προσεύχονται ουρανούν, παραπομπήν την οὐρανούν
παραπομπήν την οὐρανούν ταῦτα παραπομπήν την οὐρανούν
3. ○ Επειδή προσεύχονται ουρανούν, παραπομπήν την οὐρανούν ταῦτα

501-

Рис. 10. Фонд иноязычных рукописей. № 31, л. 14 об.

69, 77, 131) и 17 отдельных фрагментов было опубликовано недавно Э. Бихэном: E. Bichain. *Les manuscrits grecs du Maténadaran d'Erévan.* — „Byzantion“, t. XLII, 1, 1972, p. 254—256 (описание полных рукописей); Э. Бихэн. Греческие рукописи Матенадарана им. Маштоца.— „Историко-филологический журнал“, 1972, № 1, стр. 267—268 (на арм. яз.).

Описание и исследование некоторых полных рукописей и фрагментов имеются в следующих работах: А. Абрамян. Фрагмент Диоскорида.— „Эчмиадзин“, 1951, № 7—8, стр. 44—54 (на арм. яз.); K. Treu. Ein Fragment der Apostollischen Konstitutionen in Erevan.— „Vigiliae Christianae“, 11, 1957, S. 208—211 (фрагмент № 12); Б. Горянов. Греческая рукопись № 25 фонда иноязычных памятников Матенадарана.— „Вестник Матенадарана“, 5, 1960, стр. 317—323; Б. Т. Горянов. Греческая рукопись № 25 фонда иноязычных памятников Матенадарана (Государственное хранение древних рукописей при Совете Министров Армянской ССР).— „Византийский временник“, XVII, 1960, стр. 354—356; K. Treu. Fragments of Greek Patristic Manuscripts in Erevan, Kiev and Odessa.— „Studia Patristica“, 3, Berlin, 1961 (Texte und Untersuchungen, 78), S. 146—150 (фрагменты № 10, 16, 287, 812, 1201); И. Н. Лебедева. Списки Хроники Псевдо-Дорогея в собраниях Советского Союза.— „Византийский временник“, XXVI, 1965, стр. 101—102 (о рукописи № 25); K. Treu. Die griechischen Handschriften des Neuen Testaments in der UdSSR, S. 356—358 (описание фрагментов № 807, 919, 1197, 1249, 1251, 2105, 7168, 8546); И. Н. Лебедева. Поздние греческие хроники и их русские и восточные переводы. Л., 1968 (= „Палестинский сборник“, вып. 18/81), стр. 52—53 (рукопись № 25).

Наш каталог греческих рукописей Матенадарана, в соответствии с делением самого фонда, распадается на две части. В данной работе мы приводим описание 8 полных рукописей, а в недалеком будущем рассчитываем завершить и опубликовать описание 70 фрагментов.

За исключительное внимание к нашей работе и постоянную помощь сердечно благодарим директора Матенадарана Л. С. Хачикяна, хранителя рукописей О. С. Еганина и П. М. Мурадяна (Ереванский университет). Мы искренне признательны А. А. Матвееву (МДА) за помощь при описании рукописей № 12, 31, 77.

СОКРАЩЕНИЯ

- Лихачев—Н. П. Лихачев. Палеографическое значение бумажных водяных знаков, т. I—III. СПб., 1899.
 Николаев—В. Николаев. Водяные знаки Османской империи, т. I. Водяные знаки на бумаге средневековых документов болгарских книгохранилищ. София, 1954.
 Briquet²—С. М. Briquet. Les filigranes. Dictionnaire historique des marques du papier, I—IV. Leipzig, 1923.

- Goar—I. Goar. EYХОЛОГИОН sive Rituale Graecorum. Lutetiae Parisiorum, 1647.
- Eineder—G. Eineder. The ancient paper-mills of the former Austro-Hungarian Empire and their watermarks. Hilversum, 1960.
- Heawood—E. Heawood. Watermarks mainly of the 17th and 18th centuries. Hilversum, 1950.

1

№ 12. Нач. XVI в., бумага, 178 лл., 181/184×120/123 мм. Евхологий.
 (лл. 1—3 об.) Ἀκολουθία εἰς ἀδελφοποιήσιν (Goar, p. 898). (лл. 3 об.—6) Τάξις γενομένη ἐὰν συμβῇ μιαρόν... (Goar, p. 597). (лл. 6—15 об.) Ἀκολουθία τῆς εὐδομάδας τῶν ἀποστολοειαγγελίων (Goar, p. 921). (лл. 15 об.—20) Последования общие мученикам, иерархам, преподобным, св. женам. (лл. 20—30 об.) Ἀκολουθία εἰς τὸ ὅδωρ τῶν ἀγίων Θεοφανίων. (лл. 31—37 об.) Ἀκολουθία εἰς τὸ ἀπομονώσαι τὸν τίμιον σταυρόν. (л. 38) Εὐχὴ ἐπὶ οἴκῳ κτιζόμενῳ (Goar, p. 604?). (лл. 38—45) Ἀκολουθεία εἰς ἑξομολόγησον τριτάγιον τὸ πονηρία τριάς... (лл. 45—66 об.) Последования в Лазареву субботу, неделю Вайи, Великого Четверга и Великой Субботы (лл. 67—70) Εὐχὴ εἰς τὸ ποιῆσαι κατηχούμενον (Goar, p. 334). (лл. 70—78 об.) Εὐχὴ εἰς τὸ ποιῆσαι κατηχούμενον τὸν πρὸς ὥραν δαπτιζόμενον (Goar, p. 337). (л. 79) Εὐχὴ εἰς ἀραβῶνα τάμιον. (лл. 80—89) Ἀκολουθία ἐπὶ μηναστήσ. (лл. 80—89) Κανὼν ἐκκλησιαστικὸς εἰς τάμιους. (л. 89—89 об.) Εὐχὴ ἐπὶ διγαμούντων (Goar, p. 401?). (лл. 90—117) Ἀκολουθεία τοῦ ἀγίου ἑλαίου (Goar, p. 408). (лл. 117—121 об.) Ἀκολουθεία τοῦ κατὰ μήναν ἀγιασμοῦ. (лл. 122—176 об.). Избранный месяцев двунадесятых, великих и праздников местночтимых святых (свв. сорока севастийских мучеников, свв. великих царей Константина и Елены, св. великомученика Прокопия) с отдельными последованиями из Пентикостаря.

Рукопись не имеет конца. Текст обрывается на последовании τῆς μεσοπεντηκοστῆς.

Рукопись написана на бумаге $i\pi - 4^{\circ}$ с тремя филигранями:

- 1) „якорь в круге с шестиконечной звездой“.
- 2) „весы в круге“ типа Лихачев № 3031, 1495 г.;
- 3) „корона“ типа Briquet² № 4964, 1521, 1524 гг.

178 лл.: I+176+I. Начальный и конечный лл. современны переплету и относятся к XVIII в.; эти два лл.—чистые.

Тетради—кватернионы, кроме тетрадей 19 и 27 (по 7 лл.). Судя по сигнатурам, которые проставлены рукой писца и находятся на нижнем поле, ближе к правому углу, первого листа тетради и на нижнем поле, влево от центра, оборота последнего листа тетради, в рукописи сохранились 2 последних лл. 8-й тетради и полностью—тетради 9—30. Таким образом, в начале рукописи недостает 62 лл. (если считать, что первые 8 тетрадей были кватернионами: $7 \times 8 = 56$ лл.+6 лл. восьмой тетради).

21 строка. Площадь текста—143×95 мм.

Многочисленные киноварные инициалы, надписания, отдельные строки. Небольшие заставки-плетенки.

л. 158 — криптограмма писца (красными чернилами): *υβπ·χδ·παρθ/φπετθ·ψλχξιού/ψβ.*

Переплет XVIII в., картон в темно-коричневой коже с тиснением.

Рукопись получена в 1938 г. из Музея литературы и искусства им. Е. Чаренца.

2

№ 131. Конволют, составленный из греческой рукописи середины или 2-й пол. XVI в. (бумага, 39 лл., 161×104 мм) и издания: *Chronologia Hebraeorum maior.* Basileae, apud Ambros. Froben, 1580 (1 л.+158 стр.+1 л., 161×104 мм).

Деяния Восьмого вселенского собора.

(лл. 2—3) **Πράξεις τῆς ἀγίας καὶ σικημενικῆς ὁγδόνης ἐν Κωνσταντίνου πόλει συνόδῳ.** **Ηαγ.** Γέγονεν ἐπὶ τῆς βασιλείας Λέοντος καὶ Ἀλεξάνδρου. **Κον.** ἐν μηνὶ δεκεβρίῳ ἡμέρα ε', ἐν τῇ παραμονῇ τῆς Χριστοῦ τοῦ Θεοῦ ἡμῶν γεννήσεως.

(лл. 3—4 об.) **Πράξις α'**. **Ηαγ.** Προκαθεσθέντος Φωτίου τοῦ ἀγιωτάτου πατριάρχου. **Κον.** εἰς επτηρίαν τῆς ἑκατησίας αὐτοῦ.

(лл. 4 об.—23 об.) **Πράξις β'**. **Ηαγ.** Μηνὶ ιανουαρίῳ καὶ. **Κον.** καὶ οἱ λοιποὶ πάντες ἀρχιερεῖς τὸν ἀριθμὸν δύτες οἱ σύμπαντες τπ'.

(лл. 24—36) **Πράξις γ'**. **Ηαγ.** Μηνὶ μαρτίῳ τ'. **Κον.** Φωτίον καὶ θεάντα τῶν ἀγιωτάτων πατριαρχῶν, πολλὰ τὰ ἔτη.

(лл. 36—38 об.) **Πράξις δ'**. **Ηαγ.** Μηνὶ μαρτίῳ τη'. **Κον.** καὶ εἰς τὸν αἰώνα τῶν αἰώνων. Λαζάρος οὖν θεῷ ἀγιῷ.

Рукопись написана на бумаге $16 \times 8^{\circ}$ с филигранью „пасхальный агнец в круге“ типа Briquet² № 50, 1535 г. (=V. Mošin—M. Grozdanović=Pajić. Agneau pascal. Belgrade, 1967, № 79); так как филигрань подобного типа встречается до 70-х и даже 80-х гг. XVI в. (ср. Newwood № 2833, 1534 г.; Лихачев № 3705, 1584 г.), мы относим рукопись к середине—второй половине XVI в.

лл. 1, 39—39 об.—чистые.

Тетради: 4 кватерниона и 1 тернион (лл. 34—39). Сигнатуры проставлены писцом в центре нижнего поля первого листа тетради. В рукописи имеются лишь две сигнатуры: л. 2—α', л. 10—β'. Кроме этого, на обороте последнего листа каждой тетради имеется кустод, расположенный перпендикулярно к тексту.

16 строк. Площадь текста—96×51 мм.

Киноварная заставка на л. 2, киноварные надписания, многочисленные киноварные инициалы и разделительные значки.

Писец—Антоний Епископулос (отождествлено по почерку; ср.: H. Omont. Facsimilés de manuscrits grecs des XVe et XVIe siècles. Paris, 1887, pl. 4). О нем см.: M. Vogel—V. Gardthausen. Die griechischen Schreiber des Mittelalters und der Renaissance. Leipzig, 1909 (XXXIII. Beiheft zum Zentralblatt für Bibliothekswesen), S. 61—62: X. Г. Патриγέλης. «Ἐλληνες κωδικογράφοι τῶν χρόνων τῆς Ἀναγεννήσεως. — „Ἐπετηρίς τοῦ Μεσαιωνικοῦ

